*Ակադեմիկոս*
*Էդուարդ Բագրատի Աղայանի*
*հիշատակին (1913-1991)*

В. Г. Амбарцумян, Пособие по грабару (древнеармянскому языку), 3-е издание, Ереван, 2018.
V. G. Hambardzumyan, Handbook of Grabar (Old Armenian language), 3rd edition, Yerevan, 2018.

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# Գ Ր Ա Բ Ա Ր Ի
# Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

*Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետների համար*

Երրորդ հրատարակություն

**ԵՐԵՎԱՆ - 2018**

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.2Հ ց7
Հ 205

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ. Գ.**

Հ 205 ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ/ Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2018.- 436 էջ:

ՀՏԴ 811.19(07)
ԳՄԴ 81.2Հ ց7

ISBN 978-9939-75-235-8

© Էդիթ Պրինտ, 2018
© Վ. Համբարձումյան, 2018

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրաբարի սույն ինքնուսույցն ունի երեք բաժին՝ հնչյունաբանություն, ձևաբանություն և շարահյուսություն, այլև բառարան: Առաջինում ավանդվում են հնչյունաբանական երևույթները՝ հնչյունների կազմությունը և փոփոխությունը, ուղղագրությունը և ուղղախոսությունը, տառադարձությունը, երկրորդում՝ ձևաբանական երևույթները, որոնք հանդես են գալիս տարբեր խոսքի մասերում, երրորդում՝ շարահյուսական այն իրողությունները, որոնք նկատվում են պարզ, բարդ և բազմաբարդ նախադասության կառուցվածքում:

Ձեռնարկն ունի ինքնօրինակ կառուցվածք: Նախ մատուցվում է տեսական մասը, այնուհետև բերվում են ընթերցանության և գործնական պարապմունքի նյութերը: Դրանք տալիս ենք հետևյալ կարգով՝ թեմատիկ շարադրանք, ընթերցանություն, վարժություններ, առաջադրանքներ և հարցեր: Ընթերցանության նյութերը քաղված են հայ հին մատենագիրների (հեղինակների) ինքնուրույն երկերից, ինչպես նաև օրինակելի թարգմանություններից: Նկատի է առնված ընտրվող հատվածի լեզվական համապատասխանությունը տվյալ թեմատիկ շարադրանքին: Վարժությունները խիստ նպատակային են, բերվում են պարզից դեպի համեմատաբար բարդն ընթացող ձևով: Առաջադրանքները տրվում են ինքնուրույն աշխատանքի համար: Հարցերը հետապնդում են գիտելիքի ամրակայման նպատակ:

Սույն ինքնուսույցը կազմելիս նկատի ենք ունեցել գրաբարի լավագույն ուսումնասիրությունները և դասագրքերը:

*Հեղինակ*
12. X. 1999

Երրորդ հրատարակության առթիվ

*Habent sua fata libelli.*

Այս գիրքը գրվել է 1988 թ., սակայն տպագրվել է ավելի քան մեկ տասնամյակ անց՝ «Գրաբարի ինքնուսույց» (Ե., 1999 թ.) վերնագրով, երկրորդ հրատարակությունը՝ «Գրաբարի ձեռնարկ» (Ե., 2004 թ.), սեղմ շարվածքով: Այժմ այն լույս է տեսնում մասնակիորեն վերանայված և լրացված, այլև ունի բառարան:

*Հեղինակ*
22. III. 2018

# ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Վերջին տարիներին զգալիորեն մեծացել է հետաքրքրությունը գրաբարի նկատմամբ: Շատ մտավորականներ, որոնք բանասիրական կրթություն չունեն, հետաքրքրություն են ցուցաբերում գրաբար տեքստերի հանդեպ, ուստի և ցանկանում են նաև սովորել գրաբարը այնպես, որ կարողանան կարդալ և լիովին հասկանալ գրաբար տեքստերը:

Այս հանգամանքն է, որ ստիպել է զանազան ինստիտուտներին կից ստեղծել գրաբարի փոքր կամ մեծ խմբեր՝ գրաբարն ուսուցանելու համար: Այդ հանգամանքն է դարձյալ պատճառը, որ Վազգեն Համբարձումյանը (գուցե և ուրիշները նույնպես) կազմել է գրաբարն ինքնուրույն կերպով սովորելու ձեռնարկ՝ «Գրաբարի ինքնուսույց»:

Ձեռնարկը կազմված է ոչ միայն գրաբարի գերազանց իմացությամբ, այլև մեթոդական որոշակի ուղղության և ուսուցման գործի հմտությամբ: Ձեռնարկն ընդգրկում է գրաբարի ողջ քերականությունը (ձևաբանություն, շարահյուսություն), ինչպես և՝ հնչյունաբանությունը, հնչյունափոխությունը, ուղղագրությունն ու ուղղախոսությունը:

Քերականությունը և հնչյունաբանությունը (ներառյալ նաև հնչյունափոխությունը, ուղղախոսությունն ու ուղղագրությունը) առանձին-առանձին ներկայացնում են յուրաքանչյուր բաժնի իրականությունները, դրանց բացատրությունները:

Առանձին վարժություններով ու ընթերցանության հատվածներով ինչպես ցուցադրվում և մեկնաբանվում, այնպես էլ գործնականորեն ամրապնդվում է սովորեցված նյութը: Վ. Համբարձումյանն զգալի աշխատանք է կատարել՝ իր ներկայացրած քերականական նյութին համապատասխան հատվածներ ընտրելու ուղղությամբ, և դրանով իսկ ստեղծել է մի հիանալի ընթերցարան կամ ավելի ճիշտ կլիներ ասել՝ քրեստոմատիա:Այս բոլորը նկատի առնելով՝ ես հանձնարարում եմ Վ. Համբարձումյանի «Գրաբարի ինքնուսույցը» տպագրության: Նա լայն ընդունելություն կգտնի ոչ միայն այն բոլոր մարդկանց մոտ, ովքեր ցանկանում են ինքնուրույն կերպով սովորել գրաբար լեզուն, այլև նրանց մոտ, ովքեր ունենալով ուսումնական դասագրքերը և սովորելով դրանցով՝ կուզեն ավելի ևս խորանալ գրաբարի ուսումնասիրության մեջ՝ ինքնուրույն աշխատանքով:

Է. Բ. ԱՂԱՅԱՆ
Երևան, 1988 թ.
20 դեկտեմբերի

# Ա. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

---

## 1. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

### ա) Գիր և այբուբեն

§ 1. Գրաբարը 5-րդ դարում սկիզբ առած, գրավոր հուշարձաններում գործածված հին գրական հայերենն է: Շուրջ յոթ հարյուր տարի (մինչև 12-րդ դ.) դրանով են ստեղծվել հայ հին մատենագրությունը և վիմագրությունը: Հետագայում ևս գրաբարով գրվում են գրքեր ու այլ կարգի հուշարձաններ: Գրաբարը գործածվում է մինչև 20-րդ դ. սկզբները, սակայն դա միջին գրական հայերենի և նոր գրական հայերենի զուգընթաց գործածություն է՝ երևան եկած որոշակի նպատակով ու հիմունքներով: Մեզ հասած գրաբար երկերը (ինքնուրույն և թարգմանական) այդ դարերում ստեղծվածի մի չնչին մասն են: Դրանց մի խոշոր մասը չի դիմացել ժամանակի փորձությանը, ոչնչացել է անցանկալի միջամտության պայմաններում:

Հայերեն գրավոր հուշարձանները գրված են ինքնատիպ գրերով, որոնք կոչում ենք *հայոց գրեր* (հայերեն տառեր), կամ ի պատիվ դրանց ստեղծողի՝ *մեսրոպյան գրեր:* Հայոց գրերն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը 405 թ. աշնանը: Գրերի գյուտն, անշուշտ, մեծ իրադարձություն է եղել հայոց կյանքում: Այն ունեցել է պատմական, քաղաքական և մշակութային կարևոր նշանակություն, խաղացել է մի ժողովրդի գոյապահպանման դեր:

Այդ գրերով ստեղծվեց թարգմանական և ինքնուրույն մի պատկառելի գրականություն, որ հիմք հանդիսացավ հետագա գրավոր մշակույթի ինքնօրինակ զարգացման: Հայոց գրերը կտրել են ժամանակները, հասել մինչև մեր օրերը, այսօր նույնպես անսասան պահում են մեր ինքնությունը:

**§ 2.** Մեսրոպ Մաշտոցի ստեղծած գրերը 36-ն են, որոնք ի մի բերված կազմում են հայերենի այբուբենը: Այբուբենի տառերը, ըստ կանոնավոր հերթականության, անվանման և թվային արժեքի, կազմում են մի ուրույն համակարգ (տե՛ս գծապատկեր):

**Գծապատկեր 1**

| 1-ին շարք | | | 2-րդ շարք | | | 3-րդ շարք | | | 4-րդ շարք | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | այբ | 1 | Ժ | ժե | 10 | Ճ | ճե | 100 | Ռ | ռա | 1000 |
| Բ | բեն | 2 | Ի | ինի | 20 | Մ | մեն | 200 | Ս | սե | 2000 |
| Գ | գիմ | 3 | Լ | լյուն | 30 | Յ | հի | 300 | Վ | վեվ | 3000 |
| Դ | դա | 4 | Խ | խե | 40 | Ն | նու | 400 | Տ | տյուն | 4000 |
| Ե | եչ | 5 | Ծ | ծա | 50 | Շ | շա | 500 | Ր | րե | 5000 |
| Զ | զա | 6 | Կ | կեն | 60 | Ո | ո | 600 | Ց | ցո | 6000 |
| Է | է | 7 | Հ | հո | 70 | Չ | չա | 700 | Ւ | վյուն | 7000 |
| Ը | ըթ | 8 | Ձ | ձա | 80 | Պ | պե | 800 | Փ | փյուր | 8000 |
| Թ | թո | 9 | Ղ | ղատ | 90 | Ջ | ջե | 900 | Ք | քե | 9000 |

**§ 3.** Հայերենի այբուբենն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով, որոնցով այն երբեմն մոտենում է այլ ժողովուրդների այբուբեններին, հաճախ տարբերվում նրանցից: Այդ առանձնահատկությունները, ինչպես գիտենք, հայոց այբուբենի առավելություններն են: Այսպես, այբուբենն արտացոլում է հայերենի բոլոր հնչյունները, որովհետև ստեղծված է *մեկ հնչյունին մեկ գիր* սկզբունքով: Այստեղ չկան տառերի վրա դրվող լրացուցիչ (տարբերիչ) նշաններ: Այն ունի *աջընթաց գրություն.* բառի մեջ տառերն իրար հաջորդում են դեպի աջ ընթացող հաջորդականությամբ: Սա կարևոր հանգամանք է, այբուբենի կատարելության ակնառու ցուցանիշ:

**Ծանոթություն 1:** Հայերեն բնագրերում, հատկապես մաթեմատիկական աշխատություններում, 9000-ից բարձր թվերն օգտագործվում են հատուկ նշանով (^), որը կոչվում է *բյուրի նշան,* և որով տվյալ տառը չորս զրոյով աճում է (բյուրը = էր 10,000-ի): Օրինակ՝ Ա̂ = 10,000, Բ̂ = 20,000, Գ̂ = 30,000, Ժ̂Ա = 110,000, Ժ̂Բ = 120,000 և այլն:

**Ծանոթություն 2:** Բնագրերում թվանիշ տառերը սովորականներից անջատելու համար երկուստեք վերցվում են միջակետերի կամ վերջակետերի մեջ: Օրինակ՝ .ԺԱ. (=11), .ԾԴ. (=54), :ՉՁԹ: (=789) և այլն:

Մյուս առավելությունը նրա *անջատական գրությունն* է, այսինքն՝ բառի մեջ ցանկացած դիրքում տվյալ տառը նշանակվում է գրության մեկ, միշտ նույն տեսքով: Մեր այբուբենը ոչ միայն «լիահունչ», այլև այսպես կոչված «լիագիր» այբուբեն է, որովհետև հայերենի բոլոր հնչյունների համար նրանում ստեղծված են առանձին գրեր, և դրանք իրենց *գրային* նշանակումն են ստանում *գրավոր խոսքում*: Սա այն դեպքն է, որ ի տարբերություն ուրիշ լեզուների այբուբենների (ասորերեն, պարսկերեն և այլն) ձայնավորները նույնպես ունենում են իրենց գրանշանները և համապատասխանաբար ընդգրկվում բառի գրավոր կազմի մեջ:

§ 4. Մեսրոպյան գրերի ամբողջությունը ոչ թե հայերենի տարբեր տարածքներում ժամանակին խոսվող տարբերակների, այլ ընդհանուր հայերենի հնչյունական համակարգն ընդգրկող այբուբեն է: Եվ ավելի քան 1600 տարի է, ինչ այդ այբուբենը գործածվում է առանց էական փոփոխությունների (եթե մի պահ անտեսենք *օ*-ի և *ֆ*-ի հետագա ներմուծումը, այն էլ լրացական նկատառումով), թեև հայոց լեզուն ակներևաբար ենթարկվել է հին, միջին և նոր շրջաններ ներկայացնող էական փոփոխությունների: Երկարատև ու անխախտ գործածությունն ամեն մի այբուբենի կատարելության ամենամեծ գրավականն է:

§ 5. Անընդմեջ գործածության ընթացքում այբուբենի տառերը, բնականաբար, ենթարկվել են գրչագրական նկատելի փոփոխության, գոյացել են զանազան գրատեսակներ՝ կապված մեզանում գրչության արվեստի զարգացման հետ: Այդ փոփոխությունը կատարվել է բարելավման և կատարելագործման եղանակով, այլև տեղի է ունեցել գրավոր խոսքը գրանցող և արտագրող անձանց («գրիչների») անհատական վերաբերմունքի հետևանքով:

Մեսրոպյան այբուբենը ներկայացնում է հիմնականում չորս գրատեսակ. *երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր* և *շղագիր:* Ըստ որում առանձնացվում են դրանց ենթատեսակներ, նշվում անցման գրերի մասին:

*Երկաթագիր* տառատեսակը Մեսրոպ Մաշտոցի ժամանակ հորինվածն է, որն օգտագործվել է մինչև 11-րդ դարը, այսինքն՝ մինչև հին գրական հայերենի շրջանի վերջը: Նման տառերն այսօրվա մեծատառերն են հիշեցնում, ունեն երեք ենթատեսակ՝ *գլխագիր* կամ *բուն մեսրոպյան երկաթագիր, միջին մեսրոպյան երկաթագիր* և *փոքր երկաթագիր: Բոլորգիրը* փոխարինում է երկաթագրին, թեև որոշ ժամանակ գործածվում է երկաթագրից բոլորգրին անցման գիրը: Բոլորգիրը գործածվում է 10-րդ դարի վերջերից, այդ անունն է ստացել ուղղահայաց գծերն իրար բոլոր («կլոր») ձևով միանալու պատճառով: *Նոտրգիրն* առաջ է գալիս խոսքն արագ գրանցելու պահանջով: Այն գործածվում էր 13-14-րդ դարերից: Այդպիսի գրերով էին արձանագրում նոտարները (*նոտրգիր*-ը պարզեցումն է *նոտարագիր* բառի): *Շղագիրը* գործածվել է 11-րդ դարից սկսած: Այդպես է կոչվել ոչ թե շեղ, այլ շյուղով («փայտի, եղեգնի, ծղոտի նուրբ, բարակ մասը՝ ճյուղը») գրելու համար: Այս գրատեսակից են առաջացել *այժմյան ձեռագիրը* և *արամյան գիրը:*

**Ընթերցանություն 1:** «Առն, զոր ի նախակարգ բանիս[1] նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ[2], էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն[3] վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն[4] Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն» (*Կոր.,* էջ 36):

1. *Նախակարգ բանի* - նախաբան, խոսքի սկիզբ:

2. *Փոյթ արարեալ մեր պատմելոյ* - մենք հոգ տարանք պատմելու, ջանացինք պատմել:

3. *Ի մանկութեան տիսն* - մանկության տարիներին, մանուկ հասակում:

4. *Եկեալ հասեալ (էր) ի դուռն* - եկել հասել էր դռանը, այն է՝ պալատը, արքունիքը:

**Ընթերցանություն 2:**

«Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
Եկ հաւանեաց[1] բանից աչագեղոյ դստերս Ալանաց`
Տալ զպատանին.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն[2] դիւցազանց
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն[3],
Կամ ծառայեցուցանել(ով) և ի ստրկաց կարգի պահել[4],
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել» (*Խոր.,* էջ 212):

1. *Եկ հաւանեա՛ց* - (խոսակցական ոճով ասված)՝ ե՛կ հավանություն տո՛ւր, ե՛կ (կլինի) լսի՛ր, արի՛ (կլինի) համաձայնի՛ր:

2. *Ոչ է օրէն* - օրենք չէ, վայել չէ:

3. *Բառնալ զկենդանութիւն* - վերացնել, վերջը տալ, ջնջել (զարմի) կենդանությունը:

4. *Ի ստրկաց կարգի պահել* - ստրկացնել, գցել ստրկական վիճակի մեջ, ստրուկների կարգում պահել:

**Վարժություն 1:** Բերված բնագրերից մեկ-երկու նախադասություն սովորել անգիր և փորձել այն գրավոր վերարտադրել:

**Վարժություն 2:** Սովորել առաջին բնագրի հետևյալ բառակապակցությունները. *նախակարգ բանի, վասն որոյ, փոյթ առնել, Տարօնական գաւառ, այր երանելի, Վարդան կոչեցեալ, մանկութեան տիք* ( > *տիսն*), *հելլենական դպրութիւն, գալ հասանել, աշխարհ Հայոց, Առաւան ոմն* ( > *ուրումն*):

**Առաջադրանք 1:** Սովորել գրերը (տառերն) այբբենական դասավորությամբ:

**Առաջադրանք 2:** Սովորել գրերի (տառերի) անվանումներն այբբենական դասավորությամբ:

**Առաջադրանք 3:** Սովորել գրերը (տառերը) ըստ հորիզոնական դասավորության՝ նրանց թվային արժեքը հեշտությամբ մտապահելու և վերհիշելու համար (*բիմս, գլյվ, դխնտ* և այլն):

**Հարցեր 1:** ա) Ե՞րբ է ստեղծվել այբուբենը, ի՞նչ գրերից է այն բաղկացած:

բ) Որո՞նք են հայերենի այբուբենի կարևոր առանձնահատկությունները:

գ) Ինչպիսի՞ն է այբուբենի գրերի (տառերի) թվային արժեքը:

դ) Ինչպե՞ս են արտահայտում այբուբենի տառերը 9000-ից բարձր թվերը:

ե) Որո՞նք են այբուբենի հիմնական գրատեսակները և ե՞րբ են գործածվել:

## բ) Ձ ա յ ն ա վ ո ր ն ե ր

**§ 6**. Գրաբարի պարզ ձայնավորները 6-ն են՝ *ա, ե, ը, ի, ո, ու:* Այդ ձայնավորների համար ևս կարելի է ասել, թե դրանց արտասանական տարբերությունը պայմանավորված է եղել խոսողի բերանի խոռոչում հանդես եկող ձայնի բարձրության (տեմբրի) փոփոխությամբ: Ձայնավորների արտասանությանն այս կամ այն չափով մասնակցում է լեզուն իր որևէ մասով, որի հետևանքով տեղի է ունենում ձայնավորների փոքրիշատե տեղայնացում: Վերջինս կատարվում է լեզվի առաջին, միջին և հետին մասերում, ըստ որում տեղայնացման ժամանակ լեզվի պահվածքը լինում է տարբեր աստիճանի, ոչ միատեսակ բարձրությամբ: Ձայնավորները՝ իբրև ընդհանուր հայկական երևույթի մի դրսևորումը, ամենից առաջ բաշխվում են ըստ արտասանության տեղայնացման և ըստ բարձրացման: Առաջին շարքի ձայնավոր են երկուսը՝ *ե*-ն, *ի*-

ն, միջին շարքի է մեկը՝ *ը*-ն, իսկ հետին շարքի են երեքը՝ *ա*-ն, *ո*-ն, *ու*-ն: Այդ ձայնավորներն ըստ բարձրացման փոքր-ինչ այլ կերպ են բաշխվում, այն է՝ *ա*-ն ստորին, *ե*-ն, *ը*-ն, *ո*-ն միջին, իսկ *ի*-ն և *ու*-ն վերին բարձրացման ձայնավորներ են (տե՛ս գծապատկեր):

**Գծապատկեր 2**

| | Առաջին շարք | Միջին շարք | Հետին շարք |
|---|---|---|---|
| Վերին բարձրացում | ի | | ու |
| Միջին բարձրացում | ե | ը | ո |
| Ստորին բարձրացում | | | ա |

**Ծանոթություն 3:** Հայոց այբուբենում *ե*-ից բացի կա *է* գիրը, որն սկզբնապես հնչումով որոշակիորեն տարբերվում էր նախորդից, ուներ երկբարբառային արտասանություն, **եյ* արժեքով: Հետագայում *ե*-ն ունենում է բաց, իսկ *է*-ն փակ արտասանություն, որպիսով դրանք հակադրվում են միմյանց: Հնչույթաբանորեն *ե*-ն պարզ, իսկ *է*-ն երկբարբառակերպ ձայնավոր է:

**Ծանոթություն 4:** Այբուբենում չունենք *ու*-ն՝ իբրեւ պարզ ձայնավոր, որովհետև սկզբնապես այն այդպիսին չի եղել, այլ *ո* և *ւ* գրերի միջոցով ունեցել է երկբարբառային (մոտավորապես՝ **ոու*) արտասանություն: Հետագայում *ու*-ն լիովին դարձել է պարզ ձայնավոր:

§ 7. Ձայնավորները բառի կազմում ոչ հավասար չափով են գործածվում: Հատկանշական է բառավերջի դիրքը: Այդ դիրքում *ե* և *ը* ձայնավորները հանդես չեն գալիս: *Ի* և *ու* ձայնավորների գործածությունը բառավերջի դիրքում սովորական է: Իսկ *ա* և *ո* ձայնավորները բառավերջում կիրառվում են մասնավոր դեպքերում: Այսպես, *ա*-ն և *ո*-ն գործածվում են շատ քիչ, մի քանի միավանկ բառերում, *ահա, ապա,* ցուցական դերանունների մի քանիսի ուղղական (*սա, դա, նա*), սեռական (*սրա, դրա, նրա),* տրական (*սմա, դմա, նմա*) և հայցական *(զսա, զդա, զնա*), *դու* անձնական դերանվան սեռական (*քո)* հոլովներում, բայերի բուն հրամայա-

կան եղանակի ներկա ժամանակի եզակի 2-րդ դեմքում (*փութա՛* «շտապի՛ր», *ասա՛* «ասա՛», *իմա՛* «իմացի՛ր»), օտար հատուկ անունների ուղղականում (*Անանիա, Եղեսիա, Թեբէա, Լիբիա, Մակեդոնիա, Ոլիմպիա):*

**Ընթերցանություն 3:** «Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ[1] ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր, զորմէ[2] կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Գնել պատանեակն եղբօրորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հնչէր: Ապա առ համբաւ ցանկութեան նուաճն տրփեալ լինէր[3] մին ևս հօրեղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անկանէր ի գաղտագողօնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարաւցէ: Եւ յորժամ կարացն տեսլեանն, որում ցանկայր, այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն կորստեան[4], ո՛ զիտէ՝ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել» (*Բուզ.,* էջ 182):

1. *Էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ* - Անդովկն ուներ մի գեղեցիկ աղջիկ:

2. *Զորմէ (ասէին, պատմէին)* - որի մասին (ասում էին, պատմում էին):

3. *Առ համբաւ ցանկութեան նուաճն տրփեալ լինէր* - հարսի համբավից բորբոքված սիրահարվեց:

4 *Հնարս խնդրէր առն կնոջն կորստեան* - կնոջ տղամարդուն՝ ամուսնուն կորստի մատնելու հնար էր մտածում՝ փնտրում:

**Ընթերցանություն 4:** «Արք երկու էին ի քաղաքի միում, մին մեծատուն և միւսն աղքատ: Եւ մեծատանն էին հօտք և անդեայք բազում յոյժ, և աղքատին և ոչ ինչ, բայց որոջ մի փոքր, և որոջն հաստատեալ էր ընդ նմա և ընդ որդիս նորա ի միասին, ի հացէ նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր և ծոց նորա ննջէր, և էր նորա իբրև զդուստր: Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն, և խնա-

յեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց և յանդէոց իւրոց. և էառ զորոջ աղքատին և արար առնն եկելոյ կերակուր» (*Բ Թագ.,* ԺԲ, 1 - 4):

**Վարժություն 3:** Առանձնացնել «Ընթերցանություն 3»-ի առաջին երեք նախադասության մեջ գործածված ձայնավորները, որոշել, թե դրանցից որը քանի անգամ է կիրառված:

**Վարժություն 4:** Կարդալ «Ընթերցամություն 3»-ը և առանձնացնել հետնալեզվային ձայնավոր ունեցող բառերը:

**Վարժություն 5:** Կարդալ «Ընթերցանություն 4»-ը և բնութագրել ձայնավորներն ըստ արտասանության:

**Առաջադրանք 4:** Լրացնել բառասկզբում բաց թողնված հնարավոր ձայնավորը կամ ձայնավորները. *-րկ, -րտ, -րդ, -գի, -րթ, -նչ, -չ, -րգ, -րազ, -ստ, -պա, -շխան, -ռնել, -սումն, -նապատ:*

Օրինակ՝ *-րդի ~ որդի:*

**Առաջադրանք 5:** Լրացնել բառամիջում բաց թողնված հնարավոր ձայնավորը կամ ձայնավորները. *ան-ն, թ-գ, տ-սն, բ-գ-մ, անգ-մ, եր-ս-ն, թ-գ-ւ-ր, ուժ-ղ, հ-ս-կ, գ-լ, խ-ստ-ն-մ, զբ-սն-մ, ք-նգի:*

Օրինակ՝ *բ-րի ~ բարի:*

**Առաջադրանք 6:** Լրացնել բառավերջում բաց թողնված հնարավոր ձայնավորը կամ ձայնավորները. *այգ-, կաղն-, աշտ-, ուստ-, տար-, լեզ-, ած-, երկ-, չ-, կատ-, առաջ-, ար-, առաքին-, եզակ-, յոգնակ-, տեղ-, պատասխան-, հրաշալ-:*

Օրինակ՝ *արփ- ~ արփի:*

**Հարցեր 2:** ա) Որո՞նք են պարզ ձայնավորները և արտասանական ինչպիսի՞ տարբերություններ ունեն:

բ) Հնչյունական ի՞նչ հատկանիշներով են իրարից տարբերվում ձայնավորները:

գ) Ձայնավորները բառի կազմում գործածության ինչպիսի՞ չափեր են ընդունում:

դ) Գաբարում ձայնավորներից ո՞րը բառի ո՞ր դիրքում կարող է գործածվել:

## գ) Բ ա ղ ա ձ ա յ ն ն ե ր

**§ 8.** Գրաբարի բաղաձայնները 30-ն են՝ *բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք:* Դրանք կազմում են առանձին համակարգ, որին հիմնական գծերով համապատասխանում է արդի հայերենի բաղաձայնական համակարգը: Այդուհանդերձ այդ համակարգերի միջև կան տարբերություններ:

**§ 9.** Գրաբարի բաղաձայնական համակարգը բնութագրվում է որոշակի տարբերակիչ հատկանիշներով: Վերջիններս, կարելի է ասել, ընդհանուր հայերենյան երևույթ են, որով հայերենը տարբերվում է այլ լեզուներից և ընդհանրանում ցեղակից լեզուների հետ:

Բաղաձայնների հնչյունական բնութագրման համար կարևոր հանգամանք են դրանց արտաբերության ձայնավորումը, տեղը, եղանակը և կազմությունը:

ա) Ըստ ձայնավորման կամ, ինչպես ընդունված է ասել, «իրենց պարունակած ձայնի»՝ բաղաձայնները բաժանվում են չորս խմբի՝

ձայնորդներ՝ *յ, ռ, ն, լ, ր, մ*

ձայնեղներ՝ *ղ, զ, ժ, վ, գ, դ, բ, ձ, ջ*

խուլեր՝ *հ, խ, ս, շ, կ, տ, պ, ծ, ճ*

շնչեղ խուլեր՝ *ք, թ, փ, ց, չ:*

բ) Ըստ արտաբերման տեղի՝ բաղաձայնները բաժանվում են հինգ խմբի՝

կոկորդային՝ հ

հետնալեզվայիններ՝ *ղ, խ, գ, կ, ք*

միջնալեզվային՝ *յ*

առաջնալեզվայիններ՝ *ռ, ն, լ, ր, զ, ժ, ս, շ, դ, տ, թ, ձ, ջ, ծ, ճ, ց, չ*

շրթնայիններ՝ *մ, վ, բ, պ, փ:*

Վաղուց նկատված է, որ այս հատկանիշի հիման վրա առանձնացվող խմբերից վերջին երկուսում դասակարգումը վերջնական չէ, քանի որ առաջնալեզվայինների արտաբերման ժամանակ լեզվի համապատասխան տեղաբաշխմանը զուգընթացաբար որոշակի մասնակցություն են ունենում քիմքը, ատամնաշարը, որպիսի նկատառումով էլ առաջնալեզվայիններն իրենց հերթին բաժանվում են երեք ենթախմբի՝

լեզվաքմայիններ՝ *ռ, ն*

լեզվատամնայիններ՝ *լ, ր, դ, տ, թ, ձ, ջ, ծ, ց, չ*

միջատամնայիններ՝ *զ, ժ, ս, շ:*

Իսկ շրթնայինների դեպքում հնարավոր է ոչ միայն «մաքուր» շրթնային արտաբերում, այլև ատամնաշարի որևէ մասի մասնակցություն շրթնային արտաբերմանը, որպիսի նկատառումով շրթնայիններն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի՝

երկշրթնայիններ՝ *մ, բ, պ, փ*

շրթնատամնային՝ վ:

գ) Ըստ արտաբերման եղանակի բաղաձայնները բաժանվում են երեք խմբի՝

պայթականներ՝ *գ, դ, բ, կ, տ, պ, ք, թ, փ*

շփականներ՝ *դ, զ, ս, վ, հ, խ, ս, շ:*

հպաշփականներ (կամ պայթաշփականներ)՝ *ձ, ջ, ծ, ճ, ց, չ:*

դ) Ըստ կազմության՝ բաղաձայնները բաժանվում են երկու խմբի՝ պարզ (անտրոհելի) և բարդ (տրոհելի՝ մեկից ավելի հնչյուններից կազմված). բարդ բաղաձայնները ինն են՝

պայթական շնչեղ խուլեր՝ փ, ք, թ

հպաշփականներ՝ ձ, ջ, ծ, ճ, ց, չ:

Այդ բաղաձայնների բարդ լինելն ամենից առաջ նկատելի է դրանց անվանումներում՝ շնչեղ խուլ, հպաշփական: Ըստ որում, հպաշփականներից առաջին չորսը, այսպես կոչված, կրկնաբարդ են (երկու հնչյունից բաղադրված), իսկ վերջին երկուսը՝ եռաբարդ (երեք հնչյունից բաղադրված):

Այսպես, կրկնաբարդ բաղաձայններից շնչեղ խուլերը բաղադրված են իրենց համապատասխան խուլ և կոկորդային բաղաձայններով՝ *փ = պ + հ, ք = կ + հ, թ = տ + հ:*

Կիսաշփականներից ձայնեղները բաղկացած են համապատասխան պայթական և շփական (միջատամնային) ձայնեղներով՝ *ձ = դ + զ, ջ= դ + ժ,* խուլերը՝ համապատասխան պայթական և շփական (միջատամնային) խուլերով՝ *ծ = տ + ս, ճ = տ + շ:*

Այնինչ, եռաբարդ կիսաշփական շնչեղ խուլ բաղաձայնները բաղադրված են պայթական շնչեղ (լեզվատամնային) և շփական (միջատամնային) խուլերով՝ ց = թ (տ + հ) + ս, չ = թ (տ + հ) + շ (տե՛ս գծապատկեր):

**Գծապատկեր 3**

| | | | | Կոկորդային | Հետնա լեզվային | Միջնալեզվային | Առաջնալեզվային | | | | | | Շրթնային | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Լեզվաքմային | | Լեզվատամնային | | Միջնատամնային | | Երկշրթնային | Շրթնատամնային |
| Պարզ | Ձայնորդ | | | | | յ | ռ | ն | լ | ր | | | մ | ւ |
| | Շփական | | Ձայնեղ | | ղ | | | | | | զ | ժ | | վ |
| | | | Խուլ | հ | խ | | | | | | ս | շ | | |
| | Պայթական | | Ձայնեղ | | գ | | | | դ | | | | բ | |
| | | | Խուլ | | կ | | | | տ | | | | պ | |
| Բարդ | | Շնչեղ | Ձայնեղ | | | | | | | | | | | |
| | | | Խուլ | | ք | | | | թ | | | | փ | |
| | Կիսաշփական | | Ձայնեղ | | | | | | ձ | ջ | | | | |
| | | | Խուլ | | | | | | ծ | ճ | | | | |
| | | Շնչեղ | Ձայնեղ | | | | | | | | | | | |
| | | | Խուլ | | | | | | ց | չ | | | | |

**Ծանոթություն 5:** Սույն դասակարգման մեջ մոտավոր տեղ է հատկացված *ւ*-ին, որովհետև այն իր բնույթի պատճառով չի տեղավորվում մեկ վանդակում: Է. Աղայանն իրավամբ գտնում է, որ *ւ*-ը, «շրթնային-շփական ձայնորդ» է, որը «ժամանակի ընթացքում վերածվել է սովորական *վ*-ի և ժամանակակից գրական հայերենում գոյություն չունի, բայց հայերենի որոշ բարբառներում պահ-

պանվել է *(Է. Բ. Աղայան,* Լեզվաբանության ներածություն, Ե., 1967, էջ 144 -145):

**§ 10.** Ի տարբերություն արդի հայերենի՝ գրաբարի բաղաձայնական համակարգն ունի որոշ զանազանություններ: Դրանք կրում են մասնավոր բնույթ և չեն տարածվում ողջ համակարգի վրա:

ա) Շրթնային շփական ձայնորդ *ւ* բաղաձայնը աստիճանաբար վերածվում է շրթնատամնային ձայնեղ շփական *վ* բաղաձայնի, և *ւ*-ը փաստորեն դուրս է մնում գրաբարի բաղաձայնական համակարգից: Այն պահպանվում է միայն *ու* ձայնավորի գրային արտահայտության մեջ:

բ) Գրաբարում կար երկու տեսակ *լ*, մեկը՝ առաջնալեզվային (փափուկ արտասանությամբ), մյուսը՝ կատկային (կոշտ արտասանությամբ): Այս վերջինը հետզհետե վերածվում է *ղ*-ի. դա ապացուցվում է առհասարակ հայերենում առկա, ծագումով նույն կամ նույնարմատ զուգահեռ բառերի գոյության փաստով (օրինակ՝ *ջիլ - ջիղ, նշոյլ - նշոյղ, այլ - այղ, մառախուղ - մառախլապատ* և այլն): Այնուհետև, նկատելի է միևնույն բառի զուգահեռ գրություն (օրինակ՝ *Ապողոն - Ապոլոն, Աղեքսանդրիա - Ալեքսանդրիա* և այլն):

գ) Գրաբարի հին շրջանում չկար *ֆ* հնչյունը, այն հետագայում (13-րդ դարից հետո) է մուտք գործել հայերենի մեջ: Մինչ այդ այլ լեզուներից փոխառյալ այն բառերում, որոնցում կար *ֆ* հնչյունը, մեզանում դառնում էր *փ* կամ *հ* (օրինակ՝ պարսկերեն *ֆրաման, ֆրեշտակ* և հայերեն *հրաման, հրեշտակ,* հունարեն *դաֆնէ, ֆիլոսոֆ, ֆոինքս* և հայերեն *դափնի, փիլիսոփա, փյունիկ* և այլն):

**Ընթերցանություն 5:** «Յորժամ զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք[1], քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յստակել և զխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել[2], զի զայն, զոր առաջի եդ՝ հասանել կարասցէ: Նա և որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի, պարտի զպղտորու-

թիւն աչացն՝ զաղտն և զբիժն ի բաց պարզել, զի մի՛ մթարքն, որ զբբօք շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին[3]: Եւ արդ քանզի մի էութիւնն անքնին է[4] և անհաս բռնութեամբ, առ նորա անքննութիւնն անգիտութեան մատուցանելի է, և առ էութիւն նորին դաւանութիւն գիտութեան և ոչ քննութեան: Զի որ էն՝ պարտի զի մշտնջենաւոր իցէ և անսկիզբն, որոյ ոչ սկիզբն յումեքէ առեալ լինելոյ, և ոչ ունի ոք ի վեր քան զինք, զոր պարտ իցէ նմա պատճառ կարծել կամ իմանալ, եթէ ի նմանէ իցէ առեալ սկիզբն էանալոյ: Զի ոչ ոք է առաջին քան զնա, և ոչ ոք է յետոյ նման նմա, և ոչ ընկեր հաւասար նորին, և ոչ էութիւն հակառակ նմա, և ոչ գոյութիւն ընդդիմակաց, և ոչ բնութիւն հիւթաքեր ի պէտս նորա, և ոչ նիւթ ինչ, յորմէ առնիցէ, զոր առնելոց իցէ[5], այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն և ի գոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ[6]. որպէս երկինք վերինք և որ ինչ յերկինս, և երկինք երևելիք, որ ի ջուրց, և երկիր, և ամենայն ի նմանէ և ի նմա[7], յորմէ ամենայն, և ինքն ոչ յումեքէ» (*Եզնիկ,* էջ 5-6):

1. *Զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէ ճառիցէ ոք* - մեկը խոսի աներևույթի և նրա հավիտենական զորության մասին:

2. *Պարտի ... զյոյզս շարժմանց պարզել* - պետք է ... հոգու խռովքը վերացնի:

3. *Զի մի՛... արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին* - որպեսզի ... հստակ՝ պայծառ լույսին նայելու պատճառ՝ արգելք չլինեն:

4. *Քանզի մի էութիւնն անքնին է* - որովհետև մի էությունն անքննելի է:

5. *Յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ* - որից ստեղծեր, ինչ ստեղծելու էր:

6. *Որ ի լինելն և ի գոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ* - որ լինելիս ու գոյանալիս առաջացան գոյություն չունեցողից՝ անգոյից, և գոյություն ունեցողից՝ գոյից:

7. *Եւ ամենայն ի նմանէ և ի նմա* - և նրանից (եղած) և նրանում (եղած) ամեն ինչ:

**Ընթերցանություն 6:** «Ձմեռն էանց[1], անձրևք անցին և գնացեալ մեկնեցան: Ծաղիկք երևեցան յերկրի մերում[2]. ժամանակ էհաս յատանելոյ[3]. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում. թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք մեր ծաղկեցան և ետուն[4] զհոտս իւրեանց: Արի՛, եկ, մերձաւոր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ ...: Երևեցո՛[5] ինձ զերեսս քո և լսելի արա ինձ զբարբառ քո. զի բարբառ քո քաղցր է և տեսիլ[6] քո գեղեցիկ (*Երգ երգոց, Բ,* 11-14):

1. *Էանց* - անցավ:
2. *Յերկրի մերում* - մեր երկրում:
3. *Ժամանակ էհաս յատանելոյ* - հասավ՝ եկավ էտելու՝ էտի ժամանակը:
4. *Ետուն* - տվին:
5. *Երևեցո՛* - ցո՛ւյց տուր:
6. *Տեսիլ* - տեսք:

**Վարժություն 6:** Առանձնացնել «Ընթերցանություն 5»-ի առաջին նախադասության մեջ գործածված բաղաձայնները և բնորոշել դրանք:

**Վարժություն 7:** Կարդալ «Ընթերցանություն 6»-ը, առանձնացնել և բնութագրել եղած պայթական բաղաձայնները:

**Վարժություն 8:** Կարդալ «Ընթերցանություն 6» -ը և սովորել անգիր:

**Վարժություն 9:** Առանձնացնել «Ընթերցանություն 6»-ից այն բառերը, որոնցում կիրառված են հպաշփական բաղաձայններ:

**Առաջադրանք 7:** Հետևյալ բառերում լրացնել հպաշփական բաղաձայնները՝ *ան-րեւ, ան-անել, -աղիկ, -այն, ար-ակել, բողբո-, մեր-աւոր, գեղե-իկ, քաղ-ր:*

Օրինակ՝ *ան- ն ~ անձն:*

**Առաջադրանք 8:** Սովորել հետևալ արտահայտությունները. *մի լիցի արգել* («արգելք չլինի»), *ի լինելն և ի գոյանալն, ի գոյէ և ի չգոյէ, ի նմանէ և ի նման, ժամանակ էհաս, յերկրի մերում*:

**Առաջադրանք 9:** Վերհիշել այնպիսի բառեր, որոնցում գործածված լինեն պայթական շնչեղ խուլ բաղաձայններ:

**Հարցեր 3:** ա) Հնչյունական ի՞նչ հատկանիշներով են միմյանցից տարբերվում *բ, դ, գ, պ, տ, կ, փ, թ, ք* բաղաձայնները:

բ) Ի՞նչ հատկանիշներով են բնութագրվում գրաբարի բաղաձայնները:

գ) Որո՞նք են գրաբարի հետնալեզվային բաղաձայնները:

դ) Քանի՞ խմբի են բաժանվում գրաբարի բաղաձայններն ըստ արտաբերման եղանակի և ի՞նչ բաղաձայններ են ընդգրկվում յուրաքանչյուր խմբում:

ե) Որո՞նք են գրաբարի բարդ բաղաձայնները:

## դ) Երկբարբառներ և եռաբարբառներ

**§ 11.** Գրաբարի երկբարբառները 10-ն են՝ *այ, աւ, եա, եւ, իւ, ոյ, ուա, ուե, ուի, ււո (ւո):* Բնագրերում դրանք գործածվում են տարբեր չափերով: Առհասարակ երկբարբառները վանկի (տե՛ս §§ 5 -16) կազմում ամբողջական հնչույթի արժեքով հանդես եկող, որոշակի իմաստազատիչ դեր ունեցող հնչյունական կապակցություններ են: Հակառակ պարագայում, երբ խախտվում է երկբարբառի նշված պարտադիր հատկություններից մեկը կամ մյուսը, այդ դեպքում երկբարբառի փոխարեն ունենում ենք սովորական կապակցություն: Այսպես, *այ*-ը երկբարբառ է բաղաձայնից առաջ (օրինակ՝ *հայր, մայր, կայծ, փայտ*), ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝ ձայնավորից առաջ (օրինակ՝ *ամայանալ, արքայական, կայան, փեսայութիւն*) և բառավերջում (օրինակ՝ *արքայ, տղայ, ծառայ, փիլիսոփայ):*

Գրաբարում երկբարբառները բաղադրվում են *ա, ե, ի, ո* ձայնավորներով և *յ, ւ* ձայնորդներով կամ *ե* ձայնավորով, ընդ որում ձայնավորները վանկ են կազմում, վանկարար են, իսկ ձայնորդները՝ ոչ: Ստացվում է այնպես, որ երկբարբառի վանկարար բա-

ղադրիչին նախորդում կամ հաջորդում է ոչ վանկարար բաղադրիչը: Ըստ այդմ էլ երկբարբառներն ավանդաբար բաժանվում են երկու խմբի. ա) իջնող երկբարբառներ, որոնցում ձայնորդ (ոչ վանկարար) բաղադրիչը հաջորդում է ձայնավոր (վանկարար) բաղադրիչին՝ *այ, աւ, եւ, իւ, ոյ*, բ) բարձրացող երկբարբառներ, որոնցում ձայնավոր (ոչ վանկարար) բաղադրիչը նախորդում է ձայնավոր (վանկարար) բաղադրիչին՝ *եա, ուա, ուե, ուի, ուո (ւո):* Իջնող երկբարբառները բաղադրվում են *յ, ւ* ձայնորդներով, իսկ բարձրացողները՝ *ւ* (գրությամբ *ու* կամ *ւ*) ձայնորդով, *յ* (գրությամբ *ի* կամ *ե*) ձայնորդ ձայնավորով (մեկ դեպքում):

Երկբարբառի ձայնավոր և ձանորդ բաղադրիչների միջև գոյություն ունի մոտավորապես նույն հարաբերությունը, ինչ առհասարակ առկա է հայերենի բարդ և ածանցավոր բառերի բաղադրիչների (բաղադրող և բաղադրվող հիմքերի) միջև. երկբարբառի բաղադրող (վանկարար) հիմքը ձայնավորն է, իսկ բաղադրվողը (ոչ վանկարարը)՝ ձայնորդը:

Երկբարբառներն այդպիսին են արտասանական շղթայի որոշակի դիրքերում, իսկ այլ դիրքերում սովորական կապակցություններ են: Ուստի երկբարբառի հնչյունական գոյացումն ունի դիրքային պայմանավորվածություն:

**§ 12.** Գրաբարի *այ, աւ, եւ, իւ, ոյ* հնչյունակապակցությունները իջնող երկբարբառ են հնարավոր դիրքերից միայն մեկում՝ բաղաձայնից առաջ: Օրինակ՝ *այգի, այպանեմ, այց, գայլ, լայն, խայծ, արտաւսր, աւր, պաշտաւն, տաւն, ցաւղեմ, քաւշ* («նոխազ»), *ալեւր (ալիւր), աղբեւր (աղբիւր), առեւծ(առիւծ), եղջեւր (եղջիւր), հարեւր (հարիւր) գոչիւն, երկիւղ, թնդիւն, թռժիւն* [«(գազանի ձագ՝ կորյուն»], *իշխանութիւն, հիւթ, բոյս, բոյր, գոյն, կապոյտ, պարոյկ, փոյթ* և այլն:

Իսկ մնացած երկու դիրքում՝ բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում, դրանք ձայնավորի ու ձայնորդի (բաղաձայնի) սովորական կապակցություն են: Օրինակ՝ *դայեակ, հայիմ, Հայոց (< Հայք), սկայ, տիտանայ (< տիտան), աւանդ, աւե-*

*տիք, բաւական, բնաւ, հաւ, չափաւոր, արեւ, բեւեռ, դեղեւիմ* («տարուբերվել. դողդողալ»), *երեւիմ, տերեւ, դիւան, բանիւ (< բան), հացիւ (< հաց), տիւ, արծաթոյ (< արծաթ), զահոյք, գոյու-թիւն, գոյք* եւ այլն:

**§ 13**. Գրաբարի *եա, ուա, ուե, ուի, ուո (ւո)* հնչյունակապակ-ցությունները բարձրացող երկբարբառ են միայն բաղաձայնից առաջ: Օրինակ՝ *պատանեակ, մատեան, սենեակ, եղեամն, վայր-կեան, հարուած, հատուած, լուանամ, Կորդուաց (< Կորդուք), արուարձան, արուեստ, թուեմ, որդւոց (< որդի), ոսկւոյ (< ոսկի), տեղւոջ (< տեղի), հռոմայեցւոց (< հռոմայեցի)* և այլն:

Բարձրացող երկբարբառները մյուս դիրքերում՝ բառամիջում ձայնավորից առաջ չեն հանդիպում, իսկ բառավերջում, բացառու-թյամբ *ուի* երկբարբառի մեկ-երկու դեպքի (օրինակ՝ *արծուի*), վե-րածվում են այլ կարգի հնչյունակապակցությունների, ասենք՝ եռաբարբառի (օրինակ՝ *եա +յ - եայ, ուո* կամ *ւո +յ -ւոյ* և այլն):

**§ 14**. Գրաբարի եռաբարբառները հինգն են՝ *եայ, եաւ, ուայ, ուաւ, ուոյ (ւոյ):* Նման հնչյունակապակցությունները արտասա-նության տեսակետից, ի տարբերություն երկբարբառների, բարձ-րացող-իջնող են, որովհետև վանկարար *ա* և *ո* ձայնավորները ընկած են ոչ վանկարար ձայնորդների միջև: Եվ հայերենի պատմական հնչույթաբանության կարևորագույն խնդիրներից է պարզել, թե նման հնչյունական բաղադրությունը տեղի է ունեցել միանգամի՞ց, թե՞ երկանդամ, աստիճանական բաղադրման սկզ-բունքով [նախ բարձրացող, այնուհետև՝ վերջինիս իջնող բաղադ-րում. օրինակ՝ *(ե + ա) + յ, (ե +ա) + ւ* և այլն, նախ իջնող բաղադրում, այնուհետեւ բարձրացող բաղադրում. օրինակ՝ *ե + (ա + յ), ե + (ա +ւ)* և այլն]:

Հիշյալ եռաբարբառները հանդես են գալիս միայն բաղաձայ-նից առաջ: Օրինակ՝ *պաշտաւնեայք, անդեայք* («նախիր»), *ըն-տանեաւք, արդեաւք, հովուաւք* (հովիվներով), *տուայք* (տվիք), *տուայց* (տալու եմ, կտամ, պիտի տամ) և այլն:

Իսկ բառավերջում դրանք երկբարբառի և ձայնորդ բաղաձայնի կապակցություն են: Օրինակ՝ *սեաւ, կեայ* (ապրում է, կենդանի է), *տուայ* (տվի), *տուաւ* (տվեց), *անուոյ, պատուոյ* (պատվի) և այլն:

**Ընթերցանություն 7:** «Այս, ասէ, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ: Սա ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ[1], և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն[2] միապետել ի վերայ յամենայն սկայիցն և դիւցազանց: Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան[3] ընդ լայնութեան ամենայն երկրի, ի մէջ բազմակոյտ սկայիցն, անհուն խօլաց և ուժաւորաց: Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ[4] բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ[5] յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև երեքհարիւր[6], և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց[7] և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս» (*Խոր.,* էջ 39-40):

1. *Քաջ և երեւելի լեալ* - քաջ և երևելի եղավ՝ հանդիսացավ:
2. *Ամբառնալ զձեռն* - ձեռք բարձրացնել:
3. *Ի տարածանել ազգի մարդկան* - մարդկային ազգի՝ ցեղի տարածվելու ժամանակ:
4. *Պատահմունք ի դէպ ելանէին Բելայ* - Բելին պատահաբար հաջողվեց:
5. *Չու արարեալ գնայ* - չվում գնում է:

6. *Թուով իբրեւ երեքհարիւր* - թվով մոտ երեք հարյուր:

7. *Տուն կալուածոց* - տուն ու տեղ:

**Ընթերցանություն 8:** «Որդեա՛կ իմ, մի՛ նախանձիր ընդ չարս[1], և մի՛ ցանկանայցես կալ ընդ նոսա, զի ստութիւն խորհի սիրտ նոցա և ցաւս խօսին շրթունք նոցա: Իմաստութեամբ շինի տուն և հանճարով կանգնի: Եւ խորհրդով լնուն շտեմարանք ամենայն մեծությամբ պատուականաւ և բարեօք: Լաւ է իմաստուն, քան զհզօր, և հանճարեղ, քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս... Մի՛ մատուցաներ զամբարիշտն յարօտս արդարոց[2], և մի՛ խաբիր լրությամբ որովայնի[3]... Մի՛ խնդար ընդ չարագործս, և մի՛ նախանձիր ընդ մեղաւորս... Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում, և մի՛ խաբիր շրթամբք քովք» (*Առակք*, ԻԴ, էջ 676- 677):

1. *Մի՛ նախանձիր ընդ չարս* - մի՛ նախանձիր չարիքի վրա:

2. *Մի՛ մատուցաներ զամբարիշտն յարօտս արդարոց* - մի՛ մոտեցնի՝ տանի անօրենը արդարների (փոխաբերաբար՝ արոտների) մեջ:

3. *Մի՛ խաբիր լրությամբ որովայնի* - մի՛ խաբվիր կուշտ լինելուց:

**Վարժություն 10:** Առանձնացնել «Ընթերցանություն 7»-ից երկբարբառները՝ նշելով, թե դրանցից որոնք են իջնող, որոնք՝ բարձրացող:

**Վարժություն 11:** Կարդալ «Ընթերցանություն 7»-ը, բանավոր ցույց տալ գործածված եռաբարբառները և բնութագրել դրանք:

**Վարժություն 12:** Կարդալ «Ընթերցանություն 8»-ը և բնութագրել գործածված իջնող երկբարբառները:

**Վարժություն 13:** «Ընթերցանություն 8»-ից առանձնացնել այն բառերը, որոնցում երկբարբառի փոխարեն առկա է սովորական հնչյունակապակցություն:

**Առաջադրանք 10:** Լրացնել հետևյալ բառերում բաց թողնված երկբարբառները. *ստ--ն, ար--ստական, դիպ--ծ, դրդ--ցուցանել,*

*եղջ--, երկ--ն, երկ--նալ, երկաքանչ--ր, երկ-ղ, հ--ղ, ծ--ն, մ--րի, շի-նութ--ն, ն--րակ, ողջ--ն, փ--տ, քսութ--ն:*

Օրինակ՝ *ն--թ ~ նիւթ:*

**Առաջադրանք 11:** Սովորել հետևյալ բառակապակցություն-ները. *ամբառնալ զձեռն, միապետել սկայիցն, տիրել ի վերայ մի-մեանց, հնազանդ լինել, յետ ծնանելոյ, չու առնել, տալ ի ժառան-գութիւն:*

**Առաջադրանք 12:** Լրացնել հետևյալ բառերում բաց թողն-ված հնչյունակապակցությունները. *անց--որ, --ազանի, բան--որ, բն--, դար--անդ, դ--ան, հ-անել, հ--աստեաւ, մտ--որ, ն--ասարդ, նշ--ակ, պ--ազատութիւն, սակ--, վաղ--:*

Օրինակ՝ *ան-- ~ անիւ:*

**Առաջադրանք 13:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *մի՛ նախանձիր ընդ չարս. լաւ է իմաստուն, քան զհզօր, մի՛ խնդար ընդ չարագործս, մի՛ լինիր վկայ սուտ ընկերի քում:*

**Հարցեր 4:** ա) Ինչո՞վ են տարբերվում երկբարբառները սովո-րական հնչյունակապակցություններից:

բ) Որո՞նք են գրաբարի երկբարբառները և ի՞նչ հնչյուններով են բաղադրվում:

գ) Երկբարբառները բառի ո՞ր դիրքում են երկբարբառ:

դ) Երկբարբառները բառի ո՞ր դիրքում են սովորական հնչյունակապակցություն:

ե) Որո՞նք են գրաբարի եռաբարբառները և ի՞նչ հնչյուններով են բաղադրվում:

զ) Որո՞նք են առավել գործածական երկբարբառները:

# 2. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## ա) Վ ա ն կ ն շ ե շ տ

**§ 15.** Վանկն արտասանական ավելի մեծ միավոր է, քան հնչյունը, այն հնչյունաշարի որոշակի հատվածն է: Ընդհանուր առմամբ վանկատման համար կարևոր հանգամանք են արտասանական շղթայի դրսևորվածությունը, արտաբերվող հնչյունների հնարավոր խմբակցությունը, նրանց մի մասի հնչեղությունը կամ լարվածությունը, վերջիններիս բարձրացումը կամ ցածրացումը: Ըստ այդմ վանկն արտասանական շղթայի թուլացմամբ կամ դադարով առանձնացող, բարձր հնչեղություն և ցածր լարվածություն ունեցող հնչյունախումբ է:

Գրաբարում վանկը բնութագրվում է հնչյունների քանակով և գրաված դիրքով:

ա) Ըստ հնչյունների քանակի՝ վանկերը լինում են մենահնչույթ և բազմահնչույթ (օրինակ՝ *ա-րագ, ա-շա-կերտ, ամ-բառ-նալ, մե-ծա-տուն* և այլն): Մենահնչույթ է մեկ հնչյունով կազմված վանկը: Բազմահնչույթ են երկու և ավելի (մինչև չորս) հնչյուններով կազմված վանկերը, որոնք, իրենց հերթին, կոչվում են երկհնչույթ, եռահնչույթ և  քառահնչույթ (օրինակ՝ *գա-ւա-ռա-պետ, դաս-տա-կերտ, զօ-րա-ժո-ղով, տագ-նապ, տա-րա-պարտ, քա-ջա-մար-տիկ, օ-ծա-նել* և այլն):

բ) Ըստ հնչյունների՝ միմյանց նկատմամբ գրաված դիրքի՝ վանկերը լինում են բաց և փակ: Նման տարբերակումը պայմանավորված է վանկարար հնչյունի՝ ձայնավորի (նաև երկբարբառի) և ոչ վանկարար հնչյունի՝ բաղաձայնի գրաված դիրքով: Վանկարար հնչյունով վերջացող վանկը բաց է (օրինակ՝ *ա-ւե-լի, ա-պա-կի, փու-թա-նա-կի* և այլն), իսկ ոչ վանկարար հնչյունով վերջացողը՝ փակ (օրինակ՝ *ա-ղա-ղակ, կար-կան-դակ, վան-դակ* և այլն):

**§ 16.** Նկատի ունենալով վանկակազմության նման առանձնահատկությունները՝ հայերենագիտության մեջ առանձնացվում է

վանկերի վեց տեսակ (ավելի մանրամասն տե՛ս *Է. Բ. Աղայան*, Գրաբարի քերականություն, հ. 1, Ե., 1964, էջ 260-262).

ա) երկբաց կամ մենահնչույթ վանկ *ո՞* (հարցական դերանուն), *ա՜* (բացականչության նշան), *ի* (նախդիր), *ա-սել, ե-րամ, ու-րանալ, ո-գի, ո-րակ* և այլն,

բ) նախափակ երկհնչույթ վանկ՝ *դա-սա-տու, դե-ղա-տու, թե-թե-ւա-կի, բա-նա-լի, գե-ղա-նի* և այլն,

գ) վերջափակ երկհնչույթ վանկ՝ *աղ, աջ, ահ, ես, որ, ըն-կեր, եր-թալ, եր-կաթ* և այլն,

դ) վերջափակ եռահնչյույթ վանկ՝ *դան-դաղ, դաս-տակ, պատ-կեր, պատ-գամ, համ-բաւ* և այլն,

ե) երկփակ եռահնչույթ վանկ՝ *դէզ, դէմ, դող, դէմ-ընդ-դէմ, կար-կուտ, կար-միր* և այլն,

զ) երկփակ քառահնչույթ վանկ՝ *կարճ, բարկ, իշ-խա-նա-նիստ, եր-կայն, եր-դումն, մա-տունք* («մատներ»), *բարձ, սիրտ, բերկ-րա-լի* և այլն:

**§ 17.** Հայերենում, առհասարակ, խոսքի արտաբերումն իրականանում է անհավասարաչափ բաշխվածությամբ: Խոսքաշարի որոշ հատվածներ արտաբերվում են ավելի ուժգին, ավելի բարձր հնչումով, քան մյուսները: Այս ընդհանուր երևույթը սովորաբար կոչվում է խոսքի արտասանական շեշտվածություն: Գրաբարում ևս խոսքը շեշտված է, ավելին՝ նրանում գրեթե յուրաքանչյուր բառ արտաբերվում է որոշակի շեշտումով (բացառիկ են անշեշտության դեպքերը):

Գրաբարում շեշտը կայուն շարժական է. կայուն է, որովհետեւ միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, և շարժական է, քանի որ բառի աճի (բարդում, ածանցում, թեքում) հետ միշտ տեղափոխվում է դեպի վերջին վանկ: Օրինակ՝ *բարի՛ - բարեմա՛սն > բարեմասնութի՛ւն > բարեմասնութենէ՛, բարի՛ - բարեշո՛ւք > բարեշքե՛ղ > բարեշքեղութի՛ւն > բարեշքեղութենէ՛, պատանի՛ - պատանեա՛կ > պատանեկութի՛ւն > պատանեկութենէ՛* և այլն:

**Ծանոթություն 6:** Շեշտը վերջին վանկում չի դրվում գաղտնավանկ բառերի *(արկղ, դուստր, աստղ* և այլն), դերանուն բաղադրվող հիմքով որոշ հարադրական և կցական բարդությունների *(այսօր, այդչափ, զիարդ* և այլն), *ահա* բաղադրվող հիմքով բարդությունների (*ահաւասիկ, ահաւանիկ* և այլն) դեպքում:

**§ 18.** Տարբերվում է երկու տեսակ շեշտ՝ բառային և քերականական: Խոսքաշարի ամեն մի բառ, բացառությամբ մի քանի առանձին դեպքերի, ունի իր բառային շեշտը: Վերջինս բառի հիմնական շեշտն է: Դրանից բացի առանձնացվում է, այսպես կոչված, երկրորդական շեշտ: Վերջինս ունի ավելի թույլ դրսևորվածություն: Եթե բառի հիմնական շեշտի տեղը վերջնավանկն է, ապա երկրորդական շեշտը դրվում է բառի սկզբնական ձայնավորի վրա:

Հիմնական շեշտի բացակայությունը կոչվում է անշեշտություն: Գրաբարում անշեշտ են *եմ* բայի միավանկ ձևերը՝ սովորական կիրառությամբ առնված, միավանկ շաղկապները *(եւ, զի, թէ* և այլն), հետադաս միավանկ դերանունները (*ումն, ոք, իմն, ինչ, որ, ոք* և այլն), միավանկ սպասարկու բառերը՝ հատկապես նախդիրները (*առ, ընդ, ըստ, ի* և այլն):

Քերականական շեշտն ավելի մասնավոր երևույթ է, քան բառայինը: Այն հանդիպում է ոչ թե միշտ, այլ հատուկ նպատակների իրագործման դեպքում: Այդպիսի շեշտը, որը կոչվում է նաև տրամաբանական շեշտ, ընդգծում, ավելի ուշագրավ է դարձնում խոսքի իմաստային կողմը: Օրինակ՝ «Եւ արդ՝ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմացիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ *ո՛րպէս* յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յԱզատն ի վեր ի Մասիս» (*Խոր.,* էջ 100):

Եթե բառային շեշտի տեղափոխությունն առաջ է բերում բառի արտահայտության պլանի փոփոխություն, ապա քերականական շեշտի տեղաշարժը հաճախ պատճառ է դառնում բովանդակության պլանի անհստակության, խախտման: Քերականական շեշտ են ստանում բայի բուն հրամայականի ձևերը: Օրինակ՝ «*Եկ հաւանեա՛ց* բանից աչագեղոյ դստերս Ալանաց» (*Խոր.,* էջ 212),

«Այլ ջեռուցեալ *մեղկեա՛* զգրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ» (*ն. տ.*, էջ 42) և այլն: Ծեշտվում է արգելական հրամայականի *մի* մասնիկը: Օրինակ՝ «Զի *մի՛ զուցէ* մինչ զորմնն քաղահան արարեալ խլիցեն, խլիցի ընդ նմա և ցորեանն» (*Բուզ.*, էջ 176), «Զի *մի՛* մթարքն, որ զբքօք շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն *լիցին*» (*Եզնիկ*, էջ 5) և այլն: Զանազան այլ կարգի բառեր (*ոչ, չէ* ժխտականները, կոչականի ձևերը, կրկնական շաղկապները), երբ (գրավոր) խոսքում դրանց կարիքն զգացվում է:

**Ընթերցանություն 9:** «Արդ՝ ի գարունս բուսաբերս և ծաղկաբերս, որք զնորոգութիւն գեղեցկութեանն գարնանւոյն յետ հնութեան ձմերանւոյն՝ բերիցեն և թռչնոցն հաւուցն ծանուցեալ զիւրեանց ժամանակ գալստեանն[1]: Որպէս յայս հայեցեալ մարգարէն Երեմիաս ասէ, զիւրոյ ժամանակին զդէպս ի նմանութիւն օրինակաց յանդիմանութիւն բերէ, և զհանդերձելոցն ակնարկէ յասելն, թէ «Արդարև ծիծառն և տատրակն և խորդն[2], հաւքն վայրի, ծանեան զժամանակ գալստեանն իւրեանց»: Զի ժամանակաւ գարնանւոյն և իւրեանց գալստեամբն ցուցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան մարդկան, ի ձայն առնելն, ի ճչելն, ի ճռուողելն՝ ի շինել բունոցն[3]:

Ծիծառն մարդասէր է. յորժամ տեսեալ մարդկան՝ նովաւ ճանաչեն զկանաչազգեստ հասկն գարնանւոյն անմահ: Իսկ տատրակն ամուսնասէր երևեալ, զջերմաձայնն քաղցրաձայնն ի լսելիս մարդկան լնու. ի գործ արկեալ զթեթևագործ զկրկտակերտն[4], զդուզնաքեայ զփայտակերտիկն՝ երկթևեան ձուոցն իւրոց ապաւէն ծննդոցն իւրոց պատրաստէ:

Նա և դասադաս խորդոցն հաւուց եկեալ ի գարնանւոյն ժամանակս՝ երամացեալք հաւօրանան[5]: Ելեալք թռուցեալք բարձրացեալք ի բարձրութիւնս բարձանց՝ օդայատակ թևոցն գարշապարաց կոխան առնեն զանհաստատն, ճանապարհ իւրեանց, գնացս հաստատեն: Փոքր եղեալք, զկոչաձայն[6] զաղաղակ բարձեալ՝ զգործս մշակացն արթնութեան վաստակոցն օգտութեան

մարդկան զարթուցանեն ի քնոյ, զկանուխս եզանցն փութացուցանեն» (*Ազաք.,* էջ 366-368):

1. *Եւ թռչնոց հաւուցն ծանուցեալ զիւրեանց ժամանակ գալստեանն* - թռչուններն էլ գիտեն իրենց գալու ժամանակը:

2. *Խորդ* - կռունկ:

3. *Ի ձայն առնելն, ի ճչելն, ի ճռուողելն՝ ի շինել բունոցն* - բույն շինելիս երգելով, ճչալով, ճռվողելով:

4. *Կրկտակերտ* - շյուղակերտ, շյուղով շինված:

5. *Երամացեալք հարօրանան* - երամներով տարածվում են:

6. *Կռչաձայն* - գոչյուն, կռինչ:

**Ընթերցանություն 10:**

«Հատուած գնացեալ[1] Վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով [2],
Եկեալ նստեալ զՇրէշ բլրով,
Արտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
Կռել կոփել զդուռնն Երուանդայ[3] արքայի» (*Խոր.*, էջ 240):

1. *Հատուած գնացեալ* - բաժանվեց գնաց, զաղթեց գնաց, թողեց գնաց:

2. *ԶՔասաղ գետով* - Քասաղ գետի մոտ՝ շուրջը:

3 *Կռել կոփել զդուռն (Երուանդայ)* - դուռը թակել՝ զարկել՝ ծեծել, դարձվածային արժեքով՝ (Երվանդի տնից) աղջիկ ուզել:

**Վարժություն 14:** Վանկատել հետևյալ բառերը և խմբավորել ըստ բաց և փակ վանկեր ունեցողների. *այցելու, անազորոյն, բարգաւաճ, բարդութիւն, գրագիր, դասակից, դիմադարձ, եղբայրաբար, եռանդ, զարտուղի, էական, էութիւն, իմացական, իշխանութիւն, իշամեղու, խառնամբոխ, խառնակ, խոհակեր, խրախճան, ծայրակոտոր, ծիրանազարդ, կայծակնահար, կասկածոտ, կործանումն, կուսակալ:*

Օրինակ՝ ա) *ճա-նա-չել,* բ) *բառ-նալ,*

ա- ղա-չել:    քըռ -չել:

**Վարժություն 15:** Հետևյալ բառերից առանձնացնել նրանք, որոնցում կա մենահնչույթ վանկ. *առնուլ, արի, աւաղիկ, աւար, բազում, դիակապուտ, դիաքաւալ, դրանդի, երես, երեք, երէ, երիցս, էութիւն, իմանալ, իմաստուն, իշխել, իջանել, իջեւան, որոմն, ողոր-մութիւն, ուրանալ:*

**Վարժություն 16:** Վանկատել «Ընթերցանություն 10»-ում գործածված բառերը և դասակարգել ըստ վանկերի քանակի:

**Առաջադրանք 14:** Վերհիշել եռահնչույթ վանկեր պարունակող բառեր:

**Առաջադրանք 15:** Գրել քառահնչույթ վանկ պարունակող հինգ բառ:

**Առաջադրանք 16:** Հետևյալ բառերում ընդգծել վանկարար տարրերը. *գեղեցկութիւն, թռչուն, յանդիմանութիւն, վաստակ, փու-թալ, գործ, գալուստ, գարուն, արքայ, կոփել, դուռն:*

**Առաջադրանք 17:** Առանձնացնել երկհնչույթ վանկ ունեցող բառերը. *առնել, ասել, ձայն, լսել, մշակ, գարշապար, ժամանակ, քաղցրաձայն, իմաստուն, բուսաբեր, փայտակերտ, օգուտ:*

**Հարցեր 5:** ա) Ի՞նչ հատկանիշներով է բնութագրվում վանկը:

բ) Գրաբարում վանկերը քանի՞ տեսակ են լինում:

գ) Ինչպիսի՞ն է գրաբարի շեշտը:

դ) Գրաբարում քանի՞ տեսակ շեշտ կա:

ե) Ի՞նչ հետևանք կարող է ունենալ բառային շեշտի տեղա-փոխությունը:

զ) Ո՞րն է քերականական շեշտի առանձնահատկությունը:

## բ) Շեշտափոխական հնչյունափոխություն

**§ 19.** Գրաբարն աչքի է ընկնում շեշտափոխական հնչյունափոխության բազմաթիվ ձևերով ու օրինակներով: Շեշտափոխական է այն հնչյունափոխությունը, որը տեղի է ունենում բառի բառակազմական կամ ձևակազմական փոփոխության ժամանակ կատարվող շեշտի տեղափոխության հետևանքով: Նման հնչյունափոխությունները կրում են կա՛մ ընդհանուր, կա՛մ մասնավոր բնույթ, այսինքն՝ ընդգրկում են բազմաթիվ օրինակներ, տարածվում մի շարք բառերի ու բառաձևերի վրա, այլև վերաբերում են մեկ-երկու դեպքի, կոնկրետ մեկ բառի կամ բառաձևի:

Շեշտափոխական հնչյունափոխության են ենթարկվում ձայնավորները, երկբարբառները և եռաբարբառները:

**§ 20.** Ձայնավորների կրած փոփոխությունները, բնականաբար, ավելի մեծ թիվ են կազմում և ավելի բազմազան են, քան, ասենք, երկբարբառներինը, մանավանդ եռաբարբառներինը: Շեշտափոխական հնչյունափոխության են ենթարկվում հատկապես *ի, ը, ու* ձայնավորները:

1. *Ի* ձայնավորը շեշտափոխական հնչյունափոխությամբ վերածվում է *ը, ե, ւ (ու), յ* հնչյունների, ինչպես նաև՝ ø-ի (զրոյի)՝ ընդգրկելով հետևյալ դեպքերը.

ա) *ի > ը.* միավանկ բառերի սկզբում կամ փակ վանկում (որ գրության մեջ չի արտահայտվում)՝ *գին - գնոյ, ինչ - ընչաքաղց, գիր - գրոյ,*

բ) *ի > ե.* բազմավանկ բառերի վերջում (նախորդելով *ա*-ի)՝ *այգի - այգեաւ, տեղի - տեղեաց,*

գ) *ի > ւ.* բազմավանկ բառերի վերջում (նախորդելով *ո*-ի)՝ *որդի - որդւոյ, հոգի - հոգւոյ,*

դ) *ի > յ.* իբրև *ի* նախդիր, բացառական հոլովում ձայնավորից առաջ՝ *ի աշակերտէ - յաշակերտէ, ի աստեղաց - յաստեղաց,*

ե) *ի >* ø բազմավանկ բառերի փակ վանկում՝ *մարդիկ - մարդկային - մարդկայնոյ, մարմին - մարմնոյ, լեռնային - լեռնայնոյ:*

2. *Ը* գաղտնավանկ ձայնավորն ավելի հաճախ է ենթարկվում հնչյունափոխության, քան մյուս ձայնավորներից յուրաքանչյուրը: Այսպես, *ը* գաղտնավանկը կա՛մ ընկնում է (վերածվում է ø -ի), կա՛մ փոխվում է *ե*-ի, այլև *-ըն*-ով վերջացող բառերի դեպքում ներկայացնում է հնչյունափոխական լծորդության երկու և ավելի զույգեր, ինչպես՝ *ը > ա, ը > ա > ու, ը > ի > ø > ա, ը > ի > ա > ու, ը > ի > ø > ա > ու:* Առավելապես նշվում են *ը*-ի հնչյունափոխության հետևալ դեպքերը.

ա) *ը >* ø. վերջավանկում և *-ըր* վերջավորությամբ բառերի հոլովման ձևերում՝ *աստղ- աստղաբոյլ, բարձր - բարձրաւանդակ,*

բ) *ը > ե. -ըղ* և *-ըր* վերջավորությամբ բառերի հոլովման և բաղադրված ձևերում. *աստղ - աստեղային, դուստր - դստեր, եզր - եզերք,*

գ) *ը > ա, -ըն*-ով վերջացող երկհիմք բառերի հոլովաձևերում՝ *գագաթն - գագաթան // գագաթանց, լիսեռն - լիսռան // լիսռանց, ձուկն - ձկան // ձկանց,*

դ) *ը > ա> ու. -ըն*-ով վերջացող եռահիմք բառերի հոլովման ձևերում՝ *հարցումն - հարցման - հարցմունք, շարժումն - շարժման - շարժմունք,*

ե) *ը > ի > ø > ա, -ըն-* ով վերջացող քառահիմք բառերի մի մասի հոլովման ձևերում՝ *անձն - անձին - յանձնէ - անձամբ // անձանց,*

զ) *ը > ի > ա > ու. -ըն*-ով վերջացող քառահիմք բառերի մյուս մասի հոլովման ձևերում՝ մ*ատն - մատին - ի մատանէ* (այլև՝ *ի մատնէ) - մատամբ - մատունք,*

է) *ը > ի > ø > ա > ու. -ըն*-ով վերջացող հնգահիմք բառերի հոլովման ձևերում՝ *ափն - ափին - յափնէ - ափամբ - ափունք - ափանց, թոռն- թոռին - ի թոռնէ* (այլև՝ *ի թոռանէ*) - *թոռամբ - թոռունք* (այլև՝ *թոռանք*) - *թոռանց* և այլն:

3. *Ու* ձայնավորը կրում է հետևյալ կարգի շեշտափոխական հնչյունափոխությունները.

ա) *ու> ը.* փակ միավանկ և մեկուկեսվանկանի բառերում, այլև բազմավանկ բարդ կամ ածանցավոր բառերի միավանկ վերջին

բաղադրիչ բառերում՝ *դուռն - դրան, դրանդի, դուստր - դստեր, ջուր - ջրոյ, ջրկուտակ, ծովացուլ - ծովացլու, անքուն - անքնութիւն,*

բ) *ու > ø.* փակ բազմավանկ բառերում՝ *իմաստուն - իմաստնոյ, իմաստնանալ, իշխանազուն - իշխանազնի,*

գ) *ու > ւ (ու).* բառավերջի *ու*-ն վերածվում է երկբարբառի ոչ վանկարար (ձայնորդ) բաղադրիչի՝ *արու - արուի, արուական, երկու - երկուորեակ, լեզու - լեզուակ, լեզուագար,*

դ) ու > *ø* կամ *ու. - ութիւն* վերջածանցից առաջ՝ *թթու - թթութիւն // թթուութիւն, հլու - հլութիւն // հլուութիւն, կծու - կծութիւն // կծուութիւն,*

ե) *ու > ուա.* մեկ - երկու բառի հոլովման ձևերում՝ *անուն - անուան, անուանք, անուանց, ձեղուն -ձեղուան, ձեղուանց* և այլն:

**§ 21.** Շեշտափոխական հնչյունափոխության են ենթարկվում նաև *եա, իւ, ոյ, եւ ուի* երկբարբառները, *է* երկբարբառակերպը (երբեմնի երկբարբառը՝ *եյ*): Նկատելի է, որ դրանք ներկայացնում են հնչյունափոխական համեմատաբար քիչ թվով տարբերակներ, ընդգրկում են սակավաթիվ դեպքեր:

1. *Եա* երկբարբառը դառնում է *ե* պարզ ձայնավոր՝ *մատեան - մատենի, մատենագիր, ատեան - ատենի, ատենաբան, վայրկեան - վայրկենի, վայրկենական* և այլն:

2. *Իւ* երկբարբառը կամ հնչյունակապակցությունը դառնում է *ա* կամ *ւ (ու)*՝ *անկիւն- անկեան, մրջիւն - մրջեան, անիւ - անուոյ, անուաւոր, ազնիւ - ազնուաբարոյ* և այլն:

3. *Ոյ* երկբարբառը առհասարակ դառնում է *ու*՝ *լոյս - լուսոյ, լուսաւոր, բոյս - բուսոյ, բուսական, գոյն - գունոյ, գունաւոր, բոյն - բունոյ, բունել* և այլն:

4. *Ուի* երկբարբառը սովորաբար դառնում է *ու*՝ *արծուի - արծուոյ, Դուին- Դունոյ* և այլն:

5. *Է* երկբարբառակերպը՝ ա) փակ վանկում շեշտի տեղափոխման հետևանքով վերածվում է *ի* պարզ ձայնավորի. *պարտէզ - պարտիզի, պարտիզպան, հանդէս - հանդիսաւոր, սէր - սիրոյ, սիրել, սիրասուն,* բ) մի քանի բառերում և օտար անձնանուննե-

րում դառնում է *ե. եղէգն - եղեգան, պատճէն - պատճենի, Կայէն -Կայենի, Միքայէլ - Միքայելի* և այլն:

**§ 22.** Շեշտափոխական հնչյունափոխության են ենթարկվում հատկապես *եայ* եռաբարբառը, ինչպես նաև *ուէ* եռաբարբառակերպը:

1. *Եայ* եռաբարբառը դառնում է *է* երկբարբառակերպ բառավերջում, հոլովման ձևերում՝ *պաշտօնեայ - պաշտօնէի, պաշտօնէից, քաղեայ - քաղէի* և այլն:

2. *Ուէ* եռաբարբառակերպը վերածվում է *ուի* երկբարբառի՝ *պատուէր - պատուիրել, նուէր - նուիրել, աղուէս- աղուիսու* (այլև՝ *աղուեսու*) և այլն:

**Ընթերցանություն 11:** «Բարի և գեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայցէ յալեաց և ի մրրկաց: Ի պարզ և յստակ ժամանակի յորժամ միտ եդեալ հայիցիս[1] ընդ ծիծաղել ջուրց նոցա, որ ազգի - ազգի գոյնս ցուցանեն զերփն-երփն նարաւտոց[2], մերթ ծիրանւոյ, մերթ կապուտակի, մերթ սևաներկ երանգաց: Եւ յորժամ քաղցրաշունչ սողոխ վէտս-վէտս զմկանունսն ճաւճեալ ճեմեցուցանիցէ[3]. յորժամ ոչ բռնութեամբ աւդոյ յանդգնութեան ծփեալ կոծիցէ զերկիր՝ զիւր դրացին, այլ խոր խաղաղութեամբ և ջերմեռանդ սիրով գիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքաւն[4]:

Առաջին գեղեցկութիւն ծովու այս է, զի նա է ակն մեծ խոնաւութեան ջուրցն բազմութեան և յաներեւոյթն և յանդունդս են գնացք իւրոյ յորդութեան, որպէս յայտ առնեն փորուածք երկրի և ցնցղաձև երակք, որ են ի միջի նորա: Զի ջուրք ծովու փորեն ծակոտեն զերկիր, որ և գնան ի նման մանուածապատ շրջանաւքն, շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչ քամին պարզին աղի ճաշակքն և դառնութիւնք, և ապա բղխեն ի ներքոյ ի վեր քաղցր և անոյշ ճաշակաւք, և առնին ըմպելի ուրախարար ամենայնի, որ զեռան յերկիր:

Դարձեալ և ջերմկաց տեղիք նկատեալք են յերկրի[5], և ի բազում ջերմութենէ, որ մթերեալ կայ ի սիրտ երկրի, եռան ելանեն իբ-

րև ջեռուցեալք հրատիւք, վասն բազմութեան ջերմութեան հրատին, որ իբրև զհնոց բորբոքի, եռացուցանէ զնոսա: Եւ ի կղզիս բազումս գտանին ըստ նմին աւրինակի, և անդրէն զեզերբ ծովուն ընդ բազում տեղիս գտանին ջերմուկք: Եւ շուրջ զգետովքն, որ գնան ի ցամաքի, ջուրք ջերմակաջուրք բղխեն[6], խառնին ի ջուրսն ցրտաբուղխս և այսպէս յամենայն տեղիս զնոյն գտանես և պատճառք ճառիս այս են, զի ցուցից, թէ ամենևին յամենայն տեղիս փորեալ ծակոտեալ է երկիր ի ջուրց ներքին անդնդոց, որ զնոյն ծակոտեն, և ի նմին գնան, և ի միջի նորուն շրջին» *(Բարս.,* էջ 119-121):

1. *Յորժամ միտ եդալ հայիցիս* - երբ ուշադիր նայում ես:
2. *Ազգի - ազգի գոյնս ցուցանեն զերփն - երփն նարաւտոց* - ցույց են տալիս երփներանգ նարոտների տեսակ-տեսակ գույներ:
3. *Քաղցրաշունչ սողոխ վէտս վէտս զմկանունսն ճաւճեալ ճեմեցուցանիցէ* - քաղցրաշունչ վետվետուն զեփյուռը ճոճում, շարժում է՝ ճեմել է տալիս:
4. *Պատեալ կայցէ զցամաքաւն* - շրջապատում է ցամաքը՝ գետինը:
5. *Ջերմկաց տեղիք նկատեալք են յերկրի* - ցամաքում նկատելի են տաք ջրերի տեղեր:
6. *Շուրջ զգետովքն ... բղխեն* - գետերի շրջակայքում ... բխում են:

**Ընթերցանություն 12:** «Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւադիկ կաս գեղեցիկ, աչք քո աղաւնիք, ընդ քողով քովք. վարսք քո իբրև զերամակս այծից, որք երևեցան ի Գաղաադէ: Ատամունք քո իբրև զերամակս կտրելոց[1], որք ելանեն ի լուալեաց[2]: Իբրև զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք. իբրև զկեղև նռան են այտք քո, իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո: Երկու ստինք քո իբրև զերկուս ուլս երկուորիս այծեման, որ արածէին ի մէջ շուշանաց, մինչև տիւն նուաղեսցէ, և ստուերքն շարժեսցին[3]: Գնացից ես ինձէն[4] ի լեառն զմռնենեաց և ի բլուրն կնդրկի: Ամենևին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ: Սրտակաթ արարեր զմեզ[5] միով ակամբ քով[6] և միով

քառամանեկաւ պարանոցի քո: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քոյ, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի» (*Երգ երգոց*, Դ, 1-11):

1. *Իբրև զերամակս կտրելոց* - խուզած հոտի պես:
2. *Ելանեն ի լուալեաց* - ելնում են լողարանից:
3. *Տիւն նուաղեսցէ, և ստուերքն շարժեսցին* - օրը պակասի, և ստվերները երկարեն՝ շարժվեն:
4. *Գնացից ես ինձէն* - ես ինքս կգնամ:
5. *Սրտակաթ արարեր զմեզ* - մեր սիրտը գրավել ես, սիրավառ ես արել մեզ, մեր սիրտը հափշտակել ես:
6. *Միով ակամբ քով* - քո մի նայվածքով:

**Վարժություն 17:** Կարդալ «Ընթերցանություն 11»-ը և առանձնացնել այն բառերը, որոնցում կան հնչյունափոխված ձայնավորներ:

**Վարժություն 18:** Բացատրել, թե ինչ հնչյունափոխության են ենթարկվել ձայնավորները բառերի փոփոխված ձևերում. *զեղեցիկ - զեղեցկութիւն, կին - կնութիւն, տեսիլ - տեսլեան, իղձ - ըղձալի, պատանի - պատանոյ, այգի - այգւոյ, ժիր - ժրագլուխ, բարի - բարեաւ, բուն - բնական, հին - հնութիւն, ջուր - ջրոյ, շուն - շնական, տեսուչ - տեսչութիւն, տխուր - տխրատեսիլ, տունտնանկ, տրուպ - տրպագոյն, տրտում -տրտմական:*

**Վարժություն 19:** Բացատրել, թե ինչ հնչյունափոխության են ենթարկվել երկբարբառները հետևալ բառերի փոփոխված ձևերում. *երեւոյթ-երեւութական, վէպ-վիպասան, թիւ-թուել, էջ - իջանել, Կայէն - Կայենի, կեանք - կենաց, մատեան - մատենագիր, մեհեան - մեհենական, թոյն - թունաւոր, սիւն - սեան, թոյլ - թուլամիտ, թէկն - թիկունք, վարագոյր - վարագուրել, անկիւն - անկեան, պարտէզ - պարտիզի, միտ- մտաւոր, բոյս- բուսական, գոյն - գունաւոր, համբոյր - համբուրել, բոյն - բունել, զէճ-զիճութիւն:*

**Վարժություն 20:** Բացատրել, թե հետևյալ ձևափոխված բառերում ինչ հնչյունափոխություն է տեղի ունեցել. *կնդրուկ- կնդրկի, քառամանեակ- քառամանեկաւ, անդունդ - անդնդոց, երկիր - երկ-*

*րի, կապույտ - կապուտակ, այծեամն - այծեմնիկ, արիւն -արեամբ, բուռն- բռնանալ, կնճիռն - կնճռել, կնիք - կնքահայր, կին -կնատեաց:*

**Առաջադրանք 18:** Հետևյալ բառերից կազմել նոր բառեր, որոնցում կատարվի հնչյունափոխություն. *այգի, սուղ, պատանի, կէս, բոյր, շէն, գին, ջուր, նինջ, կռիւ, փոյթ, երդումն, սիրտ, սենեակ, ողջոյն, ցուլ, երկիւղ, շէն, կեանք:*

**Առաջադրանք 19:** Հետևալ բառացանկից առանձնացնել մի խմբում՝ հնչյունափոխված, մյուս խմբում՝ չհնչյունափոխված բառերը. *ամսօրեայ, բուսական, երկրագործ, բռնաւոր, համբոյր, բուրել, դրուագել, սենեկապան, նուիրական, քաջութիւն, ծուլանալ, թագաւոր, ճայնարկու, գրիչ, անզէն, զինագործ, նիւթել, անկիւնաւոր, թռչնորս, թիւրել, բուրաստան, նկարել, արքայական:*

**Առաջադրանք 20:** Թվարկել տասը բառ և դրանցից կազմել նոր բառեր, որոնցում լինի հնչյունափոխություն:

Օրինակ՝ *գէս ~ գիսաւոր, լոյր ~ լրաբեր:*

**Հարցեր 6:** ա) Ի՞նչ է նշանակում շեշտափոխական հնչյունափոխություն:

բ) Գրաբարի ձայնավորներից, երկբարբառներից և եռաբարբառներից որո՞նք են ենթարկվում շեշտափոխական հնչյունափոխության:

գ) Ո՞ր դեպքերում են *ի, ը, ու* ձայնավորները ենթարկվում շեշտափոխական հնչյունափոխության:

դ) Ո՞ր դեպքերում են գրաբարի երկբարբառները ենթարկվում շեշտափոխական հնչյունափոխության:

ե) Ո՞ր դեպքերում են գրաբարի եռաբարբառները ենթարկվում շեշտափոխական հնչյունափոխության:

## գ) Պատմական հնչյունափոխություն

**§ 23.** Գրաբարն՝ իբրև հին գրական հայերենի գրավոր արտահայտություն, ներառում է այնպիսի հնչյունափոխական երևույթներ, որոնք չեն բացատրվում տվյալ շրջանի հնչյունաբանական օրենքներով ու կանոններով, արդյունք են հայերենի ավելի հնագույն, թերևս նախագրային շրջանում կատարված հնչյունական փոփոխությունների: Այդ կարգի հնչյունական փոփոխությունները հին գրական հայերենի, ավելի ստույգ՝ գրաբարի համակարգում բնութագրվում են իբրև պատմական հնչյունափոխության իրողություններ:

Ըստ այդմ պատմական հնչյունափոխության դեպքում, ի տարբերություն շեշտափոխական հնչյունափոխության, այս կամ այն երևույթը (կամ երևույթների որոշակի խումբը) բացատրելի է լեզվի պատմության տվյալների հիման վրա, որոշակի մեթոդով (ներքին վերականգնում, համաբանություն, հնչյունական օրենքի քարացում և այլն), գրեթե ինքն իր մեջ: Շատ քիչ դեպքերում է հնարավոր լինում տվյալ հնչյունափոխական երևույթի նկատմամբ եղած այս կամ այն սկզբունքն ու հիմունքը տարածել մեկ այլ երևույթի վրա: Եթե շեշտափոխական հնչյունափոխության երևույթները մեկնաբանվում են գործուն օրենքների և կանոնների միջոցով, դրանց մատնանշմամբ ու բնութագրմամբ, ապա պատմական հնչյունափոխական երևույթների քննարկումները կատարվում են այն հաշվով, որ դրանք երբեմնի գործուն օրենքների և կանոնների շնորհիվ առաջացած երևույթներ են և լեզվի հետագա փուլում (տվյալ դեպքում՝ գրաբարի փուլում) վերածվել են առանձնակի, մեկուսացած իրողությունների: Այսպես, գրաբարի համակարգում գործածվում են *հայր, մայր, եղբայր* գոյականները, որոնք իրենց թեք ձևերի հետ միասին ներառում են երբեմն *այ > աւ > ա* եռաստիճան հնչյունափոխություն (*հայր - հաւր - հարք, հարց, մայր - մաւր- մարք, մարց, եղբայր - եղբաւր - եղբարք, եղբարց* և այլն), որը մեկնաբանելի է պատմականորեն, բայց ոչ բնավ գրաբարի տվյալ փուլում գործող հնչյունափոխական օրենքներով:

**§ 24.** Պատմական հնչյունափոխության հետևանքով փոփոխված ձևերն արդյունք են ձայնավորների, երկբարբառների, այլև բաղաձայնների կրած առանձին-առանձին փոփոխություններին: Վերջիններս խմբավորվում են իբրև այս կամ այն բառի, տվյալ հնչյունական կազմն ու արտասանական ընդհանրությունն ունեցող բառերի մասնավոր դեպքեր:

Համեմատաբար ավելի շատ են ձայնավորների և երկբարբառների պատմական հնչյունափոխության դեպքերը:

**§ 25.** Պատմական հնչյունափոխության են ենթարկվել բոլոր ձայնավորները, այլև *այ, եա, իւ (եւ), ոյ* երկբարբառները:

1. *Ա* ձայնավորը պատմականորեն փոփոխված է երկաստիճան և եռաստիճան հնչյունափոխությամբ (վերածվել է մեկ կամ երկու այլ հնչյունի).

ա) *ա > ո > ը.* ցուցական դերանունների ուղիղ և թեք ձևերում՝ *սա - սորա - սմա* (հնչ. *սըմա*), *դա - դորա - դմա* (հնչ. *դըմա*), *նա - նորա - նմա* (հնչ. *նըմա*),

բ) *ա > ու. ճանաչել - ծանաւթ, աղաչել - աղաւթ, արածել - արաւտ, մատչել - մաւտ, (զ)գածել - գաւտ(ի), թան(ալ) - թաւն, յատել - յաւտել* և այլն,

գ) *ա > ու > ø. տալ - ետու, տուր - ետ,*

դ) *ա > ø. արմատ - արմտիք:*

2. *Ե* -ն հնչյունափոխվում է *ա, ի* ձայնավորների, այլև *է* երկբարբառակերպի՝ ընդգրկելով հետևյալ դեպքերը.

ա) *ե > ա. վեց - վաթսուն,*

բ) *ե > ի. երեք - երից, երիր (երիր-որդ > երրորդ),*

գ) *ե > է. մեր - մէնջ, ձեր - ձէնջ:*

3. *Ի* -ն փոխվում է *ու* -ի, այլև *ը > ի, ա > ի.*

ա) *ի > ու. ամենեքին - ամենեցուն, սոքին - սոցուն(ց), դոքին - դոցուն, երկոքին - երկոցուն, եւթանեքին - եւթանեցուն,*

բ) *ի > ը > ա. կին - կնոջ* (հնչ. *կընոջ*) *- կանայք, կանացի, կնոջական* (հնչ. *կընոջական*):

4. *Ը* - ն վերածվել է *եա* -ի, *ե*- ի, *ø* - ի.

ա) *ը > եա > ե. ինքն* (հն՜. *ինքըն) - ինքեան, ինքեամբ - յինքենէ,*

բ) *ը > ե. (զ)ետղ* [հն՜. *(զ)ետըղ*] - *զետեղել,*

գ) *ը > ø. սկիզբն* (հն՜. *ըսկիզբն*) - *ի սկզբանէ. սպանանել* (հն՜. *ըսպանանել*) - *ի սպանանելն*:

5. *Ո* - ն փոփոխվում է երկու դեպքում երկաստիճան, մեկ դեպքում մեկաստիճան հնչյունափոխությամբ.

ա) *ո > ոյ > ու. ո, ով - ոյր (ոյք, ոյց) - ում, յումէ,*

բ) *ո >*ե *>*է. *քո - քեզ (քեւ) - քէն,*

գ) *ո > ու. ումն (ոք) - ուրումն (ուրուք, ումեք, յումեքէ):*

6. *Ու* - ն փոփոխվում է երեք դեպքում մեկաստիճան, երկու դեպքում երկաստիճան հնչյունափոխությամբ.

ա) *ու > ո. հեղում - հեղոյր, թողում - թողոյր, առնում - առնոյր* և այլն,

բ) *ու > ուա. անուն - անուան, ծեղուն - ծեղուան,*

գ) *ու > ա. շուն - շան, տուն - տան*, դ) *ու > ե > ա. ո, ով, ոք - ուրումն, ուրուք - ումեմն, ումեք, յումեմնէ, յումեքէ - ոմամբ, ոմանք, ոմանց, ոմանս, ոմամբք* և այլն, ե) *ու > ո > ø. երկու - երկոտասան, երկերիւր, երկրորդ:*

**§ 26.** Երկբարբառները պատմականորեն ավելի քիչ են հնչյունափոխված:

1. *Այ* - ը հնչյունափոխված է երկու դեպքում.

ա) *այ > աւ > ա. հայր - հաւր - հարք, հարց, մայր - մաւր - մարք, մարց, եղբայր - եղբաւր - եղբարք, եղբարց,*

բ) *այ > ա. այր - առն, արամբ, արք, արանց* և այլն:

2. *Եա* -ն փոխվում է մեկ դեպքում. *եա > ու. ամենեքին - ամենեցուն, բոլորեքին - բոլորեցուն:*

3. *Իւ (եւ)-ն* փոխվում է մեկ անգամ. *իւ (եւ) > ե. ալիւր (ալեւր) - ալեր, եղջիւր (եղջեւր) - եղջեր, աղբիւր (աղբեւր) - աղբեր, աղտիւր // եղտիւր (աղտեւր // եղտեւր) - աղտեր // եղտեր, գիւղ (գեւղ) - գեղջ:*

4. *Ոյ* -ը փոխվում է երկու դեպքում.

ա) *ոյ > ո > ը. սոյն - սորին, սմին* (հնչ. *սըմին), դոյն - դորին, դմին* (հնչ. *դըմին), նոյն - նորին - նմին* (հնչ. *նըմին),*

բ) *ոյ > ե > ո. քոյր - քեռ - քորք, քերց:*

§ **27.** Այստեղ նշենք մի հնագույն հնչյունափոխական դեպք, երբ չեղած ձայնավորի տեղում թեքված կամ բարդված ձևում ի հայտ է գալիս որևէ ձայնավոր: Այսպես, ունենք՝ *ø > ու* կամ *ե. ար - աւուր, չորք - չորեքտասան, հինգ - հնգետասան:*

§ **28.** Պայթական բաղաձայններից պատմական հնչյունափոխության են ենթարկված երկուսը՝ *դ* -ն և *կ* -ն, որոնք առանձին բառերում (կամ բառախմբերում) հերթագայված են տարբեր կարգի հնչյունների հետ կամ պարզապես վերացած [դարձած *ø* (զրո)]:

1. *Դ* - ն հնչյունափոխվում, որպես ենթադրյալ *ընդ* նախդրի տարր, դառնում է *ø*, երբ բարդվելիս հանդիպում է որևէ բաղաձայնով սկսվող բառի. **ընդ - կեր - ընկեր, *ընդ - կրկել - ընկրկել, *ընդ - ծեռնել - ընծեռնել, *ընդ - տանի - ընտանի, *ընդ - բերանել - ըմբերանել, *ընդ - բոշխնել - ըմբոշխնել* և այլն[1]:

2. *Կ* -ն ընկնում է (փոխարինվում է *ø* - ով). *հարկանեմ - հարի:*

§ **29.** Համեմատաբար շատ են կիսաշփականների հնչյունափոխության դեպքերը:

1. *Ձ - ø.* նկատվում է *ն* - ին նախորդող դիրքում. *դարձ - դառնամ, բարձ(ր) - բառնամ:*

2. *Ծ* -ն դառնում է *տ, ճ,* կամ միաժամանակ *տ* և *ս.*

ա) *ծ > տ. արածել - արաւտ, մած - նուլ - մաւտ- մատչել, (զ)գածել - գաւտ (ի),*

բ) *ծ > ճ. ծան(աւթ) - ճան - աչել,*

գ) *ծ > տ > ս. ծածանել - տատանել - սասանել:*

3. *Ց* -ն դառնում է *շ, ս* և *ø.*

[1] Հարցն այդպիսին է ըստ ավանդական քերականագիտության, իսկ այժմ այն ունի ավելի իրական լուծում:

ա) *ց > շ. վեց - վեշտասան,*

բ) *ց > ս. գրեցից - գրեսցես, գրեսցուք, գործեցից - գործեսցես, գործեսցուք, խօսեցայց - խօսեսջիք* և այլն,

գ) *ց - ø* (*ն* -ից առաջ). *ընթերց - ընթեռնում, բաց - բանամ, լից - լնում, խից - խնում* և այլն:

4. *Չ* -ն դարձել է *թ. աղաչել - աղաւթ, ճանաչել - ծանաւթ* և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ պատմական հնչյունափոխության դեպքերը բացատրվում են գրաբարին նախորդող փուլերում եղած հնչյունական օրենքներով, իսկ գրաբարի ներսում դրանք մասնակի երևույթներ են: Օրինակ՝ *արածել* և *արաւտ* բառերում *ծ > տ* հնչյունափոխությունը բնորոշ էր հայերենի նախագրաբարյան շրջանին, որը գրաբարում ներկայանում է իբրև կատարված փաստ:

**§ 30.** Հագագային *հ* -ն երբեմն ենթարկվում է տարբեր փոփոխությունների.

ա) վերածվում է *յ* -ի. *հինգ - յիսուն,*

բ) դառնում է *ø. հարկանեմ - (զ)արկանեմ:*

**§ 31.** Որոշ փոփոխություններ կան ձայնորդների դեպքում: Այսպես, ունենք *յ, ն, ր , մ* ձայնորդների կոնկրետ փոփոխության հետևյալ փաստերը:

1. Որոշ բառերում *յ* -ն դառնում է *ø. յառնեմ - արի՛, արի՛ք, յանցանեմ - (զ)անցանեմ:*

2. *Ն* ձայնորդը *բ* -ից առաջ դառնում է *մ*, որը թերևս դիրքային հնչյունափոխության օրինակ է, սակայն պատմականորեն ավանդված և հաստատված գրաբարում. *արիւն - արեամբ, տուն - տամբ, հարսն - հարսամբ, բարեկամութիւն - բարեկամութեամբ* և այլն:

3. *Ր* -ն դառնում է *ռ*, *ս* կամ՝ *ս* և *ø.*

ա) *դրունք - դուռն, արարիչ - առնել, երեք - եռակի, արի՛ - յառնել, դարձ(այ) - դառ(նամ), բարձ(ունք) - բառ(նամ),*

բ) *ր > ս.* սա մասնակի երևույթ է. *արարից - արասցես, արասցէ.*

գ) *ր > ս > ø..* մասնակի երևույթ է. *լուր - լսեմ - լուայ:*

4. *Մ*-ն որոշ դերանուններում դառնում է *ր. ումն, որ, իմն, ո, ով - ուրումն, ուրուք, իրիք, ոյր, որով,* բայց և՝ *ումեմն, ումեք, իմիք, ում, ումամբ*:

**Ընթերցանություն 13:** «Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ: Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ[1]. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրտսերագունաց անտի:

Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով՝ ոչ ինչ ընդհատ երևեցան[2] յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ: Քանզի եթէ աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան: Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեան, այլ իբրև մարդք, որ վշտամբերք լեալ իցեն[3] անդստին ի շինական սովորութեանցն, տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց:

Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան[4]: Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ, թէ ո՛ր տիկինն իցէ և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց[5], և միապէս գետնախշտիք երկոքեան: Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր[6]. քանզի և չճանաչէին իսկ զխոտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան[7] փսիրայիցն, և մի գոյն սևութեան[8] սնարից բարձիցն:

Ոչ գոյր նոցա խահամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր: Ծաքաքամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են: Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր[9], և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի

ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եւղ ի զուարթութիւն խրախութեան: Չեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութեան. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա, թէ զուցէ որք ամենևին ի բնակասնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք[10] նորեկ հարսանց, և սարդիոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք[11] ապաստանի նոցա: Զորացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա:

Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց[12], և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց. առան զանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց (*Եղիշէ*, էջ 199-204):

1. *Յական է յանուանէ ճանաչեմ* - անձամբ` ականատես ճանաչում եմ:
2. *Ոչ ինչ ընդհատ երևեցան* - ոչ մի բանով պակաս չգտնվեցին:
3. *Վշտամբերք լեալ իցեն* - նեղություն են կրել:
4. *Բարձին զբեռն ծանրութեան* - ավելացրին ծանր բեռը:
5. *Մի հանդերձ էր հասարակաց* - բոլորին նույն զգեստն էր:
6. *Որ ումեք անկողնարկ լինէր* - ոչ որ մյուսին անկողին չէր գցում:
7. *Մի գոյն թխութեան* – միևնույն թուխ գույնը:
8. *Մի գոյն սևութեան* – միևնույն սև գույնը:
9. *Որ ումեք ջուր ի ձեռս արկանէր* - ոչ որ մյուսի ձեռին ջուր չէր լցնում:
10. *Սրահակ և սրսկապան* - փոքր սրահ, նորահարսի սենյակ, հարսանեկան առանձին առագաստ:
11. *Աւերեցան ամուրք* - ավերվեցին ամրոցները:

12.*Յափշտակութիւն արարոց* - գույքի կողոպուտ, հափշտակում:

**Ընթերցանություն 14:**

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Ընկէց ի մէջք[1] օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմէջք[2] փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իր» (*Խոր.,* էջ 212):

1. *Ընկէց ի մէջք* - գցեց մեջքը:
2. *Ցաւեցոյց զմէջք* - ցավեցրեց մեջքը:

**Վարժություն 21:** Առանձնացնել «Ընթերցանություն 13» - ում հանդիպող հնչյունափոխված բառերը և բացատրել, թե ինչպիսին է տվյալ հնչյունափոխությունը:

Օրինակ՝ *կին ~ կանայք. ի > ա* հնչյունափոխություն:

**Վարժություն 22:** Առանձնացնել «Ընթերցանություն 14»-ում հնչյունափոխված բառերը և բացատրել, թե ինչպիսին է տվյալ հնչյունափոխությունը:

Օրինակ՝ *կրտսերագոյն ~ կրտսերագունից. ոյ > ու* հնչյունափոխություն:

**Վարժություն 23:** Կարդալ «Ընթերցանություն 12»-ը և առանձնացնել այն բառերը, որոնցում գործածված են *այ, եա, ոյ* երկբարբառները:

**Առաջադրանք 21:** «Ընթերցանություն 13» -ը սովորել անգիր և մտովի առանձնացնել առհասարակ ծանոթ բառերը:

**Առաջադրանք 22:** Սովորել հետևյալ բառակապակցությունները. *յականէ յանուանէ ճանաչել, հինգ հարիւրով չափ, գոյն թխութեան փսիրայից* («թուխ գույնի չոր խոտ»), *արկանել ջուր ի ձեռս, մատուցանել դաստառակս* («մատուցել ձեռքի սրբիչ»),

*սենեակ առագաստի, բարձրագահ տաճար, յափշտակութիւն արարող:*

**Առաջադրանք 23:** Բացատրել, թե հետևյալ բառերում ինչպիսի հնչյունափոխություն է տեղի ունեցել. *ընթերցայ – ընթեռնուլ, ամաչել - ամաւք, շարժման - շարժմամբ, վեց - վեշտասան, վեց - վաթսուն, տարածման - տարածմամբ, եղբայր - եղբաւր:*

**Հարցեր 7:** ա) Ինչո՞վ են միմյանցից տարբերվում շեշտափոխական և պատմական հնչյունափոխությունները:

բ) Ի՞նչ ձայնավորներ են ենթարկվել պատմական հնչյունափոխության:

գ) *Ե* ձայնավորը պատմականորեն ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել:

դ) Ի՞նչ երկբարբառներ են ենթարկվել պատմական հնչյունափոխության:

ե) Ի՞նչ բաղաձայններ են պատմականորեն ենթարկվել փոփոխության:

## դ) Հնչյունափոխական տարբերակներ

**§ 32.** Հնչյունափոխական տարբերակներ են այն բառային միավորները, որոնք պատմական անցյալում արտասանական - հնչյունափոխական ինչ - ինչ գործոնների հետևանքով հեռացել են իրարից, դարձել ազատ (բաշխմամբ) կիրառվող լեզվական միավորներ և այդպես էլ անցել են հին գրական հայերենին, ավանդվել գրաբարին: Գրաբարում այդպիսի տարբերակները կա՛մ առանձին բառեր են, կա՛մ միևնույն բառի զանազան ձևեր՝ առանձին բառաձևեր: Ի տարբերություն սովորական բառային միավորների՝ հնչյունափոխական տարբերակները ձգտում են վերածվելու առանձին բառերի: Այս իրողությունն առկա է նաև գրաբարում, որտեղ նման տարբերակներն իրենց զուգահեռների հակադրությամբ ունեն բառիմաստային որոշ նրբություններ, թեև կիրառվում են տարբեր պայմաններում:

§ **33.** Հնչյունափոխական տարբերակների գոյացման մեջ մասնակցություն ունեն ձայնավորները, երկբարբառները, եռաբարբառները, մասամբ՝ բաղաձայնները:

Ձայնավորներից մասնակցում են *ա* -ն, *ե*- ն, *ի*- ն:

ա) *Ա // ե* -ով տարբերակներ՝ *արագ - երագ, աղտիր (աղտեւր) - եղտիր (եղտեւր):*

բ) *Ե // ø* - ով տարբերակներ, մի կողմից՝ *ասեղն - ասեղան* (բայց և՝ *ասղան*), *թիթեղն - թիթեղան* (բայց և՝ *թիթղան*), *մժեղն - մժեղան* (բայց և՝ *մժղան*), *սիսեռն - սիսեռան* (բայց և՝ *սիսռան*) և այլն, մյուս կողմից՝ *պճեղն - պճղան* (հնչ. *պըճղան*), *ծիծեռն - ծիծռան, լիսեռն - լիսռան* (այլև՝ *լսռան), թիթեռն - թիթռան* և այլն:

գ) *Ի // ե* - ով տարբերակներ՝ *լիզել (լիզուլ) - լեզել (լեզուլ), հին - (ել) - հեն(ուլ):*

դ) *Ե // եա* - ով տարբերակներ՝ *երկոքին - երկոքեան, հնգեքին - հնգեքեան, տասնեքին - տասնեքեան, ամենեքին - ամենեքեան, բոլորեքին - բոլորեքեան* և այլն:

2. Երկբարբառներից և եռաբարբառներից տարբերակներ են առաջացնում *եա* -ն, *եայ* -ը և *եւ* -ը:

ա) *Եա // ե* -ով տարբերակներ՝ *դեակ - դեկ, ատեամ - ատեմ, սեաւ - սեւ:*

բ) *Եայ // է. քուեայ - քուէ, ոսկեայ - ոսկէ, փղոսկրեայ - փղոսկրէ:*

գ) *Եւ // իւ*- ով տարբերակներ. *ալեւր - ալիւր, աղբեւր - աղբիւր, աղտեւր (եղտեւր) - աղտիւր (եղտիւր), առեւծ - առիւծ, բեւր - բիւր, գեւղ - գիւղ, եղջեւր - եղջիւր, եւղ - իւղ, երկեւղ , երկիւղ, հարեւր - հարիւր, մեւս - միւս* և այլն:

Բաղաձայններից ունենք քիչ թվով տարբերակներ:

ա) *Հ // ø* -ով տարբերակներ ՝ *համբառնամ - ամբառնամ, համբարել - ամբարել, հագանիմ - ագանիմ, հագուցանեմ - ագուցանեմ* և այլն:

բ) *Լ //-ղ* -ով տարբերակներ՝ *ջիլ - ջիղ, մառախլ(ապատ) - մառախուղ, (ան)ալի - աղի* և այլն:

գ) *Չ // թշ* -ով տարբերակներ (բարդ բաղաձայնի պարզեցում)՝ *չուառ - թշուառ:*

**Ընթերցանություն 15:** «Եւ այս բազմաց հաւատալի է, թէ այսպէս է, և եթէ կամիք ցուցից զաւրինակ մի, որով առաւել ստուգեսջիք գիտել, ճանաչել, թէ արդարեւ այսպէս է: Չիցէ՞ տեսեալ ձեր զկաթսայս և զամնս լի ջրով եռացուցեալս ի հրատի, և միտ եդեալ, թէ զիա՞րդ լինիցի թերութիւն ջրոյն ի գոլորշւոյն[1], որ ելանէ: Զի թէ յերկարեսցեն թողցեն ի բորբոքեալ հրատին, բնաւ ամենևին իսկ ունայն գտանին ամանքն ի ջրոյ անտի, և զջուրն, զոր ուտէ հուրն ի խոնարհ[2], առաքէ գոլորշւովն ի վեր: Սոյնպէս ունիս նայել և ընդ ջուրս ծովու, որ վերանան ելանեն ի վեր տապովն արեգական[3]: Եւ ունիմ աւրինակ ի նաւավարաց, որ թէ պակասիցէ ջուր ի ծովու, առնուն զջուրս ծովուն զաղին և զդառն, արկանեն ի սանս կամ ի կաթսայս, եռացուցանեն: Եւ դնեն սպունգս մեծամեծս խուփս կաթսայիցն, և ի խոնաւութենէ, զոր առնուն սպունգքն ի գոլոշւոյն, ջուրս քաղցունս ժողովեն: Եւ այսպիսի հնարիւք առնեն դարման կենաց իւրեանց ի նուազութենէ ջուրցն, յորժամ պակասիցէ ի ծովու:

Բարիոք և գեղեցիկ է դարձեալ ծով, զի պնդէ ամրացուցանէ զկղզիսն, որ են ի միջի նորա, և պահին առանց վնասու, և առանց նենգութեան կերակրին ի նմանէ իբրև ի ցամաքի, և առնին ի նմա գեղեցիկ աւթեւանք տեղւոջէ ի տեղի[4], և ի հանգիստ այնոցիկ, որք շրջին ի նմա: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի, քանզի նովաւ ընտրին և սահմանին աշխարհք ի միմեանց[5]: Եւ է դարձեալ ճանապարհ յատակել ի շահ վաճառականաց, և ամենայն կերպարանաւք լցուցիչ է կարաւտութեանց մարդկան[6]: Շահ մեծաշահ է մեծատանց՝ բերելով զվաճառն ազգի ազգի, դարմանիչ և կերակրիչ է աղքատաց, զի գտանեն ի պատճառն նորա պէտս կարաւտութեան կենաց իւրեանց: Եւ ես զինչ իցեմ, տկար մի տառապեալ, կալ ճշգրտիւ պատմել զմեծապայծառ գեղ վայելչութեան ծովու, որ յարարչէ առ հրաման, թէ բարի և վայելուչ է» (*Բարս.,* էջ 122-123):

1. *Զիա՞րդ լինիցի թերութիւն ջրոյն ի գոլորշւոյն* - ինչպե՞ս է ջուրը պակասում գոլորշուց:

2. *Ջոր ուտէ հուրն ի խոնարհ* - որ կրակը ներքև է իջեցնում՝ պակասեցնում է:

3. *Որ վերանան ելանեն ի վեր տապովն արեգական* - որ վեր են բարձրանում արեգակի շոգից:

4. *Եւ առնին ի նմա գեղեցիկ աւթեանք տեղւոջէ ի տեղի* - և տեղից տեղ նրանում գեղեցիկ օթևաններ են շինում:

5. *Նովաւ ընտրին եւ սահմանին աշխարհք ի միմեանց* - նրանով են աշխարհները բաժանվում և տարբերվում իրարից:

6. *Լցուցիչ է կարաւտութեանց մարդկան* - բավարարում է մարդկանց կարիք(ներ)ը:

**Ընթերցանություն 16:** «Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանկով պատեաց զնա և փորեաց ի նմա հնձան[1] և շինեաց աշտարակ, և ետ զնա ցմշակս[2] և գնաց ի տար աշխարհ[3]: Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝[4] առնուլ զպտուղս նորա: Եւ կալեալ մշակացն[5] զծառայս նորա զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին: Դարձեալ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. «Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ»: Իսկ մշակքն իբրև տեսին զորդին[6], ասեն ընդ միտս. «Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա և կալցուք[7] զժառանգութիւն սորա»: Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին[8] և սպանին: Արդ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ: Ասեն ցնա. «Զչարսն չարաւ կորուսցէ, և զայգին այլոց մշակացն, որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց» (*Մատթ.,* ԻԱ, 33-41):

1. *Փորեաց ի նմա հնձան* - նրանում հնձան փորեց:
2. *Ետ զնա ցմշակսն* - տվեց այն մշակներին:
3. *Գնաց ի տար աշխարհ* - գնաց օտար, հեռու աշխարհ:
4. *Առ մշակսն* - մշակների մոտ:
5. *Կալեալ մշակացն* - մշակները բռնելով:
6. *Իբրև տեսին զորդին* - երբ տեսան որդուն:
7. *Կալցուք զժառանգութիւն սորա* - տիրենք սրա ժառանգությանը:

8. *Արտաքոյ քան զայգին* - այգուց դուրս:

**Վարժություն 24:** Գտնել հետևյալ բառերի հնչյունափոխական տարբերակները. *ասեղն, աղտիր, երազ, թիթեղան, ծիծռան, լիսռան, երկոքեան, ղեկ, սեաւ, ոսկեայ, առեւծ, հարեւր, երկիւղ:*

Օրինակ՝ *ալեւր ~ ալիւր:*

**Վարժություն 25:** Որոշել, թե ինչ հնչյունների տարբերությամբ են առաջացել հետևյալ հնչյունափոխական տարբերակները. *երջեւր - եղջիւր, չուառ - թշուառ, հազանիմ - ազանիմ, մառախլապատ - մառախուղ, արագ - երագ, գեւղ - գիւղ:*

**Առաջադրանք 24:** Կարդալ «Ընթերցանություն 15»- ը և առանձնացնել հնչյունափոխված բառերը, որոշել, թե ինչ հնչյունափոխություն է տեղի ունեցել:

**Առաջադրանք 25:** Սովորել հետևյալ բառակապակցությունները. *բազմաց հաւատալի, դարման կենաց, տնկել այգի, ցանկով պատել, ժամանակ պտղոյ, ասել ընդ միտս, զչարս չարաւ կորուսանել, տալ զպտուղս ի ժամու:*

**Հարցեր 8:** ա) Ինչպե՞ս են գոյանում հնչյունափոխական տարբերակները:

բ) Ի՞նչ հնչյուններ են մասնակցում հնչյունափոխական տարբերակների գոյացմանը:

գ) Ի՞նչ տարբերակներ են գոյանում ձայնավորներով:

դ) Ի՞նչ տարբերակներ են գոյանում երկբարբառներով և բաղաձայններով:

# 3. ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ա) Գրային արտասանություն

**§ 34.** Գրաբարն առհասարակ և նրա հնչյունական համակարգն ի մասնավորի ժամանակի ընթացքում ենթարկվել է արտասանական փոփոխությունների: Դա ըստ էության այլ բան չէ, քան ուղղախոսական փոփոխություն: Հայտնի է, որ գրաբարի զարգացման սկզբնական փուլում (5-րդ դարի առաջին կես) հայերենի հնչյունների արտասանությունն իր արտացոլումն է գտել մեսրոպյան այբուբենի գրերի մեջ: Երբ ասվում է, թե Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է հայերեն լիարժեք այբուբեն, դա ամենից առաջ նշանակում է, որ այդ այբուբենը լրիվ և լիովին արտահայտելիս է եղել հայերենի այդ ժամանակի արտասանական - ուղղախոսական վիճակը: Ուստի այդ շրջանի գրավոր խոսքը սահմանվել է ուղղագրական այնպիսի կանոններով, որոնք ամբողջովին համարժեք են եղել հին գրական հայերենի արտասանական նորմային:

Մերթ բանավոր ու գրավոր, մերթ լոկ գրավոր ձևով գործածվող գրաբարը հետզհետե հեռանում է իր արտասանական սկզբնական վիճակից, փոփոխվում է դարերի ընթացքին համապատասխան: Գրաբարի հետագա արտասանությունն ամբողջովին հիմնված է սկզբնականի վրա, սակայն շատ բանով նրանից տարբեր է:

Առանձնացվում է գրաբարի արտասանության երկու տեսակ՝ գրային (հին) և ավանդական (նոր):

Գրային արտասանությունը, բնական է, սկզբնական վիճակի արտահայտությունն է: Իսկ թե ինչ վիճակ (կամ վիճակներ) է արտահայտում ավանդականը, սկզբնականին հաջորդող որ ժամանակի վիճակը (կամ վիճակները) է ներառում, դեռևս դժվար է լուծված համարել: Այդուհանդերձ, պարզ է այն, որ այժմյան ավանդական արտասանությունն անհամեմատ մոտ է, գրեթե համընկնում է նոր գրական հայերենի արդի, մեր ժամանակներին

հատուկ արտասանությանը: Ըստ այդմ պետք է ենթադրել, թե դարից դար գրաբարի ավանդական արտասանությունը բոլոր դեպքերում համընկնելիս է եղել տվյալ դարաշրջանի ընդհանուր գրական հայերենի արտասանությանը:

§ 35. Ձայնավորներն ունեն հետևյալ գրային արտասանությունը:

1. *Ա, ի, ու, ը* ձայնավորների գրային արտասանությունը մինչև այժմ որևէ փոփոխության չի ենթարկվել, մնացել է անխաթար: Այդ հնչյուններն այսօր արտասանվում են միանգամայն նույն ձևով, ինչպես որ հնում էր: Օրինակ՝ *արեգակն, արքայ, իջանել, իմաստասիրութիւն, իրաւացի, ուսումն, ուրջու, ուրացումն, ընդունայն, ընկենուլ* և այլն:

*Ը* ձայնավորը, ինչպես այսօր, հնում ևս ուներ երկու կարգի արտասանություն՝

ա) լսվող - գրվող (սովորական) *ը* (օրինակ՝ *ընծայ, ընկեր, անըմբռնելի, անընտել*),

բ) լսվող - չգրվող (գաղտնավանկ) *ը* (օրինակ՝ *անկշիռ [անկըշիռ], բդեշխ [բըդեշխ], բլիթ [բըլիթ], դուռն [դուռըն], հնն [հնըն]):*

Այդ նշանակում է, որ *ը* ձայնավորի գրային արտասանությունը ժամանակի ընթացքում որևէ էական փոփոխության չի ենթարկվել, այսինքն՝ այլ արտասանություն չունի:

2. *Ե, ո* ձայնավորների գրային արտասանությունը փոքր-ինչ տարբեր է եղել այսօրվա արտասանությունից: Դա նկատելի է հատկապես բառասկզբի դիրքում:

Այսպես, *ե* ձայնավորը բառասկզբում արտասանվել է *ե,* հետագայում է, որ դարձել է *յե*: Օրինակ՝ *երես [երես]* (այժմ՝ *յերէս*), *երկինք [երկինք]* (այժմ՝ *յերկինք*), *երեքալ [երեքալ]* (այժմ՝ *յերէքալ*):

*Ո* ձայնավորը ևս բառասկզբում արտասանվել է *ո*, հետագայում՝ *վո:* Օրինակ՝ *որս [որս]* (այժմ՝ *վորս*), *որդի [որդի]* (այժմ՝ *վորդի*), *որոմն [որոմն]* (այժմ՝ *վորոմն*):

3. *Է* երկբարբառակերպ ձայնավորն ուներ փակ արտասանություն, ի հակադրություն *ե* ձայնավորի բաց արտասանության: Օրինակ՝ *էակ [էակ]* (այժմ՝ *էյակ*), *անէանալ [անէանալ]* (այժմ՝ *անէյանալ*), *մանրէ [մանրէ]* (այժմ՝ նույնը):

**§ 36.** Գրաբարի երկբարբառներից մի քանիսի գրային արտասանությունը փոքր-ինչ տարբեր է:

1. *Այ* երկբարբառը բոլոր դիրքերում արտասանվել է *այ*, ըստ որում նաև բառավերջում: Օրինակ՝ *հայր [հայր], հայելի [հայելի], արքայ [արքայ]* (այժմ՝ *արքա*), *տղայ [տղայ]* (այժմ՝ *տղա*), *այլազան [այլազան], այպանել [այպանել]:*

2. *Եա* -ն սովորաբար հանդես է գալիս բառամիջում՝ արտասանվելով *եա* (հետագայում՝ *յա). պատանեակ, դայեակ, որդեակ, հոգեակ* և այլն:

3. *Աւ, եւ, իւ* երկբարբառների *ւ*-ը բոլոր դիրքերում արտասանվում էր *ու*: Ըստ այդմ՝ *աւ [աու], եւ [եու]* և *իւ [ իու]:* Օրինակ՝ *աւր [աուր]* (այժմ՝ *օր), տաւն [տաուն]* (այժմ՝ *տօն*), *խոնաւ [խոնաու]* (այժմ՝ *խոնավ*), *եւ [եու]* (այժմ՝ *եվ), եւս [եուս]* (այժմ՝ *եվս), իւրային [իուրային]* (այժմ՝ *յուրային), արիւն [արիուն]* (այժմ՝ *արյուն):*

4. *Ոյ* երկբարբառը բառամիջում բաղաձայնից առաջ արտասանվում է *ոի* (օրինակ՝ *գոյն [գոին], բոյր [բոիր], փոյթ [փոիթ]),* իսկ ձայնավորների միջև և բառավերջում՝ *ոյ* (օրինակ՝ *գոյ [գոյ], գոյական [գոյական], խոյ [խոյ], խոյակ [խոյակ]*):

5. *Ուա, ուե, ուի, ուո* (գրվում է *ւո)* երկբարբառների արտասանությունը համընկնում է գրությանը (հետագայում՝ *վա, վե, վի, վո*): Օրինակ՝ *աստուած, թուեմ* («թվարկում եմ», հաշում եմ»), *արծուի, պատանւոյ* («պատանու»):

**§ 37.** Գրաբարի բաղաձայններն ունեն հետևյալ գրային արտասանությունը:

1. Պայթական (*բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ*) և կիսաշփական (*ձ, ծ, ց, ջ, ճ, չ*) բաղաձայնների արտասանությունն էական փոփոխություն չի կրել: Դրանք գրաբարում և արդի գրական հայերենում

ունեն (գրեթե) նույն արտասանությունը: Օրինակ՝ *բազին [բազին], բանակ [բանակ], բարկ [բարկ], գլուխ [գլուխ], այգ [այգ], այգի [այգի], դարբաս [դարբաս], դրանդի [դրանդի], արդ [արդ], պատշաճ[պատշաճ], կապիճ [կապիճ], տուն [տուն], արտ [արտ], փեթակ [փեթակ], ձիւն [ձիւն], ծանաւթ [ծանաւթ], ցասումն [ցասումն], ջեռնում [ջեռնում], արջ[արջ], ճենճեր [ճենճեր], չափ [չափ], ամաչեմ [ամաչեմ], երկնչիմ [երկնչիմ]* և այլն:

2. Ձայնավորներից *ռ* -ն և *ր* -ն, ինչպես որ է արդի գրական հայերենում, միմյանցից տարբերվում են արտասանական կոշտությամբ և փափկությամբ. *ռ* -ն կոշտ է, իսկ *ր* -ն՝ փափուկ: Նման տարբերակումը ցույց է տալիս դրանց առանձին հնչույթ լինելն առհասարակ: Օրինակ՝ *արագ, գառն, որդի, դուռն, ռոճիկ, ռունգն, բերկրանք* և այլն: Իսկ առանձին դեպքերում դրանք հանդես են գալիս իբրեւ միևնույն միավորի դիրքային տարբերակներ: Օրինակ՝ *բառնամ* («վերցնում եմ, վեր եմ բարձրացնում, բեռնում եմ») - *բարձի* («վերցրի, վեր բարձրացրի, բեռնեցի»), *դառնամ* («դառնում եմ») - *դարձուցանել* («դարձնել»), *տռփ - տարփանք, այր* (տղամարդ) - *առն* («տղամարդու») և այլն:

3. Գրաբարում *ղ* -ն և *լ*-ն ինքնուրույն հնչույթ են, իրար ամբողջովին հակադիր, թեև նախագրաբարյան շրջանում հանդես էին գալիս դիրքային բաշխվածությամբ, որի հետևանքով գրաբարում կան միևնույն բառի կամ բառարմատի զուգահեռ ձևեր: Գրաբարում կատկային *լ* -ն աստիճանաբար վերածվել է *լ - ի*: Օրինակ՝ *ջիղ - ջիլ, աղ - անալի, (մառա)խուղ - (մառա)խլ(ապատ), այլ (այլայլեմ) - աղաւաղեմ* և այլն:

**Ընթերցանություն 17.** «Եւ եղև ի վաղիւ անդր[1] ետ հրաման Շապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զՎասակ Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ պատուհասել[2] զնա, քանզի էր Վասակ անձամբ[3] փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. «Աղուէ՛ս, դո՞ւ էիր խանգարիչ, որ այսչափ աշխատ արարեր[4] զմեզ. դո՞ւ ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես[5]. զմահ աղուեսու սպանից զքեզ»: Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ. «Այժմ քո տեսեալ զիս[6] անձամբս

փոքրիկ, ոչ առէր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, և արդ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր[7], և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»: Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. «Աղէ՝ տո՛ւր ինձ գիտել[8], ո՞վ են լերինքն այնոքիկ, զորս դուն ընդ ունջ տանէիր[9]»: Եւ ասէ Վասակ. «Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն Յունաց... Արդ զինչ և կամիս, արա՛»: Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել[10] զզօրավարն Հայոց Վասակ, և զմորթն հանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն բերդն յԸնդմըշն, որ Անյուշն կոչեն. ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ» (*Բուզ.,* էջ 260):

1. *Ի վաղիւ անդր* - հաջորդ օրը:
2. *Սկսաւ պահտուհասել* - սկսեց տանջել, անարգել:
3. *Անձամբ փոքրիկ* - մարմնով փոքր, փոքրամարմին:
4. *Աշխատ արարեր* - նեղություն տվեցիր՝ պատճառեցիր:
5. *Զի՞ գործես* - ինչպե՞ս ես, հիմա ո՞նց ես:
6. *Քո տեսեալ զիս* - դու ինձ տեսնելով:
7. *Մի ոտնս ի միոյ լերին կայր* - մի ոտս մի լեռան վրա էր:
8. *Տո՛ւր ինձ գիտել* - ասա՝ իմանամ, իմացրո՛ւ:
9. *Զորս դուն ընդ ունջ տանէիր* - որոնք դու գետնի տակ էիր մտցնում:
10. *Մորթել* - քերթել, մորթազերծ անել, մշակել:

**Ընթերցանություն 18.** «Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի[1], որ կամեցաւ համար առնուլ[2] ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ[3] առ նա պարտապան մի բեւր քանքարոյ: Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա և զորդիս և զամենայն, որ զինչ և ունիցի, և հատուցանել: Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր[4] նմա և ասէր. «Երկայնամիտ լեր առ իս[5], և զամենայն հատուցից քեզ»: Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա և զփոխն եթող նմա: Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարեւր դահեկան[6]. և կալեալ

զնա[7] խեղդէր և ասէր. «Հատո՛[8] ինձ զոր պարտիսդ»: Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր. «Երկայնամի՛տ լեր առ իս, և հատուցից քեզ»: Եւ նա ոչ կամէր, այլ չոգաւ[9] արկ զնա ի բանտ, մինչև հատուսցէ զպարտսն: Իբրև տեսին ծառայակիցքն նորա, որ ինչ եղևն, տրտմեցան յոյժ և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն, որ ինչ եղևն: Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ. «Ծառայ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս: Իսկ արդ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել[10] ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ»: Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչև հատուսցէ զամենայն զպարտսն» (*Մատթ.*, ԺԸ, 23--35):

1. *Նմանեցաւ... առն թագաւորի* - նմանվեց թագավոր մարդու:
2. *Համար առնուլ* - հաշիվ տեսնել:
3. *Մատուցաւ* - մոտեցավ, մոտ եկավ:
4. *Երկիր պագանէր* - երկրպագում էր:
5. *Երկայնամի՛տ լեր առ իս* - երկայնամիտ՝ խելամի՛տ եղիր իմ հանդեպ:
6. *Դահեկան* - դրամի չափ, տասանոց ոսկի՝ արծաթ:
7. *Կալեալ զնա* - բռնելով նրան:
8. *Հատո՛ ինձ* - հատուցի՛ր, վճարի՛ր ինձ:
9. *Չոգաւ* - գնաց:
10. *Ո՞չ էր պարտ և քեզ ողորմել* - պետք չէ՞ր, որ դու էլ խղճայիր:

**Վարժություն 26:** Բերված բառերից առանձնացնել գրային արտասանության տարբերություն ունեցող ձայնավորները *անձն, անհապաղ, ասպնջական* («հյուրընկալ»), *ելանեմ, եղկելի, երբեմն, ընդոծին, ընկենում, լստգտանեմ* («մեղադրել»), *կոփածոյ, կցորդ* («մասնակից»), *ողորկ, ողորմիմ, ոստանիկ, որոգայթ, սնոտի, տող, ցոփ, փողոց, քեռորդի, քղանցք:*

**Վարժություն 27:** Հետևյալ բառերից առանձնացնել երկբարբառ պարունակող բառերը, այնուհետև նշել դրանց արտա-

սանությունը. *այգեստան, այր, անըստերիր* («անսխալ, ուղիղ»), *անպաճոյճ, անտառախիտ, բնութիւն, բուրաստան, գալուստ, գետավէժ, դիւցազն, դպրութիւն, երեւոյթ, երեքանկիւնի, էութիւն, ընձիւղ, թանձր, կոփեմ, հիւրամեծար, հրոսակ, յելուզակ, յորժամ, նշոյլ, չափաւոր, պարզութիւն, ռահվիրայ, վախճան, վայր, քոյր, քսութիւն, օրհասական, օրհասարակ* («կեսօր»):

**Վարժություն 28:** Հետևյալ բառերը կարդալ գրային արտասանությամբ. *արիւն, արդարութիւն, եղբայրութիւն, գոյժ, գուժկան, դիւրաւ, կոյս, հարիւր, հիւր, հայցուած, մակոյկ, նիւթ, պարոյկ, պարոյր, ուտայն, ցայգ, փոյթ, փորուած, քսութիւն:*

**Առաջադրանք 26:** Կարդալ «Ընթերցանություն 17»-ը և առանձնացնել այն բառերը, որոնցում գործածվել են *ռ, ր* հնչյուններր՝ որոշելով դրանց արտասանության բնույթը և հնչյունական բաշխվածությունը:

**Առաջադրանք 27:** Կարդալ «Ընթերցանություն 18»-ը և առանձնացնել այն բառերը, որոնցում կան հնչյունների արտասանական տարբերություններ:

**Հարցեր 9:** ա) Ի՞նչ առանձնահատկություններ ունի գրային արտասանությունը:

բ) Ինչպիսի՞ն է գրաբարի ձայնավորների գրային արտասանությունը:

գ) Գրաբարի երկբարբառներից որո՞նք ունեն գրային արտասանության առանձնահատկություններ:

դ) Բաղաձայններն արտասանական ի՞նչ տարբերություններ ունեն:

## բ) Ավանդական արտասանություն

**§ 38.** Ավանդական արտասանությունն ընդգրկում է գրաբարի հնչյունների կրած այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել

հետագայում: Գրաբարի ավանդական արտասանությամբ արտահայտվող փոփոխությունները վերաբերում են ոչ թե հնչյունական համակարգին՝ հավասարապես, այլ առանձին հնչյունների՝ մասնավորաբար: Առանձին հնչյունական - արտասանական փոփոխություններ են նկատվում որոշ ձայնավորների, երկբարբառների, եռաբարբառների և բաղաձայնների դեպքում:

**§ 39.** Ձայնավորներից ավանդաբար փոփոխվում է *ե, ո, ու* ձայնավորների արտասանությունը:

Այսպես, *ե* -ն բառասկզբում այժմ արտասանվում է *յե*: Օրինակ՝ *ելանել* [յելանել], *եռանդ* [յեռանդ], *երդումն* [յերդումն], *երկիւղ* [յերկիւղ]:

*Ո* -ն բառասկզբում արտասանվում է *վո*: Օրինակ՝ *ողն* [վողն], *ոստան* [վոստան], *որոմն* [վորոմն], *որոջ* [վորոջ]:

*Ու* -ն բառամիջում ձայնավորից առաջ արտասանվում է *վ*: Օրինակ՝ *նուէր* [նվեր], *շինուած* [շինված], *կռուել* [կռվել]:

**§ 40.** Երկբարբառներից մասնակիորեն փոփոխված են *աւ, եա, իւ, ոյ* երկբարբառները:

*Աւ*- ը փակ վանկում առհասարակ պարզվելով վերածվում է *օ*-ի, որը բավականին ուշ երևույթ է: Օրինակ՝ *աւր* [օր], *զաւրք* [զօրք], *տաւն* [տօն]:

*Եա*-ն արտասանվում է *յա*: Օրինակ՝ *անցեալ* [անցյալ], *գրեաց* [գրյաց] («գրեց»), *վայրկեան* [վայրկյան]:

*Իւ* -ն արտասանվում է *իու* կամ *յու*: Օրինակ՝ *արիւն* [արիուն// արյուն], *բիւր* [բիուր// բյուր], *հիւսել* [հիուսել // հյուսել]:

*Ոյ* -ն արտասանվում է *ույ*: Օրինակ՝ *բոյր* [բույր], *բոյն* [բույն], *գոյն* [գույն], *լոյս* [լույս], *առնոյր* [առնույր] («առնում էր»), *պիտոյք* [պիտույք]:

**§ 41.** Ավանդաբար փոփոխված է *եայ, եաւ, ոյ* եռաբարբառների արտասանությունը:

Այսպես, *եայ* -ն արտասանվում է *յայ*: Օրինակ՝ *աշտեայի* [աշտյայի], *միջօրեայի* [միջօրյայի]:

*Եաւ* -ն արտասանվում է *եօ*: Օրինակ՝ *պատանեաւք* [պատանեօք], *պատասխանեաւք* [պատասխանեօք], *մորթեաւք* [մորթեօք]:

*Իոյ* -ն արտասանվում է *վույ*: Օրինակ՝ *արժանոյն* [արժանվույն], *պատանոյն* [պատանվույն], *կենդանոյն* [կենդանվույն]:

**§ 42.** Գրաբարի բաղաձայնների արտասանությունն ավանդաբար քիչ է ենթարկվել փոփոխության: Եղածն էլ վերաբերում է ձայնորդներին: Իսկ դա նշանակում է, որ այսօր գրաբար բնագրերում բաղաձայնները մեծ մասամբ արտասանում ենք գրեթե նույն ձևով, ինչ ձևով որ արտասանվել են հնում: Ձայնորդներից փոփոխության են ենթարկվել *յ* -ն և *ւ* -ը:

1. *Յ* -ն բառասկզբում ավանդաբար արտասանվում է *հ*: Օրինակ՝ *յազենամ [հազենամ], յատանեմ [հատանեմ], յոլով [հոլով], յօն [հօն]* (հոնք):

2. *Յ* -ն բառավերջում չի արտասանվում: Օրինակ՝ *արքայ* [արքա], *իմանայ* [իմանա] («իմանում է»), *իւրոյ* [յուրո] (իր), *ժողովոյ* [ժողովո] («ժողովի»): Այստեղ բացառություն են մի քանի միավանկ բառեր: Օրինակ՝ *գոյ, խոյ, հայ, ճայ, նայ* և այլն:

3. *Ւ* -ը բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում արտասանվում է *վ:* Օրինակ՝ *թագաւոր* [թագավոր], *բաւական* [բավական], *ծաւալումն* [ծավալումն], *անիւ* [անիվ], *թիւ* [թիվ], *պատիւ* [պատիվ]:

**Ընթերցանություն 19:** «Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զքարի և զքնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն. զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալին, զամենազիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սքափութեան. զդաշտս մեծատարածս և որսալիցս. զլերինս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտարօտս, զհոծեալս էրէովքն[1] կճղակաբաժնիւք և որոճայնովքն, և այլովք եւս բազմօք ընդ նոսին: Յորոց ի վերուստ

ի կատարացն ջրոց հոսմունք, անկարօտ ոռոգման[2] արբուցանելով զդաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յուտանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինւոյ[3], զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն[4] և զզանազանումն իւղաբուղխ սերմանցն: Իսկ ի լանջակողմանսն կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դի- պեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտաբոյսք և պարարտ արտօք պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտոցն զանթիւ արօտականս ընդանի իշանց և զանհամբոյր բոյլս վայրենի էրէոցն յագեցուցեալ՝ թանձրաթաղանթս, առ- գազաւակս, սնկացեալս[5] գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բացօթէգացն, ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զզգայութիւն խելացն և նորոգեն: Անդ գտանին և ազգի ազգի արմատք[6] բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արբմամբ՝ յերկարելոցն ի ցաւս պա- տահացուցանեն առողջութիւն» (*Փարպ.*, էջ 9-10):

1. *Հոծեալ էրէովքն* - երեներով հոծ դարձած՝ խտացած:
2. *Անկարօտ ոռոգման* - ոռոգումից ոչ զուրկ՝ ոչ անմասն:
3. *Անպակասութիւն հացի և գինւոյ* - անպակաս հացից և գինուց:
4. *Քաղցրութիւն բանջարացն* - քաղցր բանջարների:
5. *Սնկացեալս գիրութեամբ* - գիրությունից տոզած՝ ուռ- ճացած:
6. *Ազգի ազգի արմատք* - տեսակ-տեսակ արմատներ՝ արմտիք:

**Ընթերցանություն 20**. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն[1] հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամե- նայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն

յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղնական տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել՝[2] ասելով, եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան» (*Կոր.*, էջ 48-50):

*1. Գրիչ ումն* - ինչ-որ՝ մի գրագիր, գրող:

*2. Ծանօթս ... ընծայեցուցանէ լինել* - հնարավորություն է ստեղծում ծանոթանալու:

**Վարժություն 29:** Բերված բառերից առանձնացնել նրանք, որոնցում ձայնավորներն աչքի են ընկնում ավանդական արտասանության որևէ տարբերությամբ. *անվեհեր, անկուած, անստուեր, անկումն, անուշահոտ, անուանակիր, անուորդ, անորակ, անորոշ, եռայարկ, երթալ, երէց, ընկենուլ, խնկելի, մոգական, մոլար, որդան, որկրամոլ, որձաքար, չարական:*

**Վարժություն 30:** Հետևյալ բառերում հանդիպող երկբարբառները կարդալ ավանդական արտասանությամբ. *ամենեքեան, անգիւտ, արքանեակ, աւգուտ, դայեակ, դիւթ* («կախարդ»), *դուզնաքեայ* («քիչ, չնչին»), *դպրութիւն, եղջիւր, երկիւղ, կաւշիկ, կեանք, համբոյր, հիւթ, հիւրամեծար, հաւտ, մատեան, մեհեան, մոյկ* («կոշիկ, հողաթափ»), *յաւշել, փոյթ, քոյր, քաւղ* («ծածկոց, քող»):

**Վարժություն 31:** Հետևյալ բառաձևերում հանդիպող եռաբարբառները կարդալ ավանդական արտասանությամբ. *կաբելոյն, պատկանելոյն, պաշտօնեայ, քրիստոնեայն, տիրուհւոյն, հրեայն, տեղւոյն, գերեաւք, եկեղեցեաւք, թզենեաւք, Արշակունւոյն, Արծրունեաւք, կարծեաւք:*

**Վարժություն 32:** Հետևյալ բառերում հանդիպող *յ* և *ւ* բաղաձայնները կարդալ ավանդական արտասանությամբ. *յոյս, աւանդ,*

*աւետիք, յագենալ, յաղագս* («համար, մասին»), *յանցանել, յորժամ* («երբ»), *գործոյ* («գործի»), *աղեղնաւոր, վաղրաւոր* («վաղրով՝ կարճ թրով զինվոր»), *առաւօտ, յաւելուլ, յօշել* («մասնատել»), *յորդորել:*

**Առաջադրանք 28:** Կարդալ «Ընթերցանություն 19»-ը և առանձնացնել այն բառերը, որոնցում կան ավանդական արտասանությամբ արտասանելի ձայնավորներ:

**Առաջադրանք 29:** Կարդալ «Ընթերցանություն 20»-ը և առանձնացնել այն բառերը, որոնցում նկատելի է որևէ հնչյունի կամ երկբարբառի ավանդական արտասանություն:

**Առաջադրանք 30:** Վերհիշել ավանդական արտասանությամբ հայտնի հինգ և ավելի բառեր:

**Հարցեր 10:** ա) Ի՞նչ առանձնահատկությամբ է բնորոշվում ավանդական արտասանությունը:

բ)Ինչպիսի՞ն է ձայնավորների ավանդական արտասանությունը:

գ)Ո՞ր երկբարբառներն են ենթարկվել ավանդական արտասանության:

դ)Ո՞ր ձայնորդներն են կրում ավանդական արտասանություն:

## գ) Ուղղագրության կանոնարկում

**§ 43.** Ուղղագրությունը հին գրական լեզվի բառերի, բառակապակցությունների և նախադասությունների գրության կանոնների ամբողջությունն է: Այն ունի համակարգային բնույթ, ընդգրկում է բացահայտ դեպքեր, պայմանավորված է հնչյունական գրությամբ: Վերջինս, ինչպես գիտենք, իրացվում է «մեկ հնչյունին մեկ գիր» սկզբունքով: Հին գրական հայերենի ուղղագրությունը կոչվում է հին (գրաբարյան) կամ մեսրոպյան, որովհետեւ այն որքան էլ հնչյունական է, այնուամենայնիվ ունի հիմնական և

մասնավոր կանոններ: Այդ նշանակում է, որ հին գրական հայերենի ուղղագրությունը ևս ենթարկվում է որոշակի կանոնարկման:

§ **44.** Ուղղագրորեն կանոնարկված են բաղաձայնները, ձայնավորները և երկբարբառներն ու եռաբարբառները: Առավել հատկանշական են հետևյալ կանոնները:

ա) Բաղաձայնները հիմնականում գրվում են այնպես, ինչպես լսվում են: Այս կանոնը չունի որևէ բացառություն: Հին գրավոր աղբյուրներում տեղ գտած, թվացյալ շեղումներն արդյունք են խոսակցական լեզվի ազդեցության կամ հետագա գրչության: Այսպես, «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ» նախադասության մեջ առանձին բառերում հանդիպող *ճ, ն, չ, լ, մ, ս, տ, ք* գրերն ամենայն հավանականությամբ ժամանակին ունեցել են նույն արժեքը, ինչ այսօր:

բ) Ձայնորդ բաղաձայններից *յ* -ն և *ւ* -ը մասնակցում են երկբարբառների կազմությանը, այսինքն՝ գործում են դրանց արտասանական կանոնների գրավոր իրացման սկզբունքով: Այսպես՝ *յ* -ն գործածվում է *այ* և *ոյ* երկբարբառների դեպքում, իսկ *ւ* -ը՝ մնացածների: Ըստ որում *ւ* -ը մի դեպքում գրվում է *ւ (աւ, եւ, իւ*), իսկ մյուս դեպքում՝ *ու* (*ուա, ուե, ու*). *ուո* երկբարբառի դեպքում *ւ* -ը և *ու* -ն գտնվում են ազատ բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ այդ երկբարբառը գրվում է *ուո* կամ *ւո*: Հիշյալ ձայնորդները մասնակցում են նաև եռաբարբառների կազմությանը. *յ* -ն գրվում է *եայ, ուայ, ուոյ (ւոյ),* իսկ *ւ* -ը՝ *եաւ, ուաւ, ուոյ (ւոյ)* եռաբարբառների դեպքում:

գ) Բացի գաղտնավանկ *ը* -ից (որը լսվում է, բայց չի գրվում) մնացած բոլոր ձայնավորները, գրային կամ ավանդական արտասանության սահմանափակումով հանդերձ, գրվում են այնպես, ինչպես լսվում են: Այսպես, գրային արտասանության սահմանափակում է այն, որ *ե* -ն լսվում է *է*, բայց գրվում է *ե* ոչ միայն իբրև պարզ ձայնավոր, այլև որպես երկբարբառի և եռաբարբառի բաղադրիչ: Օրինակ՝ *երէց, մեծ, տեսանել, ելանել, գրեաց (գրեց), աշտեայ, տեղեաւ: Ո* -ն բառասկզբում արտասանվում է *վո*,

սակայն գրվում է *ո:* Օրինակ՝ *ոսկի, որոմն, որդի*: Ավանդական արտասանության սահմանափակում է այն, որ *ու* -ն մերթ արտասանվում է *ու,* մերթ *վ* բոլոր դեպքերում գրվելով *ու*: Օրինակ՝ *առնուի, թողուի, լնուի, արծուի, Դուին* և այլն:

**Ընթերցանություն 21:** «Դարձեալ զօրաժողով եղև Խոսրով արքայ ի վերայ Յունաց երկրորդ անգամ, ի մտի կալեալ[1] զմահն Միհրանայ քեռորդւոյն իւրոյ. և առաքեաց զՎախտանգ՝ զնորին հօրեղբայրն, երեսուն հազար ընտիր առն և ձիոյ[2]: Իսկ նորա եկեալ[3] ի գաւառն Ապահունեաց, արձակէր հարկապահանջս ի Հարք և ի Հաշտեանք և ի Տարօն: Առ որ գրեն գաւառապետքն. «Եթէ Վահան տայ, և մեք[4]. ապա թէ ոչ, ունայն գնայք ի մէնջ»: Զայսոսիկ լուեալ Վախտանգայ, խրոխտացաւ և ըմբոստացաւ. և թողեալ կողմնապետ[5] յԱպահունիս, և փքացեալ ալեօք եկն ի գլուխ Տարօնոյ: Եւ շինէ զաւերեալն Չիւնկերտ քաղաք մեծ. և փոխէ զանուն քաղաքին ըստ անուան կնոջ իւրոյ, զոր էած ընդ իւր՝ Պորպէս, այս ինքն համեղ: Տնկեաց այգիս և բուրաստանս. և փոխէ զատրուշանն ի դուռն Կաթուղիկէին, զոր հիմնարկեալ էր սրբոյն Սահակայ[6]: Եւ ի վերայ լերինն Տաւրոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Գարհար. քանզի անդ ոմանք գահավէժ եղեն ի վերայ անասնոց, կարծելով թէ հեծեալք են: Փոխէ զԳոռոզ լեռնաբլուրն, յանուն որդւոյն իւրոյ Գռէզուռոյ՝ Գոզուռ, զբօսանալով յամարան աւուրսն ի վերայ նորա: Եւ յղեաց պարգեւս բազումս Վահանայ, և թուղթս՝ զայս ինչ» (*Յովհ. Մամ.,* էջ 30):

1. *Ի մտի կալեալ* - հիշելով, մտքում պահելով:
2. *Առն և ձիոյ* - այրուձիու:
3. *Նորա եկեալ* - նա եկավ:
4. *Եթէ Վահան տայ, և մեք* - եթե Վահանը կտա, մենք էլ (կտանք):
5. *Կողմնապետ* - կուսակալ, պահապան:
6. *Հիմնեալ էր սրբոյն Սահակայ* - սուրբ Սահակն էր հիմնել:

**Ընթերցանություն 22:** «Բայց եկեսցուք պատասխանատրեսցուք[1] յաղագս ուսումնականին բնաբանականին աստուածաբանականին: Եւ յաղագս ուսումնականին ասեմք, եթէ ոչ կարծէ զնա Պղատոն ոչ գոլ մասն իմաստասիրութեան, բայց եթէ ոչ ծայրագոյն իմաստասիրութեան, այսինքն աստուածաբանականին, քանզի ծայրագունին ոչ կարծէ զնա գոլ մասն. այլ զի գիտէ զուսումնականն մասն իմաստասիրութեան, յայտ առնէ[2], մակացութիւն զնա կոչելով: Արդ, եթէ մակացութիւն է, յայտ է, եթէ մասն է իմաստասիրութեան: Իսկ Արիստոտէլ յայտնապէս զուսումնականն մասն իմաստասիրութեան կոչէ: Իսկ յաղագս բնաբանականին պատասխանատրեցաք[3], յեղծումն արկեալ զերկրորդն ևս ձեռնարկութիւն[4], որ ասէին՝ թէ էակքն ի հոսման և ի ծորման են: Իսկ յաղագս աստուածաբանականին ասեմք, թէպէտ և աստուածայինն անգիտելի է ըստ ինքեան, այլ սակայն, տեսանելով զստեղծուածս և զարարածս նորա և զբարեկարգապէս[5] շարժումն աշխարհի, ի մտածութիւն և ի կարծիս գամք ստեղծչին: Իսկ աներևոյթն յերևելեացս փութագոյն[6] ունի ճանաչիլն: Արդ, այսպէս յեղծումն արկեալ և զերրորդ նոցա ձեռնարկութիւն, դադարեսցուսցուք[7] զառաջիկայ տեսութիւնս» (*Դաւիթ Անյաղթ*, էջ 35):

1. *Պատասխանատրեսցուք* - պատասխան տանք, պատասխանենք:
2. *Յայտ առնէ* - ցույց է տալիս:
3. *Պատասխանատրեցաք* - պատասխանեցինք, արտահայտվեցինք:
4. *Ձեռնարկութիւն* - փաստարկ:
5. *Բարեկարգապէս* - կարգավորված, բարեկարգված:
6. *Փութագոյն* - հեշտությամբ:
7. *Դադարեցուսցուք* - ավարտենք:

**Վարժություն 33:** Ավելացանել բաց թողնված հնչյունները. *ա-արակ, ա-աստան, ա-րուշան, ա-շաել, -աշտ, ընթե-նուլ, մ-գ,*

*պար-ն, սակա-ապետ, ն-էր, սի-ն, շառա-իղ, իշխանա-որ, րոպ-, ար-ւն, դի-րին, բոլորե-եան, ընթե-ցարան:*

**Վարժություն 34:** Լրացնել բաց թողնված երկբարբառները. *անկ-ն, ս-ն, դ-ն, ընկ-զ, սովոր-յթ, թ-րութ-ն, դաշ-ն, դր-գ, դժ-ր, ծ-ր, գ-ն, ատ-ն:*

**Վարժություն 35:** Լրացնել բաց թողնված ձայնավորները. *-ռնել, աապ-տ, գ-հ, դահ-կան, դար-վել, գ-նուլ, -ւթիւն, լն-լ, խոր-ն, հն-րել, հ-սել, ձ-յն, ձ-ռն, յեղ-լ, նախ-նձ- շ-բաթ, -սումն, չափ-ւոր, ս-տակել, վ-յր, տ-գնապ, տ-դի, -րինակ, օծան-լ, օր-ն:*

**Առաջադրանք 31:** Կարդալ «Ընթերցանություն 21»-ը և առանձնացնել պայթական բաղաձայն պարունակող բառերը:

**Առաջադրանք 32:** Կարդալ «Ընթերցանություն 22»-ը և առանձնացնել երկբարբառ պարունակող բառերը:

**Առաջադրանք 33:** Թվարկել պարզ ձայնավոր պարունակող տասը բառ:

**Հարցեր 11:** ա) Ինչպիսի՞ն է բաղաձայնների ուղղագրությունը:

բ) Ի՞նչ կանոններ կան *յ* և *ւ* ձայնորդների ուղղագրության:

գ) Ինչպիսի՞ն է երկբարբառների ուղղագրությունը:

դ) Ո՞ր երկբարբառն ունի երկակի գրություն:

ե) Ինչպիսի՞ն է եռաբարբառների ուղղագրությունը:

# 4. ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

**§ 45.** Տառադարձությունը ամեն մի լեզվի անծանոթ այբուբենի (տառերի համակարգի) վերածումն է մատչելի մեկ այլ այբուբենի (տառերի համակարգի) հնչյունական լիարժեքության պահպանման հիմունքով: Տառադարձելի են բոլոր լեզուների այբուբենները:

**§ 46.** Հայերենի հնչույթային համակարգը կարելի է վերածել երկու տեսակ տառադարձությամբ՝ հայագիր և լատինագիր: Հայագիր տառադարձությունը, սովորաբար, վերաբերում է հայերենի բարբառների հնչյունական տարրերի վերածմանը գրական հայերենի տառերով: Լատինագիր տառադարձությունն ընդգրկում է գրական հայերենն իր առանձին փուլերում հանդես եկած տարբերակներով. այս դեպքը հայերեն տառերով արտահայտված նույնլեզվյան հնչյունների վերածումն է այլալեզու՝ լատինական տառերի օգնությամբ: Եվ քանի որ վերջինիս այբուբենն իր թվաքանակով, հնչյունական արժեքով ու կատարելությամբ, ինչ խոսք, զիջում է հին հայերենի այբուբենին, ուստի լատինագիր տառադարձման ժամանակ օգտագործվում են տարբերիչ (դիակրիտիկ) նշաններ:

**Ծանոթություն 6:** Գրաբարի դեպքում գործածվում է հինգ տարբերիչ նշան տասներեք հնչյունի համար.

ա) փուշ (v)՝ *ջ, ճ, չ, ժ, շ* տառերի համար,

բ) ծունկ (c)՝ *փ, թ, ք* տառերի համար,

գ) կետ (.)՝ ռ - ի համար (վերևից), *ց*-ի համար (ներքևից),

դ) երկար (-)՝ *է*-ի համար,

ե) սուր (/)՝ *ղ*-ի համար (մեջտեղից):

**§ 47.** Մեսրոպյան այբուբենի տառադարձությամբ զբաղվել են անվանի հայերենագետներ (Հ. Հյուբշման, Ն. Մառ, Ա. Մեյե, Է. Բենվենիստ և այլք): Ամենաընդունելին Հյուբշմանինն է, որը որոշ չափով կատարելագործված է Մեյեի և Բենվենիստի կողմից (տե՛ս գծապատկեր):

**Ճանոթություն 7:** Հետագա հավելում են *օ (o)* - ն, *Ֆ (f)* և *եւ* ( *և.* ew) - ը:

**Գծապատկեր 4**

| 1-ին շարք | | 2-րդ շարք | | 3- րդ շարք | | 4- րդ շարք | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերեն տառը | Տա-ռա-դար-ձու-թյուն | Հայերեն տառը | Տա-ռա-դար-ձու-թյուն | Հայերեն տառը | Տա-ռա-դար-ձու-թյուն | Հայերեն տառը | Տա-ռա-դար-ձու-թյուն |
| ա | a | ժ | ž | ճ | č | ռ | ř |
| բ | b | ի | i | մ | m | ս | s |
| գ | g | լ | l | յ | y | վ | v |
| դ | d | խ | x | ն | n | տ | t |
| ե | e | ծ | c | շ | s | ր | r |
| զ | z | կ | k | ո | o | ց | $c^c$ |
| է | ē | հ | h | չ | $č^c$ | ւ | u |
| ը | ə | ձ | ĵ | պ | p | փ | $p^c$ |
| թ | $t^c$ | ղ | ł | ջ | ǰ | ք | $k^c$ |

Հնչյունական համակարգը տառադարձվում է ուսուցման և գիտական ուսումնասիրության նպատակով: Հայերենը, իբրև հնդեվրոպական ցեղակցության լեզու, լայն քննարկման առարկա է ոչ միայն մեզանում, այլև օտար մասնագետների կողմից:

**Ընթերցանություն 23:**

«Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր[1] և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն[2] վազէր խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուս,

Եւ աչքունքն էին արեգակունք» (*Խոր,* էջ 102):

1. *Ունէր* - բռնել էր:
2. *Ի բոցոյն* - բոցի միջից՝ միջով:

**Ընթերցանություն 24:** «Սոյն Յոհան եպիսկոպոս՝ որդի Փառինայ, յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խեղկատակ լինէր նոցա[1], որպէս խաղալով[2] զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ պասքեալ[3] փափագէր, սակայն միհանէսք[4] այն էին նորա: Ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր առաջի թագաւորացն, և զուղտու զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով: Ընդ կառաչելն[5] ապա մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն՝ ասելով, թէ «Ուղտ եմ, ուղտ եմ և զարքայի զմեղս բառնամ, դիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ»: Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ ագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս և ագարակս և զանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն: Այսպիսի էր այրս Յոհանս կապեալ յըռժդութեան[6] և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս վասն ագահութեան, որ չէր արժան» (*Բուզ.,* էջ 410):

1. *Խեղկատակ լինէր նոցա* - նրանց դեմ՝ համար խեղկատակություն էր անում:
2. *Խաղալով* - ծամածռվելով, ծամածռություն անելով:
3. *Պասքեալ* - ծարավված, տոչորված:
4. *Միհանէսք* - պատրվակ (բրբռ. *միհանա, մեհենա)*:
5. *Ընդ կառաչելն* - կառաչելիս՝ ուղտի ձայն հանելիս:
6. *Ըռժդութիւն* - ժլատություն:

**Վարժություն 36:** Տառադարձել հետևյալ բառերը. *ասպատակ, աստեղագէտ, արեւ, բանսարկու, բեկանել, երեւոյթ, թուլամիտ, իշխանութիւն, խիլ, կտակ, հաստատուն, ծուլել, ուծանալ*

(«սառչել, օտարանալ»), *ունայն, պարսաքար, սակաւ, սուրհան-դակ:*

**Վարժություն 37:** Տառադարձել հետևյալ նախադասություն-ները. *Եւ քանզի զարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց: Տրտմեցաւ Սուրէն, եւ ոչ կարաց խօսել զերիս աւուրս:*

**Առաջադրանք 34: Վ**երհիշել և տառադարձությամբ գրել 10 - 15 բայ:

**Առաջադրանք 35:** Կարդալ և տառադարձել «Ընթերցա-նություն 23»-ը, սովորել անգիր, տառադարձությամբ դուրս գրել բաղաձայնները:

**Առաջադրանք 36:** Կարդալ և տառադարձել «Ըն-թերցանություն 24»-ի այն բառերը, որոնցում կան ձայնորդ բաղա-ձայններ:

**Հարցեր 12:** ա) Ի՞նչ է տառադարձությունը:

բ) Ի՞նչ նպատակով է տառադարձվում հայերենի այբուբենը:

գ) Որո՞նք են հայերեն տառերի տարբերիչ նշանները:

դ) Հայերեն ո՞ր տառերն են կրում տարբերիչ նշան:

# Բ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## 1. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

### ա) Հոլովում և հոլով

**§ 48.** Առհասարակ անունները և իբրև անուն հանդես եկող բառերը խոսքի մեջ ենթարկվում են որոշակի փոփոխությունների, որպեսզի արտահայտեն առարկաների և նրանց տարբեր հատկանիշների հարաբերությունները: Այդ փոփոխություններն այլ բան չեն, քան բառերի թեքումներ: Հոլովումը նման բառերի հնարավոր փոփոխության, թեքման օրինաչափական ամբողջությունն է: Հոլովն այդ օրինաչափորեն ամբողջական փոփոխության, թեքման մի դեպքն է: Այսպիսով, հոլովումը անունների թեքման՝ ձևաբանական փոփոխության ընդհանրացումն է, իսկ հոլովը՝ նրա առանձնացումը: Հոլովումն անվան ձևափոխության էությունն է, իսկ հոլովը՝ նրա մի դրսևորումը: Հոլովումն ընդհանուր էություն է, իսկ հոլովը՝ առանձին երևույթ:

**§ 49.** Գրաբարում հոլովվում են գոյականը, ածականը, թվականը, դերանունը, այլև՝ անորոշ, անցյալ և ենթակայական դերբայները: Ձևաբանորեն փոփոխվող առարկայի կամ նրա այս կամ այն հատկանիշի անունը կարող է վերցված լինել առանձին (եզակի թիվ) կամ միասնական (հոգնակի թիվ):

Հոլովումը տեղի է ունենում հոլովվող բառի վերջում կամ վերջին ձայնորդից առաջ որևէ ձայնավորի (տվյալ դեպքում՝ ձևույթի) տեղադրումով, այսինքն՝ բառը թեքվում է ըստ այդ ձևույթի: Եվ քանի որ բառի թեքումը տեղի է ունենում որևէ ձայնավորի շնորհիվ, ուստի գրաբարում նման ձայնավորը կոչվում է հոլովիչ: Հոլովիչի արժեքով գործածվող ձայնավորները հինգն են՝ *ա, ե, ի, ո, ու:* Ըստ այդմ էլ առանձնացվում է հինգ հոլովիչ:

Գրաբարում անունները ներկայացնում են վեց, ավելի ճիշտ՝ հինգ կարգի փոփոխություն, որը հակադրվում է անունների ելակետային, սկզբնական ձևին: Դրանք գրաբարի հոլովներն են՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Վերջին հինգը փոփոխյալ ձևեր են, իսկ առաջինը՝ սկզբնական:

Ըստ այն հատկանիշի, թե հոլովիչը բառի որ մասում՝ վերջում թե վերջին ձայնորդից առաջ է դրվում, հոլովումը բաժանվում է երկու տեսակի՝ վերջադրական և ներդրական: Դրանից բացի, մի կարևոր առանձնահատկությունն այն է, որ բառերի մի մասը հոլովվում է սկզբից մինչև վերջ մեկ հոլովիչով, իսկ մյուս մասը՝ սկզբից մեկ, այնուհետև մեկ այլ հոլովիչով: Այդ հատկանիշի հիմա վրա էլ զանազանում են հոլովումների երկու ձև՝ պարզ և խառն: Պարզ է միայն մեկ հոլովիչով տեղի ունեցող հոլովումը: Խառն հոլովման դեպքում մասնակցում է երկու հոլովիչ: Նկատի ունենալով հոլովիչի տեղադրման տեսակն ու ձևը՝ գրաբարում առանձնացվում են վերջադրական պարզ *ա, ի, ո, ու,* այլև վերջադրական խառն *ի-ա, ո-ա,* ներդրական պարզ *ա, ե,* այլև ներդրական խառն *ի-ա* հոլովումներ: Նշված հոլովումները ներկայացնում են պարզ և խառն հոլովումների յոթ տիպ, այսինքն՝ գրաբարում հոլովատիպերը յոթն են՝ *ա, ե, ի, ո, ու, ի - ա, ո - ա:* Ըստ այդմ՝ գրաբարն ունի հինգ հոլովիչ, հոլովման յոթ ձև և ինը տեսակ (տե՛ս գծապատկեր):

**Գծապատկեր 5**

| | Պարզ | Խառն |
|---|---|---|
| Վերջադրական | *ա, ի, ո, ու* | *ի - ա, ո- ա* |
| Ներդրական | *ա, ե* | *ի - ա* |

Հոլովները բաղադրվում են ոչ միայն հոլովիչների, այլև կոնկրետ այս կամ այն հոլովը (կամ հոլովները) ձևավորող մասնիկների՝ հոլովական վերջավորությունների օգնությամբ: Այդ մասնիկները, սովորաբար, կոչվում են հոլովակերտներ: Վերջիններս ամեն դեպքում ձևավորում («կերտում») են տվյալ հոլովը: Հոլովակերտները տասնչորսն են՝ ø (զրո), *ն, ջ, նջ, ում, է, ւ, վ, բ, ք, ց, ս, իկ,*

յ (վերջինս *ա*-ից և *ո*-ից հետո՝ պատմականորեն առաջացած, եզակի սեռական - տրական հոլովների դեպքում): Դրանք հավասարաչափ բաշխված չեն հոլովների վրա. կան հոլովներ, որոնք զուրկ են դրանցից, կան այնպիսիները, որոնք ունենում են (նայած հոլովվող անվան դեպքի) երկու և ավելի հոլովակերտներ: Ըստ այդմ՝ հոլովակերտներն ըստ հոլովների բաշխվում են հետևյալ կերպ.

| | *Եզակի թիվ* | *Հոգնակի թիվ* |
|---|---|---|
| ուղղ. | ø (զրո) | -ք |
| սեռ. | ø (զրո), -յ, երբեմն՝ -ն, -ջ, -նջ | -ց |
| տր. | ø (զրո), -յ, երբեմն՝ -ն, -ջ, -նջ, -ում | -ց |
| հայց. | ø (զրո) | -ս |
| բաց. | -է, -յ | -ց |
| գործ. | -ւ, -վ, -բ | -ւք, -վք, -բք |

**§ 50**. Գրաբարի հոլովներն ունեն հետևյալ կազմությունը:

Եզակի ուղղականը բառի սկզբնական, ուղիղ ձևն է՝ *տիտան, զազաթն, աստղ, այծ, աթոռ, զանձ, աղքատ, մատն, այգի* և այլն:

Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ *ք*-ով, *մարդ* բառի դեպքում՝ *իկ*-ով՝ *տիտանք, զազաթունք, աստեղք, այծք, աթոռք, զանձք, աղքատք, մատունք, այգիք* և այլն:

**Ծանոթություն 8:** Վերջաղրական հոլովման որոշ բառեր *ք*-ի փոխարեն ստանում են *–ունք՝ եպիսկոպոս - եպիսկոպոսունք, պառաւ - պառաւունք*:

**Ծանոթություն 9:** Որոշ բառեր միայն հոգնակիի ձև ունեն, ուստի կոչվում են անեզական բառեր՝ *աչք, խօսք, խելք, զարմանք, Հայք*:

**Ծանոթություն 10**: Հոգնակիի իմաստ են արտահայտում նաև մի շարք հավաքական - հոգնակերտ մասնիկներ.

ա) *-ական՝ զուսանական, զաւրական,*

բ) *-ան՝ իշան* (այլև՝ *իշանք, իշեան), ձիան,*

գ) *-անի՝ աւազանի, ազատանի, աղքատանի,*

դ) *-եան՝ զրեան* (այլև՝ *զրեանք*), *խոզեան, մորթեան,*

ե) *-եար՝ բանեար, վանեար,*

զ) *-նեար՝ բարձկնեար, նաւկնեար,*

է) *-որայ, որեայ՝ արտորայ, արտորեայ, վանորայ, վանորեայ,*

ը) *-տի, -ոտի՝ մանկտի, ծակոտի, ոսկրոտի, փորոտի:*

Եզակի սեռականը կազմվում է ուղղականից՝ համապատասխան հոլովիչի ավելացումով՝ *տիտանայ, գագաթան, աստեղ, այծի, աքռոյ, գանձու, աղքատի, մատին, այգւոյ:*

Հոգնակի սեռականը կազմվում է եզակի սեռականից՝ *ց*-ով՝ *տիտանաց, գագաթանց, աստեղց* (այլև՝ *աստեղաց), այծից, աքռոց, գանձուց, աղքատաց, մատանց, այգեաց*:

Եզակի տրականը կազմվում է եզակի սեռականի նման, սակայն այն տարբերությամբ, որ նշվեց վերը *-ում* հոլովակերտ ստանալու կապակցությամբ, այլև նրանով, որ որոշ բառեր ստանում են նաև լրացուցիչ *-ջ* հոլովակերտ՝ սեռ. - տր. *տեղւոյ,* այլև՝ *տեղւոջ, այգւոյ,* այլև՝ *այգւոջ*:

Հոգնակի տրականը միանգամայն նման է հոգնակի սեռականին:

Եզակի հայցականը կազմվում է եզակի ուղղականից՝ *զ*-ով, որ դրվում է բառասկզբում՝ *զտիտան, զգագաթն, զաստղ, զայծ, զաքռ, զգանձ, զաղքատ, զմատն, զայգի:*

Հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ *ք* - ն *ս*-ի փոխարինումով, այլև բառասկզբում *զ*-ի հավելումով՝ *զտիտանս, զգագաթունս, զաստեղս, զայծս, զաքռս, զգանձս, զաղքատս, զմատունս, զայգիս:*

Եզակի բացառականը կազմվում է եզակի տրականից, ընդ որում ձայնավորով սկսվող բառերի սկզբում դրվում է *յ* (կարդացվում է *h*), իսկ բաղաձայնով սկսվողներինը՝ *ի,* այնուհետեւ այդ բառերը վերջում ստանում են *է* հոլովակերտ, բացառությամբ *ա* և *ո* հոլովիչ ունեցողների՝ *ի տիտանայ, ի գագաթանէ, յաստեղէ, յայծէ, յաքռոյ, ի գանձէ, յաղքատէ, ի մատնէ,* այլև *ի մատանէ, յայգւոյ*:

Հոգնակի բացառականը կազմվում է հոգնակի տրականից՝ սկզբից ստանալով *ի* կամ *յ* նախդիրը՝ *ի տիտանաց, ի գագաթանց,*

*յաստեղց,* այլև՝ *յաստեղաց, յայծից, յաքորոց, ի գանձուց, յաղքա-տաց, ի մատանց, յայգեաց*:

Եզակի գործիականը կազմվում է եզակի սեռականից, ըստ որում սեռականում *ա* և *ո* հոլովիչներից հետո եղած *յ*-ն ընկնում է, դրվում են *ւ, վ, բ* հոլովակերտները, այն է՝ *ւ*- ն *ա* հոլովիչից, *վ* - ն *ո* հոլովիչից, *բ* -ն բաղաձայնից հետո, իսկ *ու* հոլովիչից հետո որևէ հոլովակերտ չի դրվում՝ *տիտանաւ, գազաքամբ, աստեղբ, այծիւ, աքորով, գանձու, աղքատաւ, մատամբ, այգեաւ*: Խառն հոլովման պատկանող բառերի հոլովումը եզակի գործիականում փոխվում է. հմմտ. *աղքատի - աղքատաւ, մատին - մատամբ, այգւոյ - այգեաւ*:

Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականից՝ *ք*-ով. *տիտանաւք, գազաքամբք, աստեղբք, այծիւք, աքորովք, գանձուք, աղքատաւք, մատամբք, այգեաւք*:

Գրաբարում, ճիշտ է, առանձին ներգոյական հոլով չկա, սակայն նրա իմաստը, բնականաբար, գոյություն ունի: Ուստի ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է եզակիում եզակի տրականի և *ի* նախդրի, հոգնակիում հոգնակի հայցականի և *ի* նախդրի միջոցով, իսկ եթե բառը եզակի տրականում վերջանում է *ա, ո* հոլովիչներով, հոլովումն էլ վերջադրական է, ապա եզակի ներգոյականն արտահայտվում է եզակի հայցականով, որպեսզի ձևով չշփոթվի բացառականի հետ, եզակի՝ *ի տիտան, ի գազաքան, յաստեղ, յայծի, յաքոր, ի գանձու, յաղքատի, ի մատին, յայգի,* հոգնակի ՝ *ի տիտանս, ի գազաքունս, յաստեղս, յայծս, յաքորս, ի գանձս, յաղքատս, ի մատունս, յայգիս:*

**Ծանոթություն 11:** Այն բառերը, որոնք եզակի տրականում *ո*-ից բացի ստանում են

-*ջ, -ում* հոլովակերտները, դրանց ներգոյականը կազմվում է ընդհանուր կանոնով (*ի տեղւոջ, ի կնոջ, ի հնում, յառաջնում, յայգւոյջ*):

**Ծանոթություն 12:** *Ո* հոլովիչով որոշ բառեր եզակիում բառի վերջում ստանում են *ի* մասնիկ (*ի մարմնի, ի քոքի, յերազի* [**ի երազի*]):

**§ 51.** Հոլովների նման կազմությունն ունի համակարգային բնույթ և վերաբերում է գրաբարի գոյականների և իբրև գոյական հոլովվող բառերի մեծ մասին: Դրանից բացի կան մի խումբ բառեր, որոնք այս կամ այն չափով շեղվում են հոլովների կազմության ընդհանուր կանոններից: Այդ պատճառով գրաբարում առանձնացվում է հոլովման երկու եղանակ՝ կանոնավոր և անկանոն (զարտուղի):

## բ) Կանոնավոր հոլովում

**§ 52.** Որքան էլ գրաբարում հոլովիչների զուգակցմամբ բառերի թեքումը կրում է պարզ կամ խառն բնույթ, այդուհանդերձ այն սկիզբ է առնում եզակի սեռականից և կանոնավոր ձևով հասնում մինչև հոգնակի գործիական: Սա գրաբարի անունների հոլովման հիմնական, ամենատարածված, օրինաչափական սկզբունքն է, նրա համակարգի բուն էությունը: Դրանից բացի, գրաբարում կան նաև այնպիսի բառեր, որոնց հոլովումը շեղվում է այդ համակարգի օրինաչափություններից, այսինքն՝ ներկայացնում է այլ, պատմականորեն ավելի վաղ համակարգից փոխանցված, «ինքնատիպ» ձևեր: Դրանք գրաբարում բուն, կանոնավոր համակարգի համեմատությամբ կազմում են «անկանոնություն» (տե՛ս §§ 75-77):

Կանոնավոր հոլովման ենթարկվում են բոլոր այն անունները, որոնք թեքվում են համապատասխան հոլովիչների և հոլովակերտների օրինաչափական գործադրման հիմունքներով: Դրանք են վերջադրական և ներդրական հոլովակազմությամբ պարզ և խառն *ա, ե, ի, ո, ու, ի-ա, ո-ա* հոլովատիպերի բոլոր հոլովումները:

### 1) Վերջաղրական հոլովում

### *ա) Պարզ հոլովում*

§ 53. Գրաբարում վերջաղրական պարզ հոլովման պատկանում են *ա, ի, ո, ու* հոլովումները: Դրանք, հոլովման ընդհանուր սկզբունքներից բացի, երևան են բերում զանազան տարբերություններ: Տարբեր են նաև առանձին հոլովումներում խմբավորվող բառերի բնույթն ու իմաստային կապը:

### *Ա հոլովում*

§ 54. Այս հոլովման պատկանող միայն *տիտան* բառն է, որ հասարակ անուն է: Մնացածը հատուկ անուններ են՝ անձնանուններ կամ տեղանուններ: Սովորական հատուկ անունները հոլովվում են միայն եզակի թվով, իսկ անեզական հատուկ անունները՝ միայն հոգնակի թվով: Թեք ձևերում հանդես է գալիս *ա* հոլովիչը, որին հաջորդում է չարտասանվող *յ*-ն: Եզակի բացառականը հոլովակերտ չի ստանում, իսկ գործիականում ավելանում է *ւ*:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | տիտան | տիտանք |
| սեռ. | տիտանայ | տիտանաց |
| տր. | տիտանայ | տիտանաց |
| հայց. | (զ)տիտան | (զ)տիտանս |
| բաց. | ի տիտանայ | ի տիտանաց |
| գործ. | տիտանաւ | տիտանաւք (օք) |

§ 55. *Ա* հոլովման պատկանում են՝

ա) Մեծ թվով հատուկ անուններ՝ անհոգնական և անեզական. *Աղամ, Անահիտ (Անահտայ), Արամ, Արշակ, Բէլ, Երասխ, Երուանդ, Հայկ, Հռովմ, Մեսրոպ, Սահակ, Վարդան, Տրդատ, Տիգրան, Ալանք, Գուգարք, Ծոփք, Տաշիրք* և այլն:

բ) Հունական *-աս, -էաս, -էոս, -էս, -իոս, -ոս* մասնիկներով վերջացող հատուկ անունները, որոնց *-աս, -ոս, -ս* քաղաղրիչները ընկնում են, իսկ *է, ի* ձայնավորները *ա*-ից առաջ վերածվում են *ե*-ի. *Անդրէաս > Անդրեայ, Տիմոթէոս > Տիմոթեայ, Ղուկաս > Ղուկայ, Տիբերիոս > Տիբերեայ, Արտեմիս > Արտեմեայ, Հոմերոս > Հոմերայ* և այլն:

**Ծանոթություն 13:** *Էս*-ով որոշ հատուկ անուններ թեք ձևերում կորցնում են այդ *էս*-ը. *Վրթանէս > Վրթանայ, Հիպողիտէս > Հիպողիտայ*:

**Ծանոթություն 14:** *Ոս*-ով որոշ հատուկ անուններ համաբանությամբ ստանում են *-եայ. Փաւստոս > Փաւստեայ, Կիպրոս > Կիպրեայ* և այլն:

գ) *Է*-ով, *ի*-ով և *ուհի*- ով մի քանի հատուկ անուններ, որոնց թեք ձևերում *ա*-ից առաջ *է*-ն և *ի*-ն դառնում են *ե. Մանէ > Մանեայ, Եսայի > Եսայեայ, Զարուհի > Զարուհեայ:*

դ) *Ա*-ով և *իա*-ով հատուկ անունները, որոնց թեք ձևերում պարզապես ավելանում է *յ. Եղիա > Եղիայ, Կեսարիա > Կեսարիայ, Մակեդոնիա > Մակեդոնիայ:*

**Ընթերցանություն 25:** «Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այսինքն՝ որ անուն Անյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի Արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապհոյ և թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրևձի գումարեալ՝ խաղացոյց ընդ իւրեան, և զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ իւրեան ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ[2], ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի

պատուի, և անուն Դրաստամատն: Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորին Պարսից, չարաչար տարածէին[3] զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին[4]: Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նոր թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ իր ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ[5], և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն[6]: Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունւոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին, յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց» *(Բուզ.,* էջ 314-316):

1. *Խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս* - պարսիկները դադարեցրին պատերազմները հայերի հետ:
2. *Ոստիկան հաւատարիմ լեալ* - հավատարիմ ոստիկան էր:
3. *Չարաչար տարածէին* - չարաչար՝ հանիրավի տարածեցին:
4. *Հալածականս առնէին* - հալածեցին:
5. *Լեալ էին ընդ նովաւ* - նրա տրամադրության տակ էին, նրա ձեռքին էին:
6. *Բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն* - նրա տեղը բոլոր նախարարներից վերևն էր:

**Ընթերցանություն 26:** «Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ[1], թէ ի հաստատել[2] Տիտանեանն Բելայ զթագաւորութիւնն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ումն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ[3]: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա՛ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեա՛ց ի հանդար-

տութիւն, ո՛ր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան»: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բելայ՝ խստութեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելովն:

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեան Բէլ ամբոխիւ հետեւակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա՛, ասէ, ո՛վ մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւեժիւք քաջօք և երկնաղիզօք հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ: Արդ աճապարե՛ա խորհել զոր ինչ գործելոց ես»:

Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց: Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլսն ևս որ ընդ իւրով ձեռամբ, հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով յինքեանս ձկունս[4]: Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ, դիպել ջանասցուք տեղւոյն, ուր անցեալ կայցէ[5] ի մէջ խռան քաջացն[6] Բէլ: Զի կա՛մ մեռցուք, և աղխ մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կա՛մ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք» (*Խոր.,* էջ 40-42):

1. *Յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ* - խոսքը շարունակելով (Մար Աբասը) ասում է:

2. *Ի հաստատելն* - հաստատելու ժամանակ:

3. *Կեալ խաղաղութեամբ* - խաղաղությամբ ապրել:

4. *Մանունս ունելով յինքեանս ձկունս* - իր մեջն ունենալով մանր ձկներ:

5. *Ուր անցեալ կայցէ* - ուր անցած կանգնած լինի:

6. *Կայցէ ի մէջ խռան քաջաց* - կանգնած լինի խռնված քաջերի մեջ:

**Վարժություն 38:** *Ա* պարզ հոլովմամբ հոլովել հետևյալ բառերը. *Արամ, Հայկ, Սահակ, Տրդատ, Գուգարք* և *Տաշիրք*ը:

**Վարժություն 39:** Թարգմանել գրաբարից ժամանակակից հայերեն հետևյալ հոլոված ձևերը. *Մեսրոպայ, ի Մեսրոպայ, Մեսրոպաւ, ի Տիգրանայ, զՏիգրան, ի Տիմոթեայ, ի Ղուկայ, զՂուկաս, Փաւստեաւ, Կիպրեաւ, զՁարուհի, Եսայեաւ:*

**Վարժություն 40:** Թարգմանել ժամանակակից հայերենից գրաբար. *Վախթանգից, Վախթանգը, Ալանների, Ալաններից, Հոմերոսով, Քուշաններից, Բելին, Բելով, Երվանդը, Երվանդից, Անահիտի, Անահիտը, Ասիայի, Ասիայից, Կեսարիային, Անդրեասից:*

**Վարժություն 41:** Կարդալ «Ընթերցանություն 25»-ը և առանձնացնել *ա* հոլովման հատուկ անունները, նշել, թե տվյալ ձևը որ հոլովով է դրված:

**Վարժություն 42:** Կարդալ «Ընթերցանություն 26»-ը և առանձնացնել *ա* հոլովմամբ գոյականները, որոշել դրանց հոլովը:

**Առաջադրանք 37:** Որոշել հետևյալ թեք ձևերի հոլովը. *տիտանաւ, զտիտան, ի տիտանայ, ի Տիգրանայ, ի Մակեդոնիայ, Վահեայ, ի Գայիանեայ, Հռիփսիմեաւ:*

**Առաջադրանք 38:** Կազմել հետևալ գոյականների հոգնակի սեռականը և հոգնակի բացառականը. *Տաշիրք, Ծոփք, Վիրք, Գուգարք, Միջագետք, Քուշանք, Գամիրք:*

**Առաջադրանք 39:** Վերհիշել հունական մասնիկներով հատուկ անուններ և կազմել դրանց եզակի սեռական-տրական, բացառական և գործիական հոլովները:

**Առաջադրանք 40:** Լրացնել հետևալ հատուկ անունների եզակի հայցական և գործիական հոլովները, նշել դրանց հոլովիչը և հոլովակերտը. *Արամ, Փառանձեմ, Գայիանէ, Հռիփսիմէ, Տիգրանուհի, Աքիլլէս, Եղեսիա, Զուիթա, Նիկիա, Զմիւռնիա:*

**Առաջադրանք 41:** Արտագրել հետևյալ նախադասություններ-ը և գտնել նրանցում *ա* հոլովման գոյականները, որոշել դրանց հոլովը. Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետևող եղեալ հարցն առաքինութեան (*Խոր.,* էջ

322)։ Բայց Շապուհ թագաւորեցոյց փոխանակ Տիրանայ զորդի նորա զԱրշակ (*ն. տ.,* էջ 332)։ Իսկ ոմանք ասեն ի Ղաւռդիկեայ Փռիւգացւոց շինեալ տապանին, որ յերից մասանց երկրի՝ ասխական կոչի կողմ (*Թովմ. Արծ.,* էջ 30)։ Նոյն ժամայն առեալ Սմբատայ զԱրտաշէս գայ անցանէ ի վայր ի լեառնէն (ն. տ.,էջ 84)։ Եւ իրականացն յաղագս Կիլովնին առ Հերոդոտայ և Թուկիդիդեայ, և յաղագս Ալկմիովնի Ամփիւրեայ յերրորդում Թուկիդիդեայ, և յաղագս Կլովբայն և Բիտովնեայ յառաջնմէն Հերոդոտայ (*Թէովն,* էջ 18-20)։

**Հարցեր 13։** ա) Որո՞նք են հոլովման և հոլովի տարբերությունները։

բ) Ինչպիսի՞ն է գրաբարում բառի հոլովման հիմունքը, քանի՞ հոլով կա գրաբարում։

գ) Որո՞նք են գրաբարի հոլովիչները, հոլովակերտները և հոլովատիպերը։

դ) Ի՞նչ են նշանակում վերջադրական և ներդրական, կանոնավոր և անկանոն հոլովումներ, ինչպե՞ս են կազմվում հոլովները։

ե) Ինչպիսի՞ն է *ա* հոլովման կազմությունը։

զ) Ինչպիսի՞ գոյականներ են հոլովվում *ա* հոլովմամբ։

## Ի հոլովում

**§ 56**. Գրաբարում *ի* պարզ հոլովումը միայն վերջադրական է։ *Ի*-ն հանդես է գալիս բոլոր թեք ձևերում, սակայն եզակի բացառականում *է*-ից առաջ ընկնում է։ Եզակի գործիականում ստանում է *ւ* հոլովակերտը։

Օրինակ՝

| | Եզակի թիվ. | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այծ | այծք |
| սեռ. | այծի | այծից |
| տր. | այծի | այծից |

| | | |
|---|---|---|
| հայց. | (զ)այծ | (զ)այծս |
| բաց. | յայծէ | յայծից |
| գործ. | այծիւ | այծիւք |

**§ 57.** *Ի* հոլովման պատկանում են՝

ա) Բազմաթիվ բառեր, որոնք հիմնականում հոլովվում են այս հոլովմամբ. *ագոխ* («խակ խաղող»), *ախտ, այտ, ապուռ* («կողոպուտ, ավար. կարթ». սեռական-տրական՝ *ապռի), ատաղձ, արօտ, արոյր, բաժ* («արքունի տուրք, բաժին»), *բախտ, բան, բանտ, բառ, բարձ, բոյլ* («խումբ»), *գազ, գայռ* («ցեխ»), *գան* («ծեծ»), *գոյժ, դատ, դար* («բարձունք»), *երթ, երկիւղ., զարմ, իժ, խիղճ, խրամատ, խորխ, խորշ, խօթ* («հիվանդ, ծույլ»), *ծայր, ծանօթ, ծնօտ, ծերպ, կայթ* (1. «կողով» 2, «ցնծագին պար»), *կայծ, կարթ, կարօտ, կերպ, հանդէս* (սեռական-տրական՝ *հանդիսի*), *հարց, հաց, հօտ, ձայն, ճառ, ճառագայթ, նետ, ոստայն, որովայն, ուխտ, պատուհաս, ջահ, սաղաւարտ, սեռ, սիրտ, սրահ, վախ, վտանգ, տող, տօն, փայլ, փայտ, փաստ, քայլ, քօշ* («նոխազ, վայրի այծ»), *օթ* («օթևան»), *օձ* և այլն:

բ) Բառավերջում *-այ, -եայ, -ոյ, -ածոյ* հնչյունական կապակցություններ ունեցող բառերը. («նիզակ, տեգ», սեռական-տրական՝ *աշտէի*), *պաշտօնեայ, գոյ, երեկոյ, կռածոյ, ձուլածոյ* և այլն:

գ) Բառավերջում *-աստ, -եստ, -եան, -է, -ոյթ* մասնիկներն ունեցող բառերը. *առագաստ, զգաստ, իմաստ, նպաստ, զովեստ, ուտեստ, պահեստ, արուեստ, ատեան* (սեռական-տրական՝ *ատենի*), *մատեան, յոբելեան, վայրկեան, ափսէ, բազէ, Վաչէ, բոպէ, երեւոյթ* (սեռական-տրական՝ *երեւութի*), *ծածկոյթ, սովորոյթ* և այլն:

դ) Որոշակի թվով անեզական բառեր. *անէծք* (սեռական - տրական՝ *անիծից*), *աղօթք, առանցք, ասք, արեւելք, արեւմուտք, գահոյք, գնացք, խօսք, ինչք, կուրծք, հմայք, ցնորք, Աղուանք, Կասպք, Պարսք* և այլն:

ե) Որոշակի թվով հատուկ անուններ. *Արտաշէս* (սեռական-տրական՝ *Արտաշիսի), Մովսէս* (սեռական-տրական՝ *Մովսեսի,*

այլև՝ *Մովսիսի*), *Եգիպտոս*, *Ներսէս* (*Ներսեսի*, այլև՝ *Ներսիսի*), *Որմիզդ* (սեռական-տրական՝ *Որմզդի*), *Գրիգոր*, *Սարգիս*, *Վաչէ* (սեռական-տրական՝ *Վաչէի*) և այլն:

**Ընթերցանություն 27.** «Յետ բառնալոյ[1] թագաւորութեանն Հայոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. և գլխաւորք Հայոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշէն բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհիս աշխարհիս. և պարսկական բռնութիւնն զօրացեալ աճէր, և հարկապահանջք գունդքն ել և ելս առնէին սաստիկ խոշտանգանօք:

Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունւոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց, և ելեալ գնաց զհետ անհանճար[2] իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից, և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց, և խնդրեալ յարքայէ զիշխանութիւն Հայոց: Եւ նորա ըստ ցանկութեան սնոտի փառամոլութեանն կատարեալ զխնդիրքն. և դարձեալ դառնայ ի Հայս[3]. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ: Եւ ընդ մտանելն նոցա յաշխարհս՝ վրդովեցին զուխտ քրիստոնէութեան, և փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն[4] աւերել քանդել զեկեղեցիս, զտունս աղօթից կործանել. զսեղանս խորհրդականս փրկագործութեանն յատակել[5], հիմն ի վերայ տապալել զաւազանն մաքրափայլ լուսաւորութեանն Հոգւոյն Սրբոյ, դառնապէս չարալլուկ չարչարել զքահանայս զպաշտօնեայս նորոց Կտակարանաց, զարս և զկանայս մատնել ի բանդս ի խոշտանգանս ծանրաբեռն հարկապահանջութեամբ, զի այնու դիւրաւ կարասցեն հերքել մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան: Եւ բազում այն էր, որ մարտիրոսական ճգնութեամբ վկայեցին, քան որք դրդուեցան, առ ոչինչ համարելով զյափշտակութիւն ընչից և ստացուածոց, և զմահու դառնագոյնս: Եւ հասեալ Շաւասպայ Արծրունւոյ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարզպանաւն՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, և զկրակապաշ-

տութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. և կայր աշխարհս ի մեծ վտանգաւոր աղէտս» (*Թովմ. Արծ.,* էջ 124-126):

1. *Յետ բառնալոյ* - վերացումից՝ վերանալուց հետո:
2. *Անհանճար* - անխելամտորեն:
3. *Դարձեալ դառնայ* - կրկին եկավ:
4. *Փոյթ ընդ փոյթ* - հապճեպորեն, փութաջանորեն:
5. *Ջանեղանս ... յատակել* - գետնին հավասարեցնել սուրբ սեղանները:

**Ընթերցանություն 28**. «Զի թէպէտ և էր ինքն մեծի տրտմութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին[1]. զի հնազանդեցան և ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն, և ընդ նմին միամտեցան[2]. զի թէպէտ և էր Խոսրովու և դեսպան արարեալ[3], զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն[4] և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն, անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, և յայնմ մարզէ և յիւրեանց ի բուն աշխարհէն և ի քաջ ազգաց և ի մարտիկ զօրացն, զի ի թիկունս հասցեն. սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթեաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեան:

Սակայն առեալ Խոսրովու[5] զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի: Իսկ իբրև ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ բազմութեան գնդի, զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ ել և նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի: Բայց սակայն ոչ կարաց ունել զդէմ նորա[6], փախստեայ լինէր առաջի նոցա. զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և դաշտացն և ճանապարհացն ցիր դիաթաւալ կացուցանէին և չարախտավատ[7] վատնէին և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին: Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանսն Հայոց յԱյրարատ գաւառ, ի

Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ» (*Ագաթ.*, էջ 26):

1. *Վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին* - բուն, եղբայրական ազգատոհմի համար:

2. *Ընդ նմին միամտեցան* - նույնին հնազանդվեցին, մեկ մտքի եկան:

3. *Դեսպան արարեալ* - դեսպան ուղարկեց:

4. *Զի ... ի թիկունս եկեսցեն* - որպեսզի օգնության գան:

5. *Խոսրովու առեալ* - Խոսրովը վերցրեց:

6. *Ունել զղէմ* - դեմն առնել, դեմը պահել՝ բռնել:

7. *Չարախտավատ* - չար, դաժան, դժնի, այլև՝ չարաչար կերպով:

**Վարժություն 43:** *Ի* պարզ հոլովմամբ հոլովել հետևյալ գոյականները. *ախտ, այտ, ատաղձ, արօտ, արոյր, բախտ, բաժ, բան, բանտ, դատ, բառ, բարձ, գոյժ, խորշ, խօթ, ոստայն, սրահ:*

**Վարժություն 44:** Կազմել հետևյալ գոյականների հոգնակի տրական և գործիական հոլովները. *սաղաւարտ, խիղճ, կերպ, ճառագայթ, քայլ, օթ, օձ:*

**Վարժություն 45:** Կազմել հետևյալ անեզական գոյականների սեռական, տրական և բացառական հոլովները. *անէծք, աղօթք, առանցք, արեւելք, արեւմուտք, գնացք, խօսք, կուրծք, հիմայք:*

**Վարժություն 46:** Հետևյալ հոլովված ձևերը թարգմանել գրաբարից ժամանակակից հայերեն. *զխրամատս, ծնօտի, կարօտիւ, կերպիւ, զսիրտ, ի սրտից, սրտիւք, ի բանէ, բանիւ, որովայնիւ, փաստից, զծնօտս, զհարցս, հարցից, ի վախէ, ի սեռէ, ի տօնէ, ի տօնից:*

**Վարժություն 47:** Թարգմանել ժամանակակից հայերենից գրաբար. *սեռերին, սեռերից, դատից, ուխտը, հարցերը, հացով, ծանոթով, բույլերը, իժերից, ծայրով, երկյուղով, կարթեր, ծնոտներ, գույժը, իժը, սրահից, սաղավարտին, պատուհասներ, ջահեր:*

**Վարժություն 48:** Կարդալ «Ընթերցանություն 27»-ը և առանձնացնել *ի* հոլովման գոյականները, նշել դրանց հոլովը:

**Վարժություն 49:** Կարդալ «Ընթերցանություն 28»-ը և առանձնացնել *ի* հոլովման գոյականները, նշել դրանց եզակի հոլովաձևերը:

**Առաջադրանք 42:** Որոշել հետևյալ բառերի հոլովը. *ի սրտէ, ի դատէ, ախտի, բանի, կերպից, ճառագայթի, ի քայլէ, ի կարօտէ, ձայնից, նետիւք, ծերպիւք, գազի, զդատս, զերկիւղս, ի բոպէէ, ի երեւութէ, Սարգսի, յԵգիպտոսէ:*

**Առաջադրանք 43:** Վերհիշել *ի* հոլովման անեզական գոյականներ և նշել նրանց հոգնակի գործիական հոլովի ձևերը:

**Առաջադրանք 44:** Կազմել հետևյալ գոյականների հոգնակի բացառական և գործիական հոլովները. *Որմիզդ, Գրիգոր, Վաչէ, Մովսէս, Կասպք, Աղուանք, խօսք. արեւմուտք, վտանգ, երթ, զան, զարմ, տող, տօն, փայլ:*

**Առաջադրանք 45:** Վերհիշել *ի* հոլովման *-այ, -եայ, -ոյ* հնչյունական կապակցություններով վերջացող չորս բառ և հոլովել եզակի թվով:

**Առաջադրանք 46:** Բանավոր հոլովել *-աստ, -եստ, -եան* մասնիկներով վերջացող մեկական գոյական՝ եզակի և հոգնակի թվով:

**Առաջադրանք 47:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *յետ բառնալոյ, կալեալ տիրել, ըստ տեղիս տեղիս և ըստ աշխարհս աշխարհս, ելանել գնալ, փոյթ ընդ փոյթ, հիմն ի վերայ տապալել, ընդ նմին միամտանալ, գալ ի թիկունս, հասանել ի թիկունս, պատրաստութիւն պատերազմի, մեծաւ ուրախութեամբ, բարի անուամբ:*

**Հարցեր 14:** ա) Ինչպիսի՞ն է *ի* հոլովման կազմությունը:

բ) Ի՞նչ գոյականներ կարելի է թվարկել, որոնք թեքվում են *ի* հոլովմամբ:

գ) Ինչպիսի՞ հնչյունական կապակցություններով է վերջանում *ի* հոլովման բառերի մի մասը:

դ) *Ի* հոլովման ի՞նչ գոյականներ կան, որոնք վերջանում են *-աստ, -եստ, -եան, -ոյք* մասնիկներով:

ե) Ի՞նչ անեզական գոյականներ են հոլովվում *ի* հոլովմամբ:

զ) Ի՞նչ հատուկ անուններ են հոլովվում *ի* հոլովմամբ:

**Ո հոլովում**

**§ 58.** *Ո* պարզ հոլովումը միայն վերջադրական է: *Ո*-ն հանդես է գալիս բոլոր թեք ձևերում: Եզակի սեռական, տրական և գործիական հոլովներում *ո*-ից հետո գրվում է *յ*, որը չի կարդացվում: Եզակի գործիականը ստանում է *վ* հոլովակերտը:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | աթոռ | աթոռք |
| սեռ. | աթոռոյ | աթոռոց |
| տր. | աթոռոյ | աթոռոց |
| հայց. | (զ)աթոռ | (զ)աթոռս |
| բաց. | յաթոռոյ | յաթոռոց |
| գործ. | աթոռով | աթոռովք |

**§ 59.** Ո հոլովման պատկանում են՝

ա) Որոշակի թվով բառեր. *ախոռ, ածուխ (ածխոյ), աղանդ, աղիս, ամպ, ամօթ, աղբ, ամիս, ամուլ (ամլոյ* «անպտուղ, ոչ բեղուն»), *անասուն, անուր, արծաթ, արմատ, արջառ, արտ, աւազ, բոյն (բունոյ), բոյս (բուսոյ) բոց, գետ, գետին, գոմ, գէշ* («պատառ, դիակ, լեշ, կտոր»), *գին, գինձ, գիր, գլուխ, գործ, գուբ (գբոյ) դուր, երազ, երգ, երէ, երկաթ, էշ (իշոյ) թել, թեւ, թիւ, թուղթ, թուք, թոք, թռչուն, ժողով, իլ* («իլիկ»), *իւղ, լոյս, լուր (լրոյ), խմոր, խոտ, խոր, ծառ, ծուխ, կաւ, կշիռ, կեղեւ, կիր, կողով, կոճ, հող, հողմ, հով, հոտ, հուր, ձետ* («ագի, պոչ»), *ձէթ, ձող, ճաշ, մարդ, մարմին, մէջ* («մեջք»), *մոխիր (մոխրոյ), մոմ, մորթ, մրուր (մրրոյ), յոյս (յուսոյ), ներկ, շուք, ողբ, ոճ, ոստ, որթ, որս, ուս, ունդ* («սերմ, հատիկ, սերունդ»), *պտուղ, ջուր, ջրհոր, սափոր, սեղան, սեխ, սէգ, սէր (սիրոյ), սոփինձ, սուգ, սողուն, սուր, տերեւ, տունկ, տօթ, ցօղ, փետուր, փոր, փուշ, քուն* և այլն:

բ) Որոշ անեզական բառեր. *դժոխք, կուռք, հունձք, պահք (պահոց), տիք (տից.* «տարիք, հասակ»), *Հայք, Վայք, Տայք, Հոռոմք (Հոռոմոց):*

գ) Որոշ անձնանուններ և տեղանուններ. *Շապուհ, Կարին, Սանատրուկ, Վռամշապուհ, Տարօն*:

դ) *-Ային, -ուած, -ուն, -ցի* և *-ին* վերջածանց ունեցող բառերը. *ամառնային (ամառնայնոյ), դաշտային, լեռնային, մարդկային, առեղծուած, զանգուած, հայեցուած, յօղուած (յօղուածոյ), շինուած, երբայեցի (երբայեցւոյ), քաղաքացի, Կողբացի, Խորենացի, Փարպեցի, աքենացի, Շիրակացի, արտաքին, ստորին, վերին, ներքին* և այլն:

ե) Անորոշ դերբայը, որ հոլովվում է միայն եզակի թվով, և չեզոք, կրավորական սեռի անցյալ դերբայը (տե՛ս § 135). *ասել, գնալ, ընթեռնուլ (ընթեռնլոյ), թողուլ (թողլոյ), ասացեալ (ասացելոյ), գնացեալ (գնացելոյ), թողեալ (թողլոյ), ընթերցեալ (ընթերցելոյ), փախուցեալ (փախուցելոյ), կամեցեալ (կամեցելոյ)* և այլն:

զ) *Ի* վերջնահնչյունն ունեցող միավանկ բառեր՝ *թի, դի, ձի,* այլև մեկ-երկու բազմավանկ բառեր՝ *ոգի, ոսկի, որդի, հոգի:*

**Ընթերցանություն 29:** «Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման, իբրեւ ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծաց անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ[1]. բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՛[2] զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց: Եւ թէ ջուր, թէ հուր, թէ երկիր, թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր՝ որ կազմեացն զնոսա: Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինիչ, զի մեզ ի պէտս են, և կարգչին իւրեանց ի փառս:

Զիա՞րդ պաշտիցմեք զարեգակն, որ մերթ կորչի իբրեւ ծառայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ[3], և մերթ երթայ ղօղէ իբրեւ զարհուրեալ, և տայ տեղի խաւարին լնուլ զմիջոց ի մեծի տա-

նս[4] և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ արարեալ եթէ. «Զեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս և զամենայն տիւ լուսաւոր պահէ, և զցայգ ղօղեցուցանէ[5], և երբէք երբէք խաւարեցուցանէ» և իբրեւ խօսուն բերանով անշշունջն բողոքէ՝ եթէ «Զեմ արժանի պաշտօն առնելոյ[6], այլ պաշտօն հարկանելոյ»[7]: Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, գրեթէ և մեռանի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ: Կամ զօդ՝ որ մերթ գոչիցէ վարազացեալ՝ հրամանաւ, մերթ սարսէ ի գոչելոյն՝ սաստիւ: Եւ կամ զհուր՝ որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես, և յորժամ կամիցիս խափուցանիցես: Կամ զերկիր՝ որ հանապազ բրեմք, և ցանկ կոխեմք և զաղբ զմեր և զանասնոց մերոց ի նա հեղումք: Կամ զջուրս՝ զոր հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փորի մերում դարձուցանեմք, և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք» (*Եզնիկ*, էջ 11-12):

1. *Առ ի ... փարատելոյ* - վերացնելու համար:
2. *Եթէ իցէ և եթէ չիցէ* - գոյություն ունի, թե ոչ:
3. *Առ ի ... հասանելոյ* - հասնելու համար:
4. *Լնուլ զմիջոց ի մեծի տան* - մեծ տան (տիեզերքի) մեջը լցնել:
5. *Զցայգն ղօղեցուցանէ* - գիշերը թաքցնում է:
6. *Պաշտօն առնուլ* - պաշտվել:
7. *Պաշտօն հարկանել* - պաշտել:

**Ընթերցանություն 30:** «Եւ ինձ այսպէս թուի, թէ աւելորդ իմաստութիւնն նոցա զայսպիսի յալերուած գանձեաց նոցա, զի անհնարին և դառն դատաստանս շահեցին անձանց իւրեանց: Զի այսպէս մեծաւ փութով ուշ եդեալ երթային զկնի սնոտեացն, և միշտ հանապազ ի սնոտի գիտս ծախէին զգիտութիւնն, և ինքնակամ կամաւք մուծանէին խաւար յիմաստութիւնն, զոր առին, զի մի երբէք ծանիցեն զճշմարիտ իմաստութիւնն: Եւ ոմանք ըստ կարծեաց մտաց իւրեանց համարին, թէ ի վերայ չափոցն աստեղաց

կացին, և անքնին գնացից նոցա եղել հասու գիտութեամբն: Եւ զհիւսիսային աստեղս, որ միշտ հանապազ երևին, արկին ընդ թուով[1] և համարով, և որ ունին կայանս ի հարաւակոյս կողմանն, եղեն նոցա բովանդակիչք: Եւ, որպէս ասեն, յայտնի է ոմանց, որ ի հարաւակոյս կողմանն ունին զբնակութիւնն, բայց մեզ չեն, ասեն, յայտնի: Եւ ընդարձակութեանն հիւսիսային կողմանն եղեն ծանուցիչք և դրոշմիչք, և նկարոց աստեղաց եղեն մեկնիչք, և ի վերայ շրջանաց աստեղաց և ի վերայ չափոյ տեղեաց նոցա, որպէս ասենն, կացին, և զբազում ժամս նոցա, եւ զմերձաւորութիւնն և զպատահելն միմեանց գրով դրոշմեցին, և զխոտորումն և զկանխելն աստեղաց, քան զմիմեանս, փոյթ յանձին կալան ասել[2]: Եւ միտ եղեալ պահէին զհանդիպութիւնս նոցա և զկերպարանս նոցա բազում հոգաբարձութեամբ, և թէ քանի ժամանակս առին շրջանակք աստեղաց, որ կոչին մոլորեցուցիչք» *(Բարս.,* էջ 11-12):

1. *Արկին ընդ թուով* - հաշվեցին, թվարկեցին:
2. *Յանձին կալան ասել* - հանձն առան ասել:

**Վարժություն 50:** *Ո* պարզ հոլովմամբ հոլովել հետևյալ բառերը. *ածուխ, աղիւ, ամպ, ամիս, անուր, արծաթ, արջառ, աւազ, բոյն, բոց, գիր, գլուխ, իւղ, ժողով:*

**Վարժություն 51:** Նշել հետևյալ գոյականների եզակի սեռական, տրական և բացառական հոլովների ձևերը. *երկաթ, թել, լոյս, լուր, ձող, ճաշ, մոմ, մորթ. յոյս, շուք, ողբ, սուգ, սողուն, փուշ:*

**Վարժություն 52:** Հոլովել հետևյալ անեզական գոյականները. *դժոխք, հունձք, տիք, Վայք, Տայք:*

**Վարժություն 53:** Հոլովել *Շապուհ, Սանատրուկ, Վռամշապուհ* անձնանունները:

**Վարժություն 54:** Նշել հետևյալ բառերի եզակի սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների ձևերը. *անասուն, արմատ, արջառ, գետ, թիւ, կեղեւ, կողով, կոճ, հող, հողմ, խոր, տերեւ, տունկ, տօթ:*

**Վարժություն 55:** Թարգմանել ժամանակակից հայերենից գրաբար. *ժողովներ, կավից, կողովին, կոճը, հոտեր, հույը, փետուրներով, պտուղներից, ջրհորին, սափորները, տերևները, տունկերը, քունը, սողուններով:*

**Վարժություն 56:** Թարգմանել գրաբարից ժամանակակից հայերեն. *քաղաքացւոց, վերնոյ, առեղծուածովք, ընթեռնլոյ, զգնացեալս, ի Վայոց, զքաղաքացիս:*

**Առաջադրանք 48:** Վերհիշել *ո* հոլովման միավանկ *ի* վերջնահնչյուն ունեցող գոյականներ և հոլովել եզակի թվով:

**Առաջադրանք 49:** Հոլովել *-ցի* վերջածանցով երկու-երեք գոյական՝ եզակի և հոգնակի թվով:

**Առաջադրանք 50:** Կազմել հետևյալ գոյականների եզակի գործիական և հոգնակի բացառական հոլովները. *աղիս, բոյն, գէշ, գինձ, գուբ, դուր, երէ, իւղ, խմոր, կաւ, ծեռ, սէգ, սեղան, սուինձ:*

**Առաջադրանք 51:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *առ ի փարատել, առ ի յանդիմանութիւն, արժանի պաշտապան, խօսուն բերան, սկիզբն առնուլ, հանապազ բրել, հանապազ ըմպել, արկանել ընդ թուով:*

**Առաջադրանք 52:** Մտաբերել *ո* հոլովման միավանկ գոյականներ և հոլովել եզակի թվով:

**Առաջադրանք 53:** Մտաբերել *ո* հոլովման երկվանկ բառեր և հոլովել:

**Հարցեր 15:** ա) Ինչպիսի՞ն է *ո* հոլովման կազմությունը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են հանդես գալիս *ո* հոլովման դեպքում:

գ) Ի՞նչ վերջածանցներով և ի՞նչ վերջնահնչյուններով բառեր են պատկանում *ո* հոլովմանը:

դ) Ի՞նչ անեզական գոյականներ են հոլովվում *ո* հոլովմամբ:

ե) Ի՞նչ հատուկ անուններ են հոլովվում *ո* հոլովմամբ:

## Ու հոլովում

**§ 60**. Գրաբարում *ու* հոլովումը վերջադրական է: *Ու*-ն հանդես է գալիս գրեթե բոլոր թեք ձևերում. եզակի բացառական հոլովում *է*-ից առաջ *ու*-ն ընկնում է: Եզակի գործիականը որևէ հոլովակերտ չի ստանում` ø (զրո), որպիսով այն ձևով նմանվում է եզակի սեռականին, սակայն նրանից տարբերվում է իր հոլովական իմաստով, որ երևում է նախադասության մեջ:

Օրինակ`

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | գանձ | գանձք |
| սեռ. | գանձու | գանձուց |
| տր. | գանձու | գանձուց |
| հայց. | (զ)գանձ | (զ)գանձս |
| բաց. | ի գանձէ | ի գանձուց |
| գործ. | գանձու | գանձուք |

**Ծանոթություն 15:** Սակավաթիվ բառերում եզակի բացառականում *ու*-ն *է*-ից առաջ պահպանվում է. *այգ- յայգուէ, խրատ - ի խրատուէ, նախանձ - ի նախանձուէ, սպաս - ի սպասուէ* և այլն:

**§ 61**. *Ու* հոլովման պատկանում են`

ա) Որոշակի թվով բառեր, առաւօտ, *արդ* («ձև»), *արեւ, դաս, դար* («հարյուր տարի»), *զարդ, զէն (զինու), ժամ, ծակ, ծով, ճակատ, շաբաթ, ուրբաթ, պար, սակաւ, վրէժ (վրիժու), քէն (քինու)* և այլն:

բ) Որոշ թռչնանուններ և կենդանիների անուններ. *ագռաւ, աղուէս (աղուեսու), առեւծ, արջ, գրաստ, ինձ (ընձու), կաքաւ, կով, հաւ, որթ* («հորթ»), *ուլ, ուղտ (ուղտու,* այլև` *ըղտու), ցուլ* և այլն:

գ) Մի շարք հատուկ անուններ. *Աբգար, Աբրահամ, Խոսրով, Յոհան (Յոհաննու), Յովհաննէս (Յովհաննու), Յովսէփ (Յովսեփու), Յորդանան, Մարիամ (Մարիամու, այլև` Մարեմու), Սոկրատէս (Սոկրատու)* և այլն:

դ) Մեկ-երկու անեզական բառեր. *աղունք* (սեռական և տրական՝ *աղունց* (1. «համեղ, հաճելի», 2. «ժանտ, նենգավոր»), *բարք (բարուց), պարտք (պարտուց), վարք (վարուց):*

ե) *Ր* ձայնորդով վերջացող քիչ թվով բառեր՝ *սար* («բուրդ»), *թանձր, ծաղր, ծանր, կարծր, մանր, մեղր, փոքր, քաղցր,* որոնց թեք ձևերում *ր*-ն ընկնում է, հոգնակի թեք ձևերում հոլովակերտներից առաջ ի հայտ է գալիս *ն* մասնիկը:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | փոքր | փոքունք |
| սեռ. | փոքու | փոքունց |
| տր. | փոքու | փոքունց |
| հայց. | (զ)փոքր | (զ)փոքունս |
| բաց. | ի փոքուէ | ի փոքունց |
| գործ. | փոքու | փոքումբք |

**Ծանոթություն 16:** Հիշյալ բառերի որոշ մասը հոլովվում է այլևայլ հոլովներով՝ զուգահեռ կանոնականին, որն, անշուշտ, գրաբարի հետագա շրջանի բնագրերի տարբերություն է: Օրինակ, եզակի թիվ՝ ուղղական՝ *սար,* սեռական-տրական՝ *սու* (նաև *սարոյ, սարու),* գործիական՝ *սարով* (նաև *սաերք),* հոգնակի թիվ՝ սեռական-տրական՝ *սունց* (նաև *սարոց)* և այլն, եզակի թիվ՝ ուղղական՝ *թանձր,* սեռական-տրական *թանձու* (նաև *թանձրու, թանձրոյ),* հոգնակի թիվ՝ ուղղական՝ *թանձրունք* (նաև *թանձունք, թանձրոյք).* եզակի թիվ՝ ուղղական՝ *ծաղր,* սեռական-տրական *ծաղեր* (նաև *ծաղրու)* և այլն:

**Ընթերցանություն 31:** «Իսկ դաշտացն ամենայնութիւն զկամս աշխատասիրացն կորզելով յինքեանց իբրեւ բանիւ, և առլցեալ որ զինչ և է բարով՝ ևս առաւել փութանակի զդարձն առ ինքեանս հրաւիրեն միանգամայն: Որք ոչ միայն երևելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւն օգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ[1] աշխատողացն՝[2] զառ[3] ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, զանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհի ի

մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս, զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյսրն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէ-հուռս պաճուճելաս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ջրոց՝[4] համա-ծին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտկացն որոշու-թիւնս: Նաև զարմատս եղէգնասեր բուսոցն ոչ ընդունայն սնուցա-նէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասի-րացն շահս և շքեղութիւնս: Եւս և գետոցն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցանէ զշնորհս ընչից և յագուրդ որովայնից ծրացելոցն և անվեհեր ջանացողացն:

Սնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զառաւելու-թիւն հաւուցն յուրախութիւն և ի սքափումն որսատենչ ազատացն. չկրկջաձայն քաղցրաձայն առապարասէր վիմասոյզ սորամուտ[5] երամս կաքաւացն և սալամբացն, և կամ զեղէգնաբնակ թփամուտ մացառաղօղ[6] պարարտամարմին զանուշահամ ազգ աքարացն վայրենեաց. այլ և զջրասուզակ մամռախնդիր[7] խոզակեր մեծան-ձունք և յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սագն, և կամ այլ բազում և անհարմար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնո-ցն: Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երագազիւքն[8] և գահողովքն, ելեալ ի յորս գունդք նախարարացն որդւովք ազա-տացն, ուր ոմանք զհետ ցռուցն[9] և այծեմանցն արշաւելով՝ զխի-զախական զաղեղաձայնն նեթ բարբառիցին. և այլք զհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարձակ եղեալ՝ զգործ կորովաձիգ արան-ցն ցուցանեն. և կէսք սուսերօք իբրև զմենամարտիկս՝ զաստկան-դամ երամս վարազացն գլորեցուցեալ սպանանեն» (*Փարպ.,* էջ 10):

1. *Յորդորախոյզ* - տրամադրված, քաջալերված որոնող, խուզարկող:
2. *Աշխատող* - այստեղ՝ ձգտող, ջանացող:
3. *Զառ* - *զ* և *առ* նախդիրների միակցում:

4. *Մածումն ջրոց* - ջրերի պնդացում, մակարդում:
5. *Սորամուտ* - ծակամուտ, սործակ, ծերպ, խոռոչ:
6. *Մացառաղօղ* - մացառների մեջ պահվող, թաքնվող:
7. *Մամռախնդիր* - մամուռ փնտրող, սիրող (նրանում թաքնվելու համար):
8. *Երազազ* - ցանցաձեւ թակարդ կենդանիներ որսալու համար:
9. *Ցիռ* - վայրի էշ:

**Ընթերցանություն 32:** «Քանզի ի բառնալ[1] ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ նովին օրինօք մտանէին[2], սկիզբն արարեալ յամացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ: Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որոյ և աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ[3] երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկանդարան[4] դեղեալ նետիւք: Եւ սկսաւ եղջեւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալքս ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղաւէր կենօք:

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն և արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից զդառնութիւն թունից[5], կամ ո՞ւր բացատրեցից[6] զբազմութիւն նետիցն[7]. Եւ առ յոյժ յիմարութեան իբրև զզազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց, եհար մինչև ի քաղաքն Մծբին, և բա-

զում զաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ[8], և զամենայն եկե-ղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և աիաբեկ արար զամենայն զօրս աշխարհին (*Եղիշէ,* էջ 6-7):

1. *Ի բառնալ* - վերանալու ժամանակ:
2. *Մտանել ընդ օրինօք* - ընդունել օրենքը, ենթարկվել օրեն-քին:
3. *Կամակարութիւն* - հոժարություն, կամքի ազատություն, կամքի կարողություն:
4. *Պատկանդարան* - կապարճ:
5. *Դառնութիւն թունից* - դառը թույն:
6. *Բացատրեցից* - արձակեմ:
7. *Բազմութիւն նետիցն* - բազում, շատ նետերը:
8. *Աւերել ասպատակաւ* - ասպատակելով ավերել:

**Վարժություն 57:** Հոլովել *ու* հոլովման պատկանող հետևյալ բառերը. *առաւօտ, արդ, արեւ, դաս, դար, զարդ, զէն, ժամ:*

**Վարժություն 58:** Հետևյալ հոլոված ձևերը թարգմանել գրա-բարից ժամանակակից հայերեն. *ի ծովուէ, ծովու, ծովուց, զշա-բաթ, ի սպասուէ, ի սպասուց, ի նախանձուէ, ի նախանձուց:*

**Վարժություն 59:** Վերիիշել նախորդ վարժության մեջ բերված բառերի հոգնակի ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովների ձևերը:

**Վարժություն 60:** Թարգմանել ժամանակակից հայերենից գրաբար. *պարեր, պարերը, ագռավից, աղվեսները, առյուծներից, առյուծով, ուլերով, ուլերը, ցուլից, ցուլով, Հովհաննեսը, Հովսեփին, Հորդանանից, Սոկրատեսը:*

**Վարժություն 61:** Հետևյալ բառերը կանոնավորապես հոլովել *ու* հոլովմամբ. *ասր, ծաղր, մեղր:*

**Վարժություն 62:** Հոլովել հետևյալ անեզական բառերը. *բարք, պարտք, փարք:*

**Առաջադրանք 54:** Կարդալ «Ընթերցանություն 31»-ը և առանձնացնել *ու* հոլովման պատկանող ձևերը, նշել հոլովը և լրացնել մյուս ձևերը:

**Առաջադրանք 55:** Կարդալ «Ընթերցանությունվ 32»-ը և առանձնացնել *ա* և *ո* հոլովմամբ հոլովված գոյականները և որոշել նրանց հոլովը:

**Առաջադրանք 56:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *պատուական քար, արուեստող ձեռն, գնացք գետոց, առաջնորդել ի պատերազմի, արքայից արքայ, դառնութիւն թունից, բազմութիւն նետից, աշխարհն Հայոց, աշխարհն Յունաց, գաւառն Հոռոմոց:*

**Հարցեր 16:** ա) Ինչպիսի՞ կազմություն ունի *ու* հոլովումը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են գործածվում *ու* հոլովման դեպքում:

գ) Ի՞նչ գոյականներ են պատկանում *ու* հոլովմանը:

դ) Ի՞նչ անեզական բառեր և հատուկ անուններ են հոլովվում *ու* հոլովմամբ:

## Բ. Խառն հոլովում

**§ 62.** Գրաբարում վերջադրական խառն հոլովման պատկանում են *ի - ա, ո - ա* հոլովումները: Դրանք, ի տարբերություն պարզ հոլովումների, ունեն այն առանձնահատկությունը, որ հոլովիչներից առաջինները հանդես են գալիս եզակի սեռականից մինչեւ գործիական հոլովը, իսկ երկրորդները՝ եզակի գործիականից մինչև հոգնակի գործիականը: Այս ընդհանուր սկզբունքից բացի հիշյալ խառն հոլովումներն ունեն մասնավոր տարբերություններ:

### Ի-ա հոլովում

**§ 63.** Այս հոլովման ժամանակ *ի*-ն դրվում է եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում, վերջին դեպքում այդ *ի*-ն *է* հոլովակերտից առաջ սղվում է: Այնուհետև, *ա*-ն ի հայտ է գալիս

եզակի գործիական, հոգնակի սեռական, տրական, բացառական և գործիական հոլովներում: Եզակի գործիականն ստանում է *ւ*, իսկ հոգնակի ուղղական հոլովը՝ *ք*, սեռական, տրական և բացառական հոլովները՝ *ց*, գործիական հոլովը՝ *ւք*: Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | աղքատ | աղքատք |
| սեռ. | աղքատի | աղքատաց |
| տր. | աղքատի | աղքատաց |
| հայց. | (զ)աղքատ | (զ)աղքատս |
| բաց. | յաղքատէ | յաղքատաց |
| գործ. | աղքատաւ | աղքատաւք(օք) |

**§ 64.** *Ի-ա* հոլովման պատկանում են՝

ա) Մեծ թվով բառեր. *ազգ, ամ* («տարի»), *ամպրոպ, աշխարհ, բևեռ* («մեխ, առանցք, կենտրոն»), *գազան, գաւառ, գարշապար, գաւազան, գերեզման, գուսան, դաշտ, դեւ (դիւի), դպիր, երկիր, իր, ըմբիշ, հրաման, ճանապարհ, նախարար, նահանգ, ոչխար, պատկեր, պարկ, պարտէզ (պարտիզի), սազ, սահման, վախճան, վահան, վիշապ, վէմ (վիմի), տէգ (տիգի), փապար* («անցք, ծակ, ճեղք»), *փիղ (փղի*), *քիլ (քլի*. «բացված բթամատի և ցուցամատի միջակայքը»), *օրան* («դաշտից կալ բերվող ամբողջ հասկը»), *օրհորդ* և այլն:

բ) Որոշակի թվով անեզական բառեր. *արտասուք (արտասուաց), խելք (խելաց), կամք (կամաց), կառք (կառաց), կեանք (կենաց), միտք (մտաց), փառք (փառաց):*

գ) *-Անք* մասնիկով անեզական բառեր. *աղաչանք (աղաչանաց), բաղձանք (բաղձանաց), զարդարանք (զարդարանաց), զարմանք (զարմանաց), զբօսանք (զբօսանաց), ըլկանք* (*ըլկանաց*, «նեղել, տանջել, չարչարել»), *կալանք (կալանաց), հալածանք, հանգամանք, հոսանք, մաղթանք, մեծարանք, յանցանք, յարգանք, պարսաանք, պերճանք* և այլն:

դ) *-Ակ, -ական, -ածու, -անակ, -արան, -ացու, -եակ, -եղէն, -իկ, -իչ, -որդ, -ու, -ուկ, -պան, -ստան, -ւոր (-աւոր)* մասնիկներով

բազմաթիվ բառեր. *ագարակ, ախորժակ, աղաղակ, ամբարտակ, աշտարակ, ասպատակ, աւազակ, բաժակ, բանակ, գիսակ* («հյուսած մազեր»), *դանակ, դաստակ, դաստիարակ, դեսպակ* («ծածկոցով, ուսով տարվող պատգարակ»), *երակ, զաւակ, լծակ, ճաշակ, պսակ, օրինակ, հանդիսական, շինական, աշխարհական, ծեռնածու, նուագածու, աշտանակ, ժամանակ, յաղթանակ, գանձարան, պահարան, մահկանացու, դայեակ, դղեակ, սենեակ, հոդեղէն, հրեղէն, կապիկ, կօշիկ, շապիկ, բրիչ, գրիչ, որսորդ, պահանորդ, եղջերու, լեզու, աղմուկ (աղմկի), բազուկ, գեղջուկ, մտրուկ, դռնապան, պարտիզպան, այգեստան, բուրաստան, աղանդաւոր, դատաւոր, զինուոր, ուղեւոր, չքաւոր, սպասաւոր* և այլն:

**Ընթերցանություն 33:** «Եկեսցուք յառաջին գլուխն և ասասցուք, թէ զինչ է սահման: Սահման է բան կարճառօտ, յայտնիչ բնութեան ենթակայ իրի: Այլ վասն զի որպէս հանդերձեալ եմք ուսանել[1], ամենայն սահման բնաւորեցաւ ի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց լինել, ասասցուք՝ եթէ ո՞ր բառ յառաջիկայ սահմանիս համեմատի սեռի, և ո՞յք են այնոքիկ, որք բաղկացուցչաց զանազանութեանց: Այլ զի հաւաստի մեզ վարդապետութիւն[2] եղիցի, յօրինակ առնումք զսահման մարդոյ:

Եւ պարտ է գիտել, եթէ մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ: Արդ ահա աստանօր կենդանին փոխանակ սեռի առաւ. քանզի հասարակ է և ըստ բազմաց բերի, քանզի բերի ըստ մարդոյ և ըստ շան և ըստ ձիոյ և ըստ այլոց այսպիսեաց: Իսկ այլքն ի բառից փոխանակ բաղկացուցչաց զանազանութեանց յարառոցեալք գոն:

Արդ այսպէս և յառաջիկայում սահմանում բան[3] փոխանակ սեռի առաւ, քանզի հասարակ է և ըստ բազմաց բերի. քանզի բերի ըստ ներտրամաղրականին և ըստ յառաջաբերականին: Իսկ այլքն ի բառից փոխանակ բաղկացուցչաց զանազանութեանց յարառոցեալք գոն:

Արդ եկեսցուք և պատմեսցուք զսահմանդ սահմանի: Եւ պարտ է գիտել, զի բան ասացաւ յաղագս որոշելոյ յանուանէ. քանզի և անուն սահմանէ զբնութիւն ենթակայ իրին, որգոն, մարդ.

և զոր սահման ի ձեռն բազմաց բառից առնէ, զայս անուն ի ձեռն միոյ բառի, ուստի և հակասահմանին: Քանզի ասեն, եթէ անուն է սահման կարճառօտ, իսկ սահման է անուն ծաւալեալ: Արդ, զի որոշեսցի անունն, վասն այսորիկ կոչեցաւ բանն: Եւ արդարեւ, զոր ինչ առնէ անուն, առնէ և բան, քանզի և անուն և բան զբնութիւն ենթակայ իրին յայտնեն» (*Դաւիթ Անյաղթ,* էջ 40-41):

1. *Հանդերձեալ եմք ուսանել* - մտադիր ենք իմանալու:
2. *Վարդապետութիւն* - տեսություն:
3. *Բան* - խոսք:

**Ընթերցանություն 34:** «Վասն զի ստիպեաց զաղքատահիմաստ խանութս մեր հրաման թագաւորաց, և ի մէնջ հարկ պահանջեալ զանցեալ իրացն եղելոց զիրս մատենագրել՝ յայտնական պատմութիւնք, որ առ մեօք գործեցան: Սակայն մեծ և բազում ջան եղեալ թողուլ այնոցիկ, որ յետ մեր գայցեն՝ զկարգս զրուցաց դարուց ի դարս յիշատակել[1]. զի ոչ եթէ կամօք ինչ յօժարեցաք հաւանել առնել զայս, այլ իբրև ոչ կարի ինչ ընդդէմ մարթացեալ[2] դառնալ արքայատուր հրամանացն, որչափ յուժի կայր՝ մարթացեալ ըստ հրամանացն պատմեսցուք: Եւ մեր զայս ջան յանձին կալեալ, անկեալ ի վաճառականութիւն բանից[3], առեալ գահ երկիւղի, և տուեալ զգեղեցկաղիր յարմարումն պատմութեան: Վասն զի ի խնդիր եղեալ և խուզիւք[4] ի մէջ բերեալ զդարգս[5] պատմութեան՝ զմարմնաւորացն մատենագրութիւն՝ ըստ կարգի պատմութեան, ըստ օրինին, ըստ ժամանակին, ըստ իրացն եղելոցն, ըստ հրամանացն ի վաճառ մատուսցուք:

Իսկ զհոգևորացն առաքինութիւն աստուածասէր սիրողացն մեծութիւն իբրև զմարգարիտն պատուական, զբոլորասերն, զլուսաւորն, զչքնաղագիւտն, որ ոչ ունի գեղութիւն բաժանման իւրոյ ճաճանչաւոր լուսոյն, այլ լիութեամբ զարդ անձին վայելուչ զթագս թագաւորացն զարդարեսցէ. և կամ ականք պատուականք ի Հնդկային աշխարհէն, որ ի վայելչութիւն զարդու ի խոյր պսակի զարդարիցեն զթագաւորս: Իսկ արդեօք այդ զիա՞րդ կամ ո՞րպէս գտանիցի ումեք վայրապար, եթէ ոչ ի մեծագնաց թանգարացն[6],

որք և մեծն աշխատանօք, երկայնուղւոյ ճանապարհաց զքոշակսն բաւեցուցին, և մեծաջանք եղեալ ի գտանել՝ զքագաւորս զարդարեցին: Իսկ սոցա ճաճանչ լուսոյս, զոր մեր ի վաճառ իջուցեալ, ոչ միայն ի զարդ գլխոյ թագաւորին բովանդակի առ ի տես այլոցն, այլ և զամենեսեան զարդարէ, զամենեսեան լուսաւորէ, զամենեսեան լցուցանէ, ամենեցուն բաւէ, զամենեսեան մխիթարէ, զամենեսեան բժշկէ: Զթագաւորս շքեղացուցանէ ի նմանութիւն արտախոյրն[7] պսակի ի վերջաւորն փողփողելոյ. նա և զաղքատս լցուցանէ, թօթափէ բարձրացուցանէ յաղբեաց և հաւասար իշխանաց կացուցանէ, նա և պսակումն աշխարհաց օրհնութեամբ լցուցեալ, պսակ բոլորեալ տարւոյ քաղցրութեամբ» (*Ազաթ.,* էջ 10-12):

1. *Դարուց ի դարս յիշատակել* - դար առ դար հիշատակել:
2. *Մարթացեալ* - կարողացած:
3. *Վաճառականութիւն բանից* - *(փխբ.*) խոսքի շարադրանք:
4. *Խոյզ* - որոնում, փնտրելը:
5. *Ի մէջ բերել զդարգս պատմութեան* - մեջտեղ բերելով ըստ կարգի պատմությունը:
6. *Մեծագին թանգարք* - թանկարժեք, թանկ վաճառականներ:
7. *Արտախոյր* - դրսի կողմից կապ. այստեղ՝ պսակի կապ:

**Վարժություն 63:** Հոլովել *ի-ա* հոլովման պատկանող հետևյալ գոյականները. *ազգ, ամպրոպ, աշխարհ, գազան, գաւառ, զարշապար, գաւազան, գերեզման, գուսան, դաշտ, դպիր, երկիր, իր:*

**Վարժություն 64:** Որոշել *ի-ա* հոլովման պատկանող հետևյալ թեք ձևերի հոլովը. *ի նախարարաց, յամէ, ամաւ, դիւաց, նահանգաւ, նահանգաց, նահանգաւք, ոչխարի, պատկերաց, պարկաւք, պարտիզաւք, սազաց, սահմանք, զսահմանս, վախճանաւ, վախճանաւք, զվահան, զվիշապս, ի վիմէ, վիմաւք:*

**Վարժություն 65:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *ի վիշապաց, տիզաւ, փապարաւ, փղիք, քլիւ, զքիլս, օրանաւ, զօրանս, օրհորդի, յարտասուաց, ի կենաց, կենաւք, կամաց, զկամս,*

*կառալք, զկեանս, մտալք, զփառս, աղաչանաց, բաղձանաց, բաղձանալք, բաղձանք, ի լկանաց, ի կալանաց, մաղթանաց:*

**Վարժություն 66:** Թարգմանել գրաբար. *հանգամանքի, հալածանքներից, հոսանքից, մեծարանքով, ազարակից, աղաղակը, ամբարտակներ, աշտարակները, ասպատակներով, բաժակները, բանակը, դանակով, դաստիարակը, դեսպակները, լծակին, ճաչակով, օրինակից, հանդիսականներ, շինականները, աշխարհականներին:*

**Առաջադրանք 57:** Վերհիշել *ի-ա* հոլովման երկու-երեք անեզական գոյական և հոլովել:

**Առաջադրանք 58:** Վերհիշել *-ական* մասնիկով մի քանի գոյական և հոլովել:

**Առաջադրանք 59:** Կարդալ «Ընթերցանություն 33»-ը, առանձնացնել *ի-ա* հոլովման գոյականները, նշել հոլովը և լրացնել մյուս հոլովները:

**Առաջադրանք 60:** Կարդալ «Ընթերցանություն 34»-ը, առանձնացնել *ի-ա* հոլովման գոյականները, նշել հոլովը և գտնել դրանց ուղղականը:

**Հարցեր 17**: ա) Ինչպե՞ս է կազմվում *ի - ա* հոլովումը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են մասնակցում *ի-ա* հոլովման կազմությանը:

գ) Ինչպիսի՞ մասնիկներով բառեր են հոլովվում *ի-ա* հոլովմամբ:

դ) *Ի-ա* հոլովման ի՞նչ գոյականներ կարելի է հիշել:

ե) *Ի-ա* հոլովման ի՞նչ անեզական գոյականներ կարելի է հիշել:

## Ո - ա հոլովում

**§ 65.** Գրաբարում *ո-ա* հոլովումը միայն վերջադրական է: Այն կազմությամբ նման է *ի-ա* հոլովմանը: Այս դեպքում ևս հոլովիչներից առաջինը գործածվում է եզակի սեռականից մինչև գործիական հոլովը, իսկ երկրորդը՝ եզակի գործիականից մինչև հոգնակի գործիական հոլովը: Եզակի սեռականը և տրականն ստանում են *յ* (որը չի արտասանվում), իսկ գործիական հոլովը՝ *ւ*, հոգնակի սեռական-տրական, բացառական հոլովները՝ *ց*, գործիական հոլովը՝ *ւք*: Հոգնակի ուղղական հոլովը ստանում է *ք*, իսկ հայցականը՝ *ս*: Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այգի | այգիք |
| սեռ. | այգւոյ | այգեաց |
| տր. | այգւոյ | այգեաց |
| հայց. | (զ)այգի | (զ)այգիս |
| բաց. | յայգւոյ | յայգեաց |
| գործ. | այգեաւ | արգեաւք (օք) |

**§ 66.** *Ո-ա* հոլովման պատկանում են՝

ա) *Ի* վերջնահնչյուն ունեցող որոշակի թվով բազմավանկ բառեր. *աղաւնի, աղօրի, անդրի* («արձան»), *ապակի, արքունի, գարի, գերի, գերանդի, գօտի, գինի, գոլորշի, եկեղեցի, եղեւնի, թշնամի, կենդանի, հազնի* («բարդի»), *ծերունի, մարի* («էգ թռչուն»), *մորթի, մորի, ոգնի, պատանի, պատասխանի, փոշի* և այլն:

**Ծանոթություն 17:** Բացառություն են կազմում *հոգի, ոսկի, որդի, ոգի,* այլև *ցի*-ով վերջացող բառերը, որոնք հոլովվում են *ո* պարզ հոլովմամբ (տե՛ս § 59):

բ) *Իք*-ով վերջացող մի շարք անեզական հասարակ և հատուկ անուններ. *անդրավարտիք (անդրավարտեաց), արգասիք (արգասեաց), բաղանիք (բաղանեաց), երախտիք (երախտեաց), ընթրիք (ընթրեաց), հարսանիք (հարսանեաց), կարծիք (կարծեաց), չարիք*

*(չարեաց), Տմորիք (Տմորեաց), Աղձնիք (Աղձնեաց), Սիւնիք (Սիւնեաց)* և այլն:

գ) -*ենի, -ունի, -ուհի* վերջածանցներով բառերը. *առիւծենի, արմաւենի, զմռնենի, թզենի, ծիթենի, զազրունի, ցնցունի, թագուհի, տիրուհի, Ամբատունի, Տաճատունի, Տիգրանուհի* և այլն:

դ) -*ունի* մասնիկով ազգանուն-տոհմանունները. *Ամատունի, Արշակունի, Արծրունի, Բագրատունի, Խոռխոռունի, Մանդակունի, Շիրակունի, Վարաժնունի* և այլն:

**Ընթերցանություն 35:** «Ապա Մուշեղ որդի Վասակայ, սպարապետն Հայոց Մեծաց ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս[1] ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս, միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թռշակաւ և զինու...: Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին քառասուն հազարաւ, և անդէն ձեռն ի գործ արարեալ[2] կոտորէր: Ապա միածի մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. և զամենայն կարեւան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց: Զի բազումս կոտորէին, և զբազումս յաւազանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զզանձս թագաւորին Պարսից յաւարի, և ըմբռնէին զտիկնանց տիկինն[3] հանդերձ այլովք կանամբք: Եւ զամենայն մաշկաւարզան[4] ի բուռն արկանէր[5] Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին՝ արս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց: Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս[7] տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապհոյ արքայի: Եւ ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անարատս[8]: Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նման յաղագս կանանս թշնամանս: Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ

թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր զինի ի մատունսն ըմպել[9], յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօրա-ցն իւրոց, ասէր. «Ճերմակաձին զինի արքցէ»: Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր առաջի իւր և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ «Ճերմակաձին զինի արքցէ»10 (Բուզ., էջ 290):

1. *Արք միամիտք* - հավատարիմ տղամարդիկ:
2. *Ձեռն ի գործ արարեալ* - ձեռքը գործի զարկեց՝ սկսեց:
3. *Տիկնանց տիկին* - տիկինների տիկին, մեծ տիկին:
4. *Մաշկաւազան* - պարսկական կանանցի վրան:
5. *Ի բուռն արկանէր* - ձեռքն էր գցում, բռնում էր:
6. *Մորթել* - մորթը հանել, մաշկել, տիկ հանել:
7. *Ժանաւար* - գահավորակ, կամ՝ ձի, փիղ՝ գահավորակով:
8. *Անարատ* - չպղծված, մաքուր:
9. *Ի մատունսն ըմպել* - մատներում՝ խմելու (համար):
10. *Ճերմակաձին զինի արքցէ* - ճերմակաձին թող գինի ըմ-պի:

**Ընթերցանություն 36:** «Իսկ արին Վարդան յառաջ մատու-ցեալ և զաւազանին հարցանէր, և միաբան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր: Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, և նիզակակից նմա զմեծ իշխանն Մոկաց. զայլն ամենայն նախարարեան համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն զնդին թևս աստի և անտի կազմէր նոցա: Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խոռխոռունւոյ, և նիզակակից նմա զԸնծայինն և զՆերսեհ Քաջբերունի: Եւ զգունդն երրորդ մա-տուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդացւոյ, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և բազումս ի քաջ արանց աստի և անտի ի թևս նոցա: Յանձն իւր առնոյր[1] զգունդն չորրորդ, և նիզա-կակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայրն իւր զՀամա-զասպեան: Կարգէր և կազմէր զճակատն՝ յորդորելով ընդ ամե-նայն երեսս դաշտին[2] դէմ յանդիման Արեաց զնդին, առ ափն Տղ-մուտ գետոյն:

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին, և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչմանն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլիւն պատենազէն վառելոցն[3] իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում շողալ սուսերացն և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել[4] զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին» (*Եղիշէ,* էջ 116-117):

1. *Յանձն իւր առնոյր* - վերցրեց ինքը (իր անձին):
2. *Յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին* - սփռելով ամբողջ դաշտի երեսը (դաշտով մեկ):
3. *Պատենազէն վառելոցն* - զրահավոր զենքերին:
4. *Ո՞վ իսկ է բաւական ասել* - ո՞վ կարող է (ի վիճակի է) պատմել (ասել):

**Վարժություն 67:** Հոլովել *ո-ա* հոլովման պատկանող հետևյալ գոյականները. *աւօրի, անղրի, ապակի, արքունի, գարի, գերի, գերանդի, գօտի, գոլորշի, եկեղեցի, եղեւնի, թշնամի, կենդանի, հազնի:*

**Վարժություն 68:** Որոշել հետևյալ թեք ձևերի հոլովումը, հոլովը, հոլովիչը և հոլովակերտը. *ծերունոյ, ծերունեաւ, ծերունեաց, մորթեաւ, մորթեաւք, մորւոյ, զմորիս, մորեաւք, ոզնոյ, ոզնեաւ, ոզնեաց, ոզնեաւք, պատանոյ, զպատանի, զպատանիս, պատանեաւ, պատանեաւք:*

Օրինակ՝ *թշնամեաւ ~ ո - ա* հոլովում, եզակի գործիական հոլով, *ա* հոլովիչ, *ւ* հոլովակերտ:

**Վարժություն 69:** Որոշել հետևյալ թեք ձևերի հոլովիչը և հոլովը. *առիւծենոյ, առիւծենեաւ, զառիւծենի, առիւծենեաց, արմաւե-*

*նեաւք, զարմաւենիս, յարմաւենեաց, յարմաւենւոյ, ի թագուհւոյ, թագուհեաւք, զթագուհիս, թագուհեաց, թագուհւոյ:*

Օրինակ՝ *ցնցոտեաց ~ ա* հոլովիչ, հոգնակի սեռական և տրական հոլով:

**Վարժություն 70:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *զարգասիս, յընթրեաց, ընթրեաւք* (կամ՝ *ընթրեօք*), *զընթրիս, ի հարսանեաց, ի չարեաց, զՏնորիս, յԱղձնեաւք, Սիւնեաց, կարծեաւք* (կամ՝ *կարծեօք*), *թզենեաց, թզենեաւ, զթզենիս*:

**Վարժություն 71:** Թարգմանել գրաբար. *թագուհու, թագուհիների, թագուհիներից, ցնցոտիներով, Տաճատուհու, Մանդակունիներից, Տիգրանուհուն, Բագրատունիների, Շիրակունիներից, Վարաժնունիները, Վարաժնունիներով, Սմբատուհուն, թզենիներից, զմռնենիներով, զմռնենիները, արմաւենին, արմաւենուց, արմավենով, արմավենիներով:*

**Առաջադրանք 61:** Վերհիշել ռ-ա հոլովման երկու-երեք անեզական գոյական, հոլովել՝ նշելով հոլովիչը, հոլովը և հոլովակերտը:

**Առաջադրանք 62:** Վերհիշել *-ուհի* ածանցով երեք գոյական և հոլովել եզակի բացառական և հոգնակի բացառական, գործիական հոլովներով:

**Առաջադրանք 63:** Կարդալ «Ընթերցանություն 35»-ի առաջին պարբերությունը (հատվածը), առանձնացնել թեք հոլովաձևերով գոյականները և որոշել, թե դրանք ինչ հոլովման են պատկանում և որ հոլովով են դրված:

**Առաջադրանք 64:** Կարդալ «Ընթերցանություն 36»-ը և առանձնացնել *ռ-ա* հոլովման գոյականները, նշել դրանց հոլովումը: š

**Հարցեր 18:** ա) Ինչպե՞ս է կազմվում *ռ -ա* հոլովումը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են օգտագործվում *ռ-ա* հոլովման դեպքում:

գ) Ինչպիսի՞ մասնիկներով բառեր են պատկանում *ռ-ա* հոլովմանը:

դ) *Ո-ա* հոլովման պատկանող ի՞նչ գոյականներ կարելի է հիշել:

**Գծապատկեր 6**

| | Վերջադրական հոլովում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պարզ | | | | Խառն | |
| | ա | ի | ո | ու | ի-ա | ո-ա |
| | եզ. | հոգն. | եզ. | հոգն. | եզ. | հոգն. |
| Ուղղ. | ø | ք | ø | ք | ø | ք |
| Սեռ. | այ | աց | ի | ից | ի | աց |
| Տր. | այ | աց | ի | ից | ի | աց |
| Հայց. | ø | ս | ø | ս | ø | ս |
| Բաց. | այ | աց | է | ից | է | աց |
| Գործ. | աւ | աւք (օք) | իւ | իւք | աւ | աւք (օք) |

## 2) Ներդրական հոլովում

### ա. Պարզ հոլովում

§ 67. Գրաբարում ներդրական պարզ հոլովման պատկանում են *ա, ն* հոլովումները: Այս դեպքում, ինչպես գիտենք, *ա, ն* հոլովիչները դրվում են ոչ թե բառի վերջում, այլ բառի ներսում՝ բառավերջի ձայնորդ բաղաձայնից առաջ: Այս ընդհանուր սկզբունքը ներդրական պարզ հոլովումներում ուղեկցվում է մասնակի տարբերություններով (առանձնահատկություններով):

### Ա հոլովում

§ 68. Ներդրական պարզ *ա* հոլովումը տեղի է ունենում բառի ներքին թեքումով: *Ա* հոլովիչը դրվում է եզակի սեռական, տրական, բացառական և գործիական, հոգնակի սեռական, տրական, բացառական և գործիական հոլովներում: Եզակի բացառական հոլովն ստանում է *է*, գործիական հոլովը՝ *բ*, որից առաջ *ն* ձայնորդը առնմանությամբ վերածվում է *մ* - ի (շրթնայնանում է):

Հոգնակի ուղղական հոլովն ստանում է *ք*, սեռական, տրական և բացառական հոլովները՝ *ց*, իսկ գործիական հոլովը՝ *բք* հոլովակերտը:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | գաղաքն | գաղաքունք |
| սեռ. | գաղաքան | գաղաքանց |
| տր. | գաղաքան | գաղաքանց |
| հայց. | (զ)գաղաքն | (զ)գաղաքունս |
| բաց. | ի գաղաքանէ | ի գաղաքանց |
| գործ. | գաղաքամբ | գաղաքամբք |

**Ծանոթություն 18:** Հոգնակի ուղղականում *ք*-ն դրվում է բառավերջում, իսկ ձայնորդ բաղաձայնից առաջ զետեղվում է *ու* ձայնավորը, որպիսով ստացվում է *ունք* վերջավորությունը:

**§ 69.** Ներդրական պարզ *ա* հոլովման պատկանում են՝

ա) *Ն*-ով և նրան նախորդող մեկ այլ բաղաձայնով վերջացող բառերի մեծ մասը. *ակն* («աղբյուրի ակ»), *աղեղն, ամառն, այծեամն (այծեման), ասեղն, ատամն, բուրգն, գեղարդն* («կոքով տեգ»), *դիակն, դուռն, եղեռն, եղէգն, երկն, թիթեղն, լիսեռն, ծիծառն (ծիծառան),* այլև՝ *ծիծեռն (ծիծռան), կայծակն, կնճիռն, հիւսն, հիմն, ձմեռն, ձուկն, ճպուռն, մատուռն, մուկն, նուռն, շուրթն, ոլոռն* (այլև՝ *ոլեռն), ոսպն, որդն, ուլն, ունկն, ռունգն, սերմն, սիսեռն* (*սիսռան*, այլև՝ *սիսեռան*), *սկիզբն, փայլակն, փայծաղն, քիրտն* և այլն:

բ) *-Ումն* ածանցով վերջացող բառերը. *ազդումն (ազդման), անկումն (անկման), դեգերումն, երդումն, երեւումն, խոստումն, կոչումն, հարցումն, շարժումն, ուսումն* և այլն:

գ) *-Մն* հնչյունախմբով վերջացող բառերը. *այծեամն (այծեման), ատամն, եղեամն, կողմն, կոտիմն (կոտման), հիմն, որոմն* և այլն:

**Ծանոթություն 19**: *-(Ու)մն*-ով վերջացողների պես է հոլովվում *պաշտօն* («պաշտելը. ծառայություն») բառը (*պաշտաման, ի պաշտամանէ, պաշտամունք, պաշտամանց, պաշտամամբք*):

դ) *-(Ութ)իւն*-ով վերջացող բառերը. *գիտութիւն, իմացութիւն, մեծութիւն, մոլեգնութիւն, նահատակութիւն, պարկեշտութիւն, պարզութիւն, սատարութիւն, տեսութիւն, անկիւն, արիւն, կորիւն, ձիւն, մրջիւն:*

ե) -*Ուն*-ով վերջացող որոշ բառեր. *անուն (անուան), ձեղուն (ձեղուան), շուն (շան), տուն (տան):*

**Ծանոթություն 20:** *Ձեղուն, շուն, տուն* բառերի հոգնակի ուղղականն է՝ *ձեղունք, շունք, տունք:*

**Ծանոթություն 21:** *Անուն* բառի պես հոլովվում է *մահ* բառը (*մահուան, մահունք, մահուանց*), թեև առավելապես հանդիպում է *ու* հոլովմամբ (*մահու, մահք, մահուց*):

զ) -*Իկ, -ուկ* ածանցներով բառերի որոշակի մասը. *աղջիկ (աղջկան, աղջկամբ,* այլև՝ *աղջկաւ, աղջկունք, աղջկանց), անդրանիկ, խցիկ, ծաղիկ (ծաղկան, ծաղկունք, ծաղկանց), մանուկ (մանկան, մանկունք, մանկանց), մասնիկ, փոքրիկ, Աստղիկ, Յուսիկ, Սաթէնիկ* և այլն:

**Ծանոթություն 22:** Այս բառերի պես է հոլովվում (միայն եզակի թվով) *մարդ* բառի *մարդիկ* ձևը (*մարդկան, զմարդիկ, ի մարդկանէ, մարդկամբ* կամ՝ *մարդկաւ*):

է) -*Ունդ, -ուստ, -ուրդ* ածանցներ ունեցող որոշակի բառեր. *ծնունդ (ծննդեան, ի ծննդենէ, ծննդեամբ), սնունդ (սննդեան, սննդեանց, սննդեամբք), կորուստ (կորստեան, կորստեամբ), ժողովուրդ (ժողովրդեան, ժողովրդեամբ), խորհուրդ, փախուստ, զալուստ* և այլն:

**Ծանոթություն 23:** Այսպես է հոլովվում նաև *հանգիստ* բառը՝ *հանգստեան, հանգստեամբ, հանգստեանց* (թեև կա նաև՝ *հանգստի*):

ը) Որոշ այլևայլ բառեր՝ *տեսիլ (տեսլեան, ի տեսլենէ, տեսլեամբ), ամիս (ամսեան, յամսենէ,* թեև կա նաև՝ *ամսոյ, ամսով):*

**Ընթերցանություն 37:** «Պատերազմ յուզեալ Աշդահակայ Մարաց թագաւորի ընդ մեծին Տիգրանայ Հայկազնոյ, որպէս ցուցանեն մեզ առաջինքն ի պատմագրաց. և այրուձի կազմեալ՝ գալ մտանել յաշխարհս Հայոց, առնել որպէս նիւթեաց զչարիսն:

Ազդ եղև մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշդահակայ. և ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրավարաց արանց քաջամարտկաց, զզօրս Կապուղկացւոց, զՎրաց և զԱղուանից և զԱյրարատեան գազանամարտիկ յանճոռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ գունդս զօրացն և զորդիսն Սենեքերիմայ, ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարեալ երագել[1] անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն, զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն: Եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բնակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց, և անդ ոչ սակաւ վտանգ հասանէր Աշդահակայ վասն հասանելոյ ի վերայ նորա Տիգրանայ զօրու ծանու[2]: Նա և բազմախոհեմն Կիւրոս Պարսիկ խաղայ գայ իւրովք հեծելազօր մարտակցովքն[3] գալ օգնել Տիգրանայ. քանզի էին բարեկամացեալ ընդ միմեանս Կիւրոս և Տիգրան և յամենայնի համանմանքն, համակամքն, միասիրտքն, քաջախոհքն և բազմադրուատքն[4]: Բայց մինչդեռ չև առ միմեանս հասեալ Տիգրան և Կիւրոս՝ յղէ Աշդահակ պատարագս Կիւրոսի և խոստանայ տալ նմա զուէրութիւնն զչորրորդ մասն Սենեքերիմանցն զկողմամբքն Նինուէի և զՏմորիս ամրոցաւն որ ի նմա, և զայս ոչ միանգամ, այլ յոլովակի[5] մի զմիոյ կնի[6] ընթացուցանէր դեսպանս հրովարտակօք և պատարագօք: Զայս իմացեալ խորհրդականութիւն Քսերքսէս յԱդրամելեայ և Սանասարայ յորդւոցն Սենեքերիմայ՝ ապա գան առ Տիգրան Հայոց թագաւոր և զեկուցանեն նմա, վասն որոյ խորհի Աշդահակ. քանզի որդիքն Սենեքերիմայ մեծաւ յասմամբ և անզրաւ[7] հաշտմամբ ընդ Աշդահակայն լինէին, յաղագս զոլ զնա սերունդ Վարբակայ Մարի, որ եբարձ զթագաւորութիւնն ի Սարդանապաղեայ, հաւուցն[8] Սենեքերիմեանց» (*Թովմ. Արծ.,* էջ 62):

1. *Երագել* - նույնն է՝ արագել, արագացնել:
2. *Զօրու ծանու* - ծանր զորքով:
3. *Հեծելազօր մարտակցովքն* - հեծյալ զինակիցներով:
4. *Բազմադրուատք* - բազմիցս, հույժ գովելի, դրվատելի:
5. *Յոլովակի* - բազմիցս, շատ անգամ:

6. *Մի զմիոյ կնի* (փխ.՝ *մի զկնի միոյ*) - մեկը մյուսի հետևից:
7. *Անզրաւ* - անվերջ, անվախճան:
8. *Հաւուցն* - պապերի:

**Ընթերցանություն 38:** «Մինչ չև բնաւ էր ինչ[1], ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք, որ յերկինս կամ յերկրի: Զրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք: Զհազար ամ յաշտ արար[2], զի թերևս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիզդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ. և յետ հազար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւածել զմտաւ[3], ասէ. «Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս, զոր առնեմ, և լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, եթէ ի զուր ինչ ջանայցեմ»: Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արիմն յղեցան յարգանդի մօր իւրեանց. Որմիզդն ի յաշտ առնելոյ, և Արիմն՝ ի յերկուանալոյ անտի: Ապա իմացեալ Զրուանայ[4], ասէ. «Երկու որդիքն են յորովայնի անդ, որ ոք ի նոցանէ վաղ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից». և ծանուցեալ Որմզդի[5] զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արիմենին. ասէ[6]. «Զրուան հայր մեր խորհեցաւ, թէ ոք ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուսցէ»: Եւ զայն լուեալ Արիմենին՝[7] ծակեաց զորովայնն, և ել եկաց առաջի հօրն: Եւ տեսեալ զնա Զրուանայ[8] ոչ գիտաց, եթէ ո՛ ոք իցէ. և հարցանէր, թէ «Ո՞վ ես դու»: Եւ նա ասէ. «Ես եմ որդին քո»: Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»: Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմզդի[9] ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց առաջի Զրուանայ: Եւ տեսեալ զնա Զրուանայ, գիտաց, եթէ Որմիզդ որդի նորա է, վասն որոյ զյաշտն առնէր. և առեալ զբարսմունս, զոր ի ձեռին իւրում ունէր[10], որովք զյաշտն առնէր, ետ զՈրմիզդ [եւ] ասէ. «Յայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես»: Եւ ի տալ Զրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ և օրհնել զնա, մատուցեալ Արիմենի առաջի Զրուանայ՝ ասէ ցնա. «Ո՞չ այսպէս ուխտեցեր, թէ ո՛ք յերկուց որդւոցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից»: Եւ Զրուան առ ի չջրելոյ զուխտն՝ ասէ ցԱրիմնն. «Ա՛յ սուտ եւ չարագործ, տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար

ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ. և յետ ինն հազար ամի Որմիզդ թագաւորեսցէ, և զինչ կամիցի առնել, արասցէ»: Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս. և ամենայն ինչ, զոր Որմիզդն առնէր, բարի էր և ուղիղ, և զոր ինչ Արհմնն գործէր, չար էր և թիւր» (Եզնիկ, էջ, 79 - 80):

1. *Մինչ չեւ բնաւ էր ինչ* - քանի դեռ ոչինչ չկար:
2. *Յաշտ առնել* - երկրպագել:
3. *Ածել զմտաւ* - մտածել:
4. *Իմացեալ Զրուանայ* - Զրվանն իմացավ:
5. *Ծանուցեալ Որմզդի* - Որմիզդը ճանաչեց:
6. *Աստ* - այստեղ՝ ասաց:
7. *Լուեալ Արհմենին* - Արհմնը լսեց:
8. *Տեսեալ ... Զրուանայ* - Զրվանը տեսավ:
9. *Ծնեալ Որմզդի* - Որմիզդը ծնեց:
10. *Ունէր* - բռնել էր:

**Վարժություն 72:** Հոլովել ներդրական պարզ *ա* հոլովման պատկանող հետևյալ գոյականները. *աղեղն, ամառն, այծեամն, ասեղն, ատամն, բուրգն, գեղարդն, դուռն, եղեռն, երկն, թիքեռն, լիսեռն, կայծակն, հիւսն, հիմն, ձմեռն, մատուռն*:

**Վարժություն 73:** Որոշել հետևյալ թեք ձևերի հոլովումը և հոլովը. *եղեգան, յեղեգանէ, յեղեգանց, մկան, ի մկանէ, ի մկանց, մկամբ, ի նռանէ, նռամբք, սերման, զսերմն, ի սերմանէ, սերմամբք, ունկամբ, զունկն, զունկունս, յունկանէ, խոստման, զխոստմունս, ի խոստմանց, խոստմամբք:*

Օրինակ՝ *խոստմամբք* ~ հոգնակի գործիական, *ա* հոլովում:

**Վարժություն 74:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *հիման, եղեման, յեղեմանց, կողմունք, պաշտամունք, շունք, տունք, ի շանց, ի ձեղուանց, անունք, անուամբ, յանուանց, յանուանէ, անկեան, անկեամբ, անկեամբք, շարժմամբ, երդմամբ, զերդմունս:*

**Առաջադրանք 65:** Վերհիշել *ա* հոլովման *-ություն* ածանցով ինը բառ և հոլովել եզակի թվով:

**Առաջադրանք 66:** Վերհիշել *ա* հոլովման *-ումն* ածանցով հինգ բառ և հոլովել հոգնակի թվով:

**Առաջադրանք 67:** Կարդալ «Ընթերցանություն 37»-ը և առանձնացնել թեք ձևերով դրված գոյականները, որոշել նրանց հոլովը և հոլովումը:

**Առաջադրանք 68:** Կարդալ «Ընթերցանություն 38»-ը և առանձնացնել թեք ձևերով դրված գոյականները, որոշել նրանց հոլովումը, հոլովը և թարգմանել ժամանակակից հայերեն:

**Հարցեր 19:** ա) Կազմության ի՞նչ առանձնահատկություններ ունի ներդրական պարզ *ա* հոլովումը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են մասնակցում այդ հոլովման կազմությանը:

գ) Ինչպիսի՞ բառեր են պատկանում այդ հոլովմանը:

դ) Ինչպիսի՞ ածանցներով բառեր են պատկանում այդ հոլովմանը:

ե) Ի՞նչ շեղումներ կարելի է նշել հոլովման ընդհանուր կանոնից՝ այս կամ այն բառի հետ կապված:

## Ե հոլովում

**§ 70.** Ներդրական պարզ *ե* հոլովումը ևս տեղի է ունենում բառի ներքին թեքումով: *Ե* հոլովիչը դրվում է եզակի սեռական, տրական, բացառական և գործիական, հոգնակի սեռական, տրական, բացառական և գործիական հոլովներում: Եզակի բացառականն ունենում է *է,* իսկ գործիականը՝ *բ* հոլովակերտը: Այս հոլովման պատկանող որոշ բառերում հոգնակի սեռական, տրական, բացառակամ և գործիական հոլովներն ունենում են *ե*-ից բացի մի *ա* ձայնավոր, որը դրվում է հոլովակերտից առաջ. հմմտ. *դուստր,* հոգնակի ուղղական՝ *դստերք,* սեռական և տրական՝ *դստերց,* այլև ՝ *դստերաց,* բացառական՝ *ի դստերց,* այլև ՝ *ի*

*դստերաց,* գործիական՝ *դստերբք,* այլև՝ *դստերաւք* (կամ *դստե-րօք*)։ Նման զուգակցումը թերևս գրական և այլ կարգի (ժամանա-կի խոսակցական) տարբերակների մերձակցության հետևանք է։ Օրինակ՝

| Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. աստղ | աստեղք |
| սեռ. աստեղ | աստեղց // աստեղաց |
| տր. աստեղ | աստեղց // աստեղաց |
| հայց. զաստղ | զաստեղս |
| բաց. յաստեղէ | յաստեղց // յաստեղաց |
| գործ. աստեղբ | աստեղբք // աստեղաւք (օք)։ |

**§ 71.** Ե հոլովման պատկանում են՝

ա) *Ր* - ով, *ղ* - ով և դրանց նախորդող որևէ այլ բաղաձայնով վերջացող բառերը. *ազդր, անգղ, արկղ, եզր, եղր* («տեղ»), *լիտր (լտեր), կայսր, կոճղ, համր, ոսկր, ուստր* («արու զավակ»), *փազր, տայգր* (այլև՝ *տագր), տարր* և այլն։

բ) *Իւր (եւր)* մասնիկով վերջացող հետևյալ բառերը. *ալիւր (ալեւր), աղբիւր (աղբեւր), եղջիւր (եղջեւր), եղտիւր (եղտեւր)* կամ *աղտիւր (աղտեւր* «խոնավ, ջրոտ տեղ, ճահճուտ»)։

**Ընթերցանություն 39:** «Ապա առեալ երանելի հոգաբար-ձուացն զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին ևս յարքայէ ման-կունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն։ Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդա-պետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր։

Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զփւողոբայս զկապս հայերէն լեզուոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակ ինչ։

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկտւոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եդեսիա կոչի, և երկրորդին՝ Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին՝ Ակակիոս. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքաց պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ» (*Կոր.,* էջ 44-46):

**Ընթերցանություն 40:** «Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին՝ մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զիւրոց զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ երկոցունց ազգացն[1] քաջաց և աղեղնաւորաց: Սակաւ ինչ տեղի տայ ազգն Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերբ գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշէս բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա:

Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս, զխաղաղութիւն խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զինչ և խնդրեսցէ[2]. և երդմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէսզի մի ևս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհս Հայոց: Եւ ի չառնուլ յանձն[3] Արտաշիսի առ ի տալ զպատանին՝ գայ քոյր պատանւոյն գետոյն ի դարաւանդ մի մեծ, և ի ձեռն թարգմանաց[4] ձայնի ի բանակն Արտաշիսի» (*Խոր.,* էջ 210 - 212):

1. *Ի մէջ երկոցունց ազգացն* - երկու ազգերի միջև էլ:
2. *Զինչ և խնդրեսցէ* - ինչ էլ որ կամենա, ուզի:
3. *Ի չառնուլ յանձն* - հանձն չառնելու ժամանակ:
4. *Ի ձեռն թարգմանաց* - թարգմանիչների միջոցով՝ օգնությամբ:

**Վարժություն 75:** Հոլովել *ե* հոլովման հետեւյալ գոյականները. *ազգր, անգղ, արկղ, եզր, եսող, լիտր:*

**Վարժություն 76:** Որոշել հետևյալ թեք ձևերի հոլովումը և հոլովը. *քաղաւորաց, Արշակայ, փիշապին, յաղբերէ, յալերց, յալերաց, զեղջիւս, եղջերբք, աղտերաց, աղտերք, յուսկերց, յուսկերաց, ուսկերբ, զուսկերս:*

**Վարժություն 77:** Թարգմանել գրաբար. *համրին, եզրերը, ազդրից, անգղերը, անգղերով, տեղերին, տարրերը, տարրերից:*

**Առաջադրանք 69:** Կարդալ «Ընթերցանություն 39»-ը և առանձնացնել գործածված թեք հոլովներով ձևերը, որոշել նրանց հոլովը:

**Առաջադրանք 70:** Կարդալ «Ընթերցանություն 40»-ը և առանձնացնել գործածված թեք հոլովներով ձևերը, որոշել հոլովը, գտնել հոլովակերտը:

**Առաջադրանք 71:** Ընտրել ե հոլովման հինգ բառ և հոլովել:

**Հարցեր 20:** ա) Ինչպե՞ս է կազմվում ե հոլովումը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են գործածվում ե հոլովման դեպքում:

գ) Ինչպիսի՞ բառեր են պատկանում ե հոլովման:

## Բ. Խառն հոլովում

**§ 72.** Գրաբարում ներդրական խառն հոլովման է պատկանում *ի-ա* հոլովումը: Ի տարբերություն մյուս հոլովումների և հատկապես վերջադրական խառն *ի-ա* հոլովման՝ այս դեպքում հոլովիչ ձայնավորները դրվում են հոլովվող բառի ներսում՝ բառավերջի ն ձայնորդից առաջ:

## Ի - ա հոլովում

**§ 73.** Այս հոլովման ժամանակ ևս հոլովիչները հանդես են գալիս հոլովվող բառի ներսում. եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում՝ *ի*-ն, իսկ եզակի գործիական, հոգնակի սեռական, տրական, բացառական և գործիական հոլովներում՝ *ա*-ն: Եզակի բացառական հոլովում *ի*-ն ընկնում է, ըստ որում որոշ բառեր այդ հոլովում ստանում են նաև մի *ա* ձայնավոր տարր, հոգնակի ուղղական հոլովում *ն*-ից առաջ հանդես են գալիս *ի* կամ *ու* ձայնավոր տարրերը: Այս հոլովման դեպքում գործածվում են *է* և *ք* հոլովակերտները:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | մատն | մատունք |
| սեռ. | մատին | մատանց |
| տր. | մատին | մատանց |
| հայց. | (զ)մատն | (զ)մատունս |
| բաց. | ի մատնէ// ի մատանէ | ի մատանց |
| գործ. | մատամբ | մատամբք |

**§ 74.** Ներդրական *ի-ա* հոլովման պատկանում են՝

ա) *Ն*-ով և նախորդող բաղաձայնով վերջացող, հիմնակա-նում երկվանկ որոշակի թվով բառեր. *ազն* (եզակի բացառական՝ *յազնէ,* հոգնակի ուղղական՝ *ազինք* «ցեղ, սերունդ»), *ազն* (հոգ-նակի ուղղական՝ *ազունք* «ազնվական»), *ափն (ափունք), բեռն (բեռինք), բուռն (բռունք), գառն (գառինք), դաշն (դաշինք), եզն (եզինք), եղն (եղինք.* «եղնիկ»), *լեառն* (սեռական և տրական՝ *լերին,* բացառական՝ *ի լեռնէ // ի լեառնէ,* հոգնակի ուղղական՝ *լերինք*), *խաշն (խաշինք), կամն (կամունք), հարսն (հարսունք), մասն (մասունք), նեռն (նեռինք), ողն (ողունք), տոռն* (*տոռունք* «լար, պարան») և այլն:

**Ծանոթություն 24**: Վերը բերված բառերից մի քանիսը, հան-դես գալով իբրև բարդության երկրորդ բաղադրիչ, հոգնակի ուղ-ղական *ինք* - ի փոխարեն, ինչպես էր առանձին ձևի մեջ, *ունք* է

ստանում. *ազն-ազինք,* բայց՝ *դիւցազն-դիւցազունք, բեռն-բեռինք,* բայց՝ *մեծաբեռն-մեծաբեռունք:*

**Ծանոթություն 25:** Ձեռն-ը եզակի թվում ունի ներդրական, իսկ հոգնակիում՝ վերջադրական հոլովում. եզակի սեռական և տրական՝ *ձեռին,* բացառական՝ *ի ձեռանէ,* գործիական՝ *ձեռամբ,* հոգնակի ուղղական, սեռական և տրական՝ *ձեռաց,* բացառական՝ *ի ձեռաց,* գործիական՝ *ձեռաւք (օք):* Այդպես նաեւ՝ *ոտն:*

բ) *Քար* բառը, որը հոգնակի թվում հոլովվում է այս հոլովմամբ, իսկ եզակիում՝ *ի* պարզ հոլովմամբ. սեռական և տրական՝ *քարի,* բացառական՝ *ի քարէ,* գործիական՝ *քարիւ,* հոգնակի ուղղական՝ *քարինք,* սեռական և տրական՝ *քարանց,* բացառական *ի քարանց, գործիական՝ քարամբք* (տե՛ս գծապատկեր):

**Գծապատկեր 7**

| | Ներդրական հոլովում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պարզ | | | | Խառն | |
| | ա | | ի | | ի-ա | |
| | եզ. | հոգն. | եզ. | հոգն. | եզ. | հոգն. |
| Ուղղ. | ø | ունք (-անք) | ø | երք -եղք | ø | -ինք -ունք |
| Սեռ. | ան | անց | եր -եղ | երց -եղց | -ին | -անց |
| Տր. | ան | անց | եր -եղ | երց -եղց | -ին | -անց |
| Հայց. | ø | ունս -ս (-անս) | ø | երս -եղս | -ø | -ինս -ունս |
| Բաց. | է | անց | է | երց -եղց | -է | -անց |
| Գործ.. | ամբ | ամբք | երբ -եղբ | երբք -եղբք | -ամբ | - ամբք |

**Ընթերցանություն 41**: «Եւ փողոց տուեալ ի վերայ բլերն, Սմբատայ յաջ թևն, և Վարազայ յահեակն, և սկսան արեամբ թաքաւել ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ մածաւ սուրն ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել. քանզի մածեաւ արիւնն ընդ սուրն

և ընդ ձեռնատեղին, և կոտորեցաւ: Եւ իբրև տեսին պարսիկքն, եթէ ոչ կարաց առնուլ այլ սուր, ձայն տուեալ՝ ասէին ցմիմեանս. «Փութասջի՛ք, զի մածեալ է ձեռն քաջին, և կապեաց զնա աստուածն իւր, և սուրն ի ձեռին կոտորեալ է»: Եւ պատեցին զնա բազումք. և իբրև զփայտ չոր, որ ի ճեղքիլն ճարճատէ, այնպէս ճարճատէին ի վերայ գլխոյն Սմբատայ զէնք: Իսկ նա բարձր ձայնիւ ասէր. «Վա՛յ քաջութեանդ ձերոյ, զի ոչ կարացիք հերձուլ զգլուխ իմ»: Զայս ասաց, զի յիշեսջիք լիցի բանն: Բայց իբրև գիտաց, եթէ կարի սաստկացան ի վերայ նորա, ձայն բարձեալ՝ ասէ. «Ո՞ւր ես, բազո՛ւկ քաջ և մո՛ւրճ հզօր ընդդէմ թշնամեաց, գաւազա՛ն իմոյ ծերութեանս, իշխա՛ն Պալունեաց. յառաջ որպէս քաջ արծուի, զի անզերք և բուէճք պատեցին զիս»: Եւ նորա թողեալ զահեակ թևն յորդին իւր Վահան, որ զՎահանովիտն շինեաց, և ինքն քաջաբար որպէս զարծուի՝ կանչեալ դիմեաց ի վերայ: Որ և ի դողման հարեալ ամենայն երիվարացն, և հասեալ ի թիկունս Սմբատայ, և բախեալ զտէգն ի վերայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ ողն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն» (*Յովհ. Մամիկ.,* էջ 40 - 41):

**Ընթերցանություն 42:** «Եւ ընդ ծագել[1] արեգականն խմբեցաւ պատերազմն. և իբրև բախեցին ընդ միմեանս՝ նախ զօրացեալ գունդն Հայոց՝ հարկանէին բազում հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զթշնամիսն սատակէին զբազումս: Եւ դարձեալ զօրացեալ՝ դարձան ի փախստենէ, և դիմադարձեալ զայրագին ցասմամբ՝ լնուին արիաւրօք զբազմութիւն ռամիկ ժողովոյն. և ի փախուստ դարձուցեալ զոմանս ի նախարարացն և ի նոցին հեծելոցն և զռամիկսն որք ընդ նոսա, զի զբազումս ի նոցանէն հարեալ դաշտացն արկանէին[2]:

Իսկ քաջայաղթ նահատակքն թէպէտ և նուազունք էին ի մէջ չարաշուք որսողացն, սակայն ոչ ինչ զանգիտեցին ի դառնաշունչ օրհասէն. այլ մինչ ի սպառ գումարեալք ոգւով չափ՝ մարզէին զմիմեանս բանիւք ասելով. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր և զտեղի փառատ-

րութեան Աստուծոյ մերոյ, այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն. և ապա՝ լիցի, զոր կամիցին» (*Ղեւոնդ,* էջ 149):

1. Ընդ ծագել - ծագելու ժամանակ:
2. Տապաստ անկանէին - գետնին էին փռում, սպանում էին:

**Վարժություն 78:** Հետևյալ բառերը հոլովել *ի - ա* ներդրական հոլովմամբ. *ազն, ափն, բեռն, բուռն, գառն, դաշն, եզն:*

**Վարժություն 79:** Որոշել հետևյալ ձևերի հոլովը. *եղանց, լերինք, զլերինս, լերամբք, խաշինք, զխաշինս, ի խաշանց, խաշամբք, կամունք, զկամունս, կամանց, հարսունք, զհարսունս, հարսին, հարսամբ, հարսամբք:*

**Առաջադրանք 72:** Վերհիշել *ի- ա* ներդրական հոլովման հինգ գոյական և հոլովել:

**Առաջադրանք 73:** Կարդալ «Ընթերցանություն 41»-ը, առանձնացնել թեք ձևերով գոյականները, որոշել դրանց հոլովումը և հոլովը:

**Առաջադրանք 74:** Կարդալ «Ընթերցանություն 42»-ը, առանձնացնել գոյականների այն թեք ձևերը, որոնք ունեն որևէ հոլովակերտ:

**Հարցեր 21:** ա) Ի՞նչ կազմություն ունի ներդրական *ի-ա* հոլովումը:

բ) Ի՞նչ հոլովակերտներ են մասնակցում այդ հոլովման գոյականների ձևավորմանը:

գ) Ինչպիսի՞ գոյականներ են հոլովվում ներդրական խառն *ի-ա* հոլովմամբ:

### գ) Անկանոն հոլովում

**§ 75.** Գրաբարում որոշ թվով գոյականներ հոլովվելու ժամանակ ի հայտ են բերում հնչյունական և ձևակազմական անսովոր փոփոխություններ, ակնհայտ շեղումներ հոլովման հայտնի կանոններից: Նման հոլովման գոյականները սովորաբար անվանվում են անկանոն (կամ զարտուղի): Դրանք են՝ *այր, տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, տիկին, գիւղ, աւր (օր), տիւ:* Դրանց հոլովման անսովոր լինելը հիմնականում նախագրային հայերենի հոլովման համակարգի օրինաչափությունների պահպանումն է հին գրական հայերենի համակարգում: Ավելին, դա հիմնականում հասել է մինչև արդի հայերենի փուլը:

**§ 76.** Անցյալում քերականները փորձել են, այնուամենայնիվ, որոշ չափով «խմբավորել» այդ գոյականների անկանոնությունը (Գ. Ավետիքյան, Վ. Չալըխյան, Ա. Բագրատունի և այլք): Նման փորձ արվել է նաև մեր օրերի քերականների կողմից: Այսպես, Ա. Աբրահամյանը կարծում է, որ «այդ բառերից *այր, տէր, հայր, մայր, եղբայր* բառերը հոլովվում են *ա* հոլովիչով, *քոյր* բառը՝ *ե* հոլովիչով, *կին* և *տիկին* բառերը՝ *ո, ա* հոլովիչներով (խառն հոլովում), *գիւղ* բառը՝ *ե, ի* հոլովիչներով (խառն հոլովում), *աւր* բառը՝ *ու* հոլովիչով, *տիւ* բառը՝ *ա* հոլովիչով (*Ա. Ա. Աբրահամյան,* Գրաբարի ձեռնարկ, Ե.,1976, էջ 53):

**§ 77.** Տալիս ենք այդ գոյականների հնարավոր խմբավորմամբ հոլովումը:

ա) *Այր* («տղամարդ»), *տէր (< տի - այր).*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այր, տէր | արք, տեարք |
| սեռ. | առն, տեառն | արանց, տեարց // տերանց |
| տր. | առն, տեառն | արանց, տեարց // տերանց |
| հայց. | (զ)այր, (զ)տէր | (զ)արս, (զ)տեարս |
| բաց. | յառնէ, ի տեառնէ | յարանց, ի տեարց // ի տերանց |
| գործ. | արամբ, տերամբ | արամբք, տերամբք |

**Ծանոթություն 26:** Հիմնականում այսպես են հոլովվում նաև այդ բառերից բաղադրված գոյականները՝ *սկեսրայր, քեռայր, տանուտէր, զաւառատէր* եւ այլն:

բ) *Հայր, մայր, եղբայր.*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | հայր, մայր, եղբայր | հարք, մարք, եղբարք |
| սեռ. | հաւր, մաւր, եղբաւր | հարց // հարանց, մարց, եղբարց |
| տր. | հաւր, մաւր, եղբաւր | հարց // հարանց, մարց, եղբարց |
| հայց. | (զ)հայր, (զ)մայր, (զ)եղբայր | (զ)հարս, (զ)մարս, (զ)եղբարս |
| բաց. | ի հաւրէ, ի մաւրէ, յեղբաւրէ | ի հարց// ի հարանց, ի մարց, եղբարց |
| գործ. | հարբ//հարամբ, մարբ, եղբարբ | հարբք// հարամբք, մարբք, եղբարբք |

**Ծանոթություն 27:** Այդպես են հոլովվում նաև դրանցից բաղադրված գոյականները. *նախահայր, տիրամայր, հաւրեղբայր* և այլն:

գ) *Քոյր.*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | քոյր | քորք |
| սեռ. | քեռ | քերց |
| տր. | քեռ | քերց |
| հայց. | (զ)քոյր | (զ)քորս |
| բաց. | ի քեռէ | ի քերց |
| գործ. | քերբ | քերբք |

**Ծանոթություն 28:** Այդպես են հոլովվում նաև *հաւրաքոյր (հօրաքոյր), մաւրաքոյր (մօրաքոյր)* և *-քոյր* վերջնաբաղադրիչով գոյականները:

**Ծանոթություն 29:** Գրավոր աղբյուրներում նկատվում են *բոյր գոյականի* այլ կարգի թեքման նմուշներ. *բոյր - բուեր (քւեր, քըւեր), բուերց (քւերց, քըւերց)* և այլն:

դ) *Կին, տիկին (< տի- կին).*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | կին, տիկին | կանայք, տիկնայք |
| սեռ. | կնոջ, տիկնոջ | կանանց//կանաց, տիկնայց//տիկնաց |
| տր. | կնոջ, տիկնոջ | կանանց/ կանաց, տիկնայց//տիկնաց |
| հայց. | (զ)կին, (զ)տիկին | (զ)կանայս, (զ)տիկնայս |
| բաց. | ի կնոջէ, ի տիկնոջէ | ի կանանց//ի կանաց, ի տիկնայց//ի տիկնաց |
| գործ. | կանամբ // կնաւ, տիկնամբ // տիկնաւ | կանամբք, տիկնամբք |

**Ծանոթություն 30:** Այդպես են հոլովվում նաև` *առնակին* «ամուսնացած կին», *տեգրակին, տանտիկին* և այլն:

ե) *Գիւղ.*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | գիւղ | գիւղք |
| սեռ. | գեղջ | գիւղից |
| տր. | գեղջ | գիւղից |
| հայց. | (զ)գիւղ | (զ)գիւղս |
| բաց. | ի գեղջէ | ի գիւղից |
| գործ. | գիւղիւ | գիւղիւք |

զ) *Այր.*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այր | արք |
| սեռ. | առն | արանց |
| տր. | առն | արանց |
| հայց. | զայր | զարս |
| բաց. | յառնէ | յարանց |

| | |
|---|---|
| գործ. աւուրբ | աւուրբք |

է) *Տիւ.*

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | տիւ | տիւք |
| սեռ. | տուընջեան | - |
| տր. | տուընջեան | - |
| հայց. | (զ)տիւ | (զ)տիւս |
| բաց. | ի տուընջենէ/ ի տուէ | - |
| գործ. | տուընջեամբ | - |

**Ծանոթություն 31:** Եզակի թեք ձևերում հիմքի և վերջավորության միջև երևան է գալիս *ընջ* միջածանցը: Սեռական հոլովում ստանում է *-եան* վերջավորությունը, որի հիման վրա բառը երբեմն դրվում է ներդրական *ա* պարզ հոլովման մեջ:

**Ծանոթություն 32:** *Տիւ* գոյականի հոգնակիում պակասում են հայցականից բացի մյուս ձևերը:

**Ընթերցանություն 43:** «Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զտեառնն զխաչական զփրկութեանն զպատարագն զոհութեան *(Բուզ.,* էջ 7): Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զքարձ կալեալ է (*ն. տ.,* էջ 142): Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին, որք էին ի տաճարին (*ն. տ.,* էջ 145): Եւ ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն (*ն. տ.,* էջ 158): Զտիւ և զգիշեր ոչ դադարէր ի խրատելոյ և ի բողոքելոյ (*ն. տ.,* էջ 67): Ի վերայ քերց և եղբարց... հանապազ կայր զօրավարն Մուշեղ (*ն. տ.,* էջ 179): Շնութիւն ի մերձենալոյ ի միմեանս առն և կնոջ լինին (*Եզնիկ,* էջ 37): Եւ եթէ զամենայն օր շրջիցին, զիա՞րդ զարևն աւուր աւուր ի նոյն արևելս ածիցեն (*ն. տ.,* էջ 187): Իբրև ծակեաց, ասեն, Արիմնն զորովայն և եկն եկաց առաջի հօրն, ոչ ծանեաւ զնա հայրն (*ն. տ.,* էջ 135): Զիա՞րդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին և ոչ միաբան (*Եղիշէ,* էջ 170): Ի տեառնէ է հատուցումն արդար վաստակոց ձերոց (*ն. տ.,* էջ 11): Զայն

պաշտօնէիցն ի տուէ և ի գիշերի անհատ էին ի սուրբ սաղմոսն (*ն. տ.,* էջ 68): Ղևոնդ երէց ի Վանանդայ՝ ի գեղջէ Իջաւանից (*ն. տ.,* էջ 179): Աւր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու (*Ղևոնդ,* էջ 144): Քանզի ի յարութեան ո՛չ կանայս առնեն և ո՛չ արանց լինին, այլ այնպէս են (*ն. տ.,* էջ 97): Եկեալ ի գիւղն, որ Ալուարն կոչեն (*Փարպ.,* էջ 154): Ի գեղջէն, որում անունն էր Խոդոցիմք (*ն. տ.,* էջ 38): Զօրավարն Հայոց Մամիկոնեան Վահան այսպէս մոցէր հան-դերձ երանելի եղբարբն Վասակաւ (*ն. տ.,* էջ 135): Զոր ասացէք դուք զեղբօրէն ձերմէ՝ զՊերոզէ (*ն. տ.,* էջ 173): Մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինոյ (*ն. տ.,* էջ 9):

**Վարժություն 80**: Թարգմանել ժամանակակից հայերենից գրաբար. *տղամարդու, տղամարդուց, տղամարդկանցից, տերե-րից, տերերին, տերերով, հայրերը, հայրերից, հայրերին, հայրե-րով, մայրը, մորից, մորով, եղբայրները, եղբորից, եղբորով, քրոջ, քրոջը, քույրերը, կանայք, կանանց, կանանցով, կանանցից, կինը, կնոջով, կնոջից, տիկնոջով, տիկնոջից, տիկիններից, տիկին-ներին, տիկիններով, տիկինները, գյուղը, գյուղից, գյուղով, ցերե-կով, ցերեկվանից, օրերով, օրերը, գյուղերից:*

**Վարժություն 81:** Հետևյալ գրաբար նախադասություններից առանձնացնել անկանոն հոլովման գոյականները և որոշել նրանց հոլովը: Իսկ թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, և քերբ իւրով Խոսրովիդխտով, հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց: Շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Կանայք՝ յարանց իւրեանց, և մանկունք՝ ի հարց իւրեանց, և մարք ի բերանոյ տղայոց իւրեանց յափշտակէին զկերակուրն:

**Առաջադրանք 75:** Կարդալ «Ընթերցանություն 43»-ը և նրա-նում գործածված անկանոն հոլովման գոյականները վերլուծել ըստ հոլովի և թվի:

**Առաջադրանք 76:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *ուրախ լինել, զտխի և զգիշեր, աւուր աւուր, երկպառակ լինել, որում անուն էր, աւուր շաբաթու:*

**Հարցեր 22:** ա) Որո՞նք են գրաբարի անկանոն հոլովման գոյականները:

բ) Ինչո՞ւ է այդ գոյականների հոլովումն անկանոն:

գ) Անկանոն հոլովման գոյականներն ըստ հոլովումների ինչպիսի՞ խմբավորման կարելի է ենթարկել:

# 2. ԱԾԱԿԱՆԱՆՈՒՆ

## ա) Ածականի աստիճանակազմությունը

**§ 78.** Գրաբարում ևս ածականը ցույց է տալիս առարկայի հատկություն: Ածականները լինում են երկու տեսակ՝ որակական և հարաբերական: Որակական ածականներն ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական (համեմատական) և գերադրական: Ածականի աստիճանակազմությունն ավելի շուտ բառակազմական երևույթ է, քան ձևաբանական, որովհետև դրանց համար չկան հատուկ ձևեր, այլ գոյություն ունեն առանձին բառեր կամ ածանցներ, որոնցով բաղադրվում է այս կամ այն աստիճանը:

**§ 79.** Ածականի բաղդատական (համեմատական) աստիճանը կազմվում է երկու կերպ՝ ա) *-գոյն* վերջածանցով, բ) *քան* նախադրությամբ:

ա) Բաղդատական աստիճանի կազմության սովորական եղանակը ածականի վրա *-գոյն* վերջածանցի ավելացումն է: Այդ եղանակով ածականն ստանում է մի նոր իմաստ: Օրինակ՝ *արագ - արագագոյն* («ավելի արագ»), *գեղեցիկ - գեղեցկագոյն, լաւ - լաւագոյն, մեծ - մեծագոյն, փառքար - փառքարագոյն:*

բ) *Քան* նախադրությամբ բաղդատական աստիճանը կազմվելիս այդ նախադրությունը դրվում է ածականից հետո, որին հաջորդում է բաղդատելի եզրը՝ վերցված *քան* նախադրության խնդրով (հայցական հոլովով): Օրինակ՝ գեղեցիկ *քան* (զնա), արագ *քան* (զձի), մեծ *քան* (զծով), փառքար *քան* (զապիկարութիւն):

**Ծանոթություն 33:** Երբեմն *քան* - ը դրվում է *-գոյն* ածանցով արդե՛ն դրված ածականի վրա. *մեծագոյն քան* (զերկիր), *բարձրագոյն քան* (զաշտարակ), *խոհեմագոյն քան* (զբարեկամ):

**§ 80.** Ածականի գերադրական աստիճանը կազմվում է *կարի, յոյժ, սաստիկ, անհնարին* բառերի (մակբայների) օգնությամբ:

Դրանք ավելացվում են դրական աստիճանիածականի վրա: Օրինակ՝ *կարի* լաւ, *յոյժ* գեղեցիկ, *սաստիկ* ամօթալի, *սաստիկ* գեղեցիկ, *անհնարին* չար, *յոյժ* ցանկալի, *կարի* վատասիրտ:

**Ծանոթություն 34:** Գրավոր աղբյուրներում երբեմն հանդիպում են *-գոյն*-ով կազմված ածականի ձևեր, որոնք արտահայտում են գերադրական աստիճանի իմաստ: Օրինակ՝ Կոտորէ զամենեսեան, և ապրի *կրտսերագոյնն* միայն, որ է Նինուաս (*Խոր.,* էջ 68):

**Ընթերցանություն 44.** «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս: Գտանի, որ ինչ առ սոցա ժամանակաւ՝ յառաջագոյն գրեալ յայլոց, զգալուստ առաքելոյն Թադէի ի Հայս, և հաւատալ Սանատրկոյ, և թողուլ զհաւատսն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն առաքելոյն և որք ընդ նմա՝ ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրեարս գալ[1] և ընդունել զմարմին Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին. և մարտիրոսանալ[2] դստերն արքայի Սանդխտոյ հուպ ի ճանապարհն. և ապա ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց, և փոխել յառապարն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ, ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք ռճով երկրորդել[3]: Դոյնպէս և որ ինչ վասն կատարմանն Ադդէի աշակերտի առաքելոյն յԵդեսիայ յորդւոյն Աբգարու, գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ:

Որ իբրև թագաւորաց յետ մահուան հօրն ոչ եղև ժառանգորդ հայրենի առաքինութեանն, այլ երաց զտաճարս կռոցն և կալաւ զպաշտօն հեթանոսութեան: Եւ յղեաց առ Ադդէ, զի արասցէ նմա խոյր բեհեզեայ անգուածով ոսկւոյ[4], որպէս յառաջագոյն առնէր հօրն նորա: Եւ պատասխանի ընկալաւ, թէ «ոչ արասցեն ձեռք իմ խոյր գազաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանւոյն» (*Խոր.,* էջ 184):

1. *Յիրեարս գալ* - շարժվել:

2. *Մարտիրոսանալ* - նահատակվել:

3. *Ոճով երկրորդել* - մանրամասն, այլևայլ կերպ երկրորդել:

4. *Արասցէ նմա խոյր բեհեզեայ անգուածով ոսկւոյ* - նրա համար բեհեզյա խույր կարի ոսկե հյուսվածքով («գործքով»):

**Վարժություն 82:** Կազմել հետևյալ դրական աստիճանի ածականների բաղդատականները. *կարմիր, սեւ, կանաչ, սուրբ, մաքուր, անաղարտ, ատոք* («լավ լցված, տռուզ»), *սեղմ, կարճ, բարակ, առատ, մութ, խաւար, ժանտ, չքնաղ:*

**Վարժություն 83:** Կազմել նախորդ վարժության մեջ բերված ածականների գերադրականը:

**Վարժություն 84:** Մտաբերել որակական ածականներ և կազմել նրանց բաղդատական և գերադրական աստիճանները:

**Առաջադրանք 77:** Կարդալ «Ընթեանություն 44» -ը, առանձնացնել ածականները և նշել դրանց համեմատության աստիճանները:

**Առաջադրանք 78:** Գտնել հետևյալ ածականների համեմատական աստիճանը. *մտերմագոյն, մտերիմ քան (զնա), գեղեցկագոյն, բարձրագոյն, վսեմագոյն քան (զերկինս), փոքրագոյն քան (զաւազ), կենդանի քան (զջուրն), բարի քան (զշուն), հզօրագոյն, ծանրագոյն, սաստիկ խոհեմ, կարի փոքր, յոյժ հարազատ:*

**Հարցեր 23:** ա) Քանի՞ տեսակ են լինում ածականները:

բ) Որո՞նք են ածականի համեմատության աստիճանները:

գ) Ինչպե՞ս է կազմվում ածականի բաղդատական աստիճանը:

դ) Ինչպե՞ս է կազմվում ածականի գերադրական աստիճանը:

## բ) Ածականի հոլովումը

§ 81. Ածականը՝ իբրև անուն խոսքի մաս, գրաբարում ունի առհասարակ գոյականին բնորոշ այնպիսի քերականական կարգեր, ինչպիսին են թիվը և հոլովը: Ածականները լինում են մեկ

(եզակի թիվ) և մեկից ավելին (հոգնակի թիվ), այսինքն՝ առարկայի հատկությունը՝ հատկանշումը, կարող է լինել մեկը կամ մեկից ավելին: Այնուհետև, ածականը հոլովվում է՝ հանդես գալով գոյականաբար:

**§ 82.** Ածականներն ընդհանուր առմամբ հոլովվում են վերջադրական պարզ *ի, ո, ու,* խառն *ի - ա, ո - ա* հոլովումներով: Հոլովները կազմվում են ճիշտ նույն ձևով, ինչ գոյականների հոլովման դեպքում: Մի քանի ածականներ, սակայն, *ո* հոլովմամբ հոլովվելիս եզակի տրական հոլովում ստանում են սեռական հոլովից տարբեր *-ում* հոլովակերտ:

Օրինակ՝ եզակի թիվ՝ ուղղ. *հին,* սեռ. *հնոյ,* տր. *հնում* և այլն, եզակի թիվ՝ ուղղ. *նոր,* սեռ. *նորոյ,* տր. *նորում* և այլն, եզակի թիվ՝ ուղղ. *վերին,* սեռ. *վերնոյ,* տր. *վերնում* և այլն:

ա) *Ի* հոլովմամբ հոլովվում են որոշակի թվով ածականներ. *ահեղ, ամբողջ, երկայն, զգօն, խօթ* («ծույլ, հիվանդ, տկար»), *ծանօթ, հպարտ, ողորկ, պերճ, վեհ* և այլն:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ծանօթ | ծանօթք |
| սեռ. | ծանօթի | ծանօթից |
| տր. | ծանօթի | ծանօթից |
| հայց. | (զ)ծանօթ | (զ)ծանօթս |
| բաց. | ի ծանօթէ | ի ծանօթից |
| գործ. | ծանօթիւ | ծանօթիւք |

**Ծանոթություն 35:** *-Գոյն* ածանցն ունեցող (բաղդատական աստիճանի) ածականները հոլովվում են *ի* հոլովմամբ: Օրինակ՝ *մեծագոյն - մեծագունի - մեծագունից, լաւագոյն - լաւագունի - լաւագունից, ազնուագոյն - ազնուագունի - ազնուագունից* և այլն:

բ) *Ո* հոլովմամբ հոլովվում են որոշակի թվով բառեր. *ամուլ, արդար, խոր, ծեր, հին, նոր,* այլև այն բառերը, որոնք վերջանում են *-ային, -ին* ածանցներով՝ *ամառնային* (սեռ. *ամառնայնոյ*), *աշ-*

*խարհային (աշխարհայնոյ), դաշտային (դաշտայնոյ), վերին (վերնոյ), վերջին (վերջնոյ)* և այլն:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | արդար | արդարք |
| սեռ. | արդարոյ | արդարոց |
| տր. | արդարոյ | արդարոց |
| հայց. | (զ)արդար | (զ)արդարս |
| բաց. | յարդարէ | յարդարոց |
| գործ. | արդարով | արդարովք |

գ) *Ու* հոլովմամբ հոլովվում է *ր*-ով վերջացող վեց ածական. *թանձր, ծանր, կարծր, մանր, փոքր, քաղցր*:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | քաղցր | քաղցունք |
| սեռ. | քաղցու | քաղցունց |
| տր. | քաղցու | քաղցունց |
| հայց. | (զ)քաղցր | (զ)քաղցունս |
| բաց. | ի քաղցուէ | ի քաղցունց |
| գործ. | քաղցու | քաղցումբք |

դ) Վերջադրական խառն *ի - ա* հոլովմամբ հոլովվում են որոշակի թվով ածականներ՝ *ազահ, ազատ, աղքատ, բազում (բազմի, բազմաց), դաժան, երիտասարդ, լաւ, հզօր, ճարտար, մեծ, նուազ, չար, պայծառ, սէգ (սիգի), վայրագ, տխմար, տկար, փարթամ, քաջ, օտար* և այլն, ինչպես նաև *-ական, -եղ* ածանցներով ածականները՝ *անձախական, ասպնջական, արուեստական, բացական, բաւական, իմաստասիրական, մեհենական, սեփական, տոհմական, օրինական, զօրեղ, հիւթեղ, ուժեղ* և այլն:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ճարտար | ճարտարք |
| սեռ. | ճարտարի | ճարտարաց |

| | | |
|---|---|---|
| տր. | ճարտարի | ճարտարաց |
| հայց. | (զ)ճարտար | (զ)ճարտարս |
| բաց. | ի ճարտարէ | ի ճարտարաց |
| գործ. | ճարտարաւ | ճարտարաւք (օք) |

ե) Վերջաղրական խառն *ո-ա* հոլովմամբ թեքվում են որոշակի թվով ածականներ. *ամեհի, առաքինի, բարի, կատաղի, յուռթի* («առատ, ուռճացած») և այլն:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | բարի | բարիք |
| սեռ. | բարւոյ | բարեաց |
| տր. | բարւոյ | բարեաց |
| հայց. | (զ)բարի | (զ)բարիս |
| բաց. | ի բարւոյ | ի բարեաց |
| գործ. | բարեաւ | բարեաւք (օք) |

**§ 83**. Ածականները գոյականների հետ գործածվում են երկու կարգի՝ նախադաս և հետադաս: Գրաբարի համակարգի առումով առավել հատկանշականը ածականի հետադաս կիրառությունն է (տե՛ս § 178):

ա) Նախադաս ածականներից բազմավանկ ածականները սովորաբար չեն հոլովվում, այսինքն՝ իրենց գոյականի հետ հոլովով չեն համաձայնում (տե՛ս § 178): Այս ընդհանուր կանոնից բացառություն են կազմում որոշ երկվանկ ածականներ. *բարի, բարձր, փոքր, մանր* և այլն: Իսկ միավանկ ածականները նախադաս գործածվելիս, որպես կանոն, հոլովվում են:

բ) Հետադաս ածականները հավասարապես, իբրև կանոն, հոլովվում են, այսինքն՝ թվով և հոլովով համաձայնում են իրենց գոյականների հետ: Կան ընդհանուր կանոնից չնչին բացառություններ, որոնք գրեթե չեն խանգարում երևույթի բացարձակ լինելուն:

**Ընթերցանություն 45**. «Այսպիսի անհաւատ և դանդաչանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց չէր պարտ ամենևին բնաւ առնել պատասխանի, զի բաւական էր իւրեանց իսկ անմտութիւնն յանդիմանել զնոսա անդստին ի նոցին բանից, որ ընդ միմեանս կռուին, և միմեանց հակառակ են: Բայց քանզի այսու իմն մեծարոյ երևին առաջնորդք քէշին[1] իւրեանց հնազանդեցելոցն, և խեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն զնոսա ի խորխորատ, հարկ է տալ պատասխանի, ի ցուցանել, թէ ոչ ինչ աւելի քան զոր Մանի, զոր ինքեանք մորթեցին, ասեն:

Զի նա երկու արմատս բարւոյ և չարի ասէ, և զայն ոչ յղու-թեամբ և ծննդեամբ, այլ ինքնակացս՝ միմեանց հակառակ. և նոքա զնոյն ասեն՝ տենչանօք Զրուանայն յղութեամբ և ծննդեամբ: Եւ թէ նոյն քէշ է երկոցունց, ընդէ՞ր ատիցեն մօգք զզանդիկս, եթէ ոչ զի վարուքն զատ են միմեանց. թէպէտ և կերպարանօք և ոչ ճշմար-տութեամբ: Այլ ի քէշին մի են երկոքեան. նոքա՝ երկարմատեանք, և սոքա՝ նոյնպիսիք. նոքա՝ արեւապաշտք, և սոքա՝ ծառայք արեգական. նոքա ամենայն անշնչոց շունչ կարծեն, և սոքա նոյն օրինակ զնոյն իմանան:

Բայց զի Մանի կամեցաւ վերագոյն քան զնոցայն կեղծեօք վարս ցուցանել, թէ ամենևին իսկ ազատ ի կարեաց ցանկութեանց իցէ, և ոչ քան զնոցայն միայն, այլ և քան զամենայն քէշից, ուստի յանդիմանել յաղջկանց խաղտելոյ մորթազերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց: Որով յայտ է, թէ վարուք նեթ մեկնեալ են ի միմեանց. զի նոքա կերպարանողք են, և սոքա՝ զեղխք[2], և յայտ յանդիման անձնադիւրք, այլ կրօնիւք՝ նոյնք և նոյնպիսիք» (*Եզնիկ,,* էջ 82):

1. *Քէշ* - զրադաշտական, հին պարսկական կրոն, աղանդ:
2. *Զեղխ* - չափն անցած՝ վարքով և կենցաղով, ագահ, ան-կուշտ, անառակ:

**Վարժություն 85:** Հոլովել *ի* հոլովման հետևյալ ածականները. *երկայն, զգօն, ծանօթ, ողորկ, պերճ, վեհ:*

**Վարժություն 86:** Հոլովել *ո* հոլովման հետևյալ ածականները. *ամուլ, արդար, ծեր, նոր, ամառնային, դաշտային, վերին, վերջին:*

**Վարժություն 87:** Հոլովել *ու* հոլովման հետևյալ ածականները. *ծանր, կարծր, մանր, փոքր:*

**Վարժություն 88:** Հոլովել *ի-ա* և *ո-ա* խառն հոլովումների պատկանող հետևյալ ածականները. *ազատ, աղքատ, ամեհի, առաքինի, իմաստասիրական, վայրագ, բարի, կատաղի, մեհենական, սեփական, զորեղ, հիթեղ, ապնջական, պայծառ:*

**Առաջադրանք 79:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *տիկնայք, փափկասուն, աւուրք բազումք, մեծաւ խնդութեամբ, զկուռս համերս, թագաւորք օտարք, իւղովք անուշիւք, ախտից մահաբերից, իմաստից ճարտարաց:*

**Առաջադրանք 80:** Կազմել հինգ բառակապակցություն գոյականով և *ի* հոլովման ածականով:

Օրինակ՝ սեղան *մեծ,* փայտ *երկայն*:

**Առաջադրանք 81:** Կարդալ «Ընթերցանություն 45»-ը և առանձնացնել ածականները, նշել նրանց հոլովը և հոլովումը, այլև համեմատության աստիճանը:

**Առաջադրանք 82:** Կազմել հետևյալ ածականների համեմատության աստիճանները. *արդար, ընկերային, ճարտար, փարթամ, անրջական, ուրախ, կարճ, կենցաղասէր, մոլար, սակաւ, սուղ, վատաշ, փափկասուն, սպիտակ:*

**Հարցեր 24:** ա) Ի՞նչ է ածականի աստիճանակազմությունը:

բ) Ինչպե՞ս են կազմվում ածականի համեմատության աստիճանները:

գ) Ինչպե՞ս են հոլովվում ածականները:

դ) Ի՞նչ առնչություն ունի ածականը գոյականի հետ:

ե) Ո՞ր հոլովման ածականներն ունեն սեռականի և տրականի տարբերություն:

# 3. ԹՎԱԿԱՆԱՆՈՒՆ

## ա) Թվականի տեսակները

**§ 84**. Գրաբարում թվականը ցույց է տալիս առարկայի թիվը: Թվականները լինում են երեք տեսակ՝ քանակական, դասական և անձներական: Քանակական թվականը ցույց է տալիս առարկայի թվային քանակ: Օրինակ՝ *մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց* և այլն: Դասական թվականը ցույց է տալիս առարկայի թվային դաս (կարգ): Օրինակ՝ *առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ* և այլն: Անձներական թվականը ցույց է տալիս առարկայի քանակային միասնություն: Օրինակ՝ *երկոքին // երկոքեան, երեքին // երեքեան, չորեքին // չորեքեան, հնգեքին // հնգեքեան, վեցեքին // վեցեքեան* և այլն:

**§ 85**. Թվականի երեք տեսակներն էլ ներկայացնում են կազմության զգալի տարբերություններ: Դրանք ավելի շուտ ունեն բառակազմական, քան ձևակազմական (ձևաբանական) արժեք: Այդ տարբերություններն ընկած են թվականի ձևաբանական արտահայտության հիմքում:

ա) Քանակական թվականները ելակետային են, ինքնուրույն բառեր: Դրանք տարբեր կարգի կազմություններ են՝ պարզ և բաղադրյալ:

Պարզ թվականներն են՝ *մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եւթն* (այլև՝ *եօթն, եաւթն*), *ութ, ինն, տասն, քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եւթանասուն, ութսուն, իննսուն, հարեւր, հազար, բեւր* (այլև՝ *բիւր*):

**Ծանոթություն 36:** Տասնավոր նշանակող թվականներում պատմականորեն միայն կարելի է առանձնացնել -*սան, -(ա)սուն*ածանցները:

Մնացած թվականներն ունեն բաղադրյալ կազմություն:

1. Մի մասը բարդ բառեր են՝ *մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան,* այնուհետեւ՝ *եւթնևտասն, ութևտասն* (այլև՝ *ութուտասն*), *իննեւտասն,* ինչպես

նաեւ՝ *երկերիւր, երեքհարեւր, չորեքհարեւր, հինգհարեւր, վեցհարեւր, եւթնհարեւր, ութհարեւր, իննհարեւր*:

2. Մյուս մասը ներկայացնում է վերլուծական բաղադրություն՝ *քսան և մի, քսան և երկու, քսան և երեք, երեսուն և մի, երեսուն և երկու, երեսուն և երեք, քառասուն և մի, քառասուն և երկու, քառասուն և երեք, քառասուն և չորք* և այլն, այնուհետև՝ *հարեւր և մի, հարեւր և երկու, հարեւր և երեք, երկերիւր և մի, երկերիւր և երկու, երկերիւր և երեք* և այլն, ինչպես նաև՝ *հարեւր մետասան, հարեւր երկոտասան, երկերիւր քառասուն և մի, վեցհարեւր քսան և երկու* և այլն:

Ինչպես նկատելի է, բաղադրյալ թվականները կազմվում են երկու կերպ՝ կա՛մ բառաբարդմամբ, կա՛մ *և, ու* շաղկապների օգնությամբ:

բ) Դասական թվականները կազմվում են քանակականներից՝ *-րորդ* կամ *-երորդ* ածանցներով. *երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եւթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, մետասաներորդ, երկոտասաներորդ, երեքտասաներորդ, չորեքտասաներորդ, քսաներորդ, քսաներորդ առաջնորդ* (այլև՝ *քսաներորդ առաջներորդ, քսաներորդ և առաջին), քսաներորդ երկրորդ, քսաներորդ երրորդ, քառասներորդ, քառասներորդ չորրորդ, քառասներորդ հինգերորդ, յիսներորդ, յիսներորդ և երկրորդ, վաթսներորդ և վեցերորդ, եւթանասներորդ և երկրորդ, ութսներորդ և երրորդ, ութսներորդ և հինգերորդ, իննսներորդ և վեցերորդ, հարիւրերորդ,* այլև՝ *հարիւրորդ, հազարերորդ իննհարիւրերորդ քսաներորդ երկրորդ* և այլն:

**Ծանոթություն 37:** Այստեղ բացառություն է *առաջին* թվականը, որն առանձնահատուկ կազմություն ունի, այլև՝ զուգահեռներ՝ *առաջնորդ // առաջներորդ:*

գ) Անձներական թվականները կազմվում են քանակականներից *-եքին // -եքեան* ածանցներով՝ *երկոքին // երկոքեան, երեքին // երեքեան, եւթանեքին // եւթանեքեան, տասնեքին // տասնեքեան, մետասանեքին // մետասանեքեան, երկոտասանեքին // երկոտասանեքեան, եւթնևտասանեքին //եւթնևտասանեքեան, ութևասանեքին // ութևասանեքեան* և այլն:

**Ծանոթություն 38:** Անձներական թվական գոյություն չունի *մի* թվականի հարաբերությամբ, որովհետև այն անձներականություն, միասնականություն չի ստեղծում որևէ թվականի հետ:

**Ծանոթություն 39**: -*Երին* //-*եքեան* ածանցները միևնույն ածանցի զուգահեռներ են, ազատ բաշխման հարաբերությամբ տարբերակներ:

**Ընթերցանություն 46**: «Եւ երեքեան ջոկքս այսօրիկ, քանզի համաքնայք են (*Եզնիկ,* էջ 91): Երեք մասունքն ի նոսա ուստի՞ իցեն (*ն. տ.,* էջ 225): Զի եւթանասնիցն թարգմանեալ ի յոյն լեզու, ասեն (*ն. տ.,* էջ 260): Զայնչափ զքսան և զինն ազգաց զոգիս տանջեալս ի գեհենի (*ն. տ.,* էջ 259): Յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան հարեւր երեսուն և երեք արամբք (*Եղիշէ,* էջ 119): Եւ ընդ առաջ նորա հազարօք երկու (*ն. տ.,* էջ 105): Եւ զայս առնէր սկսեալ ի չորրորդ ամէն մինչև մետասաներորդ ամն իւրոյ տէրութեան (*ն. տ.,* էջ 17): Իսկ ի չորրորդում աւուրն երկուք ի պահպանացն չարաչար լլկեցան ի դիւէ (*ն. տ.,* էջ 180): Իսկ ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր (*ն. տ.,* էջ 120): Զայս ասելով ի տեղւոջն կատարեցան երկերիւրքն և երեքտասանք (*ն. տ.,* էջ 123): Արդ երեքեան սոքա իւրաքանչիւր սպասաւորօք առին զսուրբսն յայնմ անապատէ (*ն. տ.,* էջ 160): Ապա յետ այնորիկ յերեսուն և վեցերորդ ամի իշխանութեանն նոցա զաւր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս Հայոց (*Ղեւոնդ,* էջ 11): Իններորդն՝ Պարսիցն, տասներորդն՝ Հայոց, մետասաներորդն՝ Վրացն (*ն. տ.,* էջ 63): Վաչական ոմն ի նախարարացն Պարսից արշաւէր յերկիրն Հայաստան, հանդերձ ութևտասան բիւրօք (*Բուզ.,* էջ 130): Ութ հարիւր այր, որ կային ի կապանս առանց յանցման, ետ ածել առաջի նորա (*ն. տ.,* էջ 21): Թողոյր զութսեւեան զնոսա առ իւր հաւատարիմ արս (*Փարպ.,* էջ 164): Պսակեցան սուրբքն վեցեքեան (*ն. տ.,* էջ 101): Յայնմհետէ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ ամի Արտաշիսի (*ն. տ.,* էջ 25): Եւ յամի վեշտասաներորդի թագաւորութեանն իւրոյ Յազկերտ չու արարեալ ամենայն բազմութեամբ իւրով խաղայր ի պատերազմ ի

վերայ Քուշանաց (*ն. տ.,* էջ 86), որ վեշտասան էր ամսոյն (*ն. տ.,* էջ 141), որ քսան և եօթն էր ամսոյն հրոտից (*ն. տ.,* էջ 101):

**Վարժություն 89:** Գրել *մի* թվականից մինչև *քսան* քանակական թվականը, նշել տարբերությունները ժամանակակից հայերենի նույն թվականների համեմատությամբ:

**Առաջադրանք 83:** Հաշվել *մի* թվականից մինչև *յիսուն* քանակական թվականները և կազմել դրանց դասականը:

**Առաջադրանք 84:** Կարդալ «Ընթերցանություն 46»-ը և առանձնացնել այն թվականները, որոնք քանակական են, ցույց տալ դրանց կազմությունը:

**Առաջադրանք 85:** Կարդալ «Ընթերցանություն 46»-ը և առանձնացնել մնացած թվականները, ցույց տալ դրանց տեսակը և կազմությունը:

**Հարցեր 25:** ա) Որո՞նք են թվականի տեսակները:
բ) Ինչպիսի՞ կազմություն ունեն քանակական թվականները:
գ) Ինչպիսի՞ կազմություն ունեն դասական թվականները:
դ) Ինչպիսի՞ կազմություն ունեն անձներական թվականները:

## բ) Թվականի հոլովումը

**§ 86.** Թվականները գրաբարում հոլովման առանձին համակարգ չեն կազմում, այլ հոլովվում են գոյականների պես: Այդուհանդերձ, թվականներն ի հայտ են բերում հոլովական ինչ-ինչ տարբերություններ: Հոլովվում են բոլոր տեսակի թվականները: Ավելի բազմազան է քանակական թվականների հոլովումը:

**§ 87.** Քանակական թվականները հոլովվում են պարզ *ա, ի, ո, ու* և խառն *ի - ա* հոլովումներով: Որոշակի նրբություններ են երևան գալիս հոլովակերտների հավելման և հոգնակիի կազմության դեպքում:

ա) *Մի* թվականն անհոգնական է, հոլովվում է *ո* հոլովիչով.

Եզակի թիվ
ուղղ. մի
սեռ. միոյ // միոջ
տր. միում
հայց. (զ)մի
բաց. ի միոջէ // ի միոյ
գործ. միով

բ) *Երկու* թվականն անեզական է, հոլովվում է *ու* հոլովիչով.
Հոգնակի թիվ
ուղղ. երկու
սեռ. երկուց
տր. երկուց
հայց. (զ)երկուս
բաց. յերկուց
գործ. երկուք // երկոքումբք
*Երկու* թվականի սովորական գործածությունը *երկուք* ձևն է:

գ) *Երեք, չորք* թվականներն անեզական են, հոլովվում են *ի* պարզ հոլովմամբ.
Հոգնակի թիվ
ուղղ. երեք, չորք
սեռ. երից, չորից
տր. երից, չորից
հայց. (զ)երիս, (զ)չորս
բաց. յերից, ի չորից
գործ. երիւք, չորիւք

դ) *Հինգ, վեց, ութ, ինն* թվականները հոլովվում են *ի* պարզ հոլովմամբ՝ եզակի և հոգնակի.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | հինգ, վեց, ութ, ինն | հինգք, վեցք, ութք, ինունք |
| սեռ. | հնգի, վեցի, ութի, ըննի | հնգից, վեցից, ութից, ըննից |
| տր. | հնգի, վեցի, ութի, ըննի | հնգից, վեցից, ութից, ըննից |

| | | |
|---|---|---|
| հայց. | (զ)հինգ, (զ)վեց, (զ)ութ, | (զ)ինն (զ)հինգս, (զ)վեցս, (զ)ութս, (զ)ինունս |
| բաց. | ի հնգէ, ի վեցէ, յութէ, յընէնէի | հնգից, ի վեցից, յութից, յըննից |
| գործ. | հնգիւ, վեցիւ, ութիւ, ըննիւ | հնգիւք, վեցիւք, ութիւք, ըննիւք |

*Հինգ* թվականի հոգնակի գործիականն ավելի հաճախ *ա* հոլովման *հնգաւք* (*հնգօք*) ձևով է, իսկ *ինն* թվականը հոգնակիում ունի զուգահեռ *ու* հոլովիչով ձևեր՝ *ինունք, ինունց, (զ)ինունս, յինունց, ինումբք*, որն ավելի կանոնական է:

ե) *Ութն* թվականը հոլովվում է *ա* պարզ ներդրական հոլովմամբ.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | եւթն | եւթանք |
| սեռ. | եւթան | եւթանց |
| տր. | եւթան | եւթանց |
| հայց. | (զ)եւթն | (զ)եւթանս |
| բաց. | յեւթանէ | յեւթանց |
| գործ. | եւթամբ | եւթամբք |

Կան նաև *ի* վերջադրական (այլև ներդրական), *ա* ներդրական հոլովմամբ ձևեր՝ *եւթին, եւթնի, եւթնիւ, եւթեան, եւթեանք:*

զ) *Տասն, եւթնևտասն, ութևտասն (ութուտասն), իննևտասն* թվականները հոլովվում են *ի-ա* խառն ներդրական հոլովմամբ:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | տասն, եւթնևտասն | տասունք, եւթնեւտասանք |
| սեռ. | տասին, եւթնևտասին | տասանց, եւթնևտասանց |
| տր. | տասին, եւթնևասին | տասանց, եւթնևտասանց |
| հայց. | (զ)տասն, (զ)եւթնևասն | (զ)տասունս, եւթնևտասանս |
| բաց. | ի տասնէ, յեւթնևասնէ | ի տասանց, յեւթնևտասանց |
| գործ. | տասամբ, եւթնևտասամբ | տասամբք, եւթնեւտասամբք |

**Ծանոթություն 40:** Նշենք, որ *եւթնետասն. ութևտասն, իննևտասն* թվականների հոգնակի ուղղականն է՝ *եւթնետասանք, ութևտասանք (ութուտասանք), իննևտասանք,* իսկ հայցականը՝ *զեւթնետասանս, զութևտասանս (զութուտասանս), զիննևտասանս:*

է) *Մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան* թվականները հոլովվում են *ի* պարզ հոլովմամբ:

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | մետասան | մետասանք |
| սեռ. | մետասանի | մետասանից |
| տր. | մետասանի | մետասանից |
| հայց. | (զ)մետասան | (զ)մետասանս |
| բաց. | ի մետասանէ | ի մետասանից |
| գործ. | մետասանիւ | մետասանիւք |

ը) *Քսանից* մինչև *իննսուն* (ներառյալ) հոլովվում են *ի* պարզ հոլովմամբ: Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | քսան, երեսուն | քսանք, երեսունք |
| սեռ. | քսանի, երեսնի | քսանից, երեսնից |
| տր. | քսանի, երեսնի | քսանից, երեսնից |
| հայց. | (զ)քսան, (զ)երեսուն | (զ)քսանս, (զ)երեսունս |
| բաց. | ի քսանէ, յերեսնէի | քսանից, յերեսնից |
| գործ. | քսանիւ, երեսնիւ | քսանիւք, երեսնիւք |

**Ծանոթություն 41:** *Երեսունից* մինչև *իննսուն* թվականների սեռական և մյուս թեք ձևերում *ն*-ից առաջ եղած *ու*-ն սղվում է. սեռական հոլով՝ *երեսնի, քառասնի, յիսնի, վաթսնի, եւթանասնի, ութսնի, իննսնի,* բացառական հոլով՝ *յերեսնէ, ի քառասնէ, ի յիսնէ* և այլն:

թ) *Հարեւր (հարիւր)* թվականից մինչև *իննհարեւր* (ներառյալ) հոլովվում են *ո* պարզ հոլովմամբ:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | հարեւր | հարեւրք |
| սեռ. | հարիւրոյ | հարիւրոց |
| տր. | հարիւրոյ | հարիւրոց |
| հայց. | (զ)հարեւր | (զ)հարեւրս |
| բաց. | ի հարիւրոյ | ի հարիւրոց |
| գործ. | հարիւրով | հարիւրովք |

ժ) *Հազար* թվականը հալովվում է *ի - ա* խառն վերջադրական հոլովմամբ:

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | հազար | հազարք |
| սեռ. | հազարի | հազարաց |
| տր. | հազարի | հազարաց |
| հայց. | (զ)հազար | (զ)հազարս |
| բաց. | ի հազարէ | ի հազարաց |
| գործ. | հազարաւ | հազարաւք (օք) |

ժա) *Բեւր (բիւր)* թվականը հոլովվում է *ու* պարզ հոլովմամբ.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | բեւր | բեւրք |
| սեռ. | բիւրու | բիւրուց |
| տր. | բիւրու | բիւրուց |
| հայց. | (զ)բեւր | (զ)բեւրս |
| բաց. | ի բիւրէ | բիւրուց |
| գործ. | բիւրու | բիւրուք |

Կան նաև բառի *ա, ո* հոլովմամբ ձևեր՝ *բիւրաւ, բիւրաւք (բիւրօք), բիւրով, բիւրոց:*

Բաղադրյալ թվականները հոլովվում են կա՛մ բոլոր բաղադրիչներով, կա՛մ միայն վերջին բաղադրիչով:

ա) Հոլովում բոլոր բաղադրիչներով:
Օրինակ՝ *քսան և մի* (միայն եզակի թվով).
Եզակի թիվ
ուղղ. քսան և մի
սեռ. քսանի և միոյ // միոջ
տր. քսանի և միում
հայց. (զ)քսան և (զ)մի
բաց. ի քսանէ և ի միոյ // ի միոջէ
գործ. քսանիւ և միով

Օրինակ՝ *քսան և երեք* (միայն հոգնակի թվով).
Հոգնակի թիվ
ուղղ. քսան և երեք
սեռ. քսանից և երից
տր. քսանից և երից
հայց. (զ)քսան և (զ)երիս
բաց. ի քսանից և յերից
գործ. քսանիւք և երիւք

բ) Հոլովում միայն վերջին բաղադրիչով:
Օրինակ՝ *քսան եւ երեք* (միայն հոգնակի թվով).
Հոգնակի թիվ
ուղղ. քսան և երեք
սեռ. քսան և երից
տր. քսան և երից
հայց. (զ)քսան և երիս
բաց. ի քսան և երից
գործ. քսան և երիւք

**§ 88**. Դասական թվականները հոլովվում են պարզ *ո* և վերջադրական խառն *ի - ա* հոլովմամբ: Երկու դեպքում էլ եզակի տրականը, ի տարբերություն իր սեռականի, ունենում է զուգահեռ *–ում* հոլովակերտը:
ա) Պարզ *ո* հոլովմամբ հոլովվում է *առաջին* թվականը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | առաջին | առաջինք |
| սեռ. | առաջնոյ | առաջնոց |
| տր. | առաջնոյ // առաջնում | առաջնոց |
| հայց. | (զ)առաջին | (զ)առաջինս |
| բաց. | յառաջնոյ // յառաջնմէ | յառաջնոց |
| գործ. | առաջնով | առաջնովք |

բ) Վերջադրական խառն *ի - ա* հոլովմամբ հոլովվում են մյուս դասական թվականները:

Օրինակ՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | երկրորդ | երկրորդք |
| սեռ. | երկրորդի | երկրորդաց |
| տր. | երկրորդի // երկրորդում | երկրորդաց |
| հայց. | (զ)երկրորդ | (զ)երկրորդս |
| բաց. | յերկրորդէ | յերկրորդաց |
| գործ. | երկրորդաւ | երկրորդաւք (օք) |

**Ծանոթություն 42:** Բաղադրյալ դասական թվականների դեպքում հոլովվում են բոլոր բաղադրիչները՝ հավասարապես. օրինակ՝ *հազարերորդ իննհարեւրերորդ ութսուներորդ ութերորդ, հազարերորդի իննհարեւրերորդի ութսուներորդի ութերորդի* և այլն:

**§ 89.** Անձնական թվականները պատկանում են *ու* հոլովմանը, ըստ որում հոլովվում են միայն հոգնակի թվով: Օրինակ՝

| | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. | երկոքին // երկոքեան |
| սեռ. | երկոցուն // երկոցունց |
| տր. | երկոցուն // երկոցունց |
| հայց. | (զ)երկոսին // (զ)երկոսեան |
| բաց. | յերկոցունց |
| գործ. | երկոքումբք: |

**Ընթերցանություն 47:** «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց (*Խոր.,* էջ 212)։ Սեմ ամս հարիւր ծնանի զԱրփաքսաթ. Արփաքսաթ ամս հարիւր երեսուն և հինգ ծնանի զԿայինան. Կայինան ամս հարիւր և քսան ծնանի զՍաղայ. Սաղայ ամս հարիւր և երեսուն ծնանի զԵբեր. Եբեր ամս հարիւր երեսուն և չորս ծնանի զՓաղեկ. Փաղեկ ամս հարիւր երեսուն և երիս ծնանի զՌագաւ. Ռագաւ ամս հարիւր և երեսուն ծնանի զՍերուք. Սերուք ամս հարիւր և երեսուն ծնանի զՆաքովր. Նաքովր ամս եօթանասուն և ինն ծնանի զԹարայ. Թարայ ամս եօթանասուն ծնանի զԱբրահամ (*Ն. տ.,* էջ 20 - 22)։ Այլ սա ի վեց ամին լքեալ ի Կիւրոսէ, և աստ անկեալ կենօք շրջէր մինչև իսպառ բարձաւ թագաւորութիւնն Ասորեստանեայց և Մարաց ի Կիւրոսէ (*Թովմ. Արծ.,* էջ 62)։ Արդ են թագաւորք Ասորեստանեայց ի միասմէ կողմանէն այսոքիկ. անիշխանութեան ամք ԻԸ. Փուա՝ ամք ԺԲ. Թագղաթփաղասար՝ ամս ԻԷ. Սաղմանասար՝ ամս ԺԵ. Ներեղբիոս՝ ամս Դ. Սենեքերիմոս՝ ամս ԺԸ. որդին՝ ամս Ը. Սամոգէս՝ ամս ԻԱ. նորին եղբայրն՝ ամս ԻԱ, Նաբուպաղասարոս՝ ամս Ի. Նաբուգոդոնոսոր՝ ամս ԽԳ. Ամիղմարուդաքոս՝ ամս Բ. Ներիգղիսարոս՝ ամս Դ. Նաբունիդոս՝ ամս ԺԵ (*Ն. տ.,* էջ 60- 62)։

**Ընթերցանություն 48**. «Բազում են ծառք պտղաբերք ըստ ազգի ազգի կերպարանաց իւրեանց, որպէս զի անչափ պակասեալ գտանին բանք մեր գիտել ճանաչել զնոսա ըստ իւրաքանչիւր բնութեանց և կայանից[1] իւրեանց։ Քանզի ոչ եթէ այլակերպ և այլազգի ծառոցն միայն չլինիմք բաւական, այլ և ոչ անդէն, որ ի նմին ազգէն փոփոխմունքն են, կարեմք հասու լինել, զի զարմանալի և սքանչելի են իւրաքանչիւր բարձրութեամբքն եւ կերպարանաւք։ Յորժամ տեսանեմք զծառս, զի կէսքն ի կերպարանս և ի մասունս արուաց անուանին իւրաքանչիւր պտղովքն, և կէսքն զկերպարանս և զմասունս իգաց ունին ըստ իւրաքանչիւր մրգոցն։ Եւ վկայեն, որ միշտ տնկեն զտունկս ծառոցն, զի այսպէս դնեն նոցա անուանս՝ արուս և էգս, և զատեալ մեկնին ի պտղոցն անտի և ի կերպարանաց։

Զի յարմաւենիս արուս և էգս անուանին, և որ էգ արմաւենին անուանի, խոնարհեցուցանէ, կորացուցանէ զոստս իւր ի կողմն արու արմաւենւոյն և ի մերձենալ ոստոցն առ միմեանս իբրև սէր իմն, և զուք և ամուսնութիւն կատարի: Իսկ մշակքն, որ տնկոցն տեղեակք են և գիտեն զչափս իրացն, առնուն յոստոց, այսինքն՝ զգործս ճշմարիտ, զի անկանիցին և երկիր պագանիցեն[2], խոստովան լինիցին և ասիցեն, թէ արդարև Աստուած գոյ նոցա: Եթէ գտանիցի ոք, որ իցէ կռապաշտ կամ յաւտար ուսմանց, կամ բաժանեալ քակեալ իցէ յեկեղեցւոյ Աստուծոյ իւրով դառն դաժանութեամբն, յորժամ տեսանիցէ ի մեզ զպարկեշտ կերպարանս և զհաստատութիւն ճշմարտութեան[3] և զվարս գեղեցիկս, և յորժամ փոյթ յանձին ունիցիմք ձեռնկալու իւիք լինել նմա, և իբրև զայս ամենայն տեսանիցէ, թերևս պարտի գալ առ մեզ, և մեք նովաւ մեծաշահ աւգտութիւնս գտցուք, որպէս աւգտի թզենին քաղցուենի ի կատաղենի թզենւոյն անտի՝ առնուլ զաւրութիւն առ ի պահել ողջ և անարատ զպտուղն իւր» (*Բարս.,* էջ 153 -154):

1. *Կայան* - դիրք, կանգնելատեղ. վարք, սովորություն:
2. *Երկիր պագանիցեն* - երկրպագելու են, կերկրպագեն:
3. *Հաստատութիւն ճշմարտութեան* - ճշմարիտ հաստատություն:

**Վարժություն 90:** Հոլովել պարզ *ի* հոլովման պատկանող *երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան և վեշտասան* թվականները:

**Վարժություն 91:** Հոլովել պարզ *ի* հոլովման պատկանող *երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եւթանասուն, ութսուն* և *իննսուն* թվականները, նշել հոլովակերտները:

**Վարժություն 92:** Հոլովել պարզ *ո* հոլովման պատկանող *երկերիւր, երեքհարեւր, չորեքհարեւր, հինգհարեւր, վեցհարեւր, ութհարեւր* և *իննհարեւր* թվականները, նշել հոլովակերտները:

**Վարժություն 93:** Հոլովել ներքին խառն *ի - ա* հոլովման պատկանող *եւթնևտասն, ութևտասն, ութուտասն և իննևասն* թվականները, նշել հոլովակերտները:

**Առաջադրանք 86:** Մտաբերել տարբեր հոլովումների պատկանող երկուական թվական և բանավոր հոլովել:

**Առաջադրանք 87:** Կարդալ «Ընթերցանություն 47»-ը, առանձնացնել թվականները և նշել հոլովումը:

**Առաջադրանք 88:** «Ընթերցանություն 47»-ից առանձնացնել թվականները և մի քանիսը հոլովել:

**Առաջադրանք 89:** Մեսրոպագիր թվականները դարձնել արաբանիշ և նշել դրանց կազմությունը (տե՛ս «Ընթերցանություն 47»):

**Առաջադրանք 90:** Կարդալ «Ընթերցանություն 48»-ը և բանավոր որոշել թեք հոլովներով դրված գոյականների հոլովումը, հոլովը և հոլովակերտը:

**Հարցեր 26:** ա) Ի՞նչ հոլովումների են պատկանում քանակական թվականները:

բ) Ինչպե՞ս են հոլովվում դասական և անձնական թվականները:

# 4. ԴԵՐԱՆՈՒՆ

## ա) Դերանվան տեսակները

**§ 90.** Գրաբարում դերանունները լինում են ութ տեսակ՝ անձնական, ցուցական, ստացական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ (այլ անվանումով՝ անձներական) և անորոշ:

ա) Անձնական դերանուններն են՝ *ես, դու, նա, ինքն, իւր*: *Ես*-ը ցույց է տալիս առաջին դեմք, *դու*-ն՝ երկրորդ: Իսկ *նա, ինքն, իւր* դերանունները ցույց են տալիս երրորդ դեմք: Վերջիններս հանդես են բերում իմաստային և գործածության նրբություններ: Այնուհետև, *ինքն*-ը տեղ-տեղ գործածվում է *ես, դու* դերանունների հետ՝ իբրև սաստկական՝ *ես ինքն, դու ինքն:* Չի բացառվում *ինքն*-ի կիրառությունը *նա*-ի հետ՝ *նա ինքն*:

բ) Ցուցական դերանուններն են՝ *սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն:* Դրանցում նկատելի է բառակազմական համակարգային դրսևորում, այսինքն՝ *ս, դ, ն* (պատմականորեն) արմատական բաղաձայններն ստացել են ձայնավորային տարբեր ստիճանավորումներ, ընդ սմին *սոյն, դոյն* և *նոյն* դերանուններն ունեն հիշյալ բաղաձայնների նախնական ձայնավորական վիճակը:

գ) Ստացական դերանուններն են՝ *իմ, քո (քոյ), իւր, մեր, ձեր*: Սրանք պատմականորեն առաջացել են անձնական դերանունների սեռականի ձևերից, այնուհետև ձեռք բերել ինքնուրույնություն՝ արտահայտելով դերանվանական ստացականության իմաստ: *Իւր, մեր, ձեր* դերանուններից բաղադրված են *իւրային, մերային* և *ձերային* ձևերը:

դ) Փոխադարձ դերանուններն են՝ *միմեանց* և *իրերաց*: Դրանք անեզական են, այլև չունեն ելակետային՝ ուղղական հոլովի ձևեր:

ե) Հարցական դերանուններն են՝ *ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ*: Իբրև հարցական դերանուն գործածվում են *որ* հարաբերական դերանունը և *քանի* բառը (հարցական հնչերանգով):

գ) Հարաբերական դերանունը մեկն է՝ *որ*:

է) Որոշյալ (անձներական) դերանուններն են՝ *ամենեքին // ամենեքեան* («ամենքը, բոլորը, ամենքն էլ, բոլորն էլ»), *բոլորեքին //բոլորեքեան* («բոլորը, բոլորն էլ») և *ամենայն* («ամեն»): Առաջին չորսը բաղադրված են *ամեն, բոլոր* հիմքերին *-եքին //-եքեան* ածանցների հավելումով. այդ ածանցներն ըստ էության անձներականության իմաստ արտահայտող են (հմմտ. անձներական թվականները):

ը) Անորոշ դերանուններն են՝ *ոմն, ոք, իմն, ինչ, այլ, միւս (մեւս):* Նկատելի է, որ *ոմն, ոք* դերանունները գործածվում են անձի, իսկ *իմն, ինչ* դերանունները՝ իրի փոխարեն: Երբեմն *այլ*-ը գործածվում է *ոմն, ոք, իմն, ինչ* դերանունների հետ՝ *այլ ոք, այլ ոմն, այլ իմն, այլ ինչ:*

**Ընթերցանություն 49**: «Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին դղրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, և ահս պակուցանողս տարազուք[1] յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք[2] արկանէին: Անդ ոչ սակաւք երկոցունց կողմանց արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին[3], և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Յայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն[4] վերջոտնեալ ելանէր[5]. քանզի խորհէր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւս անգամ ճակատ յօրինեսցէ: Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին: Իսկ ամբոխն, տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան, փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց: Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի ասել:

Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ և անուն կոչէ Հայք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և

գաւառն այժմ անուանի Հայոց Ձոր: Իսկ բլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակք: Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք և թաղել ի բարձրավանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք» (*Խոր.,* էջ 44 - 46):

1. *Տարազուք* – ձևերով:
2. *Զմիմեանսքք* - *զ* նախդիրը գործիական հոլովի հետ՝ միմյանց վրա:
3. *Յերկիր կործանէին* - գետին էին տապալում:
4. *Ուստի էջն* - որտեղից որ նա իջավ:
5. *Վերջոտնեալ ելանէր* - հետ-հետ գնալով բարձրանում էր:

**Ընթերցանություն 50:** «Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ ի Նինոսէ, որպէս և հայրն իւր Արամ: Բայց վաւաշն այն և բորբորիտոնն Շամիրամ, ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ նորա, ցանկայր հասանել, այլ ոչ ինչ յայտնապէս զայսպիսիս իշխէր գործել: Իսկ յետ վախճանելոյն կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ, որպէս հաւանեալ եմ, համարձակ պատուելով Շամիրամայ զախտն առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգեւաց, գալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի, որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան[1] նորա և դառնալ մեծաւ պատարագօք և խաղաղութեամբ ի տեղի իւր:

Եւ ի բազում անգամ երթեւեկութեան հրեշտակագնացութեանն լինել[2], և յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցասման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց՝ ի վերայ Արայի: Բայց որչափ դիմացն էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել[3], զի լցցէ զկամս ցանկութեան իւրոյ. զի առ յոյժ

ցանկականի մոլեգնութեանն[4], ի բանսն, որ զնմանէ ոպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր: Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ: Եւ ի լինել ճակատուն՝ պատուէր տայ զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն: Իսկ ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն[5] Շամիրամայ: Դիակապուտս առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականցն անկելոց զըղձալին իւր և զտարփածուն: Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն» (*Խոր.,* էջ 60):

1. *Ձկամս ցանկութեան* - ցանկությունը, ցանկական կամքը:
2. *Հրեշտակագնացութեանն լինել* - պատգամավորներ գնալ և գալ:
3. *Զբռամբ ածել* - ճանկը գցել, գրավել:
4. *Առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն* - մոլեգին ցանկության՝ կրքի՝ ցանկասիրության պատճառով:
5. *Ի մանկանցն* - (բառացի) երեխաներից, տղաներից, (այստեղ) զինվորներից:

**Վարժություն 94:** Կարդալ «Ընթերցանություն 49»-ը, առանձնացնել դերանունները և խմբավորել ըստ տեսակների:

**Վարժություն 95:** Կարդալ «Ընթերցանություն 50»-ը, առանձնացնել դերանունները և խմբավորել ըստ տեսակների:

**Առաջադրանք 91:** «Ընթերցանություն 49»-ից առանձնացնել թեք հոլովաձևերով դրված գոյականները:

**Առաջադրանք 92:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *յերկիր կործանել, մնալ անպարտելի, վերջուտնեալ ելանել, փախչիլ դէպ երեսաց, ցանկայր հասանել, ոչ իշխէր գործել, առաքել զհրեշտակս, առնուլ կնութեան, փութալ երթալ հասանել, ածել զբռամբ:*

**Հարցեր 27:** ա) Քանի՞ տեսակ են լինում գրաբարի դերանունները:

բ) Որո՞նք են անձնական և ցուցական դերանունները:

գ) Որո՞նք են ստացական, փոխադարձ և անորոշ դերանունները:

դ) Որո՞նք են հարցական և հարաբերական դերանունները:

ե) Որո՞նք են որոշյալ (անձներական) դերանունները:

## բ) Դերանվան հոլովումը

**§ 91.** Դերանունները հոլովվում են բազմազան եղանակով: Դրանց մի մասը հոլովվում է, ինչպես գոյականը (ածականը և թվականը), որը սովորական է: Որոշակի խումբ կազմող դերանուններ հոլովվում են յուրօրինակ եղանակով, այսինքն՝ թեքման ժամանակ չունեն որևէ հոլովիչ, այլ թեքումը իրացվում է ձևերի փոփոխությամբ: Ըստ այդմ էլ իրարից խստորեն տարբերվում են ուղղական, սեռական և տրական հոլովների ձևերը: Այս նկատառումով է, որ դերանունների նման հոլովումը կոչվում է դերանվանական: Քիչ չեն այն դեպքերը, երբ տվյալ գոյականի հոլովման դեպքում համատեղվում են հոլովման անվանական և դերանվանական եղանակները: Գրաբարում հոլովվում են բոլոր դերանունները:

ա) Անձնական դերանունների հոլովումը:

1) *Ես* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ես | մեք |
| սեռ. | իմ | մեր |
| տր. | ինձ | մեզ |
| հայց. | զիս | զմեզ |
| բաց. | յինէն | ի մէնջ |
| գործ. | ինեւ | մեւք (մեօք) |

2) *Դու* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | դու | դուք |
| սեռ. | քո | ձեր |
| տր. | քեզ | ձեզ |
| հայց. | զքեզ | զձեզ |
| բաց. | ի քէն | ի ձէնջ |
| գործ. | քեւ | ձեւք (ձեօք) |

3) *Նա* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | նա | նոքա |
| սեռ. | նորա | նոցա |
| տր. | նմա | նոցա |
| հայց. | զնա | զնոսա |
| բաց. | ի նմանէ | ի նոցանէ |
| գործ. | նովաւ | նոքաւք (նոքօք) |

4) *Ինքն* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ինքն | ինքեանք |
| սեռ. | ինքեան | ինքեանց |
| տր. | ինքեան | ինքեանց |
| հայց. | զինքն | զինքեանս |
| բաց. | յինքենէ | յինքեանց |
| գործ. | ինքեամբ | ինքեամբք |

5) *Իւր* դերանվան հոլովումը. եզակի գործիականն ունի կրկնակ ձևեր.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | - | իւրեանք |
| սեռ. | իւր | իւրեանց |
| տր. | իւր | իւրեանց |
| հայց. | - | զիւրեանս |
| բաց. | յիւրմէ | յիւրեանց |

գործ. իւրեւ // իւրեաւ// իւրեամբ  իւրեամբք

**Ծանոթություն 43:** Առաջին և երկրորդ դեմքի դերանունների բացառական հոլովը ունի նաև *ինձէն, մեզէն (մեզոյն), քեզէն (քեզոյն), ձեզէն (ձեզոյն)* ձևերը: Դրանց հետ տեղ-տեղ հանդիպում է *խսկ*-ը՝ *մեզէն խսկ, ձեզէն խսկ, ինձէն խսկ* և այլն:

**Ծանոթություն 44:** *Իւր* անձնական դերանվան պակասող ձևերը (եզակի ուղղական և հայցական) հաճախ լրացվում է *ինքն*-ով:

**Ծանոթություն 45:** Գրաբար բնագրերում երբեմն հանդիպում է *անձն* գոյականի թեք ձևերի կիրառություն անձնական դերանունների փոխարեն:

բ) Ցուցական դերանունների հոլովումը:

1) *Սա* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | սա | սոքա |
| սեռ. | սորա | սոցա |
| տր. | սմա | սոցա |
| հայց. | զսա | զսոսա |
| բաց. | ի սմանէ | ի սոցանէ |
| գործ. | սովաւ | սոքաւք (օք) |

2) *Դա* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | դա | դոքա |
| սեռ. | դորա | դոցա |
| տր. | դմա | դոցա |
| հայց. | զդա | զդոսա |
| բաց. | ի դմանէ | ի դոցանէ |
| գործ. | դովաւ | դոքաւք (օք) |

3) *Նա* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | նա | նոքա |

| | | |
|---|---|---|
| սեռ. | նորա | նոցա |
| տր. | նմա | նոցա |
| հայց. | զնա | զնոսա |
| բաց. | ի նմանէ | ի նոցանէ |
| գործ. | նովաւ | նոքաւք (օք) |

4) *Այս* դերանվան հոլովումը. բացի եզակի ուղղական և հայցական հոլովներից, ունի կրկնակի ձևեր (հոգնակի բացառականում նաև երրորդ ձև), եզակի հայցականը նման է հոգնակի հայցականին.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այս | այսք // այսոքիկ |
| սեռ. | այսր // այսորիկ | այսց // այսոցիկ |
| տր. | այսմ // այսմիկ | այսց // այսոցիկ |
| հայց. | զայս | զայս // զայսոսիկ |
| բաց. | յայսմ // յայսմանէ | յայսց //յայսցանէ (յայսոցիկ) |
| գործ. | այսու // այսուիկ | այսոքիւք (այսոքիմբք) |

5) *Այդ* դերանվան հոլովումը. բացի եզակի ուղղական և հայցական հոլովներից, ունի կրկնակ ձևեր (հոգնակի բացառականում նաև երրորդ ձև), եզակի հայցականը նման է հոգնակի հայցականին.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այդ | այդք // այդոքիկ |
| սեռ. | այդր // այդորիկ | այդց // այդոցիկ |
| տր. | այդմ // այդմիկ | այդց // այդոցիկ |
| հայց. | զայդ | զայդ // զայդոսիկ |
| բաց. | յայդմ //յայդմանէ | յայդց //յայդցանէ (յայդոցիկ) |
| գործ. | այդու // այդուիկ | այդոքիւք (այդոքիմբք) |

6) *Այն* դերանվան հոլովումը. բացի եզակի ուղղական և հայցական հոլովներից, ունի կրկնակ ձևեր (հոգնակի բացառականում նաև երրորդ ձև).

| Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. այն | այնք // այնոքիկ |
| սեռ. այնր // այնորիկ | այնց // այնոցիկ |
| տր. այնմ // այնմիկ | այնց // այնոցիկ |
| հայց. զայն | զայնս // զայնոսիկ |
| բաց. յայնմ // յայնմանէ | յայնց //յայնցանէ (յայնոցիկ) |
| գործ. այնու // այնուիկ | այնոքիւք (այնոքիմբք) |

7) *Սոյն* դերանվան հոլովումը. եզակի սեռական և գործիական հոլովներում ունի կրկնակ ձևեր, իսկ հոգնակի թվում միայն բացառական հոլովում չունի կրկնակ ձև (սեռականում և տրականում՝ նաև երրորդ ձև):

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | սոյն | սոքին // սոյնք |
| սեռ. | սորին // սորուն | սոցին //սոցուն (սոցունց) |
| տր. | սմին | սոցին //սոցուն (սոցունց) |
| հայց. | զսոյն | զսոսին // զսոյնս |
| բաց. | ի սմին | ի սոցունց |
| գործ. | սովին // սովիմբ | սոքիմբք // սովիմբք |

8) *Դոյն* դերանվան հոլովումը. եզակի թվում գործիական հոլովում ունի կրկնակ ձևեր, իսկ հոգնակի թվում միայն բացառական հոլովում չունի կրկնակ ձև (սեռականում և տրականում՝ նաև երրորդ ձև):

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | դոյն | դոքին // դոյնք |
| սեռ. | դորին | դոցին //դոցուն (դոցունց) |
| տր. | դմին | դոցին //դոցուն (դոցունց) |
| հայց. | զդոյն | զդոսին // զդոյնս |
| բաց. | ի դմին | ի դոցունց |
| գործ. | դովին // դովիմբ | դոքիմբք // դովիմբք |

9) *Նոյն* դերանվան հոլովումը. եզակի թվում սեռական և գործիական հոլովներում ունի կրկնակ ձևեր, իսկ հոգնակի թվում

միայն բացառական հոլովում չունի կրկնակ ձև (սեռականում և տրականում՝ նաև երրորդ ձև):

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | նոյն | նոքին // նոյնք |
| սեռ. | նորին // նորուն | նոցին //նոցուն (նոցունց) |
| տր. | նմին | նոցին //նոցուն (նոցունց) |
| հայց. | զնոյն | զնոսին // զնոյնս |
| բաց. | ի նմին | ի նոցունց |
| գործ. | նովին // նովիմբ | նոքիմբք // նովիմբք |

գ) Ստացական դերանունների հոլովումը:

1) *Իմ* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | իմ | իմք |
| սեռ. | իմոյ | իմոց |
| տր. | իմում | իմոց |
| հայց. | զիմ | զիմս |
| բաց. | յիմմէ | յիմոց |
| գործ. | իմով | իմովք |

2) *Քո* դերանվան հոլովումը, եզակի բացառականում ունի կրկնակ ձև.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | քո | քոյք |
| սեռ. | քոյ | քոց |
| տր. | քում | քոց |
| հայց. | զքո | զքոյս |
| բաց. | ի քումէ// ի քումմէ | ի քոց |
| գործ. | քով | քովք |

3) *Քոյ* դերանվան հոլովումը, եզակի տրականում ունի կրկնակ ձև.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | քոյ | քոյք |

| | | |
|---|---|---|
| սեռ. | քոյոյ | քոյոց |
| տր. | քոյում //քոյոյ | քոյոց |
| հայց. | զքոյ | զքոյս |
| բաց. | ի քոյոյ | ի քոյոց |
| գործ. | քոյով | քոյովք |

4) *Իւր* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | իւր | իւրք |
| սեռ. | իւրոյ | իւրոց |
| տր. | իւրում | իւրոց |
| հայց. | զիւր | զիւրս |
| բաց. | յիւրմէ | յիւրոց |
| գործ. | իւրով | իւրովք |

5) *Մեր* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | մեր | մերք |
| սեռ. | մերոյ | մերոց |
| տր. | մերում | մերոց |
| հայց. | զմեր | զմերս |
| բաց. | ի մերմէ | ի մերոց |
| գործ. | մերով | մերովք |

6) *Ձեր* դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ձեր | ձերք |
| սեռ. | ձերոյ | ձերոց |
| տր. | ձերում | ձերոց |
| հայց. | զձեր | զձերս |
| բաց. | ի ձերմէ | ի ձերոց |
| գործ. | ձերով | ձերովք |

դ) Փոխադարձ դերանունները չունեն եզակի թիվ, հոլովվում են անվանական *ա* հոլովմամբ:

1) *Միմեանց* դերանվան հոլովումը.

| | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. | - |
| սեռ. | միմեանց |
| տր. | միմեանց |
| հայց. | զմիմեանս |
| բաց. | ի միմեանց |
| գործ. | միմեամբք |

2) *Իրերաց* դերանվան հոլովումը.

| | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. | - |
| սեռ. | իրերաց |
| տր. | իրերաց |
| հայց. | զիրեարս |
| բաց. | յիրերաց |
| գործ. | իրերաւք (օք) |

ե) Հարցական *ո՞, ո՞վ* դերանունները հոլովվում են եզակի և հոգնակի թվով, իսկ *զի՞, զի՞նչ* դերանունները՝ միայն եզակի թվով: Առաջինները չունեն նաև գործիական հոլով, այն լրացվում է *որ*-ի միջոցով:

1) *Ո՞, ո՞վ* (գործառական բաշխմամբ) դերանունների հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ո՞ // ո՞վ | ո՞յք |
| սեռ. | ո՞յր | ո՞յց |
| տր. | ո՞ւմ | ո՞յց |
| հայց. | զո՞ // զո՞վ | զո՞յս |
| բաց. | յումէ՞ | յո՞յց |
| գործ. | որո՞վ | որո՞վք |

2) *Զի՞, զի՞նչ* դերանունների հոլովումը, ունեն կրկնակ ձևեր (բացի սեռական գործիական հոլովներից). հոգնակի թիվ չունի.

| | Եզակի թիվ |
|---|---|
| ուղղ. | զի՞, զի՞նչ |
| սեռ. | է՞ր |
| տր. | ի՞մ, հի՞մ, էրո՞ւմ |
| հայց. | զի՞, զի՞նչ |
| բաց. | յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞ |
| գործ. | ի՞ւ |

**Ծանոթություն 46**: Հարցական *զի՞* և *է՞ր* ձևերը բաղադրվում են *վասն, արդ, աղագաւ* բառերի հետ և կազմում հարցական բառարտահայտություններ՝ *զի՞արդ, է՞ր աղագաւ, վասն է՞ր:*

3) *Քանի՞* բառը՝ իբրև հարցական դերանուն, հոլովվում է եզակի և հոգնակի թվով. եզակիում, բացի ուղղականից և հայցականից, ունի կրկնակ ձևեր.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | քանի՞ | քանի՞ք |
| սեռ. | քանւո՞յ // քանո՞յ | քանեա՞ց |
| տր. | քանւո՞յ // քանո՞յ | քանեա՞ց |
| հայց. | զքանի՞ | զքանի՞ս |
| բաց. | ի քանւո՞յ//ի քանո՞յ | ի քանեա՞ց |
| գործ. | քանեա՞ւ // քանո՞վ | քանեա՞ւք (քանեօ՞ք) |

գ) *Որ* հարաբերական դերանունը հոլովվում է *ո* հոլովիչով, եզակի տրականում ստանում է *-ում*, իսկ բացառականում՝ *-է* հոլովակերտ, հանդես է գալիս նաև իբրև հարցական դերանուն՝ համապատասխան հնչերանգով.

1) *Որ* հարաբերական դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | որ | որք |
| սեռ. | որոյ | որոց |

տր.	որում	որոց
հայց. զոր	զորս
բաց.	յորմէ	յորոց
գործ. որով	որովք

2) *Ո՞ր* հարցական դերանվան հոլովումը.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ո՞ր | ո՞րք |
| սեռ. | որո՞յ | որո՞ց |
| տր. | որո՞ւմ | որո՞ց |
| հայց. | զո՞ր | զո՞րս |
| բաց. | յորմէ՞ | յորո՞ց |
| գործ. | որո՞վ | որո՞վք |

է) *Ամենեքին // ամենեքեան, բոլորեքին // բոլորեքեան* որոշյալ դերանունները հոլովվում են *ու* հոլովիչով, միայն հոգնակի թվով, իսկ *ամենայն*-ը՝ *ի* հոլովիչով, միայն եզակի թվով:

1) *Ամենեքին // ամենեքեան* կրկնաձև (բացառական և գործիական հոլովներում՝ միաձև) դերանվան հոլովումը.

| | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. | ամենեքին // ամենեքեան |
| սեռ. | ամենեցուն // ամենեցունց |
| տր. | ամենեցուն // ամենեցունց |
| հայց. | զամենեսին // զամենեսեան |
| բաց. | յամենեցունց |
| գործ. | ամենեքումբք |

2) *Բոլորեքին // բոլորեքեան* կրկնաձև (բացառական և գործիական հոլովներում՝ միաձև) դերանվան հոլովումը.

| | Հոգնակի թիվ |
|---|---|
| ուղղ. | բոլորեքին // բոլորեքեան |
| սեռ. | բոլորեցուն // բոլորեցունց |
| տր. | բոլորեցուն // բոլորեցունց |
| հայց. | զբոլորեսին // զբոլորեսեան |

բաց.  ի բոլորեցունց
գործ. բոլորեքումբք

3) *Ամենայն* դերանվան հոլովումը.

Եզակի թիվ

ուղղ. ամենայն
սեռ. ամենայնի
տր. ամենայնի
հայց. զամենայն
բաց. յամենայնէ
գործ. ամենայնիւ

ը) Անորոշ դերանուններից *ոմն*-ը և *ոք*-ը սովորաբար գործածվում են անձի փոխարեն, իսկ *իմն*-ը և *ինչ*-ը՝ իրի:

1) *Ոմն, ոք* զուգաձև դերանվան հոլովումը. հոգնակի թվում՝ միաձև, եզակիում՝ դերանվանական (գործիականում՝ ընդհանուր), հոգնակիում՝ անվանական հոլովմամբ.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | ոմն // ոք | ոմանք |
| սեռ. | ուրումն // ուրուք | ոմանց |
| տր. | ումեմն // ումեք | ոմանց |
| հայց. | զոմն // զոք | զոմանս |
| բաց. | յումեմնէ//յումեքէ | յոմանց |
| գործ. | ոմամբ | ոմամբք |

2) *Իմն, ինչ* զուգաձև դերանվան հոլովումը միայն եզակի թվով, սեռական և տրական հոլովներում՝ ընդհանուր ձևեր, գործիականում *իմն*-ը առանձին ձև չունի.

Եզակի թիվ

ուղղ. իմն // ինչ
սեռ. իրիք
տր. իմիք
հայց. զիմն // զինչ
բաց. յիմեմնէ, յիմեքէ

գործ. - իւիք

3) *Այլ* դերանունը հոլովվում է *ո* հոլովիչով, եզակի տրականն ունի -*ում,* իսկ բացառականը՝ -*է* հոլովակերտ:

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| ուղղ. | այլ | այլք |
| սեռ. | այլոյ | այլոց |
| տր. | այլում | այլոց |
| հայց. | զայլ | զայլս |
| բաց. | յայլմէ | յայլոց |
| գործ. | այլով | այլովք |

3) *Միւ (մեւ)* դերանվան հոլովումը. սովորաբար՝ եզակի թվով, հոգնակին՝ հազվադեպ.

| | Եզակի թիվ |
|---|---|
| ուղղ. | միւ (մեւ) |
| սեռ. | միւսոյ |
| տր. | միւսում |
| հայց. | զմիւ |
| բաց. | ի միւսմէ |
| գործ. | միւսով |

**Ընթերցանություն 51:** «Սա հանապազ յամառնայինսն ի խաղալն իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի, զոր շինեաց ի Հայս, կողմնապետ և վերակացու Ասորեստանի և Նինուէի թողու զԶրադաշտ մոգ՝ նահապետ Մարաց: Եւ զայս այսպէս բազում ժամանակս կարգեալ Շամիրամայ՝ ամենեւին հաւատայ նմա յարդարել զիւր իշխանութիւնն:

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդւոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց՝ կոտորէ զամենեսեան, և ապրի կրտսերագոյնն միայն, որ է Նինուաս: Բարեկամաց և հոմանեաց իւրոց պարգեւելով զամենայն իշխանութիւն և զգանձս՝ ոչ ինչ վասն որդւոց իւրոց փոյթ յանձին ունէր: Քանզի և այրն նորա Նինոս ոչ, որպէս ասի, մեռեալ թաղեցաւ ի նմանէ ի Նինուէ

յարքունիսն, այլ իմացեալ զախտաւէր բարս նորա և զչարասէր, թողեալ զթագաւորութիւնն, փախստական անկանէր ի Կրետէ: Իսկ ի հասակ և ի միտս հասել որդւոց նորա՝ յիշեցուցանեն նմա զայս ամենայն՝ կարծելով ցածուցանել զնա ի դիւական պագշոտութենէն, և աւանդել զիշխանութիւնն և զգանձս որդւոց իւրոց: Ընդ որ առաւել զայրագնեալ՝ սատակէ զամենեսեան. և մնայ միայն, որպէս վերագոյն ասացաք, Նինուաս:

Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկանել, պատերազմ ի վերայ նորա յարուցանէ Շամիրամ, քանզի բռնանալ ի վերայ ամենայնի խորհէր մարն: Եւ ի սաստկանալ պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս: Աստ ժամանակ վրէժխնդրութեան պատեհ գտեալ Նինուասայ՝ սպանանէ զմայրն և ինքն թագաւորէ ի վերայ Ասորեստանի և Նինուէի: Ահա ասացաք և յաղագս մահուանն Շամիրամայ, թէ ուստի՛ և ո՛րպէս» (*Խոր.,* էջ 68):

**Ընթերցանություն 52:** «Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղև առաքել[1] անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս և ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն ընդ նմա առնել, զի երթիցէ. ի մէջ կայսերն և ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն: Ապա չոգան գնացին հասին ի կայսերական պալատն թագաւորացն Յունաց:

Զայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խոտորութեանն հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս[2]: Արդ իբրև ետես զնոսա թագաւորն, զառաջինն մեծապայծառ փառօք, մեծաւ շքով մեծարեաց զնոսա: Ապա դէպ եղև, զի որդի միամօր կայսերն, այն իսկ գտանէր նորա զաւակ, անգեալ դնէր յախտս սաստիկ հիւանդութեան. ապա թագաւորն վասն աղօթս առնելոյ ի վերայ մանկան ստիպէր զսուրբ կաթողիկոսն Հայոց զՆերսէս: Իսկ նա ի մէջ մատուցեալ[3], խօսել սկսաւ և ասէ» *(Բուզ.,* էջ 12):

1. *Դէպ եղև առաքել* - կարիք եղավ ուղարկելու:

2. *Ի խոտորութեանն հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս* - հավատով մոլորված էր դեպի արիանոսների հերետիկոսական աղանդը:

3. *Ի մէջ մատուցեալ* - մեջ մտնելով:

**Վարժություն 96:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *ինքեանց, նոցա, իւրեանք, իւրեանց, զձեզ, նոքաւք, զիւրեանս, սորա, դմա, ի դմանէ, սովաւ, դոքա, ի դոցանէ, սոքաւք, այսր, այսմիկ, այդու, այնու, այնց, այնոցիկ, յայսց, այսք, այնու, այնուիկ, այսց, յայսմ, յայդցանէ, այսոքիւք:*

**Վարժություն 97:** Թարգմանել գրաբար. *նրա, ինձանից, ինձանով, մենք, նրանք, իրենք, իրենց, մեզանից, մեզանով, նրանցով, իրենցով, սրանից, սրանով, դրանով, դրան, նրան, նրանց, դրանցից, նրանք, նրանցով, նրանցում:*

**Վարժություն 98:** Նշել հետևյալ ձևերի հոլովը և դերանվան տեսակը. *իմոյ, ի ձերմէ, քոյով, այդք, զսոսա, յումեմնէ, ի դմանէ, ոմանք, ուրուք, ի միսմէ, միսում, բոլորեցունց, ամենեքումբք:*

**Առաջադրանք 93:** Բանավոր հոլովել որևէ ցուցական դերանուն` եզակի և հոգնակի թվով:

**Առաջադրանք 94:** Կարդալ «Ընթերցանություն 51»-ը և առանձնացնել դերանվանական ձևերը, նշել տեսակը և հոլովը:

**Առաջադրանք 95:** Կարդալ «Ընթերցանույուն 51»-ը, առանձնացնել հատուկ անունները, նշել հոլովը և հոլովումը:

**Առաջադրանք 96:** Կարդալ «Ընթերցանություն. 52»-ը, առանձնացնել նրանում գործածված դերանունները, որոշել հոլովը և տեսակը:

**Առաջադրանք 97**: Կարդալ «Ընթերցանություն 52»-ը, առանձնացնել թեք հոլովով գոյականները, նշել հոլովը և հոլովումը:

**Առաջադրանք 98:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *ամենեւին հաւատալ, յարդարել զիշխանութիւն, որպէս վերագոյն*

*ասացաք, փախստական լինել, նորոգել զուխտն, մեծարեաց զնոսա, խօսիլ սկսանել:*

**Հարցեր 28:** ա) Ի՞նչ է դերանվանական հոլովումը:

բ) Ի՞նչ եղանակներով են հոլովվում գրաբարի դերանունները:

գ) Ինչպե՞ս են հոլովվում ցուցական դերանունները:

դ) Ո՞ր դերանուններն ունեն անվանական հոլովման առանձնահատկություններ:

# 5. ԲԱՅ

## ա) Բայարմատ, բայահիմք և բայաձև

**§ 92.** Բայը ցույց է տալիս գործողություն: Այն տեղի է ունենում որոշակի հանգամանքներում: Այդ հանգամանքները խստորեն թելադրված են տվյալ լեզուն կրող հանրության մտածողությամբ, ընկած են գործողի, գործողության և գործի առնչության հիմքում: Դրանք լեզվից լեզու տարբեր են, տարբեր են նաև նույն լեզվի առանձին փուլերում, նույնիսկ միևնույն փուլի զանազան վիճակներում: Այսպես, որոշակիորեն առանձնանում են հին գրական հայերենի (գրաբարի) և հայերենի հետագա փուլերի, այնուհետև դրանց գրական և խոսակցական (բարբառային) տարբերակների համակարգերում բայի արտահայտած գործողության հանգամանքները:

Հայերենում բայը բնութագրվում է գործողության դրսևորման ընդհանրական (ընդհանուր հայկական), այլև միայն հին հայերենին բնորոշ հանգամանքներով: Դրանք են՝ դեմքը, թիվը, եղանակը, ժամանակը, բայասեռը, խոնարհման հիմքը, խոնարհման ձևը: Քերականություններում դրանք սովորաբար կոչվում են քերականական կարգեր, որոնք առհասարակ բայական կարգեր են, իսկ դրանցից դեմքը, թիվը, եղանակը և ժամանակը՝ մասնավորաբար խոնարհման կարգեր:

**§ 93**. Բայակազմական ելակետային միավորը գրաբարում ևս բայարմատն է, որն արտահայտում է տվյալ բայի չտարբերակված, ընդհանուր իմաստը: Բայարմատն այն նախնական ձևն է, որից սերվում են բայական բազմաթիվ ձևեր՝ շնորհիվ հիմքակազմական և ձևակազմական զանազան միջոցների գործադրման: Ըստ այդմ կարելի է ասել, թե բայարմատը բայի այն մասն է, որն առանձին է հիմքակազմ մասնիկներից, խոնարհման և դերբայական վերջավորություններից:

Բայահիմքը գոյանում է բայարմատի հիման վրա: Այդ դեպքում բայարմատին ավելանում են հիմքակազմ մասնիկներ: Գրա-

բարում հիմքակազմ մասնիկներ են բայածանցները՝ *-ան-, -են-, -ն-, -չ-, -նչ-, -աչ-, -անչ-, -աց-, -եաց-, -ոյց-, -ատ-, -ոտ-, -տ-, -ի-* և ø- (զրո): Դրանք դրվում են բայարմատի և բայական վերջավորությունների միջև: Բայածանցները մասնակցում են տարբեր բայահիմքերի արտահայտմանը, ընդգրկում են գործածության որոշակի ոլորտներ և հանդես են գալիս տարբեր չափերով ու հաճախականությամբ:

Բայաձևը տվյալ բայի ձևաբանորեն փոփոխված մի ձևն է: Այն գրաբարում գոյանում է բայարմատի, բայածանցի և բայական վերջավորության համադրությամբ: Բայածանցների համեմատությամբ բայական վերջավորությունները բավականին շատ են, բնույթով էլ՝ խիստ բազմազան: Դրանք ըստ էության բայի դերբայական և խոնարհման վերջավորություններն են: Բայաձևը բայի վերջնական, ավարտուն և քերականորեն հազեցած ձևն է:

Այսպես, օրինակ, գրաբարում *տեսանեմ, մերձենամ, առնուլ, թռչիմ, մարտնչիմ, մեղանչեմ, շարժեաց, աղացի, տեսուցանել, խածտել, խոցոտել, բեկտեմ* ( «չորեքկողմյան կոտրատում եմ»), *փախեայ* և *գրեմք* բայաձևերը բաղադրված են *տես-, մերձ-, առ-, թռ- (թիռ-), մարտ-, մեղ-, շարժ-, աղ-, տես-, խած-, խոց-, բեկ-, փախ- և գր- (գիր-)* բայարմատների, վերը թվարկված բայածանցների և սահմանական ներկայի, անցյալ անկատարի, անցյալ կատարյալի *-եմ, -իմ, -եմք, -այի, -եաց, -ցի, -եայ,* անորոշ դերբայի *-ել (-իլ), -ալ, -ուլ* վերջավորությունների միջոցով:

**§ 94.** Ըստ բայածանցների հիմքակազմության մասնակցության բնույթի՝ բայահիմքերը բաժանվում են մի քանի տեսակի:

ա) Բայի անկատարի հիմք. բաղադրվում է *-ան-, -են-, -ն-, -չ-, -նչ-, -աչ-, -անչ- և - ø- (զրո)* բայածանցների օգնությամբ:

Օրինակ՝ *մոռ-ան(ալ), մօտ-են(ալ), ուտ-ն(ուլ), փախ-չ(իմ), կոր-նչ(իմ), ճան-աչ(ել), մեղ-անչ(ել), գր-(ել)* և այլն:

բ) Բայի կատարյալի հիմք. բաղադրվում է *-աց, -եց- (< -եաց-), ի* և - ø-- (զրո) բայածանցների օգնությամբ:

Օրինակ՝ *մռռ-աց(այ), մօտ-եց(< եաց) (աւ), ոստ-ե (< ի) (այ), փախ-ե (<ի) (այ), կոր-ե (< ի) (այ), մեղ- ø- (այ), գր-եց (< եաց) (ի)* և այլն:

գ) Պատճառական բայերի հիմք. բաղադրվում է ոյց, բացառիկ դեպքերում՝ *–ոյս-(ց* -ի փոխարեն *ս*) և *-ոյզ-* (*ց*-ի փոխարեն *զ*) բայածանցներով. նախ՝ *ոյս*-ը և *ոյզ*-ը դիրքային տարբերակներն են, երկրորդ՝ պատճառական բայածանցը, դրվելով բայի կատարյալի հիմքի վրա, երկրորդաբար վերադարձվում է անկատարի հիմքին, այսինքն՝ նորից բաղադրվում է *ան* բայածանցով:

Օրինակ՝ *մռռ-աց-ուց(<ոյց)-ան(ել), մօտ-եց-ուց(<ոյց)-ան(ել), ոստ-ուց(<ոյց)-ան(ել), փախ-ուց(< ոյց)-ան(ել), կոր-ուս(< ոյս < ոյց) -ան(ել), ընկլ-ուզ(< ոյզ < ոյց) -ան(ել), մեղ-ուց(< ոյց)-ան(ել), երեւեց-ուց(< ոյց)-ան(ել)* և այլն:

*-Ոյզ-* բայածանցով պատճառական են *փլուզանել, ընկլուզանել, ընդելուզանել,* իսկ *-ոյս* ածանցով՝ *հեղուսանել* և այլն:

Ըստ այդմ պատճառական հիմքակազմ ածանց ունեցող բայերն ստանում են նաև անկատարի հիմքակազմ ածանց, որպեսզի բայը հնարավորություն ունենա ձևափոխվելու բայական վերջավորությունների միջոցով:

դ) Բազմապատկական բայերի հիմք. նախ՝ սա գրաբարում բավականին սահմանափակ է, երկրորդ՝ տարածվում է քիչ թվով բայերի վրա, այն կազմվում է *-ատ-, -ոտ-, -տ-* բայածանցներով:

Օրինակ՝ *խած-ատ(ել), կտր-ատ(ել), խանճ-ատ(ել), խռ-ոտ(ել), բեկ-տ(ել)* և այլն: Սրանք խոնարհվում են իբրև սովորական բայեր, այսինքն՝ ձևափոխության ժամանակ իրենց համապատասխան հիմքերը վերակազմում են սովորական կազմության բայերի պես:

**§ 95.** Գրաբարում երբեմն բայահիմքը գոյանում է որևէ հիմքակազմ մասնիկի (բայածանցի) բացակայությամբ: Նման բայահիմքը կազմվում է, ի հակադրություն մյուսների, ø (զրո) բայածանցով և կոչվում է արմատական հիմք:

Օրինակ՝ *ած- ø (ել), բեր- ø (ել), գել- ø (ուլ), երթ- ø (ալ), ըղձ- ø (ալ), ժողով- ø (ել)* և այլն: Արմատական հիմքը զուգակցվում է թե՛

անկատարի և թե՛ կատարյալի հիմքերի հետ, այսինքն՝ վերջիններս կարող են կազմված լինել ինչպես «լիածանց» (որևէ ածանցով), այնպես էլ «անածանց» (ø ածանցով) ձևով:

**Ընթերցանություն 53:** «Ազգի ազգի մոլեգինք լինին ի քաղաքս բազումս, և յայգուէ ցերեկոյ միտ եդեալ պշուցեալ հային իբրև ի դարման իմն և ի կերակուր աչաց ցանկութեամբք բնակիչք նոցա, և լսեն անդադար զձայն աղտեղի երգոց, որ լնուն արկանեն ի լսելիս նոցա զյիշատակ բազմաց աղտեղութեանց, որ մտանեն բունեն յըշտեմարանս սրտից և մտաց, և այնպես անյագ են առ ի լսել զլուրն վնասակար: Եւ այլք, որ ոչ էին անդր մաւտ, երանի ևս տան բազմամբոխ ժողովրդոցն, որ երթեալ կցորդեալ կոպանեալ[1] կան առ վնասակարսն: Եւ կէսքն զշահ ևս վաճառացն, զոր ժողովեն միշտ ի հրապարակաց, թողուն և երթան անդր դատարկանան, և կէսքն, զգործ արուեստիցն, որով գտանեն զգարդման կենաց իւրեանց: Եւ այսու ամենայնիւ սնոտի ցանկութեամբ զաւուրս կենաց ժամանակաց իւրեանց յունայնութիւն և ի սնոտիս ծախեն:

Եւ զայն ոչ առնուն ի միտ, թէ գուսանութիւնն իւրովք պատիր արուեստիւք զապականութեան նշանակ գործէ ի տեսողս իւր, և իրք առականաց[2] են անդ, որոց առաջի ամենայն մարդկան դնին ծանակութիւնքն: Եւ այնպէս միաժողով միանգամայն նստին բազումք դեգերեալք ժամանակեալք ի մի ժամադրութիւն՝ լսել և տեսանել զապականութիւն աղտեղութեանց: Զի ձայն երգչացն պէսպէս նուագաւք գեղգեղեալք, և բարբառք պոռնկացն տեղի ապականութեան և աղտեղութեան յիշատակեն ի միտս նոցա. և այլ ինչ ոչ անկանի ի խորհուրդս նոցա, բայց այս, զի տեղի ամաւթոյ մի գտանիցի ի նոսա: Եւ յորժամ ծնծղայքն և տաւիղքն բարբառեսցին, առաւել ևս յայթիւս և յակճիռս կան[3] ընկճեալք, զի զաւրինակ կերպարանաց նոցա նկարեսցեն յանձինս իւրեանց» (*Բարս.,* էջ 100-101):

1. *Կոպանեալ* - կոպով ծածկված, կուրորեն:

2. *Առակաց* - ամոթանքի, խայտառակության, ծաղրուծանակի:

3. *Յակճիռս կան* - սևեռուն ուշադրության մեջ են:

**Վարժություն 99:** Անորոշ դերբայով դրված հետևյալ բայերը վերլուծել ըստ բայարմատ, բայածանց, բայական վերջավորություն բաղադրիչների. *արկանել, ելանել, բոլորել, գալ, գթալ, գրգռել, դաղարել, դարովել* («նախատել, հանդիմանել»), *զերծանել, ընդոստնուլ, լքանել, խողխողել, խոյանալ, ծագել, ծախել («ծախսել, մաշել, փչացնել, ավերել», կարել* («կարողանալ»), *կարծել, կոտորել, հայցել, հաւատալ, ճարակել, մերձենալ:*

**Վարժություն 100:** Գտնել հետևյալ բայերի բայածանցները. *անցանել, արձակել, գայթել, եղծանել, երկնել, երկուանալ, ընթեռնուլ, ընկենուլ, թաքչիլ, լեզուլ* («լիզել»), *ծակոտել, կանգնել, կաքաւել, կորուսանել, հեղձանիլ, ճոխանալ, մարզել, ոստնուլ, ցուցանել, օծտել:*

**Վարժություն 101:** Գտնել հետևյալ բայերի բայարմատները. *արբենալ, բազմիլ, բաջաղիլ* («ցնդաբանել»), *բաշխել, բեկտել, բերանանալ, բուսանիլ, գելուլ, գործել, գումարել, դնել, երագել* («արագանալ»), *երդմնեցուցանել, զարկուցանել, ըղձալ, ընձեռել, թեքել, իմանալ, իմաստնանալ, լլկել, լնուլ, խափուցանել:*

**Առաջադրանք 99:** Հետևյալ բայերը խմբավորել ըստ բայածանցների. *արդարացուցանել, բառնալ, բնակել, բտել, դարձուցանել, երդնուլ, երևեցուցանել, զբօսնուլ, զգուշանալ, թանձրանալ, լուծանել, խոցոտել, հարցանել, հերձանել, օծանել:*

**Առաջադրանք 100:** Վերհիշել պարզ և ածանցավոր կազմություն ունեցող հինգական բայ:

**Հարցեր 29:** ա) Ի՞նչ է ցույց տալիս բայը և որո՞նք են բայական քերականական կարգերը:

բ) Որո՞նք են գրաբարի բայածանցները:

գ) Ի՞նչ է բայահիմքը և ինչպիսի՞ բայահիմքեր կան:

դ) Ի՞նչ է բայաձևը:

## բ) Խոնարհում, եղանակ և ժամանակ

**§ 96.** Գրաբարում բառի ձևաբանական փոփոխությունը (թեքումը) գոյականի (առհասարակ՝ անունների) համար հոլովումն է, իսկ բայի դեպքում՝ խոնարհումը: Վերջինս բայի եղանակային և ժամանակային փոփոխությունների ամբողջությունն է: Գոյականը թեքվում է հոլովիչներով, իսկ բայը՝ խոնարհիչներով: Գրաբարում բայն ունի չորս խոնարհում՝ *ա, ե, ի, ու.* որոնք միաժամանակ կոչվում են խոնարհիչներ:

**Ծանոթություն 47:** Հայտնի է *ո* խոնարհման բայի մեկ օրինակ՝ *գոլ* («գոյություն ունենալ, լինել»), որը պակասավոր բայ է, չի պահել մյուս բայերին հատուկ եղանակային և ժամանակային լիարժեք ձևավորումը:

Անորոշ դերբայի ձևերում *ե* և *ի* խոնարհիչները նույնանում են, որովհետև այդպես է ավանդված գրաբարի դասական նմուշներում (գրական հուշարձաններում): Իսկ խոնարհման ժամանակ դրանք միանգամայն տարբեր են: Ուստի գրաբարի բառարաններում բայի ելակետային ձևերը նշվում են ոչ թե անորոշ դերբայի հիման վրա, ինչպես ժամանակակից հայերենում, այլ սահմանական ներկայի եզակի առաջին դեմքի ձևով: Օրինակ՝ *մնամ, իմանամ, գրեմ, գտանեմ, խորհիմ, ուսանիմ, հեղում, ընթեռնում* և այլն:

**Ծանոթություն 48:** Նորմատիվ քերականություններում և դասագրքերում, ուսուցողական նպատակով, ելակետային է դիտվում անորոշ դերբայի ձևը, իսկ անհրաժեշտության դեպքում նշվում են *ի* խոնարհման բայերը սահմանական ներկայի եզակի առաջին դեմքի ձևով:

**§ 97.** Բայերն ըստ կազմության լինում են պարզ և ածանցավոր: Պարզ են այն բայերը, որոնք բաղադրված են բայարմատով և բայական վերջավորություններով: Ածանցավոր են այն բայերը, որոնք բաղադրված են բայարմատով, բայածանցով և բայական վերջավորություններով: Պարզ և ածանցավոր բայերն ըստ խոնարհումների բաշխվում են հետևյալ խմբերի:

ա) *Ա* խոնարհման պարզ բայեր. *աղալ, ամալ* («լցնել, դատարկել»), *անսալ, գթալ, գոռալ, դողալ, եռալ, խաղալ, խայտալ, խնդալ, խոկալ* («մտածել, մտատանջվել, հոգ տանել»), *մնալ, յուսալ* («հույս ունենալ, ապավինել»), *ողբալ, որսալ, սգալ, ցնծալ, փութալ* և այլն:

բ) *Ա* խոնարհմանածանցավոր բայեր. *բանալ, բառնալ* («վերցնել, բարձել, վեր հանել»), *գոհանալ, դառնալ, դժուարանալ, զարմանալ, իմանալ, լուանալ, ծուլանալ, հեռանալ, մեծանալ, մերձենալ, մոռանալ, ցանկանալ, սլանալ, վերանալ* և այլն:

գ) *Ե* խոնարհման պարզ բայեր. *ազդել, ածել, աղաղակել, աղխել, առաքել* («ուղարկել»), *աշխարել* («լալ, ողբալ»), *արձակել, բերել, բուժել, բրել, գործել, գրաւել, գրել, երգել, զարդարել, լիզել, կատարել, կարգել, կարծել, կաքաւել, կեղեքել, համբերել, համբաւել* («մեկին գովել, գովքը անել, հռչակը տարածել»), *հիւսել, մարթել, մերկել, նիրհել, շարել, շրջապատել, պահել, սիրել, ստեղծել, վազել, վառել, վաստակել, ցօղել, փարել, քաղել, քսել* («քսություն՝ խառնակչություն անել») և այլն:

դ) *Ե* խոնարհման ածանցավոր բայեր. *անցանել, արկանել, բեկանել, բուծանել, գերծանել* («մազերը խուզել՝ կտրել, ածիլել»), *գտանել, դիզանել, ելանել, զարկանել, զեղծանել, զերծանել, իջանել, լուցանել, կիզանել, հասանել, հատանել, հարկանել, հարցանել, մտանել, ներկանել, սկսանել, սպանանել, տարածանել, տեսանել, ցուցանել, օծանել* և այլն:

ե) *Ի* խոնարհման պարզ բայեր. *բազմել (բազմիմ), դադարել (դադարիմ), երևիմ, խորհել (խորհիմ), ծարաւել (ծարաւիմ), ծածանել (ծածանիմ), ծիծաղել (ծիծաղիմ), ծորել (ծորիմ), կամել (կամիմ), հայել (հայիմ), հանդիպել (հանդիպիմ), հիւծել (հիւծիմ), նայել (նայիմ), նիրհել (նիրհիմ), նստել (նստիմ), շրջել (շրջիմ), ողորմել (ողորմիմ), պատահել (պատահիմ), սասանել (սասանիմ), սխալել (սխալիմ), վրիպել (վրիպիմ), փրփրել (փրփրիմ)* և այլն:

զ) *Ի* խոնարհման ածանցավոր բայեր. *ազանել (ազանիմ), անկանել (անկանիմ), բուսանել (բուսանիմ), երկնչել (երկնչիմ), զերծանել (զերծանիմ), թռչել (թռչիմ), ծնանել (ծնանիմ), կառչել (կառչիմ), կորնչել (կորնչիմ), հանգչել (հանգչիմ), մատչել (մատ-*

*չիմ), մարտնչել (մարտնչիմ), մեռանել (մեռանիմ), յարնչել (յարնչիմ), շիջանել (շիջանիմ), ուսանել (ուսանիմ), սկսանել (սկսանիմ), փախչել (փախչիմ)* և այլն:

է) *Ու* խոնարհման պարզ բայեր. *արգելուլ, գելուլ* («ճզմել, պրկել, ոլորել»), *գենուլ* («սպանել»), *գերծուլ, թողուլ, լեսուլ* («լեսանել. մանրել, փշրել»), *լիզուլ, կալսուլ* («կալսել»), *կիզուլ, հարուլ* («խփել, հարու տալ»), *հեղձուլ, հեղուլ, յաւելուլ, ցելուլ* («ճեղքել, պատռել») և այլն:

ը) *Ու* խոնարհման ածանցավոր բայեր. *այտնուլ* («ուռչել»), *առնուլ, եղծնուլ* («փչացնել, ոչնչացնել, հերքել»), *երդնուլ, զարթնուլ, զբաղնուլ, զբօսնուլ, զգենուլ, զգածնուլ* («հագնել, համակել»), *զերծնուլ, զընկենուլ* («մի կողմ նետել, դեն գցել»), *ընթեռնուլ, ընկենուլ, խնուլ* («խցկել, փակել»), *կալնուլ, հեղձնուլ, մածնուլ, մատնուլ, շրտնուլ* («խրտնել, շփոթվել, վարանել»), *ստնուլ, ունուլ, պակնուլ* («վախից դողալ, խիստ վախենալ»), *պշնուլ* («պլշել, աչքը մի կետի սևեռած նայել»), *ջեռնուլ, սառնուլ, սարտնուլ* («խրտնել, փախչել»), *սկսնուլ, ցածնուլ, ցասնուլ, փախնուլ, քաղցնուլ* և այլն:

**§ 98.** Բայերի առանձին, այս կամ այն խոնարհման պատկանելը, ինչպես նաև որոշակի կազմություն ունենալը միշտ չէ, որ մեկընդմիշտ հստակ ու անխափան է լինում: Քերականություններում հաճախ է նշվում այն մասին, որ բայերը երբեմն ունենում են խոնարհումների փոխանցումներ: Դրանք ոչ միայն խոնարհման (ավելի ստույգ՝ խոնարհիչի) հետ կապված իրողություններ են, այլև առնչվում են բայածանցներին: Այսպես, գրաբարում հավասարապես գործածվող *գերծել // գերծանել // գերծուլ* բայերը զուգահեռներ են, որ գոյացել են միևնույն բայարմատի հիման վրա՝ ø- (զրո) // *ան* բայածանցական զուգահեռությամբ, *ել // ուլ* խոնարհումների փոխանցմամբ, թերևս արդյունք են տարածքային (խոսակցական կամ բարբառային) տարբերակման:

Տարածված են հետևյալ բայական զուգաձևերը (տարբերակները).

ա) *Եմ // իմ. բնակեմ // բնակիմ, դադարեմ // դադարիմ, ծաղկեմ // ծաղկիմ, հանդիպեմ // հանդիպիմ, մոլորեմ // մոլորիմ, փայլեմ // փայլիմ* և այլն:

բ) *Իմ // եմ. թաւալիմ // թաւալեմ, համարիմ // համարեմ, ճեմիմ // ճեմեմ* և այլն:

գ) *Ում // եմ* (կամ՝ հակառակը). *արգելում // արգելեմ, զենում // զենեմ, յաւելում // յաւելեմ, ցելում // ցելեմ, հենուլ // հենել, կրծել // կրծուլ, արձակել // արձակուլ* և այլն:

դ) *Եմ // անեմ. զատեմ // զատանեմ, մերկեմ // մերկանեմ, տարածեմ // տարածանեմ, օծեմ // օծանեմ* և այլն:

ե) *Եմ // ում // անեմ. դիզեմ // դիզում // դիզանեմ, կիզեմ // կիզում // կիզանեմ, հերձում // հերձեմ // հերձանեմ, ստեղծեմ // ստեղծում // ստեղծանեմ, հարեմ // հարում // հարկանեմ* և այլն:

զ) *Ում // անեմ // անիմ. զերծում // զերծանիմ, հեղձում // հեղձանեմ, գելում // գելանիմ, զեղում // զեղանիմ, հեղում // հեղանիմ* և այլն:

է) *Անեմ // եմ // նում. թքանել // թքել // թքնուլ, եղծանել // եղծել// եղծնուլ* և այլն:

ը) *Նում // չիմ* (կամ՝ հակառակը). *զարթնում// զարթչիմ, ստնում // ստչիմ, ուռնում // ուռչիմ, թռչիմ // թռնում, սառչիմ // սառնում, փախչիմ // փախնում* և այլն:

**§ 99**. Բայասեռը ցույց է տալիս գործողության ուղղվածությունը: Ըստ այդմ առնչակից են դառնում նախադասության անդամներից մի դեպքում՝ ենթական և ստորոգյալը, մեկ այլ դեպքում՝ ենթական և ուղիղ խնդիրը: Բայասեռերը երեքն են՝ ներգործական, կրավորական և չեզոք: Այդ երեքից բացի առանձնանում են, այսպես կոչված, հասարակ (ընդհանուր սեռի) բայերը:

ա) Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս առարկայի կատարած գործողության անցում, ազդում մեկ այլ առարկայի վրա:

Օրինակ՝ Գնել պատանեակն էառ զՓառանձեմ ի կնութիւն: Թզենի արձակեաց զբողբոջ իւր: Շապուհ արքայն Պարսից կոչէր առ ինքն զթագաւորն Հայոց զԱրշակ:

Բերված օրինակներում *Գնել պատանեակն, թզենի, Ծաղուի արքայն Պարսից* միավորները նախադասության ենթական են, որ իրենց կատարած գործողություններով՝ *էառ* («առավ»), *արձակեաց* («արձակեց») և *կոչէր* («կանչում էր, կանչեց»), ներգործում, ազդում են խնդիրների վրա՝ *զՓառանձեմ, զբողբոջ* և *զթագաւորն Հայոց զԱրշակ*:

Ներգործական սեռի բայերը բավականին շատ են. բառարաններում դրանք բերվում են հատուկ նշումով (*նր.,* ներգործական բայ):

Օրինակ՝ *ազդեմ, աղխեմ, անարգեմ, անկանեմ* («հյուսել»), *առնեմ* («անել, ստեղծել»), *բարբառեմ, գալարեմ, գելում, գրգռեմ, գօտեւորեմ, դեղեմ, դրոշմեմ, երդնում, զգետնեմ, զեղում, ըմբռնեմ, ընդվզեմ, թանամ, թօթափեմ, լուցանեմ, խլեմ, կտտեմ* («տանջել, խոշտանգել»), *հաստեմ, հարցանեմ, հերձանեմ, ճարակեմ, ճողոպրեմ, մարզեմ, մթերեմ, յաւելում, յորդորեմ, յօրինեմ, նշանակեմ, շրջեմ, ուխտեմ, պարարեմ, ջրեմ, վառեմ, վայթեմ* («թափել, շաղ տալ»), *ցօղեմ, փարատեմ, քամահրեմ* («արհամարհել»), *քննեմ* և այլն:

բ) Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողության կրելը, ազդվելը մի առարկայից: Նախադասության մեջ խնդրի արտահայտած գործողությունն ուղղված է ենթակային. նման բայերն առաջանում են ներգործականներից, ըստ որում տեղի է ունենում *ե* խոնարհիչի վերածում *ի* խոնարհիչի:

Օրինակ՝ Աստեղք ի մոգուց և ի հեթանոսաց պաշտին: Մոգքն գաղտ կոչեցան ի Հերովդեայ: Այս ոճիրք դառն գործեցան յորդւոցն Հմայեկի:

Բերված օրինակներում *աստեղք, մոգքն* և *ոճիրք* բառերը նախադասության ենթական են, դեպի որոնց ուղղված են *ի մոգուց, ի հեթանոսաց, ի Հերովդեայ, յորդւոցն Հմայեկի* բացառական հոլովով դրված (ներգործող) խնդիրների կատարած գործողությունը՝ *պաշտին, կոչեցան* և *գործեցան*: Եվ նկատելի է, որ կրավորական սեռի վերածվելիս ներգործական կառուցվածքի նախադասություններն ինքնըստինքյան դառնում են կրավորական կառուցվածքի: Դա գրաբարի նախադասության փոխակերպման

ձևերից մեկն է. ներգործական սեռի բայերի գործածությունը լինում է երկու կարգի՝ ներգործակերպ (ներգործաձև) և կրավորակերպ (կրավորաձև):

Օրինակ՝ *ազդեմ* («ազդում եմ») և *ազդիմ* («ազդվում եմ»), *գրեմ* («գրում եմ») և *գրիմ* («գրվում եմ»), *խոցոտեմ* («խոցոտում եմ, վիրավորում եմ») և *խոցոտիմ* («խոցոտվում եմ, վիրավորվում եմ») և այլն:

գ) Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս ինքնակա գործողություն, այսինքն՝ նրանցով արտահայտված գործողությունը որևէ ներգործում, ազդում կամ կրելը, ազդվելը չէ:

Օրինակ՝ Ազգ երթայ և ազգ գայ, և երկիրս յաւիտեան կայ: Եւ ելին առ նա նախարարք այլազգեացն: Ահաւասիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւասիկ կաս գեղեցիկ:

Բերված օրինակներում *երթալ, գալ, ելանել* և *կալ* բայերը չեզոք են, որովհետև արտահայտում են այնպիսի գործողություն, որ չի անցնում ենթակայից՝ *ազգ, երկիր.* որևէ խնդրի (առավել ևս՝ ուղիղ խնդրի) վրա, որպիսին նման նախադասություններում չի էլ պահանջվում:

Զգալի թիվ են կազմում չեզոք բայերը, բառարաններում բերվում են հատուկ նշումով (*չբ.*՝ չեզոք բայ):

Օրինակ՝ *ապաւինեմ, առաձանիմ* («պտտվել, դառնալ»), *բազմանամ, բազմիմ, բաջաղիմ* («ավել-պակաս խոսել, ցնդաբանել»), *բնակեմ, բուսանիմ, գամ, դաղարեմ, դեգերիմ, երեւիմ, զիջանեմ, զօրեմ, ժրանամ, խճողիմ, խոնջիմ* («հոգնել»), *ծիւրիմ* («նիհարել»), *կառչիմ, կրթիմ, հաստատիմ, հարթնում* («խրտնել, դուրս թռչել»), *հեծեծեմ* («հառաչել, թառանչ արձակել»), *հոծիմ* («խտանալ»), *ղօղիմ* («պահվել, ծածկվել»), *ճոխանամ, մեղմեխեմ* («շողոքորթել»), *մոլիմ* («կատաղել, դիվահար լինել»), *մրցիմ, յագենամ, յաճախիմ, յենում, նքողիմ* («քաղցից նվազել, չորանալ»), *շրտնում* («խրտնել, ապուշանալ»), *շրջիմ, ուռնում, չքոտիմ* («չքանալ»), *պասքիմ* («խիստ ծարավել, պապանձվել»), *պրծանիմ, ջեռնում, սարտնում* («խրտնել»), *սոնքանամ* («գիրանալ»), *վրիպեմ, փղձկամ, փութամ* և այլն:

դ) Կան նաև բայեր, որոնք նախադասության մեջ, ելնելով գործողության ուղղվածությունից, միաժամանակ ցույց են տալիս ներգործական կամ կրավորական սեռ, այսինքն՝ երևան են բերում երկու սեռի իմաստ: Իսկ թե տվյալ նախադասության մեջ տվյալ բայը ինչ իմաստ է արտահայտում, նկատելի է բնագրային կիրառությունից: Ավանդաբար նման բայերը կոչվում են հասարակ (ընդհանուր. միաժամանակ՝ ներգործական և կրավորական սեռի) բայեր:

Օրինակ՝ Աշակերտ *ուսաւ* ի վարդապետէ իւրմէ: Վարդապետ *ընթերցաւ* զնամակ // Նամակ *ընթերցաւ* ի վարդապետէ: Բերված օրինակներում *ուսաւ* և *ընթերցաւ* բայաձևերն արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռ: Այսպես, ըստ համատեքստի (բնագրային կիրառության) առաջին օրինակում *ուսաւ*-ը դրված է կրավորական, երկրորդ օրինակում *ընթերցաւ*-ը արտահայտում է ներգործական, իսկ երրորդ օրինակում՝ կրավորական սեռի իմաստ: Նման իմաստավորումը մեծապես պայմանավորված է նախադասության ենթակայի (*աշակերտ, վարդապետ, նամակ*) և խնդրի (*ի վարդապետէ, զնամակ*) հարաբերությամբ, ինչպես նաև դրանցում երևան եկած գործողության ուղղվածությամբ:

Համեմատաբար քիչ են հասարակ բայերը. բառարաններում բերվում են հատուկ նշումով (*հր.*՝ հասարակ բայ):

Օրինակ՝ *դատիմ* («դատել, աշխատել՝ չարչարվել»), *զգենում* («հագնել, հագնվել»), *ընթեռնում* («կարդալ, կարդացվել»), *իմանամ* («գիտենալ. իմացվել»), *խոստովանիմ* («խոստում տալ. հանձն առնել»), *խորհիմ* («մտածել. մտորել»), *խօսիմ* («խոսել. նշանվել. ամուսնանալ»), *ծնանիմ* («ծնել. ծնվել»), *համարիմ* («հաշվել. ենթադրել»), *սկսանիմ* («սկսել, սկսվել»), *վարկանիմ* («կարծել, կարծվել») և այլն:

**§ 100.** Բայի կարևոր առանձնահատկությունը խոնարհումն է, գրաբարում այն ունի բավականին ճկուն դրսևորում: Խոնարհման ձևն առնչվում է բայի սեռի իմաստին, սակայն չի կարող շփոթվել բուն սեռի հետ, այլ այն ամենից առաջ առնչվում է խոնարհման

ձևաբանական արտահայտությանը: Եվ ըստ այդմ՝ բայերը խոնարհվում են երկու կերպ՝ ներգործաձև և կրավորաձև:

ա) Ներգործական սեռի բայերը խոնարհվում են ոչ միայն ներգործաձև, այլև կրավորաձև:

Օրինակ՝ *սիրեմ* («սիրում եմ») և *սիրիմ* («սիրվում եմ»), *խաղամ* («խաղում եմ») և *խաղացաւ* («խաղացվեց»), *ետես* («տեսավ») և *տեսաւ* («տեսնվեց»), *եթող* («թողեց») և *թողաւ* («թողնվեց») և այլն:

բ) Չեզոք սեռի բայերը բաժանվում են երկու խմբի՝ ներգործաձև չեզոք և կրավորաձև չեզոք: Այսպես, *ե* խոնարհման չեզոք սեռի բայերը խոնարհվում են միայն ներգործաձև, օրինակ՝ *անցանել, մտանել, միտել, յառնեմ, յանցանեմ, պակասեմ, ջայլեմ* («խմբովին ողբալ՝ լացուկոծ դնել») և այլն, իսկ *ի* խոնարհման չեզոք սեռի բայերը՝ միայն կրավորաձև, օրինակ՝ *բազմիմ, գժտիմ* («խռովել»), *դեղևիմ* («երերալ, տարուբերվել»), *երևիմ, երթևեկիմ* և այլն: *Ա* և *ու* խոնարհման չեզոք սեռի բայերը ներգործաձև խոնարհվելիս այլևս չեն խոնարհվում կրավորաձև, իսկ կրավորաձև խոնարհվողները՝ ներգործաձև:

գ) *Ե* խոնարհման բայերից ներգործականները, բացառությամբ մեկ-երկու դեպքի, խոնարհվում են և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև: Իսկ *ա, ու* խոնարհման բայերի ներգործականները միշտ չէ, որ ունենում են և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհում:

դ) Հասարակ (ընդհանուր սեռի) բայերը խոնարհվում են միայն կրավորաձև: Ըստ այդմ էլ նրանք արտահայտում են ներգործական և կրավորական սեռերի իմաստներ:

**§ 101.** Դիմավոր բայերի ձևաբանական փոփոխությունները առաջ են գալիս դեմքի և թվի, եղանակային և ժամանակային ձևափոխումների հաշվին: Գրաբարում դրանք ունենում են որոշակի առանձնահատկություններ: Բայական համակարգն ինքնուրույն մի երևույթ է այդ առանձնահատկությունների օրինաչափական դրսևորումների և ընդգրկումների հիմունքով:

ա) Բայի եղանակները երեքն են՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Առաջինը և վերջինը համարժեք են ժամանակակից հայերենի համապատասխան եղանակներին:

Իսկ ստորադասականը համապատասխանում է ժամանակակից հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին: Ըստ այդմ ստորադասականը նշանակում է իղձ, ցանկություն, պայման և հարկադրանք: Դրանք, իբրև խոսքի եղանակային իմաստավորում, երևան են գալիս կոնկրետ պայմաններում, բնագրային առանձին կիրառություններում:

բ) Բայի ժամանակները (ժամանակաձևերը) բաշխվում են ըստ եղանակների: Դրանք ընդհանուր առմամբ ինն են՝ *սահմանական ներկա, անցյալ անկատար* և *անցյալ կատարյալ, ստորադասական առաջին ապառնի* և *երկրորդ ապառնի, հրամայական արգելական ներկա, անկատար ապառնի, հաստատական ներկա* և *կատարյալ ապառնի:*

Ինչպես նկատելի է, ժամանակներից (ժամանակաձևերից) երեքը սահմանական են, երկուսը՝ ստորադասական, իսկ չորսը՝ հրամայական:

Նշված ժամանակները (ժամանակաձևերը) հարաբերական են, որ բացարձակ ժամանակի առանցքի շուրջ դասավորվում են հետևյալ կերպ. սահմանականի ժամանակները ցույց են տալիս անցյալում և ներկայում կատարված և կատարվող, ստորադասականինը՝ ապագայում կատարվելիք, իսկ հրամայականինը՝ ներկայում և ապագայում անհանձնարարելի, այլև հաստատապես հանձնարարելի, կատարելապես իրացվելի գործողություն:

Բայի հիշյալ ինը ժամանակները կազմությամբ պարզ ժամանակներ են:

գ) Ի տարբերություն նախորդների՝ գրաբարում կան բաղադրյալ ժամանակներ: Դրանք ձևաբանորեն բաղադրված են խոնարհվող բայի անցյալ և ապառնի դերբայներով, ինչպես նաև *եմ* և *լինիմ* օժանդակ բայերով: Ըստ սմին ստացվում է վեց բաղադրյալ ժամանակ, վաղակատարի մեջ՝ ներկա, անցյալ, ապառնի, ապառնիի մեջ՝ ներկա, ապառնի անցյալ, ապառնիի ապառնի: Առաջին երեքը բաղադրված են անցյալ դերբայով և *եմ* բայի ներկա, անցյալ և ապառնի ձևերով, իսկ վերջին երեքը՝ ապառնի դերբայով և *եմ* բայի ներկա, անցյալ և ապառնի ձևերով (ավելի մանրամասն տե՛ս § 136-138-ում):

**§ 102.** Բայի եղանակային և ժամանակային փոփոխությունը (խոնարհումը) տեղի է ունենում երկու ձևով՝ կանոնավոր և անկանոն («զարտուղի»):

## գ) Կանոնավոր խոնարհում

**§ 103.** Բայի ձևաբանական փոփոխությունները երևան են գալիս բավականին հստակ և միօրինակ կերպով: Դրանց ամենևին չի խանգարում բայի ձևերի առատությունը: Ընդհակառակը, այն օրինաչափական երևույթ է, որ իրականանում է ձևավորման կանոնավոր ընթացքով: Այդ դեպքում բավականին հստականշական է տվյալ ձևի իմաստավորումը, ինչպես նաև այս կամ այն իմաստի ձևավորումը: Դա բայի կանոնավոր խոնարհման էությունն է:

Կանոնավոր խոնարհումն սկիզբ է առնում բայի սահմանական ներկայից և ձգվում է մինչև մյուս եղանակների ժամանակները, շարունակվում է դերբայներով, բաղադրյալ ժամանակներով, ժխտական խոնարհմամբ, այլև հասնում է մինչև տվյալ բայի միադիմի կազմությունները:

Սրանց հակադրությամբ կան բայեր, որոնք կանոնավոր չեն, այլ անկանոն («զարտուղի») են: Դրանք, ինչպես գոյականի դեպքում էր, արտացոլում են լեզվի համեմատաբար հին վիճակ, այսինքն՝ անկանոնություններ («զարտուղություններ») ունեն հիմքակազմության և տվյալ ժամանակի կամ եղանակի ձևակազմության դեպքում: Նման շեղումները կա՛մ մնում են բաց, կա՛մ լրացվում են կողմնակի միջոցներով՝ այլ ձևերով: Անկանոն խոնարհման բայերը կանոնավորների մի չնչին մասն են (տե՛ս §§ 144-146):

Հին գրական հայերենի բայի համակարգն առավելապես բնութագրվում է կանոնավոր խոնարհմամբ: Վերջինս ընդգրկում է բայի ամբողջ համակարգը: Այն ներկայացնում է անկատարի և կատարյալի հիմքերից կազմվող պարզ և բաղադրյալ ժամանակ-

ները, դերբայները, պատճառական բայերի խոնարհումը, ինչպես նաև ժխտական խոնարհումը:

### 1) Անկատարի հիմքից կազմվող ժամանակները

**§ 104**. Գրաբարում անկատարի հիմքից կազմվում են սահմանական ներկա, անցյալ անկատար, ստորադասական առաջին ապառնի, հրամայական արգելական ներկա և անկատար ապառնի ժամանակները, ինչպես նաև անորոշ և ապառնի դերբայները:

### ա. Սահմանական ներկա ժամանակ

**§ 105**. Սահմանական եղանակի ներկա ժամանակը բոլոր խոնարհումներում ունի հետևյալ վերջավորությունները.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -մ | -մք |
| 2-րդ դ. | -ս | -յք |
| 3-րդ դ. | -յ | -ն |

Ներգործաձև խոնարհման դեպքում այդ վերջավորություններին նախորդում է *ե*, իսկ կրավորաձևի դեպքում՝ *ի* խոնարհիչը:

1) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -եմ | -եմք |
| 2-րդ դ. | -ես | -է (< *-եյ)ք |
| 3-րդ դ. | - է (< *-եյ) | -են |

2) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -իմ | -իմք |
| 2-րդ դ. | -իս | -իք |
| 3-րդ դ. | -ի | -ին |

**Ծանոթություն 49:** Ներգործաձև վերջավորություն ստանում են բոլոր ներգործական և չեզոք սեռի բայերը, իսկ կրավորաձև՝

միայն ներգործական սեռի բայերը, որպեսզի արտահայտեն կրավորական սեռի իմաստ:

Այս ժամանակի բայաձևերի դիմային վերջավորությունները ըստ առանձին խոնարհումների հետևյալներն են.

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ամ | -ամք |
| 2-րդ դ. | -աս | -այք |
| 3-րդ դ. | -այ | -ան |

2) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -եմ | -եմք |
| 2-րդ դ. | -ես | -է (< *-եյ)ք |
| 3-րդ դ. | -է (< *-եյ) | -են |

3) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -իմ | -իմք |
| 2-րդ դ. | -իս | -իք |
| 3-րդ դ. | -ի | -ին |

4) Ու խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ում | -ումք |
| 2-րդ դ. | -ուս | -ուք |
| 3-րդ դ. | -ու | -ուն |

Այդ գործնական (պրակտիկ) վերջավորությունները, ավելանալով խոնարհվող բայի անկատարի հիմքին, կազմում են ներկա ժամանակի համապատասխան ձևերը:

Օրինակ՝

ա) *Ա* խոնարհում (պարզ և ածանցավոր բայեր)՝ և՛ ներգործականի, և՛ կրավորականի իմաստով:

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնամ | մնամք |
| 2-րդ դ. | մնաս | մնայք |
| 3-րդ դ. | մնայ | մնան |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանամ | իմանամք |
| 2-րդ դ. | իմանաս | իմանայք |
| 3-րդ դ. | իմանայ | իմանան |

բ) *Ե* խոնարհում՝ ներգործաձև (պարզ և ածանցավոր բայեր).

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեմ | գրեմք |
| 2-րդ դ. | գրես | գրէք |
| 3-րդ դ. | գրէ | գրեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանեմ | գտանեմք |
| 2-րդ դ. | գտանես | գտանէք |
| 3-րդ դ. | գտանէ | գտանեն |

գ) *Ե* խոնարհում՝ կրավորաձև (պարզ և ածանցավոր բայեր).

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրիմ | գրիմք |
| 2-րդ դ. | գրիս | գրիք |
| 3-րդ դ. | գրի | գրին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանիմ | գտանիմք |
| 2-րդ դ. | գտանիս | գտանիք |
| 3-րդ դ. | գտանի | գտանին |

դ) *Ի* խոնարհում (պարզ և ածանցավոր բայեր)՝ և՛ ներգործականի, և՛ կրավորականի իմաստով:

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհիմ | խորհիմք |
| 2-րդ դ. | խորհիս | խորհիք |
| 3-րդ դ. | խորհի | խորհին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսանիմ | ուսանիմք |
| 2-րդ դ. | ուսանիս | ուսանիք |
| 3-րդ դ. | ուսանի | ուսանին |

ե) *Ու* խոնարհում (պարզ և ածանցավոր բայեր)՝ և՛ ներգործականի, և՛ կրավորականի իմաստով:

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղում | հեղումք |
| 2-րդ դ. | հեղուս | հեղուք |
| 3-րդ դ. | հեղու | հեղուն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթեռնում | ընթեռնումք |
| 2-րդ դ. | ընթեռնուս | ընթեռնուք |
| 3-րդ դ. | ընթեռնու | ընթեռնուն |

**§ 106**. Դժվար չէ նկատել, որ իբրև օրինակ բերված բայերի անկատարի հիմքն են՝ *մն-, իման-, գր-, գտան-, խորհ-, ուսան-, հեղ-, ընթեռն-:* Դրանցից պարզ (արմատական) են *մն-, գր-, խորհ-* և *հեղ-* հիմքերը, իսկ մյուսները՝ *իման-, գտան-, ուսան-, ընթեռն-,* ածանցավոր են:

**§ 107**. Սահմանական ներկան իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն ժամանակին, թարգմանվում է այդ ժամանակով:

Օրինակ՝ *մնամ - մնում եմ* և *մնացվում եմ, իմանայք - իմանում եք* և *իմացվում եք, գրես - գրում ես, գրիս - գրվում ես, գտանեն - գտնում են, գտանին - գտնվում են, խորհիմ - մտածում*

*եմ* և *մտածվում եմ, ուսանիմք - սովորում ենք և սովորեցվում ենք, հեղու - թափում է (լցնում է)* և *թափվում է (լցվում է), ընթեռնու – կարդում է (ընթերցում է)* և *կարդացվում է (ընթերցվում է)* և այլն:

**Ծանոթություն 50:** Բայածևի ժամանակային իմաստը թարգմանում ենք ոչ միշտ, այլ ըստ հարկի:

**Ընթերցանություն 54**. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան, շինել զքաղաքն ի խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդք զարմիցն, և իբր տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն՝ առասպելաբար, այսինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց. մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն, և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ որդւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն: Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն. բայց յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զայլաբանութիւն ճշմարտեսցուք:

Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Ձեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն: Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ: Նա եւ զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ և զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքենէն յօրինէ իբրև զքաղաք արքայանիստ» (*Խոր.,* էջ 208 - 210):

**Ընթերցանություն 55:** «Նմանեսցուք առանձնագործ գործոցն մեղուի, զոր իւրով իւրում անձինն համբարէ, զի զինչ որ ոչ իւր իցէ, զայն ոչ ապականէ և այլոց արարոց ոչ առնի վնասակար, այլ անձամբ ինքն իւր համբարս համբարէ, զմաղս մեղրն մոմակերտ

գործով շինեալ յարյարէ: Եւ զմոմ մաղոցն ի ծաղկաբեր մարգացն մեծաւ փութով անդադար ժողովէ, և զմեղրն, որ նման ցողոյ զքարամբք և զոստովք եւ զտերեւովք ծորեալ իջեալ մածեալ կայ, քաղեալ առեալ ի բերանն ճեպով բերէ, և ի խորս մոմակերտ զբոցն ունչս արկեալ համբարեալ դնէ: Եւ յառաջին նուագին ի սկիզբն սկսուածոյ գործոյն անգայտ մաղովք անաւսր գործով զգործած զբոցն յաւրինէ վասն ջրի և լոյծ նորոգ զմեղրն ժողովելոյ: Իսկ յորժամ յաճախեալ բազմացի մեղրն, խաւ ի խաւ և մքեր առ մքեր ժողովեալ կուտիցէ, և բազմաւրեայ ժամանակաւք ի վերայ անցեալ գտանիցին, իբրև թէ առաւել իմն առաւելութեամբ հասեալ եփեալ գեղեցկանայ: Եւ ապա յետ այսր ամենայնի ի դադար են մերոց պիտոյից, մաղակոտոր հատեալ գտանի» *(Բարս.,* էջ 262 - 264):

**Վարժություն 102:** Հետևյալ բայերը խոնարհել սահմանական ներկայով. *ամալ, անսալ, գթալ, գոռալ, դողալ, եռալ, խայտալ, խոկալ, մնալ, ողբալ, փութալ, գոհանալ, մեծանալ, մոռանալ, վերանալ:*

**Վարժություն 103:** Խոնարհել հետևյալ բայերը սահմանական կրավորաձև ներկայով. *անցանել, բեկանել, բուծանել, հասանել, հատանել, հարցանել, խորհիմ, կամիմ, հայիմ, հանդիպիմ, ողորմիմ:*

**Վարժություն 104:** Նշել հետևյալ բայերի սահմանական ներկա ժամանակի 2-րդ և 3-րդ դեմքի ձևերը. *արգելուլ, լիզուլ, հեղձուլ, հեղուլ, կալնուլ, ջեռնուլ, սարտնուլ, փախնուլ:*

**Առաջադրանք 101:** Բանավոր վերհիշել *ե* խոնարհման երկու-երեք բայ, խոնարհել սահմանական ներկայով՝ ներգործաձև և կրավորաձև:

**Առաջադրանք 102:** Նշել հետևյալ բայաձևերի ժամանակը, խոնարհման ձևը, խոնարհումը, դեմքը և թիվը. *համբերեմք, ստեղծիմ, վազիմ, զեղծանէք, մեծանամք, գրաւեմք, շրջապատին, մոռանայք, անկանիմք, մածանին, ուսանին, զքօսնուն, կալնում, սխալիմ, շրջիս, քաղցնուն:*

**Առաջադրանք 103:** Թարգմանել արդի հայերեն. *ելանեն, ազդեմք, կաքաւեն, հիւսէք, սխալիք, վրիպին, ծուլանաս, մերձենաս, ցանկանամք, լուանաս, երդնում, զգենուք, շրտնուն, սարտնուն, մածնուս:*

**Հարցեր 30:** ա) Ի՞նչ է խոնարհումը և խոնարհիչը, քանի՞ խոնարհում ունի գրաբարը:

բ) Ինչպիսի՞ կազմություն ունեն բայերը, ի՞նչ է բայական զուգաձևը:

գ) Որո՞նք են բայի սեռերը և խոնարհման ձևերը:

դ) Քանի՞ եղանակ և քանի՞ ժամանակ ունի բայը:

ե) Որո՞նք են գրաբարի պարզ ժամանակները:

զ) Ի՞նչ է կանոնավոր խոնարհումը:

է) Ինչպե՞ս է կազմվում և խոնարհվում սահմանական ներկան:

## Բ. Սահմանական անցյալ անկատար ժամանակ

**§ 108**. Սահմանական անցյալ անկատարի դիմային վերջավորություններն են՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ի | -աք |
| 2-րդ դ. | -իր | -իք |
| 3-րդ դ. | -(յ)ր | -ին |

Դրանց սկզբից ավելանում են խոնարհիչները, և ըստ այդմ ստացվում են այն առանձին՝ գործնական (պրակտիկ) վերջավորությունները, որոնք կա՛մ ընդհանուր են ներգործական և կրավորական սեռի (*ա, ե, ու* խոնարհման) բայերի համար, կա՛մ միայն կրավորական սեռի (*ի* խոնարհման) բայերի համար:

*Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -այի | -այաք |
| 2-րդ դ. | -այիր | -այիք |
| 3-րդ դ. | -այր | -ային |

*Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -էի | -էաք |
| 2-րդ դ. | -էիր | -էիք |
| 3-րդ դ. | -էր | -էին |

*Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -էի | -էաք |
| 2-րդ դ. | -էիր | -էիք |
| 3-րդ դ. | -էր | -էին |

*Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ուի | -ուաք |
| 2-րդ դ. | -ուիր | -ուիք |
| 3-րդ դ. | -ոյր | -ուին |

**Ծանոթություն 51:** Խոնարհիչի և բուն վերջավորության միջև *ա*-ից և *ե*-ից հետո ի հայտ է գալիս *յ* կիսաձայնը *(ա-յ-ի, ե-յ-ի > էի* և այլն):

**§ 109.** Բոլոր խոնարհումներում միևնույն ձևերով արտահայտվում են և՛ ներգործականի, և՛ կրավորականի իմաստներ, այսինքն՝ սահմանական անցյալ անկատարում չկա ներգործաձև և կրավորաձև խոնարհման տարբերակումը:

**§ 110**. Սահմանական անցյալ անկատարը կազմվում է բայի անկատարի հիմքից հիշյալ դիմային վերջավորությունների հավելումով:

Օրինակ՝

ա) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնայի | մնայաք |
| 2-րդ դ. | մնայիր | մնայիք |
| 3-րդ դ. | մնայր | մնային |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանայի | իմանայաք |
| 2-րդ դ. | իմանայիր | իմանայիք |
| 3-րդ դ. | իմանայր | իմանային |

բ) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրէի | գրէաք |
| 2-րդ դ. | գրէիր | գրէիք |
| 3-րդ դ. | գրէր | գրէին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանէի | գտանէաք |
| 2-րդ դ. | գտանէիր | գտանէիք |
| 3-րդ դ. | գտանէր | գտանէին |

գ) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհէի | խորհէաք |
| 2-րդ դ. | խորհէիր | խորհէիք |
| 3-րդ դ. | խորհէր | խորհէին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսանէի | ուսանէաք |
| 2-րդ դ. | ուսանէիր | ուսանէիք |
| 3-րդ դ. | ուսանէր | ուսանէին |

դ) *Ու* խոնարհում՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղուի | հեղուաք |
| 2-րդ դ. | հեղուիր | հեղուիք |
| 3-րդ դ. | հեղոյր | հեղուին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթեռնուի | ընթեռնուաք |
| 2-րդ դ. | ընթեռնուիր | ընթեռնուիք |
| 3-րդ դ. | ընթեռնոյր | ընթեռնուին |

**§ 111.**Սահմանական անցյալ անկատարը համապատասխանում է ժամանակակից հայերենի նույն ժամանակին, այսինքն՝ թարգմանվում է այդ ժամանակով:

Օրինակ՝ *մնայիր* նշանակում է *մնում էիր, մնացվում էիր, իմանայր՝ իմանում էր, իմացվում էր, գրէաք՝ գրում էինք, գրվում էինք, գտանէիք՝ գտնում էիք, գտնվում էիք, խորհէին՝ մտածում էին, մտածվում էին, ուսանէի՝ սովորում էի, սովորեցվում էի, հեղուիր՝ թափում էիր, թափվում էիր, ընթեռնոյր՝ կարդում էր, կարդացվում էր* և այլն:

**Ընթերցանություն 56**. «Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուh արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ եւ ի վերայ Շապհոյ արքայի, և ապրեցոյց[1] զնա ի մահուանէ. և բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ[2]: Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զօրաց անտի: Իսկ

իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէ ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. «Խնդրեա դու ինչ յինէն, զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից» (*Բուզ.,* էջ 316):

1. *Ապրեցոյց* - փրկեց:
2. *Բերէր զառաջեաւ* - բերում էր առջևը, ներկայացնում էր:

**Ընթերցանություն 57.** «Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր, քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն և զաշխարհն Ասորեստանի, աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինս[1]: Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ՝ «Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալով աւերեաց զքումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյործանս ծովուց»: Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս և այլ ուժով պնդութեան, հաստութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն[2] հասակաւ, որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտիցն յաղթութիւն» (*Ագաթ.,* էջ 78):

1. *Հարուած անհնարին* - չտեսնված՝ ուժեղ՝ անասելի հարված:
2. *Լայն* - (այստեղ) թիկնեղ:

**Վարժություն 105:** Սահմանական անցյալ անկատարով խոնարհել հետևյալ բայերը. *բանադրել, բառնալ, բասրել* («մեղադրել»), *գալարել, դեղեւիմ, դիմեմ, երեւիմ:*

**Վարժություն 106:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *զենլուցանէի, զեղուին, ըմբոշխնէաք, ընթեռնոյր, թափէիք, թաքչէիր, թօթափէաք:*

**Վարժություն 107:** Թարգմանել գրաբար. *ժրանում էին, ժողովում էի, գրվում էիք, խնդրում էինք, գտնվում էին, խճողվում էր, խաղում էիք, հեծեծում էին, մնում էին, պակասում էր:*

**Առաջադրանք 104:** Կարդալ «Ընթերցանություն 56»-ը, առանձնացնել սահմանական անցյալ անկատարի ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 105:** Կարդալ «Ընթերցանություն 57»-ը, առանձնացնել սահմանական անցյալ անկատարի ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 106:** Լրացնել հիշյալ բայաձևերի մյուս ձևերը. *աղաղակէին, հասանէաք, մոռանային, ուտնուին:*

**Առաջադրանք 107:** Բանավոր խոնարհել սահմանական անցյալ անկատարով. *բեկանել, մոռանալ, գիտենալ, աղաչել, ճանաչել, թռչել:*

**Հարցեր 31:** ա) Ինչպե՞ս է կազմվում սահմանական անցյալ անկատարը:

բ) Որո՞նք են սահմանական անցյալ անկատարի դիմային վերջավորությունները՝ ըստ առանձին խոնարհումների:

գ) Ի՞նչ ժամանակով է թարգմանվում սահմանական անցյալ անկատարը:

## Գ. Ստորադասական առաջին ապառնի ժամանակ

**§ 112.** Ստորադասական առաջին ապառնին կազմվում է անկատարի հիմքից՝ հետևյալ դիմային վերջավորություններով.

*Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -այցեմ | -այցեմք |
| 2-րդ դ. | -այցես | -այցէք |
| 3-րդ դ. | -այցէ | -այցեն |

*Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -իցեմ | -իցեմք |
| 2-րդ դ. | -իցես | -իցէք |

| | | |
|---|---|---|
| 3-րդ դ. | -իցէ | -իցեն |

*Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -իցիմ | -իցիմք |
| 2-րդ դ. | -իցիս | -իցիք |
| 3-րդ դ. | -իցի | -իցին |

*Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ուցում | -ուցումք |
| 2-րդ դ. | -ուցուս | -ուցուք |
| 3-րդ դ. | -ուցու | -ուցուն |

**Ծանոթություն 52:** Պատմականորեն այդ վերջավորություններր տրոհելի են. առանձնացվում են բուն դիմային վերջավորությունները՝ *-մ, -ս, -յ, -մք, -յք, -ն*, այլև յուրաքանչյուր խոնարհման եղանականիշ և ժամանականիշ ածանցը՝ *-ա(յ)ցե, -իցե, -իցի, -ուցու:* Վերջիններս դրվում են բայի անկատարի հիմքի վրա, սերում են ստորադասական առաջին ապառնու առանձին, գործնական (պրակտիկ) հիմքը, որին էլ ավելանում են հիշյալ բուն դիմային վերջավորությունները:

Օրինակ՝ *գր-իցե-մ, գր-իցե-ս, ուսան-իցի-մք, թող-ուցու-ն* և այլն:

§ **113**. *Ա, Ե* խոնարհման բայերն ունենում են ներգործաձև և կրավորաձև խոնարհում, *Ի* խոնարհման բայերը խոնարհվում են միայն կրավորաձև, իսկ *ու* խոնարհման բայերը՝ միայն ներգործաձև:

§ **114**. Ստորադասական առաջին ապառնին իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամա-

նակներին, իսկ թե կոնկրետ դրանցից որին, դա նկատելի է տվյալ բնագրային կիրառության մեջ:

Օրինակ՝

ա) Ա խոնարհում,

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնայցեմ | մնայցեմք |
| 2-րդ դ. | մնայցես | մնայցէք |
| 3-րդ դ. | մնայցէ | մնայցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանայցեմ | իմանայցեմք |
| 2-րդ դ. | իմանայցես | իմանայցէք |
| 3-րդ դ. | իմանայցէ | իմանայցեն |

բ) *Ա* խոնարհում,

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնայցիմ | մնայցիմք |
| 2-րդ դ. | մնայցիս | մնայցիք |
| 3-րդ դ. | մնայցի | մնայցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանայցիմ | իմանայցիմք |
| 2-րդ դ. | իմանայցիս | իմանայցիք |
| 3-րդ դ. | իմանայցի | իմանայցին |

գ) *Ե* խոնարհում.

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրիցեմ | գրիցեմք |
| 2-րդ դ. | գրիցես | գրիցէք |
| 3-րդ դ. | գրիցէ | գրիցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանիցեմ | գտանիցեմք |
| 2-րդ դ. | գտանիցես | գտանիցէք |
| 3-րդ դ. | գտանիցէ | գտանիցեն |

դ) *Ե* խոնարհում.

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրիցիմ | գրիցիմք |
| 2-րդ դ. | գրիցիս | գրիցիք |
| 3-րդ դ. | գրիցի | գրիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանիցիմ | գտանիցիմք |
| 2-րդ դ. | գտանիցիս | գտանիցիք |
| 3-րդ դ. | գտանիցի | գտանիցին |

ե) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհիցիմ | խորհիցիմք |
| 2-րդ դ. | խորհիցիս | խորհիցիք |
| 3-րդ դ. | խորհիցի | խորհիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսանիցիմ | ուսանիցիմք |
| 2-րդ դ. | ուսանիցիս | ուսանիցիք |
| 3-րդ դ. | ուսանիցի | ուսանիցին |

զ) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղուցում | հեղուցումք |
| 2-րդ դ. | հեղուցուս | հեղուցուք |
| 3-րդ դ. | հեղուցու | հեղուցուն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթեռնուցում | ընթեռնուցումք |
| 2-րդ դ. | ընթեռնուցուս | ընթեռնուցուք |
| 3-րդ դ. | ընթեռնուցու | ընթեռնուցուն |

**Ընթերցանություն 58.** «Ե՛րթ առ մրջիւնն և նախանձեա՛ց[1] ընդ ճանապարհս նորա, և լե՛ր իմաստնագոյն նս քան զնա: Զի նորա ոչ գոյ[2] հողագործութիւն և ոչ հարկադիր, և ոչ ընդ տերամբք է[3], և պատրաստէ ամարանի զկերակուր և բազում համբարս դնէ ի հունձս: Կամ ե՛րթ առ մեղուն և ուսի՛ր, զիարդ գործօն է, և գործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի, զորոյ զվաստակն թագաւորք և տնանկք ի բժշկութիւն մատուցանեն: Ցանկալի է ամենեցուն և մեծարոյ[4], զի թէպէտ և տկար է զօրութեամբ, պատուեաց զիմաստութիւն և յարգեցաւ: Մինչև յե՞րբ յորսայսեալ կաս[5], ո՛վ վատ կամ ե՞րբ ի քնոյ զարթիցես: Փոքր մի ննջիցես, փոքր մի նստիցիս, փոքր մի նիրհիցես, փոքր մի հանգուցանիցես զձեռն քո ի վերայ լանջաց քոց[6], ապա այնուհետև հասանիցէ ի վերայ քո իբրև զչար ուղևոր տնանկութիւն և կարօտութիւն իբրև զժիր սուրհանդակ: Ապա եթէ անդանդաղ լինիցիս, հասանիցէ իբրև զաղբեւր ամառն քո, և կարօտութիւն իբրև այր մի չար ինքնահալած լինիցի» *(Առակք,* Զ, 6-11):

1. *Նախանձեա՛ց* - նախանձի՛ր:
2. *Նորա ոչ գոյ* - նա չունի:
3. *Ոչ ընդ տերամբք է* - ենթակա չէ տերերին, տերեր չունի:
4. *Մեծարոյ* - հարգի, հարգված, մեծարելի:
5. *Յորսայսեալ կաս* - մեջքի պառկած մնաս:
6. *Ի վերայ լանջաց քոց* - կրծքիդ վրա:

**Ընթերցանություն 59.** «Եւ յարջառս, զոր ասեն, եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն: Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ, սատակի[1]: Նոյնպէս և ի բանջարս է ինչ, որ առանձին սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի: Զման-

ռագորն[2], եթէ որ լոկ ուտիցէ, սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց: Եւ զհազար[3], եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ[4]. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ[5]. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ[6]: Արդ յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ[7], կարծիցին եթէ չար ինչ բնութեամբ իցէ. բայց աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց, զի և ի դարմանիչսն մարթիցէ վայելել. և որք վնասակարք կարծիցին, և անտի ևս հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ[8] զքարս անմտացն, թէ չիք ինչ որ բնութեամբ չար է» (*Եզնիկ,* էջ 47-48):

1. *Սատակի* - այստեղ՝ կսատկի:
2. *Մանրագոր* - մի տեսակ թուփ՝ սխտորի չափ պտղով:
3. *Հազար* - բույսի մի տեսակ:
4. *Փարատէ* - այստեղ՝ կփարատի:
5. *Վնասէ* - այստեղ՝ կվնասի:
6. *Արկանէ* - այստեղ՝ կգցի:
7. *Առ ոչ ուղիղ հայելոյ* - ուղիղ չնայելու պատճառով:
8. *Առ ի յանդիմանելոյ* - հանդիմանելու՝ խրատելու պատճառով:

**Վարժություն 108:** Հետևյալ բայերը խոնարհել ստորադասական առաջին ապառնիով. *երթալ, նահանջել, նկարել, նուաճել, պարապել, պաղիմ, գործել, ողորմիմ, նեղեմ, ուտնում, ամաչել, կորնչիմ, թաքչիմ:*

**Վարժություն 109:** Որոշել հետևյալ ձևերի եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը. *առնուցում, սատակիցիմ, բեկտիցեմ, նահատակիցիմ, յիշեցուցանիցեմք, ապաւինիցին, բաւականայցեն, բանադրիցէք, բնակիցեմք, ճանաչիցիմք, մոռանայցէք:*

**Վարժություն 110:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *մոլեգնիցիս, մաշիցեն, մեղանչիցեմք, յենուցումք, յենուցուն, յուլա-*

*նայցեմք* («ծուլանալ, անհոգանալ, մեծամտանալ»), *յղփանայցիք, յորչորչիցին:*

**Առաջադրանք 108:** Կարդալ «Ընթերցանություն 57»-ը, առանձնացնել ստորադասական առաջին ապառնու ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 109:** Կարդալ «Ընթերցանություն 58»-ը, առանձնացնել ստորադասական առաջին ապառնու ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 110:** Վերհիշել *ա, ե* խոնարհման երկուական բայ և խոնարհել ստորադասական առաջին ապառնիով:

**Առաջադրանք 111:** Վերհիշել *ի, ու* խոնարհման երեքական բայ և խոնարհել ստորադասական առաջին ապառնիով:

**Հարցեր 32:** ա) Ինչպե՞ս է կազմվում ստորադասական առաջին ապառնին:

բ) Որո՞նք են ստորադասական առաջին ապառնիի դիմային վերջավորությունները՝ ըստ առանձին խոնարհումների:

գ) Ո՞ր խոնարհման բայերն ունեն ստորադասական առաջին ապառնիում ներգործաձև և կրավորաձև խոնարհումների համար առանձին ձևեր:

դ) Ստորադասական առաջին ապառնին ժամանակակից հայերենի ո՞ր եղանակների ժամանակներին է համապատասխանում:

## Դ. Հրամայական արգելական ներկա

**§ 115.** Հրամայական արգելական ներկան ունի միայն երկրորդ դեմքի ձևեր, կազմվում է անկատարի հիմքից, ըստ որում *ե* խոնարհման բայերն ունեն ներգործաձև (*-եր, -էք*) և կրավորաձեւ (*-իր, -իք*), *ի* խոնարհման բայերը՝ միայն կրավորաձեւ (*-իր, -իք*), իսկ *ա* և *ու* խոնարհման բայերն ընդհանուր *(-ար, -այք* և *-ուր, -ուք*) վերջավորություններ:

Բայերի սկզբում դրվում է *մի* արգելական բառ-մասնիկը՝ շեշտված:

**§ 116.** Հրամայական արգելական ներկան իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի նույն եղանակի նույն ժամանակին:

ա) *Ա* խոնարհում.՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ մնար | մի՛ մնայք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ իմանար | մի՛ իմանայք |

բ) *Ե* խոնարհում,
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ գրեր | մի՛ գրէք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ գտաներ | մի՛ գտանէք |

գ) *Ե* խոնարհում,
Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ գրիր | մի՛ գրիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ գտանիր | մի՛ գտանիք |

դ) *Ի* խոնարհում

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ խորհիր | մի՛ խորհիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ուսանիր | մի՛ ուսանիք |

ե) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ հեղուր | մի՛ հեղուք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ընթեռնուր | մի՛ ընթենուք |

**Ընթերցանություն 60:** «Մի՛ ուտեր հաց ընդ առն[1] չարակամ և մի՛ ցանկանար կերակրոյ նորա: Մի՛ մուծանիցես զնա առ քեզ և մի՛ ուտիցես զհաց քո ընդ նմա, զի նողկացուցանէ զնա և ապականէ զբանս քո բարիս: Յականջս անզգամի ամենևին մի՛ խօսիր, զի մի՛ անգոսնեսցէ զիմաստուն բանս քո: Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենական և ի ստացուածս որբոց մի՛ մտանիցես: Մի՛ խնայեր խրատել զտղայ. զի թէ հարկանես զնա գաւազանաւ, ոչ մեռանի: Դու հարկանես զնա գաւազանաւ, բայց զանձն նորա փրկես ի մահուանէ: Որդեա՛կ, եթէ իմաստուն լինիցի սիրտ քո, ուրախ արասցես[2] և զիմ սիրտս: Լո՛ւր, որդեա՛կ, հօր, որ ծնաւ զքեզ, և մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քո: Զճշմարտութիւն ստացի՛ր և մի՛ թողուր զիմաստութիւն և զխրատ» *(Առակք,* ԻԳ, 6- 23):

1. *Առն* - մարդու (ընդ առն - մարդու հետ):
2. *Ուրախ արասցես* - կուրախացնես, ուրախ կդարձնես:

**Ընթերցանություն 61.** «Որդեա՛կ իմ, մի՛ նախանձիր ընդ չարս և մի՛ ցանկանայցես կալ ընդ նոսա, զի ստութիւն խորհի սիրտ նոցա: Իմաստութեամբ շինի տուն և հանճարով կանգնի: Լաւ է իմաստուն, քան զհզօր, եւ հանճարեղ, քան զայն, որ ունիցի դաստակերտս մեծամեծս: Մի՛ մատուցաներ զամբարիշտն յարօտս արդարոց և մի՛ խաբիր լրութեամբ որովայնի: Մի՛ խնդար ընդ չարագործս և մի՛ նախանձիր ընդ մեղաւորս: Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում և մի՛ խաբեր շրթամբք քովք» (*Առակք,* ԻԴ, 1-28): Քաջալերացարո՛ւք, որդեա՛կք, և մի՛ երկնչիք (*Յովհ. Մամ.,* էջ 34): Արի ե՛կ առ իս և մի՛ երկնչիր և առ յինէն զանձս և մեծութիւնս

(*ն. տ.,* էջ 44)։ Ձի զպատերազմն ձեր տէր պատերազմեսցի. զօրացարուք, մի՛ զանգիտէք (*Ղևոնդ,* էջ 141)։

**Վարժություն 111:** Հետևյալ բայերը խոնարհել հրամայական արգելական ներկայով. *մտանել, ելանել, գտանել, մոռանալ, ուրանալ, երթալ, տեսանել, ուռնուլ, միամտանալ, մթերել, յատակել:*

**Վարժություն 112:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *մի՛ յաղթահարեր, մի՛ ձգէք, մի՛ համարիք, մի՛ կորչեր, մի՛ կոտորեր, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ թալաներ, մի՛ ըմբոստանայք, մի՛ դաւաճաներ:*

**Առաջադրանք 112:** Կարդալ «Ընթերցանություն 60»-ը, առանձնացնել հրամայական արգելական ներկայով ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 113:** Կարդալ «Ընթերցանություն 61»-ը, առանձնացնել հրամայական արգելական ներկայով ձևերը և վերլուծել:

**Հարցեր 33:** ա) Ինչպե՞ս է կազմվում հրամայական արգելական ներկան:

բ) Ինչպիսի՞ խոնարհման ձևեր ունի հրամայական արգելական ներկան առանձին խոնարհումներում:

գ) Ժամանակակից հայերենի ո՞ր եղանակին է համապատասխանում հրամայական արգելական ներկան:

## Ե. Հրամայական անկատար ապառնի

**§ 117.** Հրամայական անկատար ապառնին ևս ունի միայն երկրորդ դեմքի ձևեր: Բացակայում են *ու* խոնարհման ձևերը: *Ա* խոնարհման բայերն ունեն *-այջիր, -այջիք*, իսկ *ե, ի* խոնարհման բայերը՝ *-իջիր, -իջիք* վերջավորությունները: Շեշտվում է բառավերջի ձայնավորը:

**§ 118.** Այս ժամանակաձևը համապատասխանում է ժամանակակից հայերենի բուն հրամայականին, այլև ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնուն:

Գրաբարում քիչ են հանդիպում հրամայական անկատար ապառնիի ձևեր:

ա) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնայջի՛ր | մնայջիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | իմանայջի՛ր | իմանայջիք |

բ) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գրիջի՛ր | գրիջի՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գտանիջի՛ր | գտանիջի՛ք |

գ) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհիջի՛ր | խորհիիջի՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսանիջի՛ր | ուսանիջի՛ք |

(Տե՛ս գծապատկերներ)

**Ընթերցանություն 62.** «Եւ դարձեալ, աստեղաբաշխութեան ենթակայ[1] գոյ երկնային մարմինն, իսկ իմաստասիրութեան նոյն ինքն աստեղաբաշխութիւն է ենթակայ: Եւ դարձեալ, վասն այսորիկ ասաց զիմաստասիրութիւն արհեստ արհեստից[2] և մակացութիւն մակացութեանց[3], վասն զի իմաստասիրութիւն զբնութիւն էիցն գիտէ[4], իսկ զարտաքոյս բնութեանց և զհետեւմունս եւ գիտել արհեստից և մակացութեանց. քանզի ինքն առնլով զըստ

գիտութեան զնիւթ և զտեսակ, զսկզբունս ամենայնի բացակատարէ՝[5] զչորս տարերս. և ի նոցանէ բացակատարէ զնմանամասնեայսն[6], իսկ ի նմանամասնեայցն՝ զգործիկանսն[7], և ի գործիկանացն՝ զմարդկային մարմինս: Եւ զայլսն ամենայն պատահմունս, որ ի մարմնի, բժշկականութեան և դիտել[8], այսինքն՝ զցաւս և զառողջութիւնս, ոչ որպէս թէ ինքն ոչ գիտելով՝ գիտէ և զայնոսիկ, այլ որպէս ոչ կամելով զինքն աղտեղացուցանել մինչև ի հուսկ վերջինսն հասանել» (*Դաւիթ Անյաղթ,* էջ 73-74):

1. *Ենթակայ* - առարկա:
2. *Արհեստ արհեստից* - արվեստների արվեստ:
3. *Մակացութիւն մակացութեանց* - գիտությունների գիտություն:
4. *Զբնութիւն էիցն գիտէ* - ճանաչում է իրերի բնությունը:
5. *Բացակատարէ* - բացահայտում է:
6. *Ի նոցանէ բացակատարէ զնմանամասնեայսն* - և նրանցից բացահայտում է համանմանները:
7. *Զգործիկանսն* - գործականը (իմա՛ օրգանականը):
8. *Եւ դիտել* - տալիս է ճանաչելու:

**Վարժություն 113:** Կազմել հետևյալ բայերի հրամայական անկատար ապառնին. *գոհանալ, խոստովանիմ, գիտել, վնասել, պիտանանալ, փարատել, փութալ, վրիպիմ, վարել, նուաճել, խնդրել:*

**Վարժություն 114:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *անցանիջի՛ր, արմանայջի՛ք, բառնայջի՛ր, դատիջի՛ք, թափիջի՛ր, թափիջի՛ք, ժամանիջի՛ր, ժամանիջի՛ք, լուծանիջի՛ր, լուծանիջի՛ք:*

**Առաջադրանք 114:** Վերհիշել *ա, ե, ի* խոնարհման երկուական բայ և կազմել նրանց հրամայական անկատար ապառնին:

**Առաջադրանք 115:** Կարդալ «Ընթերցանություն 62»-ը, առանձնացնել սահմանական ներկայով դրված բայերը և վերլուծել:

**Հարցեր 34:** ա) Ինչպե՞ս է կազմվում հրամայական անկատար ապառնին:

բ) Ինչպե՞ս է խոնարհվում հրամայական անկատար ապառնին:

գ) Ժամանակակից հայերենի ո՞ր եղանակներին է համապատասխանում հրամայական անկատար ապառնին:

**Գծապատկեր 7**

| Չւ | Խոն. | Թիվ | Անկատարի հիմքից կազմվող ժամանակներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Սահմանական | | Ստորոդասական | Հրամայական | |
| | | | ներկա | անցյալ անկատար | առաջին ապառնի | արգել. ներկա | անկատ. ապառնի |
| Ներգործաձև | ա | եզ. | -ամ,<br>-աս,<br>-այ | -այի,<br>-այիր,<br>-այր | -այցեմ,<br>-այցես,<br>-այցէ | (մի՛)-ար | -այջի՛ր |
| | | հոգն. | -ամք,<br>-այք,<br>-ան | -այաք,<br>-այիք,<br>-ային | -այցեմք,<br>-այցէք,<br>-այցեն | (մի՛)-այք | -այջի՛ք |
| | ե | եզ. | -եմ,<br>-ես, -է | -էի, -էիր,<br>-էր | -իցեմ,<br>-իցես,<br>-իցէ | (մի՛)-եր | -իջի՛ր |
| | | հոգն. | -եմք,-էք,-են | -էաք, -էիք,<br>-էին | -իցեմք,<br>-իցէք,<br>-իցեն | (մի)-էք | -իջի՛ք |
| | ի | եզ. | -իմ,<br>-իս, -ի | -էի, -էիր,<br>-էր | -իցիմ,<br>-իցիս, -իցի | (մի՛)-իր | -իջի՛ր |
| | | հոգն. | -իմք,<br>-իք,<br>-ին | -էաք, -էիք,<br>-էին | -իցիմք,<br>-իցիք,<br>-իցին | (մի՛)-իք | -իջի՛ք |
| | ու | եզ. | -ում,<br>-ուս,<br>-ու | -ուի,<br>-ուիր,<br>-ոյր | -ուցում,<br>-ուցուս,<br>-ուցուն | (մի՛)-ուր | - |
| | | հոգն. | -ումք,<br>-ուք,<br>-ուն | -ուաք,<br>-ուիք,<br>-ուին | -ուցումք,<br>-ուցուք,<br>-ուցուն | (մի՛)-ուք | - |

**Գծապատկեր 8**

| Լծ. | Խոն. | Թիվ | Անկատարի հիմքից կազմվող ժամանակներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Սահմանական | | Ստորադասական | Հրամայական | |
| | | | ներկա | անցյալ անկատար | առաջին ապառնի | արգել. ներկա | անկատ. ապառնի |
| Կրավորական | ա | եզ. | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | -այցիմ, -այցիս, -այցի | Ընդհանուր է իր ներգործաձև ի հետ | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ |
| | | հոգն. | | | -այցիմք, - այցիք, -այցին | | |
| | ե | եզ. | -իմ, -իս, -ի | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | -իցիմ, -իցիս, -իցի | (մի)-իր | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ |
| | | հոգն. | -իմք, -իք, -ին | | -իցիմք, -իցիք, -իցին | (մի)-իք | |
| | ի | եզ. | Ընդհանուր է *ե* կրավորաձևի հետ | Ընդհանուր է *ե* կրավորաձևի հետ | Ընդհանուր է *ե* կրավորաձևի հետ | Ընդհանուր է *ե* կրավորաձևի հետ | Ընդհանուր է *ե* կրավորաձևի հետ |
| | | հոգն. | | | | | |
| | ու | եզ. | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | Ընդհանուր է իր ներգործաձևի հետ | - |
| | | հոգն. | | | | | |

## 2) Կատարյալի հիմքից կազմվող ժամանակները

**§ 119**. Գրաբարում կատարյալի հիմքից կազմվում են սահմանական անցյալ կատարյալ, ստորադասական երկրորդ ապառնի, հրամայական հաստատական ներկա և հրամայական կատարյալ ապառնի ժամանակները, ինչպես նաև անցյալ և ենթակայական դերբայները: Կատարյալի հիմքի ածանցներն են՝ -*աց-, -եց- (< -եաց-), -ի-, -ø-* (զրո) (տե՛ս § 94):

**§ 120**. Կապված այն բանի հետ, թե կատարյալի և անկատարի հիմքակազմ բայածանցները ինչպես են հերթագայվում (ինչպես է մեկը փոխարինվում մյուսով), գրաբարում առանձ-

նացվում է կատարյալի երկու տեսակ հիմք՝ պարզ (կամ արմատական) և բաղադրյալ (կամ ցոյական):

**Ծանոթություն 53:** Ցոյական է կոչվում բայածանցի մեջ ց (ցո) մասնիկն ունենալու պատճառով:

ա) Պարզ (կամ արմատական) է *ե, ի* խոնարհման ածանցավոր և *ու* խոնարհման պարզ և ածանցավոր բայերի կատարյալի հիմքը:

Օրինակ՝ *ել-ան-ել > ել-, անկ-ան-իմ > անկ-, փախ-չ-իմ > փախ-, մարտ-նչ-իմ > մարտ-, հեղ-ում > հեղ-, ստ-ն-ում > ստ-* և այլն:

բ) Բաղադրյալ (կամ ցոյական) հիմքն, իր հերթին, բաժանվում է երեք տեսակի:

1) *-Աց-* բայածանցով բաղադրյալ հիմք: Այդպիսին է *ա* խոնարհման պարզ և *-ան-* բայածանցով բայերի հիմքը:

Օրինակ՝ *խաղ-ալ > խաղ-աց-, իմ-ան-ալ > իմ-աց-, դող-ալ > դող-աց-, զարմ-ան-ալ > զարմ-աց* և այլն:

2) *-Եց- (< -եաց-)* բայածանցով բաղադրյալ հիմք: Այդպիսին է *ե* խոնարհման պարզ, բազմապատկական, *ի* խոնարհման պարզ և *ա* խոնարհման *-են-* բայածանցով բայերի հիմքը:

Օրինակ՝ *գր-ել > գր-եաց-, խոց-ոտ-ել > խոց-ոտ-եաց-, խորհ-իմ > խորհ-եաց-, մերձ-են-ալ > մերձ-եաց-* և այլն:

3) Բայարմատով կամ կատարյալի ցոյական հիմքով և *-ուց- (< -ոյց-)* պատճառական բայածանցով բաղադրված բայերի հիմք (տե՛ս § 94):

**Ծանոթություն 54:** Հիշյալ կանոններից նկատելի են մի քանի շեղումներ:

ա) Ե խոնարհման 5 պարզ բայ ունի *աց*-ով հիմք՝ *աս-ել > աս-աց-, գիտ- ել > գիտ-աց-, կար-ել > կար-աց-* («կարողանալ»), *մարթ-ել > մարթ-աց-, մերկ-ել > մերկ-աց-* («հանել, մերկացնել. մերկանալ»):

բ) *Ե* խոնարհման 4 պարզ բայ ունի արմատական հիմք՝ *ած-ել > ած-, բեր-ել > բեր-, հան-ել > հան-, հեղուս-ել > հեղուս-* («զամել, միացնել»):

գ) *Ի* լծորդության մի քանի պարզ բայեր ունեն արմատական հիմք՝ *զգած-իմ > զգած-* («հագնվել»), *նստ-իմ > նստ- (< նիստ-):*

դ) Ու խոնարհման 6 բայ ունեն ցոյական հիմք՝ *ընթեռ-ն-ուլ > ընթերց-, ընկ-են-ուլ > ընկ-եց-, զգ-են-ուլ > զգ-եց-, լ-ն-ուլ > լ-ց- (< լի-ց-), խ-ն-ուլ> խ-ց- (< խի-ց), յե-ն-ուլ > յե-ց-:*

**Ծանոթություն 55:** *Բառնալ* և *դառնալ* բայերի կատարյալի հիմքը լինում է *բարձ-* և *դարձ-* (*ն > ձ* հերթագայություն), իսկ *բանալ* և *թանալ* բայերինը՝ *բաց-* և *թաց-* (*ն >ց* հերթագայություն):

**§ 121.** Կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում բայերը խոնարհվում են երեք տեսակ՝ ներգործաձև, կրավորաձև և խառն:

ա) Ներգործաձև խոնարհվում են *ե* խոնարհման պարզ և ածանցավոր, *ա* և *ու* խոնարհման պարզ բայերը: Ընդհանուր կանոնից շեղվում են *յանցանել, մեղանչել,* այլև՝ գ*թալ, փութալ, յուսալ* բայերը, այնուհետև զուգահեռաբար՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհվող *ա* խոնարհման մի քանի բայեր՝ *եռալ, գոռալ, դողալ, որսալ, ջանալ, սգալ* և այլն:

բ) Կրավորաձև խոնարհվում են *ի* խոնարհման պարզ և *-ան-* բայածանցն ունեցող *ա* խոնարհման ածանցավոր (բացառություն՝ *բանալ, բառնալ, թանալ, լուանալ, մերկանալ,* որոնք ունեն զուգահեռ խոնարհում) և *ու* խոնարհման ածանցավոր (բացառություն՝ *առնուլ, ընկենուլ, լնուլ, խնուլ,* որոնք ևս ունեն զուգահեռ խոնարհում) բայերը:

գ) Խառն խոնարհվում են *ի* խոնարհման *-չ-* և *-նչ-*, *ու* խոնարհման (փոխանցվող) *-նում //-չիմ* բայածանցներ ունեցող բայերը:

**§ 122.** Կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում ներգործաձև խոնարհվող ներգործական սեռի բայերը կարող են թեքվել նաև կրավորաձև:

Օրինակ՝ *գրեցի* («գրեցի») > *գրեցայ* («գրվեցի»):

Այնուհետև, ներգործական սեռի այն բայերը, որոնք խոնարհվում են միայն կրավորաձև, այդ եղանակով արտահայտում են նաև ներգործականի իմաստ:

Օրինակ՝ դատեցայ ձևը և՛ ներգործական, և՛ կրավորական իմաստ է արտահայտում, թեև խոնարհված է կրավորաձև. հմմտ. դատեցայ զնա («դատեցի նրան») և դատեցայ ի նմանէ («դատվեցի նրանից»):

### ա. Սահմանական անցյալ կատարյալ

**§ 123**. Սահմանական անցյալ կատարյալը կազմվում է կատարյալի հիմքից ներգործաձև, կրավորաձև և խառն խոնարհման դիմային վերջավորություններով:

ա) Ներգործաձև խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ի | -աք |
| 2-րդ դ. | -իր | -էք ( -իք) |
| 3-րդ դ. | -ø (զրո) | -ին |

բ) Կրավորաձև խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -այ | -աք |
| 2-րդ դ. | -ար | -այք (-արուք) |
| 3-րդ դ. | -աւ | -ան |

գ) Խառն խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -եայ | -եաք |
| 2-րդ դ. | -եար | -եայք (-երուք) |
| 3-րդ դ. | -եաւ | -եան |

**Ծանոթություն 56:** Ներգործաձև խոնարհման եզակի 3-րդ դեմքը չունի որևէ վերջավորություն՝ -ø (զրո): Կատարյալի չհնչյունափոխված ձևը դառնում է 3-րդ դեմքի ձև, ըստ որում եթե կատարյալի հիմքը միավանկ է, բաղաձայնից առաջ դրվում է *ե,* իսկ ձայնավորից առաջ՝ *է*: Այդ մասնիկը կոչվում է վանկարար

նախահավելված: Բացառություն են *ե*-ով և *է*-ով միավանկ կատարյալի հիմքերը՝ *ելանել> ել-, իջանել> էջ-:*

**§ 124**. Սահմանական անցյալ կատարյալը համապատասխանում է ժամանակակից հայերենի նույն եղանակի անցյալ կատարյալին:

**§ 125**. Ըստ առանձին խոնարհումների և խոնարհման ձևերի՝ սահմանական անցյալ կատարյալը ձևավորվում է որոշակի խմբերով:

Օրինակ՝

ա) Ներգործաձև խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացի | մնացաք |
| 2-րդ դ. | մնացեր | մնացէք (մնացիք) |
| 3-րդ դ. | մնաց | մնացին |

2) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեցի | գրեցաք |
| 2-րդ դ. | գրեցեր | գրեցէք (գրեցիք) |
| 3-րդ դ. | գրեաց | գրեցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտի | գտաք |
| 2-րդ դ. | գտեր | գտէք (գտիք) |
| 3-րդ դ. | գիտ (եգիտ) | գտին |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | թողի | թողաք |
| 2-րդ դ. | թողեր | թողէք (թողիք) |
| 3-րդ դ. | թող (եթող) | թողին |

բ) Կրավորաձև խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացայ | իմացաք |
| 2-րդ դ. | իմացար | իմացայք (իմացարուք) |
| 3-րդ դ. | իմացաւ | իմացան |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մերձեցայ | մերձեցաք |
| 2-րդ դ. | մերձեցար | մերձեցայք (մերձեցարուք) |
| 3-րդ դ. | մերձեցաւ | մերձեցան |

2) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցայ | խորհեցաք |
| 2-րդ դ. | խորհեցար | խորհեցայք (խորհեցարուք) |
| 3-րդ դ. | խորհեցաւ | խորհեցան |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսայ | ուսաք |
| 2-րդ դ. | ուսար | ուսայք (ուսարուք) |
| 3-րդ դ. | ուսաւ | ուսան |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առայ | առաք |
| 2-րդ դ. | առար | առայք (առարուք) |
| 3-րդ դ. | առաւ | առան |

գ) Խառն խոնարհում

1) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | փախեայ | փախեաք |
| 2-րդ դ. | փախեար | փախեայք (փախերուք) |
| 3-րդ դ. | փախեաւ | փախեան |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | կորեայ | կորեաք |
| 2-րդ դ. | կորեար | կորեայք (կորերուք) |
| 3-րդ դ. | կորեաւ | կորեան |

2) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | զարթեայ | զարթեաք |
| 2-րդ դ. | զարթեար | զարթեայք (զարթերուք) |
| 3-րդ դ. | զարթեաւ | զարթեան |

**Ընթերցանություն 63**. «Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւքսն և զաստեղագէտսն և զքաւդեայսն. խօսէր[1] ընդ նոսա և ասէր`[2] եթէ «Ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս: Ես եդի ընդ նմա[3] ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն ի գլխաւորութիւն այնմ[4], զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց: Ես նմա բեւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ[5] հատոյց: Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցւոյն Տիսփոնի քաղաքի, և կարծեցի, թէ նոքա նենգութեամբ ինչ ետուն նմա զերդումն և ետուն ինձ ստել: Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս. իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին, թէ մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր: Եւ ես նոցա ոչ լուայ. և ետու հրաման` եւթանասուն զնոսա ի մի գուբ փողոտել, և զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր: Զաւետարանն, յոր երդուաւ Արշակ արքայ, որ է

գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի շղթայիւք. և կայ ի զանձի իմում» (*Բուզ.*, էջ 254-256):

1. *Խօսէր* - այստեղ՝ խոսեց:
2. *Ասէր* - աստեղ՝ ասաց:
3. *Եղի ընդ նմա* - նրա հետ կապեցի՝ հաստատեցի:
4. *Ի գլխաւորութիւն այնմ* - այն գլխավորի՝ հիմնականի վրա:
5. *Նա ինձ չար ընդ բարւոյ* - նա ինձ չարը բարու տեղ՝ դիմաց:

**Վարժություն 115:** Հետևյալ բայերը խոնարհել սահմանական անցյալ կատարյալով. *գողանալ, մոռանալ, բառնալ, թռչիմ, երկնչիմ, կիզուլ, հեծնուլ, ածել, մեկնել, մեծարել:*

**Վարժություն 116:** Կազմել նախորդ վարժության մեջ բերված բայերի անցյալ կատարյալի հիմքը, խմբավորել ըստ խոնարհման ձևի:

**Վարժություն 117:** Թարգմանել ժամանակակից հայերեն. «Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանկով պատեաց զնա և փորեաց ի նմա հնձան և շինեաց աշտարակ և ետ զնա ցմշակս և գնաց ի տար աշխարհ: Եւ իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս»:

**Առաջադրանք 116:** Վերհիշել *Ե* խոնարհման երեքական պարզ և ածանցավոր կազմության բայ և կազմել նրանց կատարյալի հիմքը:

**Առաջադրանք 117:** Կարդալ «Ընթերցանություն 63»-ը, առանձնացնել անցյալ կատարյալով դրված բայերը և վերլուծել:

**Հարցեր 35:** ա) Ո՞ր ժամանակներն են կազմվում կատարյալի հիմքից:

բ) Քանի՞ տեսակ է լինում կատարյալի հիմքը և ինչպե՞ս է բաղադրվում:

գ) Ինչպե՞ս են խոնարհվում կատարյալի հիմքից կազմվող ձևերը:

դ) Ի՞նչ շեղումներ կան կատարյալի հիմքի կազմության ընդհանուր կանոններից:

ե) Ինչպե՞ս է կազմվում սահմանական անցյալ կատարյալը:

զ) Ինչպիսի՞ խմբեր է ներկայացնում անցյալ կատարյալի խոնարհումը:

է) Ժամանակակից հայերենի ո՞ր ժամանակին է համապատասխանում սահմանական անցյալ կատարյալը:

## Բ. Ստորադասական երկրորդ ապառնի

**§ 126.** Ստորադասական երկրորդ ապառնին կազմվում է կատարյալի հիմքից ներգործածև, կրավորածև և խառն խոնարհման դիմային վերջավորություններով:

ա) Ներգործածև խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -ից | -ցուք |
| 2-րդ դ. | -ցես | -ջիք |
| 3-րդ դ. | -ցէ | -ցեն |

բ) Կրավորածև խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -այց | -ցուք |
| 2-րդ դ. | -ցիս | -ջիք |
| 3-րդ դ. | -ցի | -ցին |

գ) Խառն խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | -եայց | -իցուք |
| 2-րդ դ. | -իցես | -իջիք |
| 3-րդ դ. | -իցէ | -իցեն |

**Ծանոթություն 57:** Բայահիմքի *ց*-ն վերջավորությունների *ց* և *ջ* տարրերից առաջ վերածվում է *ս*-ի (ըստ տարնմանության և համաբանության օրենքի): Այն չի տարածվում բայարմատի *ց*-ի վրա: Օրինակ՝ *սիրել > սիրեսցէ, բայց՝ կեալ («ապրել») > կեցցէ, անցանել > անցցէ:*

**§ 127**. Ստորադասական երկրորդ ապառնին համապատասխանում է ժամանակակից հայերենի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին: Օրինակ՝ *կեցցէ* նշանակում է «ապրելու է, ապրի, կապրի, պիտի ապրի»: Ի տարբերություն ստորադասական առաջին ապառնիի, ինչպես նկատելի է, երկրորդ ապառնին ներառում է նաև ժամանակակից հայերենի սահմանական ապառնիի ժամանակային իմաստը:

**§ 128**. Ստորադասական երկրորդ ապառնին, ըստ առանձին խոնարհումների և խոնարհման ձևերի, ունի հետևյալ խմբավորումը:

ա) Ներգործաձև խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացից | մնասցուք |
| 2-րդ դ. | մնասցես | մնասջիք |
| 3-րդ դ. | մնասցէ | մնասցեն |

2) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեցից | գրեսցուք |
| 2-րդ դ. | գրեսցես | գրեսջիք |
| 3-րդ դ. | գրեսցէ | գրեսցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտից | գտցուք |
| 2-րդ դ. | գտցես | գտջիք |

| | | |
|---|---|---|
| 3-րդ դ. | գտցէ | գտցեն |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | թողից | թողցուք |
| 2-րդ դ. | թողցես | թողջիք |
| 3-րդ դ. | թողցէ | թողցեն |

բ) Կրավորաձև խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացայց | իմասցուք |
| 2-րդ դ. | իմասցիս | իմասջիք |
| 3-րդ դ. | իմասցի | իմասցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մերձեցայց | մերձեսցուք |
| 2-րդ դ. | մերձեսցիս | մերձեսջիք |
| 3-րդ դ. | մերձեսցի | մերձեսցին |

2) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցայց | խորհեսցուք |
| 2-րդ դ. | խորհեսցիս | խորհեսջիք |
| 3-րդ դ. | խորհեսցի | խորհեսցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսայց | ուսցուք |
| 2-րդ դ. | ուսցիս | ուսջիք |
| 3-րդ դ. | ուսցի | ուսցին |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առայց | առցուք |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | առցիս | առջիք |
| 3-րդ դ. | առցի | առցին |

գ) Խառն խոնարհում

1) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | փախեայց | փախիցուք |
| 2-րդ դ. | փախիցես | փախիջիք |
| 3-րդ դ. | փախիցէ | փախիցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | կորեայց | կորիցուք |
| 2-րդ դ. | կորիցես | կորիջիք |
| 3-րդ դ. | կորիցէ | կորիցեն |

2) Ու խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | զարթեայց | զարթիցուք |
| 2-րդ դ. | զարթիցես | զարթիջիք |
| 3-րդ դ. | զարթիցէ | զարթիցեն |

**Ընթերցանություն 64**. «Իսկ քաղեայքն ետուն նմա պատասխանի և ասեն. «Թող մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք քեզ»: Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամենայն քաղեայքն և աստեղագէտքն և ասեն ցարքայն[1]. «Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խօսի ընդ քեզ կամ զի՞նչ ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն»[2]: Ասէ արքայն. «Իբրև զմի ի ծառայիցն իմոց համարի զինքն. հող ոտից իմոց ջանայ լինել»: Ասեն նոքա. «Առ արա՛, զոր ասեմքս քեզ. պահեա՛ դու զնուա աստէն, և առաքեա՛ դու դեսպանս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեռինս երկուս, և կահոյր[3] մի ջուր: Եւ հրաման տացես հարկանել[4] զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն զձեռանէ արքային Հայոց Արշակայ, և տարցես նախ յայն տեղ, ուր բնակ

իսկ իցէ հողն, և հարցցես ցնա բանս: Եւ դարձեալ առցես դու զծեռանէ նորա, և տարցես ի հայատակսն ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս ի նմանէ, և ապա գիտասցես դու՝ եթէ կա՞յ յուխտի քո և պահէ՞ զդաշինս քո, թէ՞ ոչ, յետ արձակելոյ քո զնա ի Հայս: Ապա թէ ի վերայ հայ հողոյն[5] խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր, զի որ օր հասանէ[6] յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ» *(Բուզ.,* էջ 256):

1. *Յարքայն* - արքայից:
2. *Զիա՞րդ ունի զանձն* - իրեն ինչպե՞ս է պահում:
3. *Կահոյր* - ջրաման, սափոր:
4. *Հարկանել* - այստեղ՝ փռել:
5. *Ի վերայ հայ հողոյն* - հայկական հողի վրա:
6. *Հասանէ* - այստեղ՝ հասնի:

**Ընթերցանություն 65**. «Չարիքս, որ լինին, ուստի իցեն: Հարցցուք և մեք. չարիքն, որք լինին, անձի՞նք ինչ իցեն, թէ՞ արգասիք անձանց: Ասեն. ի դէպ է կարծել՝[1] եթէ արգասիք անձանց: Եւ հիւղն, զոր ասեն անարգասաւոր և անկերպարան, զիա՞րդ անարգասաւորն և անկերպարանն՝ յայլս կարէր արդիւնս ծնուցանել[2], եթէ ոչ ի դիպացն լինիցին չարիքն, և ոչ ի նմանէ: Զի սպանութիւնն չէ անձն ինչ, և ոչ շնութիւնն անձն ինչ, և ոչ դարձեալ այլքն մի ըստ միոջէ ի չարեացն. այլ որպէս ի դպրութենէ դպիր կոչի, ի ճարտարութենէ՝ ճարտար, և ի բժշկութենէ՝ բժիշկ, և այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ յիրաց անտի առնուն զանուանս, նոյնպէս և չարիքն ի դիպացն առնուն յանուանումն» (*Եզնիկ,* էջ 20-21):

1. *Ի դէպ է կարծել* - տեղին է կարծել:
2. *Արդիւնս ծնուցանել* - արդյունք առաջ բերել՝ առաջացնել:

**Վարժություն 118:** Հետևյալ բայերը խոնարհել ստորադասական երկրորդ ապառնիով. *հասանել, բեկանել, մարտնչիմ, ծնանիմ, փախչիմ, գտանել, ընթեռնուլ, ելանել, հեղուլ, հատանել:*

**Վարժություն 119:** Որոշել հետևյալ բայաձևերի եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը. *իջից, օծցես, նմանեցաւ, արձակեաց, եկեսցեն, քանդեսցեն, նստէին, արկանէին, տային, սիրէր, սրբեմք, իմասջիք, տեսջիք, ելցեն, կատարեսջիք, ծուլանայ:*

**Վարժություն 120:** Հետևյալ բայերը խոնարհել սահմանական անցյալ կատարյալով. *փութալ, իմանալ, զքօսնուլ, թաքչիմ, ստնուլ, լնուլ, յենուլ, բառնալ, մերձենալ, դառնալ, գոհանալ:*

**Առաջադրանք 118:** Թարգմանել ժամանակակից հայերեն. Խցցին բերանք այնոցիկ, ոյք խօսէին զանիրաւութիւն: Եթէ քաղաքն այն շինեսցի, և պարիսպք նորա կանգնեսցին, հարկս քեզ ոչ ոք տայ: Յարձակեսցուք ի վերայ թշնամեացն: Եւ հրապարակք քաղաքին լցցին պատանեկօք և աղջկամբք, որ խաղայցեն ի հրապարակս նորա:

**Առաջադրանք 119:** Կարդալ «Ընթերցանություն 64»-ը, առանձնացնել ստորադասական երկրորդ ապառնիով ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 120:** Կարդալ «Ընթերցանություն 65»-ը և վերլուծել բայաձևերը:

**Հարցեր 36:** ա) Ինչպե՞ս է կազմվում ստորադասական երկրորդ ապառնին:

բ) Ստորադասական երկրորդ ապառնին ժամանակակից հայերենի ո՞ր եղանակների ո՞ր ժամանակներին է համապատասխանում:

գ) Ի՞նչ տարբերություն կա ստորադասական առաջին և երկրորդ ապառնիների միջև:

դ) Ինչպե՞ս է խոնարհվում ստորադասական երկրորդ ապառնին:

## Գ. Հրամայական հաստատական ներկա

§ **129**. Հրամայական հաստատական ներկան ունի միայն երկրորդ դեմքի ձևեր, կազմվում է կատարյալի հիմքից, հետևյալ դիմային վերջավորություններով. ներգործաձև՝ -ø (զրո), *-էք,* կրավորաձև՝ *-իր, -այք (-արուք),* խառն՝ *-իր, -եայք (-երուք):*

**Ծանոթություն 58:** Քանի որ ներգործաձև խոնարհման եզակին չունի վերջավորություն, այդ դեպքում կատարյալի շեշտված հիմքը հանդես է գալիս իբրև դիմավոր ձև: Օրինակ՝ *ելանել > ե՛լ, իջանել > է՛ջ, հասանել > հա՛ս:* Իսկ ցոյական հիմքով բայերի դեպքում նույն հիմքի *ց*-ն ընկնում է: Օրինակ՝ *գրել > գրեա՛, գիտել > գիտեա՛* (այլև՝ *գիտա՛*), *սիրել > սիրեա՛:*

§ **130**. Հրամայական հաստատական ներկան իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի բուն հրամայականին:

§ **131**. Հրամայական հաստատական ներկան կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ:

ա) Ներգործաձև խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնա՛ | մնացէ՛ք |

2) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գրեա՛ | գրեցէ՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գի՛տ | գտէ՛ք |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | թո՛ղ | թողէ՛ք |

բ) Կրավորաձև խոնարհում
1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | իմացի՛ր | իմացա՛յք (իմացարո՛ւք) |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մերձեցի՛ր | մերձեցայք (մերձեցարո՛ւք) |

2) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհեա՛ց | խորհեցա՛յք (խորհեցարո՛ւք) |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսի՛ր | ուսա՛յք (ուսարո՛ւք) |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | առի՛ր | առա՛յք (առարո՛ւք) |

գ) Խառն խոնարհում
1) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | փախի՛ր | փախեա՛յք (փախերո՛ւք) |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | կորի՛ր | կորեա՛յք (կորերո՛ւք) |

2) Ու խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | զարթի՛ր | զարթեա՛յք (զարթերո՛ւք) |

**Ընթերցանություն 66**. «Յայնժամ նմանեցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային և հարսին: Հինգն ի նոցանէ յիմարք էին, և

հինգն՝ իմաստունք: Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին[1]: Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց: Եւ ի յամել փեսային[2], նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին:

Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ. «Ահա փեսայ գայ, արիք[3] ընդ առաջ նորա»: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն. «Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր»: Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. «Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս և գնեսջիք ձեզ»: Իբրև նոքա գնացին գնել, եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն: Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. «Տէ՛ր, տէ՛ր, բա՛ց մեզ»: Նա պատասխանի ետ և ասէ. «Ամէն[4] ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ: Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն» (*Մատթ.,* ԻԵ, 1-13):

1. *Ոչ բարձին* - չվերցրին:
2. *Ի յամել փեսային* - փեսայի ուշանալու ժամանակ:
3. *Արի՛ք* - վե՛ր կացեք:
4. *Ամէն* - ճիշտ, իսկն, ստույգ, արդարև:

**Վարժություն 121:** Կազմել հետևյալ բայերի հրամայական հաստատական ներկան. *սկսանիմ, սպանանել, թողուլ, յամել, յամենալ, անցանել, հասանել, տեսանել, գիտենալ, երկնչիմ, հանգստանամ:*

**Վարժություն 122:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *ա՛նց, գնա՛, ընկեա՛, լի՛ց, կա՛ց, բա՛ց, աղացի՛ր, տեսի՛ր, կազմեցարո՛ւք, տեսա՛յք, թաքերո՛ւք, հեղարո՛ւք, բազմեա՛ց, վազեցէ՛ք, է՛ջ, վազեա՛, թռեա՛յք, հայեցա՛յք:*

**Առաջադրանք 121:** «Ընթերցանություն 66»-ից առանձնացնել բայական մյուս ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 122**: Բանավոր կազմել երեք բայի հրամայական հաստատական ներկան:

**Հարցեր 37:** ա) Ինչպե՞ս է կազմվում հրամայական հաստատական ներկան:

բ) Ինչպե՞ս է խոնարհվում հրամայական հաստատական ներկան:

գ) Հրամայական հաստատական ներկան ժամանակակից հայերենի ո՞ր եղանակին և ժամանակին է համապատասխանում:

## Դ. Հրամայական կատարյալ ապառնի

**§ 132**. Հրամայական կատարյալ ապառնին ևս ունի միայն երկրորդ դեմքի ձևեր, կազմվում է կատարյալի հիմքից, հետևյալ դիմային վերջավորություններով. ներգործաձև և կրավորաձև՝ *-ջիր, -ջիք*, իսկ խառն՝ *-իջիր, -իջիք:*

**§ 133**. Այն համապատասխանում է ժամանակակից հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական ապառնիներին՝ իբրև հրաման, այլև երբեմն նաև բուն հրամայականին:

**§ 134**. Այս դեպքում ևս խոնարհումը տեղի է ունենում ըստ առանձին տիպերի. նկատվում է խոնարհման հետևյալ խմբավորումը:

ա) Ներգործաձեւ խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնասջի՛ր | մնասջի՛ք |

2) *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ. | գրեսջի՛ր | գրեսջի՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գտջի՛ր | գտջի՛ք |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | թողջի՛ր | թողջի՛ք |

բ) Կրավորաձև խոնարհում

1) *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | իմասջի՛ր | իմասջի՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մերձեսջի՛ր | մերժեսջի՛ք |

2) *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհեսջի՛ր | խորհեսջի՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսջի՛ր | ուսջի՛ք |

3) *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | առջի՛ր | առջի՛ք |

գ) Խառն խոնարհում

1) *Ի* խոնարհում՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | փախիջի՛ր | փախիջի՛ք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | կորիջի՛ր | կորիջի՛ք |

2) *Ու* խոնարհում՝

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | զարթիջի՛ր | զարթիջի՛ք |

(Տե՛ս գծապատկերներ 9-11)

**Ընթերցանություն 67.** «Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեւանանց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն զոգցես ի բարձրավանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերտն» (*Խոր.,* էջ 196-198):

**Վարժություն 123:** Կազմել հետևյալ բայերի հրամայական կատարյալ ապառնին. *զարգանալ, ասել, հաստատել, հասանել, գնալ, շինել, սպանանել, անկանել, մոռանալ, զբօսնուլ, թաքչիլ:*

**Վարժություն 124:** Թարգմանել ժամանակակից հայերեն. *թաքիջի՛ր, նստիջի՛ր, թօթափեսջի՛ք, խցջի՛ր, սիրեսջի՛ր, ծնջի՛ք, կոտորեսջի՛ր, նայեսջի՛ք, աղասջի՛ք, գրեսջի՛ք:*

**Առաջադրանք 123:** Վերհիշել տարբեր խոնարհումների երկուական բայ և խոնարհել հրամայական կատարյալ ապառնիով:

**Առաջադրանք 124:** Կարդալ «Ընթերցանություն 67»-ը, առանձնացնել խոնարհված բայերը և վերլուծել:

**Առաջադրանք 125:** «Ընթերցանություն 67»-ից առանձնացնել թեք հոլովներով դրված գոյականները և վերլուծել:

**Հարցեր 38:** ա) Ինչպե՞ս է կազմվում և խոնարհվում հրամայական կատարյալ ապառնին:

բ) Հրամայական կատարյալ ապառնին ժամանակակից հայերենի ո՞ր ձևերով է թարգմանվում:

**Գծապատկեր 9**

| Ձև | Խոն. | Կազմ. | Թիվ | Կատարյալի հիմքից կազմվող ժամանակները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Սահմանական | Ստորոդասական | Հրամայական | |
| | | | | անցյալ կատարյալ | երկրորդ ապառնի | հաստատական ներկա | կատարյալ ապառնի |
| Ներգործաձև | ա | պարզ | եզ. | -ի, -եր, -Ø | -ից, -ցես, -ցէ | - | -ջիր |
| | | | հոգն. | -աք,-յք, (-իք), -ին | -ցուք, -ջիք,-ցեն | -էք | -ջիք |
| | ե | պարզ և ածանց. | եզ. | -ի, -եր, -Ø | -ից, -ցես, -ցէ | - | -ջիր |
| | | | հոգն. | -աք,-յք, (-իք), -ին | -ցուք, -ջիք,-ցեն | -էք | -ջիք |
| | ու | պարզ | եզ. | -ի, -եր, -Ø | -ից, -ցես, -ցէ | - | -ջիր |
| | | | հոգն. | -աք,-յք, (-իք), -ին | -ցուք, -ջիք,-ցեն | -էք | -ջիք |

**Գծապատկեր 10**

| Ձև | Խոն. | Կազմ. | Թիվ | Կատարյալի հիմքից կազմվող ժամանակները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Սահմանական | Ստորոդասական | Հրամայական | |
| | | | | անցյալ կատարյալ | երկրորդ ապառնի | հաստատական ներկա | կատարյալ ապառնի |
| Կրավորաձև | ա | պարզ | եզ. | -այ, -ար, -աւ | -այց, -ցիս, -ցի | -իր | -ջիր |
| | | | հոգն. | -աք,-այք, (-արուք), -ան | -ցուք, -ջիք, -ցին | -այք (-արուք) | -ջիք |
| | ե | պարզ և ածանց. | եզ. | -այ, -ար, -աւ | -այց, -ցիս, -ցի | -իր | -ջիր |
| | | | հոգն. | -աք,-այք, (-արուք), -ան | -ցուք, -ջիք, -ցին | -այք (-արուք) | -ջիք |
| | ու | պարզ | եզ. | -այ, -ար, -աւ | -այց, -ցիս, -ցի | -իր | -ջիր |
| | | | հոգն. | -աք,-այք, (-արուք), -ան | -ցուք, -ջիք, -ցին | -այք (-արուք) | -ջիք |

**Գծապատկեր 11**

| Ձև | Խոն. | Կազմ. | Թիվ | Կատարյալի հիմքից կազմվող ժամանակները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Սահմա-նական | Ստորոդա-սական | Հրամայական | |
| | | | | անցյալ կատարյալ | երկրորդ ապառնի | հաստա-տական ներկա | կատար-յալ ապառնի |
| Խառն | ի | ածանց. (չ, նչ) | եզ. | -եայ, -եար, -եաւ, | -եայց, -իցես, -իցէ, | -իր | -իջիր |
| | | | հոգն. | -եաք, -եայք (-երուք)-եան, | -իցուք, -իջիք, -իցեն | -եայք (-երուք) | -իջիք |
| | ու | ածանց. (ն) | եզ. | -եայ, -եար, -եաւ, | -եայց, -իցես, -իցէ, | -իր | -իջիր |
| | | | հոգն. | -եաք, -եայք (-երուք)-եան, | -իցուք, -իջիք, -իցեն | -եայք (-երուք) | -իջիք |

# 3) ԴԵՐԲԱՅՆԵՐ

**§ 135.** Գրաբարի դերբայները չորսն են՝ անորոշ, ապառնի, անցյալ և ենթակայական (ներկա):

ա) Անորոշ դերբայը կազմվում է անկատարի հիմքից *-ալ, -ել, -իլ* և *-ուլ* վերջավորություններով: *Իլ*-ով անորոշը համեմատաբար ուշ երևույթ է, որին հին գրական հայերենում համապատասխանում էր *ել*-ով անորոշը:

Օրինակ՝ *աղալ, իմանալ, խաղալ, մնալ, մօտենալ, անկանել, տանել, գրել, ելանել, խորհել (խորհիլ), խօսել (խօսիլ), ուսանել (ուսանիլ), առնուլ, լնուլ, ընթեռնուլ, ստնուլ, ցասնուլ* և այլն:

բ) Ապառնի դերբայը ևս կազմվում է անկատարի հիմքից, ըստ որում *-ոց* վերջավորությամբ, որը գործնականում դրվում է անորոշ դերբայի ձևի վրա:

Օրինակ՝ *աղալ > աղալոց, խաղալ > խաղալոց, իմանալ > իմանալոց, ելանել > ելանելոց, գտանել > գտանելոց, գրել > գրելոց, խօսել > խօսելոց, խորհել > խորհելոց, ուսանել > ուսանելոց, ստնուլ > ստնլոց, ցասնուլ > ցասնլոց, առնուլ > առնլոց, լնուլ > լնլոց* և այլն:

**Ծանոթություն 59:** Նկատելի է, որ *ու* խոնարհման բայերի դեպքում -*լոց*-ից առաջ խոնարհիչ ու ձայնավորն ընկնում է:

**Ծանոթություն 60:** Առանձնացվում է նաև -*ի* վերջավորությամբ ապառնի դերբայ, ըստ որում երբեմն -*ոց*-ը դիտվում է ներգործականի, իսկ *ի*-ն կրավորականի արտահայտիչ:

Օրինակ՝ *շարժել > շարժելոց* (ներգործական սեռ), *շարժելի* (կրավորական սեռ), *արգելուլ > արգելլոց* (ներգործական սեռ), *արգելլի* (կրավորական սեռ) և այլն:

գ) Անցյալ դերբայը կազմվում է *-եալ* վերջավորությամբ, որը հիմնականում դրվում է կատարյալի հիմքի վրա, առանձին դեպքերում՝ անկատարի:

Օրինակ՝ *աղալ > աղացեալ, խաղալ > խաղացեալ, զարմանալ > զարմացեալ, գնալ > գնացեալ* և այլն:

Նկատելի է հետևյալը. 1) *Ա* խոնարհման պարզ և ածանցավոր բայերի անցյալ դերբայը կազմվում է կատարյալի հիմքից՝

*լուանալ > լուացեալ, զարմանալ > զարմացեալ, բանալ > բացեալ, թանալ > թացեալ, միամտանալ > միամտացեալ:*

2) *Ե* խոնարհմանածանցավոր բայերինը՝ *անցանել > անցեալ, գտանել > գտեալ, հատանել > հատեալ:*

3) *Ի* խոնարհման *ան* բայածանցով բայերինը՝ *ծնանիմ > ծնեալ, անկանիմ > անկեալ, ուսանիմ > ուսեալ:*

4) *Ու* խոնարհման պարզ և ածանցավոր բայերինը՝ *լնուլ > լցեալ, խնուլ > խցեալ, հեծնուլ > հեծեալ, թողուլ > թողեալ, կիզուլ > կիզեալ:*

5) Ե, ի խոնարհման պարզ բայերինը կազմվում է և՛ անկատարի, և՛ կատարյալի հիմքից՝ *գրել > գրեալ // գրեցեալ, այրել > այրեալ // այրեցեալ, բնակիմ > բնակեալ // բնակեցեալ, խորհիմ > խորհեալ // խորհեցեալ, հաշտիմ > հաշտեալ // հաշտեցեալ* և այլն:

6) *Ի* խոնարհման -*չ*-, -*նչ*- և *ու* խոնարհման (զուգահեռաբար) -*նում, -չիմ* բայածանցներով բայերի անցյալ դերբայը կազմվում է պատճառականի կատարյալի հիմքից:

Օրինակ՝ *փախչիմ > փախուցանել > փախուցեալ, մարտնչիմ > մարտուցանել > մարտուցեալ, թռչիմ > թռուցանել > թռուցեալ, թաքչիմ > թաքուցանել > թաքուցեալ* և այլն:

դ) Ենթակայական դերբայը (որ կոչվում է նաև ներկա դերբայ) կազմվում է -*ող* (կամ -*օղ > -աւղ*) վերջավորությամբ: Վերջինս հիմնականում դրվում է բայի կատարյալի հիմքի վրա, երբեմն՝ անկատարի: Օրինակ՝ *ընթանալ > ընթացող, արգելուլ > արգելող, բարկանալ > բարկացող, ուրանալ > ուրացող, սպանանել > սպանող* և այլն:

Այս դեպքում կարելի է նշել նաև հետևյալը: 1) *Ա, ու* խոնարհման բայերի (բացառությամբ՝ *որսալ, մուրալ, հոգալ, յուսալ*) ենթակայականը կազմվում է կատարյալի հիմքից՝ *գնալ > գնացող, մոռանալ > մոռացող, ողբալ > ողբացող, թողուլ > թողող, զգենուլ > զգեցող, լնուլ > լցող* և այլն:

2) *Ե, ի* խոնարհման բայերի (չհաշված մեկ-երկու բացառությունը) ենթակայականը կազմվում է անկատարի հիմքից՝ *գնել*

*> գնող, բերել > բերող, օծել > օծող, քննել > քննող, սպասաւորիմ > սպասաւորող, ոգորիմ > ոգորող, ողորմիմ > ողորմող* և այլն:

3) *Ե, ի* խոնարհման *-ան-* բայածանցով բայերի ենթակայականը կազմվում է և՛ անկատարի, և՛ կատարյալի հիմքից՝ *սպանանել > սպանող // սպանանող, ծնանիմ > ծնող // ծնանող, ուսանիմ > ուսող // ուսանող, հատանել > հատող // հատանող, գտանել > գտող // գտանող* և այլն:

4) Ենթակայական դերբայի ձև չունեն *ի* խոնարհման *-չ-, -նչ-* և *ու* խոնարհման (զուգահեռ) *-նում //-չիմ* մասնիկներով բայերը:

**Ընթերցանություն 68.** «Բայց սակայն ոչինչ տարբերէ, թէ այսպէս ասիցէ ոք՝ թէ ամուսնանալի է. և թէ այսպէս՝ արդիւք ամուսնանալի է թէ ոչ. և դարձեալ՝ թէ ախորժելի է ամուսնութիւն, թէ փախչելի. քանզի միևնոյն է ի ձեռն ամենեցուն սոցա ազդեցեալն:

Արդ՝ գործականաց դրութեանցն վերնագոյն գլուխքն առեալ լինին յայնմ, որ կազմեն ի հարկաւորէն եւ ի գեղեցկէն, և յօգտակարէն, և ի հեշտալոյն, և յայնմ, որ եղծանեն, ի ներհակացն. և յիւրաքանչիւր ոք ձեռնարկեսցուք ի տեղեացն, յորոց կարողութիւն իցէ:

Քանզի որպէս բազում անգամ նշանակեցաք, ոչ է կարողութիւն յամենայն պատճառէ առ ամենայն առարկութիւն ձեռնարկել. և են տեղիք այսորիկ. նախ առաջին՝ զի կար է լինել արժան է վարժել ձեռն դրութեան. և երկրորդ՝ զի ըստ բնութեան է և ըստ հասարակս ամենայն մարդկան սովորութեան, և օրինաց. զի ոչ է բաւական առ ի գործել ինչ կարն զսա գոլ, թէ ոչ և ըստ բնութեան և ըստ օրինաց իցէ. երրորդ՝ զի դիւրին է լինել, և եթէ ոչ դիւրին գոլ՝ զի կար է գործիլ, զի կարի շատ այսպէս գովելի է գործիլ, քանզի դիւրին է» (*Թէովն,* էջ 148):

**Վարժություն 125:** Գտնել հետևյալ բայաձևերի անորոշը, կազմել ապառնին. *ամամ, տենչամք, անձկանային, արբենամք, մեռանիս, հեղձուք, ուտնումք, ջեռնու, մերկանայ, մատնու, ցասնուս, քրքջան, յաւելում:*

**Վարժություն 126:** Որոշել հետևյալ բայերի խոնարհված ձևը, կազմել նրա անորոշը և անցյալը. *բանամք, տեսանեմք, հարցանեն, արգելուն, յամենամք, յուլանաս, մերկանաս, անցանիս, բուսանի, թռչիս, շիջանիս*:

**Առաջադրանք 126:** Վերհիշել տարբեր խոնարհումների երկուական բայ և կազմել դրանց անցյալ և ենթակայական դերբայները:

**Առաջադրանք 127:** Կարդալ «Ընթերցանություն 68»-ը, առանձնացնել դերբայները և որոշել, թե դրանք ինչ ձևով են դրված և որ հիմքից են կազմված:

**Հարցեր 39:** ա) Որո՞նք են գրաբարի դերբայները:
բ) Ինչպե՞ս են կազմվում անորոշ և ապառնի դերբայները:
գ) Ինչպե՞ս է կազմվում անցյալ դերբայը:
դ) Ինչպե՞ս է կազմվում ենթակայականը:
ե) Ի՞նչ բացառություններ կան դերբայների կազմության մեջ:

# 4) ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

**§ 136.** Գրաբարի բայի համակարգը ներառում է նաև բաղադրյալ ժամանակներ: Դրանք, ինչպես վերը նշվեց, բաղադրվում են անցյալ, ապառնի դերբայներով և *եմ, լինիմ* օժանդակ բայերով: *Եմ*-ը բաղադրվում է և՛ անցյալի, և՛ ապառնու հետ, իսկ *լինիմ*-ը՝ միայն անցյալի:

**§ 137.** *Եմ*-ը անցյալ և ապառնի դերբայների հետ կազմում է հետևյալ բաղադրյալ ժամանակները՝ վաղակատար ներկա (հարակատար), վաղակատար անցյալ (գերակատար), վաղակատար ապառնի, ապառնի ներկա, ապառնի անցյալ, ապառնիի ապառնի:

ա) Վաղակատար ներկան բաղադրվում է անցյալ դերբայով և *եմ* բայի ներկայով: Այն իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի վաղակատար ներկային:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ եմ | մնացեալ եմք |
| 2-րդ դ. | մնացեալ ես | մնացեալ էք |
| 3-րդ դ. | մնացեալ է | մնացեալ են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ եմ | իմացեալ եմք |
| 2-րդ դ. | իմացեալ ես | իմացեալ էք |
| 3-րդ դ. | իմացեալ է | իմացեալ են |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ եմ | գրեալ եմք |
| 2-րդ դ. | գրեալ ես | գրեալ էք |
| 3-րդ դ. | գրեալ է | գրեալ են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ եմ | գտեալ եմք |
| 2-րդ դ. | գտեալ ես | գտեալ էք |
| 3-րդ դ. | գտեալ է | գտեալ են |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեալ//խորհեցեալ եմ | խորհեալ//խորհեցեալ եմք |
| 2-րդ դ. | խորհեալ//խորհեցեալ ես | խորհեալ//խորհեցեալ էք |
| 3-րդ դ. | խորհեալ//խորհեցեալ է | խորհեալ//խորհեցեալ են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ եմ | ուսեալ եմք |
| 2-րդ դ. | ուսեալ ես | ուսեալ էք |
| 3-րդ դ. | ուսեալ է | ուսեալ են |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ եմ | հեղեալ եմք |
| 2-րդ դ. | հեղեալ ես | հեղեալ էք |
| 3-րդ դ. | հեղեալ է | հեղեալ են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ եմ | ընթերցեալ եմք |
| 2-րդ դ. | ընթերցեալ ես | ընթերցեալ էք |
| 3-րդ դ. | ընթերցեալ է | ընթերցեալ են |

բ) Վաղակատար անցյալը բաղադրվում է անցյալ դերբայով և *եմ* բայի անցյալ անկատարով: Այն իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի վաղակատար անցյալին:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ էի | մնացեալ էաք |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնացեալ էիր | մնացեալ էիք |
| 3-րդ դ. | մնացեալ էր | մնացեալ էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ էի | իմացեալ էաք |
| 2-րդ դ. | իմացեալ էիր | իմացեալ էիք |
| 3-րդ դ. | իմացեալ էր | իմացեալ էին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ էի | գրեալ էաք |
| 2-րդ դ. | գրեալ էիր | գրեալ էիք |
| 3-րդ դ. | գրեալ էր | գրեալ էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ էի | գտեալ էաք |
| 2-րդ դ. | գտեալ էիր | գտեալ էիք |
| 3-րդ դ. | գտեալ էր | գտեալ էին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեալ//խորհեցեալ էի | խորհեալ//խորհեցեալ էաք |
| 2-րդ դ. | խորհեալ//խորհեցեալ էիր | խորհեալ//խորհեցեալ էիք |
| 3-րդ դ. | խորհեալ//խորհեցեալ էր | խորհեալ//խորհեցեալ էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ էի | ուսեալ էաք |
| 2-րդ դ. | ուսեալ էիր | ուսեալ էիք |
| 3-րդ դ. | ուսեալ էր | ուսեալ էին |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ էի | հեղեալ էաք |
| 2-րդ դ. | հեղեալ էիր | հեղեալ էիք |

| | | |
|---|---|---|
| 3-րդ դ. | հեղեալ էր | հեղեալ էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ էի | ընթերցեալ էաք |
| 2-րդ դ. | ընթերցեալ էիր | ընթերցեալ էիք |
| 3-րդ դ. | ընթերցեալ էր | ընթերցեալ էին |

գ) Վաղակատար ապառնին բաղադրվում է անցյալ դերբայով և *եմ* բայի առաջին ապառնիով: Այն իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների երկրորդական բաղադրյալ ապառնիներին՝ բաղադրված հարակատար դերբայով և *լինել* բայով (օրինակ՝ *գրած լինեմ, գրած կլինեմ, գրած պիտի լինեմ*):

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ իցեմ | մնացեալ իցեմք |
| 2-րդ դ. | մնացեալ իցես | մնացեալ իցէք |
| 3-րդ դ. | մնացեալ իցէ | մնացեալ իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ իցեմ | իմացեալ իցեմք |
| 2-րդ դ. | իմացեալ իցես | իմացեալ իցէք |
| 3-րդ դ. | իմացեալ իցէ | իմացեալ իցեն |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ իցեմ | գրեալ իցեմք |
| 2-րդ դ. | գրեալ իցես | գրեալ իցէք |
| 3-րդ դ. | գրեալ իցէ | գրեալ իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ իցեմ | գտեալ իցեմք |
| 2-րդ դ. | գտեալ իցես | գտեալ իցէք |

| | | |
|---|---|---|
| 3-րդ դ. | գտեալ իցէ | գտեալ իցեն |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեալ//խորհեցեալ իցեմ | խորհեալ//խորհեցեալ իցեմք |
| 2-րդ դ. | խորհեալ//խորհեցեալ իցես | խորհեալ//խորհեցեալ իցէք |
| 3-րդ դ. | խորհեալ//խորհեցեալ իցէ | խորհեալ//խորհեցեալ իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ իցեմ | ուսեալ իցեմք |
| 2-րդ դ. | ուսեալ իցես | ուսեալ իցէք |
| 3-րդ դ. | ուսեալ իցէ | ուսեալ իցեն |

2. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ իցեմ | հեղեալ իցեմք |
| 2-րդ դ. | հեղեալ իցես | հեղեալ իցէք |
| 3-րդ դ. | հեղեալ իցէ | հեղեալ իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ իցեմ | ընթերցեալ իցեմք |
| 2-րդ դ. | ընթերցեալ իցես | ընթերցեալ իցէք |
| 3-րդ դ. | ընթերցեալ իցէ | ընթերցեալ իցեն |

**Ծանոթություն 61:** Անցյալ դերբայով կազմված հիշյալ երեք ժամանակները գործածվում են նաև փոքր-ինչ այլ կառույցով՝ յուրաքանչյուր անգամ անցյալ դերբայը բաղադրվում է *եմ*-ի ներկա, անցյալ և ապառնի ժամանակների եզակի երրորդ դեմքի և անձնական դերանվան սեռականի հետ:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ է իմ | մնացեալ է մեր |
| 2-րդ դ. | մնացեալ է քո | մնացեալ է ձեր |
| 3-րդ դ. | մնացեալ է նորա (// իւր) | մնացեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ էր իմ | մնացեալ էր մեր |
| 2-րդ դ. | մնացեալ էր քո | մնացեալ էր ձեր |
| 3-րդ դ. | մնացեալ էր նորա (// իւր) | մնացեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ իցէ իմ | մնացեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | մնացեալ իցէ քո | մնացեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | մնացեալ իցէ նորա (//իւր) | մնացեալ իցէ նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ է իմ | իմացեալ է մեր |
| 2-րդ դ. | իմացեալ է քո | իմացեալ է ձեր |
| 3-րդ դ. | իմացեալ է նորա (// իւր) | իմացեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ էր իմ | իմացեալ էր մեր |
| 2-րդ դ. | իմացեալ էր քո | իմացեալ էր ձեր |
| 3-րդ դ. | իմացեալ էր նորա (// իւր) | իմացեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ իցէ իմ | իմացեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | իմացեալ իցէ քո | իմացեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | իմացեալ իցէ նորա (// իւր) | իմացեալ իցէ նոցա |

2. Ե խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ է իմ | գրեալ է մեր |
| 2-րդ դ. | գրեալ է քո | գրեալ է ձեր |
| 3-րդ դ. | գրեալ է նորա (// իւր) | գրեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ էր իմ | գրեալ էր մեր |
| 2-րդ դ. | գրեալ էր քո | գրեալ էր ձեր |
| 3-րդ դ. | գրեալ էր նորա (// իւր) | գրեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ իցէ իմ | գրեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | գրեալ իցէ քո | գրեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | գրեալ իցէ նորա (// իւր) | գրեալ իցէ նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ է իմ | գտեալ է մեր |
| 2-րդ դ. | գտեալ է քո | գտեալ է ձեր |
| 3-րդ դ. | գտեալ է նորա (// իւր) | գտեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ էր իմ | գտեալ էր մեր |
| 2-րդ դ. | գտեալ էր քո | գտեալ էր ձեր |
| 3-րդ դ. | գտեալ էր նորա (// իւր) | գտեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ իցէ իմ | գտեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | գտեալ իցէ քո | գտեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | գտեալ իցէ նորա (// իւր) | գտեալ իցէ նոցա |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեալ // | խորհեալ // |
| | խորհեցեալ է իմ | խորհեցեալ է մեր |
| 2-րդ դ. | խորհեալ // | խորհեալ // |
| | խորհեցեալ է քո | խորհեցեալ է ձեր |
| 3-րդ դ. | խորհեալ// | խորհեալ// |
| | խորհեցեալ է նորա (//իւր) | խորհեցեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեալ// | խորհեալ// |
| | խորհեցեալ էր իմ | խորհեցեալ էր մեր |
| 2-րդ դ. | խորհեալ// | խորհեալ// |
| | խորհեցեալ էր քո | խորհեցեալ էր ձեր |
| 3-րդ դ. | խորհեալ// | խորհեալ// |
| | խորհեցեալ էր նորա (//իւր) | խորհեցեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեալ// | խորհեալ // |
| | խորհեցեալ իցէ իմ | խորհեցեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | խորհեալ// | խորհեալ// |
| | խորհեցեալ իցէ քո | խորհեցեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | խորհեալ// | խորհեալ// |
| | խորհեցեալ իցէ նորա (//իւր) | խորհեցեալ իցէ նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ է իմ | ուսեալ է մեր |
| 2-րդ դ. | ուսեալ է քո | ուսեալ է ձեր |
| 3-րդ դ. | ուսեալ է նորա (// իւր) | ուսեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ էր իմ | ուսեալ էր մեր |
| 2-րդ դ. | ուսեալ էր քո | ուսեալ էր ձեր |
| 3-րդ դ. | ուսեալ էր նորա (// իւր) | ուսեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ իցէ իմ | ուսեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | ուսեալ իցէ քո | ուսեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | ուսեալ իցէ նորա (// իւր) | ուսեալ իցէ նոցա |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ է իմ | հեղեալ է մեր |
| 2-րդ դ. | հեղեալ է քո | հեղեալ է ձեր |
| 3-րդ դ. | հեղեալ է նորա (// իւր) | հեղեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ էր իմ | հեղեալ էր մեր |
| 2-րդ դ. | հեղեալ էր քո | հեղեալ էր ձեր |
| 3-րդ դ. | հեղեալ էր նորա (// իւր) | հեղեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ իցէ իմ | հեղեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | հեղեալ իցէ քո | հեղեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | հեղեալ իցէ նորա (// իւր) | հեղեալ իցէ նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ է իմ | ընթերցեալ է մեր |
| 2-րդ դ. | ընթերցեալ է քո | ընթերցեալ է ձեր |
| 3-րդ դ. | ընթերցեալ է նորա (// իւր) | ընթերցեալ է նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ էր իմ | ընթերցեալ էր մեր |
| 2-րդ դ. | ընթերցեալ էր քո | ընթերցեալ էր ձեր |
| 3-րդ դ. | ընթերցեալ էր նորա (//իւր) | ընթերցեալ էր նոցա |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ իցէ իմ | ընթերցեալ իցէ մեր |
| 2-րդ դ. | ընթերցեալ իցէ քո | ընթերցեալ իցէ ձեր |
| 3-րդ դ. | ընթերցեալ իցէ նորա (//իւր) | ընթերցեալ իցէ նոցա |

դ) Ապառնի ներկան կազմվում է ապառնի դերբայով և եմ օժանդակ բայի ներկայով: Իմաստով այն համապատասխանում է ժամանակակից հայերենի ապառնի ներկային:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնալոց եմ | մնալոց եմք |
| 2-րդ դ. | մնալոց ես | մնալոց էք |
| 3-րդ դ. | մնալոց է | մնալոց են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանալոց եմ | իմանալոց եմք |
| 2-րդ դ. | իմանալոց ես | իմանալոց էք |
| 3-րդ դ. | իմանալոց է | իմանալոց են |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրելոց եմ | գրելոց եմք |
| 2-րդ դ. | գրելոց ես | գրելոց էք |
| 3-րդ դ. | գրելոց է | գրելոց են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանելոց եմ | գտանելոց եմք |
| 2-րդ դ. | գտանելոց ես | գտանելոց էք |
| 3-րդ դ. | գտանելոց է | գտանելոց են |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհիլոց եմ | խորհիլոց եմք |
| 2-րդ դ. | խորհիլոց ես | խորհիլոց էք |
| 3-րդ դ. | խորհիլոց է | խորհիլոց են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսանիլոց եմ | ուսանիլոց եմք |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսանիլոց ես | ուսանիլոց էք |
| 3-րդ դ. | ուսանիլոց է | ուսանիլոց են |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղլոց եմ | հեղլոց եմք |
| 2-րդ դ. | հեղլոց ես | հեղլոց էք |
| 3-րդ դ. | հեղլոց է | հեղլոց են |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթեռնլոց եմ | ընթեռնլոց եմք |
| 2-րդ դ. | ընթեռնլոց ես | ընթեռնլոց էք |
| 3-րդ դ. | ընթեռնլոց է | ընթեռնլոց են |

ե) Ապառնի անցյալը բաղադրվում է խոնարհվող բայի ապառնիով և *եմ* օժանդակ բայի անցյալ անկատարով: Այն իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի ապառնի անցյալին:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնալոց էի | մնալոց էաք |
| 2-րդ դ. | մնալոց էիր | մնալոց էիք |
| 3-րդ դ. | մնալոց էր | մնալոց էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանալոց էի | իմանալոց էաք |
| 2-րդ դ. | իմանալոց էիր | իմանալոց էիք |
| 3-րդ դ. | իմանալոց էր | իմանալոց էին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրելոց էի | գրելոց էաք |
| 2-րդ դ. | գրելոց էիր | գրելոց էիք |
| 3-րդ դ. | գրելոց էր | գրելոց էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանելոց էի | գտանելոց էաք |
| 2-րդ դ. | գտանելոց էիր | գտանելոց էիք |
| 3-րդ դ. | գտանելոց էր | գտանելոց էին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհիլոց էի | խորհիլոց էաք |
| 2-րդ դ. | խորհիլոց էիր | խորհիլոց էիք |
| 3-րդ դ. | խորհիլոց էր | խորհիլոց էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսանիլոց էի | ուսանիլոց էաք |
| 2-րդ դ. | ուսանիլոց էիր | ուսանիլոց էիք |
| 3-րդ դ. | ուսանիլոց էր | ուսանիլոց էին |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղլոց էի | հեղլոց էաք |
| 2-րդ դ. | հեղլոց էիր | հեղլոց էիք |
| 3-րդ դ. | հեղլոց էր | հեղլոց էին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթեռնլոց էի | ընթեռնլոց էաք |
| 2-րդ դ. | ընթեռնլոց էիր | ընթեռնլոց էիք |
| 3-րդ դ. | ընթեռնլոց էր | ընթեռնլոց էին |

գ) Ապառնու ապառնին բաղադրվում է խոնարհվող բայի ապառնիով և *եմ* օժանդակ բայի առաջին ապառնիով, իմաստով համապատասխանում է ժամանակակից հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների բաղադրյալ ապառնուն:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնալոց իցեմ | մնալոց իցեմք |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնալոց իցես | մնալոց իցէք |
| 3-րդ դ. | մնալոց իցէ | մնալոց իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմանալոց իցեմ | իմանալոց իցեմք |
| 2-րդ դ. | իմանալոց իցես | իմանալոց իցէք |
| 3-րդ դ. | իմանալոց իցէ | իմանալոց իցեն |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրելոց իցեմ | գրելոց իցեմք |
| 2-րդ դ. | գրելոց իցես | գրելոց իցէք |
| 3-րդ դ. | գրելոց իցէ | գրելոց իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանելոց իցեմ | գտանելոց իցեմք |
| 2-րդ դ. | գտանելոց իցես | գտանելոց իցէք |
| 3-րդ դ. | գտանելոց իցէ | գտանելոց իցեն |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհիլոց իցեմ | խորհիլոց իցեմք |
| 2-րդ դ. | խորհիլոց իցես | խորհիլոց իցէք |
| 3-րդ դ. | խորհիլոց իցէ | խորհիլոց իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսանիլոց իցեմ | ուսանիլոց իցեմք |
| 2-րդ դ. | ուսանիլոց իցես | ուսանիլոց իցէք |
| 3-րդ դ. | ուսանիլոց իցէ | ուսանիլոց իցեն |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղլոց իցեմ | հեղլոց իցեմք |
| 2-րդ դ. | հեղլոց իցես | հեղլոց իցէք |
| 3-րդ դ. | հեղլոց իցէ | հեղլոց իցեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթեռնլոց իցեմ | ընթեռնլոց իցեմք |
| 2-րդ դ. | ընթեռնլոց իցես | ընթեռնլոց իցէք |
| 3-րդ դ. | ընթեռնլոց իցէ | ընթեռնլոց իցեն |

**§ 138**. Գրաբարում *լինիմ* օժանդակ բայը անցյալ դերբայի հետ կազմում է սահմանական ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ, ստորադասական առաջին և երկրորդ ապառնի, հրամայական արգելական ներկա, հաստատական ներկա և կատարյալ ապառնի ժամանակները: Վերջիններս պարզ ժամանակների համեմատությամբ, հարկ կա շեշտելու, բաղադրյալ և երկրորդական ժամանակներ են:

ա) Սահմանական բաղադրյալ ներկան կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայով և *լինիմ* օժանդակ բայի ներկայով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ լինիմ | մնացեալ լինիմք |
| 2-րդ դ. | մնացեալ լինիս | մնացեալ լինիք |
| 3-րդ դ. | մնացեալ լինի | մնացեալ լինին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ լինիմ | իմացեալ լինիմք |
| 2-րդ դ. | իմացեալ լինիս | իմացեալ լինիք |
| 3-րդ դ. | իմացեալ լինի | իմացեալ լինին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ լինիմ | գրեալ լինիմք |
| 2-րդ դ. | գրեալ լինիս | գրեալ լինիք |
| 3-րդ դ. | գրեալ լինի | գրեալ լինին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ լինիմ | գտեալ լինիմք |
| 2-րդ դ. | գտեալ լինիս | գտեալ լինիք |
| 3-րդ դ. | գտեալ լինի | գտեալ լինին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցեալ լինիմ | խորհեցեալ լինիմք |
| 2-րդ դ. | խորհեցեալ լինիս | խորհեցեալ լինիք |
| 3-րդ դ. | խորհեցեալ լինի | խորհեցեալ լինին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ լինիմ | ուսեալ լինիմք |
| 2-րդ դ. | ուսեալ լինիս | ուսեալ լինիք |
| 3-րդ դ. | ուսեալ լինի | ուսեալ լինին |

3. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ լինիմ | հեղեալ լինիմք |
| 2-րդ դ. | հեղեալ լինիս | հեղեալ լինիք |
| 3-րդ դ. | հեղեալ լինի | հեղեալ լինին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ լինիմ | ընթերցեալ լինիմք |
| 2-րդ դ. | ընթերցեալ լինիս | ընթերցեալ լինիք |
| 3-րդ դ. | ընթերցեալ լինի | ընթերցեալ լինին |

բ) Սահմանական բաղադրյալ անցյալ անկատարը կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայով և *լինիմ* օժանդակ բայի անցյալ անկատարով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ լինէի | մնացեալ լինէաք |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնացեալ լինէիր | մնացեալ լինէիք |
| 3-րդ դ. | մնացեալ լինէր | մնացեալ լինէին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ լինէի | իմացեալ լինէաք |
| 2-րդ դ. | իմացեալ լինէիր | իմացեալ լինէիք |
| 3-րդ դ. | իմացեալ լինէր | իմացեալ լինէին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ լինէի | գրեալ լինէաք |
| 2-րդ դ. | գրեալ լինէիր | գրեալ լինէիք |
| 3-րդ դ. | գրեալ լինէր | գրեալ լինէին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ լինէի | գտեալ լինէաք |
| 2-րդ դ. | գտեալ լինէիր | գտեալ լինէիք |
| 3-րդ դ. | գտեալ լինէր | գտեալ լինէին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցեալ լինէի | խորհեցեալ լինէաք |
| 2-րդ դ. | խորհեցեալ լինէիր | խորհեցեալ լինէիք |
| 3-րդ դ. | խորհեցեալ լինէր | խորհեցեալ լինէին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ լինէի | ուսեալ լինէաք |
| 2-րդ դ. | ուսեալ լինէիր | ուսեալ լինէիք |
| 3-րդ դ. | ուսեալ լինէր | ուսեալ լինէին |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ լինէի | հեղեալ լինէաք |
| 2-րդ դ. | հեղեալ լինէիր | հեղեալ լինէիք |
| 3-րդ դ. | հեղեալ լինէր | հեղեալ լինէին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ լինէի | ընթերցեալ լինէաք |
| 2-րդ դ. | ընթերցեալ լինէիր | ընթերցեալ լինէիք |
| 3-րդ դ. | ընթերցեալ լինէր | ընթերցեալ լինէին |

գ) Սահմանական բաղադրյալ անցյալ կատարյալը կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայով և *լինիմ* օժանդակ բայի անցյալ կատարյալով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ եղէ | մնացեալ եղաք (// եղեաք) |
| 2-րդ դ. | մնացեալ եղեր | մնացեալ եղէք |
| 3-րդ դ. | մնացեալ եղեւ | մնացեալ եղեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ եղէ | իմացեալ եղաք (// եղեաք) |
| 2-րդ դ. | իմացեալ եղեր | իմացեալ եղէք |
| 3-րդ դ. | իմացեալ եղեւ | իմացեալ եղեն |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ եղէ | գրեալ եղաք (// եղեաք) |
| 2-րդ դ. | գրեալ եղեր | գրեալ եղէք |
| 3-րդ դ. | գրեալ եղեւ | գրեալ եղեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ եղէ | գտեալ եղաք (// եղեաք) |
| 2-րդ դ. | գտեալ եղեր | գրեալ եղէք |
| 3-րդ դ. | գտեալ եղեւ | գտեալ եղեն |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցեալ եղէ | խորհեցեալ եղաք (// եղեաք) |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհեցեալ եղէր | խորհեցեալ եղէք |
| 3-րդ դ. | խորհեցեալ եղեւ | խորհեցեալ եղեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ եղէ | ուսեալ եղաք (// եղեաք) |
| 2-րդ դ. | ուսեալ եղէր | ուսեալ եղէք |
| 3-րդ դ. | ուսեալ եղեւ | ուսեալ եղեն |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ եղէ | հեղեալ եղաք (// եղեաք) |
| 2-րդ դ. | հեղեալ եղեր | հեղեալ եղէք |
| 3-րդ դ. | հեղեալ եղեւ | հեղեալ եղեն |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ եղէ | ընթերցեալ եղաք (//եղեաք) |
| 2-րդ դ. | ընթերցեալ եղեր | ընթերցեալ եղէք |
| 3-րդ դ. | ընթերցեալ եղեւ | ընթերցեալ եղեն |

դ) Ստորադասական բաղադրյալ առաջին ապառնին կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայով և *լինիմ* բայի առաջին ապառնիով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ լինիցիմ | մնացեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | մնացեալ լինիցիս | մնացեալ լինիցիք |
| 3-րդ դ. | մնացեալ լինիցի | մնացեալ լինիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ լինիցմ | իմացեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | իմացեալ լինիցիս | իմացեալ լինիցիք |
| 3-րդ դ. | իմացեալ լինիցի | իմացեալ լինիցին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ լինիցիմ | գրեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | գրեալ լինիցիս | գրեալ լինիցիք |
| 3-րդ դ. | գրեալ լինիցի | գրեալ լինիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ լինիցիմ | գտեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | գտեալ լինիցիս | գտեալ լինիցիք |
| 3-րդ դ. | գտեալ լինիցի | գտեալ լինիցին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցեալ լինիցիմ | խորհեցեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | խորհեցեալ լինիցիս | խորհեցեալ լինիցիք |
| 3-րդ դ. | խորհեցեալ լինիցի | խորհեցեալ լինիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ լինիցիմ | ուսեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | ուսեալ լինիցիս | ուսեալ լինիցիք |
| 3-րդ դ. | ուսեալ լինիցի | ուսեալ լինիցին |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ լինիցիմ | հեղեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | հեղեալ լինիցիս | հեղեալ լինիցիք |
| 3-րդ դ. | հեղեալ լինիցի | հեղեալ լինիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ լինիցիմ | ընթերցեալ լինիցիմք |
| 2-րդ դ. | ընթերցեալ լինիցիս | ընթերցեալ լինիցիք |
| 3-րդ դ. | ընթերցեալ լինիցի | ընթերցեալ լինիցին |

ե) Ստորադասական բաղադրյալ երկրորդ ապառնին կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայով և *լինիմ* բայի երկրորդ ապառնիով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ լիցիմ | մնացեալ լիցուք |
| 2-րդ դ. | մնացեալ լիցիս | մնացեալ լիջիք |
| 3-րդ դ. | մնացեալ լիցի | մնացեալ լիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ լիցիմ | իմացեալ լիցուք |
| 2-րդ դ. | իմացեալ լիցիս | իմացեալ լիջիք |
| 3-րդ դ. | իմացեալ լիցի | իմացեալ լիցին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ լիցիմ | գրեալ լիցուք |
| 2-րդ դ. | գրեալ լիցիս | գրեալ լիջիք |
| 3-րդ դ. | գրեալ լիցի | գրեալ լիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ լիցիմ | գտեալ լիցուք |
| 2-րդ դ. | գտեալ լիցիս | գտեալ լիջիք |
| 3-րդ դ. | գտեալ լիցի | գտեալ լիցին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցեալ լիցիմ | խորհեցեալ լիցուք |
| 2-րդ դ. | խորհեցեալ լիցիս | խորհեցեալ լիջիք |
| 3-րդ դ. | խորհեցեալ լիցի | խորհեցեալ լիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ լիցիմ | ուսեալ լիցուք |
| 2-րդ դ. | ուսեալ լիցիս | ուսեալ լիջիք |

| | | |
|---|---|---|
| 3-րդ դ. | ուսեալ լիցի | ուսեալ լիցին |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ լիցիմ | հեղեալ լիցուք |
| 2-րդ դ. | հեղեալ լիցիս | հեղեալ լիջիք |
| 3-րդ դ. | հեղեալ լիցի | հեղեալ լիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ լիցիմ | ընթերցեալ լիցուք |
| 2-րդ դ. | ընթերցեալ լիցիս | ընթերցեալ լիջիք |
| 3-րդ դ. | ընթերցեալ լիցի | ընթերցեալ լիցին |

**Ծանոթություն 62:** Նույնպիսի կազմություն լինում է *եղանիմ* բայով.

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մնացեալ եղէց | մնացեալ եղիցուք |
| 2-րդ դ. | մնացեալ եղիցիս (//եղիցես) | մնացեալ եղիջիք |
| 3-րդ դ. | մնացեալ եղիցի | մնացեալ եղիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իմացեալ եղէց | իմացեալ եղիցուք |
| 2-րդ դ. | իմացեալ եղիցիս (// եղիցես) | իմացեալ եղիջիք |
| 3-րդ դ. | իմացեալ եղիցի | իմացեալ եղիցին |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գրեալ եղէց | գրեալ եղիցուք |
| 2-րդ դ. | գրեալ եղիցիս (// եղիցես) | գրեալ եղիջիք |
| 3-րդ դ. | գրեալ եղիցի | գրեալ եղիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գտեալ եղէց | գտեալ եղիցուք |

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | գտեալ եղիցիս (// եղիցես) | գտեալ եղիջիք |
| 3-րդ դ. | գտեալ եղիցի | գտեալ եղիցին |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | խորհեցեալ եղէց | խորհեցեալ եղիցուք |
| 2-րդ դ. | խորհեցեալ եղիցիս (//եղիցես) | խորհեցեալ եղիջիք |
| 3-րդ դ. | խորհեցեալ եղիցի | խորհեցեալ եղիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուսեալ եղէց | ուսեալ եղիցուք |
| 2-րդ դ. | ուսեալ եղիցիս (// եղիցես) | ուսեալ եղիջիք |
| 3-րդ դ. | ուսեալ եղիցի | ուսեալ եղիցին |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հեղեալ եղէց | հեղեալ եղիցուք |
| 2-րդ դ. | հեղեալ եղիցիս (// եղիցես) | հեղեալ եղիջիք |
| 3-րդ դ. | հեղեալ եղիցի | հեղեալ եղիցին |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընթերցեալ եղէց | ընթերցեալ եղիցուք |
| 2-րդ դ. | ընթերցեալ եղիցիս (// եղիցես) | ընթերցեալ եղիջիք |
| 3-րդ դ. | ընթերցեալ եղիցի | ընթերցեալ եղիցին |

գ) Հրամայական բաղադրյալ արգելական ներկան բաղադրվում է խոնարհվող բայի անցյալ դերբայով և *լինիմ* բայի արգելական ներկայով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնացեալ մի՛ լինիր | մնացեալ մի՛ լինիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | իմացեալ մի՛ լինիր | իմացեալ մի՛ լինիք |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գրեալ մի՛ լինիր | գրեալ մի՛ լինիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գտեալ մի՛ լինիր | գրեալ մի՛ լինիք |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհեցեալ մի՛ լինիր | խորհեցեալ մի՛ լինիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսեալ մի՛ լինիր | ուսեալ մի՛ լինիք |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | հեղեալ մի՛ լինիր | հեղեալ մի՛ լինիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ընթերցեալ մի՛ լինիր | ընթերցեալ մի՛ լինիք |

է) Հրամայական բաղադրյալ հաստատական ներկան բաղադրվում է խոնարհվող բայի անցյալով և լինիմ բայի հրամայական ներկայով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնացեա՛լ լեր | մնացեա՛լ լերուք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | իմացեա՛լ լեր | իմացեա՛լ լերուք |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գրեա՛լ լեր | գրեա՛լ լերուք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գտեա՛լ լեր | գտեա՛լ լերուք |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհեցեա՛լ լեր | խորհեցեա՛լ լերուք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսեա՛լ լեր | ուսեա՛լ լերուք |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | հեղեա՛լ լեր | հեղեա՛լ լերուք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ընթերցեա՛լ լեր | ընթերցեա՛լ լերուք |

ը) Հրամայական բաղադրյալ կատարյալ ապառնին բաղադրվում է խոնարհվող բայի անցյալով և *լինիմ* բայի կատարյալ ապառնիով:

Օրինակ՝

1. *Ա* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մնացեա՛լ լիջիր | մնացեա՛լ լիջիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | իմացեա՛լ լիջիր | իմացեա՛լ լիջիք |

2. *Ե* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գրեա՛լ լիջիր | գրեա՛լ լիջիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գտեա՛լ լիջիր | գտեա՛լ լիջիք |

3. *Ի* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | խորհեցեա՛լ լիջիր | խորհեցեա՛լ լիջիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ուսեա՛լ լիջիր | ուսեա՛լ լիջիք |

4. *Ու* խոնարհում.

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | հեղեա՛լ լիջիր | հեղեա՛լ լիջիք |

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ընթերցեա՛լ լիջիր | ընթերցեա՛լ լիջիք |

**Ընթերցանություն 69**. «Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել: Եւ իբրև մտանէր արքայն ի խորանն Տէրէնդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետեւակն վահան ի ձեռին, սակուր զգօտւոյ, շուրջ ի ներքոյ զորմովք խորանին պատեալ պսակէին. սոյնպէս և արտաքոյ կազմէին ի ներքոյ կուռ վառեալք և ի վերոյ հանդերձ զգեցեալք պատրաստէին[1]: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր, թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցին: Եւ մինչ դեռ յընթրիսն ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուսէ[2] նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ: Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն[3] մատուցին արքային Պապայ, և առ հասարակ թմբկահարք և սրնգահարք, քնարահարք և փողահարք, իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան: Եւ վանահայր լեգէոնին հրաման ետուն. և մինչ դեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ձեռամբ յարմուկն, յոր յեցեալ բազմեալ էր, ունէր տաշտ ոսկի[4] ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եղեալ էր ի դաստապան նրանին[5], զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում, և մինչ դեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, և աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս

ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց» (*Բուզ.*, էջ 354):

1. *Ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին* - վրայից զգեստ հագած պատրաստ էին:

2. *Ի թիկանց կուսէ* - թիկունքի կողմից:

3. *Առաջին ուրախութեանցն նուագն* - ուրախության առաջին բաժակը:

4. *Յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի* - որին հենված՝ բազմել էր՝ բռնել էր ոսկե գավաթը՝ թասը:

5. *Եդեալ էր ի դատաստան նրանին* - դրել էր դաշույնի՝ սրի երախակալին՝ կոթին:

**Վարժություն 127:** Կազմել հետևյալ բայերի վաղակատար ներկա, վաղակատար անցյալ և վաղակատար ապառնի ժամանակները. *ապրել, պշնուլ, նեղել, հիմնարկել, հոծիմ* («խտանալ, հոտել»), *հողանալ, յիմարիմ, յերիւրել:*

**Վարժություն 128:** Կազմել հետևյալ բայերի ապառնի ներկա և ապառնի անցյալ ժամանակները. *յորջորջել, նկրտիմ, ժամանել, ելանել, ժրանալ:*

**Առաջադրանք 128:** Վերհիշել *ե* խոնարհման երկու բայ և խոնարհել սահմանական բաղադրյալ ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակներով:

**Առաջադրանք 129:** *Սիրել* բայը խոնարհել բաղադրյալ որևէ ժամանակով:

**Առաջադրանք 130:** *Երթալ* բայը խոնարհել բաղադրյալ որևէ ժամանակով:

**Հարցեր 40:** ա) Ի՞նչ է բաղադրյալ ժամանակը:

բ) Որո՞նք են գրաբարի բաղադրյալ ժամանակները, և դրանք ինչո՞վ են տարբերվում պարզ ժամանակներից:

գ) Որո՞նք են *եմ* և *լինիմ* օժանդակ բայերով կազմվող բաղադրյալ ժամանակների տարբերությունները:

## 5) ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ **139**. Պատճառական բայերը ցույց են տալիս տվյալ գործողության կատարման պատճառ հանդիսացող գործողություն: Գրաբարում, ինչպես գիտենք (տե՛ս § 94), այն կազմվում է *-ոյց* (անշեշտ՝ *-ուց*) բայածանցի օգնությամբ, որը դրվում է բայի կատարյալի հիմքի վրա: Օրինակ՝ *իջանել > իջեց (եաց) - ուց (ոյց) - ան -ել,* այլև՝ *բազմեցուցանել, մնացուցանել* և այլն:

Այդ մասնիկի հավելումով կազմվում է բայի պատճառականի հիմքը, որին ավելանում է անկատարի *-ան-* մասնիկը, և ըստ այդմ բաղադրվում է պատճառական բայի սկզբնական՝ անկատարի հիմքը. հմմտ. *իջանել > իջեցուց -ան- , բազմիմ > բազմեցուց - ան- , մնալ > մնացուց - ան-, հեղձնուլ > հեղձուց - ան-* և այլն: Բոլոր պատճառական բայերի անորոշ դերբայը կազմվում է միայն *-ել* վերջավորությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր պատճառական բայ *ե* խոնարհման է:

§ **140**. Պատճառական բայերն առհասարակ կազմվում են չեզոք սեռի բայերից, առանձին դեպքերում՝ նաև ներգործական սեռի բայերից: Չեզոքներից կազմված պատճառականները ձեռք են բերում ներգործական սեռի իմաստ:

§ **141**. Պատճառական բայերը խոնարհվում են բոլոր եղանակային և ժամանակային ձևերով, ըստ որում խոնարհվում են իբրև *ե* խոնարհման ածանցավոր բայեր: Եվ որպես այդպիսին նրանց կատարյալի հիմքը կորցնում է այդ *-ան-* բայածանցը, այսինքն՝ դառնում է արմատական հիմք: Օրինակ՝ *հասանել > հասուցանել > հասուցան- > հասոյց-,* (անշեշտ՝ *հասուց-) զարմանալ > զարմացուցանել > զարմացուցան- > զարմացոյց-* (անշեշտ՝ *զարմացուց-) , թռչել > թռուցանել > թռուցան- > թռոյց-* (անշեշտ՝ *թռուց-), զարթնուլ > զարթուցանել > զարթուցան- > զարթոյց-* (անշեշտ՝ *զարթուց-*) և այլն:

**Ծանոթություն 63:** Բերված օրինակներում (և առհասարակ) պատճառականի կատարյալի հիմքը շեշտված է, այսինքն՝ *–ոյց-*

ով է, խոնարհվելիս այն վերածվում է անշեշտի (-*ուց*-ի): Օրինակ՝ *զարթուցանիցեմ, հասուցանես, հասուցանիցեմ, ուսուցանեմ, ջեռուցանեմ* և այլն:

**Ծանոթություն 64:** Ինչպես նշել ենք, որոշ բայերի պատճառականի հիմքը լինում է -*ոյց*-ի փոխարեն -*ոյզ,* այլև -*ոյս* մասնիկներով, որոնք պատմականորեն նույնն են: Օրինակ՝ *կորուսանել, փլուզանել, ելուզանել* և այլն:

**Ծանոթություն 65:** Սահմանական անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքում, ինչպես միշտ, վերջավորությունը հիմքն է, որն այս դեպքում -*ոյց*-ն է:

**Ծանոթություն 66:** Հրամայական հաստատական ներկան կազմվում է եզակիում հիմքը -*ոյց* ածանցի *յ, ց* տարրերի անկմամբ և մնացածի շեշտումով. *հասոյց > հասո՛, զարմացոյց > զարմացո՛, զարթոյց > զարթո՛, ջեռոյց > ջեռո՛* և այլն: Թերևս միակ բացառությունը *մուծանել* բայն է, որի այդ ձևն է *մո՛յծ*:

§ **142**. Պատճառական բայերը խոնարհվում են *ե* խոնարհման ածանցավոր բայերի պես՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներով:

Օրինակ՝ սահմանական ներկա ներգործաձև, եզակի թիվ՝ *ջեռուցանեմ, ջեռուցանես, ջեռուցանէ,* հոգնակի *թիվ՝ ջեռուցանեմք, ջեռուցանէք, ջեռուցանեն* և այլն:

§ **143**. Պատճառական բայերը համապատասխանում են ժամանակակից հայերենի նույնպիսի բայերին, թարգմանում ենք կա՛մ իբրև պատճառական բայեր, կա՛մ իբրև սովորական բայ + *տալ* կառույցներ: Օրինակ՝ *ջեռուցանեմ* «տաքացնում եմ», *հասուցանես* «հասցնում ես», այլև՝ *գնացուցանէ* «շարժել է տալիս, գնալ է տալիս», *զարկուցանել* «խփել տալ» և այլն:

**Ընթերցանություն 70.** «Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որմիզդ վասն յո՞ր սակս առնէր, միթէ կասկա՞ծ ինչ ուստեք էր նմա, և այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել, միթէ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ գուցէ ընդ

որդւոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու» (*Եզնիկ*, էջ 90): «Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն» (*ն.տ.*, էջ 91): «Կամէր, թէ չէր յանցուցեալ Ադամայ, և քանզի կանխաւ գիտէր զյանցանելն» (*ն.տ.*, էջ 114): «Մինչ դեռ կայր առ նմա թագաւորն Պապ ի վերայ լերինն, բազում և ազգի ազգի և պէսպէս աղօթս մատուցանէր մինչև ցերեկոյն և ի մտանել արեգականն, մինչև վախճանեցաւ ճակատն» (*Բուզ.*, էջ 302): «Եւ մինչև ի Գանձակ յԱտրպայական ի սահմանս Հայոց հալածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբազումս սատակէին զճանապարհայն» (*ն.տ.*): «Իսկ զմարմին երանելւոյն բարձեալ աշակերտաց նորին՝ բերէին յԵկեղեաց գաւառն, հանգուցեալ ի Թիլն, յիւրում աւանին» (*Խոր.*, էջ 298): «Առաքեցի ձեզ զօր յօգնականութիւն, և հրաման թագաւորեցուցանել ձեզ զԽոսրով որդի արքայի ձերոյ Տրդատայ» (ն. տ., էջ 312):

**Վարժություն 129:** Հետևյալ բայերը վերածել պատճառակա-նի և խոնարհել անկատարի հիմքից կազմվող ժամանակներով. *անկանիմ, ելանել, տիրել:*

**Վարժություն 130:** Կազմել հետևյալ բայերի պատճառականը և խոնարհել դրանք կատարյալի հիմքից կազմվող ժամա-նակներով. *ժամանել, կալնուլ, համարիմ, մեղկանալ:*

**Առաջադրանք 131:** Կարդալ «Ընթերցանություն 70»-ը, առանձնացնել պատճառական բայերը և վերլուծել՝ գտնելով հիմ-քը, անորոշ դերբայի ձևը (ելակետային ձևը), դեմքը, թիվը, եղանակը և ժամանակը:

**Առաջադրանք 132:** «Ընթերցություն 70»-ում գործածված բայերը վերլուծել ըստ դեմքի, թվի, եղանակի և ժամանակի:

**Առաջադրանք 133:** Կարդալ «Ընթերցանություն 70»-ը և թարգմանել մի քանի նախադասություններ:

**Հարցեր 40:** ա) Ինչպե՞ս են կազմվում պատճառական բայե-րը:

բ) Ո՞ր խոնարհման է պատկանում պատճառական բայը:

գ) Ի՞նչ բացառություններ կան պատճառական բայերի կազմության և խոնարհման մեջ:

## դ) Անկանոն խոնարհման բայեր

**§ 144.** Գրաբարում որոշակի խումբ բայերի խոնարհումը անկանոն է: Այդ անկանոնությունը հիմնականում հանդես է գալիս կատարյալի հիմքի կազմության ժամանակ: Ըստ այդմ նկատելի է անկանոնության երկու տեսակ.

ա) Բայեր, որոնց կատարյալի հիմքը կազմվում է նույն բայարմատից, սակայն հիմքի կազմության և խոնարհման չնչին տարօրինակ դրսևորմամբ:

բ) Բայեր, որոնց կատարյալի հիմքը լիովին կամ մասամբ համալրվում է այլ բայերի համապատասխան հիմքի հաշվին: Նկատի ունենալով նման հանգամանքը՝ դրանք տարբերվում են իբրև նույնարմատ և տարարմատ անկանոն բայեր:

**§ 145.** Նույնարմատ անկանոն բայեր են՝ *առնել* («անել, ստեղծել»), *դնել, երդնուլ, լսել, հարկանել* («խփել, ծեծել, դիպչել»), *ճանաչել, յանցանել* («հանցանք գործել»), *յառնել* («առողջանալ, վեր կենալ»), *մեղանչել* («մեղք գործել»), տալ, տանել:

ա) *Առնել.* անկատարի հիմքից կազմվող ձևերը խոնարհվում են *ե* խոնարհման ածանցավոր բայերի նման: Կատարյալի հիմքն է՝ *արար*, որ կազմված է բայարմատի կրկնությամբ (գրաբարում միակ դեպքն է, որ կատարյալի հիմքը կազմվում է, իբրև ընդհանուր հնդեվրոպական երևույթ, արմատի կրկնությամբ): Այդ հիմքով օրինաչափ ձևով կազմվում են համապատասխան ժամանակները:

Ներկա ժամանակ

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առնեմ | առնեմք |
| 2-րդ դ. | առնես | առնէք |
| 3-րդ դ. | առնէ | առնեն |

Կրավորաձեւ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առնիմ | առնիմք |
| 2-րդ դ. | առնիս | առնիք |
| 3-րդ դ. | առնի | առնին |

Անցյալ անկատար

Ներգործաձև // կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առնէի | առնէաք |
| 2-րդ դ. | առնէիր | առնէիք |
| 3-րդ դ. | առնէր | առնէին |

Առաջին ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առնիցեմ | առնիցեմք |
| 2-րդ դ. | առնիցես | առնիցէք |
| 3-րդ դ. | առնիցէ | առնիցեն |

Կրավորաձեւ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | առնիցիմ | առնիցիմք |
| 2-րդ դ. | առնիցիս | առնիցիք |
| 3-րդ դ. | առնիցի | առնիցին |

Անցյալ կատարյալ

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արարի | արարաք |
| 2-րդ դ. | արարեր | արարէք (արարիք) |
| 3-րդ դ. | արար | արարին |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արարայ | արարաք |
| 2-րդ դ. | արարար | արարայք |
| 3-րդ դ. | արարաւ | արարան |

Երկրորդ ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արարից | արասցուք |
| 2-րդ դ. | արասցես | արասջիք |
| 3-րդ դ. | արասցէ | արասցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արարայց | արասցուք |
| 2-րդ դ. | արասցիս | արասջիք |
| 3-րդ դ. | արասցի | արասցին |

Արգելական հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ առներ | մի՛ առնէք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ առնիր | մի՛ առնիք |

Բուն հրամայական
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | արա՛ | արարէ՛ք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | արարեա՛լ լեր | արարեա՛լ լերուք |

Հորդորական հրամայական
Ներգործաձև // կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | արասջի՛ր | արասջի՛ք |

Դերբայներ
Անորոշ դերբայ

Ներգործաձև` առնել
Կրավորաձև` առնել (// առնիլ)

Ապառնի դերբայ

Ներգործաձև` առնելոց (առնելի)
Կրավորաձև` առնելոց // առնելի

Անցյալ դերբայ

Ներգործաձև` արարեալ
Կրավորաձև` արարեալ

Ենթակայական դերբայ

Ներգործաձև` արարող (*արարիչ)
Կրավորաձև` -

բ) *Դնել.* անկատարի հիմքից կազմվող ձևերը խոնարհվում են *ե* խոնարհման բայերի նման: Կատարյալի հիմքն է *եդ-* (այստեղ *ե*-ն նախահավելված է, բուն հիմքն է *դ*-ն, անկատարում` *դն* <

**դին*), որի *ե* տարրը պահպանվում է սահմանական անցյալ կատարյալի բոլոր ձևերում, երկրորդ ապառնու եզակի 1-ին դեմքում և անցյալ դերբայում: Ենթակայական դերբայի ձևեր չունի:

Ներկա

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | դնեմ | դնեմք |
| 2-րդ դ. | դնես | դնէք |
| 3-րդ դ. | դնէ | դնեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | դնիմ | դնիմք |
| 2-րդ դ. | դնիս | դնիք |
| 3-րդ դ. | դնի | դնին |

Անցյալ անկատար

Ներգործաձև // կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | դնէի | դնէաք |
| 2-րդ դ. | դնէիր | դնէիք |
| 3-րդ դ. | դնէր | դնէին |

Առաջին ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | դնիցեմ | դնիցեմք |
| 2-րդ դ. | դնիցես | դնիցէք |
| 3-րդ դ. | դնիցէ | դնիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | դնիցիմ | դնիցիմք |
| 2-րդ դ. | դնիցիս | դնիցիք |
| 3-րդ դ. | դնիցի | դնիցին |

Անցյալ կատարյալ

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եդի | եդաք |
| 2-րդ դ. | եդիր (=եդեր) | եդիք |
| 3-րդ դ. | եդ | եդին |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եդայ | եդաք |
| 2-րդ դ. | եդար | եդայք |
| 3-րդ դ. | եդաւ | եդան |

Երկրորդ ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եդից | դիցուք |
| 2-րդ դ. | դիցես | դիջիք |
| 3-րդ դ. | դիցէ | դիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եդայց | դիցուք |
| 2-րդ դ. | դիցիս | դիջիք |
| 3-րդ դ. | դիցի | դիցին |

Արգելական հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ դներ | մի՛ դնէք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ դնիր | մի՛ դնիք |

Բուն հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | դի՛ր | դի՛ք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | եղեա՛լ լեր | եղեա՛լ լերուք |

Հորդորական հրամայական

Ներգործաձև //կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | դիջի՛ր | դիջի՛ք |

Դերբայներ

Անորոշ դերբայ

Ներգործաձև՝ դնել
Կրավորաձև՝ դնել (// դնիլ)

Ապառնի դերբայ

Ներգործաձև՝ դնելոց (դնելի)
Կրավորաձև՝ դնելոց // դնելի

Անցյալ դերբայ

Ներգործաձև // կրավորաձև՝ եղեալ

գ) *Երդնուլ.* անկատարի հիմքից կազմվող ձևերը խոնարհվում են *ու* խոնարհման բայերի նման: Կատարյալի հիմքն է *երդ-*: Սահմանական անցյալ կատարյալը, երկրորդ ապառնու եզակի 1-ին դեմքը և բուն հրամայականը կազմվում են կրավորաձև, իսկ երկրորդ ապառնու մյուս ձևերում՝ խառն:

Ներկա ժամանակ
Ներգործաձև // կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երդնում | երդնումք |
| 2-րդ դ. | երդնուս | երդնուք |
| 3-րդ դ. | երդնու | երդնուն |

Անցյալ անկատար
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երդնուի | երդնուաք |
| 2-րդ դ. | երդնուիր | երդնուիք |
| 3-րդ դ. | երդնոյր | երդնուին |

Առաջին ապառնի
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երդնուցում | երդնուցումք |
| 2-րդ դ. | երդնուցուս | երդնուցուք |
| 3-րդ դ. | երդնուցու | երդնուցուն |

Անցյալ կատարյալ
Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երդուայ | երդուաք |
| 2-րդ դ. | երդուար | երդուայք |
| 3-րդ դ. | երդուաւ | երդուան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երդուայց | երդուիցուք |
| 2-րդ դ. | երդուիցես | երդուիջիք |
| 3-րդ դ. | երդուիցէ | երդուիցեն |

Արգելական հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ երդնուր | մի՛ երդնուք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | երդուի՛ր | երդուարո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | երդուիջի՛ր | երդուիջի՛ք |

Դերբայներ

Անորոշ դերբայ՝ երդնուլ
Ապառնի դերբայ՝ երդնլոց // երդնլի
Անցյալ դերբայ՝ երդուեալ

դ) *Լսել.* անկատարի հիմքից կազմվող ձևերը խոնարհվում են *ե* պարզ բայերի նման՝ ներգործաձև և կրավորաձև: Կատարյալի հիմքն է *լու-*: Խոնարհվում է կրավորաձև, իսկ 2-րդ ապառնին՝ խառն, սկսած եզակի 2-րդ դեմքից՝ վերջավորությանը նախորդում է *ի* տարրը:

Ներկա

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լսեմ | լսեմք |
| 2-րդ դ. | լսես | լսէք |
| 3-րդ դ. | լսէ | լսեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լսիմ | լսիմք |
| 2-րդ դ. | լսիս | լսիք |
| 3-րդ դ. | լսի | լսին |

Անցյալ անկատար

Ներգործաձև // կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լսէի | լսէաք |
| 2-րդ դ. | լսէիր | լսէիք |
| 3-րդ դ. | լսէր | լսէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լսիցեմ | լսիցեմք |
| 2-րդ դ. | լսիցես | լսիցէք |
| 3-րդ դ. | լսիցէ | լսիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լսիցիմ | լսիցիմք |
| 2-րդ դ. | լսիցիս | լսիցիք |
| 3-րդ դ. | լսիցի | լսիցին |

Անցյալ կատարյալ

Կրավորաաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լուայ | լուաք |
| 2-րդ դ. | լուար | լուայք |
| 3-րդ դ. | լուաւ | լուան |

Երկրորդ ապառնի

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լուայց | լուիցուք |
| 2-րդ դ. | լուիցես | լուիջիք |
| 3-րդ դ. | լուիցէ | լուիցեն |

Արգելական հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ լսեր | մի՛ լսէք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ լսիր | մի՛ լսիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | լո՛ւր | լուա՛յք // լուարո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | լուիջի՛ր | լուիջի՛ք |

Անորոշ դերբայ

Ներգործաձև՝ լսել
Կրավորաձև՝ լսել (// լսիլ)

Ապառնի դերբայ

Ներգործաձև՝ լսելոց (լսելի)
Կրավորաձև՝ լսելոց // լսելի

Անցյալ դերբայ

Ներգործաձև // կրավորաձև՝ լուեալ

Ենթակայական դերբայ
Ներգործածև՝ լսող

ե) *Հարկանել.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ե* խոնարհման ածանցավոր բայերի նման, կատարյալի հիմքն է *հար-:*

Ներկա
Ներգործածև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարկանեմ | հարկանեմք |
| 2-րդ դ. | հարկանես | հարկանէք |
| 3-րդ դ. | հարկանէ | հարկանեն |

Կրավորածև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարկանիմ | հարկանիմք |
| 2-րդ դ. | հարկանիս | հարկանիք |
| 3-րդ դ. | հարկանի | հարկանին |

Անցյալ անկատար
Ներգործածև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարկանէի | հարկանէաք |
| 2-րդ դ. | հարկանէիր | հարկանէիք |
| 3-րդ դ. | հարկանէր | հարկանէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարկանիցեմ | հարկանիցեմք |
| 2-րդ դ. | հարկանիցես | հարկանիցէք |
| 3-րդ դ. | հարկանիցէ | հարկանիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարկանիցիմ | հարկանիցիմք |
| 2-րդ դ. | հարկանիցիս | հարկանիցիք |
| 3-րդ դ. | հարկանիցի | հարկանիցին |

Անցյալ կատարյալ

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարի | հարաք |
| 2-րդ դ. | հարեր | հարէք // հարիք |
| 3-րդ դ. | հար // եհար | հարին |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարայ | հարաք |
| 2-րդ դ. | հարար | հարայք |
| 3-րդ դ. | հարաւ | հարան |

Երկրորդ ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարից | հարցուք |
| 2-րդ դ. | հարցես | հարջիք |
| 3-րդ դ. | հարցէ | հարցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | հարայց | հարցուք |
| 2-րդ դ. | հարցիս | հարջիք |
| 3-րդ դ. | հարցի | հարցին |

Արգելական հրամայական
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ հարկաներ | մի՛ հարկանէք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ հարկանիր | մի՛ հարկանիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | հա՛ր | հարէ՛ք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | հարիջի՛ր | հարիջի՛ք |

Անորոշ դերբայ

Ներգործաձև՝ հարկանել
Կրավորաձև՝ հարկանել (// հարկանիլ)

Ապառնի դերբայ

Ներգործաձև՝ հարկանելոց (հարկանելի)
Կրավորաձև՝ հարկանելոց // հարկանելի

Անցյալ դերբայ

Ներգործաձև // կրավորաձև՝ հարեալ

Ենթակայական դերբայ

Ներգործաձև՝ հարկանող

զ) *Ճանաչել.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ե* խոնարհման ածանցավոր բայերի նման: Կատարյալի հիմքն է *-ծան* (< **ծանաչել*), խոնարհվում է *ի* թույլ բաղադրիչ

ունեցող բայերի նման՝ կրավորաձև, իսկ երկրորդ ապառնիում՝ խառն, արտահայտում է ներգործական սեռի իմաստ:

Ներկա

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչեմ | ճանաչեմք |
| 2-րդ դ. | ճանաչես | ճանաչէք |
| 3-րդ դ. | ճանաչէ | ճանաչեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչիմ | ճանաչիմք |
| 2-րդ դ. | ճանաչիս | ճանաչիք |
| 3-րդ դ. | ճանաչի | ճանաչին |

Անցյալ անկատար

Ներգործաձև // կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչէի | ճանաչէաք |
| 2-րդ դ. | ճանաչէիր | ճանաչէիք |
| 3-րդ դ. | ճանաչէր | ճանաչէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչիցեմ | ճանաչիցեմք |
| 2-րդ դ. | ճանաչիցես | ճանաչիցէք |
| 3-րդ դ. | ճանաչիցէ | ճանաչիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչիցիմ | ճանաչիցիմք |
| 2-րդ դ. | ճանաչիցիս | ճանաչիցիք |
| 3-րդ դ. | ճանաչիցի | ճանաչիցին |

Անցյալ կատարյալ
Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ծանեայ | ծանեաք |
| 2-րդ դ. | ծանեար | ծանեայք |
| 3-րդ դ. | ծանեաւ | ծանեան |

Երկրորդ ապառնի
Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ծանեայց | ծանիցուք |
| 2-րդ դ. | ծանիցես | ծանիջիք |
| 3-րդ դ. | ծանիցէ | ծանիցեն |

Արգելական հրամայական
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ճանաչեր | մի՛ ճանաչէք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ճանաչիր | մի՛ ճանաչիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ծանի՛ր | ծանեա՛յք // ծաներո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ծանիջի՛ր | ծանիջի՛ք |

Անորոշ դերբայ
Ներգործաձև//կրավորաձև՝ ճանաչել

Ապառնի դերբայ

Ներգործաձև՝ ծանաչելոց (ծանաչելի)

Կրավորաձև՝ ճանաչելոց // ճանաչելի

Անցյալ դերբայ

Ներգործաձև // կրավորաձև՝ ծանուցեալ

Ենթակայական դերբայ

Ներգործաձև՝ ճանաչող

է) *Յանցանել.* անկատարի հիմքից կազմվող ձևերը խոնարհվում են *ե* խոնարհման ածանցավոր բայերի նման՝ միայն կրավորաձև: Կատարյալի հիմքն է *յանց-,* խոնարհվում է *ի* թույլ բաղաղրիչ ունեցող բայերի նման՝ կրավորաձև և խառն:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցանեմ | յանցանեմք |
| 2-րդ դ. | յանցանես | յանցանէք |
| 3-րդ դ. | յանցանէ | յանցանեն |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցանէի | յանցանէաք |
| 2-րդ դ. | յանցանէիր | յանցանէիք |
| 3-րդ դ. | յանցանէր | յանցանէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցանիցեմ | յանցանիցեմք |
| 2-րդ դ. | յանցանիցես | յանցանիցէք |
| 3-րդ դ. | յանցանիցէ | յանցանիցեն |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցեայ | յանցեաք |
| 2-րդ դ. | յանցեար | յանցեայք |
| 3-րդ դ. | յանցեաւ | յանցեան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցեայց | յանցիցուք |
| 2-րդ դ. | յանցիցես | յանցիջիք |
| 3-րդ դ. | յանցիցէ | յանցիցեն |

Արգելական հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ յանցաներ | մի՛ յանցանէք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | յանցի՛ր | յանցեա՛յք // յանցերո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | յանցիջի՛ր | յանցիջի՛ք |

| | |
|---|---|
| Անորոշ դերբայ՝ | յանցանել |
| Ապառնի դերբայ՝ | յանցանելոց |
| Անցյալ դերբայ՝ | յանցուցեալ |

ը) *Յառնել.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ե* խոնարհման ածանցավոր բայերի նման՝ միայն ներգործաձև, կատարյալի հիմքը՝ *յար-*, խոնարհվում է *ի* թույլ բաղադրիչ ունեցող բայերի նման, իսկ բուն հրամայականն ունի յուրօրինակ ձևեր:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յառնեմ | յառնեմք |
| 2-րդ դ. | յառնես | յառնէք |
| 3-րդ դ. | յառնէ | յառնեն |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յառնէի | յառնէաք |
| 2-րդ դ. | յառնէիր | յառնէիք |
| 3-րդ դ. | յառնէր | յառնէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յառնիցեմ | յառնիցեմք |
| 2-րդ դ. | յառնիցես | յառնիցէք |
| 3-րդ դ. | յառնիցէ | յառնիցեն |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յարեայ | յարեաք |
| 2-րդ դ. | յարեար | յարեայք |
| 3-րդ դ. | յարեաւ | յարեան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | յարեայց | յարիցուք |
| 2-րդ դ. | յարիցես | յարիջիք |
| 3-րդ դ. | յարիցէ | յարիցեն |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ յառներ | մի՛ յառնէք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | արի՛ | արի՛ք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | յարիջի՛ր | յարիջի՛ք |

Անորոշ դերբայ՝ յառնել
Ապառնի դերբայ՝ յառնելոց
Անցյալ դերբայ՝ յարուցեալ:

բ) *Մեղանչել.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ե* խոնարհման ածանցավոր բայերի նման՝ միայն ներգործաձև, կատարյալի հիմքը՝ *մեղ-*, խոնարհվում է կրավորաձև:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղանչեմ | մեղանչեմք |
| 2-րդ դ. | մեղանչես | մեղանչէք |
| 3-րդ դ. | մեղանչէ | մեղանչեն |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղանչէի | մեղանչէաք |
| 2-րդ դ. | մեղանչէիր | մեղանչէիք |
| 3-րդ դ. | մեղանչէր | մեղանչէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղանչիցեմ | մեղանչիցեմք |
| 2-րդ դ. | մեղանչիցես | մեղանչիցէք |
| 3-րդ դ. | մեղանչիցէ | մեղանչիցեն |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղայ | մեղաք |
| 2-րդ դ. | մեղար | մեղայք |
| 3-րդ դ. | մեղաւ | մեղան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղայց | մեղիցուք |
| 2-րդ դ. | մեղիցես | մեղիջիք |
| 3-րդ դ. | մեղիցէ | մեղիցեն |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ մեղանչեր | մի՛ մեղանչէք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մեղի՛ր | մեղա՛յք // մեղարո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մեղիջի՛ր | մեղիջի՛ք |

| | |
|---|---|
| Անորոշ դերբայ՝ | մեղանչել |
| Ապառնի դերբայ՝ | մեղանչելոց |
| Անցյալ դերբայ՝ | մեղուցեալ |

ժ) *Տալ.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ա* խոնարհման բայերի նման, բացի ներկայից և անկատար անցյալից, մյուս ձևերում՝ ներգործաձև և կրավորաձև, կատարյալի հիմքը՝ *ետ- (< * ե-տ-):*

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տամ | տամք |
| 2-րդ դ. | տաս | տայք |
| 3-րդ դ. | տայ | տան |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տայի | տայաք |
| 2-րդ դ. | տայիր | տայիք |
| 3-րդ դ. | տայր | տային |

Առաջին ապառնի
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տայցեմ | տայցեմք |
| 2-րդ դ. | տայցես | տայցէք |
| 3-րդ դ. | տայցէ | տայցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տայցիմ | տայցիմք |
| 2-րդ դ. | տայցիս | տայցիք |
| 3-րդ դ. | տայցի | տայցին |

Անցյալ կատարյալ
Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ետու | տուաք |
| 2-րդ դ. | ետուր | ետուք |
| 3-րդ դ. | ետ | ետուն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տուայ | տուաք |
| 2-րդ դ. | տուար | տուայք |
| 3-րդ դ. | տուաւ | տուան |

Երկրորդ ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տաց | տացուք |
| 2-րդ դ. | տացես | տաջիք |
| 3-րդ դ. | տացէ | տացեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տուայց | տացուք |
| 2-րդ դ. | տացիս | տաջիք |
| 3-րդ դ. | տացի | տացին |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ տար | մի՛ տայք |

Բուն հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | տո՛ւր | տո՛ւք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | տուեա՛լ լեր | տուեա՛լ լերուք |

Հորդորական հրամայական

Ներգործաձև//կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | տա՛ջի՛ր | տա՛ջի՛ք |

Անորոշ դերբայ

Ներգործաձև//կրավորաձև՝ տալ

Ապառնի դերբայ

Ներգործաձև//կրավորաձև՝ տալոց // տալոց. տալի

Անցյալ դերբայ

Ներգործաձև//կրավորաձև՝ մեղուցեալ

Ենթակայական դերբայ

Ներգործաձև՝ տուող

ժա) *Տանել (տանիմ).* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ի* խոնարհման բայերի նման՝ միայն կրավորաձև, կատարյալի հիմքը՝ *տար*-:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տանիմ | տանիմք |
| 2-րդ դ. | տանիս | տանիք |
| 3-րդ դ. | տանի | տանին |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տանէի | տանէաք |
| 2-րդ դ. | տանէիր | տանէիք |
| 3-րդ դ. | տանէր | տանէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տանիցիմ | տանիցիմք |
| 2-րդ դ. | տանիցիս | տանիցիք |
| 3-րդ դ. | տանիցի | տանիցին |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տարայ | տարաք |
| 2-րդ դ. | տարար | տարայք |
| 3-րդ դ. | տարաւ | տարան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | տարայց | տարցուք |
| 2-րդ դ. | տարցիս // տարցես | տարջիք |
| 3-րդ դ. | տարցի // տարցէ | տարցին // տարցեն |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ տանիր | մի՛ տանիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | տա՛ր | տարա՛յք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | տարջի՛ր | տարջի՛ք |

Անորոշ դերբայ՝ տանել //տանիլ
Ապառնի դերբայ՝ տանելոց // տանիլոց. տանելի
Անցյալ դերբայ՝ տարեալ

**§ 146**. Տարարմատ անկանոն բայերն են՝ *գալ, երթալ, ըմպել, լինել (լինիմ), ունել* (*ունիմ* «ունենալ, բռնել, գրավել, համարել»), *ուտել:* Սրանք անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում են կանոնավոր կերպով, իսկ կատարյալի հիմքից կազմվող ձևերում՝ այլ արմատով բաղադրված հիմքերով:

ա) *Գալ.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ա* խոնարհման բայերի նման՝ միայն կրավորաձև, կատարյալի հիմքը՝ *եկ-*:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գամ | գամք |
| 2-րդ դ. | գաս | գայք |
| 3-րդ դ. | գայ | գան |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գայի | գայաք |
| 2-րդ դ. | գայիր | գայիք |
| 3-րդ դ. | գայր | գային |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գայցեմ | գայցեմք |
| 2-րդ դ. | գայցես | գայցէք |
| 3-րդ դ. | գայցէ | գայցեն |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եկի | եկաք |
| 2-րդ դ. | եկիր | եկիք |
| 3-րդ դ. | եկն | եկին |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եկից | եկեցուք |
| 2-րդ դ. | եկեցես | եկեջիք |
| 3-րդ դ. | եկեցէ | եկեցեն |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ գար | մի՛ գայք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ե՛կ | եկա՛յք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | եկեջի՛ր | եկեջի՛ք |

| | |
|---|---|
| Անորոշ դերբայ՝ | գալ |
| Ապառնի դերբայ՝ | գալոց |
| Անցյալ դերբայ՝ | եկեալ |
| Ենթակայական դերբայ՝ | եկող |

բ) *Երթալ.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ա* խոնարհման բայերի նման՝ միայն կրավորաձև, կատարյալի հիմքը՝ *չոգ-*:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երթամ | երթամք |
| 2-րդ դ. | երթաս | երթայք |
| 3-րդ դ. | երթայ | երթան |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երթայի | երթայաք |
| 2-րդ դ. | երթայիր | երթայիք |
| 3-րդ դ. | երթայր | երթային |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երթայցեմ | երթայցեմք |
| 2-րդ դ. | երթայցես | երթայցէք |
| 3-րդ դ. | երթայցէ | երթայցեն |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | չոգայ | չոգաք |
| 2-րդ դ. | չոգար | չոգայք |
| 3-րդ դ. | չոգաւ | չոգան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | երթայց | երթիցուք |
| 2-րդ դ. | երթիցես | երթիջիք |
| 3-րդ դ. | երթիցէ | երթիցեն |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ երթար | մի՛ երթայք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ե՛րթ | երթա՛յք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | երթիջի՛ր | երթիջի՛ք |

Անորոշ դերբայ՝ երթալ
Ապառնի դերբայ՝ երթալոց
Անցյալ դերբայ՝ երթեալ

գ) *Ըմպել.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ե* խոնարհման պարզ բայերի նման՝ ներգործաձև և կրավորաձև, կատարյալի հիմքը՝ *արբ*-:

Ներկա

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ըմպեմ | ըմպեմք |
| 2-րդ դ. | ըմպես | ըմպէք |
| 3-րդ դ. | ըմպէ | ըմպեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ըմպիմ | ըմպիմք |
| 2-րդ դ. | ըմպիս | ըմպիք |
| 3-րդ դ. | ըմպի | ըմպին |

Անցյալ անկատար

Ներգործաձև//կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ընպէի | ըմպէաք |
| 2-րդ դ. | ըմպէիր | ըմպէիք |
| 3-րդ դ. | ըմպէր | ըմպէին |

Առաջին ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ըմպիցեմ | ըմպիցեմք |
| 2-րդ դ. | ըմպիցես | ըմպիցէք |
| 3-րդ դ. | ըմպիցէ | ըմպիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ըմպիցիմ | ըմպիցիմք |
| 2-րդ դ. | ըմպիցիս | ըմպիցիք |
| 3-րդ դ. | ըմպիցի | ըմպիցին |

Անցյալ կատարյալ

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արբի | արբաք |
| 2-րդ դ. | արբեր | արբէք // արբիք |
| 3-րդ դ. | արբ // էարբ | արբին |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արբայ | արբաք |
| 2-րդ դ. | արբար | արբայք |
| 3-րդ դ. | արբաւ | արբան |

Երկրորդ ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արբից | արբցուք |
| 2-րդ դ. | արբցես | արբջիք |
| 3-րդ դ. | արբցէ | արբցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | արբայց | արբցուք |
| 2-րդ դ. | արբցիս | արբջիք |
| 3-րդ դ. | արբցի | արբցին |

Արգելական հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ըմպեր | մի՛ ըմպէք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ըմպիր | մի՛ ըմպիք |

Բուն հրամայական

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | ա՛րբ | արբէ՛ք |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | արբեա՛լ լեր | արբեա՛լ լերուք // արբարո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | արբջի՛ր | արբջի՛ք |

Անորոշ դերբայ

Ներգործաձև // կրավորաձև` ըմպել

Ապառնի դերբայ

Ներգործաձև` ըմպելոց

Կրավորաձև` ըմպելոց. ըմպելի

Անցյալ դերբայ

Ներգործական // կրավորական՝ արբեալ

դ) *Լինել (լինիմ).* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ի* խոնարհման բայերի նման՝ կրավորական, կատարյալի հիմքը՝ *եղ-*:

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լինիմ | լինիմք |
| 2-րդ դ. | լինիս | լինիք |
| 3-րդ դ. | լինի | լինին |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լինէի | լինէաք |
| 2-րդ դ. | լինէիր | լինէիք |
| 3-րդ դ. | լինէր | լինէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | լինիցիմ | լինիցիմք |
| 2-րդ դ. | լինիցիս | լինիցիք |
| 3-րդ դ. | լինիցի | լինիցին |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եղէ | եղաք//եղեաք |
| 2-րդ դ. | եղեր | եղէք |
| 3-րդ դ. | եղեւ | եղեն |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եղէց (լիցիմ) | եղիցուք, լիցուք |
| 2-րդ դ. | եղիցիս//եղիցես, լիցիս | եղիջիք, լիջիք |

| | | |
|---|---|---|
| 3-րդ դ. | եղիցի, լիցի | եղիցին, լիցին |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ լինիր | մի՛ լինիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | լե՛ր | լերո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | լիջի՛ր | լիջի՛ք |

Անորոշ դերբայ՝ լինել
Ապառնի դերբայ՝ լինելոց
Անցյալ դերբայ՝ լեալ

ե) *Ունել (ունիմ).* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ի* խոնարհման բայերի նման՝ կրավորաձև, և իբրև հասարակ սեռի բայ՝ արտահայտում է ներգործական և կրավորական սեռի իմաստ, կատարյալի հիմքը՝ *կալ-:*

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ունիմ | ունիմք |
| 2-րդ դ. | ունիս | ունիք |
| 3-րդ դ. | ունի | ունին |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ունէի | ունէաք |
| 2-րդ դ. | ունէիր | ունէիք |
| 3-րդ դ. | ունէր | ունէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ունիցիմ | ունիցիմք |
| 2-րդ դ. | ունիցիս | ունիցիք |
| 3-րդ դ. | ունիցի | ունիցին |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | կալայ | կալաք |
| 2-րդ դ. | կալար | կալայք |
| 3-րդ դ. | կալաւ | կալան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | կալայց | կալցուք |
| 2-րդ դ. | կալցիս | կալջիք |
| 3-րդ դ. | կալցի | կալցին |

Արգելական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ունիր | մի՛ ունիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | կա՛լ // կա՛ | կալա՛յք // կալարո՛ւք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | կալջի՛ր | կալջի՛ք |

Անորոշ դերբայ՝ ունել
Ապառնի դերբայ՝ ունելոց // ունելի
Անցյալ դերբայ՝ կալեալ
Ենթակայական դերբայ՝ ունող

զ) *Ուտել.* անկատարի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է *ե* խոնարհման բայերի նման՝ ներգործաձև և կրավորաձև, կատարյալի հիմքից կազմվող ձևերում՝ կրավորաձև, հիմքը՝ *կեր-*:

Ներկա

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուտեմ | ուտեմք |
| 2-րդ դ. | ուտես | ուտէք |
| 3-րդ դ. | ուտէ | ուտեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուտիմ | ուտիմք |
| 2-րդ դ. | ուտիս | ուտիք |
| 3-րդ դ. | ուտի | ուտին |

Անցյալ անկատար

Ներգործաձև//կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուտէի | ուտէաք |
| 2-րդ դ. | ուտէիր | ուտէիք |
| 3-րդ դ. | ուտէր | ուտէին |

Առաջին ապառնի

Ներգործաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուտիցեմ | ուտիցեմք |
| 2-րդ դ. | ուտիցես | ուտիցէք |
| 3-րդ դ. | ուտիցէ | ուտիցեն |

Կրավորաձև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | ուտիցիմ | ուտիցիմք |
| 2-րդ դ. | ուտիցիս | ուտիցիք |
| 3-րդ դ. | ուտիցի | ուտիցին |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | կերայ | կերաք |
| 2-րդ դ. | կերար | կերայք |
| 3-րդ դ. | կերաւ// եկեր | կերան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | կերայց | կերիցուք |
| 2-րդ դ. | կերիցես | կերիջիք |
| 3-րդ դ. | կերիցէ | կերիցեն |

Արգելական հրամայական

Նորգործածև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ուտեր | մի՛ ուտէք |

Կրավորածև

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ուտիր | մի՛ ուտիք |

Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | կե՛ր | կերա՛յք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | կերիջի՛ր | կերիջի՛ք |

| | | |
|---|---|---|
| Անորոշ դերբայ՝ | | ուտել |
| Ապառնի դերբայ | | |
| | Ներգործածև՝ | ուտելոց |
| | Կրավորածև՝ | ուտելոց. ուտելի |
| Անցյալ դերբայ՝ | | կերեալ |
| Ենթակայական դերբայ՝ | | կերող |

**Ընթերցանություն 71.** Եւ մինչդեռ յընթրիսն ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ (*Բուզ.,* էջ 196): Այլ եկայք, զանձինս անձամբ մխիթարեսցուք. անձանց և աշխարհի պահ կալցուք (*ն.տ.,* էջ 47): Ձի և աներևոյթքն դարձեալ և բանաւոր զօրութիւնքն ամենայն անփոփոխմանս այսմիկ ընդ մեզ ակն կալցին (*ն.տ.,* էջ 70): Յարձակեցան, հարան ի դիմի միմեանց (*Եղիշէ,* էջ 127): Գիտասցեն և ծանիցեն զիւրեանց փոքրկութիւնն և զնոցա մեծութիւն (*ն. տ.,* էջ 165): Կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի Դուռն եկայց (*ն.տ.,* էջ 27): Խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի (*ն.տ.,* էջ 40): Ինքեանք որդիքն իսկ մեղիցեն (*ն. տ.,* էջ 56): Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ (*ն. տ.,* էջ 8): Տացէ ձեզ տէւողութիւն համբերութեան ի փառս անուանն իւրոյ, և զօրացուսցէ զձեզ առաջի ազգացս հեթանոսականաց (*Փարպ.,* էջ 93): Զխաղաղութիւն քո տուր սոցա և աճեցո ի սոսա զշնորհսն (*ն. տ.,* էջ 91): Տուք զկայսերն կայսեր, և զաստուծոյն աստուծոյ (*ն. տ.,* էջ 180): Եկա՛յք, արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան (*Ղեւոնդ,* էջ 65): Այլ արդ արարից և կատարեցից զամենայն, զոր միանգամայն հայցեցեր յինէն (*ն. տ.,* էջ 30): Իսկ զկիւրակէն ոչ փոխանակ շաբաթու եդաք, որպէս դու սովոր ես գործել անխորհրդաբար (*ն. տ.,* էջ 85):

**Վարժություն 131:** Խոնարհել հետևյալ բայերը սահմանական անցյալ անկատարով. *առնել, յանցանել, մեղանչել, տանել, ունել, ուտել, տալ:*

**Վարժություն 132:** Հետևյալ բայերը խոնարհել սահմանական ներկա և ստորադասական առաջին ապառնի ժամանակներով. *գալ, դնել, երդնուլ, երթալ, ըմպել, լսել, լինել, մեղանչել:*

**Վարժություն 133:** Կազմել հետևյալ բայերի հրամայականները. *ելանել, առնել, յառնել, տալ, երթալ, ուտել, ըմպել, լինիմ, գտանել, մտանել, խոստովանիմ:*

**Վարժություն 134:** Հետևյալ բայերը խոնարհել կատարյալի հիմքից կազմվող ձևերով. *տանել, երդնուլ, դնել, ունել, ուտել:*

**Առաջադրանք 134:** Կարդալ «Ընթերցանություն 71»-ը, առանձնացնել անկանոն խոնարհմամբ ձևերը և նշել եղանակը, ժամանակը, դեմքը և թիվը:

**Առաջադրանք 135:** Նույն «Ընթերցանություն 71»-ից առանձնացնել բայական մյուս ձևերը և վերլուծել:

**Առաջադրանք 136:** Վերհիշել *ե* խոնարհման ներգործական սեռի երեք բայ և խոնարհել կատարյալի հիմքից կազմվող ժամանակներով:

**Հարցեր 41:** ա) Ո՞ր բայերն են կոչվում անկանոն:

բ) Անկանոն բայերը ի՞նչ հատկանիշի հիման վրա են երկու խմբի բաժանվում:

գ) Որո՞նք են նույնարմատ անկանոն բայերը, և որո՞նք են նրանց կատարյալի հիմքերը:

դ) Որո՞նք են տարարմատ անկանոն բայերը, և որո՞նք են նրանց կատարյալի հիմքերը:

ե) Ինչպե՞ս են խոնարհվում նույնարմատ անկանոն բայերը:

զ) Ինչպե՞ս են խոնարհվում տարարմատ անկանոն բայերը:

## ե) Պակասավոր բայեր

**§ 147.** Գրաբարում բայերի խոնարհված, առհասարակ թեքված ձևերը ոչ միշտ են ամբողջական: Լինում են բայեր, որոնք չունեն առանձին ժամանակներ, այլև տվյալ ժամանակի որոշ ձևեր: Այդ երևույթը պայմանավորված է հին գրական հայերենով ավանդված գրավոր հուշարձաններում այս կամ այն բայի ձևաբանորեն փոփոխված ձևերի կիրառության ոչ լրիվությամբ, այսինքն՝ եղել են բայեր, որոնց փոփոխված ձևերի մի մասն այդպես էլ չի գործածվել գրավոր հուշարձաններում և ըստ այդմ էլ մեզ մնացել է անհայտ: Նման ձևերը, որոշ չափով կարելի է վերականգնել համաբանության օրենքով: Սակայն դա բոլորովին այլ է: Ամբողջ հարցը մնում է այն, որ նման ոչ լրիվ կիրառված

բայերը չեն ամբողջանում սովորական բայերի հետ: Նման բայերը կոչվում են պակասավոր բայեր:

**§ 148.** Պակասավոր բայերը բավականին քիչ են, դրանք են՝ *եմ, պարտել* (*պարտիմ.* «պարտավոր լինել, պետք լինել, պարտք ունենալ»), *գոլ* («գոյություն ունենալ, լինել»), *գոգ* («ասա՛»), *կայ* («կա»), *չիք* («չկա»):

ա) *Եմ.* կոչվում է նաև էական բայ, ավանդվել է սահմանական ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակների լրիվ ձևերով:

Սահմանական եղանակ

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | եմ | եմք |
| 2-րդ դ. | ես | էք |
| 3-րդ դ. | է | են |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | էի | էաք |
| 2-րդ դ. | էիր | էիք |
| 3-րդ դ. | էր | էին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | իցեմ | իցեմք |
| 2-րդ դ. | իցես | իցէք |
| 3-րդ դ. | իցէ | իցեն |

Կան *եմ*-ի բուն հրամայականի ձևեր՝ *ե՛ր, է՛ք // երո՛ւք,* սակայն միայն կապակցությունների մեջ՝ *ո՛ղջ եր* («ո՛ղջ եղիր»), *ո՛ղջ էք // ո՛ղջ երուք* («ո՛ղջ եղեք»):

բ) *Պարտել (պարտիմ).* հանդիպում է սահմանական ներկա, անցյալ անկատար, առաջին ապառնի և անորոշ դերբայի ձևերով:

Սահմանական եղանակ

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | պարտիմ | պարտիմք |
| 2-րդ դ. | պարտիս | պարտիք |
| 3-րդ դ. | պարտի | պարտին |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | պարտէի | պարտէաք |
| 2-րդ դ. | պարտէիր | պարտէիք |
| 3-րդ դ. | պարտէր | պարտէին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | պարտիցիմ | պարտիցիմք |
| 2-րդ դ. | պարտիցիս | պարտիցիք |
| 3-րդ դ. | պարտիցի | պարտիցին |

գ) *Գոլ.* հանդիպում է սահմանական ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակներով, ըստ որում վերջին երկուսի 3-րդ դեմքի ձևերով:

Սահմանական եղանակ

Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | գոմ | գոմք |
| 2-րդ դ. | գոս | գոյք |
| 3-րդ դ. | գոյ | գոն |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | - | - |
| 2-րդ դ. | - | - |
| 3-րդ դ. | գոյր | գոյին |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | - | - |
| 2-րդ դ. | - | - |
| 3-րդ դ. | զուցէ | զուցեն |

դ) *Գոգ.* հանդիպում է ստորադասական երկրորդ ապառնի, բուն և հորդորական հրամայական ժամանակներով, ընդ որում պակասում է ապառնի ժամանակի 1-ին դեմքի ձևը:

Ստորադասական եղանակ
Երկրորդ ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | - | գոգցուք |
| 2-րդ դ. | գոգցես | գոգջիք |
| 3-րդ դ. | գոգցէ | գոգցեն |

Հրամայական եղանակ
Բուն հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գո՛գ | գոգէ՛ք |

Հորդորական հրամայական

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 2-րդ դ. | գոգջի՛ր | գոգջի՛ք |

ե) *Կայ.* հանդիպում է սահմանական ներկա, անցյալ անկատար, առաջին ապառնի ժամանակների 3-րդ դեմքի ձևերով:

Սահմանական եղանակ
Ներկա

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | - | - |
| 2-րդ դ. | - | - |
| 3-րդ դ. | կայ | կան |

Անցյալ անկատար

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | - | - |
| 2-րդ դ. | - | - |
| 3-րդ դ. | կայր | կային |

Առաջին ապառնի

| | Եզակի թիվ | Հոգնակի թիվ |
|---|---|---|
| 1-ին դ. | - | - |
| 2-րդ դ. | - | - |
| 3-րդ դ. | կայցէ | կայցեն |

զ) *Չիք*. հանդիպում է միայն այդ ձևը: Նշանակում է «չկա», ուստի պետք է ենթադրել, որ *չ*-ն ժխտական մասնիկ է, իսկ *ք*-ն՝ հոգնակերտ:

**Ընթերցանություն 72:** Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք. «Կա՞յ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր ի հանգիստ» (*Յովհ. Մամիկ.,* էջ 42): Եւ պարտին առողքն՝ արդար վաճառականութեամբ գնել ընդ անցաւորիս զանանցն (*Փարպ.,* էջ 70): Բայց նա իւրով հպարտութեամբն այնչափ անթիւ բազմութիւն լաւ որերոյ կորոյս, որոց այսօր փոխանակ չիք (*ն. տ.,* էջ 172): Տեսաք մեք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ, և ոչ գոյր նորա գեղեցկութիւն (*Ղեւոնդ,* էջ 75): Գուցէ մարտ պատերազմի լինիցի ի մէջ զաւրաց քոց (*ն. տ.,* էջ 39): Իսկ եթէ ոչ ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին (*Բուզ.,* էջ 91): Այլ մեք ծանեաք զքեզ, զի աւաղիկ կաս, և ապրել քեզ չիք հնար այսօր ի ձեռաց մերոց (*ն. տ.,* էջ 214): Քանզի բնութիւն լուսոյ նուրբ և երագ բնութիւն է, յանկարծածագ և վաղահաս ծագումն, և չիք ինչ այլ երագութիւն (*Բարս.,* էջ 54):

**Վարժություն 135:** Սահմանական անցյալ կատարյալով և հրամայական հաստատական ներկայով խոնարհել հետևյալ բայերը. *իմանալ, իջանել, կոչել, կոփել, կրթիմ, յաճախել:*

**Վարժություն 136:** Վերլուծել հետևյալ բայական ձևերը. *գոյ, գոն, էին, էաք, գուցէ, պարտին, կայցէ, իցեն, կայր, էիք, են, գոյր, գոմ, չիք, էի, պարտիցիմք*:

**Առաջադրանք 137:** Վերհիշել ու խոնարհման ածանցավոր երեք բայ և խոնարհել սահմանական անցյալ անկատար և ստորադասական առաջին ապառնի ժամանակներով:

**Առաջադրանք 138:** Նշել հետևյալ բայերի սահմանական անցյալ կատարյալի հոգնակի առաջին և երկրորդ դեմքի ձևերը. *տեսանել, զարթնուլ, թագաւորել, զարմանալ:*

**Առաջադրանք 139:** Կարդալ «Ընթերցանություն 72»-ը, առանձնացնել պակասավոր բայաձևերը և նշել եղանակը, ժամանակը, դեմքը, թիվը:

**Առաջադրանք 140:** Սովորել հետևյալ արտահայտությունները. *փոխեցաւ առ տէր ի հանգիստ, ոչ գոյր նորա տեսիլ, ոչ գոյր նորա գեղեցկութիւն, չիք հնար ապրել* («հնար չկա պրծնելու»), *ի ձեռաց մերոց:*

**Հարցեր 42:** ա) Որո՞նք են գրաբարի պակասավոր բայերը:

բ) Հիմնականում ի՞նչ ժամանակի ձևերով են ավանդված պակասավոր բայերը:

### զ) Միադիմի բայեր

**§ 149.** Գրաբարում առանձին խումբ են այն բայեր և բայիմաստ արտահայտող կապակցությունները, որոնք գործածված են միայն 3-րդ դեմքով: Դրանք կոչվում են միադիմի (դիմազուրկ) բայեր: Նման բայերը սովորաբար եղանակավորում են խոսքը, ուստի երբեմն անվանվում են եղանակիչ բայեր: Դրանցում առաջին հերթին նկատելի է հարկադրական եղանակի իմաստը:

**§ 150.** Միադիմի բայերը բաժանվում են երկու խմբի՝ գործառապես միադիմի բայեր և բուն (կամ բացարձակ) միադիմի բայեր:

ա) Գործառապես միադիմի բայերից են՝ *թուի* («թվում է, երևում է, համարվում է»), *կարծի* («կարծվում է, համարվում է»), *հասանէ* («վիճակված է, պիտի լինի»), *մարթի* («կարելի է, հնարավոր է»), *պիտի* («պետք է, հարկավոր է») և այլն:

բ) Բուն միադիմի բայերից են՝ *արժան է* («պետք է, պատշաճ է»), *ի դէպ է* («կարելի է, հարմար է»), *դէպ լինի* («կհանդիպի, կպատահի»), *կամ է* («այլև՝ *կամ լինի*. «ցանկալի է»), *հաճոյ է* (այլև՝ *հաճոյ թուի* «հաճելի է»), *հարկ է* («պետք է»), *հնար է* (այլև՝ *գոյ հնար* . «հնարավոր է»), *չէ հնար* (այլև՝ *չիք հնար* «անհնար է, անկարելի է»), *ի ճահ է* («հարմար է, պատշաճ է»), *մարթ է* («կարելի է»), *յայտ է* («հայտնի է»), *պատեհ է* («հարմար է»), *պատշաճ է* (այլև՝ *պարտ և պատշաճ է* «պատշաճ է, պետք է»), *պարտ է* («պետք է»), *պիտոյ է* («պետք է»), *վայել է* («հարմար է, վայել է»), *փոյթ է* («հոգն է, հոգ ունի»), *օրէն է* («կարելի է, վայել է, օրենք է») և այլն:

**Ընթերցանություն 73:** Արդ ոչ է հնար ձեզ ապրել ի մահուանէ (*Եղիշէ*, էջ 185): Եւ չիք ինչ ձեզ հնար կենաց, բայց եթէ երկիր պագանիցէք արեգական (*ն. տ.*, էջ 162): Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի (*ն. տ.*, էջ 41): Արդ դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ փոյթ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բռնութեանս (*ն. տ.*, էջ 61): Յորոց վերայ հիւանդն անկեալ դնիցի, չէ ինչ նմա փոյթ յայնմ ամենայնէ (*ն. տ.*, էջ 172): Մեր թողեալ զնա՝ մեզ չէ փոյթ (*Բուզ.*, էջ 137): Յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետև, թէ անարգի դուստր նորա (*ն. տ.*, էջ 113): Զի սուրբ եկեղեցիք, յորս ոչ էր արժան հեթանոսաց մտանել՝ քանդեալ և քայքայեալ կոխան պիղծ ոտից անաւրինաց լինէին (*Ղեւոնդ*, էջ 9): Եւ ի դէպ էր զմարգարէականն առնուլ ողբս, որ ասէ (*ն. տ.*, էջ 10): Եւ այժմ առ մերս հասեալ տարակուսանս՝ դէպ եղև առնուլ (ն.տ.): Եւ հաճոյ թուեցաւ բանն

մարզպանին (*Փարպ.*, էջ 121)։ Հնար էր շնորհել ձեզ զտանուտէրութիւնն Կամսարականին (*ն. տ.*, էջ 175)։

**Վարժություն 137։** Կազմել միադիմի բայերով գրաբար նախադասություններ. *պարտ է, մարթ է, հաճոյ է, հնար է։*

**Վարժություն 138։** Խոնարհել հետևյալ բայերը. *ուտել, ննջել, նորոգել, մոռանալ, մօրանալ* («ճահճանալ»)։

**Առաջադրանք 141։** Կարդալ «Ընթերցանություն 73»-ը, առանձնացնել միադիմի բայերը։

**Հարցեր 43։** ա) Ի՞նչ է միադիմի բայը։

բ) Գրաբարում միադիմի բայերը քանի՞ տեսակ են և ինչպիսի՞ կազմություն ունեն։

## է) ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

**§ 151.** Գրաբարում բայի խոնարհումը տեղի է ունենում երկու կերպ՝ հաստատական և ժխտական։ Մինչև այժմ բայի խոնարհման ձևերին և կազմություններին անդրադառնում էինք իբրև հաստատական խոնարհման ձևերի։ Հաստատական է խոնարհումը, երբ բայն արտահայտում է գործողության հաստատումը, հաստատ լինելը։ Առհասարակ ամեն մի գործողություն իրականության հաստատումն է, իրականության մեջ եղածի, կատարվողի և կատարվելիքի իրացի վկայաբերումը։ Դրան հակառակը ժխտումն է։ Ժխտական գործողությունը բացասումն է իրական փաստի կամ չեղած փաստի։

**§ 152.** Ըստ այդմ էլ գրաբարում ժխտական գործողության իմաստ արտահայտելու համար բայը դրվում է ժխտական խոնարհմամբ։ Բայի ժխտական խոնարհման ձևերը կազմվում են *ոչ* և *չ-* մասնիկներով։ Վերջիններս դրվում են բայի գրեթե բոլոր ձևերի վրա։ Միակ բացառությունը հրամայական եղանակի

արգելական ներկան է, որն ինքնին ժխտականն (արգելականն) է առհասարակ հրամայականի: Այն, ինչպես գիտենք, կազմվում է *մի* արգելական մասնիկով: Ուստի *մի*-ն համարժեք է *ոչ* և չ- մասնիկներին: Ըստ այսմ էլ կարելի է ասել, որ գրաբարում բայի ժխտական խոնարհումը իրականանում է *ոչ, չ-, մի* մասնիկներով՝ անկախ հնչերանգային տարբերությունից (գրավոր խոսքում *մի*-ն չեշտվում է):

Ստորև ընթերցանություն 74-ում  բերվում են խոնարհված բայի ժխտականի ձևեր, ուստի առանձին հարկ չկա ներկայացնելու այդ խոնարհման բայերի հարացուցային օրինակներ:

**Ընթերցանություն 74:** Ոչ վարին ի գերութիւն բովանդակ աշխարհացն բնակիչք (*Փարպ.*, էջ 51): Չիշխեմ բնաւ և ոչ յիշել զտկարացեալ մասն ինչ յայնպիսեաց անձինս (*ն. տ.,* էջ 109): Ոչ կարէին բառնալ, զի որ ինչ գտանէր ի ձեռին ուրուք հայքայքանք՝ ընդ անձին իւրոյ ոչ լինէր բաւական գնոց (*Ղեւոնդ,* էջ 167): Եւ ոչ ինչ մնաց ի ծածկութեան, զոր ոչ եդին առաջի նորա (*ն. տ.,* էջ 168): Զի մի մթարքն, որ զբքոք շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լինիցին (*Եզնիկ,* էջ 5): Եւ այլն եւս ինչ մի ի ջուրսն է, և զմեր պէտս ոչ հարկանիցէ, բայց միայն զի զկծեցուցանիցէ. յորժամ տեսանիցեմք, թէ չեմք բաւական զնոսա սպառել (*ն. տ.,* էջ 103): Որպէս նոքա Որմզդի զբարի արարածսն դնեն և Արհմենի զչարսն. զոր ոչ կարեն ցուցանել, թէ հաւաստեաւ հայիցին, չար ինչ արարած, զոր նմա արարածս դնեն. որպէս բազում անգամ յոգնազոյն օրինակօք ոչ մոռացաք յառաջի ճառսն յայտ առնել (*ն. տ.,* էջ 100): Իսկ հաւատացեալքն ... ոչ ի սառնամանեաց ձմերայնւոյն հովանային, և ոչ ի տապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն սարսէին, և ոչ ի սպառնալեաց տանջանաց զանգիտէին (*Եղիշէ,* էջ 45): Քանզի ոչ է եկեղեցի շինուած մարդոյ, և ոչ տուրք արեգական (*ն. տ.,* էջ 46):

**Վարժություն 139:** Կազմել հետևյալ բայերի ժխտականը. *համբառնամք, կատարեսցուք, առաջնորդէ, արգելոյր, կարէ, քակեալ էին, ետուք, կարէին, յարձակէին:*

**Վարժություն 140:** Կազմել հետևյալ բայերի սահմանական անցյալ անկատարը՝ ժխտական խոնարհմամբ. *ուրանալ, վաստակել, տեսանել, երթալ, առնել, մտանել, սատակել:*

**Առաջադրանք 142:** Ընտրել *ա, ու* խոնարհման երկուական բայ և խոնարհել ստորադասական առաջին ապառնիով՝ ժխտական խոնարհմամբ:

**Առաջադրանք 143:** Ընտրել *ե* խոնարհման երեք բայ և խոնարհել սահմանական անցյալ կատարյալով՝ ներգործաձև և կրավորաձև, ժխտական խոնարհմամբ:

**Առաջադրանք 144:** Կարդալ «Ընթերցանություն 74»-ը, առանձնացնել ժխտական խոնարհմամբ բայերը և վերլուծել:

**Հարցեր 44:** ա) Ի՞նչ է ժխտական խոնարհումը:

բ) Ինչպե՞ս է կազմվում ժխտական խոնարհումը և ի՞նչ դրսևորում ունի:

# 6. ՆԱԽԴԻՐ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ա) Նախդիրներ

§ **153**. Առարկաների, նրանց զանազան հատկանիշների հաղորդակցական հարաբերությունները միշտ չէ, որ արտահայտվում են գոյականների և գոյականաբար գործածվող բառերի թեքումով՝ հոլովմամբ: Լինում են դեպքեր, երբ այդ հարաբերությունները դրսևորվում են գոյականների, գոյականաբար գործածվող բառերի և այլ կարգի (սպասարկու բառերի) առնչակցությամբ: Սպասարկու դերով հանդես եկող բառերը գրաբարում բաժանվում են երկու խմբի՝ նախդիրներ և նախադրություններ: Նման խմբավորումը թելադրվում է սպասարկու բառերի բառային, իմաստային և գործառական որոշակի առանձնահատկություններով:

§ **154**. Գրաբարի նախդիրներն են՝ *զ, ի* (կամ՝ *յ*), *առ, ընդ, ըստ, ց:* Դրանք, բացի *ց*-ից, գործածվում են մի քանի հոլովի հետ: Արտահայտում են տարածական, ժամանակային, պատճառահետևանքային, նպատակային և այլ հարաբերություններ: Գործածվում են թեք հոլովով դրված բառերի հետ, ըստ որում՝ առանձին-առանձին: Երբ տվյալ հոլովով դրված բառը լրացում է ունենում, այն ժամանակ նախդիրը կարող է դրվել այդ լրացման վրա: Նախդիրները, բնականաբար, դրվում են բառերի վրա՝ սկզբից: *Զ, ց,* այլև *ի*-ի տարբերակ *յ* նախդիրները կցվում են հոլովված բառին:

§ **155**. *Զ* նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով դրված բառերի հետ:

ա) *Զ*-ն տրական հոլովի հետ. նման գործածության մեկ դեպք կա, այն է՝ *հարկանել, զարկանել* բայերի խնդիր հանդիսացող բառերի հետ: Օրինակ՝ Զահի մեծի հարաւ, և ասէր ընդ միտս իւր (*Եղիշէ*, էջ 145): Յետս յետս չոգան և զարկան զգետնի (*Յովհ.*, ԺԸ,6):

բ) *Զ*-ն հայցական հոլովի հետ.

1) ուղիղ խնդիր որոշյալ առումով. «Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր, քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեան և զաշխարհն Ասորեստանի» (*Ագաթ.,* էջ 78):

2) Գործիական հոլովի իմաստ՝ «Զի՞ գործես, զմահ աղուեսու սպանից զքեզ» (Բուզ., էջ 260):

գ) *Զ*-ն բացառական հոլովի հետ.

1) Ասացական, իմացական, զգացական և այլ բայերի հետ՝ վերաբերության իմաստ, որ ժամանակակից հայերեն թարգմանվում է *մասին* բառով. «Եւ առաքէ ամբաստանութիւն զնոցանէ առ Մուսէ իշխանն» (*Ղեւոնդ,* էջ 162): «Եւ զնմանէ յուրաստ էր, թէ չես դու իմ որդի, և զմիւսմէն խոստուկ, թէ որդի իմ է» (*Եզնիկ,* էջ 95):

2) *Առնուլ, բուռն հարկանել, ունել* բայերի հետ՝ բռնելու իմաստով. «Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով» (*Բուզ.,* էջ 258):

3) Նպատակի իմաստ. «Եւ ընդ սակաւ աւուրս եկին, բերին զայն, ինչ, զորմէ յղեացն» (*Բուզ.,* էջ 256):

դ) *Զ*-ն գործիական հոլովի հետ.

1) *Շուրջ* իմաստը. «Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտաբանաց կազմութիւն, որպէս շուրջ զբոովն զայլ բոլորակութիւն ական» (*Խոր.,* էջ 198):

2) Ժամանակ. «Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր» (*Բուզ.,* էջ 182):

3) Տեղ. «Ուր և նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ՝ վասն իրիք իրիք տեսչութեանց» (Եզնիկ, էջ 65):

4) Անուղղակի խնդիր. «Մեք ոչ կարեմք անցանել զիրամանաւ մերոյ թագաւորին» (*Եղիշէ,* էջ 171):

5) Զանազան «ոճեր». *զմտաւ ածել* («մտածել»), *զսրով երթալ* («սրով սպանվել, սրածվել»), *զմիմեամբք ելանել* («իրար անցնել»), *զգրովք գալ* («գրքերով զբաղվել»), *զձեռօք (զձեռամբ) ածել* («ձեռք բերել») և այլն:

**§ 156.** *Ի* (կամ՝ *յ)* նախդիրը գործածվում է տրական, հայցական և բացառական հոլովներով դրված բառերի հետ:

ա) *Ի*-ն տրական հոլովի հետ.

1) տեղ. «Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ» (*Խոր.,* էջ 102):

2) Ժամանակ. «Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի» (*Եղիշէ,* էջ 6):

3) Նպատակ. «Եւ ետուն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան» (*Բուզ.,* էջ 74):

բ) *Ի*-ն հայցական հոլովի հետ.

1) ներգոյականի իմաստ. «Արդ հարկ է ի պատճառս չաբեացն գալ, և ցուցանել, թէ ուստի լինին չարիքն» (*Եզնիկ,* էջ 19):

2) Շարժման ուղղություն. «Սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել... ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիզբոնի» (*Ագաթ.,* էջ 24):

3) Անուղղակի խնդիր. «Զի մի մքարքն, որ զբքօք շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լինիցին» (*Եզնիկ,* էջ 5):

4) Գործիականի իմաստ. «Շինէ և գիւղ մի եւ անուանէ յիւր անուն Հայկաշէն» (*Խոր.,* էջ 40):

5) Անորոշ դերբայի հետ՝ ժամանակ. «Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկանել» (*Խոր.,* էջ 68):

6) Նպատակ. «Արիմնն, ասեն, զՈրմիզդ ի ճաշ կոչեաց» (*Եզնիկ,* էջ 98):

7) Վերածում (մի բանից մեկ այլ բանի). «Պէտ արարեալ զամենայն ազգաց զմատեանս և զվէպս ի յոյն լեզու փոխարկեաց» (*Խոր.,* էջ 8):

գ) *Ի*-ն բացառական հոլովի հետ իր բուն իմաստով. Նոյնպէս և սատանայն անուն՝ ոչ բնութեան ինչ անուն, այլ բարուց, որպէս ի բարութենէ ոք բարի կոչի, և ի չարութենէ չար» (*Եզնիկ,* էջ 100-101):

§ **157.** *Առ* նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով դրված բառերի հետ:

ա) *Առ*-ը տրական հոլովի հետ.

1) պատճառ. «Առ տկարութեա՞ն ինչ, թէ առ չարակամութեան» (*Եզնիկ,* էջ 87):

2) Դադարում. «Բազում բարեխօսիւքն, զոր ունիմք առ նմա, ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոց» (*Եղիշէ,* էջ 156):

բ) *Առ*-ը հայցական հոլովի հետ՝

1) ուղևորման հայցական. «Ջրուան հայր մեր խորհեցաւ, թէ ոք ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուսցէ» (*Եզնիկ,* էջ 80):

2) Դադարում. «Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն» (*Եղիշէ,* էջ 116):

3) Դիմում. «Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ» (*Ն. տ.,* էջ 9):

4) Վերաբերություն, համեմատություն. «Դարձեալ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն» (*Եզնիկ,* էջ 14):

5) Վերաբերություն՝ իբրև (մասին). «Առ մե՞զ ասացեր զառակդ, թէ առ ամենեսեան» (*Ղուկ.,* ԺԲ,41):

6) Նպատակային հարաբերություն. «Հանդերձ քո մի՛ լիցի առ ի պճնել, այլ միայն ի պէտս մարմնոյդ» (Եզնիկ, էջ 215):

7) Պատճառ. «Եւ առ չհանդուրժել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւն մարմնոյ» (Եղիշէ, էջ 47):

8) Հաջորդականություն. «Կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի Դուռն եկայք» (*Ն. տ.,* էջ 27):

9) Բաշխական հարաբերություն. «Մէն մի բռնաքար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեսցեն՝ շեղջ կուտել» (*Բուզ.,* էջ 28):

10) Նախդրով տրական. «Եւ յետ այսորիկ հանգեաւ և յաւելաւ առ հարս իւր» (*Ն. տ.,* էջ 70):

11) Մատուցման տրական. «Իսկ նա ոչ առնոյր յանձն զնոցա ինչ առ նոսա մատուցանել» (*Ագաթ.,* էջ 395):

12) Մի քանի տեղ դնել. «Որովհետև մարդիկ աշխարհիս զնա առ աստուածս ունին (*Եզնիկ,* էջ 85):

գ) *Առ*-ը բացառական հոլովի հետ.

1) պատճառ. «Մինչև հասանել մարդկան ի յետին տնանկութիւն յանհամբեր նեղութեանցն առ ի չարաշուք դահճէն» (*Ղեւոնդ,* էջ 167):

2) Նպատակ. «Կամ զի՞նչ գեղեցկագոյն քան զսիրամարգ, զոր առ ի ցուցանելոյ զգեղեցկագործութիւնն արար» (Եզնիկ, էջ 97):

3) Տեղ (մոտ). «Խնդրեցես զիմաստութիւն առ ի չարաց՝ և ոչ գտցես և զհանճար առ ի իմաստնոց՝ գտցես» (Առակ.,ԺԴ,6):

4) Որոշ (ոճեր). *առ ի քէն* («քո կողմից, քո մոտից»), *առ ի մէնջ* («մեր կողմից»), *եղբայր առ մօրէ* («մոր կողմից եղբայր»), *առ ի ծառոյն* («ծառի մոտից»):

դ) *Առ*-ը գործիական հոլովի հետ.

1) տեղ (որոշակի կամ մոտավոր). «Գայր հասանէր Համազասպեան սեպուհ մի ի Մամիկոնեան տոհմէն, անցանէր առ անկելովք դիակամբք և առ խոց վիրաւորօքն պատերազմի» (*Բուզ.,* էջ 204):

2) Ժամանակ. «Զմորենին առ Մովսիսիւ վառեաց Աստուած» (*Ղեւոնդ,* էջ 87):

3) Համեմատություն. «Ոչ առ այլովք վատթարօքն վեհ երևի, այլ ի վերուստ յերկնուստ ունի զանուն օրէնսդրութիւն» (*Եղիշէ,* էջ 29):

§ **158.** *Ընդ* նախդիրը գործածվում է սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով դրված բառերի հետ:

ա) *Ընդ*-ը սեռական հոլովի հետ ցույց է տալիս ընդդիմություն. «Եւ նոցա զքելադրութիւնս վարդապետին ի մտի եդեալ, և զպարգեւս ընդ յաղթութեանն, գեր ի վերոյ լինիցին» (Եզնիկ, էջ 40 և 41):

բ) *Ընդ*-ը տրական հոլովի հետ.

1) միասնություն. «Ոչ ընդ միտս ուրուք հարկանի, ոչ միայն ընդ մարմնականացս, այլ և ընդ անմարմին հրեշտակացն» (*Եղիշէ,* էջ 30)։

2) Վերաբերմունք. «Ընդ որում ես համբուրեցից՝ նա է» (*Մատթ.*, ԻԶ, 49)։

գ) *Ընդ*-ը հայցական հոլովի հետ.

1) տեղ (ուղևորման հայցական). «Հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել» (*Ագաթ.,* էջ 18)։

2) Նախդրով տրական. «Իսկ մեք հաճեալ եմք ընդ նեղութիւնս և ընդ վիշտս» (*Ղեւոնդ,* էջ 98)։

3) Միասնություն. «Մի դու ընդ իս բազմապատիկ տանջիր, և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն» (*Եղիշէ,* էջ 36)։

4) Տեղ (միջոցով, տարածությամբ իմաստով). «Ամենայն ինչ որ մտանէ ընդ բերան մարդոյն, ոչ պղծէ զնա» (*Եզնիկ,* էջ 194)։

5) Տեղ (մեջ, վրա). «Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն, և աւերէր զատրուշանսն Մազդեզանցն» (*Բուզ.,* էջ 188)։

6) Ժամանակ. «Որոց ընդ տապալել վիրաւորացն կործանէին նաւքն» (*Փարպ.,* էջ 66)։

7) Տրոհում. «Եւ լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել *(Բուզ.,* էջ 400)։

8) Կախում. «Լաւ է նմա, եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա և ընկղմիցի ի խորս ծովու» (*Մատթ.,* ԺԸ, 6)։

9) Միջոց. «Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա» (*Եզնիկ,* էջ 43)։

10) Միջակայք. «Անդադար էին ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ ... և ընդ ամենայն Ասորեստան» (*Եղիշէ,* էջ 188)։

11) Ամբողջականություն. «Լինէին հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետեւակ» (*ն. տ.,* էջ 100)։

12) Որոշ ոճեր. *հանել ընդ սուր* («սրի մատնել, սրածել»), *ընդ ցից հանել* («սպանել»), *ընդ գինիս մտանել* («գինով ընկնել, հարբել»), *ընդ ժամանակս ժամանակս* («ժամանակ առ ժամանակ»), *ընդ այս ընդ այն* («այս ու այն կողմ») և այլն։

դ) *Ընդ*-ը բացառական հոլովի հետ.

1) դադարում, տեղ. «Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քոյ պատուանդան ոտից քոց» (*Ղեւոնդ,* էջ 70):

2) *Ի* նախդրի փոխարեն. *ընդ արեւելից կողմանէ* («արևելյան կողմից»), *ընդ հարաւոյ* («հարավից»), *ընդ հեղգութենէ* («ծուլությունից») և այլն:

ե) *Ընդ*-ը գործիական հոլովի հետ.

1) տեղ (տարածականորեն). «Եւ այլք զգերեզմանս կրկտեն, և զթաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արեւու ցուցանեն» (*Եզնիկ,* էջ 14-15):

2) Տեղ (իրավականորեն). «Եթէ ոչ հարկեսջիք ինձ և ոչ անկջիք ընդ լծով ծառայութեան իմոյ՝ ի սուր սուսերի մաշեցից զամենեսեան» (*Ղեւոնդ,* էջ 14):

3) Տեղ (առհասարակ). «Ոչ ձևանայ ի տեսիլ տարրեղէն, և ոչ անկանի ընդ տեսլեամբական» (*Եղիշէ,* էջ 30):

**§ 159**. *Ըստ* նախդիրը գործածվում է տրական, հայցական և բացառական հոլովներով դրված բառերի հետ:

ա) *Ըստ*-ը տրական հոլովի հետ նշանակում է՝ համաձայն, նման. «Ըստ այսմ օրինակի զգուշացեալ ստիպեցուցանէ զմեզ տէրն Մամիկոնէից Վահան» (*Փարպ.,* էջ 5):

բ) *Ըստ*-ը հայցական հոլովի հետ.

1) տեղ (մի բանից այն կողմ իմաստով). «Զամենայն ազգս հաւաքեա՛ և անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս» (*Եղիշէ,* էջ 9):

2) Համատեղում՝ համաձայն, համեմատ իմաստներով. «Որում դիւրին է ... նորոգել զմեզ ի հողոյ ... և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց» (*Ն. տ.,* էջ 68):

3) Որոշ ոճեր. *ըստ ակն անկանել* («աչքից վրիպել»), *ըստ այն յառաջել* («նրանից առաջ անցնել») և այլն:

գ) *Ըստ* նախդիրը բացառականի հետ ցույց է տալիս հաջորդականություն. «Եւ զայս իբրև ասաց, կարգեցան կացին մի ըստ միոջէ» (*Եղիշէ,* էջ 178):

**§ 160.** *Ց* նախդիրը գործածվում է միայն հայցական հոլովով դրված բառերի հետ.

1) տեղ, ժամանակ *(մինչև* իմաստով). «Եւ սպարապետին Հայոց Վահանայ Մամիկոնէի պատասխանի արարեալ ասէր ցՄիհրան» (*Փարպ.,* էջ 136): «Բազում և ազգի ազգի և պէսպէս աղօթս մատուցանէր մինչև ցերեկոյն և ի մտանել արեգականն, մինչև վախճանեցաւ ճակատն» (*Բուզ.,* էջ 166): «Զի ցայժմ ես քեզ առեւծ էի» (*ն. տ.,* էջ 260):

2) Հանգում (նախդրով տրական). «Ապա տային պատասխանի նախարարքն իւր Շապհոյ արքային Պարսից, և ասեն ցնա՝ թէ...» (*Բուզ.,* էջ 112): «Հարցին ցիւաւտարիմս հաւատոյն իւրեանց» (*Ղևոնդ,* էջ 115):

**Ընթերցանություն 75:** «Դարձեալ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն. ուստի՞ իսկ բնաւ են, ասեն, այդպիսի անհարթութիւնք. զի թէ Աստուած բարեաց արարիչ է և ոչ չարեաց իրաց, ուստի՞ է խաւար, ուստի՞ են ըկանք՝ մերթ ի ցրտոյ, մերթ ի խորշակէ: Կամ ուստի՞ են անզգամութիւնք, զի տեսանեմք երկուս արս միազգիս ընդ միմեանս գրգռեալ, միմեանց մահու և արեամբ ծարաւի են: Եւ այլ զգերեզմանս կրկտեն, և թաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ, արևու ցուցանեն. և զմեծարեալ դին, առ փութի չծածկելոյ, թերևս և շանց ևս կուր արկանեն: Եւ է երբէք, զի մին փախուցեալ երթայցէ անձնապուր ուրեք զկեանս անձինն շահել, և միւսն ցասմամբ բորբոքեալ՝ սրով զկնի ընթացեալ, ոչ դադարէ մինչև յազեցուցանէ զցասումն. ուստի՞ է այն անյագ ցասումն: Եւ ոմն մերկանայ զհանդերձս ընկերին, և թէ ընդդէմ դառնայցէ յարև ևս արկանէ» (*Եզնիկ,* էջ 14-15):

**Վարժություն 141:** Որոշել հետևյալ նախդրավոր բառերի հոլովը. *ըստ այնմ, ընդ որում, ըստ իս, առ քեզ, առ անձին, ի տեսութիւն, ի գիտութիւն, ցտեսութիւն, զքաղաքաւ, ի ծովուն, ի կնութիւն, մէջ ընդ մէջ:*

**Վարժություն 142:** Կազմել նախադասություններ՝ գործածելով հետևյալ կապակցությունները. *զմտաւ ածել, զձեռամբ ածել, ի նախարարացն, առ ի ձէնջ, զմահ աղուեսու, առ ի չգոյէ:*

**Առաջադրանք 145:** Կարդալ «Ընթերցանություն 75»-ը, առանձնացնել նախդրավոր կապակցությունները և նշել, թե տվյալ նախդիրը ինչ հոլովով բառի հետ է գործածված:

**Առաջադրանք 146:** Սովորել հետևյալ արտահայտությունները (ոճերը). *զմտաւ ածել, զգրովք գալ, զձեռամբ ածել, ըստ ակն անկանել, ըստ այն յառաջել, ընդ գինիս մտանել, հանել ընդ սուր, հանել ընդ կախաղան, ընդ ժամանակս ժամանակս, ընդ այս, ընդ այն, ընդ երկիւղէն:*

**Հարցեր 45:** ա) Որո՞նք են գրաբարի նախդիրները:

բ) Ի՞նչ հոլովով դրված բառերի հետ է գործածվում *զ* նախդիրը:

գ) Ի՞նչ հոլովով դրված բառերի հետ է գործածվում *առ* նախդիրը:

դ) Ի՞նչ հոլովով դրված բառերի հետ է գործածվում *ըստ* նախդիրը:

ե) Ի՞նչ հոլովով դրված բառերի հետ է գործածվում *ընդ* նախդիրը:

զ) Ի՞նչ հոլովով դրված բառերի հետ է գործածվում *ի* նախդիրը:

է) Ի՞նչ հոլովով դրված բառերի հետ է գործածվում *ց* նախդիրը:

### բ) Նախադրություններ

**§ 161.** Նախադրությունները այլ խոսքի մասերից առաջացած, հոլովառու սպասարկու բառեր են: Դրանք գործածվում են միայն մեկ հոլովի հետ, հիմնականում ունեն նախադաս գործածություն, իսկ որոշ մասը կիրառվում է և՛ նախադաս, և՛ հետադաս: Մի փոքր մասն էլ հանդես է գալիս հետադաս գործածությամբ: Այդուհանդերձ, նախադրությունները բաշխվում են ըստ խնդրառության, այսինքն՝ առնում են սեռականով, հայցականով, բացառականով և գործիականով խնդիրներ:

ա) Սեռական խնդրով նախադրություններ. *աղագաւ* («պատճառով, համար»), *առանց, առաջի, զկնի* («հետևից, հետո»), *զհետ* («հետևից, հետքով»), *զօրէն* («պես, նման»), *ընդդէմ, ի ձեռն* («ձեռքով, միջոցով»), *ի մէջ* («մեջ, միջև»), *ի ներքոյ* («ներքև, տակ»), *ի ներքուստ, ի վերայ* («վրա»), *ի վերոյ* («վերևը»), *ի վերուստ* («վրայից, վերևից»), *յաղագս* («համար, մասին, վերաբերյալ»), *յանդիման // հանդէպ, յետ // յետոյ, պատճառաւ // ի պատճառ* («պատճառով»), *պէս, սակս // ի սակս* («պատճառով, համար»), *վասն* («համար, մասին, վերաբերյալ, պատճառով»), *փոխանակ*:

բ) Հայցական խնդրով նախադրություններ. *իբրև, որպէս, մօտ, մերձ, մինչև ի, մինչև ց, մինչև առ* և այլն:

գ) Բացառական խնդրով նախադրություններ. *բաց // բայց* («բացի»), *զատ* («զատնի»), *հեռի* («հեռու»), *հետէ* («հետո, ի վեր»), *մեկուսի* («հեռու, զատ, մի կողմ»), *ուրոյն* («առանց, բացի, զատ»):

դ) Գործիական խնդրով նախադրություններ. *հանդերձ* («հետ, միասին, հանդերձ»), *շուրջ, չափ:*

**Ընթերցանություն 76:** «Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ, այլ աստէն իսկ, ի սկզբան մերոյ գործառութեանս, վասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս: Զի թէ արդարև արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցեն, որք գրով և

պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս, և զգործս իմաստութեան և զքաջութեան իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս և ի պատմութիւնս՝ ըստ նոցանէ և պարապեալքն այսպիսում ճգնութեան դիւանագիրք մատենից՝ ներբողականաց ի մէնջ արժանի եղեն ասից. ի ձեռն որոց և մեք յընթեռնուլն զառ ի նոցանէ շարածս բանիր՝ ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք, և քաղաքականս ուսանել կարգս, յորժամ զայսպիսի ընթերցասիրիցեմք, իմաստութեան ճառս և զրուցատրութիւնս, որք են Քաղդէացւոց և Ասորեստանեայց, Եգիպտացւոց և Հելլենացւոց. առ այսոքիւք և փափագիցեմք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կալան. և ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն տխմարութեան, և անկատարութիւն ոգւոյն բանականի: Չի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ ի մերում աշխարհին, և արժան գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել: Արդ՝ այնոքիկ, որ և ոչ անձանց խորհեցան բարի առնել և անուն յիշատակի յաշխարհի թողուլ, զի՞ արդեօք և մեղադրութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահիցէ, զեւս մեծազոյնս ի նոցանէ պահանջել և որ ինչ հնազոյն քան զնոսա» (*Խոր.,* էջ 10-12):

**Վարժություն 143:** Թարգմանել հետևյալ նախադասություններն և նշել նախադրության խնդրառությունը. Հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին (*Մատթ.,* ԻԱ, 39): Եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից (*Բուզ.,* էջ 212): Մնալով ի ներքոյ ձեռանն զերիս տիւս և զերիս գիշերս (*Խոր.*, էջ 188): Եւ զզօրսն ամենայն սփռէր, տարածանէր շուրջ զքաղաքաւն (*Եղիշէ,* էջ 88):

**Վարժություն 144:** Թարգմանել գրաբար. Զինվորները գնացին նրանց հետևից և բռնեցին նրանց: Ուզում եմ պատմել մեր հայրերի և մեր եղբայրների մեծագործությունների մասին: Իր

որդու պես սիրեց նրան: Նրա պատճառով թշնամություն ընկավ երկու ազգերի միջև:

**Առաջադրանք 147:** Կարդալ «Ընթերցանություն 76»-ը, առանձնացնել նախադրությունները և որոշել հոլովական կիրառությունը:

**Առաջադրանք 148:** Կազմել գրաբար մեկ-երկու նախադասություն սեռական խնդրով նախադրությամբ:

**Հարցեր 46:** ա) Ի՞նչ է նախադրությունը:

բ) Որո՞նք են սեռական խնդրով նախադրությունները:

գ) Որո՞նք են հայցական խնդրով նախադրությունները:

դ) Որո՞նք են բացառական և գործիական խնդիրներով նախադրությունները:

# 7. ՄԱԿԲԱՅ

## ա) Մակբայների տեսակները

**§ 162**. Մակբայը ցույց է տալիս գործողության կատարման հանգամանք, հատկանիշի հատկանիշ: Դրանք այն պարագաներն են, որոնք նշանակվում են մակբայների միջոցով, ուղղակիորեն, այսինքն՝ առանց ձևակազմական որևէ փոփոխության: Մակբայները գրաբարում դասդասվում են ըստ իմաստի, կազմության և այլն:

**§ 163**. Ըստ իմաստի՝ մակբայները լինում են՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու աստիճանի:

ա) Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը: Դրանցից են, *այդր* («այդտեղ»), *այդրէն* («այդտեղ, նույն տեղը»), *այլուստ // յայլուստ* («ուրիշ տեղից»), *այլուր* («ուրիշ տեղ»), *այլ ուրեմն, այլ ուրեք, այսր* («այստեղ»), *այսրէն* («այստեղ, դեպի այստեղ, նորից դեպի այստեղ, նորից»), *այսր անդր* («այս ու այն կողմ»), *այտի // այդի* («այդտեղից»), *անդ* («այնտեղ»), *անդէն* («այնտեղ, նույն տեղը, այլև՝ նույն ժամանակ, շուտով, իսկույն»), *անդուստ* («այնտեղից, այն կողմից»), *անդր* («այնտեղ, դեպի այնտեղ, մի կողմ»), *անդրէն* («հետ, նորից, վերստին, նույն ժամանակ»), *անտի* («այնտեղից»), *առաջուստ // յառաջուստ* («առջևից»), *աստ* («այստեղ, այս ժամանակ»), *աստանօր* («այստեղ»), *աստէն* («այստեղ, այստեղից»), *աստի* («այստեղից»), *աստուստ* («այստեղից»), *այտի, այդրէն ուրեք* («մի տեղ»), *արտաքս* («դուրս»), *արտաքուստ* («դրսից»), *անդուստ* («այնտեղից, նրանից հետո, այն կողմից»), *այլուստ // յայլուստ* («ուրիշ տեղից»), *ի բաց* («հեռու»), *բացուստ // ի բացուստ* («հեռվից»), *երկնուստ // յերկնուստ* («երկնքից»), *զճանապարհայն* («ճանապարհին»), *ի մօտոյ, ընդ մօտոյ* («մոտից, մոտերը»), *ի մօտուստ // մօտուստ* («մոտիկից»), *մօտ ի մօտոյ* («իրար մոտ, մոտերը»), *յայսկոյս* (այս կողմ, այստեղ), *յետուստ* («հետևից»), *յայնկոյս* («այն կողմ, այնտեղ»), *յետս* («հետ, դեպի հետ, հետևից»), *ի ներքս* («ներս»), *ներքուստ // ի ներքուստ* («ներ-

սից, ներքևից, տակից»), *ի վերուստ* («վերևից»), *ի ներքս* («ներսը, դեպի ներս, դեպի խորքը»), *ի վեր, ի վայր* («վայր, ցած»), *յառաջ* («առաջ, դեպի առաջ»), *հեռուստ // ի հեռուստ* («հեռվից»), *ուստեք* («մի տեղից»), *ուրեք* («մի տեղ») և այլն:

բ) Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը: Դրանցից են՝ *ամարայնի* («ամռանը»), *ամարանի // ամարանից* («ամռանը, ամառվանից»), *ամ ըստ ամէ* («տարեցտարի»), *ամ յամէ, ամի ամի* («տարեցտարի»), *այգուն* («առավոտյան»), *ընդ այգս այգուն* («առավոտյան»), *այգուն այգուն* («ամեն առավոտ»), *այգուց // յայգուց* («վաղը, առավոտվանից, առավոտյան»), *այժմ, այժմիկ, այնուհետև, այսուհետև, այսօր, անագան* («ուշ»), *անագան ուրեմն, անագան երբէք, ապա, առաւօտու // առաւօտուց* («առավոտյան»), *ընդ առաւօտն // ընդ առաւօտս* («առավոտյան»), *առժամայն* («իսկույն»), *առ ժամանակ մի* («մի առ ժամանակ»), *արդ* («այժմ»), *այդէն // արդէն իսկ, գարնանայնի* («գարնանը»), *գիշերայինն // գիշերի* («գիշերը, գիշերով»), *դարձեալ, դեռ, դեռևս, եռանդ* («երեկ չէ մյուս օրը»), *երբ, երբեմն, երբէք* («երբեմն, մի անգամ, մի ժամանակ»), *երբէք երբէք, երեկ, ժամանակ առ ժամանակ, ընդ ժամանակս ժամանակս // ըստ ժամանակս ժամանակս* («ժամանակ առ ժամանակ»), *իբրև* («երբ»), *իսկոյն, կանխաւ* («շուտ»), *հանապազ // հանապազորդ* («միշտ, շարունակ»), *յարաժամ* («միշտ»), *յաւիտեան, յորժամ* («երբ»), *նախ, նոյնհետայն* («իսկույն»), *նոյնժամայն* («նույն ժամին, իսկույն»), *վաղվաղակի* («շուտով, իսկույն»), *վաղիւ // վաղիւ անդր // ի վաղիւն // առ վաղիւ* («հաջորդ օրը, առավոտյան, վաղը»), *տակաւին // տակաւին ևս* («դեռ, դեռ ևս, էլ»), *տարաժամ* («վաղաժամ»), *ցանկ // ցանգ* («միշտ, շարունակ, մինչև վերջ»), *ցարդ // ցարդ ևս* («մինչև այժմ»), *օր ըստ օրէ, օր քան զօր* («օրեցօր») և այլն:

գ) Ձևի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը: Դրանցից են՝ *ակամայ // յակամայ, այլ ընդ այլոյ* («զանազան ձևով»), *անձամբ անձին* («ինքն իրեն, ինքն իր

կողմից»), *առաւելապէս, առնաբար // առնապէս* («տղամարդավարի, տղամարդու պես, քաջաբար»), *արագ, արագ արագ, աh ընդ աh* («վախվխելով»), *արմատաքի* («արմատով, արմատից»), *աքացի* («ոտքով, քացով»), *բերանացի* («բերանով, բանավոր»), *բռնի* («բռով»), *բռնցի* («բռով»), *գլխիվայր, գլխովին // ի գլխովին, դիւրաւ // դիւրեաւ* («հեշտորեն»), *զուր // ի զուր, իւրովի // իւրովին, լռելեայն, խառն ի խուռն, խիտ առ խիտ, կաղ ի կաղ // կաղ ի կաղս* («կաղալով»), *կեղծս ի կեղծս* («կեղծ, շինծու ձևով»), *կենդանւոյն* («ողջ-ողջ»), *կերպս կերպս // ի կերպս կերպս* («զանազան ձևերով»), *հազիւ, հազիւ հազիւ, ի հարկէ // հարկաւ* («բռնի կերպով, ակամա»), *ձեռն ի ձեռն* («ձեռքով»), *ճեպ ի ճեպոյ* («շտապելով»), *յանգէտս* («չիմանալով»), *յանպատրաստից, յանզգաստից // յանզգաստուց* («վայրիվերո»), *տարապարտուց // ի տարապարտուց* («իզուր տեղը, իզուր»), *փոյթ ի փոյթոյ* («շտապելով, հապճեպորեն») և այլն:

դ) Չափ ու աստիճանի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման չափը, աստիճանը: Դրանցից են՝ *առաւել, բազում անգամ, զամ քան զգամ* («քիչ-քիչ»), *զամնու զամնու* («շատ անգամ»), *երկիցս* («երկու անգամ»), *երիցս* («երեք անգամ»), *կարի, կրկին, կրկնակի, հազ քան հազ* («քիչ-քիչ»), *հաստարակ առ հաստարակ* («հավասար չափով»), *հնգիցս* («հինգ անգամ»), *յաճախ, յոլովակի // յոլով անգամ* («շատ անգամ»), *յոյժ, շատ, չորիցս* («չորս անգամ»), *սակաւ սակաւ // առ սակաւ սակաւ // ըստ սակաւ սակաւ, սաստիկ, ի սպառ, ստէպ, ստէպ ստէպ, վերստին // ի վերստին* և այլն:

**Ընթերցանություն 77:** «Ապա դէտակն ի վեր ամբառնայր[1] Մուշկան Նիսալաւուրտ, քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիականցն իբրև զքարակոյտս դերբկաց

երևէին[2]: Զայն իբրև ետես Մուշկան Նիսալաւուրտ, մնայր գա-զանացն Արտաշրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի ձայն մեծ զալարափողոցն զիւր գունդսն ստիպէ, և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր: Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւնն: Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց» (*Եղիշէ*, էջ 117-118):

1. *Դէտակն ի վեր ամբառնայր* - աչքերը վեր բարձրացրեց:

2. *Իբրև զքարակոյտս դերբկաց երևէին* - խորդուբորդ քարակույտերի էին նմանվում:

**Վարժություն 145:** Հետևյալ նախադասություններում գտնել մակբայները, որոշել դրանց բնույթը: Եւ զոք ի կարաւանէ անտի ոչ թողին տեսանել (*Եղիշէ*, էջ 160): Բողոքէին ձեզ հանապազօր, թէ սուտ են պաշտամունքդ ձեր (*Փարպ.*, էջ 81): Եւ չտայի հանգչել, մինչև այսրէն յիս հանէի (*ն. տ.*, էջ 85):

**Վարժություն 146:** Դասդասել հետևյալ մակբայները. *ի մօտոյստ, ամարայնի, այգուն, ի վաղիւ անդր, ցարդ, ընդ վայր, վարկպարազի, գլխովին, առնապէս, յառաջ, երկնուստ, կաղ ի կաղ, յաճախ, մերթ ընդ մերթ, այսր անդր, զճանապարհայն:*

**Առաջադրանք 149:** Տեղի, ժամանակի և ձևի մակբայներով կազմել մեկական նախադասություն:

**Առաջադրանք 150:** Կարդալ «Ընթերցանություն 77»-ը, առանձնացնել մակբայները և որոշել նրանց բնույթը:

**Հարցեր 47:** ա) Ի՞նչ են ցույց տալիս մակբայները և ինչպե՞ս են բաշխվում:

բ) Որո՞նք են տեղի մակբայները:

գ) Որո՞նք են ժամանակի և ձևի մակբայները:

դ) Որո՞նք են չափ ու աստիճանի մակբայները:

## բ) Մակբայների կազմությունը

**§ 164.** Գրաբարում մակբայներն աչքի են ընկնում նաև իրենց կազմությամբ: Ըստ կազմության մակբայները լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ են արմատական և հոլովաձևերից առաջացած (քարացած) մակբայները, բաղադրյալ են ածանցավոր, նախդրավոր, նախադրություններով և բառակապակցություններով առաջացած մակբայները:

**§ 165.** ա) Պարզ (արմատական) մակբայները համեմատաբար քիչ են՝ *այժմ, անդ, աստ, արդ, երբ, երեկ, զուր, միշտ, նախ, շատ, շուտ, վաղ* և այլն:

բ) Զանազան հոլովաձևերից քարացումով գրաբարին են ավանդվել մի շարք մակբայներ:

1) Սեռականով՝ *այգուն // այգոյն, այսր, այդր, գիշերի // գիշերւոյն* («գիշերը, գիշերով, գիշերանց»), *զամու միոջ* («մի անգամ»), *հերու* («անցյալ տարի»), *ուր* և այլն:

2) Հայցականով՝ *բազումս, զայս օրինակ* («այսպես»), *զոր օրինակ* («ինչպես օրինակ»), *զօր հանապազ* («ամեն օր»), *թեթեւ* («հեշտությամբ»), *հզօրագոյնս* («ավելի ուժեղ կերպով»), *հետիոտս* («ոտքով») և այլն:

3) Բացառականով՝ ի բնէ («սկզբից»), ի մօտոյ, յանպատրաստից («հանկարծ»), *ի մերկուց* («մերկ կերպով»), *յանձնէ, այլուստ, ի բացուստ* («բացեիբաց»), *աստէն, այսրէն, անդրէն* և այլն:

4) Գործիականով՝ *բարեաւ, հազիւ, ողջամբ, ճեպով, ստիպաւ // ստիպով, ճշդիւ, տակաւ, խնամով* և այլն:

**§ 166.** Բաղադրյալ մակբայները սովորաբար երկու կարգի են՝ բաղադրված այս կամ այնածանցով, այլև նախդրով կամ նախադրությամբ

ա) Ածանցավորները կազմվում են համապատասխան *-բար, -պէս, -օրէն, -ակի, -անակի, -ոյն, -այն, -ի, -ցի, -իցս, -եք (էք)* և այլն մակբայակերտ ածանցներով՝ *առնաբար, գազանաբար, առիւծաբար, առնապէս, առաւելապէս, յանկարծօրէն, վաղվաղակի, թեթևակի, շուրջանակի, փութանակի, իսկոյն, միահաղոյն, առժամայն, վաղորդայն, բռնի, կարի, ճրի, բռնցի, բերանացի, արմատաքի, երկիցս, չորիցս, երբեք (երբէք), ուստեք, ուրեք* և այլն:

բ) Նախդրավոր են բուն նադիրներով կազմվածները, որոնք, ըստ այդմ, մի քանի տեսակ են:

1) *Ի* նախդրով. *յանզէտս, կաղ ի կաղ, մօտ ի մօտ, ճեպ ի ճեպոյ, փոյթ ի փութոյ* և այլն:

2) *Առ* նախդրով. *առ ժամանակ կամ առ ժամանակ մի, առ օրին, խիտ առ խիտ, մօտ առ մօտ* և այլն:

3) *Ընդ* նախդրով. *ընդ առաջ* («առջևը»), *ընդ հույլ* («շուտով, իսկույն«), *ընդ հանուր* (դեպի ամեն կողմ), *ետ ընդ ետ* («միանգամից»), *մօտ ընդ մօտ, մերթ ընդ մերթ* և այլն:

4) *Ըստ* նախդրով. *ամ ըստ ամէ, օր ըստ օրէ, մի ըստ միոջէ* և այլն:

5) *Զ* նախդրով. *զճանապարհայն*:

6) *Ց* նախդրով. *ցարդ, ցանկ կամ ցանգ* և այլն:

գ) Նախադրություններով առաջացած մակբայներ են՝ *զեւ քան զեւ* («միշտ»), *զամ քան զզամ, հազ քան զհազ, օր քան զօր, յայսմ հետէ, յայնմ հետէ* և այլն:

դ) Բառակապակցություններով առաջացած մակբայներ են՝ *ամի ամի, անազան ուրեմն, առ ժամանակ մի, երբէք երբէք, ի հերուն հետէ, ի վաղիւ անդր, ցարդ եւս, յոլով անգամ* և այլն:

**Ընթերցանություն 78:** «Բազում ճմերաց հալեցան սառնամանիք. եհաս զարուն, և եկին նորեկ ծիծռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք զարնանայինք յիշատակեցին

զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա: Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով» (*Եղիշէ,* էջ 408):

**Վարժություն 147:** Կազմել նախադասություններ հետևյալ մակբայներով. *օր ըստ օրէ, յոլով անգամ, ի հերուն հետէ, ամ ըստ ամէ:*

**Վարժություն 148:** Հետևյալ մակբայները վերլուծել ըստ կազմության. *ի բացուստ, յառաջ, ամ ըստ ամէ, անագան ուրեմն, վաղիւ, արագ արագ, տարաժամ, ցանկ, ահ ընդ ահ, յոլովակի, աքացի, ընդ վայր:*

**Առաջադրանք 151.** Կարդալ «Ընթերցանություն 78»-ը, առանձնացնել մակբայները, որոշել տեսակը և կազմությունը:

**Առաջադրանք 152.** Վերհիշել մեկ-երկու տեղի, ժամանակի, ձևի մակբայ և կազմել նախադասություններ:

**Հարցեր 48.** ա) Ըստ կազմության քանի՞ տեսակ են լինում մակբայները:

բ) Ինչպիսի՞ տարատեսակներ ունեն բաղադրյալ ածանցավոր մակբայները:

գ) Ի՞նչ ածանցներով են բաղադրվում ածանցավոր մակբայները:

դ) Ի՞նչ կազմություն ունեն բառակապակցությամբ կազմված մակբայները և ինչո՞վ են տարբերվում նախդրով և նախադրությամբ կազմվածներից:

# 8. ՇԱՂԿԱՊ

**§ 167.** Գրաբարում նախադասության անդամները կամ նախադասությունները միմյանց կապվում են ոչ միայն շարահարությամբ, այլև նույնպիսի բնույթ ունեցող առանձին բառերով: Այն բառերը, որոնք միմյանց կապում են նախադասության անդամները կամ նախադասությունները, կոչվում են շաղկապ: Եվ քանի որ գրաբարում ևս նախադասության անդամները, այլև նախադասություններն իրար նկատմամբ գտնվում են համադասական (համարժեք, հավասարազոր, անկախ), իսկ նախադասությունները համադասական (համարժեք, հավասարազոր) և ստորադասական (ոչ համարժեք, անհավասարազոր, կախյալ) շարահյուսական հարաբերության մեջ, ուստի շաղկապներն էլ բաժանվում են երկու տեսակի՝ համադասական և ստորադասական:

**§ 168.** Գրաբարի համադասական շաղկապներն են, *այլ* («այլ, բայց, իսկ»), *այլ և* («այլև»), *այլ ևս* («այլև, էլ»), *բայց* («բայց, սակայն, բացի, այլ, իսկ»), *եթէ* («թե»), *եթէ ... եթէ* («թե ... թե»), *թէ, թէ ... թէ, իսկ, կամ, կամ ... կամ, կամ թէ ... կամ թէ* («կամ ... կամ, կամ թե»), *մանաւանդ, մանաւանդ թէ, նա* («մանավանդ»), *նա թէ* («մանավանդ թե, նամանավանդ»), *ոչ եթէ, ոչ թէ...այլ* («ոչ թե ... այլ»), *սակայն // այլ սակայն // բայց սակայն* («և, նաև, էլ»), *և ... և* («ևս, էլ»), *ևս* («նաև, ևս») և այլն:

**§ 169.** Ստորադասական շաղկապներն են՝ *այսինքն, այս ինքն է // այս է* («այսինքն») *ապա թէ ոչ, ապա ուրեմն, ապա եթէ // ապա թէ* («ուրեմն, իսկ եթե»), *եթէ* («որ, թե, եթե»), *եթէ ոչ* («եթե ոչ, բայց եթե»), *եթէ ... ապա, զի* («որ, թե, այնպես, որ, որպեսզի, որովհետև»), *թէ* («եթե որ, թե որ»), *թէպէտ // թէպէտ և, թէ և* («թեպետ, թեև»), *թող թէ, իբր զի // իբրև զի // իբրու զի* («որ, այնպես որ, այնքան որ»), *իբրև, յորժամ* («երբ, երբ որ»), *իբր թէ // իբրև թէ* («որ, այնպես որ, այնքան որ), *մանաւանդ զի* («մանավանդ որ»), *մինչ // մինչև // մինչդեռ* («մինչ, մինչդեռ, երբ, քանի դեռ, երբ դեռ, մինչև որ»), *մինչ զի* («այնպես որ, այնքան որ,

մինչև որ»), *որովհետև, որպես զի* («որպեսզի, որ, այնպես որ»), *ուստի, վասն զի* («որովհետև, որպեսզի»), *փոխանակ զի* («այն բանի համար, որ, նրա համար, որ»), *քան, քան եթէ* // *քան թէ, քանզի* («որովհետև») և այլն:

**Ընթերցանություն 79:** «Եւ զկնի վեց ամսոց անցելոց կատարման սրբոյն Սահակայ, յերեքտասանն մեհեկանի և երանելին Մեսրոպ յաշխարհէ փոխեցաւ ի Վաղարշապատ քաղաքի, գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն առ ի նորա վարս տեղի գտանել ոչ կարացին. այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարսիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ» (*Խոր.,* էջ 444):

**Վարժություն 149:** Կազմել նախադասություններ հետևյալ շաղկապներով. *իսկ, մանաւանդ, եթէ, եւ, քան, քանզի, վասն զի:*

**Վարժություն 150:** Դասդասել հետևյալ շաղկապները. *իբրև, զի, քանզի, եթէ, թէ, ոչ եթէ, եթէ ... ապա, մինչդեռ, ապա թէ ոչ, նա թէ:*

**Առաջադրանք 153:** Կարդալ «Ընթերցանություն 79»-ը, առանձնացնել եղած շաղկապները և որոշել տեսակը:

**Առաջադրանք 154:** Վերհիշել երկուական համադասական և ստորադասական շաղկապ, կազմել նախադասություն:

**Հարցեր 49:** ա) Ի՞նչ է շաղկապը:

բ) Քանի՞ տեսակ են շաղկապները, և որո՞նք են դրանք:

# 9. ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

**§ 170.** Գրաբարում կան բառեր, որոնք ոչ թե սերում, այլ եղանգավորում են խոսքը, այսինքն՝ խոսքին հաղորդում են որոշակի եղանակավորում՝ հաստատում, ժխտում, հարցում, կասկած, երկբայություն և այլն: Դրանք եղանակավորող բառեր են և ի տարբերություն մակբայների, որոնք, ինչպես գիտենք, ցույց են տալիս (լայն առումով) հատկանիշի հատկանիշ, նշանակում են նախադասության անդամների և նախադասությունների խոսքային, լայն առումով՝ հաղորդակցական երանգավորում:

**§ 171.** Գրաբարում եղանակավորող բառերը սովորաբար բաժանվում են մի քանի տեսակի:

ա) Հաստատական՝ *այո՛, արդարև, ապաքէն* («իհարկե, իսկապես»), *հաւաստեաւ, յիրաւի և այլն:*

բ) Ժխտական՝ *ո՛չ, մի՛, ամենի՛ն, բնա՛ւ, բա՛ւ* և այլն:

գ) Հարցական՝ ապաքէ՞ն («չէ՞ որ»), *զի՞* («ինչո՞ւ»), *զի՞արդ* («ինչպե՞ս, ինչո՞ւ»), *ընդէ՞ր* («ինչո՞ւ»), *մի՞թէ, ո՞չ* և այլն:

դ) Ցուցական՝ *ահա, ահաւասիկ // աւասիկ, ահաւադիկ // աւադիկ, ահաւանիկ // աւանիկ* և այլն:

ե) Երկբայական՝ *գրեթէ, թերևս, գուցէ, գոգցես* և այլն:

**Ծանոթություն 67:** Ըստ էության եղանակավորող բառի արժեք ունեն *իսկ, եւեթ* վերջահար բառերը:

**Ընթերցանություն 80:** Մի՞թէ պատճառ չարեաց զտէրն պարտ իցէ իմանալ, որ ոչ եհան ինչ ի ծառայէն և շնորհեաց միայն (*Եզնիկ,* էջ 33): Այլ բնաւ իսկ, ասեն, ընդէ՞ր եմոյծ զնոսա ի կռիւ ընդ միմեանս (*ն. տ.,* էջ 54): Բայց գովեմ զքաջ նահատակն իմ և զնիզակաւորն և զամենեսին բոլոր անդամովք համեմատն և ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ, քանզի առոյգ, ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ գոք ունելով իւր զոյգ: Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի ի լինել մարտին նիզակաւ օրինակ իմն որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ տէգ նիզակին, և յամփոփել միւս անգամ

զճեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ զինուն ի դուրս բերէ: Բայց մարտն էր սքանչելի. զի քաջք դիպեալ քաջաց՝ ոչ վաղվաղակի թիկունս ի միմեանց դարձուցանէին. վասն որոյ յեր-կարեալ քարշէր գործ պատերազմին մինչև ի ժամս ճիգս: Իսկ վախճան գործոյն առնէր մահն Աժդահակայ. և այսպիսի դի-պուածս ի բարեբախտութիւն յաւելեալ՝ փառս յաճախէր Տիգ-րանայ (*Խոր.*, էջ 96):

**Վարժություն 151:** Կազմել նախադասություններ հետևյալ եղանակավորող բառերով. *ո՛չ, այո՛, մի՞թէ, թերևս, ընդէ՞ր, ահաւա-սիկ:*

**Վարժություն 152:** Որոշել հետևյալ եղանակավորող բառերի տեսակը. *ապաքէն, ահաւանիկ, գուցէ, ամենևի՛ն, զի՞արդ, զրեթէ, մի՛, բնա՛, յիրաւի, ո՞չ, քա՛, զի՞:*

**Առաջադրանք 155:** Վերհիշել մեկ-երկու եղանակավորող բառ և կազմել նրանով նախադասություն:

**Առաջադրանք 156:** Վերհիշել ըստ տեսակի՝ մեկական եղանակավորող բառ և կազմել նրանով նախադասություն:

**Հարցեր 50:** ա) Ի՞նչ է եղանակավորումը:
բ) Քանի՞ տեսակ են եղանակավորող բառերը:
գ) Որո՞նք են եղանակավորող բառերը:

# 10. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ **172.** Խոսողի հուզարտահայտչական վերաբերմունքը (ափսոսանք, զարմանք, հիացում, վախ, վիշտ, ուրախություն, ցնծություն և այլն) արտահայտվում է ձայնարկությունների միջոցով: Գրաբարում ձայնարկություններն այնքան էլ շատ չեն: Դրանք ունեն պարզ կազմություն *(ա՜յ, ո՜, օ՜ն)*, այլև տարբեր կարգի բաղադրություն *(եղո՜ւկ, հապա՜, իցի՜ւ, երանի՜ թէ, իցի՜ւ թէ)*:

§ **173.** Գրաբարում հիմնականում գործածվում են հետևյալ ձայնարկությունները. *աղէ՜* («հապա, դե»), *ա՜յ, աւա՜ղ* («ափսոս, վահ»), *բարէ՜, եղո՜ւկ* («ափսոս, ախ, վախ, վայ»), *երանի՛, երանի՛ թէ, իցի՛ւ* («երանի»), *իցի՛ւ թէ* («երանի թե»), *հապա՛, ո՜* («ուր էր թե»), *ո՜վ, ո՛հ, վա՛հ, վա՜յ, օ՜շ* («երանի»), *օ՜շ թէ* («երանի թե») և այլն:

**Ընթերցանություն 81.**

Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է թագաւորաց» (*Մագ.,* ԼԳ, էջ 87):

**Ընթերցանություն 82:** Աղէ՜, տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնորիկ, զորս դուն ընդ ունջ տանէիր *(Բուզ.,* էջ 260): Ա՜յ տիրատեաց, զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո (*ն. տ.,* էջ 36): Ո՜վ բարեպաշտ և հզօր իշխան, թէ և զշուն դարապասիդ քո արածել տայիր, դեռ պարծանս է մեզ, որ ի դրան քում կայաք, թող թէ այծ արածել (*ն. տ.,* էջ 37): Եւ արդ, զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից / Ի կտակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, / Ո՜վ անձն իմ թշուառ, ամենապատկառ / Եւ առ պատասխանիս բանիս անբարբառ... (*Նարեկ.,*

էջ 277): Իսկ դու, ո՜վ անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի (*ն. տ.,* էջ 278):

**Վարժություն 153:** Կազմել նախադասություն հետևյալ ձայ-նարկություններով. *ո՜վ, իցի՜ւ, ա՜յ, աւա՜ղ, ո՜, օ՜չ:*

**Վարժություն 154:** Դասդասել հետևյալ ձայնարկությունները. ո*՜հ, վա՜հ, երանի՜, եղո՜ւկ, օ՜չ, օ՜չ թէ, հապա՜:*

**Առաջադրանք 157:** Կարդալ «Ընթերցանություն 82»-ը և առանձնացնել ձայնարկությունները:

**Հարցեր 51:** Ի՞նչ է ձայնարկությունը:

բ) Ինչպիսի՞ կազմություն ունեն ձայնարկությունները:

# Գ. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

------------------------------------------------------

## 1. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

### ա) Ենթական և ստորոգյալը

**§ 174.** Շարահյուսությունն ամեն մի լեզվի քերականության բաժիններից մեկն է, որն ուսումնասիրում է բառերի կապակցումն իբրև ստորոգում: Ստորոգումը խոսքի նվազագույն միավորն է: Այն գոյանում է բառերի իմաստալից շարահյուսումից և ամենից առաջ իրականանում է նախադասության ձևով: Նախադասությունը շարահյուսության նպատակակետն է, խոսքի շարահյուսական ուսումնասիրման ելակետային ձևը: Լեզվի հնչյուններն և հնչյունական այլ երևույթները, բառերը և բառաձևերը իրացվում են կոնկրետ խոսքի մեջ, առկայանում են շարահյուսորեն, բառակապակցությունների և նախադասությունների տեսքով:

**§ 175.** Գրաբարում նախադասությունն ունի շարահյուսական կառուցվածքի որոշակի առանձնահատկություններ: Դրանք ըստ էության տիպային տարբերություններ են, որոնցով գրաբարն առանձնանում է իր հետագա փուլերից՝ միջին և նոր գրական հայերենից: Այդ առանձնահատկությունները երևան են գալիս պարզ և բարդ նախադասության կառուցվածքի մեջ՝ կապված պարզ նախադասության գլխավոր անդամների և նրանց լրացումների, բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների հարաբերակցման, երկու և ավելի նախադասությունների շարահյուսման հետ:

**§ 176.** Նախադասության ամենանախնական ձևը պարզ նախադասությունն է: Այն բաղկացած է լինում ամենից առաջ

ենթակայից և ստորոգյալից: Եվ դրանք կարող են հանդես գալ ոչ միայն միասին, այլև առանձին-առանձին: Դրանք ունենում են իրենց լրացումները՝ վերցված ոչ թե իրարից անկախ, այլ միաժամանակ և փոխկապակցված: Յուրաքանչյուր նախադասության համար կարևոր է ստորոգումը, որն արտահայտվում է որևէ ստորոգյալով կամ առանց ստորոգյալի (վերառյալ ձևով): Ստորոգյալին առնչակից է ենթական: Վերջինս գործողության կատարողն է («գործիչը»), իսկ ստորոգյալը՝ կատարումը (գործողությունը): Ենթական և ստորոգյալը նախադասության գլխավոր անդամներն են, որոնք ունենում են իրենց լրացումները: Այսպես, գրաբարում ևս ենթական, առհասարակ՝ անունը (այլ կերպ՝ նախադասության գոյականական անդամը) ունենում է իր, իսկ ստորոգյալը, առհասարակ՝ բայը (այլ կերպ՝ նախադասության բայական անդամը)՝ իր լրացումները: Վերջիններս, ըստ անհրաժեշտության և պատշաճության, կարող են առնել իրենց լրացումները: Գլխավոր անդամների հարաբերությամբ այդ լրացումները (ոչ գլխավոր) երկրորդական անդամներ են:

Գրաբարում նախադասության գլխավոր և երկրորդական անդամների շարահյուսական առնչությունները երեք կարգի են՝ համաձայնություն, շարադասություն և խնդրառություն: Վերջիններս, տվյալ դեպքում, ընդհանուր դրսևորումն ու իմաստավորումն ունեն գրաբարում, ինչպես նաև հայերենի հետագա դրսևորումներում: Դրանք կարևոր լծակներ են գրաբարի շարահյուսական կառուցվածքի բնութագրման և նկարագրության համար:

**§ 177.** Ենթական գրաբարում արտահայտվում է գոյականով և որպես այդպիսին դիտվող որևէ միավորով: Օրինակ՝ *Արայ* սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն (*Խոր.*, էջ 60): Եւ մինչդեռ *նա* յայնմ գործ զմայրենօքն տնկելովք էր, յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով (*Բուզ.*, էջ 32): *Ճերմակաձին* զինի արբցէ (*ն. տ.*, էջ 290): Զի *չէրն* չէին վասն չէին յաշտ առնէր (*Եզնիկ*, էջ 91) և այլն:

Ստորոգյալը հանդես է գալիս միմիայն բայով: Օրինակ՝ Եւ զօրավարն Վաչէ *կատարէր* վաղվաղակի զասացեալսն արքայի

(*Բուզ.,* էջ 32): Եւ մինչ դեռ նա զայս *խորհէր,* Որմիզդ եւ Արիմն *յղեցան* յարգանդի մօր իւրեանց (*Եզնիկ*, էջ 79):

ա) Գրաբարում ենթական և ստորոգյալը համաձայնում են թվով, այսինքն՝ եզակի ենթական առնում է եզակի ստորոգյալ, իսկ հոգնակի և բազմակի ենթական՝ հոգնակի: Օրինակ՝ Ձի *նա* երկու արմատս բարւոյ և չարի *սաէ* (*Եզնիկ*, էջ 81): Եւ Երերայ *ծնան* երկու *որդիք* (*Գիրք ծննդ.,* էջ 191): Ապա հետ այսորիկ *առաքեցին Զարմանդուխտ տիկինն Հայոց* և *սպարապետն Մանուէլ* զԳարջոյլ Մաղխազ (*Բուզ.,* էջ 372): Եւ սպարապետն զօրավարն Հայոց *Մանուէլ նուաճեաց* զաշխարհս ... զնախարարսն Հայոց առ ինքն *ժողովէր* (*ն. տ.):*

Ի տարբերություն բազմակի ստորոգյալների՝ գրաբարում նկատելի են դիմավոր բայով ավելադրությունները: Դրանք խոսքին հաղորդում են ոճական ակնհայտ հագեցվածություն: Օրինակ՝ Էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ միաբանեաց զզօրս Պարսից, որք *լքին, խոտեցին, մերժեցին, անարգեցին* զտէրութիւնն Պարթեաց (*Ագաթ*., էջ 24): *Հասանէին, հարկանէին, սատակէին* զօրսն Ալանացն և Մազքթացն և Հոնացն և զայլոց ազգացն (*Բուզ.,* էջ 30):

բ) Ենթական դրվում է ստորոգյալից և՛ առաջ, և՛ հետո. ի տարբերություն ժամանակակից հայերենի՝ հաճախ է հանդիպում ստորոգյալի առաջադաս կիրառությունը: Օրինակ՝ Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ *խնդրեաց* իւր կին կայսրն *Դիոկղետիանոս* (*Ագաթ.,* էջ 84): Յայնժամ հրաման *տայ Արտաշէս*՝ զօր յարուցեալ յարևելից և ի հիւսիսոյ բազում յոյժ (*Խոր.,* էջ 138): *Անհատքն* ամենայն իրօք *հաղորդին* միմեանց՝ կամ ըստ նոյնին, կամ ըստ նմանին (*Դաւիթ Անյաղթ*, էջ 124):

գ) Գրաբարում, ինչպես գիտենք, բայի խոնարհման ձևերի կողքին չի արտահայտված դեմքը, այլ բայի տվյալ ձևից ըմբռնվում է նրա դեմքը՝ *գրեմ* «(ես) գրում եմ»*, գրես* «(դու) գրում ես», *գրէ* «(նա) գրում է», *գրեմք* «(մենք) գրում ենք», *գրէք* «(դուք) գրում եք»*, գրեն* «(նրանք) գրում են» և այլն: Այս հանգամանքն իր արտահայտությունն է գտնում ենթակայի շարահյուսական կիրառության մեջ: Ըստ այդմ հաճախ ենթական զեղչված է և

ըմբռնվում է ստորոգյալի (բայի) դեմքից և թվից: Գրաբարի բայը (ստորոգյալը) ներունակ ձևով արտահայտում է ենթական: Օրինակ՝ Յարմարեցեալ զամենայն կարգեցից քեզ ի գիրսս յայտսոիկ զազգիս մերոյ (*Խոր.*, էջ 70): Եկայք, շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ (*Գիրք ծննդ.*, էջ 192):

դ) Ենթական արտահայտվում է ոչ միայն ուղղական, այլև սեռական հոլովով: Այդ դեպքում նրա ստորոգյալն առնված է լինում անցյալ դերբայով, ըստ որում այդ դերբայը զուգակից է դիմավոր բայով ստորոգյալին: Ստացվում է այնպես, որ միևնույն նախադասության մեջ միևնույն ենթական ունեցող երկու ստորոգյալներից մեկը վերցվում է անցյալ դերբայով, իսկ մյուսը՝ դիմավոր ձևով: Նման կառուցվածքի ենթական ու ստորոգյալը թարգմանվում են ժամանակակից հայերեն ուղղական հոլովով և անորոշի գործիական հոլովով կամ դիմավոր բայաձևով: Օրինակ՝ Եւ *տեսեալ Հայկին* զՏիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս՝ *կարգէ* զԱրամանեակն երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդւոց իւրոց ի ձախմէ (*Խոր.*, էջ 36): Եւ *հասեալ* երկոցունց կողմանց *սկայիցն* ի միմեանս՝ ահագին դղրդմունս ի վերայ երկրի *առնէին* շահատակելով, և ահս պակուցանողս տարազուք յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք *արկանէին* (*ն. տ.*, էջ 36): Եւ *ասացեալ* զայս ամենայն բանս *զօրավարին* Հայոց Վահանայ Մամիկոնենի, *բաժանեալ* որքան իսկ էին արք զօրուն ընդ նմա՝ *տայ* իւրաքանչիւր զօրագլխացն, զորոց *կարծէր*, եթէ ի դէպ է և պատշաճս (*Փարպ.*, էջ 151):

ե) Ենթական նախադասության ոչ միայն անմիջական, այլև կողմնակի անդամ է լինում: Նման ենթական ունի անորոշ դերբայով ստորոգյալ, և ողջ կապակցությունը այլ բան չէ, քան գլխավոր նախադասությանը հարող դերբայական դարձված: Վերջինս ժամանակակից հայերեն թարգմանվում է իբրև երկրորդական նախադասություն՝ ենթական ուղղականով, իսկ անորոշը՝ դիմավոր բայաձևով: Օրինակ՝ Զորմէ ասէին ի հինսն մեր, որք բամբռամբն երգէին, *լինել սմա* և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր (Խոր., էջ 194): Յայն տեղի հասուցին, մինչև

*հարցանել նմա* (*Եղիշէ*, էջ 139): Այնպէս մօտագոյնս մերձենայր, մինչև *ճանաչել նմա* զերիս ի նոցանէ (*ն. տ.*, էջ 150):

**Ընթերցանություն 83**. «Յետ բառնալոյ թագաւորութեանն Հա-յոց ի տանէն Արշակունեաց՝ ապա մարզպանք Պարսից կալեալ տիրէին աշխարհիս. և գլխաւորք Հայոց մեծաց ամրանային ի քարանձաւս ամրաշէն բերդիցս, ըստ տեղիս տեղիս և ըստ աշ-խարհս աշխարհս. և պարսկական բռնութիւնն զօրացեալ աճէր, և հարկապահանջք գունդքն եւ և ելս առնէին սաստիկ խռշտան-գանօք:

Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծ-րունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունոյ, և խորհեցաւ զտիրելն Հայոց, և ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից, և յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց, և խնդրեալ յարքայէ զիշխանութիւն Հայոց: Եւ նորա ըստ ցանկութեան սնոտի փառամոլութեանն կատարեալ զխնդիրն. և դարձեալ դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով մարզպան զՎնդոյ Պարսից մոգպետ» (*Թովմ. Արծ.*, էջ 124):

**Ընթերցանություն 84**. «Զարմանք մեծասքանչ են, եթէ զիարդ անդստին ի մի և ի նոյն խոնաւութենէ որք, զոր ըմպեն, ի զինի դարձուցանէ, և ձիթենին՝ յիւղ և ի միւսում ծառն շրջի ջուրն ի քաղցրութիւն, և ի միւսումն ջուր դառնայ ի պարարտութիւն: Եւ ի քաղցր պտուղս ծառոց ոչ մի համ քաղցրութեան, այլ պէսպէս, այլազգի այն քաղցրութիւն է, որ յորթոյն լինի, և այլազգի այն, որ ի խնձորոյն կամ յարմաւոյն: Եւ այսու հարցուածով կամիմ, զի ցուցանիցես զսէրն, զոր ունիցիս փութով առ ի լուրն, զոր լսիցես, զարմանալ սքանչանալ ընդ իրսն, զոր լսիցես: Եկ արդ՝ միտ դիր զարմանալով՝ զիա՞րդ նոյն ջուրքն զմի կերպարանս ունին մինչ չև ուրեք հասեալ իցեն, և յորժամ մտանեն ի տունկսն և առնին ի նոցանէ զճաշակս քաղցրութեան և ի սկզբան երևելոյ պտղոյն թթու թթուք, դաժանք և փոքրթահամք են, զի յաւշինդր և ի սակամնոիայ փայտի ճաշակ դառնութեան գտանի, և կաղնեաց և դաւարայից

պտուղ՝ ճաշակս գխտորահամս ունին, և ի պնէկնօջն և ընկուզոջ քաղցրաճաշակս պարարտութեան իւղոյ են» *(Բարս.,* էջ 158):

**Վարժություն 155:** Գտնել հետևյալ նախադասությունների ենթական և ստորոգյալը, որոշել նրանց թիվը, հոլովը, դեմքը, եղանակը և ժամանակը.

Ձմեռն էանց: Անձրևք անցին և գնացեալ մեկնեցան: Ծաղիկք երևեցան յերկրի մերում: Ժամանակ եհաս յատանելոյ: Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում: Թզենի արձակեաց զբողբոջ իւր: Որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց:

**Վարժություն 156:** Կարդալ «Ընթերցանություն 83»-ը, առանձնացնել ենթակաները և վերլուծել ձևաբանորեն:

**Առաջադրանք 158:** Կարդալ «Ընթերցանություն 84»-ը, առանձնացնել ստորոգյալները և վերլուծել:

**Առաջադրանք 159:** Կազմել նախադասություններ հետևյալ բառերով՝ ենթակայով և ստորոգյալով. *հայր, ծաղիկ, տուն, գարուն, տղայ, սիրել, է, ընթեռնուլ, տեսանել, հասանել:*

**Հարցեր 52:** ա) Ի՞նչ է նախադասությունը:

բ) Որո՞նք են նախադասության գլխավոր անդամները:

գ) Ինչո՞վ է արտահայտվում ենթական:

դ) Ինչպիսի՞ն է ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:

ե) Ինչպիսի՞ն է ենթակայի և ստորոգյալի շարադասությունը:

## բ) Անվան լրացումները

**§ 178.** Գրաբարում անվան լրացումներն են որոշիչը, հատկացուցիչը և բացահայտիչը: Դրանք այս կամ այն կերպ պարզաբանում են ենթակայի (և առհասարակ նախադասության գոյականական անդամի) ինքնությունը:

ա) Իբրև որոշիչ առաջին հերթին հանդես են գալիս ածականը և թվականը: Դրանք գրաբարում դրվում են որոշյալից և՛ առաջ, և՛

հետո: Տարածված է որոշչի նախադաս գործածությունը: Օրինակ՝ Քաղցր է ինձ ասել և յաղագս *գեղեցիկ* դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ *գեղեցիկ* և *չքնաղ* յօրինուածովք (*Խոր.*, էջ 196): Այր էր սա *մեծ* և *բարձր*, *ցանկալի* հասակաւ և *վայելուչ* գեղով (*Բուզ.*, էջ 108): Դարձեալ առ այսպիսի *ճշմարիտ* ասացածս *անպատշաճ* հարցուածս մատուցանեն (*Եզնիկ*, էջ 14):

Որոշիչը և որոշյալը համաձայնում են թվով և հոլովով: Ստացվում է որոշիչ-որոշյալի կապակցություն, որը հոլովվում է: Նախադաս բազմավանկ որոշիչները չեն հոլովվում (հմմտ. ուղղ.՝ *հարազատ* որդի - սեռ.՝ *հարազատ* որդւոյ), իսկ միավանկները կարող են հոլովվել (հմմտ. ուղղ.՝ *մեծ* թագաւոր - սեռ.՝ *մեծի* թագաւորի): Հետադաս ածական որոշիչները, անկախ միավանկ կամ բազմավանկ լինելուց, հոլովվում են (հմմտ. ուղղ.՝ որդի *հարազատ* - սեռ.՝ որդւոյ *հարազատի*, ուղղ.՝ թագաւոր *մեծ* - թագաւորի *մեծի*):

*Մեկ, երկու, երեք, չորք* թվականները բոլոր դեպքերում հոլովվում են (հմմտ. ուղղ.՝ կին *մի,* սեռ.՝ կնոջ *միոյ*, ուղղ.՝ *մի* կին, սեռ.՝ *միոյ* կնոջ, ուղղ.՝ *չորք* տունք, սեռ.՝ *չորից* տանց, ուղղ.՝ տունք *չորք* – սեռ.՝ տանց *չորից* և այլն):

Սկսած *հինգ* թվականից՝ նախադաս դիրքում եզակի գոյականի հետ չեն հոլովվում (հմմտ. ուղղ.՝ *հինգ* տուն – սեռ.՝ *հինգ* տան), իսկ հոգնակի գոյականի հետ կարող են և՛ հոլովվել, և՛ չհոլովվել:

Դասական թվականները գործածվում են և՛ նախադաս, և՛ հետադաս: Ընդ որում թվական որոշիչը սովորաբար հոլովվում է հետադաս դիրքում (հմմտ*. ուղղ.՝ երրորդ* օր – սեռ.՝ *երրորդ* աւուր):

Անձներական թվականները գործածվում են նախադաս, ընդ սմին համաձայնում են թվով և հոլովով (հմմտ. ուղղ.՝ *հնգեքին* կողմանք // *հնգեքեան* կողմանք – սեռ.՝ *հնգեցուն* կողմանց // *հնգեցունց* կողմանց):

Ածականը հաճախ ստանում է *-ութիւն* ածանցը, վերածվում է գոյականի, որը սովորաբար դրվում է սեռական հոլովով և գործածվում ածականի իմաստով. այդ երևույթը կոչվում է վերա-

ցականը թանձրացականի փոխարեն, այսինքն՝ գործածվում է վերացական, -*ութիւն*-ով գոյական կոնկրետ ածականի փոխարեն: Այդ երևույթը գրաբարի ոճական հնարներից մեկն է, հավանաբար գալիս է նախագրաբարյան շրջանից՝ իբրև հնդեվրոպական ժառանգություն, երկրորդաբար՝ նմանակում հունարենի նույնպիսի երևույթի:

Օրինակ՝ Բնակեցեր, ասէ, ի մէջ *ցրտութեան սառնամանեաց* (*Խոր.,* էջ 42): Վասն այնորիկ յանձն իւր տարուբերէր, եթէ յո՞ թափեցից *զդառնութիւն թիւնից*, կամ ո՞ւր բացատրեցից *զբազմութիւն նետիցն* (*Եղիշէ*, էջ 7):

բ) Հատկացուցիչը ցույց է տալիս պատկանելություն, սերում, վերաբերություն, դրվում է հատկացյալից և՛ առաջ, և՛ հետո: Գրաբարում սովորականը հատկացուցչի հետադաս կիրառությունն է: Ստացական դերանուն հատկացուցիչը թվով և հոլովով համաձայնում է հատկացյալին:

Օրինակ՝ Ամենեցուն մարմինք եղեն գէշ *թռչնոց* և կերակուր *գազանաց* (*Եղիշէ,* էջ 124): Տեսիլ նշաւակի եղև ամենայն տոհմին *իւրոյ* և *գաւառի* մարդկան (*Փարպ.,* էջ 41): Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութեամբ ըստ հրամանի *պատուիրանին տեառն իւրոյ*, քօքափէր զփոշի *ոտից իւրոց* ի վերայ նոցա (*Բուզ.,* էջ 21):

**Ծանոթություն 68:** Հարցական-հարաբերական դերանուններով ենթական, որոշիչը և հատկացուցիչը, իբրև կանոն, նախադաս են:

Օրինակ՝ *Որք* սնան զառաջեաւ թագաւորին Հայոց (*Բուզ.,* էջ 10): *Ով* զիտէ, կարեմք հասանել ի հունն (Փարպ., էջ 122): Դու *ո՞վ* ես ընդ մեզ (*Եղիշէ*, էջ 160):

գ) Բացահայտիչը ցույց է տալիս բացահայտյալի ինչ լինելը: Գրաբարում բացահայտիչը դրվում է բացահայտյալից հետո:

Օրինակ՝ Եւ Սարա *կին Աբրամու* ոչ ծնանէր նմա *(Գիրք ծննդ.,* էջ 212): Եւ Մելքիսեդեկ *արքայ Շաղեմայ* եհան հաց և գինի (*ն. տ.,* էջ 206):

Բացահայտիչը թվով և հոլովով համաձայնում է իր բացահայտյալին:

Օրինակ՝ Որ էր մերձաւոր Դանիէլի աստուոյ *եպիսկոպոսի* (*Կոր.,* էջ 44)։ Փոխանորդէ զՏիրան եղբայր իւր Տիգրան *վերջին* թագաւորեալ Հայոց ի քսաներորդի և ի չորրորդի ամի Պերոզի Պարսից *արքայի* (Խոր., էջ 238)։

**Ընթերցանություն 85.** «Եկեսցուք և յերկրորդ գլուխն և ասասցուք զպատճառս քանիութեան տեսակաց ուսումնականին։ Եւ պարտ է գիտել, թէ ուսումնականն քանակիւն գոյանայ և այսոքիւք կահաւորի. կամ թուականաւն, որպէս ինքն իսկ թուականն, որ է քանակ, և կամ բաղազանութեամբ հնչմանց, որպէս երաժշտականն, քանզի և այս քանակ է. քանզի խնդրէ, թէ ո՞ր է, որ զերկպատիկ բան ունի, և ո՞ր է, որ զկիսաբոլոր, և ո՞ր զմակեռակն, և ո՞ր զմակքառակն։ Եւ կամ տարակացութեամբ երկրի, որպէս երկրաչափականն, քանզի և այս քանակ է։ Եւ կամ շարժմամբ երկնային մարմնոյն, որպէս աստեղաբաշխականն, քանզի և այս քանակ է. քանզի ունին շարժմունք տարակացութիւնք, ըստ որոց շարժին» (*Դաւիթ Անյաղթ,* էջ 89)։

**Ընթերցանություն 86.** «Այսպիսի անհաւատ և դանդաչանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ ամենևին բնաւ առնել պատասխանի. զի բաւական էր իւրեանց իսկ անմտութիւնն յանդիմանել զնոսա անդստին ի նոցին բանից, որ ընդ միմեանս կռուին, և ի միմեանց հակառակ են։ Բայց քանզի այսու իմն մեծարոյ երևին առաջնորդք քէշին իւրեանց հնազանդեցելոցն, և խեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն զնոսա ի խորխորատ, հարկ է տալ պատասխանի, ի ցուցանել՝ թէ ոչ ինչ աւելի քան զոր Մանի, զոր ինքեանք մորթեցին, ասեն» (*Եզնիկ,* էջ 81)։

**Վարժություն 157:** Թարգմանել գրաբար.

Ոմն Անդովկ ուներ մի աղջիկ։ Նա շատ գեղեցիկ է և բարակ հասակով։ Ես ունեմ շատ բարեկամներ և հավատարիմ ընկերներ։ Թագավորը շատ ծառաներ ունի, իշխանները սիրում են իրենց զորականներին։ Քաղաքում լուր է տարածվել գողության մասին։

**Առաջադրանք 160:** Թարգմանել հետևյալ կապակցություն-ները. *այր իմաստուն և խոհեմ, թռչնոց երկնից, կերակրոյ քահա-նայից, որդիք թագաւորաց, սահման քաջաց զէն իւրեանց, աս-տեղք երկնից, երանելի Մեսրոպ որդի Վարդանայ, գիրք Մովսեսի Խորենացւոյ, առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի, Հազկերտի Երկրորդի արքայի Պարսից:*

**Առաջադրանք 161:** Կարդալ «Ընթերցանություն 85»-ը, առանձնացնել անվան լրացումները իրենց լրացյալների հետ և վերլուծել:

**Առաջադրանք 162:** Կարդալ «Ընթերցանություն 86»-ը, առանձնացնել անվան լրացումներն իրենց լրացյալների հետ և վերլուծել:

**Առաջադրանք 163:** Կազմել երեքական որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի և բացահայտիչ-բացահայտյալի կապակցություն:

**Հարցեր 53:** ա) Որո՞նք են անվան լրացումները:

բ) Ինչպիսի՞ն է որոշչի շարահյուսական արտահայտությունը:

գ) Ինչպիսի՞ դրսևորում ունի հատկացուցիչը:

դ) Ինչպե՞ս է կազմվում բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունը:

ե) Համաձայնության և շարադասության ի՞նչ տարբերություններ ունեն անվան լրացումները:

## գ) Բայի լրացումները

**§ 179.** Գրաբարում բայի լրացումներ են խնդիրները և պարագաները: Դրանք այս կամ այն ձևով պարզաբանում են գործողության այլևայլ հանգամանքները: Բայի լրացումներն իրենց լրացյալների հետ շարահյուսորեն առնչվում են խնդրառությամբ: Այս առումով կարևոր է բայի սեռի, բայիմաստի և հոլովելի բառերի շարահյուսական գործածության իմացությունը: Դա որոշակիորեն նկատելի է բայի լրացումների մեջ:

### 1) Խնդիրներ

**§ 180.** Խնդիրները երկու տեսակ են՝ ուղիղ և անուղղակի: Հին քերականություններում դրանք կոչվում էին «խնդիր սեռի» և «խնդիր բնության»: Նման առանձնացումը, բնականաբար, պայմանավորված է բայի սեռով և բայիմաստով:

ա) Ուղիղ խնդիրը ներգործական և, այսպես կոչված, հասարակ սեռի («միաժամանակ ներգործական և կրավորական նշանակող») բայերի խնդիրն է: Այն ենթակայի կատարած գործողության կրողն է, արտահայտվում է հայցական հոլովով:

Օրինակ՝ Եմուտ Կային առ կին իւր, և յղացաւ և ծնաւ *զԵնոք* (*Գիրք ծննդ.,* էջ 162): Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ *զդիւթսն* և *զաստեղագէտսն* և *քաղդէայսն* (*Բուզ.,* էջ 254): Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր քանդէր *զերկիրն* Պարսից թագաւորութեանն և *զաշխարհն* Ասորեստանի (*Ագաթ.,* էջ 71):

Հայցականով դրվում են նաև տվյալ բայի արմատից կազմված կամ նրան իմաստով մոտ լրացումները, որոնք ժամանակակից հայերեն թարգմանվում են գործիական հոլովով:

Օրինակ՝ *Կոծեսցին* ի վերայ նորա *կոծ* իբրև ի վերայ սիրելւոյ և *աշխարեսցեն* աշխար իբրև ի վերայ անդրանկան *(Զաք.,* ԺԲ, 10):

«Անորոշը հայցականի հետ» կառույցի ուղիղ խնդիրը դրվում է ասացական, իմացական, զգացական բայերի դեպքում. այդ

կառույցը համարժեք է բարդ նախադասության, որտեղ ուղիղ խնդիրը վերածվում է ենթակայի:

Օրինակ՝ Կամիմ *զձեզ* իմաստունս *լինել* ի բարիս և անմեղս ի չարիս (*Հռոմ.,* ԺԶ, 19):

Ուղիղ խնդիրը երբեմն լինում է նախադասության կողմնակի անդամ:

Օրինակ՝ *Զաստուած* ի խաչ ելեալ ի մարդկանէ քարոզեն (*Եղիշէ,* էջ 27): Յամուսնութենէ օրինացն աստուծոյ և հիւղեայ ասեն արարեալ զամենայն *արարածս* (*Եզնիկ,* էջ 175):

բ) Անուղղակի խնդիրները բավականին շատ են: Դրանք այն հոլովված բառերն են, որոնք խնդրառությամբ առնչվում են այլ բառերի հետ: Դրանցից հիմնական են հանգման, անջատման, միջոցի, ներգործող և վերաբերության խնդիրները:

1) Հանգման անուղղակի խնդիրը դրվում է տրականով, ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է ենթակայի գործողությունը:

Օրինակ՝ Ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր թագաւորն Յունաց *թագաւորին* Պարսից (*Բուզ.,* էջ 30): Եւ յղեաց պարգևս բազումս *Վահանայ*, և թուղթս՝ զայս ինչ (*Յովհ. Մամ.*, էջ 30):

Տրականով են դրվում նաև միադիմի բայերի հետ ենթակա հանդիսացող բառերը:

Օրինակ՝ Պարտ է *քեզ* փոյթ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն (*Եղիշէ,* էջ 61): Պատշաճ էր և *ձեզ* խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն (*Բուզ.,* էջ 35):

Դերբայական դարձվածի ենթական ևս դրվում է տրականով:

Օրինակ՝ Ոչ կամիմք թագաւորել *դմա* ի վերայ մեր (*Ղուկ.,* ԺԹ, 14): Եւ ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար *վիմացն* (*Խոր.,* էջ 198):

2) Անջատման խնդիրը դրվում է բացառականով, ցույց է տալիս այն առարկան, որից հեռանում, անջատվում է որևէ առարկա:

Օրինակ՝ Իբրև ոչ զի զմարմինս իւրեանց *ի տանջանաց* երկբակոխաց *ի զրպարտութենէս* ապրեցուցեն (*Ագաթ.*, էջ 90): Այլ

թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ այն ինչ ծնեալ էր *ի մօրէ* իւրմէ (*Բուզ.,* էջ 328):

3) Միջոցի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում է գործողությունը: Այն հիմնականում արտահայտվում է գործիական հոլովով:

Օրինակ՝ Եւ *կիսագիր* կարգին մինչեւ ցմիջոց գրոյն՝ և առաւելագոյն էր *ոսկւով* և այլն *կարմրադեղով* էր (*Փարպ.,* էջ 30): Ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագեմք զբազում հարուածս (*Եղիշէ,* էջ 6):

4) Ներգործող խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի կատարած գործողությունն անցնում է ենթակային: Այս դեպքում գործ ունենք կրավորաձև կառուցվածքի նախադասության հետ, որն, անշուշտ, շրջումն է ներգործաձև կառուցվածքով նախադասության: Այն սովորաբար դրվում է բացառական հոլովով:

Օրինակ՝ Լքաւ սիրտ *պատերազմողաց* արանց Յունաց (*Ղեւոնդ,* էջ 32): Եւ դարձեալ *յորմէ* ծնանին, զնոյն ուտեն և անխնայ (*Փարպ.,* էջ 80):

5) Վերաբերության խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է գործողությունը: Այն հանդես է գալիս զանազան նախդրավոր հոլովներով:

Օրինակ՝ Եւ առաքէ ամբաստանութիւն *զնոցանէ* առ Մուսէ իշխանն (*Ղեւոնդ,* էջ 162): Դարձեալ *առ* այսպիսի ճշմարիտ *սասացմս* անպատշաճ հարցուածս մատուցանեն (Եզնիկ, էջ 14): *Առ մե՞զ* ասացեր զառակդ, թէ՞ *առ ամենեսեան* (*Ղուկ., Բ,* 41):

**Ընթերցանություն 87:** «Բաղդատութիւն է բան զլաւն կամ զյառին յանդիման կացուցանել: Եւ լինի բաղդատութիւն և դիմաց, և իրաց. և դիմաց՝ որզան Էանտեայ և Ողիսեայ, և իրաց՝ որգոն իմաստութեան և արդարութեան: Այլ վասն զի և դիմացն զմին յարգուն առնեմք ի գործսն հայելով, և եթէ այլ ինչ ի նմա բարի է, միանգամայն եղիցի յաղագս երկոցունցն: Եւ նախ առաջի որոշեսցի, զի բաղդատութիւնք լինին ոչ մեծ ինչ առ միմեանս զանազանութիւն ունողաց. քանզի ծաղր առնելի է, որ տարակուսին՝ եթէ ո՞ ոք արդեօք արուորագոյն է՝ Աքիլլեւս կամ Թերսիտէս.

այլ յաղագս նմանիցն և յաղագս որոց երկբայս եմք, ում ումեք պարտ և արժան է միտումն առնել վասն ոչ մի ինչ ոչ տեսանել միումն առ միսն երեւելի առաւելութիւն» (*Թէովն,* էջ 138):

**Ընթերցանություն 88:** «Լուաւ ապա և մեծ թագաւորն Տրդատ, եթէ Գրիգոր եկեալ հասեալ է յերկիրս Հայոց: Առ զզօրս իւր և զԱշխէն տիկին և զքոյրն իւր զԽոսրովիդուխտ, և չու արարեալ յԱյրարատեան գաւառէն, ի Վաղարշապատ քաղաքէ, ընդ առաջ Գրիգորի, գայր հասանէր ի քաղաքագեօղն Բագաւան, որ անուանեալ կոչի ի պարթեւարէն լեզուէն` Դիցաւան. և անդ սպասեալ մնայր սմա ամսօրեայ ժամանակս: Իսկ նա շրջէր, զի լցցէ զկողմանս կողմանս եկեղեցօք և քահանայիւք և պաշտօնէիւք և զամենայն աստուածագործ սպասաւորութեանն կարգօք, և լուսաւորեսցէ զբազումս մկրտութեամբ» (*Ագաթ.*, էջ 456):

**Վարժություն 158:** Գտնել հետևյալ նախադասություններում ուղիղ խնդիրները.

Զքոյն մրջեան արջ փորէր և լեզուաւ ժողովէր և ուտէր: Դարձուցանէ թագաւորն Հնդկաց զերիվարն: Տացեն նմա զպտուղս: Հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին: Լուան արք քաղաքին զձայն նորա:

**Վարժություն 159:** Թարգմանել ժամանակակից հայերեն.

Եկն ետես նա զգլուխն Հողոփեռնեայ: Զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց: Զամենայն եկեղեցիս հրձիգ արար, կուտեաց զաւար և զգերի, ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին:

**Առաջադրանք 164:** Կարդալ «Ընթերցանոթյուն 87»-ը և առանձնացնել ուղիղ խնդիրները` նշելով լրացյալը:

**Առաջադրանք 165:** Կարդալ «Ընթերցանություն 88»-ը և առանձնացնել անուղղակի խնդիրները:

**Առաջադրանք 166:** Կազմել հանգման և անջատման խնդիրներով նախադասությունները:

**Հարցեր 54:** ա) Որո՞նք են գրաբարի խնդիրները:

բ) Ինչպիսի՞ գործածություն ունի հայցական հոլովը:

գ) Ինչպե՞ս են կազմվում և ի՞նչ են ցույց տալիս անուղղակի խնդիրները:

## 2) Պարագաներ

**§ 181.** Գրաբարում բայի պարագա լրացումները բավականին շատ են, կիրառությամբ՝ խիստ բազմազան: Դրանցից հիմնական են տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, նպատակի և պատճառի պարագաները:

ա) Տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման տեղը: Եվ այն լինում է ոչ միակերպ, այլ որոշակի բազմազանությամբ: Գրաբարում այն արտահայտվում է տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով՝ նախդրով կամ առանց նախդրի:

Օրինակ՝ Ապա եկին համին ամենայն զօրքն Պարսից, շուրջ *զբերդաւն* նստէին (Բուզ., էջ 262): Ոչ գարշի զայնպիսի անուանս *զինքեամբ* առնուլ (*Եզնիկ,* էջ 65): Երկն *ի ծովուն* ունէր և զկարմրիկն եղեգնիկ (*Խոր.,* էջ 102): Հարկ է *ի պատճառս* չարեացն գալ (*Եզնիկ,* էջ 19): Բազում բարեխօսիւքն, զոր ունիմք *առ նմա* (*Եղիշէ,* էջ 156): Կարգէր և կազմէր զճակատն ... *առ ափն* Տղմուտ գետոյն (*ն. տ.,* էջ 116): Խնդրեցեւ զիմաստութիւն *առ ի չարաց* և ոչ գտցես (*Առակ.,* ԺԴ, 6): Անցանէր *առ* անկելովք *դիակամբք* և *առ* խոց *վիրաւորօքն* պատերազմի (*Բուզ.,* էջ 204): Հրաման տայր *ընդ կողմանս կողմանս* դեսպանս արձակել (*Ագաթ.,* էջ 18): Իսկ Մուշեղ ... շրջէր *ընդ երկիրն* (*Բուզ.,* էջ 188): Ելանէին *ընդ աշխարհն* Հոնաց և *ընդ պահակն* Ճորայ *ընդ երկիրն* Մազքթաց (*Ղեւոնդ,* էջ 101): Նիստ *ընդ աջմէ* իմմէ (*ն. տ.,* էջ 70): Եւ զքաղեալ մարմինս *ընդ հողով* ... արկեալ ցուցանեն (*Եզնիկ,* էջ 14-15): Ոչ անկանի *ընդ տեսլեամբ* ական (*Եղիշէ,* էջ 30): Անցո՛ ըստ Պահ դուռն *ի ներքս* (ն.տ., էջ 9): Պատասխանի արարեալ ասէր *ցՄիհրան* (*Փարպ.,* էջ 136) և այլն:

բ) Ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը: Այն արտահայտվում է տրական, հայցական և գործիական հոլովներով՝ հիմնականում նախդրով:

Օրինակ՝ *Զայնու ժամանակաւ* ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց (*Բուզ.,* էջ 36): *Ի բառնալ* ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց (*Եղիշէ,* էջ 6): Զմորենին *առ Մովսիսի* վառեաց Աստուած (*Ղեւոնդ,* էջ 87): *Ընդ լուսանալ* առաւաւտին յարեան ի գնալ (*Ն. տ.,* էջ 21): Զի *ցայժմ* ես քեզ առեւծ էի, եւ արդ աղուէ՞ս (*Բուզ.,* էջ 260):

գ) Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը: Այն արտահայտվում է ձևի մակբայներով:

Օրինակ՝ Իսկ տոհմ նախարարացն, որ *կամաւ* և որ *յակամայ* յաճախէին տալ ընծայս (*Ղեւոնդ,* էջ 128): Որ *փութանակի* և արդեամբք վճիռ ետուն գրեալքն (*Փարպ.,* էջ 19):

Ձևի պարագան գործածվում է նաև ածականի հոգնակի հայցականով:

Օրինակ՝ *Մեծամեծս* փքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ (*Ագաթ.,* էջ 24):

դ) Չափ ու քանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման չափը, քանակը և աստիճանը: Գրաբարում այն ամենից առաջ արտահայտվում է համապատասխան մակբայներով:

Օրինակ՝ Դարձան յիւրաքանչիւր աշխարհս, հաստատեալ *բազում անգամ* ... զնոյն ուխտ երդման (*Փարպ.,* էջ 55): *Երկիցս* և *երիցս* ետուն հրովարտակս աղաչանաց (*Եղիշէ,* էջ 198): Զչափաւոր գիտութիւնն իւր առ սակաւ սակաւ յայտնէր մարդկան (*Ղեւոնդ,* էջ 68): Այլ մինչ *ի սպառ* գումարեալք ոգւով չափ՝ մարզէին զմիմեանս բանիւք ասելով (*Ն. տ.,* էջ 149): Բայց ընդ այս *յոյժ* զարմանամ (*Ն. տ.,* էջ 64):

Այդ պարագան դրվում է նաև թվական վերադրով՝ իբրև բայի սեռականով լրացում:

Օրինակ՝ Տուեալ լիցի քեզ թագաւորութիւն *հինն հազար ամի* (*Եզնիկ,* էջ 80):

ե) Նպատակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման նպատակը: Գրաբարում այն արտահայտվում է զանազան հոլովաձևերով:

Օրինակ՝ Զայս բերանով իւրով ասի պատմել *զինքեան* (*Ղեւոնդ,* էջ 43): Ետուն նոցա զդստերս իւրեանց *ի կնութեան* (*Բուզ.,* էջ 74): Արիմնն, ասեն, զՈրմիզդ *ի ճաշ* կոչեաց (*Եզնիկ,* էջ 98): Հանդերձ քո մի լիցի *առ ի պճնել,* այլ միայն *առ ի պէտս* մարմնոյդ (*ն. տ.,* էջ 215): Զոր *առ ի ցուցանելոյ* զգեղեցկագործութիւնն արար (*ն. տ.,* էջ 97):

զ) Պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պատճառը: Գրաբարում այն արտահայտվում է զանազան հոլովներով:

Օրինակ՝ *Առ* յոյժ թանձր անկեալ *դիականցն* իբրև զքարակոյտս դերբկաց երևէին (*Եղիշէ,* էջ 118): Յաղագս Շամիրամայ, թէ է՛ր *աղագաւ* կոտորեաց զորդիս իւր (*Խոր.,* էջ 68): Յոր *սակս* եւ հարքն մեր ... սահմանեցին կանոնս (*Եզնիկ,* էջ 199):

**Ընթերցանություն 89.** «Այլ եւ երկիր, ասեն, ի միջոցի կայ: Եւ տան օրինակ ինչ այսպիսի՝ թէ զփամփուշտ, յորժամ փչել կամիցիս, ընկեա ի ներքս հատ մի կորեկան. և փուքն, որ ի փամփշտին արգելու, առնու զկորեկահատն և ի միջոցի ունի, ոչ ի վեր տայ գալ և ոչ ի խոնարհ ձգել: Նոյնպէս, ասեն, և օդս, որ է ի մէջ գնդին երկնից, փակեալ կայ, և ունի զաշխարհս ի հաստարակածի. ոչ ի վեր տայ վերանալ և ոչ ի խոնարհ հակել» (*Եզնիկ*, էջ 132-133):

**Ընթերցանություն 90**. «Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովք, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալն եղև, առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք: Յորոց հրաժարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր

պարզեւօքն և ամենայն իւրայիւքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր. զօթևանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին, ի վեցերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց Մեծաց» (*Կոր.,* էջ 50):

**Վարժություն 160:** Գտնել հետևյալ նախադասություններում բայի պարագա լրացումները.

Եւ բազում վարձէր իւր օգնականս և սատարս: Զի՞արդ պաշտիցեմք զարեգակն: Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեան Պարթևաց, ի բառնալ տէրութեանն յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել զնա Արտաշրի որդւոյ Սասանայ:

**Առաջադրանք 167:** Կարդալ «Ընթերցանություն 89»-ը և առանձնացնել պարագա լրացումները:

**Առաջադրանք 168:** Կարդալ «Ընթերցանություն 90»-ը և առանձնացնել պարագա լրացումները և որոշել բնույթը:

**Առաջադրանք 169:** Կազմել մեկական նախադասություն տեղի, ժամանակի և ձևի պարագաներով:

**Հարցեր 55:** ա) Որո՞նք են գրաբարի պարագա լրացումները:
բ) Ինչպե՞ս են կազմվում պարագա լրացումները:

# 2. ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

## ա) Համադասական նախադասություն

**§ 182.** Համադասական են բարդ նախադասության կազմում հանդես եկող համարժեք, հավասարական հարաբերության մեջ գտնվող նախադասությունները: Դրանք կապակցվում են համապատասխան շաղկապներով կամ առանց շաղկապի (շարահարությամբ): Գրաբարում նույնպես համադասական նախադասությունները արտահայտում են զանազան կարգի հարաբերություններ, և առանձնացվում է համադասական նախադասության չորս տեսակ՝ միավորական, հակադրական, տրոհական և հարակցական:

ա) Միավորական նախադասությունները հարաբերակցվում են միավորիչ շաղկապներով և առանց շաղկապի (շարահարությամբ): Այս դեպքում գործածվում են *եւ, եւ ... եւ, այլեւ, այլ եւս, թէ ... թէ, եթէ ... եթէ* շաղկապները, այլև միավորումը տեղի է ունենում շարահարությամբ:

Օրինակ՝ Եւ տանէին զգլխաւորն նոցա զՄարի երէց, և զայլ երիցունսն և զսարկաւագունսն, աւելի քան զեւթանասուն այր, ի մի գուբ զամենեսեան զնոսա փողոտէին (*Բուզ.,* էջ 198): Թագաւոր ոչ զիւր միայն տացէ պարտիս, այլ և որոց եղև պատճառք ի կորուստ (*Եղիշէ,* էջ 15): Եթէ ո՞չ գիտէք, եթէ սուրբք զաշխարհս դատին (*Փարպ.,* էջ 22): Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել (*Բուզ.,* էջ 272) և այլն:

բ) Հակադրական նախադասությունները հարաբերակցվում են *այլ, եթէ ոչ, ոչ* թէ *... այլ, բայց, սակայն, մանաւանդ, մանաւանդ թէ, նա, նա թէ* և այլ շաղկապներով: Այս դեպքում բարդ նախադասության ներսում համադասորեն, համարժեքորեն առնչակից են դառնում իրար հակադիր նախադասությունները:

Օրինակ՝ Ապա և վարձս ընդ կամակարութեանն առնլոյ չէր արժանի, այլ իբրև գործի մի էր արարչին (*Եզնիկ,* էջ 41): Մատուցանէին թագաւորին և ամենայն աւագանւոյն Արեաց, մանա-

ւանդ առաւելագոյն չարաքունին Միհրներսեհի (*Փարպ.,* էջ 54): Զի թէպէտև զանուր լծոյ հարկին ծանրացոյց, սակայն վասն գիտի արծաթոյն հանգեաւ երկիրս առ փոքր մի ի չար տառապանաց վտանգին (*Ղեւոնդ,* էջ 155):

գ) Տրոհական նախադասությունները կապվում են *կամ, կամ ... կամ, կամ թէ ... կամ թէ* և այլ շաղկապներով: Բարդ նախադասության կազմում համադասորեն առնչվող նախադասություններն ունենում են միմյանց նկատմամբ տրոհվածություն: Բարդ նախադասությունը սերված է արտահայտության պլանում համարժեք, իսկ բովանդակության պլանում՝ երկատված, տրոհված նախադասություններով:

Օրինակ՝ Զի որ շարժին և փոփոխի, չէ էական, այլ կամ լեալ յումեքէ և յիմեքէ, և կամ հաստեալ ի չգոյէ (*Եզնիկ,* էջ 12): Յորժամ աղօթես, ծանիր թէ ընդ ում խօսիս, կամ զինչ խնդրես (*Ն. տ.,* էջ 307): Յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից զդառնութիւն թիւնից, կամ ո՞ւր բացատրեցից զբազմութիւն նետիցն (*Եղիշէ,* էջ 7): Եւ կամ թէ «Եկայք, արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան». և կամ թէ «Եկայք, իջցուք և խառնակեսցուք զնոսա». և կամ թէ «Տէր տեղաց ի Սոդոմ և ի Գոմոր հուր ի տեառնէ» (*Ղեւոնդ,* էջ 65):

դ) Հարակցական նախադասություններն առնչվում են *եւ, բայց, սակայն* և այլն շաղկապներով: Բարդ նախադասության կազմում առաջանում է մի համադասություն, որում մի նախադասությանը հարակից է դառնում մեկ այլ նախադասություն: Դրանք արտահայտության պլանում համադաս, համարժեք են, իսկ բովանդակության պլանում՝ հարակից:

Օրինակ՝ Այս Վրթանէս և Արիստակէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի, և էր Արիստակէս կուսան՝ սուրբ ի մանկութենէ (*Բուզ.,* էջ 20): Եւ իշխան եմ ի վերայ ձեր՝ սպանանել և կեցուցանել. բայց ոչ մեռցիս (*Ղեւոնդ,* էջ 111): Եւ դուք այդքան յերկարեալ պահէիք առանց մահու, սակայն կարի ծանր էր և արժան մեղադրութեան գործն (*Փարպ.,* էջ 87):

**Ընթերցանություն 91**. «Ապա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց, և կուտէր առ ինքն զօրս բազումս իբրև զաւազ բազմու-թեամբ, և խաղայր ի վերայ աշխարհին Պարսից: Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչել յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականութիւն թագաւորու-թեանն Հայոց ի վերայ Պարսից: Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ քանզի և նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդ դէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական. և գտանէին զբանական արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ:

Հասանէր Վասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր ի վերայ բանակին Պարսից: Միածի ճողոպրեալ թագա-ւորն փախչէր, և առնուին յաւարի զամենայն կարաւանն Պարսից. և զամենայն զօրսն Պարսից բազմութեանն կոտորեցին, և առին աւար բազում ի բանակէն, զի ոչ գոյր նոցա թիւ: Ասպատակ տուեալ առնուին զամենայն ատրպայական երկիրն. քանդեալ գրէին զերկիրն, մինչեւ ի հիմանց կործանէին. և խաղաղացու-ցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութեամբ: Եւ զամենայն զայր երկրին հանէին ընդ սուր. և ինքեանք զգու-շացեալք սահմանօք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ» (*Բուզ.,* էջ 224-226):

**Ընթերցանություն 92**. «Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւո-րական քաղաքն, ազդ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարազունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին ե անեւլոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգևորօք և բարձրագոյն օրհնութեամբ ի քաղաքն դառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին:

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին: Առ

ի յարդարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս առնել՝ պարզախօսս, հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել» (*Կոր.*, էջ 54):

**Վարժություն 161:** Կազմել *բայց, սակայն, եւ, այլեւ* շաղկապներով մեկական նախադասություն:

**Վարժություն 162:** Որոշել հետևյալ բարդ նախադասություններում եղած համադասությունը. Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա, այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա: Տո՛ւր ինչ գիտել, ո՞վ են լերինքն այնոքիկ: Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի. Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան: Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն:

**Առաջադրանք 170:** Կարդալ «Ընթերցանություն 91»-ը և առանձնացնել այն բարդ նախադասությունները, որոնցում առկա է համադասություն:

**Առաջադրանք 171:** Կարդալ «Ընթերցանություն 92»-ը և առանձնացնել համադասական նախադասությունները:

**Առաջադրանք 172:** *Սակայն, մանաւանդ, կամ* շաղկապներով կազմել բարդ համադասական նախադասություններ:

**Հարցեր 56:** ա) Ո՞րն է կոչվում բարդ համադասական նախադասություն:

բ) Քանի՞ տեսակ են գրաբարի համադասական նախադասությունները:

գ) Ինչպե՞ս է կազմվում միավորական նախադասությունը:

դ) Ինչպե՞ս է կազմվում հակադրական նախադասությունը:

ե) Ինչպե՞ս է կազմվում տրոհական նախադասությունը:

զ) Ինչպե՞ս է կազմվում հարակցական նախադասությունը:

## բ) Ստորադասական նախադասություն

**§ 183.** Գրաբարի բարդ ստորադասական նախադասությունները կազմությամբ խիստ բազմազան են, այլև աչքի են ընկնում շարահյուսական առնչությունների մեծապես ընդգծված տարբերությամբ: Բարդ ստորադասական նախադասության դեպքում առկա է ստորակարգային հարաբերություն, այսինքն՝ մի նախադասությունից կախված է մյուսը, մեկը պայմանավորված է մյուսով, մեկին լրացնում է մյուսը և այլն: Նման կապվածությունը, բնականաբար, ենթադրում է գերադասի և ստորադասի, այլ կերպ ասած՝ գլխավորի և երկրորդականի առկայություն: Գլխավոր նախադասությանն ստորադասվում են ոչ համարժեք, ստորակարգային նախադասություններ: Վերջիններս սովորաբար լրացնում են գլխավոր նախադասության որևէ անդամի: Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունների միջև գոյություն ունի գրեթե նույն փոխհարաբերությունը, ինչ պարզ նախադասության գլխավոր անդամների և նրանց լրացումների միջև:

Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները ևս կապակցվում են շաղկապով կամ էլ շարահարությամբ: Քիչ չեն դեպքերը, երբ որպես շաղկապ գործածվում են հարաբերական բառերը:

**§ 184.** Կապված այն հանգամանքի հետ, թե երկրորդական նախադասությունը գլխավորի ո՛ր անդամին է լրացնում, գրաբարում առանձնանում է ստորադասական նախադասությունների երեք տեսակ: Մի դեպքում ստորադաս նախադասությունը լրացնում է գերադաս նախադասության գլխավոր անդամներից մեկնումեկին, մյուս դեպքերում՝ գլխավոր անդամներից ենթակայի և ստորոգյալի լրացումներին: Ըստ այդմ բարդ ստորադասական նախադասության կառուցվածքում առանձնանում են գերադաս նախադասությանն այս կամ այն կերպ ստորադասվող գլխավոր անդամի, անվան և բայի լրացում երկրորդական նախադասություններ:

§ **185.** Գրաբարում ևս զգալի են բարդ ստորադասական նախադասության կազմում գերադաս նախադասության գլխավոր անդամի (ենթակայի կամ ստորոգյալի) լրացում նախադասությունները: Դրանք երկուսն են՝ ենթակա և ստորոգելի երկրորդական նախադասությունները:

ա) Ենթակա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս, թե ով է գլխավոր նախադասության կատարողը (գործողության գործողը՝ «գործիչը»): Ուստի այն փաստորեն գործառում է իբրև գլխավոր նախադասության ենթակա՝ արտահայտված մեկ առանձին (թեկուզ՝ երկրորդական) նախադասությամբ: Դա լինում է այն դեպքում, երբ գլխավոր նախադասությունը կա՛մ առհասարակ չունի ենթակա, կա՛մ այն արտահայտված է այսպես կոչված «ձևականորեն»: Վերջինս, ինչ խոսք, կոնկրետ չէ, այլ կոնկրետանում է երկրորդական նախադասության արտահայտածով:

Ենթակա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է զանազան շաղկապներով և հարաբերական բառերով, այլև՝ շարահարությամբ: Գրաբարում նման նախադասությունները հիմնականում ունենում են ազատ շարադասություն:

Օրինակ՝ *Որ ոչ կամիցի գործել,* և կերիցէ մի՛ (*Պօղոս, Թուղթ*): Չոգաւ վաղվաղակի, *որ ա՛ռ զհինգն,* գործեաց նոքօք (*Մատթ.,* ԻԵ, 15): *Որք միանգամ իմաստասիրութեան տենչան բանից և առ ի նմանէ հեշտութեանց ծայրիւ միայն մատին հանդիպին ճաշակեալք,* ամենայն կենցաղական հոգոց բարեաւ մնան ասացեալ ողջախոհ իմն մոլութեամբ առ այսոսիկ վարեալք բերին (*Դաւիթ Անյաղթ,* էջ 29) և այլն:

բ) Ստորոգելի երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության ստորոգելիական վերադիրն, ցույց է տալիս այն, թե ինչն է ընկած տվյալ գործողության իրականացման (գործելիի) հիմքում: Նման նախադասությունները սովորաբար ունենում են ձևական ստորոգելի գլխավոր նախադասության կազմում: Դրանց շարադասությունն առհասարակ հետադաս է:

Օրինակ՝ Դու ես այն, *որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս,* և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ (*Բուզ.,* էջ 260): Այն էին

իղձք աղօթից նոցա առ Աստուած, *եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցին* (*Եղիշէ,* էջ 203): Բազում այնոքիկ էին, *որ իբրև լսէին,* գովէին զպատասխանիսն (*ն. տ.,* էջ 42):

**§ 186.** Անվան լրացում երկրորդական նախադասությունները հիմնականում լրացնում են գերադաս նախադասության գոյականական անդամին (հատկապես՝ ենթակային): Դրանք, իրենց հերթին, բաժանվում են երեքի՝ ըստ որոշչային, հատկացուցչային և բացահայտչային լինելու հանգամանքի: Ըստ այդմ, նման ստորադասական նախադասություններն առհասարակ կոչվում են որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ երկրորդական նախադասություններ:

ա) Որոշիչ երկրորդական նախադասությունն այլ բան չէ, քան գլխավոր նախադասության գոյականական անդամի որոշիչ լրացումը, որն արտահայտված է երկրորդական (մեկ առանձին) նախադասությամբ: Նման նախադասությունները կապակցվում են գլխավորին ավելի շուտ հարաբերական բառերով, քան շաղկապներով և շարահարությամբ, և դրանց շարադասությունը գրաբարում բավականին ազատ է:

Օրինակ՝ Առն, *զոր ի նախակարգ բանիս նշանակեմք,* վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյն Վարդան կոչեցելոյ (*Կոր.,* էջ 36): Էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, *որ եկեալ միաբանեաց զզօրս Պարսից,* որք լքին, խոտեցին, մերժեցին, անարգեցին զտէրութիւնն Պարթևաց *(Ագաթ.,* էջ 24): Հրեայք, *որ բնակեալ են ի գաւառս Պաղեստինացւոց,* ժողովեալ խաչեցին զՔրիստոս առանց իրիք յանցանաց (*Խոր.,* էջ 178) և այլն:

բ) Հատկացուցիչ երկրորդական նախադասությունը լրացումն է գլխավոր (գերադաս) նախադասության այն անդամին, որը հատկացուցիչ է: Վերջինս կարող է բացակայել, կամ էլ արտահայտվել «ձևական» անդամով: Նման կառուցվածքի նախադասությունները կապակցվում են ավելի հաճախ հարաբերական

բառերով: Ստորադասական նախադասությունը սովորաբար հետադաս է:

Օրինակ՝ Այդ բանք ոչ այնոցիկ են, *որ տեսանեն զամենայն չարչարանս աշխարհիս* (Եղիշէ, էջ 171): Խցցին բերանք այնոցիկ, *որ խաւսին զանաւրէնութիւն* (*Ղեւոնդ,* էջ 107-108): Կացուցանել իշխան ի վերայ այնոցիկ, *որ նուաճեալ են ընդ իշխանութեամբ քով* (ն. տ., էջ 160):

գ) Բացահայտիչ երկրորդական նախադասությունը բացահայտում է գլխավոր նախադասության անվանական անդամի ով կամ ինչ լինելը: Նման նախադասությունը լինում է հետադաս:

Օրինակ՝ Ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, *որոյ անուն կոչէր Վռամշապուհ* (*Կոր.,* էջ 42): Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, *որում անուն Փառանձեմ կոչէր (Բուզ.,* էջ 182):

**§ 187.** Բայի լրացում երկրորդական նախադասությունները այս կամ այն ձևով լրացնում են գլխավոր նախադասության բայական անդամին, բացահայտում են վերջինիս հետ կապված որևէ հանգամանք: Դրանք, իրենց հերթին, ինչպես առհասարակ բայի լրացումները, լինում են երկու կարգի՝ խնդիր և պարագա երկրորդական նախադասություններ, ըստ որում իրենց զանազան տարատեսակներով:

**§ 188.** Խնդիր երկրորդական նախադասությունները, ինչպես այլ դեպքերում, բաժանվում են երկուսի՝ ուղիղ խնդիր և անուղղակի խնդիրներ: Առաջինը մեկն է, երկրորդը՝ մեկից ավելի: Դա, առհասարակ, բացահայտվում է բայ-ստորոգյալի նկատմամբ ուղիղ և անուղղակի խնդիրների ունեցած լրացումային գործառության տարբերությամբ՝ կապված գործողության անմիջական կրողի (գործողի) և նրան միջնորդաբար առնչվող, հարակից հանգամանքների (ածանցյալների՝ ատրիբուտների) հետ:

ա) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը գործառում է գերադաս նախադասության բայի սեռի պահանջով, այ-

սինքն՝ նման նախադասությունների դեպքում գերադաս նախադասության բայ-ստորոգյալը ներգործական սեռի է: Գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցվում են թե՛ շաղկապներով և թե՛ հարաբերական բառերով, որոնք գլխավոր նախադասության կազմում կարող են ունենալ իրենց հարաբերյալը: Այսպիսի երկրորդական նախադասությունները մոտ են կանգնած գլխավորի «ձևական» ուղիղ խնդիր լրացմանը, ուստի և սովորաբար հետադաս են լինում:

Օրինակ՝ Նա արձակեաց զՀիւրկանոս Հրէից քահանայապետ, *զոր գերեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ յաւուրս Տիգրանայ* (*Խոր.,* էջ 160): Պատրեա՛ զնա և տե՛ս՝ *ու իցէ զօրութիւն նորա մեծ* (*Դատ.,* ԺԶ, 4): Պատմեա՛ ինձ *ու իցէ զօրութիւն քո մեծ* (ն. տ.): Իսկ ոմանք ազդ արարին նմա, և ասեն, *թէ զայ Ռահան ի վերայ քո վեց հազարաւ* (Յովհ. Մամ., էջ 31):

բ) Անուղղակի խնդիր երկրորդական նախադասություններից առավել ուշադրության են արժանանում հանգման, անջատման, միջոցի, ներգործման և վերաբերության խնդիր երկրորդական նախադասությունները (հմմտ. § 180):

1) Հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գլխավոր նախադասության բայական անդամի գործողությունը: Գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցվում են շաղկապներով, այլև հարաբերական բառերով: Շարադասությունն առհասարակ հետադաս է լինում:

Օրինակ՝ Երանի իցէ այնմ, *որ հաւատայ յիս*՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս (*Խոր.,* էջ 150): Արդ՝ ջան յանձին կալեալ մտանել ի պատմագիր մատենիցս խորութիւն, ցուցանել այնոցիկ, *ոյք իմաստութեամբ կամիցին ունկնդիր լինել օգտակար պատմութեանս* (*Ագաթ.,* էջ 16):

2) Անջատման անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն առարկան, որից բաժանվում, անջատվում է որևէ առարկա: Նախադասությունների կապակցումը իրականանում է շաղկապներով, հարաբերական բառերով, գլխա-

վոր նախադասության մեջ «ձևական» խնդիրը դրված է լինում բացառական հոլովով:

Օրինակ՝ Եւ զցանկալի ողջոյն միմեանց տուեալ, *ուստի և բարբառոք ցնծութեան և երգօք հոգեւորք և բարձրագոյն օրհնու-թեամբ անցուցանէին* (*Կոր.*, էջ 54):

4) Միջոցի անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն առարկան, որը միջոց է տվյալ գործողության կատարման համար: Երկրորդական նախադասությունն առնչվում է գլխավորին առաջին հերթին հարաբերական բառերով: Այն սովորաբար լինում է հետադաս:

Օրինակ՝ Միթէ մատեա՞ն մերձ կայցէ ինձ ... կամ դպրութիւն քոց հայրենեացն, *որով նմանագոյնս արդեօք եբրայեցւոցն պատ-մագրաց՝ի վերուստ ի քեզ իջուցանիցեմ անսխալ* (*Խոր.,* էջ 14): Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, *որով զամենայն ընտրութիւնս, նշանա-գրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառան-ձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք* (*Կոր.,* էջ 48 - 50): Եւ բազում վարձէր իւր օգնականս և սատարս, *որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ* (*Բուզ.,* էջ 182):

5) Ներգործման անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը պայմանավորված է գլխավոր նախադասության կրավորական սեռի բայով արտահայտված ստորոգյալով: Երկրորդական նախադասությամբ կատարվում է ներգործում գլխավոր նախադասության ենթակայի վրա: Կապակցումը տեղի է ունենում հարաբերական բառերով, իսկ գլխավոր նախադասության մեջ հանդես է գալիս «ձևական» ենթակա:

Օրինակ՝ Ապա եթէ ինչ յարարածոց, որ գեղեցիկ է՝ այն ի բարւոյ արարչէ կարծիցի ոմանց, որպէս Յունաց հեթանոսաց և արանցն մոգուց և հերձուածողաց, *որ չար իմն էութիւն հակառակ բարւոյ դնեն* (*Եզնիկ,* էջ 8):

6) Վերաբերության անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունը ցույց է տալիս, թե ո՛ւմ կամ ինչի՛ն է վերաբերում գլխավոր նախադասության գործողությունը: Կապակցումը տեղի

է ունենում շաղկապների օգնությամբ, այլև հարաբերական բառով: Ծարադասությունը սովորաբար հետադաս է:

Օրինակ՝ Եկեսցեն, տեսցեն և խորհեսցին վասն իւրեանց առաջնորդաց, *թէ ում արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել բանաւոր խաշանց Քրիստոսի* (*Բուզ.,* էջ 108): Ոչ ինչ ընդհատ երեւեցան յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ (*Եղիշէ,* էջ 200): Զայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային (*Բուզ.,* էջ 78):

**§ 189.** Պարագա երկրորդական նախադասությունները յուրովի պարզաբանում են գլխավոր նախադասության բայական անդամի այլևայլ հանգամանքները, որոնք կա՛մ առհասարակ բացակայում են, կա՛մ արտահայտված են «ձևական» պարագաներով: Նման երկրորդական նախադասությունները, ինչպես առհասարակ պարագայական լրացումները (տե՛ս § 181), բաժանվում են մի քանիսի՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի, նպատակի, զիջման, պայմանի և պատճառի պարագա երկրորդական նախադասությունների:

Ի տարբերություն բարդ նախադասության անվան լրացում երկրորդական նախադասությունների՝ այս կարգի երկրորդականները բավականին լայն գործածություն ունեն գրաբար բնագրերում:

ա) Տեղի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության տեղը կամ լրացնում է նրա տեղի պարագա լրացմանը: Գրաբարում այն հիմնականում կազմվում է տեղ նշանակող մակբայներով՝ գլխավոր նախադասության մեջ ըստ պատշաճի ունենալով «ձևական» հարաբերյալներ:

Օրինակ՝ Եւ անդ զափամբ մօրին մեծի բանակի ի տեղւոջ, *ուր գետն մեծ ի ծովակէն հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի ի մօրն մեծ* (*Խոր.,* էջ 109): Անցեալ գնային ի կողմանս Յունաց, *ուր* և ուսեալք և տեղեկացեալք, *թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին* (*Կոր.,* էջ 74):

բ) Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը: Գրաբարում այն կապակցվում է ժամանակի մակբայներով և շաղկապներով, որոնք գլխավոր նախադասության մեջ կարող են ունենալ իրենց համապատասխան հարաբերյալները:

Օրինակ՝ *Եւ իբրեւ այլ ոք ոչ էր մնացեալ յազգէն,* ետ արքայ զաղջիկն կնութեան սիրելւոյն արքայի Վաղինեկայ Սիւնույ, և տունն Աղձնեաց (*Բուզ.,* էջ 36): *Չի յորում աւուր ուտիցէք ի նմանէ,* մահու մեռանիցիք (*Գիրք ծննդոց,* էջ 153):

գ) Ձևի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման ձևը: Գրաբարում այն ունի գործառական ընդգծված զանազանություն: Կապակցումը լինում է հիմնականում մակբայներով:

Օրինակ՝ Սոյնպէս և զամենայն ազգսն զօրացն մեծամեծացն նահապետացն, *որպէս առաջին թագաւորն նուաճեալք յիւրաքանչիւր չափու* (*Բուզ.,* էջ 106): Եթէ կամ իցէ քեզ՝ կարգեսցես զնա ի վերակացութիւն Նինուէի, *որպէս եւ կամիս* (*Խոր.,* էջ 155):

դ) Չափի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության արտահայտման չափը, քանակը և այլն: Կապակցումը տեղի է ունենում հիմնականում մակբայներով:

Օրինակ՝ Վասն որոյ անկանէր ի գաղտագողօնս, *մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ* (*Բուզ.,* էջ 182): Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, *նոյն չափ ատեաց կինն զարքայն Արշակ՝* ասելով, թէ թաւ է մարմնով, և թուխ է գունով (Բուզ., էջ 192):

ե) Նպատակի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման նպատակը: Կապակցումը տեղի է ունենում շաղկապներով՝ *զի, որպէս զի, վասն զի* և այլն: Ծարադասությունը սովորաբար հետադաս է:

Օրինակ՝ Եւ ապա զամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զքաղաքորմսն, *զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա* (*Բուզ.,* էջ

32)։ Եւ երդմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, *որպէս զի մի ևս մանկունք Ալանաց ասպատակաւ հինից ելցեն յաշխարհս Հայոց* (*Խոր.,* էջ 178)։

գ) Զիջման պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողությանը հարաբերվող գործողություն։ Այն կապակցվում է շաղկապներով՝ *թէպէտ, թէպէտ և, թէ* և այլն։ Դրանց զուգակցվում են գլխավոր նախադասության մեջ այլևայլ հարաբերական բառեր, շաղկապներ։

Օրինակ՝ *Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ,* սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի (*Խոր.,* էջ 12)։ *Այլ թէպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի,* բայց ընդ անմտութիւնդ քո լացի (*Յովհ. Մամիկ.,* էջ 31)։

է) Պայմանի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման պայմանը։ Այն կապակցվում է շաղկապներով ՝ *եթէ, թէ, եթէ ... ապա* և այլն։ Ծառադասությունը սովորաբար հետադաս է։

Օրինակ՝ Առ որ գրեն գաւառապետքն. «*Եթէ Վահան տայ,* և մեք. *ապա թէ ոչ,* ունայն գնայք ի մէնջ» (*Յովհ. Մամիկ.,* էջ 30)։ Եւ ի նմա որոգայթս իմն ծածուկս (ամրացուցանէր) ընդ մէջ ատաղճանացն, որպէս զի ըմբռնեսցի, եթէ ոք գաղտ ելանելով դաւել կամիցի զարքայն (*Խոր.,* էջ 194-196)։ Եթէ վասն որդէծնութեան ոք մերձենայցէ յիւր կին, յիրաւի է (*Եզնիկ,* էջ 27)։

ը) Պատճառի պարագա երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման պատճառը։ Գրաբարում այն գլխավորապես արտահայտվում է շաղկապներով՝ *քանզի, վասն զի, որովհետև մանաւանդ զի, զի* և այլն։ Ծառադասությունը սովորաբար հետադաս է։

Օրինակ՝ Յայնմ ժամանակի խնդրէր ելանէր արքայն Արշակ տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից, *մանաւանդ զի իւր դայեակս եւ սնուցիչք էին* (*Բուզ.,* էջ 106)։ Եւ նոքա ոչ

հաւատային նմա, *վասն զի և թշնամիք չարախօսէին զնմանէ* (*Խոր.*, էջ 172):

**Ընթերցանություն 93**. «Ապա ելանէր նոցա պարգևական յամենաքարին աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն ելանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել: Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ: Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցսն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբել կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի: Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէն, ուրախ լինէին» (*Կոր.*, էջ 42-44):

**Ընթերցանություն 94**. «Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն, որ միանգամ մնացեալ էին, և չոգաւ հանդերձ նոքօք առ թագաւորն Յունաց: Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց, և զամենայն անցս տառապանաց, որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ի կայսերէն զՊապ՝ զորդի Արշակայ, թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին: Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ՝ զորդին Արշակայ, ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեաց նա ի նմանէ. և մեծապէս թիկունք լինէր արքայն

Յունաց. զՏէրենտ անուն ստրատելատն և զԱդէ ոմն կոմս արձա-կէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր բիւրու:

Եւ եկին հասին ի սահմանս Հայոց. և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հօր իւրոյ: Եւ գային ի մի վայր ժողովէին ամենայն ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկրին Հայոց. գային ի մի վայր բովանդակէին, և լինէին ի խնդիր սրբոյն մեծի հայրապետին Ներսէսի թագաւորն և ամենայն մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք գաւառակալք և գաւառատեարք: Որք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն զմեծն Ներսէս խնդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղօթս առնել, և խնդրել յԱստուծոյ վասն շինութեան ամենայն աշխարհին Հայոց, և փրկել ի թշնամեացն. և դարձեալ զինչ և խնդրէր յԱստուծոյ, տայր Աստուած նմա. և միւս եւս, զի իմաստութեամբ իմն կարէր սոցա զօգտակար խրատն մատուցանել: Վասն այսորիկ ոչ եթէ փոքր-ինչ էր խնդիրն այնպիսւոյն առն լինել, որ կարէր նոցա օգուտ խրատու իմաստութեան շնորհել, և ըստ ժամանակին դի-պացն պատահելոյ՝ միտս օգտակարս դնել, որովք զճանապարհս, որ կայր առաջի՝ գնալ մարթասցեն» *(Բուզ.,* էջ 284-286):

**Վարժություն 163:** Որոշել հետևյալ նախադասությունների բնույթը.

Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես: Գայլ, քանզի շատա-կեր էր, պայթեաց: Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ: Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն:

**Վարժություն 164:** Վերլուծել հետևյալ նախադասությունները շարահյուսորեն.

Եւ յարջառ, զոր ասեն, եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն: Եւ մինչ դեռ ջերմ ոգիքն ի ծոցոյն չև էին թափեալ, և շունչ վախճանին չև էր հասեալ՝ հրաման տայր զազգատոհմն սատակել:

**Վարժություն 165:** Թարգմանել գրաբար.

Մուշեղ սպարապետը կարգի էր բերում, կազմակերպում էր Հայոց զորքերի բոլոր գնդերը և զորահանդես էր կատարում: Մուշեղ սպարապետը ջարդում էր նաև այն գավառները, որոնք ապստամբել էին Հայոց թագավորից: Պապ թագավորը ամենևին նրան չէր լսում, այլ դեռ հակառակում էր նրան:

**Առաջադրանք 173:** Կարդալ «Ընթերցանություն 93»-ը և վերլուծել բարդ ստորադասական նախադասությունները:

**Առաջադրանք 174:** Կարդալ «Ընթերցանություն 94»-ը, առանձնացնել բարդ նախադասությունները և վերլուծել:

**Առաջադրանք 175:** Կազմել նախադասություններ հետևյալ ստորադասական շաղկապներով՝ *որովհետև, վասն զի, քանզի, ուստի, եթէ ոչ, փոխանակ զի:*

**Առաջադրանք 176:** Նախորդ առաջադրանքի համաձայն կազմված նախադասությունները վերլուծել շարահյուսորեն:

**Հարցեր 57:** ա) Ո՞րն է կոչվում բարդ ստորադասական նախադասություն:

բ) Քանի՞ տեսակ են լինում բարդ ստորադասական նախադասությունները:

գ) Քանի՞սն են անվան լրացում երկրորդական նախադասությունները և ինչպե՞ս են կազմվում:

դ) Քանի՞սն են բայի լրացում երկրորդական նախադասությունները և ինչպե՞ս են կազմվում:

# 3. ԲԱԶՄԱԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

**§ 190.** Գրաբարում քիչ չեն դեպքերը, երբ գլխավոր նախադասության անդամներից երկուսը (երբեմն ավելին) միաժամանակ արտահայտված են լինում երկրորդական նախադասությամբ: Նման կառուցվածքի նախադասությունները, ի տարբերություն սովորական բարդ, այսինքն՝ գլխավոր նախադասության միայն մեկ անդամի լրացում երկրորդական նախադասությամբ արտահայտվածների, կոչվում են բազմաբարդ նախադասություններ:

Միաժամանակ երկու և ավելի երկրորդական նախադասություններով գլխավոր նախադասության երկու և ավելի անդամի փոխարինումը, բնականաբար, ենթադրում է հաղորդակցական առավել ներունակ գործունեություն, մտքի առավել լարվածություն, արտահայտության ճկունություն և բազմազանություն: Գրաբարի ճկունության և գրավչության մի չափանիշ է նման բազմազան և «կառուցիկ» նախադասությունների առկայությունը: Խոսքի կառուցման նման հատկություններով բնորոշվում է մեր հին գրական լեզուն՝ անկախ այդ հարցում նկատված ոճական տարբերություններից, մեղմ կամ ծայրահեղ հակումների դրսևորումներից:

**§ 191.** Բազմաբարդ նախադասություններն իրենց հերթին միակերպ չեն, այլ բաժանվում են մի քանի տեսակի: Նման տեսակավորումը, անշուշտ, պայմանավորված է երկրորդական նախադասությունների՝ միմյանց և գլխավորի նկատմամբ ինքնին ունեցած առնչությունների տարբերությամբ:

Երկրորդական նախադասությունների մի մասն ունի իրար նկատմամբ համադասական, սակայն գլխավորի հանդեպ ստորադասական հարաբերություն: Մյուս մասը հանդես է բերում, այսպես կոչված, աստիճանական ստորադասություն, այսինքն՝ գլխավոր նախադասությանը ստորադասվում է մեկ երկրորդական, սրան էլ՝ մեկ այլ երկրորդական նախադասություն: Մեկ այլ մաս էլ ներառում է հարակից ստորադասություն, այսինքն՝ տվյալ գլխավոր նախադասությանը ստորադասվում են մեկից

ավելի երկրորդական նախադասություններ, որոնք, սակայն, լրացնում են գլխավոր նախադասության տարբեր անդամների, կամ երկրորդականներից մեկ-երկուսը՝ մի անդամի, մյուսները՝ այլ անդամների և այլն:

Գրաբարում նույնպես առանձնանում են երեք կարգի՝ համաստորադաս, ենթաստորադաս և հարաստորադաս երկրորդական նախադասություններ: Դրանց կապակցումը տեղի է ունենում համապատասխան շաղկապների և հարաբերական բառերի միջոցով, այլև շարահարությամբ, և բոլոր դեպքերում հանդես են բերում շարադասության որոշակի ինքնօրինակություններ:

ա) Համաստորադաս են այն երկրորդական նախադասությունները, որոնք մշտապես համարժեք հարաբերության մեջ են, իրարից շարահյուսորեն անկախ են, սակայն միասնաբար լրացնում են գլխավոր նախադասության այս կամ այն անդամին: Նման բազմաբարդ նախադասության կապակցումը տեղի է ունենում համադասության դեպքում համադասական, իսկ ստորադասության դեպքում՝ ստորադասական շաղկապներով, այլև հարաբերական բառերով և շարահարությամբ: Գլխավոր նախադասությանն ստորադասվող երկրորդականները կարող են լինել երկու և ավելի բաղադրիչ նախադասություններ, ըստ որում շարադասության ոչ միակերպ դրսևորումով:

Օրինակ՝ Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա (*Բուզ.,* էջ 196): Անարիւն ճպռանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն (*Եղիշէ,* էջ 150):

բ) Ենթաստորադաս են այն երկրորդական նախադասությունները, որոնք ստորադասվում են միմյանց, բոլորով միասին՝ գլխավոր նախադասությանը: Նման կառուցվածքի նախադասությունները կապակցվում են միայն ստորադասական շաղկապներով, համարժեք հարաբերական բառերով: Դրանց շարադասությունը խստորեն փոխպայմանավորված է, ուստի որոշակիորեն հաջորդում են միմյանց:

Օրինակ՝ Սա եկեալ ցանկացեալ փափաքեալ մեծաւ տենչանօք աղաչէր զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանդեաւ նա ի ջրհեղեղէն. քանզի զամենայն ինչ, որ հայցէր, առնոյր ի տեառնէ (*Բուզ.*, էջ 38)։ Իսկ Աշոտ՝ որդի Սահակայ, զի էր ի քաղաքին յայնմիկ, զեկուցանէր զգալուստ թշնամեացն նախարարացն Հայոց, զի ուր ուրեք և իցեն, ի մի վայր գումարեսցին կեալ և մեռանել ի վերայ միմեանց (*Ղեւոնդ*, էջ 145)։ Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայիցն նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեշխն. որ էր ի չորից գահերէց բարձերէց տաճարին արքունին (*Բուզ.*, էջ 36)։

գ) Հարաստորադաս են այն նախադասությունները, որոնք ներկայացնում են հարակից ստորադասություն գլխավոր նախադասության այս կամ այն անդամի հարաբերությամբ։ Նման երկրորդականները կա՛մ լրացնում են գլխավոր նախադասության մեկից ավելի անդամների՝ առանձին վերցրած, կամ էլ հանդես են գալիս իբրև տարբեր անդամների լրացումներ։

Հարաստորադասությունը, բնականաբար, արտահայտվում է ամեն կարգի շաղկապներով, ինչպես նաև հարաբերական բառերի օգնությամբ, շարահարությամբ։ Այդպիսի երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասությանը շարադասվում են ոչ միօրինակ դասավորվածությամբ։ Դրանք գրեթե միշտ ձգտում են ազատ և ըստ բովանդակության անխճող արտահայտման։

Օրինակ՝ Իբրև դարձաւ Աբգար յարևելից, լուաւ նա զՀռոմայեցոց, թէ ի կասկածանս անկեալ են վասն նորա, որպէս թէ զկնի զօրու գնաց յարևելս (*Խոր.*, էջ 170)։ Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իբրև զծառայ առ ի սպասն, յոր կարգեաւ՝ հասանելոյ, և մերթ երթայ ղօղէ իբրև զարհուրեալ, և տայ տեղի խաւարին լնուլ զմիջոց ի մեծի տանս և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից (*Եզնիկ*, էջ 14)։ Եւ մինչդեռ նա յայնմ գործ զմայրեօքն տնկելովք էր, յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով ի

Հեր և ի Զարաւանդ գաւառ, թէ պատրաստեալ են զօրքն Պարսից գալ հասանել ի գործ պատերազմի ի վերայ քո (*Բուզ.,* էջ 32):

**Ընթերցանություն 95**. «Աստանօր սակաւուք բացայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զիա՞րդ կամ ո՞րպիսի ոք են և ո՞րպէս՝ հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք, և բնակութիւն նոցա ի խորաձորս և ի փապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի գագաթունս լերանց: Եւ բնակեն առանձին ըստ տունս ազդաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով, և կէսքն վրիպեալք ի բնական Հայրենի լեզուէն, յաղագս հեռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք: Եւ այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանան. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ոռոգեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմտանի փայտատովք սերմանեալ. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ մերկութեանն, և օղ ոտիցն հնարաւորեն զձև կօշկաց, ի մորթոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն եւ զձմեռն. և են ստացեալ զէնս աշտեայս, համապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն գազանացն, որք ի լերինն բնակեն» (*Թովմ. Արծ.*, էջ 190-192):

**Ընթերցանություն 96**. «Եւ արդ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից ի կտակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ, ամենապատկառ և առ պատասխանիս բանից անբարբառ, անպիտան Աստուծոյ և սրբոց մասնակցութեան: Զի եթէ զլիճ մի ծովուց ի յորակութիւն դեղոյ յեղյեղեցից, և զդաշտս ասպարիսօք բազմօք սահմանեալ՝ ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից, և զպուրակս յոքունց

գրչաց կազմեցից, և ոչ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել: Նա՝ զի թէ զմայրսն Լիբանանու ի մի լուծ կշռոց զօղեցից, և կամ զլեառն Արարատեան ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնր հարքութեան համազուգակցել» (*Նարեկ.*, էջ 20):

**Վարժություն 166:** Վերլուծել հետևյալ բազմաբարդ նախադասությունները.

Իսկ ի գալուստ ամին միւսոյ զօր բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, և ևս բազում քան զնոյն ասպատակ սփռեալ զկողմամբքն Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք Տաճկաց ի թիկունս եկեալ էին. աւար առեալ զերկիրն ամենայն՝ քաջութեամբ դառնային յիւրաքանչիւր տեղիս:

**Վարժություն 167:** Որոշել հետևյալ նախադասության բնույթը և այն վերլուծել շարահյուսորեն:

Քանզի նախզոյն թագաւորն Հայոց Արշակ ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց:

**Վարժություն 168:** Վերլուծել հետևյալ բարդ նախադասությունը.

Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ:

**Առաջադրանք 177:** Կարդալ «Ընթերցանություն 93»-ը, առանձնացնել բարդ նախադասությունները և վերլուծել շարահյուսորեն:

**Առաջադրանք 178:** Կարդալ «Ընթերցանություն 94»-ը, առանձնացնել բարդ նախադասությունները և վերլուծել շարահյուսորեն:

**Առաջադրանք 179:** Կարդալ «Ընթերցանություն 93»-ը և թարգմանել ժամանակակից հայերեն:

**Առաջադրանք 180:** Կազմել մեկական բարդ և բազմաբարդ նախադասություն:

**Հարցեր 58:** ա) Ի՞նչ է բազմաբարդ նախադասությունը:

բ) Քանի՞ տեսակ է լինում բազմաբարդ նախադասությունը:

գ) Ինչպիսի՞ տարբերություններ ունեն բազմաբարդ նախադասությունները:

դ) Ի՞նչ է համաստորադաս նախադասությունը:

ե) Ի՞նչ է ենթաստորադաս նախադասությունը:

զ) Ի՞նչ է հարաստորադաս նախադասությունը:

# ԲԱՌԱՐԱՆ

---

*Ագանիմ, ագայ, ագի՛ր, ագեալ // ագուցեալ, հր.* հագնել, հագնվել:
*Ագանիմ, ագայ, ագի՛ր, ագեալ // ագուցեալ, չր.* մի տեղ մնալ՝ գիշերել, օթևան գտնել:
*Ագահութիւն, եան, գ.* ագահ՝ անկուշտ լինելը:
*Ագարակ, ի, աց, գ.* արտ. հող. բնակատեղի, գյուղ:
*Ագի, ւոյ, եաց, գ.* պոչ:
*Ագազանամ // ագազանիմ // ագազիմ, ագայ // եգայ, չր.* չորանալ, ցամաքել:
*Ազատ, ի, աց, գ., ած.* ազնվական. անկախ, ազատված, առանց արգելքի:
*Ազատութիւն, եան, գ.* ազատ՝ անկախ լինելը. անկախություն. ազնվականություն. մեծահոգություն:
*Ազգ, ի, աց, գ.* տեսակ. սերունդ. ցեղ. տոհմ, ժողովուրդ, տուն. դար, ժամանակ:
*Ազգային, ոյ, ոց, ած.* տվյալ ցեղին՝ ժողովրդին, ազգին վերաբերող. ազգական:
*Ազգապետ, ի, աց, գ.* ազգի՝ տոհմի՝ ցեղի առաջնորդ՝ պետ:
*Ազգատոհմ, ի,ից // աց, գ.* տոհմ. ցեղ. տոհմի մի ճյուղ:
*Ազգի ազգի, ած., մկբ.* տեսակ-տեսակ, բազմազան. զանազան կերպով:
*Ազնիւ, ուի, ուաց // ուից, ած., մկբ., միջ.* լավ, սիրուն, սրբազան. շատ լավ. շատ ապրես:
*Ազոխ, ի,ից,* գ. խակ՝ չհասած խաղող:
*Ալոջ, ի, աց,* գ. էգ ուլ:
*Ալիք, եաց, գ.* կոհակ, ալիք:
*Ախտ, ի,ից, գ.* կիրք, կարիք. ցավ, հիվանդություն. պակասություն. ցանկասիրություն:
*Ախտահալած, ած.* ախտը՝ հիվանդությունը վերացնող:
*Ածեմ, ածի, ա՛ծ, նր.* բերել, տեղից տեղ տանել, լցնել, դրդել. խփել:
*Ածու, ոյ, գ.* բանջարանոցի մարգ. փոքր մաս:
*Ականատ, ի,ից // աց, գ.* թակարդ, բռնելու սարք:
*Ականաւոր, ի, աց, ած.* նշանավոր, հայտնի, աչքի ընկնող:

*Ակնածեմ, եցի, չբ.* ամաչել,
քաշվել, հեռու մնալ:
*Ակնարկեմ, եցի, չբ., նբ.* աչքով
նշան անել, աչքով ցույց
տալ. պատկառել. աչք
գցել. թեքևակի նայել.
նկատել:
*Ահեակ, ի, ած., գ.* ձախ. ձախ
կողմը,
ձախ կողմում՝ կողմից:
*Աղաղակ, ի, աւ, գ.* բարձր՝
աղմկային ձայն.
աղմուկ:
*Աղամող, ած.* շեղված.
մոլորված:
*Աղանդ, ոյ, ոց // ից, աց. գ.*
կրոնական ուսմունք՝
հիմնականից շեղված,
հոգևոր այլախոհություն:
*Աղեղն, ան, ունք, անց,* գ. աղեղ,
ջուլհակի մի տեսակ գործիք:
*Աղեղնաւոր, ի, աց, ած. , գ.*
նետ ու աղեղով զինված.
նետաձիգ:
*Աղխ, ի, ից, գ.* մեկ գերդաս-
տանի մարդկանց խումբ՝
բազմություն. գույք,
ունեցվածք:
*Աղու, ած.* համով, հաճելի,
հեզաբնույթ. նենգ,
կեղծավոր:
*Աղտ, ոյ, ով, գ.* կեղտ. ցեխ,
տիղմ. մոլություն. մեղք:
*Աղքատ, ի, աց // ոյ, ով, ած. , գ.*
ընչազուրկ, չունևոր.
կարիքավոր:

*Աղօքք, ից, գ.* դիմում՝ աղաչանք
առ աստված. աստծուն
դիմելու կարգ:
*Աճապարեմ, եցի, չբ.* շտապել,
փութալ:
*Աճեմ, եցի, չբ.* աճել, վեր
բուսնել. զարգանալ:
*Աճումն, ման, գ.* աճելը, վեր
բուսնելը:
*Ամամ, ացի, ա ՛, նբ.* լցնել,
թափել. դատարկել:
*Ամբառնամ, բարձայ, չբ.* վեր
կենալ՝ ելնել. բարձ-
րանալ. վերանալ.
կանգնել:
*Ամբարիշտ // ամպարիշտ,*
*ըշտի, ըշտաց, ած.*
անիրավ, չարագործ.
անօրեն. հանդուգն:
*Ամբոխ, ի // ոյ, ից, գ.*
բազմություն, ամբոխ.
իրարանցում, փոթու-
թյուն:
*Ամենայն, ի, իւ, գ.* ամեն, բոլոր.
ամենքը, ամեն մեկը. որևէ
բան:
*Ամենաբոյս, ած.* ամեն ինչ
աճեցնող. ամեն տեղ
աճող՝ բուսնող:
*Ամենաբուղխ, ած.* ամեն ինչ
առաջ բերող՝ բխեցնող:
*Ամենագիւտ, ած.* ամեն ինչ
գտնող՝ ի հայտ բերող:
*Ամենալի, ած.* ամեն ինչով լի՝
առատ. լեփ-լեցուն:
*Ամեներեան // ամեներին,*
*եցունց // եցուն, դեր.*
ամենքն էլ. ամբողջ:

*Ամուսնասէր,ած.* ամուսնուն՝ զուգակցին սիրող՝ հավատարիմ:
*Ամրանամ, ացայ, չբ.* ամուր՝ պինդ դառնալ. պնդանալ. տեղավորվել:
*Ամրաշէն,ած.* ամուր շինված՝ կառուցված:
*Ամոքեմ, եցի, նբ.* քաղցրացնել, մեղմել. եփել. մարսել:
*Այլ, ոյ մէ, դեր., ած.* այլ, ուրիշ. մնացածը:
*Այժեամն, ժեման, մունք, մանց, գ.* այժյամ:
*Այնուհետև, մկբ.* դրանից հետո, ապա, հետո:
*Այսչափ, դ.* այս չափով՝ քանակով;
*Այսպէս, դեր., մկբ.* այս կերպով. այսպիսի:
*Այր, առն, յառնէ, արամբ, գ.* այր մարդ, տղամարդ. ամուսին:
*Այր, ի, իւ, գ.* քարայր:
*Այրևձի // այրուձի, այրուձիոյ // առնևձիոյ, գ.* հեծելազոր, ձիավոր զորք:
*Անապաշաւ, ած., մկբ.* անզղջում. չզղջացող. չտրտմող, չափսոսացող:
*Անարգան // անարգանք, ի, աց, գ.* անպատվություն, արհամարհանք, նախատինք, նախատելը. խայտառակ լինելը:
*Անարգեմ, եցի, նբ.* արհամարհել, անարգանքի ենթարկել. նվաստացնել. անպատվել:
*Անբասրական, ած.* անմեղադրելի, անբասիր:
*Անբաւ, ի, իւ, ած, մկբ.* շատ. անչափ. անհաշիվ. խիստ շատ:
*Անգառագեղ // անգառագիղ, ած.* ազատ՝ անկաշկանդ ման եկող, առանց վանդակի:
*Անգիտելի, ած.* անիմանալի, անհայտ. անհաս:
*Անգիտութիւն, եան, գ.* չիմանալը, չգիտենալը:
*Անգիր, ած., մկբ.* առանց գրի առնելու, բանավոր. առանց գրի՝ գրքի. բերանացի:
*Անդեայ, դէոյ, ոց // իւ (անդեայք, եայց // անդի, դւոյ, ոց). գ.* խոշոր եղջերավոր անասուններ. նախիր:
*Անդունդ, ոյ, ոց, գ.* շատ խորը տեղ. գետնի՝ ծովի խորքերը:
*Անդուստ, մկբ.* այնտեղից, նրանից հետո. այն ժամանակվանից, այն կողմից:
*Անդստին, մկբ.* հենց սկզբից, նրանցից հետո, իսկույն, անմիջապես:
*Անդրագոյն, ած.* ավելի ևս. առավելագույն:
*Անդրէն, մկբ.* հետ, նորից, դեպի

այնտեղ, նույն տեղը. դարձյալ, կրկին. փոխաբինաբար, նրա տեղը. նույն ժամանակ:

*Անեպեր, ած., մկբ.* անպակաս. պակասություն չունեցող, անվնաս:

*Աներևույթ, ի, իվ. ած., մկբ.* չերևացող. տեսողությունից հեռու գտնվող. չերևացող ձևով:

*Անըստգիւտ // անստգիւտ, ած.* պակասություն չունեցող. խղճմտանքից ազատ:

*Անիմաստասէր, ած.* իմաստություն չսիրող. գիտելիքից հեռու եղող:

*Անխայեմ // անխայեամ, եցի, նբ., չբ.* խնայել, խնամք տածել. գթալ, զգուշանալ. չխնայել, զգուշացնել:

*Անխայութիւն // անխայումն, եան // ան, գ.* խնայելը, զգուշանալը:

*Անկանեմ, անկի, նբ.* հյուսել, գործել:

*Անկանիմ, անկայ, անկի՛ր, չբ.* ընկնել. դիմել. մատնվել, պաշարվել. դադարել, պակասել. զրկվել:

*Անկարօտ, ի, իվ, ած., մկբ.* անպակաս, առատ. կարիք՝ պակասություն չունեցող. առատորեն:

*Անկողնարկ լինիմ,* անկողին գցել. պառկել:

*Անհամբոյր, բուրի, իվ, ած.* վայրենի, կատաղի, անհաշտ, անհարմար, անհանդուրժելի:

*Անհանճար, ի, իվ // ավ, ած.* ոչ խելացի, անմիտ, անիմաստ. ոչ բանական:

*Անհաս, ի, իվ, ած.* անհասանելի. անհասկանալի. ոչ հասու. գաղտնի, ծածուկ:

*Անհաստատ, ի, ավ, ած.* խախուտ, անհաստատուն. դյուրափոփոխ, անկայուն:

*Անհնարին, ած., մկբ.* անկարելի, անհնար. սաստիկ. անձեռնմխելի. չափազանց:

*Անհուն, հնի, հնիվ // հունվ, ած., մկբ.* անչափ, անհամար. չափից ավելի, չափազանց:

*Անձկալի, լոյ, եավ, ած.* կարոտալի, փափագելի, ցանկալի. կարոտով՝ փափագով լի:

*Անձկութիւն, եան, գ.* զրկանք. նեղություն, տառապանք. փափագ, կարոտ. տենչալը:

*Անձնահաճ // անձնահաճոյ, ի, իվ, ած.* ինքնահավան, ինքնահաճ. մեծամիտ, ամբարտավան:

*Անձնեայ, ած.* նշանավոր, անձնովին. մեծ:

*Անձրև, ի // ոյ, ագ. գ.* տեղում. ցող. առատություն:
*Անճոռնի, ւոյ, եաց, ած.* չափից ավելի մեծ. հաղթանդամ. այլանդակ, անհեթեթ:
*Անոպայ, ի, ից, ած., մկբ.* անկիրթ, անտաշ, կոպիտ, վայրենի. անշնորհք ձևով:
*Անուղղայ, ի, ից, ած.* անխրատելի, կոպիտ. ծուռ:
*Անուն, ուան, անք, անց, գ.* անվանում. համբավ, հռչակ. անձ:
*Անուանեմ, եցի, նբ.* անուն դնել. անունը տալ. անունով կոչել՝ դիմել:
*Անուշահոտ, ի, իցձ ած.* անուշ հոտ ունեցող, հաճելի, ախորժելի:
*Անուշարար, ած.* անուշացնող, անուշ դարձնող. քաղցրեղեն շինող՝ պատրաստող:
*Անպակասութիւն, եան, գ.* անպակաս լինելը, չպակասելը. առատութիւն:
*Անսաստեմ, եցի, չբ.* չհնազանդվել, չլսել, ըմբոստանալ. հակառակվել:
*Անսկիզբն, ան, ունք, անց, ած., մկբ.* սկիզբ չունեցող, անհիմն. անծին. անմեղ. անհիմն կերպով:
*Անվկանդ, ած.* անդիմադրելի, անհաղթելի. անպարտելի:
*Անտի, մկբ.* այնկողմ. այնտեղից. (ցուց. հոդ.) «այն»:
*Անցանեմ, անցի, ա՛նց, չբ.* անցնել. առաջ գնալ, շեղվել, չափն անցնել. հեռանալ. հանգչել. մեռնել:
*Անցաւոր, ի, աց, ած., գ.* անցնող, անցողիկ. ժամանակավոր, վաղանցիկ. անցած. անցորդ, ուղևոր:
*Անքատ, ի, ից // աց, ած.* ընչազուրկ, չունևոր, աղքատ. նվաստ, խեղճ:
*Անքնին, ած.* քննության չառնվող, չքննվող. առանց քննության. անխորհուրդ:
*Անքննութիւն, եան, գ.* առանց քննության առնվելը, անքննելի լինելը:
*Աշխար, գ.* ողբ, լացուկոծ. վայնասուն:
*Աշխարեմ, եցի, նբ.* լաց, ողբալ, լացուկոծ դնել, զղջալ:
*Աշխարհ, ի, աց, գ.* աշխարհ, երկիր. հայրենիք. աշխարհի բոլոր կողմերը՝ մարդիկ. կյանքը, իրականությունը:
*Աշխարհական, ի, աց, ած., գ.* ողջ աշխարհին վերաբերող. ընդհանուր՝ համաշխարհային. երկրային. աշխարհիկ:
*Աշխարհահոզ, ած.* աշխարհի՝ երկրի մասին՝ նկատ-

մամբ հոգացող՝ հոգ տանող:

*Աշխէտ, ած.* դեղինին մոտ կարմիր գույնի (ձի):

*Աշտարակ, ի, աց, գ.* ամրություն՝ ամրոցների, պարիսպների վրա. հսկման բարձրադիր կետ:

*Աչագեղ, ոյ // աչագեղեայ, ած.* գեղեցիկ աչքեր ունեցող. գեղաչյա:

*Աչիկ, ունք, գ.* փոքր՝ վառվռան, գեղեցիկ աչքեր:

*Ապա // ապայ (յապա // յապայ), ած., մկբ.* գալիք, հետո լինելիք. հետո, այնուհետև:

*Ապաժաման, ած.* ուշացած, հետ մնացած՝ ընկած. դանդաղկոտ, թույլ:

*Ապաժոյժ, ի, աւ, գ., ած.* հեղված արյուն, արյունահեղություն. արյան հոսելը. նտանելի, արյունաթաթավ:

*Ապականեմ, նր. գ.* փչացնել, խանգարել, ավերել, պղծել, ոչնչացնել:

*Ապականիչ, ի, աց, ած.* փչացնող, խանգարող, ավերող, պղծող, ոչնչացնող:

*Ապականութիւն, եան, գ.* փչացնելը, խանգարելը, ավերածություն, պղծություն, ոչնչացում:

*Ապաշաւ, ի, իւ // աց, գ., ած.* զղջում, ափսոսանք. խեղճ, ցավալի, փոսալի:

*Ապառում, ած.* անամոթ, անզգամ, անխրատ. բիրտ, կոպիտ:

*Ապարանք, իւ, գ.* պալատ, մեծ տուն՝ կառույց:

*Ապաւէն, ւինի, աց, գ.* օգնական, ապաստան, զորավիգ:

*Ապաւինեմ, եցի, նր.* իրեն քաշել, իր կողմը քաշել:

*Ապաւինիմ, եցայ, չբ.* մեկի վրա հույս դնել, վստահել:

*Ապաքէն, եղբ.* իհարկե, իսկապես, հարկավ, ստույգ:

*Ապիկար, ի, աց, ած.* անկարող, անհաս, տկար:

*Ապիմակ, ի, աց, ած.* անհասկացող, տգետ, անխելք:

*Ապիրատ, ի, իւ // աց, ած.* անիրավ, չար. անտեղի, անվայել, արտաքսված:

*Ապիրատութիւն, եան, գ.* անիրավություն, անզգամություն. անպատշաճ լինելը:

*Աջողութիւն, եան, գ.* հաջող լինելը, օգնելը. հաջողություն, բախտը բերելը, բարեբախտություն:

*Առածանիմ //առածիմ, այ//եցայ, չբ.* շրջել, պտտվել. դառնալ:

*Առ, ի, իւ, գ.* կողոպուտ, ավար. առնելը, առնվելը:

*Առակեմ, եցի, նբ.* օրինակ բերել, նմանեցնել. նշանակել. խայտառակել. կեղծել:

*Առաջի, նխդ.* առջևը, առաջ, դիմացը. դեմը. առջևից:

*Առաջիկայ, ի, աց, ած.* մոտակա. ներկա. մոտ ապագայում եղող՝ կատարվելիք:

*Առաջին, ոյ, ոց, թվ., ած.* կարգի մեջ սկզբինը. անդրանիկ, առաջնածին. երախայրիք. գլխավոր. առջևում եղող:

*Առասան, ի, ից // աց, գ.* պարան, կապ:

*Առասանակ, ի, աց, գ,* բարակ, պարան, նուրբ կապ:

*Առաւելում, ի, նբ.* ավելացնել, հավելել, շատացնել. մեծացնել:

*Առաւելում, այ, կբ. չբ.* ավելանալ, շատանալ. մեծանալ. գերազանցել:

*Առաքեմ. եցի, նբ.* ուղարկել, առաքել:

*Առաքինի, նոյ, նեաց, ած.* քաջ, ուժեղ, անվախ. գովելի. կանոնավոր:

*Առաքինութիւն, եան, գ.* քաջութիւն. գովելի հատկություն. անոնավոր լինելը, կատարելություն:

*Առեւծ // առիւծ, ոյ // ու, ունք // ք, գ.* առյուծ կենդանին. մի կենդանակերպ՝ յոթներորդ:

*Առնեմ, արարի, ա՛ռ, նբ.* անել. ստեղծել, արարել, ունենալ:

*Առնութիւն, եան, գ.* առնականություն. ուժեղություն, ողջություն:

*Առնում, առի. ա՛ռ, նբ.* առնել, բռնել. վերցնել. տիրել, գրավել. սկսել:

*Առոգաւակ, ած.* առույգ գավակով. թիկնեղ, թիկունքը լիքը:

*Առողջութիւն, եան, գ.* առողջ լինելը. առողջանալը. ողջություն. անարատություն:

*Առօրին // առ օրին, մկբ.* իսկույն, նույն օրը:

*Ասեմ, ացի, ասա՛, նբ.* ասել, պատմել. հաղորդել. անունը տալ:

*Ասպատ // ասպատակ, ի, աց, գ.* արշավող ձիավոր կողոպտիչ խումբ. արշավանք՝ ձիավոր խմբով:

*Ասպար, ի // ով, աց, գ,* վահան:

*Աստուածաբանական, ած.* աստվածաբանության՝ աստվածաբանին բնորոշ. աստվածայինին հատուկ:

*Աստուածային, ոյ, ոց, ած.* աստծուն հատուկ՝ բնորոշ. աստվածանման, վերին. սուրբ՝ սրբազան:

*Ատամն, ան, անց, գ.* ատամ, կտրիչ:

*Ատրուշան, ի, աց, գ.* մեհյան,

կրակարան. կրակատուն:
*Արածեմ, եցի, նր.* արածեցնել, արածել տալ. դալար խոտ ուտել՝ ատամներով. լափել. խժռել:
*Արբենամ, եցայ, եցեալ // եալ, չր.* հարբել, գինովնալ. լավ թրջվել:
*Արբուցանեմ, ուցի, ցո՛, պր.* խմեցնել. ծարավը հագեցնել. ջրել. ոռոգել:
*Արգահատեմ, եցի, չր.* խղճալ, գթալ, ողորմել. աղաչել, գութ հայցել. սփոփել:
*Արգանակ, ի, աց, գ.* մսի ջուր. մսաջուր:
*Արգասիք, եաց, գ.* արդյունք, պտուղ, բերք:
*Արգել, ոյ, ոց. (իւք), գ.* արգելք. բանտ:
*Արգելում, ի, ե՛լ, նր.* արգելել, փակել, բանտարկել, տիրել:
*Արդ, ու, ուց, գ.* ձև, կերպ. զարդ:
*Արդ, մկր.* այժմ, հիմա, արդիական, այժմյան:
*Արդ, շղկ.* այսպիսով, ուրեմն:
*Արդարացուցանեմ, ցուցի, ցո՛, պր.* արդարացնել, իրավունք տալ. մեղքից ազատել. հաստատել:
*Արդարև, եղբ.* իսկապես, անկասկած, իրոք, ստույգ:
*Արեգակն, ան, անց, գ.* արև, արեգակ. ցերեկային լուսատու:
*Արթնութիւն, եան, գ.* արթուն լինելը. զգաստություն, զգոնություն, աչալրջություն:
*Արժանաւորիմ, եցայ, չր.* արժանի լինել, արժանանալ:
*Արժանաւորութիւն, եան, գ.* արժանավոր լինելը. պատիվ, իշխանություն, հեղինակություն:
*Արծարծեմ // արծարծանեմ, ի // եցի, նր. կր.* բորբոքեմ, հրահրել, վառել. գրգռել. ոգևորվել, վառվել:
*Արկանեմ, արկի, ա՛րկ, նր.* գցել, նետել, դնել. կպչել, մտցնել, հագնել, հագցնել, վրան գցել. լցնել:
*Արձակեմ, եցի, նր.* ուղարկել, առաքել. արձակել, ազատել, բաց թողնել. դուրս հանել, սփռել:
*Արուեստ, ի, ից // աց, գ.* արհեստ, ճարտարություն, հնարք. ստեղծվածք. հրաշք. կեղծիք. ճարտար գործ:
*Արմանամ, ացայ, չր.* զարմանալ:
*Արտօսր, գ.* արտասուք:
*Արտօսրալիր, մկր., ած.* արտասվալից:

*Արմատաքի, ին, մկբ.* արմատով, արմատից. արմատն էլ հետը:

*Արքայ , ի, իցՙ գ.* թագավոր. արքա:

*Արքայատուր, ած.* արքայի՝ թագավորի կողմից տրված՝ հրահանգված:

*Արքայութիւն, եան, գ.* մեծություն. թագավորություն:

*Արքունի, նոյ, նեաց, ած.* արքունական, թագավորական:

*Արօտ, ի, իցՙ գ.* անասունների ճարակ՝ խոտ. դաշտում արածելու տեղ. արոտավայր. արածելը:

*Արօտական, ի, աց, ած.* արոտով կերակրվող. արածող:

*Աւագ, ի, աց, ած. , գ.* մեծ. իշխան: *Աւագանի, նոյ, նեաւ // նով, նեաւք, (աւագայնի), գ.* ավագներ, ավագանի:

*Աւար, ի // ոյ, աւ, աց // իցՙ գ.* կողոպուտ, ավար:

*Աւազան, ի, աց, գ.* ջուր հավաքելու տեղ՝ գուռ, ամբար. մկրտելու՝ թաթախման ավազան:

*Աւանիկ,* նույնը՝ *Ահաւանիկ:*

*Աւասիկ,* նույնը՝ *Ահաւասիկ:*

*Աւերեմ, եցի, նբ.* քանդել, կործանել, ավերակի վերածել. անշեն, ամայի դարձնել. ամայացնել:

*Բազմամաբար, մկբ.* միատեղ:

*Բազմաժեմ, եցի, նբ.* միավորել, միատեղել. մբողջացնել:

*Բազմակոյտ, կուտի, ից, ած.* շատ կուտակված. խռնված. մեծ կուտակում:

*Բազմանամ, ացայ, չբ.* ավելանալ. շատանալ. լցվել:

*Բազմիմ, եցայ, չբ.* սեղան նստել. հանդիսավորապես նստել:

*Բազմութիւն, եան, գ.* շատություն. կուտակում:

*Բազում, զմի, մաց, ած., գ.* շատ. շատ լինելը:

*Բաժ, ի, իցՙ գ., ած.* բաժին, մաս. տուրք, հարկ. մասնակից:

*Բաժակ, ի // ոյ, աւ, գ.* գավաթ, ըմպանակ. բաժակի պարունակությունը. ծաղկի բաժակ:

*Բաժակակալ, ած.* բաժակը կալցնող՝ առնող, տակը դրվող (ափսե):

*Բախեմ // բաղխեմ, եցի, նբ., չբ.* խփել, զարկել, հարվածել. ուժգին դիպչել. հետ մղել:

*Բայոց, ի, աց, գ.* որջ. արջի ձմռան քուն:

*Բան, ի, իցՙ գ.* խոսք, զրույց, պատմություն. գործ՝ գրվածք, ճառ, բառ. գրվածքի մաս՝ գլուխ. լեզու. իր. առարկա. նյութ:

*Բանադրեմ, եցի, նբ.* նզովել, նզովքի ենթարկել. մեղադրել:
*Բանակատեղ // բանակետող, եղ, եղք, եղաց.* բանակի տեղավորված վայր. բնակատեղի:
*Բանջար, ոյ, ոց // ի, իւ // աց,* գ. ուտելի՝ ոչ մշակովի խոտաբույս. դաշտի ուտելի կանաչեղեն:
*Բառնամ, բարձի, բա՛րձ, նբ., չբ.* վերցնել, վեր հանել՝ բարձրացնել. շալակել. վերացնել. բեռնել. վերանալ:
*Բասրեմ, եցի, նբ.* մեղադրել. բամբասել. խաբել. զրպարտել, վատաբանել:
*Բարբառ, ոյ, ոց, գ.* խոսք. ձայն. լեզու, բարբառ. աղմուկ, անտեղի ձայն:
*Բարբանջեմ // բարբաջեմ, եցի, նբ., չբ.* ավելորդ խոսել. ցնդաբանել:
*Բարեգնաց, ի, իւ, ած.* արագընթաց. *արագահոս:*
*Բարեկարգասէր, ած.* բարեկարգ՝ բարվոք վիճակ սիրող. բարեկարգ լինելուն համամիտ:
*Բարեմոյն, ած.* առողջ, առույգ. կայտառ. հանգիստ սրտով:
*Բարի, ւոյ, եաց, ած.* լավ, ընտիր, բարի. ընդունելի:
*Բարիոք // բարւոք, մկբ. ած.* լավ, լավ ձևով. կարգին:
*Բարձ, ի, իւ, գ.* գլխի տակ դնելիք, անկողնի պարագա. նստարան. պատիվ, աստիճան:
*Բարձերէց, ած.* առաջին բարձին կամ բարձերին նստող՝ իբրև հարգանք:
*Բարձկնեար, ներոյ, գ.* բազմոցին դրված փոքր բարձեր՝ թիկնելու, մի կողմի վրա հենվելու:
*Բարձրագահ, ած.* գահը՝ աթոռը բարձր. բարձրադիր, փառապանծ:
*Բարձրանալ, ացայ, չբ.* վեր ելնել. սաստկանալ, ուժեղանալ. մեծանալ, բարգավաճել. բարձր դիրք գրավել. ամբարտավանել, մեծամտանալ, գոռոզանալ:
*Բարձրութիւն, եան,* գ. բարձունք. բարձր տեղ:
*Բարսմունք, անց, գ.* բարակ ճյուղերի կապոց՝ մոգական հմայության համար:
*Բարք, ուց, րուք // րիւք (բարոյք, ոյից, ոյիւք), գ.* բնույթ, բնավորություն. կերպ, եղանակ. սկզբունք, կարծիք. օրենք, սովորույթ:
*Բացերևակի, մկբ.* հայտնապես. հայտնի կերպով:
*Բացօթեագ, ի, աց, ած., մկբ.* բաց տեղ, բաց երկնքի տակ օթևանող՝ գիշերը մնացած:

*Բերդ, ի, իւ // աւ, գ.* պաշտպանական ամրություն՝ ամրոց. ամուր կառույց:

*Բերեմ, ի, բեր, նբ.* մոտեցնել. մոտ բերել՝ հեռվից. տալ՝ մատուցել. համբերել. իր մեջ պարունակել՝ ունենալ. պատճառել, առաջացնել. վարել, մղել:

*Բեւր // բիւր, ու, ուց // ի, եաւ // ոյ, ոց, թվ., ած., մկբ.* տասը հազար. անչափ շատ, անթիվ, անհամար. շատ անգամ, բազմապատիկ, բազմիցս:

*Բիժ, ոյ, գ.* ճպուռ. աչքի կեղտ. բիծ. արատ:

*Բխեմ // բղխեմ, եցի // եցայ, չբ., նբ.* դուրս հոսել, դուրս տալ, թափվել. դուրս գալ. բուսնել. հոսեցնել, զեղել:

*Բնաբանական, ի, աց, ած.* բնախոսական, բնագիտական. բնախոսությանը հատուկ՝ բնորոշ:

*Բնակասնունդ, ած.* բնական սնուցում. իր կաթով սնուցելը:

*Բնակեմ // բնակիմ, եցի // եցայ, չբ.* մի տեղ բնակվել, մի տեղ ապրել՝ մնալ. բնակություն հաստատել:

*Բնակետղ, ետեղ, գ.* նակավայր, բնակության տեղ, բնակարան:

*Բնակութիւն, եան, գ.* բնակվելը, մի տեղ ապրելը, սովորություն:

*Բնութիւն, եան, գ.* իսկություն, էություն. էակ, առարկա. բնավորություն, սովորություն. ըստ սեռի տարբերում. բնության ուժը՝ ներգործությունը:

*Բոկոտն, մկբ.* ոտաբոբիկ, մերկ ոտքերով:

*Բողբոջ, ոյ, ոց // ի, ից // աց. գ.* ծիլ, ընձյուղ. սերունդ. զարմ:

*Բորբոքեմ, եցի, նբ.* բոցավառել. կրակ արծարծել. գրգռել, հուզել:

*Բուն, բնի // բնոյ. իւ //աւ, ից, իւք, գ.* բույսի՝ ծառի հիմնական մասը. որևէ առարկայի կոթ:

*Բուն, ած. // եղբ.* իսկական, բնիկ. բուն, հենց այդպիսին:

*Բուսաբեր, ած.* բույս բերող՝ բուսցնող. բուսածին, ծառ, տունկ:

*Բուսանիմ, սայ, սի՛ր, չբ.* բուսնել. սկսվել, սկիզբ առնել:

*Բուրաստան, ի, աց, գ.* բուրավետ տեղ՝ ծաղկաստան. բույսերով առատ տեղ. բնակավայրի մերձակայք:

*Բռնանամ, ացայ, չբ.* բուռն առնել, բռնությամբ

տիրել. ճնշում գործադրել. բռնակալ լինել:
*Բռնաւորութիւն, եան. գ.* բռան մեջ առնելը՝ բռնակալ լինելը, բռնակալություն:
*Բռնութիւն, եան, գ.* բռնանալը, իր կամքը թելադրելը. սաստկություն, սաստիկ լինելը:
*Բրեմ, եցի, նր.* փորել, փոս անել, քանդել:
*Գալարեմ, եցի, նր.* ոլորել, փաթաթել. որովայնի ցավեր զգալ:
*Գահոյք, ոյից, գ.* արքայական գահ. անկողին. դեսպակ:
*Գամ, եկի, ե՛կ, եկա՛յք. եկեալ, չք.* գալ, տեղ հասնել:
*Գայթեմ // գայթիմ, եցի // եցայ, չք.* սայթաքել, ոտքն արգելքի առնել. սխալմունքի մեջ ընկնել:
*Գալուստ, եան. գ.* գալը. տեղ հասնելը:
*Գահավէժ, ած.* բարձր տեղից արագորեն ցած գլորված:
*Գաղտագողօնք, գ.* գաղտնի՝ ծածուկ հնարք. գողություն:
*Գարնանային // գարնային, ոյ, ա.* գարնանը բնորոշ՝ հատուկ. գարնանը կատարվող:
*Գարշապար, ի, աց, գ.* ոտքի կրունկ՝ հետին մասը. ոտնահետք:
*Գաւառ, ի, աց, գ.* երկրի մեծ տարածք. երկրամաս:
*Գաւառապետ, ի, աց, գ.* գավառի վերակացու՝ կառավարիչ:
*Գեղ, ոյ, ոց, գ.* գեղեցկություն. տեսք. երես:
*Գեղապատշաճ, ած.* պատշաճորեն գեղեցիկ. բավարար գեղեցիկ:
*Գեղեցիկ, ի, աց, ած., մկբ.* գեղանի, սիրուն. վայելուչ. հաճելի. լավ, ընտիր, վայելչորեն, գեղեցկորեն:
*Գեղեցկանիստ, ած.* լավ նիստ՝ դիրք ունեցող:
*Գեղեցկութիւն, եան, գ.* գեղեցիկ լինելը:
*Գետնախշտի // գետնախշտեայ, ած.* առանց անկողնու գետնին պառկող. գետնին մեկնված:
*Գերութիւն, եան, գ.* գերի լինելը. գերիներ:
*Գթամ, ացայ, գթա՛, չք.* խղճալ. գութ ունենալ. փափագել:
*Գիներբեր // գինէբեր, ած.* առատ գինի տվող. գինեվետ:
*Գիտութիւն, եան, գ.* գիտելիք. իմացություն. գիտենալը:
*Գիրութիւն, եան, գ.* գեր լինելը. պարարտություն:
*Գլխաւոր, ի, աց, գ.* վերին մաս, ծառերի կատարը:

*Գոլորշի // գոլոշի, ւոյ // ոյ, եաց, գ.* շոգի. եռացող ջրից առանձնացող գազ՝ ջերմություն:

*Գոյութիւն, եան, գ.* գոյություն ունենալը, գոյանալը:

*Գործ, ոյ, ոց, գ.* աշխատանք, զբաղմունք. աշխատելը. ծառայություն. արարմունք. շինվածք:

*Գումարեմ, եցի, նք.* հավաքել, ի մի բերել, ավելացնել. խմբել:

*Գունդագունդ // գունդ գունդ, ած., մկբ.* գնդերով, գունդ գնդի հետ՝ հետևից:

*Գտանեմ, գտի, գի՛տ, նք.* գտնել. կարողանալ:

*Գօսանամ, ացայ, չք.* չորանալ, փայտանալ:

*Գօտեւորեմ // գօտեւորիմ, եցի // եցայ,* գոտի կապել, գոտևորվել. գոտեպնդվել:

*Դադարեմ // դադարիմ. եցի // եցայ, չք.* դադար՝ հանգիստ առնել. մի տեղ իջևանել:

*Դահիճ, ի, աց, գ.* պատիժն իրագործող անձ. անգութ՝ բռնացող:

*Դայեակ, յեկի, աց, գ.* խնամածու. ծծմայր. սնուցող, դաստիարակ:

*Դանդաչանք, նաց, գ.* տարակուսող միտք. ցնդաբանություն. անմտություն:

*Դաշխուրան, ի, աց,* տաշտ, կոնք:

*Դաշտ, ի, ից, գ.* բաց տարածք, վայր. արոտատեղի. մշակվող տեղ՝ տարածություն:

*Դաշտավայր, ի, աց, գ., ած.* դաշտի նմանվող տեղ՝ տարածք. հանդ. դաշտային:

*Դառնագոյն, ած.* չափից ավելի դառն. անասելի դառն:

*Դառնապէս, մկբ.* դառն կերպով, դառնորեն, ցավալիորեն:

*Դասադաս, ած., մկբ.* խումբ-խումբ, դաս-դաս:

*Դաստակերտ, ի, աց // ից, գ.* ձեռնաշեն վայր. ագարակ. ավան, կալվածք:

*Դաստառակ, ի, աց, գ.* ձեռքի սրբիչ. թաշկինակ. մաքուր կտավ:

*Դարանակալ, ի, աց, ած.* դարան մտած. աքռակից. կից նստած:

*Դարաստան, ի, աց, գ.* ծառաստան. ծառերով խիտ տեղ:

*Դարաւանդ, ի, աց, գ.* բարձրադիր տեղ. լեռան գագաթ. գետի ափ. առարկայի դուրս ընկած մաս:

*Դարձ, ի, ից, գ., մկբ.* դառնալը, դարձ. դարձվածք. դարձյալ:

*Դարման, ոյ, ոց // ի, ից, գ.* դեղ. ճար. հնար. հիվանդի կեր. կերակուր:
*Դարմանիչ, նչի, աց, գ.* դարմանող, բուժիչ:
*Դաւանութիւն, եան, գ.* դավանելը. դավանանք:
*Դեղեւեմ // դեղեւիմ, եցի //եցայ, նբ., չբ.* տարուբերվել, դողդողալ, շարժվել:
*Դէպ. դիպի, ած.* հարմար. պատեհ:
*Դեսպակ, ի, աց, գ.* պատգարակ հիշեցնող կառք՝ ծածկոցով:
*Դժնութիւն, եան, գ.* դաժանություն. անողոքություն:
*Դիաթաւալ, ած.* գետնին տապալված՝ իբրև դիակ. սպանված:
*Դիպահ, գ.* կարճ ժամանակով արգելարան՝ բանտ:
*Դիպան, ած.* հարմար, պատշաճ:
*Դիպեցուցանեմ, ցուցի, ցո՛, պբ.* դիպցնել. հարմարեցնել:
*Դիր, դրի, ից, գ.* դնելը, դրվելը, դիրք. կերպ, կարգ. բնաբան. կետ դնելու՝ դադար առնելու տեղ. դադար:
*Դիւան, ի, աց, գ.* արքունի դահլիճ. ատյան. գրատուն, արխիվ, դպրոց:
*Դիւրաւ // դիւրեաւ, մկբ. // ած.* հեշտ կերպով, հեշտությամբ. դյուրին, լավ:
*Դիւցազն, զին // զան, զունք, զանց, ած., գ.* աստվածներից սերված. քաջ, անպարտելի. առաքինի, քաջարի հերոս:
*Դիք, դից // դիւց, դիօք, գ.* հեթանոս աստվածներ. կուռքեր. կուռքերի արձաններ:
*Դնեմ, եդի, դի՛ր, դի՛ք, նբ.* դնել. համարել. անել, կարգել. տալ:
*Դուզնաքեայ, քէի // քւոյ, քոյ, ած.* չնչին, մանր, թեթև. հասարակ. *աննշան:*
*Դուռն, դրան, դրունք // դուրք, դրանց // դրաց, գ.* դուռ. արքայական պալատ. արքունիք:
*Դուստր, դստեր, երց // երաց, գ.* աղջիկ զավակ. դուստր:
*Դպրութիւն, եան, գ.* գիր. այբուբեն. գրագիտություն. գիրք, մատյան. գրականություն. դպրի պաշտոն:
*Դրացի, ւոյ, եաց, գ.* հարևան, դրկից. սահմանակից. մերձավոր:
*Դսրովեմ // դըսրովեմ, եցի, նբ.* նախատել. պարսավել, պախարակել, այպանել:
*Ելանեմ, ելի, ե՛լ, չբ.* ելնել. ծագել. բխել. տարածվել. հոչակվել. վեր ելնել. բարձրանալ. նստել. հեծնել. կատարվել:

*Եկ, ի, ոց, գ.* եկվոր. դրսեցի:
*Եկ, ի, ից, գ.* գալը. գալուստ:
*Եղբայրութիւն, եան, գ.* եղբայր լինելը. վանականներ՝ միաբանություն:
*Եղբօրորդի, ւոյ, ւոց // եաց, գ.* եղբոր զավակ՝ որդի. մտերիմ:
*Եղեգնիկ // եղէգնիկ, գ.* փոքր՝ բարակ եղեգն. նուրբ՝ գրավիչ եղեգն:
*Եղկելի, ած.* ողորմելի, թշվառական:
*Եղուկ, ձյն.* ավա՜ղ, ափսո՜ս, ո՜հ, ա՜խ, վա՜խ, վա՜յ:
*Եպերանք, նաց, գ.* ամոթանք. պարսավանք, նախատինք:
*Եպիսկոպոս, ի, իգ // աց, գ.* կրոնական՝ հոգևորական մի աստիճան. թեմի՝ գավառի առաջնորդ:
*Եռամ, ացի // ացայ, ացեալ // եռեալ, չբ.* եռալ. վառվել. վխտալ:
*Երագահաս, ած.* արագահաս. փութկոտ, արագաշարժ:
*Երախան, ի, աց, գ.* սեղանակիցների խումբ. սեղան:
*Երակ, ի, աց, գ.* արյունատար անոթ. նյարդ, ջիղ. ջրի մի ճյուղավորում. հանքի մի շերտ:
*Երամակ, ի, աց, գ.* կենդանիների՝ ձիերի խումբ՝ ջոկ:
*Երամանամ, ացայ, ացեալ, չբ.* երամ՝ խումբ կազմել. երամ դառնալ. չվելու պատրաստվել:
*Երանգ, ոյ, ոց // ի, աց, գ.* գույն, ներկ. գույնի ոսրություն:
*Երանելի, լւոյ, լեաց, ած.* երանության արժանի. երանելի, երջանիկ:
*Երբեք // երբէք, մկբ.* երբեմն:
*Երեկորին, ած., մկբ.* երեկոյան, իրիկնային. երեկոյան դեմ:
*Երես, ի //երեսք, աց, գ.* դեմք. երես. անձ. աչք:
*Երևիմ եցայ, չբ.* երևալ, դուրս ելնել՝ գալ. բուսնել. ծագել:
*Երևելի, լւոյ. լեաց, ած.* երևացող, տեսանելի. նշանավոր, անվանի:
*Երեքթևեան, ած.* երեք թև՝ ծայր ունեցող (նետ):
*Երթամ, չոգայ, ե՛րթ, երթա՛յք, երթեալ, չբ.* գնալ, շարունակվել:
*Երկայնամիտ, ած.* համբերատար, խոհեմ. հեզաբարո:
*Երկթերթի, ած.* երկու թերթ ունեցող. երկթերթանի:
*Երկթեւեան, ած.* երկու թև ունեցող. երկթևանի:
*Երկին. կնի, նաւ // նիւ, երկինք, նից, իւք, գ.* երկինք, վերին ոլորտ:
*Երկիր, կրի, րաւ, գ.* երկիր, երկրագունդ. աշխարհ.

գավառ. հող. գետին, ցամաք:

*Երկն, կան, կունք, կանց, գ.* երկունք. ծննդյան ցավ. տառապանք, տանջանք. ցավ. զրկանք:

*Երկնաղէգ, դիզի, աց, ած.* բարձր, երկնահաս:

*Երկնեմ, եցի, նք.* ծննդկանի ցավեր ունենալ. երկնել. չարիք նյութել:

*Երկոքեան, երկոցունց // երկոքին, երկոցուն, թվ.* երկուսն էլ, երկուսը մեկտեղ:

*Երկուորի, ւոյ, եաց, ած. , գ.* երկվորյակ ծնող. երկվորածին:

*Երկրաւոր, ի, աց, ած.* երկրի վրա գտնվող. երկրային. հողածին, հողեղեն. երկրին՝ աշխարհին վերաբերող,աշխարհային:

*Երփն, ի, ից, գ.* գույն, երանգ:

*Եւ, մկբ., շղկ., ած.* է՛լ. ավելի:

*Զանազանեմ, եցի, նք.* զատել. տարբերել. որոշել. փոփոխել.տեսակավորել:

*Զանգիտեմ, եցի, չք.* վախենալ. երկյուղ կրել. երկմտել:

*Զանցանեմ, ցի // ցեայ, չք.* գերազանցել, առաջ անցնել. անուշադրության մատնել:

*Զարթնում // զարթչիմ, թեայ, թի՛ր, թեայ, չք.* արթնանալ, զարթնել:

*Զարկանեմ, ի, զա՛րկ, նք.* խփել, զարկել, հարվածել:

*Զարմ, ի, ից. գ.* սերունդ, ցեղ. տոհմ. ազգատոհմ:

*Զբօսնում // զբօսանամ // զբօսանիմ, սայ // ացայ, սի՛ր , չք.* զբոսնել. մի բանով զբաղվել՝ ըստ հաճույքի. ուրախանալ:

*Զգենում, եցայ, ցի՛ր, հք.* հագնել, հագնվել:

*Զեղում, ի, զե՛ղ, նք.* լցնել, իրար վրա դնել՝ կուտակել, կուտակել:

*Զեռամ, ացի // ացայ. ռա՛, չք.* սողալ. վխտալ:

*Զինուորական, ած., գ.* զինվորին՝ զորականին բնորոշ՝ հատուկ. զինվոր. զինվորական դասի անձ:

*Զի. շղկ.* որ, որովհետև. որպեսզի. այնպես որ, թե:

*Զի՞, եղբ.* ինչո՞ւ, ի՞նչ պատճառով. ինչպե՞ս. որչա՞փ:

*Զմռնենի, նւոյ, նեաց, գ.* զմուռսի ծառ:

*Զուարթութիւն, եան, գ.* արտահայտված ուրախություն՝ հրճվանք. կայտառություն. առույգ լի-

նելը. անքուն հսկողություն:
*Զորաժողով, ի, գ.* զորք հավաքելը. զորահավաք. զորքի հավաքատեղի:
*Զորական, ի, աց, գ.* կտրիճ զինվորներ. պահապան զորք:
*Զորանամ, ացայ, չք.* սրտապնդվել. կտրիճ դառնալ. աճել, զարգանալ. ավելանալ:
*Զորանամ, ացայ, ցի՛ր, չք.* զորություն ձեռք բերել. զորեղանալ. արիանալ. քաջալերանք ունենալ. զգոն լինել. սաստկանալ:
*Զորավար, ի, աց, գ.* զորքի գլխավորը. զորապետ:
*Զորաւոր, ի, աց, ած.* ուժեղ. կտրիճ, հնարավոր, կարելի:
*Զորութիւն, եան, գ.* ուժ, կարողություն, քաջություն, ազդեցություն, ներգործություն. հարստություն:
*Էանամ, ացայ, չք.* գոյանալ. գոյություն ունենալ. գոյավորվել, բնավորվել:
*Էութիւն, եան, գ. բնույթ,* բնություն. գոյացություն. աստվածություն. իսկություն. գույք, ունեցվածք:
*Ըղձալի, ւոյ, եաց, ած.* փափագելի, սիրելի, բաղձալի:
*Ըմբերանեմ, եցի, նք.* բերանը փակել. լռեցնել. անասնի բերանը կապել:
*Ըմբոշխնեմ // ըմբոշխնիմ, եցի // եցայ, նք.* ճաշակել, ուտել, վայելել, ըստ հաճույքի գործածել:
*Ըմբոստանամ, ացայ, չք.* վեր ցատկել. հակառակված հրաժարվել. անհնազանդ դառնալ, հանդուգն լինել:
*Ըմպեմ, արբի, ա՛րբ. նք.* խմել, ըմպել:
*Ընդարմանամ, ացայ, չք.* թմրել, թմրելով թուլանալ. զգայությունը կորցնել:
*Ընդդէմ // ընդ դէմ, նխդ. // ած.* հակառակ, դիմացը. դիմացից, փոխանակ. համար. դիմացի. հակառակ:
*Ընդդիմակաց // ընդդիմակացու, ած.* դեմ կանգնող. դիմադրող. ներհակ. առաջը կանգնած. ներկա:
*Ընդհատ, ած.* տարբեր, առանձին. հեռացած. առանձնացած. ընդհատված:
*Ընդոծին // ընտածին, ծնի, աց. ած., գ.* ընտանիքում ոչ արյունակից՝ ծառայի, ստրուկի ծնունդ. բնածին, ընդաբույս:
*Ընծայեմ // ընձայեմ, եցի, նք., չք.* նվիրել. ընծա՝ նվեր տալ՝ մատուցել. առաջ բերել, ներկայացնել. ըն-

ծառներ ընդունել, ընծաներով պատվել՝ հարգել:
*Ընկենում, ցի, եաց // կէց, կեա՛, նր.* գցել նետել, շպրտել. արհամարհել, բանի տեղ չդնել:
*Ընծեռեմ. եցի, նր.* ծեռքը տալ, ավանդել, նվիրել. ձեռք զարկել, փորձել. ձեռք բերել:
*Ընտանենամ // ընդանենամ, եցայ, չր.* մոտիկ լինել, մասնակից լինել. վարժվել, ընտելանալ:
*Ընտանանամ // ընդանանամ, ացայ, չր.* մոտիկ լինել, մասնակից լինել. վարժվել, ընտելանալ:
*Ըստանձնեմ, եցի, նր.* իր վրա վերցնել. հանձն առնել. պատրաստ լինել, պատրաստակամություն հայտնել. ուրիշին հանձնարարել:
*Ըստգիւտ, գ., ած.* հանցանք, մեղադրելի արարք, մեղադրանք, հանդիմանություն. մեղադրելի, ամոթով:
*Ըստերիւրեմ // ստերիւրեմ, եցի, նր.* խոտորել, ճանապարհից շեղել, մոլորեցնել, մոլորության մեջ գցել:
*Ընտրութիւն, եան, գ.* ընտրելը, զատելը:
*Թագաւորութիւն, եան, գ.* թագավորի իշխանություն. պետություն. երկիր:
*Թաթաւեմ, եցի, նր.* ընկղմել, թաթախել, սուզել, ջրի մեջ մտցնել:
*Թանամ, ացի, թա՛ց, նր.* թրջել:
*Թանձրաթաղանթ, ած.* թանձր՝ խիտ թաղանթ՝ կեղև ունեցող. գեր:
*Թանձրախիտ, ած.* թանձր և խիտ.շատ թանձր. հոծ:
*Թարգմանեմ, եցի, նր.* մի լեզվով եղածը մեկ այլ լեզվի վերածել՝ գրավոր կամ բանավոր. մեկնաբանել, մեկնել, պատմել. վերարտադրել:
*Թարգմանութիւն, եան, գ.* մի լեզվով եղածը մեկ այլ լեզվի վերածելը՝ գրավոր կամ բանավոր. մեկնելը, մեկնաբանելը, պատմելը, վերարտադրելը:
*Թաքչիմ, եայ, ի՛ր, եալ, չր.* թաքնվել, պահվել, փակվել:
*Թերաքամ, ած.* քերի մնացած, կիսակատար. կիսատ մնացած:
*Թերիակէ // թիւրակէ, ի, ից // եայք, եայց, գ.* դեղթափ՝ թույնի դեմ. հակաթույն:
*Թերութիւն, եան, գ.* քերի լինելը. քերի կողմ ունենալը:

*Թզենի, ւոյ, եաց, գ.* մի տեսակ ծառ՝ թթենիների ազգին պատկանող:
*Թէկն // թիկն, թիկան, կունք, կանց. գ.* բազուկը ուսի հետ միասին. օգնականություն. հետևի մասը:
*Թէպէտ // թէպէտ և, շղկ.* թեև, թեկուզ, չնայած որ:
*Թիկունք, կանց, գ.* թիկունք. մեջքի կողմը. օգնություն, օգնականություն:
*Թիւր, ի, ից // աց, ոյ // ոց, ած., մկբ.* ծուռ, ծռված. ծուռումուռ. ծուռ կերպով:
*Թիւրեմ // թիւրիմ, եցի, նք., չք.* ծռել, ուղիղը շեղել. գժտվել, անհաշտ դառնալ:
*Թշնամանեմ, եցի, նք.* նախատել, հայհոյել:
*Թշնամանք, նաց, գ.* նախատինք, անարգանք, հայհոյանք. վնաս, զրկանք:
*Թշնամութիւն, եան, գ.* թշնամի լինելը. անհաշտություն:
*Թողութիւն, եան, գ.* ներում, ներողություն, ազատում. թույլտվություն:
*Թռչիմ, եայ, ի՛ր, ուցեալ, չք.* թևերով վեր գնալ. ճախրել՝ թևածել:
*Թռչուն, ոյ, ոց, գ.* թռչելու ունակ կենդանի էակ, հավք:
*Թօթափեմ, եցի, նք.* թափ տալ. ցնցել, շարժել. վանել, հեռացնել. հետ պահել. թափել, վրայից հեռացնել. թաքախել:
*Ժաման, ած.* շուտ հասնող. փութկոտ. վերահասու:
*Ժամանակ, ի, աց.* տևողություն. տարի. ժամանակաշրջան. դարաշրջան. պատեհություն, առիթ. տարվա եղանակ:
*Ժանտամուտ, ած.* անասելի դաժան. անողոք, վնասակար:
*Ժառանգ, ի աց, գ.* ժառանգության իրավունք ունեցող՝ անձ. ժառանգորդ:
*Ժառանգութիւն, եան. գ.* ժառանգ լինելը. երկիր՝ տարածք, որ տրվում է մեկին շտապես. ստացվածք՝ հարստություն. առանգելը:
*Ժոյժ, գ,* դիմանալու ուժ՝ կորով. եռանդ:
*Ժուժկալ, ի, ից // աց, գ.* համբերող, դիմացող, իմանալու ուժ ունեցող:
*Ժպրհիմ, եցայ, չք.* հանդգնել, համարձակվել:
*Ժտանք, աց, գ.* խնդրանք, աղաչանք. թախանձանք:
*Ժտեմ // ժտիմ, եցի, նք. // եցայ, չք.* շատ խնդրելով՝ համառորեն ուզել. լավ հասկանալ. աներեսություն անել, հանդգնել:
*Ժրանամ, ացայ, չք.* կտրիճ՝ ճարպիկ լինել, դիմանալ:

*Իբրև, ՚նխդ.* պես. իբր. չափ, մոտ:
*Իբրև, մկբ.* երբ, երբ որ, նրանից հետո երբ:
*Իմանամ, իմացայ, իմա՛ // իմա՛ց, իմացի՛ր, հբ.* իմանալ. հասկանալ, ըմբռնել. գլխի ընկնել, կարծել. մտածել. խորհրդածել:
*Իմաստասիրութիւն, եան, գ.* ուսմունք. փիլիսոփայություն:
*Իմաստութիւն, եան, գ.* իմաստուն լինելը. խոր ըմբռնում՝ միտք ունենալը. խելացիություն. խոհական՝ խոհեմ լինելը՝ խոհականություն. շրջահայեցություն, ուշիմություն, ողջամտություն, գիտություն. մտածություն:
*Իմաստուն, ոյ, ոց, ած., մկբ.* խելացի, բանական, ըմբռնող. խոհեմ, ուշիմ. իմաստասեր, զգաստ, առաքինի, իմաստակ, վարպետ. ճարտար. իմաստնորեն, խելացի ձևով:
*Ինքն, ինքեան // ընքեան, գ.* ինքն, ինքը:
*Ինքնակամ, ած., մկբ.* իր կամքով, հոժարակամ. ինքնիշխան, ազատ. եսասեր, եսական. կամավորին, իր ասած ձևով:
*Իշխանութիւն, եան, գ.* իշխան լինելը, տերություն, իրավունք. թեմ, վիճակ:
*Իշխեմ, եցի, չբ.* տիրել. համարձակվել, կարողանալ:
*Իջանեմ, իջի, է՛ջ, չբ.* իջնել, ցածրանալ, խոնարհվել, ընկնել:
*Իրաւի // հիրաւի, եղբ.* հիրավի, իրավամբ, իսկապես:
*Իւղաբուղխ, ած.* յուղ բխեցնող, յուղ բխած:
*Իւրաքանչիւր, ոյ, ոց, դեր., գ.* ամեն, ամեն մի. ամեն մարդ՝ մեկը, ամեն ոք:
*Լայնալիճ, ած.* աղեղի երկու ծայրերը առավել չափով բացված՝ զորավորություն ստեղծած. մեծապես լայնացած:
*Լայնութիւն, եան, գ.* լայնք, լայն փռվածք. լայն լինելը. մեծություն, ընդարձակություն:
*Լանջակողմն, ման, գ.* լեռան լանջ:
*Լաւ, ի, աց, ած., գ., մկբ.* բարի, բարեմիտ. քաջ, առաքինի, շնորհալի. ընտիր. հաճելի, ընդունելի. լավ բան. լավագույնս, լավ ձևով:
*Լեառն, լերին, րամբ, ինք, րանց, գ.* լեռ, սար, քարե բարձունք:

*Լեռնաբլուր, ի // եր, գ.* լեռնացած բլուր. քարակուտակ բարձունք:
*Լեռնոտն, տին, տամբ, գ.* լեռան ստորոտ՝ ներքևի մասը:
*Լլկանք, աց, գ.* չարչարանք, տառապանք. նեղություն:
*Լնում, լցի, լի՛ց, նբ.* լցնել, լրացնել. ավարտել. հագեցնել, կշտացնել:
*Լոյս, ոյ, ով, գ.* լուսատու մարմնի էներգիա. ճրագ. աչք. ճշմարտության աղբյուր:
*Լուալիք, լեաց, գ.* բաղանիք, հարդարվելու և մարմնի խնամքի տեղ:
*Լուանամ, ացի, լուա՛,* լվանալ, ջրով մաքրել:
*Լուծանեմ, լուծի, լո՛յծ, նբ.* արձակել, վերացնել, մեջտեղից հանել. բացատրել, մեկնաբանել. պասը՝ ծոմը աղարեցնել. պայմանը դրժել, թուլացնել, տարրալուծել:
*Լուղորդ // լողորդ, ի, աց, գ.* լող տվող, լողացող. լողորդ. ծովային:
*Լուսաւորութիւն, եան, գ.* լուսավոր լինելը. լուսավորելը, լույս տալը. մտավոր զգաստություն հաղորդելը:
*Լսեմ, ուայ, լո՛ւր, լուարո՛ւք, եալ, նբ.* ձայնը ընկալել. լուր ստանալ. հավանել, ընդունել. անսալ:
*Լսելիք, լեաց, գ.* ականջ. ականջներ. լսելը. լսելու բաներ՝ խոսքեր:
*Լրջմտութիւն, եան, գ.* զվարթություն, առատաձեռն լինելը:
*Լրութիւն, եան, գ.* լի՝ լիքը լինելը, ամբողջություն. լրիվություն. լրանալը. ավարտ:
*Լքանեմ, լքի, լի՛ք, նբ.* թողնել. երես դարձնել, երեսի վրա թողնել. անտերության մատնել:
*Լօղիկ, ի, աց, գ.* վերարկու:
*Խաբեմ, եցի, նբ.* դիտմամբ մոլորեցնել՝ խոսքով, այլ կերպ. խաբեություն անել. թյուրիմացության մեջ գցել:
*Խազմ, ի, իգ, գ.* վեճ. կռիվ, պատերազմ. աղմուկ, խռովություն:
*Խաթարեմ, եցի, նբ.* ավերել, քանդել.շրջել. խանգարել:
*Խախանք, աց,* գ. բրքիջ, անզուսպ բարձրաձայն ծիծաղ. հռհռոց:
*Խաղակատակ,* գ. խեղկատակ. ծաղրի առարկա. ծիծաղելի վիճակ:
*Խաղաղ,ած., մկբ.* հանդարտ, հանգիստ. մեղմորեն, հանդարտորեն:

*Խաղացուցանեմ. ցուցի, ցո՛, պբ.* շարժել. տանել. առաջ քշել՝ մղել. տեղափոխել. հոսեցնել:
*Խաղաղութիւն, եան, գ.* խաղաղ լինելը. հաշտություն:
*Խայտակն, ած.* զվարթ, խաղացող աչքերով:
*Խանգար, գ., ած.* անգարվելը. խռովություն, խանգարված:
*Խանգարեմ, եցի, նբ.* խախտել, եղծել. խաթարել, խեղաթյուրել. տեղաշարժ անել. շփոթ առաջ բերել:
*Խանգարիչ, ած.* խանգարող, ավերող. շփոթ առաջ բերող:
*Խանդակաթ, ած., մկբ.* կարոտակեզ, կարոտից վառված. կարոտով, սիրով:
*Խանդակաթիմ, եցայ, չբ., նբ.* գութը շարժվել, սիրտը լցվել. գութ շարժել, աղերսագին՝ թախանձագին խնդրել՝ դիմել:
*Խանդաղատութիւն // խանդաղանք // խանդաղատանք, գ.* թախանձագին խնդրանք, աղերսանք, կարոտ. սեր:
*Խանչեմ, եցի, չբ.* գոռալ, բղավել, ձայն հանել:
*Խառան, ի, աց, գ.* պարան, փայտե անուր՝ դատապարտվածի վզից կախելու:
*Խառանեմ, եցի, նբ.* պարանով կապել. պարանով խեղդել:
*Խառնաղանճ // խառնաղանջ, ի, ից, ած.* խառը, խառնիխուռն. խառնիճաղանջ:
*Խարամանի, ւոյ //ոյ, եաց, գ.* օձ, չար օձ. չարության աստված՝ զրադաշտական կրոնի մեջ. սատանա, դև:
*Խարան, ի, աց, գ.* շիկացած երկաթ՝ մարմինը դաղելու. խարելը. կնիք՝ դաղվածով:
*Խարտեաշ // խարտեշ, տեշի, ած.* շեկ. խարտյաշ:
*Խեղկատակ // խեղակատակ, ի, աց, ած.* ծամածռություն անող՝ իբրև կատակ. խամաճիկ:
*Խիթամ, ացայ. չբ,* կասկածել, վախ ունենալ. շեղակի նայել:
*Խճողեմ, եցի, նբ.* չափից ավելի խիտ լցնել:
*Խճողիմ, եցայ, չբ.* իրար վրա լցվել, կուտակվել:
*Խնայեմ, եցի, չբ., նբ.* զգուշանալ, զլանալ. զսպվածություն հանդես բերել, ներողամտություն հանդես բերել. պահել, տնտեսել:
*Խնդամ, ացի, ա՛, չբ.* ուրախ լինել, ուրախանալ. բերկրել, ցնծալ. ողջ լինել:

*Խնդրակ, գ., ած.* մարդ որոնող՝ փնտրող. խնամակալող. նվիրակ, պատվիրակ. վեճ առաջ բերող:
*Խնդրեմ, եցի, նր.* ուզել, խնդրել, որոնել. պահանջել. հետամուտ լինել. ջանալ:
*Խնում, խցի, խի՛ց, նր.* խցկել, փակել:
*Խոնարհ, ի, աց // ից, . ած., մկբ.* ցած. ստորին. համեստ, հնազանդ. նվաստ, հետին. խոնարհված, ծնկած, ծունկի իջած:
*Խոնաւանամ, ացայ, չբ.* թացանալ. խոնավություն առնել, թրջվել:
*Խոնաւութիւն, եան. գ.* թացանալը. խոնավություն առնելը, թրջվելը:
*Խոնջիմ, եցայ, չբ.* հոգնել. ուժասպառ լինել:
*Խոշտանգանք, աց, գ.* խոշտանգելը. խիստ տանջելը. ֆիզիկական՝ մարմնական վնաս հասցնելը:
*Խոտեղէն, ի, աց, ած., գ.* տարբեր խոտերից ամբողջացած. խոտերից հյուսված անկողին, խսիր:
*Խորդ, ոյ, ոց // ու, ուց. գ.* կռունկ. մի տեսակ թռչուն:
*Խորհիմ, եցայ, հբ.* մտածել. հղանալ, դատողություն անել. նկատի առնել. մտմտալ. հոգալ:
*Խորհրդական, ի, աց, ած., գ.* խորհրդատու, խորհրդակից. խոհական, բանական, խելացի. սրբազան, աստվածային, խորհրդածու:
*Խորհուրդ, եան, եամբ // ոյ, ոց // ի, իւ, գ.* մտածություն, միտք. խորհրդածություն. խորհուրդ. մտադրություն. գաղտնիք. օրինակ. կրոնական արարողություն:
*Խուփն, ան, գ.* կափույր, կափարիչ:
*Խստութիւն, եան, գ.* կարծրություն, խստություն, ամրություն. չարություն, սաստկություն, ուժգնություն:
*Խրախութիւն, եան. գ.* կերուխում. խրախճանք:
*Խրոխտանամ, ացայ, չբ.* հոխորտալ, մեծ-մեծ խոսել. սպառնալ. համարձակվել. պարծենալ:
*Խօլ, ի, աց, ած.* խենթ. ելապակաս. խեղճ:
*Խօսիմ, եցայ, եա՛ց // եա՛, հբ.* խոսել, ճառել. պատմել. նշանադրվել, ամուսնանալ:
*Ծակոտեմ, եցի, նր.* անցք՝ ծակ բանալ. ծակծկել. փորել, ճեղքել. խոցել, խոցոտել:
*Ծաղիկ, ան, ունք, անց // ի, աց // ոյ, ոց. գ.* բույսի մի մասը՝ հասունացած. երիտասարդ. ծաղկահասակ:
*Ծաղկաբեր, ած.* ծաղիկ բերող՝

բուսցնող, աճեցնող:
*Ծաղկաբոյս, գ., ած.* ծաղիկ տվող բույս. իբրև ծաղիկ բուսած:
*Ծաղր, ու // եր // ղրու, գ.* ծիծաղ, ուրախություն:
*Ծանակեմ, եցի, նբ.* խայտառակել, ծաղրի առնել:
*Ծայրագոյն, ի, ից, ած.* ծայր աստիճանի. ծայրին հասած, մեծագույն, բարձրագույն. կատարյալ:
*Ծանրաբեռն, ին, անց, ած.* բեռը ծանր՝ ծանրացած. բեռը ծանրացնող:
*Ծանրութիւն, եան, գ.* ծանր լինելը. ծանրություն:
*Ծանուցանեմ. ուցի, նո՛, պբ.* ծանուցել. ծանոթացնել. հասկացնել:
*Ծառայակից, ի, աց, ած., գ.* ծառայության՝ պասավորության ընկեր, մասնակից. միասին ծառայող. նույն տիրոջ ծառա:
*Ծառայեմ, եցի, չբ., նբ.* ծառա լինել, ծառայություն՝ սպասավորություն անել. իբրև ծառա՝ ենթարկվել, հպատակվել. պասարկել, ծառայություն բերել՝ մատուցել:
*Ծառայութիւն, եան, գ.* ծառա լինելը, ծառայություն՝ սպասավորություն անելը. իբրև ծառա՝ ենթարկվելը, հպատակվելը. սպասարկելը, ծառայություն բերելը՝ մատուցելը:
*Ծարաւիմ, եցայ, չբ.* ծարավ լինել՝ զգալ. մի բանի խիստ կարիք՝ պակասություն ունենալ:
*Ծիծաղիմ, եցայ, չբ.* ծիծաղի ձայն հանել. ծաղրել:
*Ծիծառն, ան, անց,* գ. ծիծեռնակ. սոխակ:
*Ծիրանի, նոյ, նեաց. գ., ած.* ծիրանագույն. արմրախառն դեղին գույնի. արքայական պատմուճան:
*Ծխոտիմ, եցայ, չբ.* ծխապատ լինել. մուր կրել՝ մրոտվել, մրոտ լինել։
*Ծնանիմ, ծնայ. հբ.* ծնել, ծնվել. ստեղծել, պտղաբերել. առաջ բերել:
*Ծնունդ, եան, ոց, գ.* ծնելը, բերք առաջ բերելը, ծնվելը, ծննդավայր. հետնորդ, սերունդ, ժառանգ. արգասիք, արդյունք:
*Ծովակ, ի, աց. գ.* փոքր ծով. ավազան, տաշտ. կոնք:
*Ծործոր, ոյ, ոց // ի, աց, գ.* նեղ ձոր. ձորակ. հեղեղատի բացած խանդակ:
*Ծոց, ոյ, ոց, գ.* գոտկատեղից վերև. հագուստի ներսի մասը՝ կրծքի շրջանում:
*Ծփեմ, եցի, նբ.* ալեկոծել, ծփել, տատանել. տարուբերել:

*Ծփիմ, եցայ, չբ.* ծփալ, ալեկոծվել. տարուբերվել, հողմակոծվել:

*Կազեմ // կազիմ, եցի // եցայ, չբ.* վիճել, կռվել, աղմկել:

*Կաթսայ // կատսայ, ի, ից,* կե-րակրի աման, ջուր տա-քացնելու աման՝ պղինձ:

*Կալ, ոյ // ի, ոց, գ.* կալ. կալսելու տեղ:

*Կահոյք, գ.* ջրի աման, սափոր:

*Կալուած, ոյ // ի, ոց, գ.* գրավածը, տիրելը. տերություն, խանություն. սեփականություն:

*Կամ կաս, կայ, կացի, կա՛ց, կացէ՛ք. չբ .* մնալ, կանգնել:

*Կամ. շղկ.* կամ:

*Կամիմ, եցայ, կամեաց, կամեցեալ, կամեցող // կամող, հբ.* կամենալ. ուզել:

*Կանաչազգեստ, ած.* կանաչ հագած՝ զգեստավորված. կանաչազարդ, կանաչազգեստ:

*Կանգնեմ. եցի. նբ., չբ.* կանգնեցնել, վեր բարձրացնել, տնկել. կանգնել, կանգ առնել:

*Կանուխ, ոյ, ոց // ի, աւ. ած., մկբ.* վաղ, շուտ, ժամա-նակից առաջ. հին, վա-ղեմի. վաղաժամ, վաղա-հաս. առավոտ շուտ՝ անմիջապես:

*Կապեմ, եցի, նբ.* իրար միացնել՝ կցել, միավորել. արգելք դնել՝ ամրացնել, պրկել. խանգարել, փակել. պատել, փաթաթել, կաշկանդել. արգելել:

*Կապուտակ, ի, աց, ած.* կապույտ գույնի՝ գույն ունեցող, կապտավուն, բաց կապույտ գույն ունեցող. մոխրագույն, շառագույն:

*Կապուտակ, ի, աց,* կապույտ ներկած որևէ բան. հանքային նյութ. հակինթ:

*Կառանչեմ // կառաչեմ, եցի, չբ.* ճչալ, աղաղակել, խիստ ձայն հանել:

*Կատարեմ, եցի, եա՛, նբ.* կատարել, ավարտել. սպառել, մկրտել:

*Կարգ, ի, աց, գ.* կարգ. շարք, դասավորություն. կարգ ու կանոն:

*Կարի, մկբ.* խիստ, հույժ, ուժգնորեն:

*Կարծեցուցանեմ, ցուցի, ցո, պբ.* կարծել տալ. ցուցադրել, ցույց տալ:

*Կարծեմ, եցի, նբ.* համարել, կարծել. կարծիք ունենալ. կասկածել:

*Կարճ, ոյ // ի, ած., մկբ.* փոքր, սեղմ, ոչ երկար. հա-մառոտ. կաարճատև. համառոտակի:

*Կարմրիկ. ած.* քնքշորեն կարմիր:

*Կարօտութիւն, եան, գ.* կարոտ լինելը. կարիք ունենալը:

*Կացուցանեմ, ուցի, ցո, պբ.* ոտքի վրա կանգնեցնել, վեր կացնել. դնել, զետեղել. կատարել:

*Կեանք, աց, գ.* ապրելը, կենդանի լինելը, գոյություն ունենալը. վարք, ապրելաձև. ապրելու ընթացք:

*Կենդանի, լոյ, եաց, ած. // գ.* կենդանություն ունեցող, ապրող, ողջ. կենդանի՝ շնչավոր էակ, արարած:

*Կենդանութիւն, եան, գ,* կյանք. կենդանի լինելը, ողջություն:

*Կերակուր, ոյ, ոց, գ.* ուտելիք. կեր. սնունդ. ապրելու միջոց:

*Կերակրիչ, ի. ած.* կերակրող, սնուցող. խնամող:

*Կերպարան(ք), ի, աց. գ.* դեմք, երես. արտաքին տեսք. պատկեր. պատրանք:

*Կիզում // կիզեմ, կիզի, եցի, նբ.* այրել, վառել. բորբոքել:

*Կճղակաբաժին, ի, իւց. ած.* երկու մասի բաժանված կճղակ ունեցող, երկկճղականի:

*Կնդրուկ, րկի, աց, գ.* մի տեսակ խունկ:

*Կնութիւն, եան, գ.* հարսնություն. կին լինելը. կնոջ բնավորություն:

*Կոծեմ, եցի, նբ.* ծեծել, հարվածել:

*Կոծիմ, եցայ, չբ.* կուրծք ծեծել, սուգ անել. սգալ. ալեկոծվել:

*Կողմն, ման, մանց, գ.* կողային մաս. կողք. ուղղություն. տարածք՝ որևէ կողմում գտնվող. երկիր գավառ:

*Կողմնապետ, ի, աց, գ.* երկրի մի մասի կառավարիչ. կուսակալ. կողմնակալ:

*Կողր, եր, երց // երաց, գ.* ճյուղ, ոստ:

*Կոշկոճեմ, եցի, նբ.* ծեծել, ջարդել. չարչարել, քարկոծել:

*Կոչեմ, եցի, նբ.* կանչել, ձայն տալ, անվանել. անուն տալ:

*Կոտորած, ի, ից // ոյ, ոց,* գ. կոտորելը. կոտորած. ջարդ:

*Կոտորեմ, եցի, նբ.* կոտրել, կոտրատել. կտրել, կտրատել. կտոր-կտոր անել:

*Կործանել, եցի, նբ.* գետնին տապալել. ոչնչացնել. քարուքանդ անել, խանգարել. գլխիվայր շուռ տալ. կործել՝ շրջել:

*Կործչիմ, եայ, ուսեալ, չբ.,* կորչել, կորսվել, անհետանալ. փչանալ, ոչնչանալ:

*Կուտեմ, եցի, նբ.* կուտակել, կույտ անել. հավաքել, մեկտեղել, ի մի բերել:

*Կոփեմ, եցի, եր.* ծանր
հարվածել. տաշել,
կոկել. հարթեցնել:
*Կոփիւն, գ.* խփելու՝ հարվածելու
ձայն. ծանր հարվածի
ձայն:
*Կռեմ, եցի, եր.* Կռանով մետա-
ղը ծեծել, ծռել. ամրաց-
նել, կուռ դարձնել,
հաստատել:
*Կռչաձայն, ած.* կռնչացող,
կռինչ արձակող:
*Կրակապաշտութիւն, եան, գ.*
կրակի պաշտամունքը՝
իբրև կրոն, դավանու-
թյուն:
*Կրկտակերտ, ած.* կրկուտով՝
մանր փայտով, փայտի
փշուրներով կերտված՝
շինված:
*Հագագ, ի, աց, գ.* շունչ՝
ձայնարկու. հագագ.
շունչ հանելու տեղը:
*Հազարապետ, ի, աց, գ.* զին-
վորական մի պաշտոն-
յա. արքունի գործակալ.
տնտեսվար. տնտես:
*Հազարապետութիւն, եան, գ.*
հազարապետ լինելը.
հազարապետի պաշտոնը:
*Հալածական, ի, աց, ած., մկբ.*
հալածված, վտարանդի,
դուրս քշված:
*Հակառակ, ի, աց // ից, ած.,
նխդ., մկբ.* դեմ, ընդդեմ,
դիմադրող, դեմ կանգնող,
հակառակորդ. ներհակ,
դեմ առ դեմ, ներհակա-
բար:
*Հակառակութիւն, եան, գ.* հա-
կառակ լինելը. դիմա-
դրություն. թշնամություն.
առարկություն. ընդդիմու-
թյուն. մրցություն:
*Հաղբք, ից, գ.* թակարդ, ծուղակ:
*Համեմ, եցի, եր.* հաշտեցնել,
համաձայնության բերել.
մեղմացնել. վճարել:
*Համիմ, եցայ, եա՛ց // եա՛, չբ.*
հավանել, ախորժել,
ուզենալ. հաշտվել:
*Համաղամ, ի, աց, ած.* համեղ,
համով՝ անուշ ուտելիք՝
ըմպելիք:
*Համար, ոյ, ոց // ու, ուց, ի, գ.*
թիվ, հաշիվ, վերջնա-
հաշիվ, համեմատություն.
համարում, կարգ:
*Համազգի, տոյ, գեաց, ած.* նույն
ազգից, ազգակից. նույն
տեսակի, նույնպիսի:
*Համբառնամ, բարձայ, բա՛րձ,
ձի՛ր, եր.* վեր բարձրաց-
նել. միասին վերցնել:
*Համբաւ, ոյ, ոց // ու, ուց // ի, աց,*
գ. լայն տարածման լուր.
տեղեկություն. բարի
անուն, հռչակ:
*Համբերութիւն, եան, գ.* համբե-
րելը, դիմանալը. կոկուն
լինելը, տոկունություն:
*Համօրէն, ած., մկբ.* ամբողջ,
բոլոր, բովանդակ. ամ-
բողջովին:

*Հայիմ, եցայ, եա՛ց // եա՛. եցեալ, չր.* նայել. դեպի վեր նայել. ուշադիր նայել, տեսնել:

*Հայցեմ, եցի, նր.* խնդրելով՝ աղերսելով ուզել. կամենալ, ցանկանալ:

*Հանգոյն, նխդ., մկբ., ած.* նման, համաձայն. նույն կերպ, նույնպես. նմանօրինակ, համանման:

*Հանդարտութիւն, եան, գ.* հանդարտ լինելը. անդորրություն. խաղաղություն. եղմություն:

*Հանդերձ, ի // ոյ, իգ,* հագուստ, զգեստ. զարդարանք. պաճուճանք. ծածկոց. պատրաստություն:

*Հանդերձ, նխդ.* միասին. հետը:

*Հանդերձեմ. եցի, նր.* պատրաստել, կազմել, ճանապարհի պատրաստություն տեսնել. ճանապարհ դնել:

*Հանդերձիմ, եցայ, չր.* նախապատրաստված լինել մի բանի համար. հարկ՝ պետք լինել:

*Հանդէպ, ի // ոյ, ած.* հարմար, պատեհ, պատշաճ:

*Հանդէպ, նխդ., գ., մկբ.* դեմ, դիմաց. դիմացի կողմը, դիմացը. ուղղակի, ուղիղ կերպով:

*Հանճար, ոյ, ոց // ի, իգ, գ.* խելք, միտք, իմաստություն, գիտություն. բանականություն, խոհեմություն, զգոնություն. հնարք:

*Հանճարեղ, ի, աց. ած.* առավել խելացի, խոհեմագույն, նրբամիտ, իմաստուն. խելք՝ իմաստություն ունեցող:

*Հասակ, ի, աց, գ.* տարիք, բարձրություն, չափ. ժամանակ, ժամանակի չափը՝ օրեր. որոշակի տարիքի անձ. մարմնի չափը՝ բարձրություն. կազմվածք:

*Հասանեմ, հասի, հա՛ս, աս՛ք, չր.* հասնել. տեղ հասնել, գալ. իջնել. հանգստանալ. վերահասու լինել. հասունանալ. պատահել:

*Հասանիմ, հասայ, հասի՛ր, չր.* գտնվել, հասնել, հասկանալի լինել՝ հասկացվել:

*Հաստաբազուկ, ած.* հաստ և ուժեղ բազուկներ ունեցող. ուժով. կորովի:

*Հաստատեմ, եցի, նր.* հաստատել. տեղավորել. կանգնեցնել. ամրացնել. սահմանել, կարգել. ուժեղացնել:

*Հաստատիմ, եցայ, չր.* հենվել. ապավինել. կատարվել. համոզվել:

*Հաստեմ, եցի, նր.* հաստատել, ամրակայել, արմատավորել. որոշել. ստեղծել:

*Հատուած, ոյ, ոց // ի,ից, գ.* կտրելը, կտրվելը, կտրվածք. հատված, մաս, բաժին. գաղթ, հեռացում:
*Հարթնում // հարքչիմ, թեայ, թի՛ր, թուցեալ, չք.* խրտնել, վախից վեր թռչել, վախից, խույս տալ:
*Հարկապահանջ, ի,ից //աց, ած.* հարկահավաք, հարկահան. հարկադրանքով՝ ստիպելով պահանջող՝ ստացող:
*Հարկապահանջութիւն, եան, գ.* հարկադրանքով՝ ստիպելով պահանջելը՝ ստանալը. հարկապահանջի՝ հարկահավաքի կատարած գործը:
*Հարկանեմ, հարի, հա՛ր, նք.* խփել. ծեծել. կտրել. խոցել. տնկել. դիպչել. համեմատել:
*Հարցանեմ, հարցի, հա՛րց, նք.* հարցնել. հարցուփորձել, քննել. որոնել:
*Հարուած, ոյ, ոց, գ.* զարկ. խփելը. հարվածելը. խոցվածք՝ հարվածից ստացած. վնաս. որուստ, պարտություն. անջանք, չարչարանք:
*Հացարար, ի, աց, գ.* հացթուխ. հացագործ:
*Հարօրանամ, ացայ, չք.* երամով գետնի վրայով թռչել՝ բարձրանալու, վեր գնալուց առաջ:
*Հաց, ի,ից. գ.* հաց. ուտելիք. ճաշ, ընթրիք. խնջույք:
*Հացարար, ի, աց, ած., գ.* հացթուխ. հացեփյաց, հացագործ:
*Հաւանիմ, եցայ, չք.* հնազանդվել, լսել. համախոհ լինել. համաձայն լինել:
*Հաւասար, ի, աց // ից, ած., գ., նխդ., մկբ.* նույն չափի՝ քանակի՝ ծավալի, համանման, միատեսակ, միօրինակ, համապատասխան. մասնակից, ընկեր. ընդհանուր. բնօրինակի պատճենը. նման, համաձայն. պես. ըստ. նմանապես. անխտիր, հավասարապես, միասին, առհասարակ:
*Հաւատամ, ացի, տա՛, ցէ՛ք, նք.* հավատալ. դավանել. հուսալ. վստահել:
*Հաւատարիմ, րմի, աց, ած., մկբ.* վտահելի, մտերիմ, անկեղծ. անդավաճան. հավատարմորեն:
*Հաւ, ու // ոյ, ուց // աց, գ.* թռչուն, հավ. մարի. էգ թռչուն. աքաղաղ:
*Հաւ, ու // ոյ, գ.* պապ, հոր՝ մոր հայր:

*Հելլենական, ի, աց, ած.* հելլեններին՝ հույներին բնորոշ՝ վերաբերող. հելլեն ժողովուրդ՝ երկիր:

*Հեղեղեմ, եցի, ներ.* առատորեն թափել. ողողել. ջրի հոսանքով քշել. ուժգնորեն թափել:

*Հերքեմ, եցի, ներ., չր.* հեռացնել, վանել, օտարել, հալածել, քշել. հերիք լինել, կարողանալ, զորել:

*Հզօր, ի աց, ած.* զորավոր, շատ ուժեղ, ուժով. սաստիկ, ուժգին. պինդ. ամուր, դիմացկուն:

*Հեծեծեմ, եցի, գ.* վշտագին դեմ ընկնել. ցավալի լացուկոծ դնել:

*Հեծութիւն, եան, գ,* վշտագին դեմ ընկնելը. ցավալի լացուկոծ դնելը:

*Հեղգ, ի, աց, ած.* ծույլ, անհոգ, ալարկոտ. թշվառ. ողորմելի:

*Հեղում, հեղի, հե՛ղ, նր.* թափել, հոսեցնել, լցնել. հալել, տսարածել:

*Հիւթաբեր, ած.* սննդարար յութ՝ միջոց բերող՝ հասցնող:

*Հիմնարկեմ, եցի, նր.* հիմք դնել. հիմնել:

*Հմուտ, ի, ից // աց, ած.* վարժ, խելացի, գիտակ, տեղյակ, վարժ, փորձառու:

*Հնազանդ, ի, ից, ած.* լսող, ենթարկվող, հլու. հպատակ, ենթակա (անձ):

*Հնազանդութիւն, եան, գ,* լսելը, ենթարկվելը, հլու. հպատակ, ենթակա անձ լինելը, հպատակություն:

*Հնար, ի, ից, գ.* միջոց, եղանակ. կարելիություն, ճիգ, ջանք:

*Հնչեմ, եցի, չր.* ձայն հանել, արձագանքել, աղաղակել, ձայնել, դղրդալ, թնդալ:

*Հնձան, ի, աց, գ,* ավազան՝ խաղողի հյութը լցնելու տեղ. տնակ՝ խաղողի այգում՝ ավազանով և այլ միջոցներով:

*Հնութիւն, եան, գ.* հին լինելը. երկար ժամանակով մնացած լինելը. ծերություն:

*Հոծեմ, եցի, նր.* խտացնել, հոծ դարձնել. ամրացնել:

*Հոծիմ, եցայ, չր.* խտանալ, ամրանալ, հոծ դառնալ. հոտել:

*Հոյակապ, ի, ից, ած.* փառապանծ, հռչակավոր. նշանավոր. ամուր, զորեղ:

*Հպարտանամ, ացայ, չր.* մեծամտանալ, գոռոզանալ, պարծենկոտ դառնալ. ամբարտավանանալ:

*Հրեշտակ, ի, աց, գ.* խուրհանդակ, պատգամավոր, դեսպան. լրաբեր. թղթատար. հրեշտակ. ազարե. հեթանոս աստված:

*Հոչակաւոր, ած.* հոչակ ունեցող, հոչակ ձեռք բերած, մեծահամբավ, երևելի, համբավավոր, շանավոր. հոյակապ:

*Հրաման, ի, աց, գ.* կարգադրություն, պատվեր. պատգամ, պատվիրան. վճիռ, որոշում. թույլտվություն:

*Հրատ, ի, ից, գ.* խարույկ, բորբոքվող կրակ՝ հուր. մարմնի ջերմություն՝ տաքություն:

*Հօտ, ի, ից, գ.* ոչխարների խումբ, նույն հավատքի ժողովուրդ:

*Հօրան // հորան, ի, աց. գ.* հոտ, նախիր. փարախ, բակ:

*Ձաղկեմ, եցի, նք.* ծաղրել, ծանակել, խայտառակել. բացահայտ՝ հրապարակավ անարգել՝ անպատվել:

*Ձայն, ի, ից, գ.* օդի տատանման արձագանք, ձայն. ձայնի ելևէջ՝ եղանակ. հնչյուն. բառ. լեզու. խոսք:

*Ձգեմ, եցի, նք.* տարածել, սփռել. քաշել՝ մի կողմի վրա. գցել, նետել:

*Ձեռնասուն, ած., գ.* մեկից սնված՝ աստիարակված. ընտելացած. աշակերտ:

*Ձմերային, յնոյ, ոց. ած.* ձմեռային. դաժան, խստաշունչ:

*Ձմերային // ձմերայնի // ձմերանի, յնոյ // նոյ // նոյ, գ.* ձմեռ, ձմռանը:

*Ղենջակ // ղենջեակ, ի, աց, եկի, գ.* շորի կտոր. գոգնոց, սրբիչ:

*Ղօղեմ, եցի, նք., չք.* ծածկել, պահել. ծածկվել. լուռ մնալ:

*Ղօղիմ, եցայ, չք.* թաքնվել, պահվել:

*Ճակատ, ու, ուց // ի, աց, գ.* ճակատ. դիմացի մասը. առաջին էջ. բանակի առաջնագիծ. ճակատամարտ, պատերազմ:

*Ճանապարհ, ի, աց, գ.* ուղի, անցուղարձի միջոց. անցման կետ, անցում, ընթանալու ուղղություն. կյանք. նպատակի ասնելու միջոց՝ եղանակ:

*Ճապուկ, ած.* ճկուն, դյուրաթեք, արագաշարժ, փութկոտ:

*Ճառագայթ, ի, ից, գ.* լույսի շող, նշույլ, ճաճանչ:

*Ճառեմ, եցի, նք.* ճառ ասել. պատմել. հանդիսավոր խոսել:

*Ճարակ, ի, աց, գ.* անասունների կեր. արոտ. ճար, հնար:

*Ճարտարագէտ. ած.* հմուտ, գիտակ. քաջատեղյակ, բանիմաց, գործին լավագույնս իրապետող:

*Ճգնութիւն, եան, գ.* ճիգ ու ջանք. նեղություն.

մրցություն. ճգնավո-
րություն:
*Ճեմիմ, եցայ, չք.* հանդարտ
քայլել. շրջագայել.
զբոսնել:
*Ճչեմ, եցի, չք.* ճչալ, ճիչ
արձակել, սուր
ձայնով կանչել:
*Ճռողել // ճռուողել, եցի, չք.*
թռչնի ձայն հանել,
ծլվալ, ճլվլալ. փող հնչել:
*Ճօճեմ, եցի, նք.* տատանել,
տարուբերել, մի կողմից
մյուս կողմ շարժել:
*Ճօճիմ, եցայ, չք.* տատանվել,
տարուբերվել, մի կողմից
մյուս կողմ շարժվել:
*Մազդեզն, ան, անց, գ., ած.*
Զրադաշտի հետևորդ,
զրադաշտական.
պարսկական կրոն, նույն
կրոնի հետևորդ:
*Մածանիմ // մածնում, այ, եալ //
եայ, ուցեալ. չք.* կպչել,
մակարդվել.թանձրանալ.
պատել. ամրանալ,
պնդանալ:
*Մակացութիւն, եան, գ.* իմա-
ցություն, հմտություն.
գիտելիք. իմանալը:
*Մայրենի, ւոյ, եաց, ած.* մորը
վերաբերող՝ հատուկ.
մայրական. մոր կողմից
հարազատ, մոր ծագու-
մից:
*Մանեակ, եկի, աց, գ.*
պարանոցի զարդ.
կլորավուն ավահան-
գիստ:
*Մանկագոյն, ի, ից // աց. ած.*
ավելի մանուկ, ավելի
կրտսեր. փոքրահասակ.
բոլորովին նոր, արդի,
նորագույն:
*Մանկութիւն, եան, գ.* փոքր
տարիքին՝ մանուկ
հասակին վերաբերելը,
մանուկ՝ երեխա լինելը.
խորամանկ լինելը,
խորամանկություն:
*Մանուկ, նկան, կունք, կանց, գ.,
ած.* տղա երեխա,
երիտասարդ. ծառա.
զինվոր, կտրիճ. փոքր,
մատղաշ. տղայական:
*Մանուածապատ, ած.* ծուռու-
մուռ. կեռումեռ. ոլորա-
պտույտ, գալարուն:
*Մատչիմ // մատնում, եայ,
ուցեալ, չք.* մոտենալ,
դիպչել. ընծայվել,
նվիրվել:
*Մատուցանեմ, տուցի, տո՛, պք.*
մոտեցնել. մատուցել.
ընծայել:
*Մարդպետութիւն, եան, գ.*
մարդպետի պաշտոնը.
արքունի պալատի
ներքինապետ:
*Մարզպան, ի, աց, գ.* մարզի
կառավարիչ. կուսակալ:
*Մարթեմ, թացի, չք.* ի վիճակի
լինել, կարող լինել՝ մի
բան անելու:

*Մարմնաւոր, ի, աց, ած.* մարմին ունեցող. մարմնական զորությամբ օժտված. մարմնի նման, մարմնաձև, մարմնակերպ, նյութական:
*Մարտիրոսական, ի, աց, ած.* մարտիրոսներին՝ հավատի համար զոհ գնացողներին, մարտիրոսությանը՝ հավատի համար զոհ գնալուն հատուկ՝ բնորոշ:
*Մացառաղօղ, ած.* մացառների՝ փշերի մեջ թաքնվող՝ պահվող:
*Մաքրափայլ, ի, ից, ած.* մաքրությամբ փայլող, փայլելու աստիճանի մաքուր. պայծառ, ջինջ, լուսափայլ:
*Մեծաշահ, ած.* շատ օգտակար՝ շահավետ. շատ շահ ունեցող, մեծապես վաստակող:
*Մեծապայծառ, ած.* շատ պայծառ, վեհաշուք, պայծառափյալ. շքեղ:
*Մեծատարած, ած.* լայնատարած, լայնությամբ սփռված:
*Մեծատուն, ան// նոյ, նի, անց, ած., գ.* հարուստ, ունևոր:
*Մեծութիւն, եան, գ.* մեծ լինելը, առավելություն, ճոխություն. հարուստ՝ մեծատուն լինելը. մեծամտություն. գոռոզություն:
*Մեկնեմ, եցի, եր,* բաժանել, զատել, անջատել. մեկնաբանել, բացատրել. լեզվից լեզու փոխադրել. տարածել, սփռել:
*Մեկնիմ, եցայ, չք.* բաժանվել, առանձնանալ, զատվել, հեռանալ. հետ կանգնել, հրաժարվել. տարբերվել, զանազանվել:
*Մեղանչեմ, մեղայ, ղուցեալ, չք.* մեղք գործել, սխալվել. վնասել. դիպչել:
*Մեղաւոր, ի, աց, ած.* օրենքի դեմ գործած, մեղք ունեցող. մեղապարտ, հանցավոր, անիրավ:
*Մեղկեմ // մեղկում, եցի, կի, եր.* թուլացնել, մեղմացնել, փափուկ դարձնել:
*Մեղրահամ, ած.* մեղրի համ ունեցող, մեղրի պես համեղ:
*Մերձաւոր, ի, աց, ած., գ.* մոտ. մտերիմ. ազգակից. արեկամ:
*Մերձենամ, եցայ, եցեալ, չք.* մոտենալ, մոտ լինել. դիպչել. մերձավոր լինել:
*Մէջ, ոյ, ով, ոց // աց, գ., ած.* մեջտեղը. մեջք. միջին, միջակ:
*Մթար, ի, աց, ած., գ.* մութ. կեղտոտ. կեղտ. ճպուռ. բիժ:

*Միահամուռ, մկբ.,ած.* բոլորը մեկտեղ՝ միասին, համախմբված. միաս-նաբար, միասնական:
*Միամտանամ, ացայ // միամտեմ, եցի // միամտիմ, եցայ, չբ.* միամտանալ. միամիտ լինել, հավատարիմ լինել. հավանություն տալ:
*Միայնակեաց, ի, աց, ած. , գ.* մենակյաց, ճգնավոր. կրոնավոր, վանական. միայնակեցական:
*Միանգամայն, մկբ.* միան-գամից, միատեղ. ամբողջովին. միաժամա-նակ:
*Միապետեմ, եցի, նբ., չբ.* ինքնիշխան լինել. միայն ինքը լինել. ինքնակալ:
*Միտ, ի, աց, գ.* միտք, խելք. իմաստ. ուշադրություն:
*Մշտնջենաւոր, ի, աց, ած.* հա-րատև, անվախճան. հա-վիտենական, անպակաս:
*Մոգպետ // մովպետ, ի, աց,* գ. մոգերի պետ, զրա-դաշտական բարձրաս-տիճան կրոնավոր:
*Մոլեգնիմ, եցայ. չբ.* կատաղել, զայրանալ. ցնորվել:
*Մոլութիւն, եան, գ.* մոլի լինելը. խենթություն. կատաղու-թյուն:
*Մոխրապաշտ, ի, աց // ից. ած.* կրակապաշտ. կրակա-պաշտական:
*Մորթեմ, եցի, նբ.* մորթը հանել, մաշկել, մորթազերծ անել, քերթել. խողխողել, վիզը կտրելով սպանել:
*Մուրհակ, ի, աց, գ.* կնքված և հաստատված՝ ավերա-կան թուղթ. արքունի հրո-վարտակ. պարտավո-րագիր:
*Մտածութիւն, եան, գ.* մտածելը, մտածողություն, դա-տողություն. հասկացո-ղություն, ըմբռնում, պատկերացում. հոգս. մտմտուք. խելք. ողջամտություն:
*Մրրիկ, ի, աց. գ.* ծուխ, գոլորշի. ուժեղ քամի՝ ուրոտի, անձրևի հաջորդումով. փոթորիկ. ծովի ալեկոծություն:
*Մօրուք, ուաց, գ.* ծնոտի և այտերի մազերի աճածը:
*Յագ, ոյ, գ., ած.* հագենալը, լիանալը. հագեցած, լիացած:
*Յագենամ // յագիմ, եցայ, չբ.* հագենալ, լիանալ. բավականանալ:
*Յազեմ, եցի, նբ.* զոհաբերել. զոհ մատուցել. հոշոտել, պա-տառոտել:
*Յածեմ, եցի, նբ.* այս ու այն կողմ տանել, տարու-բերել. տատանել:
*Յածիմ, եցայ, չբ.* շրջել, ման գալ. թափառել. հւզվել, տատանվել:

*Յաղագս, նխդ.* մասին, համար, վերաբերյալ:
*Յաղթեմ, եցի, նբ.* պարտության մատնել, հաղթանակ շահել. առավելության հասնել. տիրել. արգելքները վերացնել:
*Յաղթութիւն, եան, գ.* հաղթելը, հաղթանակ. խոշոր՝ մարմնեղ լինելը. ուժգնություն:
*Յաճախեմ, եցի, նբ.* շատացնել, բազմացնել, շարունակական դարձնել:
*Յաճախեմ, եցի, չբ.* շատանալ, բազմանալ, շարունակական դառնալ:
*Յաճախիմ, եցայ, չբ.* շատանալ, բազմանալ, շարունակական դառնալ:
*Յամառութիւն, եան, գ,* համառ լինելը, համառելը. պնդություն, տոկունություն, հարատևություն:
*Յայտնապէս, մկբ.* հայտնի կերպով, անթաքույց. պարզ, որոշակի:
*Յանգ // յանկ, ի, իւ, գ.* ավարտ, վերջ. սահման, եզր:
*Յանգ // յանկ, ած.* պատշաճ, վայելուչ, հարմար, տեղին. ընտանի, մերձավոր. ուշիմ:
*Յանգչիմ // յանկչիմ, այ // եայ, չբ.* հանգստանալ, հանդարտվել, դադար առնել. հարել, հենվել. ընտելանալ, վարժվել:
*Յանդգնութիւն, եան, գ.* հանդուգն՝ համարձակ լինելը, անխոհեմ գտնվելը, համարձակություն. անամոթություն, ինքնավստահ լինելը:
*Յանդիմանութիւն, եան, գ.* կշտամբանք, պարսավանք ցույց տալը. հայտնի դարձնելը:
*Յանդուգն, ած., մկբ.* խիստ՝ չափից ավելի համարձակ, անհամեստ. խրոխտ. անպատկառ, անսանձ. ժպիրհ. անվեհեր, հանդուգն կերպով, հանդգնաբար:
*Յաշտ, ի, իւ, գ.* զոհ, զոհաբերություն (հեթանոս աստվածներին):
*Յառաջագոյն, ի, իւ // աց, ած.* առաջվա, հնագույն, վաղեմի. նախկին, դեռ առաջ:
*Յատակեմ, եցի, նբ.* գետնին փռել. հիմնահատակ վերացնել. բնաջնջել. սալապատել:
*Յատանեմ, յատի //յատեմ, յատեցի, նբ.* կտրել, հատել, էտել:
*Յարնչիմ, բեայ, րի՛ր, չբ.* վերաբերել, հարմարվել:
*Յափշտակեմ, եցի, նբ.* բռնի ուժով վերցնել՝ գրավել՝

առնել. ճանկել, ձեռքից խլել. յուրացնել, տիրապետել:
*Յափշտակութիւն, եան, գ.* բռնի ուժով վերցնելը՝ գրավելը՝ առնելը. ճանկելը, ձեռքից խլելը. առևանգում:
*Յաւէժ // յաւեժ // յաւերժ, մկբ.,ած.* միշտ, մշտական. հավերժ. բոլոր ժամանակներում. հավերժական:
*Յենում, յեցայ, չբ., նբ.* հենվել, կռթնել. հենել, հաստատել:
*Յոյզ, ի, իցե գ.* որոնում, փնտրում. շարժում, տատանում. ծփանք, ալեկոծություն. իրարանցում, խռովություն:
*Յոյժ, մկբ., ած.* շատ. սաստկորեն. ծայրահեղ. խիստ:
*Յորդորութիւն, եան, գ.* հորդորելը, հորդորում:
*Յորդորումն, ան, անց, գ.* հորդորելը. խրախույս:
*Յորժամ, մկբ.* երբ, երբ որ. մի ժամանակ որ:
*Յորձան, ի, ից // աց,* առատ հոսք, հեղեղ. մեծ ալիք. ջրապտույտ. վարարում:
*Յուզեմ, եցի, նբ.* փնտրել, որոնել. խուզարկել. խառնել. գրգռել. հարուցել:
*Յստակեմ, եցի, գ.* հստակ՝ մաքուր դարձնել. պարզել, պայծառացնել. ավելորդությունը վերացնել:
*Յստակութիւն, եան,* մաքրություն, պարզություն, ավելորդությունից զերծ լինելը:
*Յօրինեմ, եցի, նբ.* օրինական դարձնել. կարգավորել. ստեղծել. շինել:
*Նաժիշտ, ի, աց, գ.* աղախին, սպասուհի. ծառա:
*Նախակարգ, ի, աց, ած.* սկզբնապես կարգված՝ սահմանված. առաջին, նախնական. նախընթաց:
*Նախարար, ի, աց, գ.* երկրի՝ նահանգի կառավարիչ. իշխան, ավագ. նահապետ, տանուտեր:
*Նախանձ, ու, ուց, գ.* նախանձ, վրեժ, եռանդ. փույթ:
*Նախանձիմ, եցայ, չբ.* չարությամբ լցվել. նախանձի զգացումով լինել. խանդել:
*Նահապետ, ի, աց, գ.* տոհմապետ. նահանգապետ. նախարար. կուսակալ. նահանգի ղեկավար:
*Նարօտ, ու, ուց // ի, ից, գ.* գույնզգույն թելերից հյուսվածք. հյուսկեն թել:
*Նաւավար, ի, աց, գ.* նավը վարող, նավարկող, նավապետ, նավազ, նավաստի, նավորդ:

*Ներղութիւն, եան, գ.* նեղ՝ նեղված լինելը. տառապանք, վիշտ, տրտմություն:
*Նենգութիւն, եան, գ.* դավ, ստոր արարք, դավաճանություն:
*Ներքինի, ւոյ, եաց, ած., գ.* այրությունից զուրկ սպասավոր կանանոցում, պալատական մի պաշտոնյա:
*Նիզակակից, ի, աց, ած., գ.* միասին կռվող, զինակից ընկեր:
*Նկան // նկանակ, ի, աց, գ.* մի տեսակ հաց:
*Նենգեմ, եցի, նբ., չբ.* նենգություն անել. դավել, դավաճանել, խաբել. կախարդել, վնասել:
*Նշանագիր, ոյ, ոց // ի, աց, գ.* գիր, տառ, այբուբեն. նամակ. հիշատակարան, նոտար. գրագիր. ձեռագիր, կնիք:
*Նշանակեմ, եցի, նբ.* նշան անել, տեղեկացնել. նշանել, նշանակել:
*Նորոգատեսիլ, ած.* նոր տեսնող. առաջին անգամ նկատող:
*Նշկահեմ, եցի, նբ.* արհամարհել, անարգել. մեկի գերակայություն մերժել:
*Նու, նուոյ, ով // ու, ուոց //անց, գ.* հարս, ամուսնու ազգականների հարսը:

*Նուազ, ի, ունք // ք,ից, ած.* քիչ, սակավ, պակաս. նուրբ, բարակ:
*Նուազութիւն, եան, գ.* նվազ լինելը, պակասություն, սակավ լինելը. չքավորություն. քչով բավարարվելը:
*Նուաղ, ած.* աղոտ, թույլ (լույս). կամաց, մեղմ, ցածր (ձայն). հյուծված, մաշված. թերի:
*Նուաղեմ, եցի, նբ.* նվաղ՝ աղոտ դարձնել. թուլացնել. պակասեցնել:
*Նուաղիմ, եցայ, չբ.* թուլանալ, պակասել, աղոտանալ. տկարանալ, սպառվել, թառամել:
*Նուաճեմ, եցի, գ.* իրեն ենթարկել, ընկճել. հնազանդեցնել, իշխել:
*Նուիրակ, ի, աց, գ.* հրամանը կատարող. սովորական զինվոր. եկեղեցու ուղարկած դեսպան, մի տեսակ բաժակ:
*Շաբաթամուտ, ի,ից, գ.* ուրբաթից անցում մյուս օրվան. շաբաթվա անելիք:
*Շաղփաղփ, ի, ից, ած.* դատարկախոս, շաղակրատ. աղճատված, ցնորական, անիմն:
*Շարժ, ի, ից, գ.* շարժում. երկրաշարժ:
*Շարժել, եցի, նբ.* շարժելով տեղափոխել, շարժման

մեջ դնել. փոփոխել. տեղից տեղ փոխել:
*Շարժումն, ման, մանց, գ.* շարժվելը, երկրաշարժ. ալեկոծում:
*Շիկափոկ, ած.* շեկ փոկից շինված՝ պատրաստված:
*Շիջանիմ, շիջայ, չբ.* հանգչել, մարել:
*Շոգմոգութիւն, եան, գ,* կեղծելը, բանսարկություն, խառնակություն, շողոքորթություն:
*Շողամ, ացի, չբ.* ցոլալ, փայլել, փայլփլել. լողալ, սողալ, շարժվել:
*Շուշան, ի, աց, գ.* ծաղկի մի տեսակ. մի տեսակ ծաղիկ:
*Շուրթն, ան, անց, գ.* շուրթ, շրթունք:
*Շտեմարան, ի, աց, գ.* ամբար, մթերանոց. թաքստոց, գաղտնարան:
*Ոգորիմ, եցայ, չբ.* կռվել ամեն ինչով՝ ըստ ամենայնի. քեն պահել. չար նախանձով լցվել մեկի հանդեպ:
*Ողորմիմ, եցայ, եա՛ց // եա՛, չբ.* խղճալ. գթալ. ողորմություն գտնել:
*Ոսկէօղ, ած.* ոսկյա օղակով, ծայրը ոսկե օղակ:
*Ունջ, ոյ, ոց // աց, գ.* անկյուն, ծայր. գետնի տակ, հատակ. խորք:
*Ոստ, ոյ, ոց, գ.* ծառի ճյուղ. ծառի ճյուղից դուրս եկող մաս:
*Ոստ, ոյ, գ.* բլուր, բլրակ:
*Ոստիկան, ի, աց, գ.* վերակացու. գլխավոր իշխան:
*Որդեակ, ի, աց, գ.* սիրասուն զավակ՝ որդի. փոքրիկ որդի:
*Որթ // որթիք, ոյ, ոց, գ.* խաղողի տունկ. որթատունկ:
*Որթ, ու, ուց, գ.* հորթ, հորթուկ:
*Որոճային, ոյ, ոց, ած.* որոճող, որոճացող (կենդանի):
*Որոջ, ի, աց // ից, գ.* գառ. էգ գառնուկ:
*Որովայն, ի, ից, գ.* մարմնի ներքին օրգաններն ամփոփող մասը. ստամոքս. ուտելու անհագ ցանկություն:
*Որսալից, ած.* որսի կենդանիներով լեցուն:
*Ուժաւոր, ի, աց, ած.* ուժեղ, հզոր, զորեղ:
*Ուխտ, ի, ից. գ.* խոսք կապելը, խոստանալը. դաշն, պայման. միաբանություն. կտակ. բաղձանք, աղոթք. վանք, մենաստան. ուխտ գնալը:
*Ումպէտ, ած.* անպետք, անպիտան. սին, դատարկ:
*Ունիմ, կալայ, կալ // կա, հբ.* ունենալ. բռնել, ձեռքը գցել. գրավել, տիրել. վերցնել, տանել. կարո-

ղանալ, ունակ լինել. պարունակել. բովանդակել. ներառել:

*Ունկնդիր, ի, աց, գ.* ուշք դարձնող. լսող. ականջ դնող. աշակերտ. ուսանող. ատենակալ:

*Ուստեք, մկբ.* մի տեղից, ինչ-որ տեղից: *Ուսումնական, ի, աց, ած., գ.* ուսյալ. մաթեմատիկոս (անձ):

*Ուրախարար, ի, աց, ած.* ուրախություն պատճառող. ուրախացնող. զվարճացնող:

*Ուրախութիւն, եան, գ.* ուրախ լինելը. ուրախ վիճակ, բերկրանք, բերկրություն. խրախճանք:

*Չարագործ, ի, աց, ած., գ.* չարիք գործող, չար գործեր կատարող. վնասարար. չարիք նյութող:

*Չարալլուկ, ած.* չարաչար լլկված՝ տանջված, տանջահար, խոշտանգված. մոլեգնած:

*Չարախտավատ // չարախտավար, ած., մկբ.* չար, անպիտան, դժնի. չար ձևով:

*Չարաչար, ա. // մկբ.* շատ՝ խիստ չար. անտանելի. սաստիկ, չափազանց:

*Չարչարեմ, եցի, նբ.* ֆիզիկապես տանջել, խոշտանգել. հոգեպես տառապանք պատճառել. նեղություն տալ. հարստահարել:

*Չու, ոյ, ոց. գ.* գնալը, մեկնելը. ճանապարհ. գաղթողների խումբ՝ բազմություն:

*Չքմեղ, ած.* անմեղ. անպարտ. անմեղ ձևացող:

*Պակասեմ // պակասիմ, եցի // եցայ, չբ.* պակասել. նվազել, թուլանալ, մարել:

*Պակնում // պակչիմ, պակեայ, կուցեալ, չբ.* սաստիկ վախենալ. վախից սառչել. դողալ:

*Պահեմ, եցի, եա՛, նբ.* պահպանել, հսկել. խնամել, հոգ տանել. պաշտպանել, հովանավորել. թաքցնել, ծածկել:

*Պաշտօնեայ, էի, գ.* սպասավոր, ծառա. պաշտող, երկրպագող:

*Պասքիմ, եցայ, չբ.* խիստ ծարավել. տոչորվել, պապակվել. ջուր չլինելուց չորանալ:

*Պատահեմ // պատահիմ, եցի // եցայ, չբ.* հանդիման լինել. դեմը ելնել. հայտնվել. լինել:

*Պատանի, ւոյ, եաց, գ.* դեռահաս փոքրահասակ ծառայ:

*Պատանեակ, ի, աց, գ.* փոքր՝ փոքրիկ պատանի.

փոքրացուցիչ՝ *պատանի* բառի:

*Պատանեկիկ, գ.* փոքրիկ պատանյակ, փոքրացուցիչ՝ պատանյակի բառի:

*Պատասխանեմ, եցի // եցայ. նբ., չբ.* պատասխան տալ, արդարացնել:

*Պատասխանատրեմ, եցի, նբ.* պատասխան տալ, պատասխանել. ջատագովել, պաշտպանել. հաշիվ տալ, հաշվետու լինել:

*Պատահումն, ման, մունք, մանց, գ.* հանդիպելը. դեմը ելնելը. պատահած որևէ բան, դիպված:

*Պատգամաւոր, ի, աց, ած., գ.* մեկի պատգամը՝ լուրը ներկայացնող. պատգամելու լիազորված անձ:

*Պատիւ, ւոյ, ոց // ուի, գ.* փառք. շուք, հարգանք, մեծարանք. արժանիք, բարձր դիրք. պարգև, ընծա:

*Պատճառ, ի // ոյ, աց. գ.* հանգամանք, պարագա. առիթ, դրդապատճառ, հնարք. հանցանք:

*Պատմեմ, եցի, նբ.* եղածը նկարագրել. եղածի մասին ասել. հայտնել, հաղորդել, տեղեկացնել. համբավը տարածել:

*Պատուական, ի, աց, ած.* պատվի արժանի, պատվավոր, պատվելի, հարգելի. ազնիվ, փառավոր, պատկառելի. թանկագին, մեծագին:

*Պատուհասեմ, եցի, նբ.* պատժել. վնասել. չարչարել. սպառնալ. անարգել:

*Պատրաստեմ, եցի, նբ,* գլուխ բերել, ավարտել. ամբողջացնել. կազմել, կարգի բերել. հանդերձել, հարդարել:

*Պատրաստութիւն, եան, գ.* պատրաստ լինելը. կահկարասի. հոժարություն. հանդերձանք. պաշտպանություն. զգուշություն:

*Պարարտաբոյս, ած.* փարթամորեն աճած. փարթամ բուսնած:

*Պարարտահամ, ած.* շատ համով. համեղ. ախորժահամ:

*Պարարտարօտ, ած.* փարթամ արոտ՝ արոտատեղի:

*Պարանոց, ի, աց, գ.* վիզ (մարդու և կենդանիների). նեղուց:

*Պարզեմ, եցի, նբ.* մաքրել, սրբել. փռել, տարածել. մեկնել, բացատրել:

*Պարկեշտ, ի, աց, ած.* համեստ. ողջախոհ, ժուժկալ, զուսպ. հարգելի, պատվական. պատկառելի. մաքուր, անարատ:

*Պարկեշտություն, եան, գ.* համեստ լինելը, առաքինություն, զսպվածություն, ամոքխածություն, վայելչություն:

*Պարտապան, ի, աց, ած., գ.* պարտքի տակ ընկած, պարտք ունեցող. մեղավոր, հանցապարտ:

*Պարտեմ, եցի, նր.* հաղթել, պարտության մատնել:

*Պարտիմ, պկս. բ.* պետք լինել. պարտավոր լինել:

*Պիտոյք, ից, գ.* պետք, կարիք. անհրաժեշտ իրեր՝ պարագաներ. պիտույք:

*Պղերգ, ի, աց // աց, ած.* ծույլ, թուլամորթ:

*Պղտոր, ոյ, ած.* անմաքուր, խառնված. ոչ պարզ, ոչ վճիտ. մթագնած, աղոտ:

*Պղտորութիւն, եան, գ.* անմաքուր լինելը, մթագնություն. անմաքրություն, խառնակություն:

*Ջանամ, ացայ // ացի, չբ.* ճգնել. համառել. վազել:

*Ջեռնում // ջեռանիմ, ջեռայ // ռայ, ռեալ // ռուցեալ, չբ.* տաքանալ, բորբոքվել, կրակ կտրել:

*Ջերմաճայն, ած.* ջերմ՝ ցանկալի՝ սրտալի ճայնով:

*Ջերմեռանդ // ջերմեռանդն, ած.* ջերմ՝ սրտալի և եռանդուն. կաթոգին, եռանդագին:

*Ջերմութիւն, եան, գ.* ջերմ լինելը. տաքություն. ջերմելը, տենդ:

*Ջերմուկ //ջերմուկք, ի, աց, գ.* հանքային՝ տաք ջուր. տաք ջրի աղբյուր՝ բխման տեղ:

*Ջերմուկաջուր, ոյ, գ.* տաք՝ հանքային ջուր:

*Ջուր, ոյ, ով //ջուրք, ոց // ջուրց, գ.* հեղուկ՝ անհոտ և թափանցիկ, մաքուր. բնության չորս տարրերից մեկը:

*Սակայն, շղկ.* բայց, այնուամենայնիվ. բայց և այնպես. չնայած դրան:

*Սակաւ, ու, ուց, ած.* չափավոր, քիչ, կարճ. մոտ, մերձավոր:

*Սան, ի, ից, գ.* կաթսա, մեծ աման:

*Սան, ու, ուց. գ.* հոգածությամբ մեծացած երեխա. աշակերտ. սան. սանիկ:

*Սառնամանի, ւոյ, իք, եաց. գ.* խառնամանիք, ցրտաշունչ եղանակ. խառնություն. ցրտություն:

*Սաստիկ, ած., մկբ.* խիստ, չափից ավելի, ուժգին. ուժեղ. չափազանց:

*Սաստկաբուրումն, ման, գ.* սաստիկ՝ չափից ավելի բուրելը, առատ բուրմունք:

*Սարահարք, գ., ած.* սարի վրա հարթ տեղ. հարթ, տափարակ:

*Սեաւ, ոյ, ոց // ի, ից, ած., գ.* սև, սևուկ (ձի)

*Սեղան, ոյ, ոց, ովք //օք, գ.* տան կահույքի մի մաս. կերակուր. հացկերույթ. զոհարան. բագին. խորան:

*Սեւաներկ, ած.* սև գույնի, սևագույն:

*Սեւութիւն, եան, գ.* սև գույն ունենալը. սև լինելը:

*Սքափութիւն, եան, գ.* սքափ լինելը. խելքը գլխին, ուշքը տեղը:

*Սիղղորայ, ի, ից, գ.* վանկ, հեգ. հնչյուն. տառ:

*Սիրելի, տոյ, եաց, ած. // գ.* սիրո արժանի, սեր վայելող. հարազատ, մտերիմ:

*Սիրտ, ի,ից, գ.* կենդանի օրգանիզմի մի մաս. հոգի, կամք, միտք. զգացմունք, ցանկություն:

*Սիք // սիւք // սիզ, ոյ, ոց, գ.* մեղմ՝ թույլ քամի. զեփյուռ, հովիկ:

*Սկայ, ի, ից, ած., գ.* հսկա, զորեղ. քաջ:

*Սկիզբն, ան, անց, գ.* սկիզբ, ելք. սկզբնավորություն:

*Սկուտղ, եղ, եղբ, գ.* մատուցարան. խորունկ ափսե՝ մետաղյա. արևի սկավառակ՝ բոլորակ:

*Սնար, ի, ից, գ.* գլխավերև, գլխի տակը. անկողին. լեռան գլուխը:

*Սնոտի, տոյ, եաց, ած.* դատարկ, փուչ, սին:

*Սոնքանամ, ացայ, չբ.* գիրանալ, հաստանալ. լցվել. բորբոքվել, գրգռվել:

*Սովոր, ի, ից, ած., գ.* վարժ՝ վարժված, ընտելացած. հաճախակի կրկնվող, սովորական. սովորություն:

*Սովորութիւն, եան, գ.* սովոր լինելը, հմտություն. ընտելացած լինելը:

*Սորամուտ, մտի, մտաց, ած.* ծակուծուկ մտնող՝ թաքնվող:

*Սպասաւորեմ, եցի, նբ., չբ.* ծառայել, հոգ տանել՝ հոգալ. կարգավորել:

*Սպասաւորիմ, եցայ, չբ.* ծառա լինել:

*Սուտ, ոյ, ոց // ի, ից, ած., գ., մկբ.* կեղծ, ոչ ճիշտ, խաբուսիկ, ոչ ուղիղ. ստություն, կեղծիք. ոչ ճիշտ կերպով. իզուր:

*Սպասաւոր, ի, աց, գ.* տան ծառա. արքունի պաշտոնյա. որևէ գործի ծառայող անձ:

*Սպարապետ, ի, աց, գ.* զորագլուխ, զորքի գլխավոր հրամանատար, զորավար. սպարապետ:

*Սպեղանի, ւոյ, եաց, գ.* վերքի դեղամիջոց, քսուք, բուժանյութ:
*Սպունգ // սպունկ, ոյ //ի, աւ,* գ. ծովային կենդանիների մի տեսակ՝ ծակոտկեն կմախքով:
*Ստահակ, ի, աց, ած.* անկարգ, սանձարձակ, լպիրշ. հանդուգն, ըմբոստ. անզուսպ:
*Ստանամ, ացայ, ի՛ր, նր.* հաստատել, ստեղծել. սեփականել, ձեռք բերել, գնել. վաստակել, շահել:
*Ստեղծիչ, ի, աց, գ.* ստեղծող, արարիչ. հնարող, հորինող, կերպարանող:
*Ստեղծուած, ոյ //ի, ոց, գ.* ստեղծվածը. առաջացածը, հորինվածը:
*Ստին, եան, ենէ, եանը, եանց, եամբք, գ.* կանանց կաղթնագեղձ. կուրծք. աղբյուր՝ սկիզբ:
*Ստուեր, ի, աց // ից, գ.* առարկայի հակառակ արտացոլվածք՝ պատկեր. շուք, շվաք. մթություն, խավար. ուրվական:
*Ստութիւն, եան, գ.* սուտ լինելը. կեղծիք. անճշտություն:
*Ստրուկ, ի, աց, ած., գ.* տիրոջ կենդանի սեփականություն՝ հին ժամանակներում. ծառա, գերի, հպատակ:
*Սրաթեւ, ած.* սրաթռիչ, արագ թռչող. բարակ՝ սուր թևեր ունեցող:
*Սրբեմ, եցի, նր.* մաքրել, մաքուր դարձնել. լվանալ. քավել, վերացնել:
*Սրսկապան, ի, աց. գ.* նույն սենյակում վարագույրով առանձնացված մաս. առագաստ. ննջարանի վրանաձև ծածկոց:
*Սրտակաք, ած.* գորովալից. խանդակաթ, սիրավառ:
*Սփռեմ, եցի, նր.* ամենուրեք տարածել, լայնորեն փռել. շաղ տալ, ցանել, ցրել, ցրիվ տալ:
*Վաղվաղակի, մկբ.* իսկույն, շուտով, շտապույթ. անմիջապես:
*Վաղիւ, ուի, ուէ, գ., ած., մկբ.* վաղը, վաղվա օրը. վաղվա. առավոտյան, վաղը:
*Վաճառ, ի, աց // ու, ուց, գ.* վաճառելը, առևտուր անելը, վաճառված իր՝ ապրանք. սակարկություն. վաճառատեղի, շուկա:
*Վայելչութիւն, եան, գ.* վայելուչ՝ պատշաճ լինելը. բարեհարմարություն. գեղեցկություն. փառավորություն. պայծառություն, շքեղություն. հաջողություն:

*Վայր, ի աց // ից // ուց, գ.* տեղ, որևէ տարածք. բաց, ամայի տարածություն. կողմ. սահման. գետին:

*Վայրենի, ւոյ, եաց. ած.* բնական պայմաններում գտնվող՝ կենդանի, բույս. ոչ ընտանի. վայրագ:

*Վասն, նխդ.* մասին, երաբերյալ. համար, նպատակով. ձեռքով, միջոցով, միջնորդությամբ, պատճառով, փոխանակ:

*Վաստակ, ոյ, ոց // ի, աւ, գ., ած.* աշխատանք, գործ. ծառայություն, հոգնություն. շահ. տառապանք. հոգնած. դադրած. վաստակած:

*Վատնեմ, եցի, նբ.* փչացնել. իզուր օգտագործել. սպանել:

*Վարժեմ, եցի, նբ.* վարժեցնել, սովորեցնել, մարզել. խրատել, ընտելացնել:

*Վարս // վարսք, ի, ից, գ.* կանացի երկար չհյուսված մազեր. երկար մազ. թափվող ճյուղեր:

*Վարք, ուց, գ.* վարք. պահվածք. վարմունք. գործածություն:

*Վերանամ, ացայ, չբ.* վեր ելնել. բարձրանալ:

*Վերին, ոյ, ոց, ած.* վերևի, վերևում եղող. ամենաբարձր. երկնային. արտաքին:

*Վէտ, գ.* մանր՝ կարճ ալիք. բացվածք:

*Վկայ, ի, ից, գ.* եղածը հաստատող անձ, ականատես. մարտիրոս:

*Վկայեմ, եցի //եցայ, նբ., չբ.* վկա լինել, վկայություն տալ՝ հաստատել. նահատակվել, մարտիրոսանալ:

*Վշտամբեր, ած.* նեղությանը դիմացող, համբերող. վշտալի, ցավալի:

*Վստահանամ, ացայ, չբ.* վստահ լինել, ապահով զգալ, ապավինել, ամարձակվել. հույսով սպասել:

*Վտանգաւոր, ի, աց, ած.* վտանգ՝ փորձանք պարունակող տեղ. նեղությամբ լի, չարաչար, տաժանելի:

*Վրդովեմ, եցի, նբ.* հուզել, խռովել. վրդովմունք առաջ բերել. սասանել, խախտել:

*Տագնապ, ի, աւ // ով, գ.* հոգու վրդովմունք. անհանգստություն. վիշտ, աղետ. շփոթմունք:

*Տագնապեմ, եցի, նբ.* նեղը գցել, խուճապի մատնել. խուճապահար անել:

*Տակաւին, մկբ.* դեռ, մինչև այժմ. նորից՝ էլի. կամաց-կամաց:

*Տանուտէր, տեառն, տեարց // տերանց, գ.* տան՝ գերդաստանի տեր՝

գլխավոր. տանտեր. նահապետ, ցեղապետ, ազգապետ. նախարարական տան իշխան՝ նախարար:

*Տատրակ, ի, աց, գ.* աղավնազգի չվող թռչուն. նրբակազմ աղավնի:

*Տապալեմ, եցի, նր.* թավալել, գլորել, տապալել:

*Տապ, ոյ, գ.* տաքություն, ջերմություն. ծովի ալեկոծություն:

*Տեղեկանալ, ացայ, չր., նր.* տեղեկություն առնել՝ ստանալ, ծանոթանալ, իմանալ. հմտանալ, վերահասու դառնալ:

*Տեսանեմ, ի, տե՛ս, նր.* տեսնել. տեսնելով ընկալել, նկատել, ուշադրություն դարձնել. իմանալ, ըմբռնել, հասկանալ. դիտել, լրտեսել. քննել, զննել. հոգալ, խնամել:

*Տեսիլ, եան, եանց, գ.* տեսք, երես, պատկեր. տեսիլք, երազ. տեսարան, հանդես. տեսողություն. տեսություն:

*Տեսութիւն, եան, գ.* տեսնելը. տեսիլք, հայտնություն, այց, քննություն. ուսում, միտք:

*Տիրեմ, եցի, չր., նր.* տեր դառնալ, տիրանալ, տիրապետել. իրեն ենթարկել. զորանալ. ազդել:

*Տիք, տից, տիս. գ.* նորածիլ լինելը, հասակ, տարիք. դեռահասություն:

*Տկար, ի, աց, ած.* ուժը պակաս, անուժ, անճար. նկարող. անառողջ, թույլ, նվազ. տկարամիտ, միամիտ. հեշտ խաբվող. անկարևոր, աննշան:

*Տնկեմ, եցի, նր.* բույսը՝ բուսնելու ճյուղը հողի մեջ դնել. բնավորել, հիմնավորել. հաստատել:

*Տոկամ, ացի, չր.* դիմանալ, դիմադրել:

*Տոհմ, ի, ից //աց, գ.* մի նախահոր սերունդ. ցեղ, զարմ, ազգատոհմ, գերդաստան, ընտանիք. նախարարական տուն՝ ցեղ:

*Տոհմային, ոյ, ոց, ած., գ.* ցեղակից, տոհմակից, ազգակից. առատ բերք:

*Տրտմութիւն, եան, գ.* տրտում լինելը, տրտմելը. տխրություն, թախիծ, վշտակրություն:

*Ցանկ // ցանգ, ոյ, ոց,* ցանկապատ. պատ:

*Ցանկ // ցանգ, մկբ.* միշտ, շարունակ. խսպառ, մինչև վերջ:

*Ցամաք, ի, աց, ած., գ.* ջրից՝ խոնավությունից զուրկ. չոր. ցամաքած, չորացած. ցամաքային տա-

բածք, երկիր՝ ոչ ջրային տարածություն:

*Ցանկալի, ւոյ,եաց, ած. ախորժելի, փափագելի, սիրելի:*

*Ցանկամ // ցանկանամ, ցայ, ցի ՛ր // ացի, ա ՛, նր., չր.* կամենալ, ուզել, փափագել, բաղձալ. աչք տնկել, ձգտել, կամենալ. տռփալ. երազել:

*Ցանկութիւն, եան, գ.* ցանկանալը, մի բանի ձգտելը. իղձ, ձգտում, հոժարություն. տենչ, փափագ. հեշտասիրություն, տռփանք:

*Ցաւ // ցաւք, ոյ //ւոյ, ւօք, գ.* մարմնի տհաճ զգացում, տանջանք. վիշտ, կսկիծ, հոգու տառապանք. ախտ, հիվանդություն:

*Ցնծալից, ած.* ցնծությամբ լեցուն՝ լցված. ուրախալից, բերկրանքով լի:

*Ցնցղաձև // ցնցղկաձև, ած.* ցնցուղի ձև ունեցող. ծակոտկեն:

*Ցուցանեմ, ցուցի, ցո՛յց, նր.* ցույց տալ, ցուցադրել, եցնել. ներկայացնել, երևան հանել, ապացուցել:

*Ցրուեմ, եցի, նր.* ցրել, ցրիվ տալ. ցիրուցան լինել. ոչնչացնել, քանդել:

*Ցրտաբուղխ, ած.* սառը. ցուրտ՝ սառը փչող՝ տարածող. ցրտաշունչ:

*Ցրտութիւն, եան, գ.* ցուրտ լինելը. սառնություն. ցուրտ:

*Փախստական, ի, աց, ած., գ., մկր.* փախուստի դիմող, փախչող. վաղանցուկ, անցավոր. փախչելով, փախուստի դիմածի պես:

*Փախստեայ, էի, ից, գ.* փախստական:

*Փախչիմ, եայ, խի՛ր, խուցեալ. չր.* փախուստի դիմել, փախուստ տալ. թողնել հեռանալ. չքանալ:

*Փայտակերտիկ,* գ. փայտի կտորտանքով շինած բույն:

*Փառամոլութիւն, եան, գ.* փառքի տիրանալու մոլություն՝ մոլուցք, փառամոլ՝ փառասեր լինելը:

*Փարեմ, եցի, նր.* պատել, պահել, ամփոփել. շրջապատել. իր մեջ առնել՝ ունենալ:

*Փափագեմ, եցի, եա՛, չր.* փափագ՝ բուռն ցանկություն ունենալ, տենչալ, ըղձալ. մի բանի կարոտ լինել:

*Փափկասուն, ած.* փափուկ՝ ապահով կյանքով մեծացած՝ ապրած:

*Փափկութիւն, եան, գ.* փափուկ կյանքով ապրելը. հեշտություն, փափկակեցություն. փափուկ լինելը, մատղաշություն. ազնվություն:
*Փող // փողք, ի,ից, գ.* պարանոց, վիզ. կոկորդ, շնչափող:
*Փող, ոյ, ոց, գ.* եղջերափող, շեփոր. խողովակ. եղեգ:
*Փոյթ, ոյ // ի, ով, գ., ած.* հոգ, խնամք. ջանք. փութալը, արտորանք. հոգատար, ուշադիր. ջանասեր, աշխատասեր. շտապող, փութկոտ. շուտափույթ:
*Փոշոտեմ, եցայ, չբ.* փոշով պատվել՝ կեղտոտվել. փոշոտ դառնալ:
*Փորեմ, եցի, նբ.* գետինը քանդել՝ փոս անել. բրել, պեղել, ծակել, ծակծկել, քանդելով անցք բանալ:
*Փորուած, ոյ // ի, գ.* փորվածք, փոս. ծակ. ծերպ:
*Փութագոյն, ած., մկբ.* ավելի ուշադիր, ջանասեր. արագ, փութանակի:
*Փութամ, ցի // ացայ, թա՛ // ացի՛ր, չբ.* շտապել, աճապարել, արագ շարժվել. հոգ տանել, հոգալ:
*Փոքրիկ, ան, ունք, անց, ած.* շատ փոքր. նվազ. մանր. պստիկ:
*Փսիրայ, ի,ից.* չոր խոտ. ճյուղ, ծեղ:
*Փրկագործութիւն, եան, գ.* փրկություն. փրկության գործ՝ ձեռնարկում:
*Փքամ // փքանամ, ացայ // ացի, ա՛, ացի՛ր, չբ.* քամիով՝ լցվել, ուռչել:
*Քահանայ, ի,ից, գ.* աստծու ծառա՝ սպասավոր. եկեղեցու պաշտոնյա:
*Քաղցր, ցու, ցունք, ցունց, ած., մկբ.* անուշ, համեղ. ախորժելի, դուրեկան. ցանկալի, սիրելի. բարի. քաղցրությամբ, խաղաղ կերպով:
*Քաղցրաձայն, ի,ից, ած., գ., մկբ.* քաղցր՝ անուշ ձայն ունեցող, քաղցր ձայնով հնչող, քաղցրահնչյուն. քաղցր՝ դուրեկան ձայն. անուշ ձայնով:
*Քաղցրաշունչ, ած.* քաղցր՝ մեղմ ձևով փչող՝ շնչող:
*Քաղցրութիւն, եան. գ.* քաղցր լինելը. համեղություն, անուշություն, ախորժելիություն. հաճելիություն. մեղմություն. բարեհոգություն:
*Քանդեմ, եցի, նբ.* ավերել, փուլ տալ, փչացնել, գետնին հավասարեցնել. կազմալուծել:
*Քանզի, շղկ.* որովհետև, այն բանի համար որ. այն պատճառով որ:

*Քանքար, ոյ, ոց // ի, աց.* գ. մի կշռաչափ (20,400 կգ), դրամական միավոր, տաղանդ. ծանրության չափ (45, 333 կգ)։

*Քաջ, ի, աց, ած.* ուժեղ, կտրիճ, քաջ. լավ. առաքինի. ճիշտ։

*Քաջագանգուր, ած.* շատ՝ չափից ավելի գանգուր (մազերով)։

*Քաջընթաց // քաջընթացիկ. ած., գ.* լավ՝ արագ գնացող՝ վազող. գոր- ծունյա. արագաշարժ. սուրհանդակ։

*Քառամանեակ, ի, աց, գ.* կա- նացի պարանոցի ակա- նակուռ զարդ. գոհարա- զարդ մանյակ՝ վզնոց։

*Քարանձաւ, ի, աց, գ.* քարայր. քարածայռ։

*Քարկոծեմ, եցի, ևր.* քարերով հարվածել՝ խփել. քար- կոծ անելով սպանել. վատաբանել, նախատել։

*Քեռորդի, ւոյ, ւոց. գ.* քրոջ որդի՝ զավակ։

*Քէն, ու, գ.* ոխ. վրեժ, քեն. նախանձ։

*Քննողութիւն // քննութիւն, քննումն, եան // ման, գ.* քննելը, քննվելը։

*Քրիստոնէութիւն, եան, գ.* քրիս- տոնեական կրոն. քրիս- տոնեյա երկիր. քրիս- տոնյաներ, հավաք։

*Օգնականութիւն, եան, գ. օգնություն, օգնելը։*

*Օդայատակ, ած.* հատակը՝ ոտնատակը օդ՝ օդի վրա եղող։

*Օթեւան, ի, աց // ից, գ., ած.* գիշերելու տեղ. իջևան, իջևանատուն. պան- դոկ. հյուրընկալ, իշերելու տեղ տվող։

*Օշնան, գ.* օճառի պես փրփուր տվող խոտ. փրփրախոտ։

*Օրինակ, ի, աց, գ.* գաղափար, օրինակ, առակ. եղանակ. բնագիր։

*Օրէն, ի, աց, գ.* կարգ, կանոն. կրոն, հավատք, օրենք, սովորություն, օրենս- գիրք. գավառ. նահանգ։

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Ագաթ.* - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը, Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի, Ե., 1983:

*ած.* - ածական անուն:

*գ.* - գոյական անուն:

*Բարս.* - Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Ե., 1984:

*Բուզ.* - Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք .Պատկանյանի, Ե., 1987:

*Գիրք ծննդ.* - Գիրք ծննդոց, քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Զեյթունյանի, Ե., 1985:

*Դաւիթ Անյաղթ* - Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Արեւշատյանի, Ե., 1980:

*դեր.* - դերանուն:

*Եզնիկ* - Եզնըկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:

*եղբ.* - եղանակավորող բառ:

*Եղիշէ* - Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957:

*Թէովն* - Թէովնեայ Յաղագս ճարտասանական կրթութեանց, յանդերձ յոյն բնագրաւ, աշխատությամբ Հ. Մանանդյանի, Ե., 1938:

*Թովմ. Արծ.* - Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985:

*թվ.* - թվական անուն:

*Խոր.* - Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Ե., 1981:

*կբ.* – կրավորական բայ:

*Կոր.* - Կորիւն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի, Ե., 1941:

*հբ.* – հասարակ բայ:

*ձյն.* - ձայնարկություն:

*Ղեւոնդ* - Ղեւոնդեայ Վարդապետի Պատմութիւն, Պետերբուրգ, 1887:

*Մագ.* - Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910:

*միջ.* - միջարկություն:

*Յովհ. Մամիկ.* - Յովհաննու Մամիկոնենի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832:

*մկբ.* - մակբայ:

*Նարեկ.* - Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Ե., 1985:

*նբ.* – ներգործական բայ:

*նխդ.* – նախադրություն:

*շղկ.* – շաղկապ:

*չբ.* – չեզոք բայ:

*պբ.* – պատճառական բայ:

*պկս. բ.* – պակասավոր բայ:

*Փարպ.* - Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

Մնացած համառոտագրությունները վերաբերում են «Սուրբ Գրքի» գլուխներին:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ........................................................ 7
ԱՌԱՋԱԲԱՆ ........................................................ 8

**Ա. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Հնչյունական կազմ
   ա) Գիր և այբուբեն ........................................................ 9
   բ) Ձայնավորներ ........................................................ 14
   գ) Բաղաձայններ ........................................................ 18
   դ) Երկբարբառներ և եռաբարբառներ ........................................................ 24
2. Հնչյունափոխություն
   ա) Վանկ և շեշտ ........................................................ 30
   բ) Շեշտափոխական հնչյունափոխություն ........................................................ 36
   գ) Պատմական հնչյունափոխություն ........................................................ 43
   դ) Հնչյունափոխական տարբերակներ ........................................................ 51
3. Ուղղախոսություն և ուղղագրություն
   ա) Գրային արտասանություն ........................................................ 56
   բ) Ավանդական արտասանություն ........................................................ 62
   գ) Ուղղագրության կանոնարկում ........................................................ 67
4. Տառադարձություն ........................................................ 72

**Բ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Գոյական անուն
   ա) Հոլովում և հոլով ........................................................ 76
   բ) Կանոնավոր հոլովում ........................................................ 81
   1) Վերջադրական հոլովում
   ա. Պարզ հոլովում ........................................................ 82
   Ա հոլովում ........................................................ 82
   Ի հոլովում ........................................................ 87
   Ո հոլովում ........................................................ 93
   ՈՒ հոլովում ........................................................ 98
   բ. Խառն հոլովում ........................................................ 103
   Ի - Ա հոլովում ........................................................ 103
   Ո - Ա հոլովում ........................................................ 109
   2) Ներդրական հոլովում
   ա. Պարզ հոլովում ........................................................ 114

Ա հոլովում ........................................................................ 114
Ե հոլովում ........................................................................ 120
բ. Խառն հոլովում ........................................................................ 123
Ի - Ա հոլովում ........................................................................ 124
գ) Անկանոն հոլովում ........................................................................ 128
2. Ածական անուն
ա) Ածականի աստիճանակազմությունը ........................................ 134
բ) Ածականի հոլովումը ........................................................................ 136
3. Թվական անուն
ա) Թվականի տեսակները ........................................................................ 142
բ) Թվականի հոլովումը ........................................................................ 145
4. Դերանուն
ա) Դերանվան տեսակները ........................................................................ 155
բ) Դերանվան հոլովումը ........................................................................ 159
5. Բայ
ա) Բայարմատ, բայահիմք և բայածև ............................................ 174
բ) Խոնարհում, եղանակ և ժամանակ ............................................ 179
գ) Կանոնավոր խոնարհում ........................................................................ 188
1) Անկատարի հիմքից կազմվող ժամանակները ........................ 189
ա. Սահմանական ներկա ........................................................................ 189
բ. Սահմանական անցյալ անկատար ............................................ 195
գ. Ստորադասական առաջին ապառնի ............................................ 200
դ. Հրամայական արգելական ներկա ............................................ 206
ե. Հրամայական անկատար ապառնի ............................................ 209
2) Կատարյալի հիմքից կազմվող ժամանակները ........................ 213
ա. Սահմանական անցյալ կատարյալ ............................................ 216
բ. Ստորադասական երկրորդ ապառնի ............................................ 221
գ. Հրամայական հաստատական ներկա ............................................ 227
դ. Հրամայական կատարյալ ապառնի ............................................ 230
3) Դերբայներ ........................................................................ 235
4) Բաղադրյալ ժամանակներ ........................................................................ 239
5) Պատճառական բայերի խոնարհումը ............................................ 265
դ) Անկանոն խոնարհման բայեր ............................................ 268
ե) Պակասավոր բայեր ........................................................................ 305
զ) Միահիմի բայեր ........................................................................ 310
է) Ժխտական խոնարհում ........................................................................ 312
6. Նախդիր և նախադրություն
ա) Նախդիրներ ........................................................................ 315

բ) Նախադրություններ ........................................................ 324
7. Մակբայ
ա) Մակբայների տեսակներ ........................................................ 327
բ) Մակբայների կազմությունը ........................................................ 331
8. Շաղկապ ........................................................ 334
9. Եղանակավորող բառեր ........................................................ 336
10. Ձայնարկություններ ........................................................ 338

## Գ. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. Պարզ նախադասություն
ա) Ենթական և ստորոգյալը ........................................................ 340
բ) Անվան լրացումները ........................................................ 345
գ) Բայի լրացումները ........................................................ 350
1) Խնդիրներ ........................................................ 350
2) Պարագաներ ........................................................ 354
2. Բարդ նախադասություն
ա) Համադասական նախադասություն ........................................................ 358
բ) Ստորադասական նախադասություն ........................................................ 362
3. Բազմաբարդ նախադասություն ........................................................ 374
Բառարան ........................................................ 380
Համառոտագրություններ ........................................................ 428

# Հեղինակի հրապարակումներից

## 1. Մենագրություններ


1. Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը // *«Հայոց լեզվի պատմության հարցեր»,* պրակ 1, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1981, էջ 112-211 (խմբագիր՝ Լ. Ս. Հովսեփյան):
2. XVII-XIX դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը //*«Հայոց լեզվի պատմության հարցեր»,* պրակ 2, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 257-317 (խմբագիր՝ Լ. Շ. Հովհաննիսյան):
3. Язык и стиль "Истории Тарона" Ованеса Мамиконяна // *Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук (на правах рукописи),* Изд-во АН Арм. ССР, Ереван, 1978, 24 с.:
4. Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., ՀՍԽՀ ԳԱ հրատ., Ե., 1990, 412 էջ (խմբագիր՝ Լ. Ս. Հովսեփյան):
5. Функционирование и структура грабара XVIII-XIX веков // *Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук (на правах рукописи),* Изд-во АН Арм. ССР, Ереван, 1991, 42 с.:
6. Հայոց լեզվի դասական ուղղագրության հիմունքները, Ե., 1993, 68 էջ:
7. Հայոց լեզվի գրավոր աշխատանքների հարցաթերթիկներ: Նմուշներ, ՀՀ ԲԿԳ պետական կոմիտեի հրատ., Ե.,1992, 30 էջ (խմբագիրներ՝ Գ. Բ. Ջահուկյան, Ս. Գ. Աբրահամյան):
8. Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, հ. 1, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 1998, 56 էջ (խմբագիր՝ Գ. Բ. Ջահուկյան):
9. Գրաբարի ինքնուսույց, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 1999, 241 էջ (խմբագիր՝ Գ. Կ. Խաչատրյան):
10. Հայերեն *աստված* բառի ծագումն ու տիպաբանությունը, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2002, 48 էջ (խմբագիր՝ Գ. Բ. Ջահուկյան):
11. Գրաբարի ձեռնարկ, «Զանգակ-97» հրատ., Ե., 2004, 176 էջ (խմբագիր՝ Գ. Կ. Խաչատրյան):
12. Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ - XIX դ.), հ. 1, «Զանգակ-97» հրատ., Ե., 2006, 140 էջ (խմբագիր՝ Ն. Գ. Հովհաննիսյան):

13. Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության (համեմատական-տիպաբանական տարբերակայնություն), հ. 2, Ե., «Զանգակ-97» հրատ., 2007, 64 էջ (խմբագիր՝ Ն. Մ. Սիմոնյան):
14. Լատիներենի դասագիրք, Ե., «Զանգակ-97» հրատ., 2007, 360 էջ:
15. Մայրենի լեզվի զրուցարան, ցածր և միջին դասարանների աշակերտների համար, Ե., «Զանգակ-97» հրատ., 2007, 80 էջ:
16. Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., «Նաիրի» հրատ., 2010, 372 էջ (խմբագիր՝ Ն. Գ. Հովհաննիսյան):
17. Հարյուր թելադրություն, Ե., «Էդիթ-պրինտ» հրատ., 2010, 104 էջ (խմբագիր՝ Ֆ. Հ. Խլղաթյան):
18. Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 224 էջ (խմբագիր՝ Ն. Մ. Սիմոնյան):
19. Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 172 էջ (խմբագիր՝ Լ. Ս. Հովսեփյան):
20. Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yerevan, NAS RA Publ., 2014, 184 p. (Editor-inchief - N. M. Simonyan):
21. Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (X - XVII դդ.), հ. 2, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2015, 136 էջ (խմբագիր՝ Ն. Գ. Հովհաննիսյան):

## 2. Թարգմանություններ

1. Տոն մեր սուրբ թարգմանիչների, Ս. Էջմիածին, 1997, 40 էջ:
2. Հովհաննես Օձնեցի, Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, Ե., «Անահիտ» հրատ., 1999, 312 էջ:
3. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում ճառեր, թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Վազգէն Համբարձումեանի, Թեհրան, 2003, 360 էջ:
4. Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ.Մ.Բադալյանի, «Մուղնի» հրատ., Ե.,2003, 608 էջ:

## 3. Հեղինակի և հեղինակակիցների ժողովածուներ

1. Թելադրությունների ժողովածու (կազմ.՝ Վ. Գ. Համբարձումյան և ուրիշներ), ՀՀ ԲԿԳ պետ. կոմիտեի հրատ., Ե., 1991, 115 էջ:
2. Հայոց լեզվի գրավոր աշխատանքների հարցաթերթիկներ: Նմուշներ (կազմ.՝ Վ. Գ. Համբարձումյան և ուրիշներ), ՀՀ ԲԿԳ նախարար. հրատ., Ե., 1995, 44 էջ:
3. Հայոց լեզվի հարցաթերթիկներ. հարցաշարերի ժողովածու (կազմ.՝ Վ. Գ. Համբարձումյան և ուրիշներ), ՀՀ ԲԿԳ նախարար. հրատ., Ե., 1995, 416 էջ:
4. Հայոց լեզվի հարցաթերթիկներ. հարցաշարերի ժողովածու (կազմ.՝ Վ. Գ. Համբարձումյան և ուրիշներ), ՀՀ ԲԿԳ նախարար. հրատ., Ե., 1996, 336 էջ:

ՎԱԶԳԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ

*Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետների համար*

Երրորդ հրատարակություն

Համակարգչային ձևավորումը՝ Հեղինե Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Արաքս Սարգսյանի

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

**EDIT PRINT**
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am